

Լ. ԱՆԱՆՅԱՆ, Լ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ
Ուսումնական ձեռնարկ

Տնտեսագետ
ԵՐԵՎԱՆ
2005

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Լ. ԱՆԱՆՅԱՆ, Լ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Ուսումնական ձեռնարկ

**Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Լ. Զ. Անանյանի
խմբագրությամբ և ղեկավարությամբ**



**Տնտեսագետ
ԵՐԵՎԱՆ
2005**

ՀՏԴ 33(091)(07)
ԳՄԴ 65.02 g 73
Ա 573

Հրատարակվում է ԵՊՏԻ
գիտական խորհրդի որոշմամբ

Գրախոսներ՝ տ.գ.դ., պրոֆ. Է.Յ.Օրդյան
տ.գ.թ. դոց. Գ.Ա.Աղաջանյան

Ա 573 **Անանյան Լ.Ջ., Պետրոսյան Լ.Պ.**
ՏՆՏԵՍԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ
Ուսումնական ձեռնարկ
(տ.գ.դ., պրոֆ. Լ.Ջ. Անանյանի խմբագրությամբ և ղեկա-
վարությամբ) Եր.: Տնտեսագետ, 2005.-294 էջ:

Ուսումնական ձեռնարկում լուսաբանվում են աշխարհի առա-
ջատար երկրների տնտեսական պատմության հարցերը՝ սկզբից
մինչև մեր օրերը: Քննարկվում են նախնադարում, հին աշխարհում,
միջնադարում տնտեսական պատմության հիմնախնդիրները, ֆեո-
դալական հարաբերությունների ծագման, զարգացման և անկման
գործընթացները: Հատուկ ուշադրություն է դարձվում ֆեոդալիզմի
քայքայման ներքին ու արտաքին գործոններին, կապիտալի նա-
խասկզբնական կուտակմանը, տարբեր երկրներում բուրժուական
հեղափոխությունների ժամանակագրությանը:

Կապիտալիստական տնտեսության զարգացումը ներկայաց-
վում է Հոլանդիայի, Անգլիայի, Ֆրանսիայի, Գերմանիայի, ԱՄՆ-ի,
Ճապոնիայի, Ռուսաստանի և այլ երկրների օրինակով:

Ձեռնարկը նախատեսված է տնտեսագիտական բուհերի և
ֆակուլտետների ուսանողների համար: Կհետաքրքրի նաև դասա-
խոսներին, ասպիրանտներին, տնտեսական պատմությունը ուսում-
նասիրող մասնագետներին:

Ա $\frac{0601000000}{719(01)-2005}$ 2005

ԳՄԴ 65.02 g 73

ISBN 99941-51-10-x

© «Տնտեսագետ» հրատ., 2005

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

«Տնտեսական պատմություն» դասընթացի ընդգրկման շրջանակները չափազանց մեծ են: Այն ներառում է մարդկային հասարակության գոյության ամբողջ ժամանակաշրջանը՝ նախնադարից մինչև մեր օրերը: Նրանում իր արտացոլումն է գտել աշխարհի շատ երկրների ու ժողովուրդների տնտեսական պատմությունը:

Մեծ է տնտեսական պատմության դերը ուսանողների տնտեսագիտական գիտելիքների ձևավորման, համակողմանի զարգացած տնտեսագետ կադրերի պատրաստման գործում:

Տնտեսական պատմությունը շարադրելիս հաշվի են առնվել ինչպես երկրների զարգացման ընդհանուր օրինաչափությունները, այնպես էլ առանձնահատկությունները, պատմական տարբեր ժամանակահատվածներում հասարակության զարգացման յուրաքանչյուր փուլի յուրահատկությունները: Այդ բոլոր հարցերն իրենց արտացոլումն են գտել ընթերցողի դատին ներկայացվող ուսումնական ձեռնարկում: Նման ծավալի ու բովանդակությամբ տնտեսական պատմությանը նվիրված հետազոտություն մայրենի լեզվով հրատարակվում է առաջին անգամ:

Մինչև վերջերս հայերեն լույս են տեսել միայն Գերմանիայի, Ֆրանսիայի և Ճապոնիայի տնտեսական պատմությանը վերաբերող մի քանի գրքույկներ: Մինչդեռ ուսանողները դժվարանում են օտարալեզու գրականությունից օգտվելու և դասընթացին առնչվող նյութը յուրացնելու գործում:

Ուսումնական ձեռնարկը շարադրվել է «Տնտեսական պատմություն» դասընթացի ծրագրին համապատասխան: Սակայն, քանի որ դասընթացի բաժիններից մեկի նյութը՝ «Հայաստանի տնտեսական պատմությունը», տպագրվել է առանձին գրքով, ուստի սույն ուսումնական ձեռնարկն ամբողջությամբ նվիրված է աշխարհի այլ երկրների տնտեսական կյանքի լուսաբանմանը տարբեր ժամանակաշրջաններում:

Ուսումնական ձեռնարկը հրատարակության են պատրաստել տ.գ.դ., պրոֆեսոր Լ.Զ. Անանյանը (ներածություն, գլ. 1, գլ. 2.1, գլ. 3, գլ. 4, գլ. 5.1, 5.2, 5.3, 5.4, 5.7, 5.8, գլ. 6.1, 6.3, 6.4, 6.5, գլ. 7.1, 7.3, 7.4, 7.5, գլ. 8.1, 8.3, 8.4, 8.5, գլ. 9.3, 9.4, 9.7, գլ. 10.1, 10.2, գլ. 11):

Տ.գ.թ., դոցենտ Լ.Պետրոսյանը (գլ. 2.2, 2.3, 2.4, գլ. 5.5, 5.6, գլ. 6.2, 6.6, 6.7, գլ. 7.2, 7.6, գլ. 8.2, 8.6, 8.7, գլ. 9.1, 9.5, 9.6):

Ուսումնական ձեռնարկի ընդհանուր խմբագրությունն իրականացրել է պրոֆ. Լ.Զ. Անանյանը:

Հեղինակները շնորհակալությամբ կընդունեն ձեռնարկի շարադրանքին վերաբերող դիտողությունները և ցանկությունները, որոնք հաշվի կառնվեն գրքի վերահրատարակության ժամանակ:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

«ՏՆՏԵՍԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ» ԴԱՍԸՆԹԱՑԻ ԱՌԱՐԿԱՆ, ՄԵԹՈԴԸ, ՊԱՐԲԵՐԱՑՈՒՄԸ

Տնտեսական պատմությունը միջդասընթացային գիտություն է, որը ծագել է պատմական և տնտեսագիտական գիտությունների խաչմերուկում: Նպաստում է անհատի ինտելեկտուալ զարգացմանը և ստեղծագործական մտածողության մշակմանը: Այն կոչված է ձևավորելու տնտեսագիտական մտածողության սկզբունքները, տեսնելու ժամանակակից սոցիալական և տնտեսական հիմնախնդիրների պատմական արմատները (հենվելով պատմության ընթացքում կուտակված փորձի վրա), դրանց համահունչ գնահատելու ընթացիկ տնտեսական վիճակը և ընդունելու ճիշտ որոշումներ:

Առարկային վերաբերող առաջին աշխատությունը՝ «Տրակտատ ասսայի* մասին», լույս է տեսել Ֆրանսիայում 1514 թ. Գ.Բյուդեի կողմից, հաջորդը Վ.Պետտիի ուսումնասիրությունն է՝ «Տրակտատ հարկերի և տուրքերի մասին» (1662 թ.), իսկ առավել ընդգրկունը՝ Ա.Սմիթի գործը՝ «Չեղարկություն ժողովուրդների հարստության բնույթի և պատճառների մասին» (1776 թ.):

Պատմատնտեսագիտական գրականության մեջ XIX դարի երկրորդ կեսին մեծ ավանդ ներդրեցին գերմանացիներ Կ.Մարքսը և Ֆ.Էնգելսը, իսկ դարավերջին և XX դարի սկզբին՝ անգլիացիներ Ա.Թոյնբեյն և Ջ.Էշլին, գերմանացիներ Կ.Բյուխերը, Մ.Վեբերը, Վ.Ջոնսթրոմը, ռուսներ Մ.Կովալևսկին, Պ.Վինոգրադովը, XX դարի 20-40-ական թվականներին՝ ֆրանսիացիներ Մ.Բլոկը և Լ.Ֆեվրը: Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո ԱՄՆ-ում ստեղծվեց «Նոր տնտեսական պատմության» դպրոց (Ա.Կոնրադ, Ջ.Սեյեր, Ռ.Ֆոգել): Նախկին ԽՍՀՄ-ից տնտեսական պատմության հարցերով զբաղվել են անվանի գիտնականներ Ս.Ստրոմիլինը, Պ.Լյաշչենկոն, Ի.Գլադկովը, Ֆ.Պոլյանսկին, Վ.Չունտուլովը, Պ.Խրոմովը և ուրիշներ:

Առարկայի հասկացությունը XIX դարում հանգեցվում էր ժողովուրդների տնտեսական գործունեության էվոլյուցիային՝ նախնադարից մինչև ժամանակակից վիճակը:

1881-1882 թթ. տնտեսական պատմության դասընթաց է կարդացվել Օքսֆորդի համալսարանում (Ա.Թոյնբեյ), Բագելի համալսարանում (Կ.Բյուխեր), 1889 թ.՝ Բրյուսելի համալսարանում (Մ.Կովալևսկի), XX դարի սկզբին՝ Չարվարդի համալսարանում (Ջ.Էշլի): Ֆրան-

* Ասսա - հին հունական դրամ

սիայում, եվրոպական մյուս երկրներում ևս կարդացվում էր այդ դասընթացը:

Տնտեսական պատմությունը մարդկային հասարակության զարգացման հետազոտության երեք ուղղությունների հանգուցակետում է՝ պատմության, տնտեսագիտության տեսության և կոնկրետ էկոնոմիկայի: Ամենաընդհանուր ձևով՝ առարկայի ուսումնասիրության օբյեկտը տնտեսական գործընթացների և երևույթների առաջացման, հաստատման ու զարգացման պատմությունն է:

Լայն առումով՝ տնտեսական պատմության առարկան հասարակության «տնտեսական շարժման», նրա փոփոխությունների ու առանձնահատկությունների, «նեղ առումով»՝ տարբեր երկրների տնտեսական կյանքի, ժողովուրդների տնտեսական գործունեության ուսումնասիրությունն է պատմական տարբեր դարաշրջաններում: Տնտեսական պատմությունը բազմամակարդակ գիտություն է, որի կառուցվածքային աստիճաններն են. 1) արտադրատեղանակների էվոլյուցիան, 2) տնտեսական մեխանիզմների պատմությունը, 3) տնտեսության ճյուղերի պատմությունը, 4) առանձին տնտեսական գործընթացների (քաղաքակենտրոնացում, արդյունաբերական հեղաշրջում, ինտեգրում, գլոբալացում) պատմությունը, 5) տնտեսագիտական ինստիտուտների և գործիքների (հարկեր, գներ, վարկ, բյուջե, ֆինանսներ և այլն) պատմությունը:

Տնտեսական պատմությունը կապված է հասարակագիտական և տնտեսագիտական մյուս դասընթացների, հատկապես՝ տնտեսագիտության տեսության և տնտեսագիտական մտքի պատմության հետ: Փաստորեն այն տնտեսագիտության տեսությանն ապահովում է մարդկության տնտեսական զարգացմանը վերաբերող փաստացի նյութով: Սերտ կապ գոյություն ունի տնտեսական պատմության և կոնկրետ ճյուղային տնտեսագիտական գիտությունների (ֆինանսներ և վարկ, վիճակագրություն, մարքեթինգ, մենեջմենթ, շուկայագիտություն, մակրոէկոնոմիկա և այլն), ինչպես նաև բոլոր պատմական դասընթացների, աշխարհագրական գիտությունների միջև:

Տնտեսական պատմությունը կատարում է մի շարք կարևոր գործառույթներ: *Առաջինը կուտակող գործառույթն* է (մարդկության տնտեսական փորձի հավաքում, ընդհանրացում և ուսումնասիրում): Առանց այդ փորձի իմացության հնարավոր չէ բացահայտել մարդկային հասարակության տնտեսական զարգացման օրինաչափությունները: *Երկրորդը նախապատրաստական գործառույթն* է. համաշխարհային տնտեսության պատմությունից վերցված կոնկրետ փաստերի և օրինակների հիման վրա յուրացվում է բազային տնտեսագիտական տերմինների (արտադրողական ուժեր, արտադրական հարաբերություններ, արտադրատեղանակ, սեփականություն, տնտեսական մեխանիզմ, արտադրության, փոխանակության, բաշխման և

սպառման ձևեր) բովանդակությունը: *Երրորդը ճանաչողական գործառույթն է*, որն ուղղված է մարդկության տնտեսական էվոյուցիայի համաշխարհային գործընթացի ընկալմանը, սեփականության ձևերի, տնտեսական մեխանիզմների, արտադրության և կառավարման ձևերի փոփոխությանը, ինչպես նաև առանձին երկրների, տարածաշրջանների տնտեսական զարգացման առանձնահատկությունների բացահայտմանը: *Չորրորդը տնտեսական մտածողության ռեալիզմի ձևավորումն է*, երբ տրվում է ոչ միայն երկրների ու ժողովուրդների տնտեսական զարգացման դրական փորձը, այլև նշվում են սխալներն ու թերությունները, որոնցով պայմանավորված է բնակչության կենսամակարդակի վատթարացումը: *Հինգերորդը մեթոդաբանական գործառույթն է*, որը կատարում է. ա) իլյուստրատիվ դեր (օրինակների օգտագործմամբ), բ) քննադատական դեր (առարկայով ստուգվում են վերլուծության գիտականությունը և հավաստիությունը), գ) տնտեսագիտական նոր տեսությունների գիտական հիմնավորումը:

Արդի պատմատնտեսագիտական տեսությունը հիմնված է դիալեկտիկական-մատերիալիստական մեթոդի վրա: Կիրառվում են ժամանակագրական, սինխրոն (պատմատնտեսական իրադարձությունների միաժամանակյա հետազոտում), դիխրոն (պարբերացման մեթոդ), պատմական մոդելավորում: Գոյություն ունեն ավանդական և նորագույն մեթոդներ: Ավանդականի մեջ մտնում են հետևյալ մեթոդները. 1) պատմական, 2) համակարգա-կառուցվածքային, 3) պատմա-համեմատական, 4) պատմա-տիպաբանական, 5) վիճակագրական: Նորագույնի մեջ ներառվում են. 1) քանակական (մաթեմատիկական), 2) սոցիոլոգիական հետազոտությունների և սոցիալական հոգեբանության մեթոդները:

Ինչ վերաբերում է տնտեսական զարգացման գործոններին, ապա դրանք հետևյալներն են.

1) գիտատեխնիկական առաջադիմությունը,

2) հաղորդակցության միջոցներում (լեզու, ճանապարհներ, մամուլ, հեռուստատեսություն, ռադիո, կապի միջոցներ) կատարվող առաջընթացը,

3) էներգիայով ապահովվածության աստիճանը և էներգիայի տեսակը,

4) բնական (աշխարհագրական) գործոնը,

5) ժողովրդագրական գործոնը,

6) մարդկանց հոգեբանությունը:

Տնտեսական պատմության պարբերացումը հասարակության տնտեսական զարգացման որոշակի ժամանակագրական փուլերի սահմանումն է: Ներկայումս գոյություն ունեն երեք մոտեցումներ այս հարցին. 1) Մարդկության տնտեսական պատմությունը դիտարկվում

է որպէս ցածրից զարգացման բարձրագույն աստիճանին անցում: 2) Պատմական շրջապտույտի տեսություն: 3) Քաղաքակրթության տեսություն: Ամերիկացի գիտնական Ու.Ռոստոուն առանձնացնում է տնտեսական զարգացման 6 շրջան. 1) ավանդական հասարակություն, որին բնութագրական է ձեռքի աշխատանքի կիրառումը, գյուղատնտեսության՝ որպէս էկոնոմիկայի հիմքի, զարգացումը, 2) տեղաշարժի համար պայմանների ստեղծման շրջան (գիտության, շուկայի և ազատ մրցակցության զարգացում, կապիտալի կուտակում), 3) տեղաշարժի և արդյունաբերական հեղաշրջման շրջան, երբ ձեռքի աշխատանքը փոխարինվում է մեքենայական աշխատանքով, 4) հասունության շրջան, երբ ձեռք է բերվում տնտեսության բոլոր ճյուղերի արագ և մշտական առաջընթաց, 5) զանգվածային սպառման բարձր մակարդակ ապահովող շրջան, 6) մարդու կենսապայմանների որակական բարելավում ապահովող ուղիների որոնում:

XIX դարի վերջին Գերմանիայում Զիլլերբանտը և Բյուխերը մշակեցին փոխանակային տեսությունը, ըստ որի պատմությունը բաժանվում է 3 ժամանակաշրջանի. ա) բնատնտեսության ժամանակաշրջան, բ) դրամական տնտեսության ժամանակաշրջան. գ) վարկային տնտեսության ժամանակաշրջան:

Սոցիոլոգ Մեյնհոլդը նույնպէս տարբերում էր 3 ժամանակաշրջան՝ ելնելով ջրային հաղորդակցության ուղիների (գետային, ծովային, օվկիանոսային) զարգացման աստիճանից:

Իտալացի Վիկոն համարում էր, որ պատմությունը շրջապտույտ է, հաջորդաբար կրկնվում են հասարակության զարգացման բոլոր ձևերը: Կ.Մարքսը մշակեց ֆորմացիաների տեսությունը, դրա հիմքում ունենալով նյութական բարիքների արտադրության եղանակը. 1) նախնադարյան-համայնական, 2) ստրկատիրական, 3) ֆեոդալական, 4) կապիտալիստական, 5) սոցիալիստական:

Ներկայումս տարածված է նաև մինչարդյունաբերական-արդյունաբերական-հետարդյունաբերական հասարակության սխեման:

Վերջին շրջանում պատմատնտեսագիտական գրականության մեջ առանձնացվում է 5 դարաշրջան. Նախնադար, Զին աշխարհ, Միջնադար, Նոր ժամանակ և Նորագույն ժամանակ: Ժամանակագրական և ըստ երկրների մոտեցումը կապվում է ըստ ֆորմացիաների մոտեցման հետ(հինարևելյան և անտիկ ստրկատիրություն, արտադրության ֆեոդալական եղանակ, կապիտալիզմ կամ շուկայական տնտեսություն և արդի աշխարհը՝ իր առանձնահատկություններով):

Բ Ա Ժ Ի Ն Ա Ռ Ա Ջ Ի Ն

ՆԱԽՆԱԴԱՐՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆԸ ԵՎ ՀԻՆ ԱՇԽԱՐՀԸ

Գ Լ Ռ Ի Խ Ի

ՆԱԽՆԱԴԱՐՅԱՆ-ՀԱՄԱՅՆԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՐԳԸ

Նախնադարյան հասարակական ֆորմացիան մարդկության պատմության ամենատևական շրջանն է, որը սկիզբ է առնում մարդկային հոտի առաջացումից և տևում մինչև երկրագնդի վրա առաջին պետությունների ձևավորումը: Ընդամենը, նախնադարյան հասարակության պատմության ուսումնասիրության բնագավառում շատ են «սպիտակ բծերը», վիճելի և չլուծված հարցերը: Դրա պատճառը հավաստի գրավոր աղբյուրների բացակայությունն է, իսկ գիրը, ինչպես հայտնի է, ստեղծվել է դասակարգերի կազմավորման շրջանում:

Հնագիտական պեղումների արդյունքները միայն մակերեսային տեղեկություններ են տալիս նախնադարյան մարդու կյանքի նյութական կողմի մասին: Վիճարկման նյութ է երկրի վրա առաջին մարդկանց ի հայտ գալը (նշվում է 4 մլն տարուց մինչև 500 հազար տարին):

Մարդկության պատմության հնագույն շրջանը ներկայացվում է որպես նախնադարյան մարդկային հոտի դարաշրջան, երբ մարդը դեռևս չէր անջատվել անասունների միջավայրից և կենսակերպով նման էր կապիկին:

Մարդու էվոլյուցիան ներկայացնում է հետևյալ պատկերը. 1) Մարդու անտրոպոիդ նախորդներ՝ 4 մլն տարի: 2) Արխտանտրոպներ (պիտեկանտրոպներ, սինանտրոպներ)՝ շուրջ 1 մլն տարի: 3) Պալեանտրոպներ (նեանդերթալցիներ)՝ շուրջ 300-400 հազար տարի: 4) Նեանտրոպներ (հոմո սափիենս)՝ ա) բրածո մարդ (կրոմանոնցիներ), բ) ժամանակակից մարդ՝ շուրջ 40-50 հազար տարի:

Նախամարդու առաջին կերպարը պիտեկանտրոպն էր, որը քայլում էր ուղիղ և իրեն հետագայում փոխարինող նախամարդկանցից տարբերվում էր գանգի կառուցվածքով: Նրա ուղեղն ուներ 900 խորանարդ սմ ծավալ, գանգը՝ փոքր բարձրություն, պարզունակ կառուցվածք, և որոշ չափով նմանվում էր կապիկին: Սակայն պիտե-

կանտրոպի ձեռքերն ունակ էին կատարելու աշխատանքային պարզ գործողություններ:

Պիտեկանտրոպը պատրաստում էր գործիքներ փայտից և ոսկորից, դրանք մշակում պարզունակ մեթոդներով: Օգտագործվում էր նաև քարը, որի սուր ձևերը բնության ուժերի ազդեցության արդյունք էին: Հենց քարը դարձավ աշխատանքի գործիքների պատրաստման հիմնական նյութը մինչև մթա 4-3 հազարամյակները: Դրա համար էլ նախնադարյան շրջանը ընդունված է անվանել քարե դար, իսկ վերջինիս սկիզբը՝ վաղ պալեոլիտ (հին քարե դար): Դա տևեց մինչև 100 հազար տարի մթա:

Հետագոտողները պիտեկանտրոպների բնակության հավանական վայրերը համարում են Կենտրոնական ու Հարավային Աֆրիկան և Կենտրոնական Ասիան: Պիտեկանտրոպները որսում էին մանր կենդանիներ, զբաղվում էին հավաքչությամբ (պտուղների, արմտիքների և այլն), ձկնորսությամբ (ձեռքի օգնությամբ): Նրանք ապրում էին 25-30 հոգանոց (չափահաս տարիքի) խմբերով և քոչում էին տեղից-տեղ՝ սնունդ հայթայթելու նպատակով: Բնակվում էին անձավներում, ժայռերի ճեղքերում, ծառերի տակ: Նրանց գոյատևման շրջանում պատկերացում չկար կրակի մասին:

Նախամարդու հաջորդ տիպը սինանտրոպն է, որն ի հայտ է եկել շուրջ 300 հազար տարի առաջ: Սինանտրոպը, իր նախորդի նման, միջահասակ էր, ուներ ամուր կառուցվածք, իսկ նրա ուղեղի միջին ծավալը կազմում էր 1050 խորանարդ սմ: Ենթադրվում է, որ սինանտրոպն արդեն ընդունակ էր ձայնային խոսքի: Նրա աշխատանքային գործունեությունն ավելի բարդ էր: Քարե գործիքները համեմատաբար կատարյալ էին, դրանց մի մասը ենթարկվում էր արհեստական մշակման:

Սինանտրոպն արդեն ի վիճակի էր որսալու խոշոր կենդանիներ՝ եղջերուներ, վայրի ձիեր, գետաձիեր: Նա ապրում էր քարայրներում, նույնիսկ կառուցում էր կացարաններ: Սինանտրոպները ևս քոչվորի կյանք էին վարում՝ նախընտրելով գետերի և լճերի ափերը: Նրանք չէին կարող կրակ ստանալ, սակայն բնական կրակը (կայծակի արդյունքը) պահպանում էին և օգտագործում իրենց կարիքների համար:

Շուրջ 200 հազար տարի առաջ ձևավորվեց մարդու նեանդերթալյան տիպը: Նա ցածրահասակ էր (տղամարդու միջին հասակը 156 սմ էր), լայնոսկոր, ուժեղ զարգացած մկաններով: Թեև ուղեղի ծավալը համապատասխանում էր ժամանակակից մարդու ուղեղի չափերին, սակայն կառուցվածքը պարզունակ էր:

Նեանդերթալցիների պատրաստած քարե գործիքները ևս պարզունակ էին ու հասարակ, սակայն հղկվում էին, սուր ձևեր ընդունում ավելի պինդ մարմինների (կվարցների, հրաբխային ապարների) օգ-

նությամբ: Գործիքների մի մասը քարից էր, մյուսը՝ ոսկորից կամ փայտից: Քարանձավները դառնում են մի քանի սերնդի կողմից օգտագործվող մշտական բնակավայրեր: Տնտեսական կյանքում դարձյալ գերակշռում էին հավաքչությունը, որսորդությունը, ձկնորսությունը:

Որսի բաշխումը կատարվում էր հավասարարական եղանակով՝ հաշվի առնելով համայնքի անդամների տարիքը և սեռը. առաջնությունը տրվում էր որսորդներին: Նեանդերթալցիներն ագրեսիվ էին, աչքի էին ընկնում անասնական բնազդներով և ոչնչացնում էին միմյանց անվերջ բախումների ընթացքում: Թեև նեանդերթալցիների մի մասը (կռիվների և կյանքի դաժան պայմանների պատճառով) չէր ապրում մինչև ծերություն, բայց և այնպես նրանք բազմացան և ցրվեցին ամբողջ Եվրոպայով, Ասիայով և Աֆրիկայով:

Ինչ վերաբերում է միջին պալեոլիթին (միջին քարե դար), ապա սկսվել է շուրջ 100 հազար տարի առաջ, իսկ ուշ պալեոլիթը՝ 40 հազար տարի առաջ: Վերջինս ավարտվել է 12 հազար տարի մթա:

Յենց միջին պալեոլիթում է երկրագնդի վրա առաջանում «բանական մարդը»՝ հոմոսափիենսը: Դա տեղի է ունեցել Յուսիսային Աֆրիկայում կամ Առաջավոր Ասիայում: Կրոմանոնյան մարդը (այդպես էր կոչվում Ֆրանսիայի Կրո-Մանոն տեղանքում մարդկային ոսկորների հայտնաբերումից հետո) էապես տարբերվում էր նեանդերթալցուց: Տղամարդու միջին հասակը 180 սմ էր, ոսկորները ավելի նեղ էին, ֆիզիկապես ավելի թույլ էր, քան նեանդերթալցին: Ուղեղի ծավալը նույնն էր, ինչ որ ժամանակակից մարդունը (1400-1500 խորանարդ սմ): Կրոմանոնցիներն արդեն խոսում էին մարդկային լեզվով: Ընդ որում՝ լեզուն հիմնովին փոխեց մարդու կենցաղը, աշխատանքի կազմակերպումը և արագացրեց մարդկային հասարակության զարգացումը: Բանական մարդու խոշորագույն հայտնագործությունը, որը կատարվեց միջին պալեոլիթի հենց սկզբին, կրակի արհեստական ստացումն էր: Կրակի գյուտը մարդուն վերջնականապես զատեց կենդանական աշխարհից:

Կատարելագործվում էր քարի մշակման տեխնիկան, ավելի էին տարբերակվում աշխատանքի գործիքները: 40 հազար տարի առաջ երկրագնդի վրա ապրում էին միայն ժամանակակից տիպի մարդիկ: Բնակչության խտությունը խիստ ցածր էր և 1 քառ. կմ-ի հաշվով կազմում էր ընդամենը 0,1 մարդ: Ենթադրվում է, որ այդ շրջանում աշխարհի բնակչությունը կազմել է 2-4 մլն մարդ:

Ուշ պալեոլիթում արդեն ձևավորվեց նախնադարյան-համայնական կարգը: Դա մայրական ընտանեկան համայնքի կամ մայրիշխանության գոյության շրջան էր: Տոհմի շարունակությունը հաշվվում էր մայրական գծով:

Տնտեսության տիպը այդ շրջանում բնութագրվում էր որպես պարզ յուրացվող տնտեսություն: Տնտեսական գործունեության հիմնական ոլորտներն էին՝ որսորդությունը, ձկնորսությունը, հավաքչությունը: Կատարելագործվեցին արտադրության գործիքները, որսորդական զենքերը: Աշխատանքը իրենից ներկայացնում էր պարզ կոոպերացիա, կացարանները դարձան մշտական, կային նաև ժամանակավոր կացարաններ: Տարածքը, բնակարանը, կրակը, որսը կոլեկտիվ սեփականություն էր: Իսկ աշխատանքի գործիքները, կենցաղային իրերը, զարդերը՝ համայնքի անդամների անձնական սեփականությունը, սակայն դրանցից, առանց հարցնելու տիրոջը, կարող էր օգտվել մյուս անդամը:

Հավելյալ արդյունքի ստացումը հանգեցրեց փոխանակության առաջացմանը: Վերջինս տեղի էր ունենում համայնքի սահմաններին՝ հարևանների հետ (որակյալ փայտ, քարեր, մորթիներ, խեցիներ և այլն): Կատարվում էր նաև նվերների փոխանակություն: Հենց այդ շրջանում էլ սկսվեց տարբեր ցեղերի ու ժողովուրդների ձևավորման գործընթացը: Ցեղերի (ռասսաների) շրջանակը հիմնականում համընկնում էր մայրցամաքների սահմաններին: Օրինակ՝ եվրոպիդ, ռասսան ձևավորվեց գերազանցապես Եվրոպայում, մոնղոլոիդը՝ Ասիայում, նեգրոիդը՝ Աֆրիկայում:

Նշված շրջանում մարդու մտածողության էվոլյուցիան հանգեցրեց նրա գիտելիքների աստիճանական զարգացմանը: Որոշ չափով զարգանում են բժշկական գիտելիքները (բուժվում էին կոտրվածքները, օձի խայթոցները, հեռացվում էին հիվանդ ատամները), արվեստը:

Մեզոլիթի ժամանակագրական շրջանակներն են մթա 12-8 հազարամյակները: Այդ շրջանում արմատապես փոխվեցին մարդու կյանքի պայմանները, որ կապված էր սառցե շրջանի ավարտման, կլիմայի տաքացման, կենդանական և բուսական աշխարհում տեղի ունեցած փոփոխությունների հետ: Ասպարեզից վերացան մամոնտները, խիստ կրճատվեց մյուս խոշոր կենդանիների գլխաքանակը:

Մեզոլիթյան ցեղերն արդեն զբաղվում էին ավելի փոքր կենդանիների որսով: Որս անել սովորեց և շունը՝ մարդու օգնականը: Կատարելագործվեց որսորդական զենքը, օգտագործվում էր նետ ու աղեղը: Լայն մասշտաբներ ընդունեց ձկնորսությունը: Բարելավվում էին քարե գործիքների պատրաստման եղանակները, փոքրացվում էին դրանց ծավալները և քաշը: Քարից, փայտից և ոսկորից պատրաստվում էին կոմքինացված գործիքներ՝ դանակներ, կացիներ, դաշույններ: Նշված շրջանում ևս տնտեսությունը յուրացվող բնույթ ուներ, իսկ կյանքի հիմքը կոլեկտիվիզմի սկզբունքն էր: Լայն կիրառություն գտան նավակները՝ որպես տեղաշարժման միջոց: Բնակավայրերը գետնափոր և կիսագետնափոր հյուղակներն էին:

Մայրական տոհմին փոխարինեց հայրական տոհմը, ի հայտ եկան առաջին զուգընտանիքները: Ժառանգությունն արդեն հաշվվում էր հայրական գծով: Փաստորեն՝ մեզոլիթը հայրիշխանության դարաշրջանի սկիզբն էր: Ավելի զարգացան գիտելիքները, կուտակվեցին տեղեկություններ աշխարհագրության, կենսաբանության, բուսաբանության, աստղագիտության, բժշկության վերաբերյալ:

Մեզոլիթի շրջանում ռասսաների ներսում առանձնացվեցին ճյուղերը. եվրոպոիդները՝ հարավային և հյուսիսային, մոնղոլոիդը՝ ասիական և ամերիկյան, նեգրոիդը՝ աֆրիկյան և ավստրալիական: Սկսվեց ժողովուրդների ձևավորման գործընթացը:

Մեզոլիթին հաջորդեց նեոլիթը՝ նոր քարե դարը, որի ժամանակագրական շրջանակներն են մթա 8-4 հազարամյակները: Այդ շրջանում զուգահեռ գոյատևում էին հետամնաց և զարգացած ցեղերը: Եթե առաջինները վարում էին յուրացվող տնտեսություն, երկրորդները դրանից անցում էին կատարում արտադրող տնտեսությանը: Վերջինիս կառուցվածքը արմատապես տարբերվում էր նախորդից: Որսորդության, ձկնորսության և հավաքչության փոխարեն տնտեսության հիմնական ճյուղերը դարձան հողագործությունը, անասնապահությունը և արհեստները: Այդ անցումը պատմատնտեսագիտական գրականության մեջ ստացել է «Նեոլիթյան հեղափոխություն» անունը (մթա 8-3 հազարամյակներ):

Տեղաշարժերն առկա էին մարդու տնտեսական գործունեության մեջ: Առաջին անգամ ապահովվեց հավելյալ արդյունքի կանոնավոր (ոչ պատահական) ստացումը: Փոխվեցին աշխատանքի բնույթը և մարդկային հասարակության կառուցվածքը, մարդկանց հոգեբանությունը:

Հին արհեստներից մեկը բրուտագործությունն էր, երբ կավագործ վարպետները, բարձր ջերմաստիճանում թրծելով կավը, պատրաստում էին կավե ամաններ, սափորներ, անոթներ: Դա հնարավորություն տվեց բավականին բարելավելու սննդի պատրաստման և պահպանման եղանակները:

Հին արհեստներից էր մանածագործությունը. պատրաստվում էին կոշտ և նուրբ գործվածքներ, պարաններ, ցանցեր, տոպրակներ, պայուսակներ: Ամենահին արհեստը թերևս քարագործությունն էր, սակայն գնալով ավելի էր հղկվում քարի մշակման տեխնիկան: Արդեն աշխատանքի գործիքների պատրաստման բնագավառում օգտագործվում էին մետաղներ՝ ամենից առաջ պղինձ և բրոնզ:

Նեոլիթյան հեղափոխության շրջանում մարդկության ձեռքբերումներից կարևոր էր հողի մշակությունը, որը սկզբնավորվել է Առաջավոր Ասիայում: Հողագործությունը ծագեց հավաքչությունից: Հողագործության եղանակները և տեխնիկան պարզունակ էին: Հողը

մշակվում էր փայտով կամ փոցխով, բերքը՝ հավաքվում մանգաղով: Ցանում էին բազմազան մշակաբույսեր:

Կատարելագործվում էր ագրոտեխնիկան, մի շարք շրջաններում ջրարբիացվում էին հողերը: Տնտեսության կարևոր ճյուղ դարձավ անասնապահությունը, որը առաջացավ որսորդությունից: Առաջին ընտելացված կենդանիներն էին ոչխարը, այծը, կովը և խոզը:

Նեոլիթի ավարտին հստակ առանձնացվում են հողագործության և անասնապահության գոտիները: Օրինակ՝ Եվրոպան գերազանցապես հողագործության գոտի էր, ուր զարգանում էր նաև մսուրային անասնապահությունը: Մինչդեռ Միջին և Առաջավոր Ասիայի անապատային և կիսաանապատային գոտիներում գերակշռում էր քոչվորային անասնապահությունը, Արևելյան Ասիայում՝ հողագործությունը:

Ցեղերի՝ բնակեցված տարածքների սահմանային մասերում (հետագայում նաև ցեղերի ներսում) ինտենսիվորեն զարգանում էր փոխանակությունը՝ տնտեսության կառուցվածքի տարբերություններով հանդերձ: Քոչվոր խաշնարած և մստակյաց հողագործ ցեղերը փոխանակում էին իրենց ապրանքները՝ անասունը, միսը, կաշին, հացահատիկը, պտուղները, բանջարեղենը: Գնալով՝ փոխանակությունը դառնում էր ինտենսիվ և ապրանքաշրջանառության զարգացման հիմք: Նշված շրջանում տնտեսության զարգացման կարևոր առանձնահատկությունը այսպես կոչված՝ «գերադասելի» էկոնոմիկայի ի հայտ գալն էր: Նվերափոխանակությունը ընդունեց մեծ չափեր: Աստիճանաբար առաջացավ սոցիալական շերտավորում և հասարակության մեջ խորացավ անհավասարությունը:

Հասարակական կազմակերպման կարևոր տարրերից էին տղամարդկանց միությունները կամ տները, որոնցում համայնքի տարեց տղամարդիկ քննարկում էին ընթացիկ հարցեր, ընտրում ղեկավարների: Կային տղամարդիկ, որոնք իրենք իրենց առաջադրում էին որպես լիդերներ, մյուսներից տարբերվում տաղանդով, գիտելիքներով, հարստությամբ և առատաձեռնությամբ: Հենց նրանցից էլ ընտրում էին առաջնորդ: Աստիճանաբար ձևավորվում էր հասարակության արտոնյալ խավը: Վերջինիս կազմում էին առաջնորդները, քրմերը, տնտեսական հաջող գործունեություն ծավալած մարդիկ: Գուլքային անհավասարությունը, որ ցցուն էր նեոլիթի վերջում, ձևավորվեց մարդկային կոլեկտիվի բնական (հոգեկան, ֆիզիկական, ինտելեկտուալ) տարբերությունների հիման վրա:

Դրվեցին մասնավոր սեփականության հիմքերը, որը ներառում էր անհատական կացարանը, տնային գույքը, հագուստը, զարդերը, աշխատանքի գործիքները, անասունը, նավակները, այլ շարժական գույքը: Սեփականության մյուս տեսակը հողի նկատմամբ կոլեկտիվ սեփականությունն էր:

Արտադրողական ուժերի զարգացման արդյունքում էապես աճեց աշխարհի բնակչությունը: 5-4 հազարամյակների (մթա) սահմանագծին երկրագնդում բնակվում էր 80 մլն մարդ, իսկ բնակչության խտությունը բնակեցված տարածքներում 1 քառ. կմ հաշվով կազմում էր 10-100 մարդ:

Բնակչության նման արագ աճի պատճառը մարդու կյանքի պայմանների բարելավումն էր, սննդամթերքով ապահովվածությունը, ծննդաբերության բարձր մակարդակը և մահացության կրճատումը:

Արդեն ստեղծվում էին գյուղեր՝ համայնքների համար, իսկ դրանց բնակիչները ոչ միայն արյունակցական կապերով հարազատներն էին, այլև հարևանները: Փաստորեն՝ արյունակցական համայնքը վերածվեց տարածքայինի: Տները կառուցվում էին քարից, աղյուսից և կավից, իսկ համայնքը դառնում էր բազմամարդ՝ մի քանի հարյուրից մինչև հազար:

Տեղի ունեցավ աշխատանքի բաժանում տղամարդու և կնոջ միջև, որը պայմանավորված էր արտադրող տնտեսության կարևոր ճյուղերի զարգացման յուրահատկությամբ: Աշխատանքի գործիքների պատրաստումը տղամարդու գործն էր, իսկ երեխաների խնամքը, հագուստի և կերակրի պատրաստումը՝ կնոջ: Նեոլիթի վերջում տնային տնտեսությամբ հիմնականում կիճն էր զբաղվում, իսկ դրսի աշխատանքով՝ տղամարդը: Բոլոր հիմնական արտադրամիջոցներն անցնում են տղամարդու իրավասության տակ, հետագայում դառնում նրա սեփականությունը, ինչը կանանց կախման մեջ է գցում տղամարդկանցից:

Փոխանակության և ընդհանրապես տնտեսության զարգացումը խթանեց մարդկանց մաթեմատիկական գիտելիքների կուտակումը, ի հայտ եկան առաջին, դեռևս պարզունակ, հաշվային համակարգերը: Հաշվի համար օգտագործվում էին քարը կամ ծղոտի կապը, խեցիները: Հողագործական աշխատանքների աճը նպաստեց երկրաչափական գիտելիքների զարգացմանը: Կազմվեցին առաջին երկրաչափական քարտեզները: Հայտնագործվեց անիվը, և սկսվեց անվավոր տրանսպորտի զարգացումը: Նեոլիթի վերջում տեղի ունեցավ կարևոր իրադարձություն՝ մարդկության պատմության մեջ առաջին անգամ ի հայտ եկավ գրավոր խոսքը, որով էլ նախնադարյան շրջանը տարանջատվեց քաղաքակրթությունից:

Այսպիսով, հարկ է նշել, որ նախնադարը առաջին հասարակական-տնտեսական կարգն էր, որի հիմքը արտադրության նախնադարյան-համայնական եղանակն է: Հիմնական հատկանիշներն են՝ աշխատանքի պարզունակ գործիքները, արտադրության միջոցների ընդհանուր (կոլեկտիվ) սեփականությունը, կոլեկտիվ աշխատանքը: Հիմնական տնտեսական օրենքը կենսաբարիքների ստեղծումն է կոլեկտիվ աշխատանքով և դրանց հավասարարական բաշխումը:

Հասարակարգի զարգացման յուրահատկությունն այն է, որ նյութական բարիքների արտադրության հետ մեկտեղ կարևորվում է մարդու վերարտադրությունը՝ ընտանիքի սպեցիֆիկ ձևերի հիման վրա: Զարգացման փուլերն են՝ վաղ փուլը (մայրական տոհմ), ուշ փուլը (հայրական տոհմ): Կենսաբարիքների հայթայթման եղանակը հավաքչությունն էր, որսորդությունը, ձկնորսությունը: Գերակշռում էին աշխատանքի բնական բաժանումը, փոխանակության պատահական ակտերը: Աստիճանաբար զարգացան արտադրողական ուժերը, կատարելագործվեցին արտադրական հարաբերությունները:

ՍՏՐԿԱՏԻՐԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՐԳԸ

2.1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Նախնադարյան-համայնական հասարակության ընդերքում մետաղների օգտագործման դարաշրջանում ձևավորվում են դասակարգային հասարակության կացութաձևերը, առաջանում է վաղդասակարգային հասարակությունը: Որոշ ժողովուրդներ բարբարոսության շրջանից անցում են կատարում ստրկատիրությանը և դրանից էլ՝ ֆեոդալիզմին, ուրիշները (գերմանացիներ, սլավոններ և այլն), շրջանցելով ստրկատիրությունը, նախնադարից անմիջականորեն անցնում են ֆեոդալական տնտեսաձևին:

Ստրկատիրական կացութաձևը հասարակության պատմության մեջ առաջին դասակարգային հասարակական-տնտեսական ֆորմացիան է, որը հիմնված էր մարդու կողմից մարդու շահագործման վրա: Ստրկատիրությունը առաջացավ ոչ միանգամից, այլ՝ արտադրողական ուժերի զարգացմանը զուգընթաց, երբ կատարելագործվեցին աշխատանքի գործիքները, աշխատանքային գործընթացը և դրանց արդյունքում ստեղծվեց արտադրանքի ավելցուկ:

Ստրկատիրական տնտեսակարգի առաջացման հիմնական գործոններն էին.

1. Մետաղների օգտագործման շնորհիվ աշխատանքային գործընթացի անհատականացումը: Աշխատանքի առաջին և երկրորդ հասարակական բաժանումները, որոնք տեղի են ունեցել նախնադարում, աշխատանքի քարե գործիքներից անցումը մետաղականին, էականորեն բարձրացրին աշխատանքի արտադրողականությունը: Առաջանում է աշխատանքի գործիքների, անասնահոտի, հողի և աշխատանքի արդյունքների մասնավոր սեփականությունը:
2. Գյուղական համայնքի ներսում գույքային անհավասարության առաջացումը և մեծացումը: Ի հայտ են գալիս ռազմագերիները, ստրուկները, պարտապանները:
3. Ցեղատոհմային ավագանու և հասարակ համայնականների միջև հակասությունների ուժեղացումը: Ստեղծվում է ռազմական դեմոկրատիա (թագավոր, դուքս, իշխան, կոմս և այլն): Իշխանության ցեղատոհմային կազմավորումը և կառավա-

րումը փոխարինվում է պետական-տարածքային կազմակերպմամբ:

Ինչ վերաբերում է ստրկատիրական հասարակարգի ժամանակային սահմաններին, ապա դրանք ներառում են տնտեսաձևի ձևավորումը, վաղ և զարգացած ստրկատիրական հասարակությունը և ստրկատիրական կացութաձևի անկման շրջանը մինչև ֆեոդալական կարգի տարրերի առաջացումը: Հնագույն ստրկատիրական պետություններն առաջացել են մթա IV և III հազարամյակների սահմանագլխին (Միջագետք, Եգիպտոս): Ստրկատիրական հասարակարգը գոյություն է ունեցել Ասիայի, Եվրոպայի, Աֆրիկայի մի շարք երկրներում ընդհուպ մինչև մթ III-IV դարերը: Իր զարգացման գագաթնակետին հասավ Հին Հունաստանում և Հին Հռոմում:

Ստրկատիրական տնտեսակարգի հիմքը արտադրության անտիկ եղանակն է: Ոչնչով չի սահմանափակվում ստրկատիրոջ սեփականությունը ստրուկի, արտադրության գործիքների և աշխատանքի արդյունքների նկատմամբ: Հիմնական տնտեսական օրենքը արդյունքի արտադրությունն է ստրուկի աշխատանքի հիման վրա և յուրացման ու բաշխման արտատնտեսական ձևերը:

Ստրկատիրական կացութաձևի հիմնական հատկանիշներն էին.

1. Տնտեսության բնեղեն բնույթը,
2. Արտադրության պարզունակ տեխնիկան,
3. Ստրկատիրոջ սեփականությունը աշխատանքի գործիքների, ստրուկի աշխատանքի արդյունքների և հենց իրեն՝ ստրուկի նկատմամբ,
4. Շուկայի առավելապես սպառողական բնույթը,
5. Պարզ ապրանքային արտադրության զարգացումը: Աշխատանքի երրորդ խոշոր հասարակական բաժանումը՝ վաճառականական (առևտրային) և վաշխառուական (դրամական) կապիտալների անջատումը արհեստներից,
6. Պոլիսների (Հունաստան) և մունիցիպների (Հռոմ) առաջացումը: Դեռևս նախնադարյան արյունակցական համայնքի առկայության պայմաններում, երբ կատարելագործվեցին աշխատանքի քարե գործիքները, իսկ հետագայում անցում կատարվեց մետաղյա գործիքներին, զարգացան ոչ միայն հողագործությունն ու անասնապահությունը, այլև՝ արհեստները: Աշխատանքի առաջին և երկրորդ հասարակական բաժանումները նպաստեցին շուկայական հարաբերությունների ծագմանն ու զարգացմանը, տեղի ունեցավ փոխանակային արժեքի ձևերի էվոյուցիա (ծավալուն, համընդհանուր, դրամական): Արյունակցական համայնքը փոխարինվեց հարևանային, գյուղական համայնքով: Առաջացան հիմնական դասակարգեր՝ ստրկատերեր և ստրուկներ: Դա տեղի ունեցավ

հետևյալ կերպ: Արտադրողական ուժերի զարգացումը հանգեցրեց ավելցուկային արտադրանքի ստեղծմանը, որը կենտրոնացավ առանձին ընտանիքների ձեռքին: Աշխատանքի հասարակական բաժանման խորացումը և նշված ավելցուկի առկայությունը նպաստեցին ապրանքափոխանակության ծավալմանը: Արդեն անհրաժեշտություն էր առաջանում նախնադարյան հավասարարական բաշխումից անցում կատարել ավելի շատ արտադրանքի թողարկմանը և դրա ուղղմանը առանձին մարդկանց աճող պահանջումներին բավարարմանը: Շահագործումը պահանջում էր տնտեսության մեջ ոչ միայն ռազմագերիների, այլև գույքային անհավասարության հետևանքով աղքատացած, պարտքը չվերադարձրած ազատների աշխատանքի կիրառում: Տևական ժամանակամիջոցում առաջացավ արտադրության միջոցների մասնավոր սեփականություն, որն ընդգրկեց աշխատանքի գործիքները, ստրուկները և մասամբ՝ հողը: Գույքային անհավասարությունը և մասնավոր սեփականատիրական հարաբերությունները դարձան դասակարգերի առաջացման հիմնական գործոնները:

Տնտեսական կյանքի բոլոր ոլորտներում ստրուկների աշխատանքի շահագործումը վերնախավին հնարավորություն էր ընձեռում զբաղվելու ոչ ֆիզիկական, մտավոր գործունեությամբ, արվեստներով, գիտությամբ, ապրելու ցոփ ու շռայլ կյանքով:

Սեփականությունն առաջացավ որպես պատմականորեն որոշված յուրացման, արտադրական և ոչ արտադրական առարկաների օտարման եղանակ: Սեփականությունը միշտ կապվել է յուրացման-օտարման օբյեկտի հետ, սակայն ինքը հանդես է եկել որպես հարաբերություն:

Սեփականության տիպաբանությունը ներկայացվում է. ա) ըստ օբյեկտի, բ) ըստ յուրացման-օտարման տիպի, գ) ըստ նյութական բովանդակության, դ) ըստ իրավական բովանդակության, ե) ըստ կառավարման ձևերի: Ստրկատիրությունը ենթադրում էր նախնադարյան հասարակարգի ընդհանուր սեփականությունից անցում մասնավոր սեփականության:

Ստրկատիրությունն ունեցել է երկու հիմնական ձև՝ վաղ կամ նահապետական, և զարգացած կամ դասական: Առաջինի դեպքում գերիշխող էր բնատնտեսությունը, երկրորդին հատուկ էին զարգացած ապրանքադրամային հարաբերությունները: Նահապետական ստրկատիրությունը գերազանցապես տարածված էր Արևելքի երկրներում, որոնց տնտեսության հիմքը գյուղական համայնքն էր: Իսկ ստրուկի աշխատանքը հիմնականում օգտագործվել է տաճարային և արքունական տնտեսություններում, որոնցում նա ամրացված էր հողին: Ստրուկներին օգտագործում էին շինարարական

աշխատանքներում, երբեմն էլ՝ որպես ռազմական ուժ (Ասորեստան, Ուրարտու, Չինաստան): Սակայն հիմնական արտադրողները գյուղական համայնքի անդամ ազատ երկրագործներն էին, որոնք ստրուկների հետ հարկադիր մասնակցում էին ոռոգման համակարգերի (Եգիպտոս, Բաբելոն), ամրությունների (Ուրարտու, Չինաստան), տաճարների, պալատների, բուրգերի և այլ խոշոր կառույցների շինարարությանը:

Ջարգացած ստրկատիրական հասարակարգում (Հին Հունաստան, Հին Հռոմ) ստրկատիրական արտադրությունն ուներ ավելի բարձր մակարդակ: Այստեղ ստրկական աշխատանքը դարձավ տնտեսական կյանքի հիմքը, իսկ ստրկատիրությունը վերածվեց տնտեսական հարաբերությունների տիրապետող ձևի: Անտիկ հասարակության մեջ ստրուկը զուրկ էր մարդկային տարրական իրավունքներից, տիրոջ լիակատար սեփականությունն էր, «խոսող իր»: Նա չէր տարբերվում բանող անասունից, աշխատանքի գործիքից, զնվում և վաճառվում էր, խստորեն պատժվում:

Թեև ստրկատիրությունը նախնադարյանի համեմատությամբ ավելի առաջադիմական հասարակարգ էր, սակայն որոշակի ժամանակամիջոցում դարձավ արտադրողական ուժերի զարգացման արգելակ: Չկար շահագրգռվածություն կատարելագործելու արտադրության միջոցները, քանի որ ստրուկի աշխատանքը էժան էր, իսկ վերջինիս էլ բնավ չէր հետաքրքրում արտադրության զարգացումը: Հաճախակի էին դառնում ստրուկների ապստամբությունները, որոնցից նշանավորը Սպարտակի գլխավորած ապստամբությունն էր մթա 74-71 թթ.: Ստրկական աշխատանքի սահմանափակ հնարավորությունները և ստրուկների ապստամբությունները քայքայեցին հասարակարգի հիմքերը:

2.2. Հին Արևելքի Պետութունների ԱՏՐԿԱՏԻՐԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Առաջին պետությունները, քաղաքակրթության առաջին օջախները առաջացել են IV հազ. (մթա) Հին Արևելքի երկրներում՝ Միջագետքում, Եգիպտոսում, Պարսկաստանում, Հնդկաստանում, Չինաստանում: Բարենպաստ կլիման և խոշոր գետերի՝ Նեղոսի, Տիգրիսի, Եփրատի, Ինդոսի, Գանգեսի, Խուանյետի բարեբեր հովիտները պայմաններ ստեղծեցին բնակչության նստակյաց կենցաղի և հողագործության զարգացման համար: Հավելյալ արդյունքի արտադրության

հնարավորությունը դեռևս քարե գործիքների օգտագործման ժամանակաշրջանում թույլ տվեց ստրկացնելու ռազմագերիներին և օգտագործելու նրանց աշխատանքը ոռոգման համակարգերի, ջրանցքների, ամբարտակների, պալատների, տաճարների կառուցման նպատակով: Այդ աշխատանքների կատարմանը պարտադիր կարգով ներգրավվում էին նաև ազատ համայնականները, որոնց վիճակը գրեթե չէր տարբերվում ստրուկների վիճակից:

Ոռոգման համակարգերի ստեղծումը և պահպանումը պահանջում էր միավորել և կոորդինացնել բազմաթիվ համայնքների ջանքերը և կենտրոնացնել ամբողջ տնտեսության կառավարումը, որը նպաստում էր պետության առաջացմանը: Չինովնիկների մի մեծ բանակ հետևում էր դաշտերի ոռոգմանը, ոռոգման համակարգի պահպանմանը, համայնականների կողմից թագավորական աշխատանքների կատարմանը, հողահարկի հավաքմանը: Եգիպտոսում կանոնավոր կերպով կատարվում էին բնակչության մարդահամարներ և նրա գույքի գնահատում, սահմանվում էին հացահատիկի հավաքման և շինարարական աշխատանքների կատարման չափերը, որոնք չապահովողները ենթարկվում էին պատիժների:

Ստրուկները հիմնականում ձեռք էին բերվում պատերազմների միջոցով: Ստրկացվում էին նաև ազատ համայնականները՝ պարտքը չվճարելու համար: Ստրուկների աշխատուժի պահանջը գնալով մեծանում էր: Նրանց գնում և վաճառում էին: Բաբելոնում ստրուկի գինը տատանվում էր 8 գրամ արծաթի արժեքի սահմաններում:

Հին Արևելքի պետությունների հիմքը կազմում էր գյուղատնտեսությունը, որի հիմնական ճյուղերն էին այգեգործությունը, խաղողագործությունը, ոչխարաբուծությունը, բուսաբուծությունը: Գյուղատնտեսությունից արագ առանձնանում էին արհեստները՝ բրուտագործությունը, աղյուսի, նավաշինական, ապակու, ռազմական տեխնիկայի արտադրությունները:

Հին Արևելքի երկրները մթա II և I հազարամյակների սահմանագծին սկսեցին օգտագործել երկաթե գործիքներ: Թանկարժեք մետաղներից պատրաստում էին ոսկերչական իրեր:

Գյուղատնտեսական և արհեստագործական արտադրանքի մի մասը փոխանակվում էր երկրների ներսում, իսկ ավելի ուշ՝ արտահանվում, ստեղծվում էին դրամական և հարկային համակարգեր, առաջանում էին քաղաքները:

Հին Արևելքի ստրկատիրական պետությունների տնտեսությունը զարգանում էր դանդաղ: Դարերի ընթացքում պահպանվում էին արտադրության միևնույն գործիքները, աշխատանքի կազմակերպման ձևերը: Մշտական պատերազմները և քոչվոր ցեղերի հարձակումները քայքայում էին հնագույն պետությունների արտադրողական ուժերը և անգամ՝ ոչնչացնում երկրներ: Դրանով հանդերձ,

իրենց երկարատև պատմության ընթացքում Հին Արևելքի երկրները մեծ հաջողություններ ձեռք բերեցին նյութական և հոգևոր մշակույթի զարգացման բնագավառում: Աշխատանքի զանգվածային կազմակերպման շնորհիվ նրանք տեխնիկական ամենապարզ միջոցների պայմաններում կարողացան իրականացնել վիթխարի շինարարություն և կառուցել բարդ ոռոգման համակարգեր, շքեղ պալատներ, տաճարներ, բուրգեր:

Հին Արևելքի երկրների ստրկատիրական տնտեսություններն ունեին որոշ առանձնահատկություններ.

- Արտադրական հարաբերությունները կարելի է բնութագրել որպես կիսաստրկատիրական – կիսանահապետական, և ըստ էության ներկայացնում էին արտադրության ասիական եղանակը՝ արևելյան բռնապետությամբ, թագավորների անսահմանափակ իշխանությամբ, հողի մասնավոր սեփականության լրիվ բացակայությամբ:

- Պահպանվում էին ինքնամիոփ գյուղական համայնքները՝ իրենց բնատնտեսությամբ, ուստի և միմյանցից մեկուսացված, բայց կոլեկտիվ աշխատանքով, որն անհրաժեշտ էր խոշոր շինարարություն իրականացնելու համար:

- Մասնավոր սեփականությունը դեռևս թույլ էր զարգացած, հողը և ստրուկները սկզբնական շրջանում պատկանում էին համայնքներին: Հողի մի մասը բաժանված էր գյուղացիներին, որոնք դրա համար վճարում էին բնեղեն հարկ(բերքի 1/8-րդ - 1/7-րդ մասը) և մշակում համայնական դաշտերը: Համայնքներին էին պատկանում նաև բանող անասունները և գույքը, ինչպես նաև շինարարության մեջ զբաղված ստրուկները: Պետության առաջացմամբ հողը և ստրուկները դարձան պետական սեփականություն, թեև առաջվա պես օգտագործվում էին համայնքների կողմից:

- Թեև ստրկությունը զգալիորեն զարգացած էր, սակայն ստրուկները դեռևս չէին հանդիսանում հիմնական արտադրողական ուժը և նրանց թիվն էլ համեմատաբար մեծ չէր: Նյութական բարիքների հիմնական արտադրողները ազատ համայնականներն էին:

- Ստրկության թույլ զարգացման մասին վկայում է նաև այն փաստը, որ մեծ տարբերություն չէր դրվում ստրուկ-ռազմագերիների և համայնականների միջև, թույլ էին տրվում նրանց միջև ամուսնություններ: Համուրապպի թագավորի օրենսգիրքը Բաբելոնում պաշտպանում էր ինչպես ստրկատիրոջ, այնպես էլ ստրուկի շահերը:

Բնատնտեսության տիրապետությունը և տնտեսական կապերի թույլ զարգացումը պայմանավորում էին Հին Արևելքի երկրների տնտեսական զարգացման ցածր մակարդակը: Վերապրելով վերելքի և անկման առանձին ժամանակաշրջաններ, մեր թվարկության

սկզբին դրանցից շատերը նվաճվեցին ավելի զարգացած ստրկատիրական պետությունների՝ Հին Հունաստանի և Հին Հռոմի կողմից:

2.3. ՀԻՆ ՀՈՒՆԱՍՏԱՆԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՅՈՒՄ

Հին Հունաստանի պատմությունը բաժանվում է մի քանի ժամանակաշրջանների՝ Կրետե-Միքենյան (III հազարամյակից մինչև մթա XII դարը) և Հոմերոսյան (մթա XI-IX դարեր): Այս երկու ժամանակաշրջաններում էլ Հունաստանին բնորոշ էր համայնական կարգը, որը սկսել էր քայքայվել: Ձևավորվում էր ստրկությունը: Դա ռազմական դեմոկրատիայի ժամանակաշրջանն էր, որովհետև հաճախակի դարձած ընդհարումների պայմաններում մեծ դեր էր սկսում խաղալ ռազմական վերնախավը: Հունաստանի տնտեսության մեջ մթա X-IX դդ. սկսում են օգտագործել աշխատանքի երկաթե գործիքները: Հողակտորները, որ ամրացվում էին առանձին ընտանիքների, կարող էին մանրացվել վաճառելու կամ ժառանգելու համար: Ստրկությունը դեռևս տարածված չէր, տնտեսության մեջ օգտագործվում էր վարձկանների աշխատանքը:

Քաղաքական ու տնտեսական կենտրոն էր պոլիսը: Դա բնակավայր էր իր կառույցներով և ամրոցներով, հիմնական բնակչությունը կազմում էին հողագործ և անասնապահ գյուղացիները: Արհեստներով և առևտրով հույները գրեթե չէին զբաղվում և իրենց անհրաժեշտ իրերը ձեռք էին բերում պատերազմների միջոցով:

Հին Հունաստանի պատմության մյուս՝ անցման ժամանակաշրջանը ընդգրկում է մթա VIII-VI դդ.: Պետությունը միասնական չէր, այլ բաղկացած էր բազմաթիվ մանր պետություն-պոլիսներից, որոնք ընդգրկում էին Բալկանյան թերակղզու հարավը և Միջերկրական ծովի արևելյան կղզիները: Հունական պոլիսներից աչքի էին ընկնում Աթենքը և Սպարտան: Ցեղային հարաբերություններն այստեղ վերջնականապես վերացվեցին Սոլոնի և Կլիսֆենի ռեֆորմներով, որոնք ցեղային և տոհմային բաժանումը փոխարինեցին տարածքային բաժանմամբ, իսկ ազատ բնակչությունը ըստ ունեցվածքի բաժանեցին չորս կարգի, որով և որոշվում էին նրանց քաղաքական իրավունքները և զինվորական պարտականությունները: Սոլոնի ռեֆորմով (մթա 594 թ.) գյուղացիների պարտքերը ներեցին, գրավադրված հողերը վերադարձվեցին, արգելվեց պարտային ստրկությունը, հողային սեփականությունը սահմանափակելու համար մտցվեց հողային նվազագույնը: Այդպես տոհմատիրական կարգի փլատակների վրա ձևավորվում էր Աթենքի ստրկատիրական հանրապետությունը:

Անցման ժամանակաշրջանում սկսվում է հունական մեծ գաղութացումը, երբ պոլիսի բնակչության մի մասը նավերով տեղափոխում

էին Յունաստանից՝ հիմնադրելով նոր պոլիսներ Սիցիլիայում, Իտալիայում, Սև ծովի և Հյուսիսասիյն Աֆրիկայի ափերին: Դրա պատճառը պոլիսների բնակչության ավելացման հետևանքով հողի պակասն էր, ինչպես նաև՝ առևտրային ուղիները վերահսկելը և հումքի աղբյուրներ ու շուկաներ ձեռք բերելը: Գաղութների միջոցով հույները առևտուր էին անում այլ ժողովուրդների հետ՝ նպաստելով նրանց տնտեսական զարգացմանը և առաջավոր հունական մշակույթի տարածմանը:

Հունաստանը գաղութներից ներմուծում էր էժան հացահատիկ, որի հետևանքով շատ պոլիսներ հրաժարվում էին հացահատիկի արտադրությունից և զարգացնում այգեգործությունն ու խաղողագործությունը: Ձիթապտղի յուղը և գինին մեծ քանակությամբ արտահանվում էր: Աշխատանքի երկաթե գործիքների տարածումը նպաստում էր արհեստների զարգացմանը, շատ պոլիսներ դառնում են խոշոր արհեստագործական կենտրոններ:

Հունական քաղաքակրթությունը առավել բարձր զարգացման հասավ մթա V դ., երբ ավարտվեց ստրկատիրական կարգի ձևավորումը, ծաղկում ապրեց պոլիսը: Դրան նպաստեցին հույն-պարսկական պատերազմները (մթա 500-449 թթ.), որոնց ընթացքում հունական պոլիսները միավորվեցին ծովային միության մեջ՝ Աթենքի գլխավորությամբ: Հաղթելով Պարսկաստանին, Աթենքը դարձավ հզոր պետություն, որին ենթարկվում էին մյուս հունական պետությունները: Պատերազմների հետևանքով Հունաստանը ձեռք բերեց հսկայական հարստություններ և ռազմագերիներ, որոնց վերածեց ըստրուկների: Պատերազմները, ծովահենությունը, ստրկավաճառությունը ավելացնում էին ստրուկների թվաքանակը: Ենթադրվում է, որ Աթենքում ստրուկները կազմում էին բնակչության 1/3 մասը: Հագարավոր ստրուկներ աշխատում էին հանքահորերում և քարհանքներում, շինարարության մեջ և այլն: Ստրուկների աշխատուժը լայնորեն օգտագործվում էր արհեստագործության մեջ: Արհեստանոցներում՝ էրգաստերիաներում, աշխատում էին 10-12, երբեմն էլ մի քանի տասնյակ, կամ հարյուր ստրուկ-արհեստավորներ:

Գյուղատնտեսության մեջ գերակշռում էին մանր գյուղացիական տնտեսությունները, որոնցում տարածված էր ստրուկների աշխատանքը: Ստրուկներին հանձնում էին վարձակալությամբ, բաց թողնում բահրա վճարելու պայմանով, ազատ արձակում փրկագումով:

Աթենքը մթա V դարում դառնում է անտիկ աշխարհի արհեստագործության կենտրոն, որտեղ զարգանում էին մետալուրգիան, մետաղամշակությունը, նավաշինությունը, խեցեգործական և բրուտագործական արտադրությունը, քարի, հատկապես՝ մարմարի մշակումը: Աթենքի համար կարևոր նշանակություն ուներ նաև առևտուրը: Միջերկրական ծովով առևտրում իշխում էր Պիրեյ նավահանգիստը,

որը մեծ եկամուտներ էր բերում պետությանը: Պիրեյոսը էր արտահանվում հունական պոլիսների արտադրանքը՝ զինիններ, ձիթապտղի յուղ, արհեստագործական առարկաներ, և ներմուծվում հացը, մետաղը, համեմունքները, պերճանքի առարկաները:

Առևտրով պայմանավորված՝ զարգանում էին դրամական հարաբերությունները: Բոլոր հունական պոլիսներն ունեին դրամ հատելու իրավունք: Ի հայտ էին գալիս «բանկիրները», որոնք փոխանակում էին մի պոլիսի դրամը մյուսով, պահում փողը, վճարումներ կատարում առևտրականների փոխարեն, տալիս դրամական փոխատվություններ:

Հունական պոլիսի ճգնաժամը նկատվում է մթա IV դարից, երբ տարածվում է հողի առք ու վաճառքը, որը նպաստում է հողերի կենտրոնացմանը առանձին մարդկանց, հաճախ՝ ոչ քաղաքացիների ձեռքում: Դա խախտում է հողի սեփականատեր լինելու՝ քաղաքացիների բացառիկ իրավունքը, տարածվում է հողի մասնավոր սեփականությունը, մանր արտադրողները՝ հողագործներն ու արհեստավորները քայքայվում են, աճում է հույն ստրուկների թիվը, ինչը նախկինում անհնար էր:

Ապրանքադրամային հարաբերությունների զարգացման հետևանքով ընդլայնվում են միջպոլիսային տնտեսական կապերը, որը թուլացնում էր պոլիսների միասնությունը և նրանց ռազմական ուժը: Մթա 338 թ. Աթենքը կորցրեց իր անկախությունը և ենթարկվեց Սակեդոնիային, իսկ մթա II դարում ամբողջ Հունաստանը նվաճվեց Հռոմի կողմից:

2.4. ՀԻՆ ՀՈՄՍԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՅՈՒՄԸ

Հռոմի վերելքով ավարտվում է Հին աշխարհի պատմությունը: Այդ վերելքն ընդգրկում է շուրջ 12 դար, որոնց ընթացքում Հռոմը ոչ մեծ համայնքից վերածվեց հսկայական տերության՝ իրեն ենթարկելով քաղաքակիրթ աշխարհի մեծ մասը: Անտիկ ստրկատիրությունը Հին Հռոմում հասավ զարգացման գագաթնակետին:

Հռոմի պատմության առաջին ժամանակաշրջանը (մթա VIII-VI դդ.) կոչվում է թագավորական, թեև նրա հասարակական կարգը ռազմական դեմոկրատիան էր՝ զինվորական առաջնորդների գլխավորությամբ:

Այս ժամանակաշրջանում անցում էր կատարվում տոհմատիրական համայնքից տարածքայինին: Համայնքին էր պատկանում հողը և ամեն մի ընտանիքի հայր՝ պատրիկը, ստանում էր մշակելու հա-

մար: Բնակիչների մի խումբ կազմում էին պլեբեյները: Նրանք համայնքից դուրս էին, թեև ազատ էին, բայց չունեին քաղաքացիական իրավունքներ, հիմնականում զբաղվում էին արհեստներով և առևտրով: Պլեբեյները մթա VI դարից պայքար են սկսում իրավահավասարության և համայնական հողերի համար, որն ավարտվում է մթա III դարի վերջում: Նրանք ձեռք բերեցին քաղաքացիական իրավունքներ: Մթա VI դարում իրագործվեցին Սերվիուս Տուլիուսի ռեֆորմները, որոնցով Հռոմի արական բնակչությունը ըստ ունեցվածքի բաժանվեց 6 կարգի. դրանց համապատասխան նրանք կարող էին զբաղեցնել պաշտոններ և կատարել զինվորական ծառայություն:

Մթա VI դարում առաջանում է պետությունը և սկսվում է Հռոմի պատմության երկրորդ՝ հանրապետության ժամանակաշրջանը: Մթա V դարից Հռոմը սկսում է Իտալիայի նվաճումը և մթա 270 թ. իրեն է ենթարկում բոլոր իտալական ցեղերը, խլում նրանց հողերի զրեթե կեսը և բաժանում հռոմեական քաղաքացիներին: Նվաճելով Իտալիան, Հռոմը պայքար է սկսում Միջերկրական ծովի ավազանի երկրները գրավելու համար, որը տևում է մոտ հարյուր տարի և ավարտվում հաղթանակով: Հռոմը դառնում է հզոր պետություն:

Հռոմի բնակչության հիմնական զբաղմունքը մնում էին հողագործությունը և անասնապահությունը: Գոյություն ուներ տնտեսության երկու տեսակ՝ վիլլաներ՝ մինչև 50-60 հա հողատարածությամբ տնտեսություն, որտեղ աշխատում էին ոչ միայն ստրուկները, այլև ունեզրկված գյուղացիները, և ազատ գյուղացիական տնտեսություն: Այսպիսով՝ ստրուկների շահագործումը դեռևս չէր ընդունել համընդհանուր բնույթ:

Մթա VI – III դարերում արագացավ արհեստների և առևտրի զարգացումը, սկսվեց երկաթի և բրոնզի օգտագործումը: Առավել զարգացած էր բրուտագործությունը, որը կենտրոնացված էր խոշոր արհեստանոցներում: Աշխուժանում է պերճանքի առարկաների, երկաթի, խեցեղենի, հացի, գինու և ձիթապտղի յուղի առևտուրը: Սկսվեց սկզբնական շրջանում՝ հունական, իսկ մթա IV դարում՝ հռոմեական դրամների օգտագործումը:

Հռոմը իր պատմության երրորդ՝ կայսերական ժամանակաշրջանում (մթա II – I դարեր) ծաղկում է ապրում և դառնում վիթխարի ստրկատիրական պետություն: Պատերազմների միջոցով ձեռք էին բերվում տասնյակ հազարավոր ստրուկներ, որոնց աշխատանքը լայն տարածում էր գտնում տնտեսության բոլոր ճյուղերում:

Ստրուկների աշխատանքի ծավալումը պայմաններ ստեղծեց ստրկատիրական տնտեսությունների խոշորացման համար: Հռոմեական կայսրության պրովինցիաներում, հատկապես Հյուսիսային Աֆրիկայում, գերակշռում էին լատիֆունդիաները՝ տնտեսություն-

ներ, որոնք ունեին տասնյակ հազարավոր հա հողեր և հազարավոր ստրուկներ: Հռոմում և որոշ եվրոպական պրովինցիաներում գերակշռում էին վիլլաները: Դրանք միջին չափերի տնտեսություններ էին, որոնք ունեին տասնյակ և հարյուրավոր հա հողեր, որոնք մշակում էին հարյուրավոր ստրուկներ:

Ստրկատիրական տնտեսությունները ընդլայնում էին աշխատատար ապրանքային մշակաբույսերի (խաղողի, ձիթապտղի, բանջարեղենի) արտադրությունը և զարգացնում անասնապահությունը: Հացահատիկային մշակաբույսերի արտադրությունը դառնում է ոչ շահավետ. դրանք տուրքի ձևով մեծ քանակությամբ ստացվում էին հռոմեական պրովինցիաներից: Ստրկատիրական տնտեսությունների խոշորացումը ուղեկցվում էր մանր արտադրողների քայքայմամբ, որոնք չէին կարող մրցակցել նրանց հետ և հողագրկվում էին:

Ստրուկի աշխատանքը սկսում են օգտագործել նաև արհեստագործության մեջ, որտեղ ազատ արհեստավորը բանեցնում էր մի քանի ստրուկի: Ծաղկում էր առևտուրը Սիցիլիայի, Եգիպտոսի, Իսպանիայի, Սիրիայի, Հունաստանի և այլ երկրների հետ: Ընդամին, օգտագործվում էին հռոմեական արծաթե դրամները:

Մթ II – III դարերում սկսված ստրկատիրության ճգնաժամը խոչընդոտում է արտադրողական ուժերի զարգացումը: Գյուղատնտեսությունը լճացում էր ապրում, ստրուկների աշխատանքը շահավետ չէր, նրանց մեծ թվաքանակի օգտագործման պայմաններում հնարավոր չէր ապահովել արդյունավետ վերահսկողություն: Մյուս կողմից, ստրկատիրական տնտեսության զարգացման անհրաժեշտ պայմանը մշտական պատերազմներն էին, որոնք ապահովում էին ստրուկների բանակի համալրումը, և որոնց թիվը գնալով կրճատվում էր: Նման պարագայում հռոմեական ազնվականության խոշոր լատիֆունդիաների հողերը բաժանվում էին մանր կտորների և վարձակալությամբ հանձնվում ունեզրկված, բայց ազատ գյուղացիներին, որոնք կոչվում էին կոլոններ: Հետագայում այդպիսի հողերը տրվում էին նաև ստրուկներին, որոնք բերքի մեծ մասը վճարում էին հողատիրոջը: Գնալով կոլոնները (ազատ գյուղացիները) կորցնում են իրենց ազատությունը և ամրացվում հողին: Նրանց վիճակին են հասնում նաև ստրուկ-վարձակալները: Այդպիսով առաջանում էին ֆեոդալական շահագործման ձևերը:

Ստրկատիրական հարաբերությունների ճգնաժամի մասին էին վկայում նաև հռոմեական կայսրության թուլացումը, դասակարգային պայքարի սրումը, երկրի սահմանների պահպանության դժվարությունները և այլն: V դարի վերջին (476 թ.) Հռոմը նվաճվեց բարբարոսների կողմից: Արևմտյան հռոմեական կայսրությունը դադարեց գոյություն ունենալ:

Բ Ա Ժ Ի Ն Ե Ր Կ Ր Ո Ր Դ

Մ Ի Զ Ն Ա Դ Ա Ր

Գ Լ ՈՒ Խ III

ՖԵՈՂԱԼԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԳԾԵՐԸ, ՏՆՏԵՍԱԿԱՐԳԻ ՊԱՐԲԵՐԱՑՈՒՄԸ

V դարում Հռոմեական կայսրության անկումից հետո, որը տեղի ունեցավ անտիկ հասարակության ճգնաժամային երևույթների զարգացման և բարբարոսների արշավանքների հետևանքով, Եվրոպայում սկսվում է ձևավորվել նախկինից լիովին տարբերվող սոցիալ-տնտեսական համակարգ: Պատմաբանների պնդմամբ՝ միջնադարն ընդգրկում է V-XVIII դարերը: Բնականաբար, այդ շրջանի ժամանակագրական շրջանակներն ավելի փոքր էին, քան հին աշխարհինը:

Միջնադարում հասարակական աշխատանքի արտադրողականությունն ավելի բարձր էր, և ստեղծվեցին մարդկության հետագա տնտեսական զարգացման նախադրյալներ: Այդ ժամանակաշրջանում հատկապես ինտենսիվ էին զարգանում Արևմտյան Եվրոպայի երկրները: Հենց միջնադարում կազմավորվեց արդի եվրոպական պետությունների մեծամասնությունը, որոշվեցին դրանց սահմանները: Հարմար առևտրական ճանապարհների, ամրոցների ու վանքերի մոտ առաջացան ժամանակակից շատ քաղաքներ:

Միջնադարյան եվրոպան արտադրողական ուժերի բուռն զարգացման շնորհիվ գերազանցեց առավել հին պատմություն ունեցող արևելյան կայսրություններին: Աշխարհագրական մեծ հայտնագործությունների հետևանքով ձևավորվեցին համաշխարհային շուկան և գաղութային համակարգը: Միջնադարյան ֆեոդալական հասարակության ընդերքում ծնունդ առավ նոր սոցիալ-տնտեսական համակարգը՝ կապիտալիզմը:

Ի տարբերություն ստրկատիրականի, ֆեոդալական հարաբերություններն ընդգրկեցին զգալիորեն ավելի մեծ տարածք, թեև տարբեր երկրներում ֆեոդալիզմն ուներ իր յուրահատկությունները: Ֆեոդալական արտադրահարաբերությունների հիմքը հողի նկատմամբ ֆեոդալի լրիվ սեփականությունն էր և ճորտ գյուղացու նկատմամբ նրա ոչ լրիվ սեփականությունը:

Ֆեոդալական տնտեսակարգը ստրկատիրականի համեմատությամբ ավելի առաջադիմական էր, որովհետև ի տարբերություն

ստրուկի, կախյալ գյուղացիները հողատիրոջն էին հանձնում իրենց աշխատանքի արդյունքի միայն մի մասը՝ հավելյալ արդյունքը; Դա առաջացնում էր անմիջական արտադրողի շահագրգռվածությունն իր աշխատանքի արդյունքների նկատմամբ և պայմաններ ստեղծում արտադրողական ուժերի զարգացման համար:

Ի՞նչ էր իրենից ներկայացնում ֆեոդալիզմը: «Ֆեոդալիզմ» տերմինը առաջացել է ուշլատինական «ֆեոդ»-ից, որը նշանակում է կալվածք: Միջին դարերում Արևմտյան Եվրոպայի երկրներում այդ բառով էին կոչվում սյուզերենի կողմից իր վասալին ժառանգական օգտագործման տրված հողային տիրույթները:

Արդի ոչ մարքայան պատմագրության մեջ գոյություն ունեն ֆեոդալիզմի էության տարբեր մեկնաբանություններ: Հետազոտողների մի մասը, հենվելով իրավաբանական հայեցակերպի վրա, ֆեոդալիզմի գլխավոր հատկանիշը համարում է քաղաքական մասնատվածությունը, իշխանության հիերարխիայի կառուցվածքը, վասալիտետը, կորպորատիվությունը: Մյուսները ֆեոդալիզմը դիտարկում են համալիր ձևով և, բացի նշվածներից, փաստում են նաև խոշոր հողատիրությունը և գյուղացիական սեփականատիրային հատկանիշները:

Մարքսիստական պատմագրության մեջ ֆեոդալիզմը դիտարկվում է որպես հականարտ հասարակական-տնտեսական ֆորմացիաներից մեկը, որը հաջորդում է ստրկատիրական կարգին և նախորդում կապիտալիզմին: Այս ուղղությունը ֆեոդալիզմի հիմնական հատկանիշներն է համարում բնատնտեսության տիրապետությունը, խոշոր ֆեոդալական հողատիրության և մանր գյուղացիական հողօգտագործման զուգակցումը, գյուղացու անձնական կախվածությունը ֆեոդալից (այստեղից էլ՝ արտատնտեսական հարկադրանքը), տեխնիկայի չափազանց ցածր մակարդակը:

Արևմտյան Եվրոպայում ֆեոդալիզմի սկիզբը ընդունված է համարել Հռոմեական կայսրության անկումը (V դար), իսկ ավարտը՝ անգլիական բուրժուական հեղափոխությունը (1642-1649): Անցումը ֆեոդալիզմին Եվրոպական երկրներում ընդգրկել է մի քանի հարյուրամյակ: Այդ գործընթացն ավելի արագ տեղի էր ունենում նախկին Հռոմեական կայսրության տարածքում ձևավորված մի շարք պետություններում (Իտալիա, Ֆրանսիա, Գերմանիա), որտեղ առկա էին ֆեոդալիզմի սաղմերը՝ կոլոնատը և հռոմեական ազնվականության խոշոր հողատիրույթը, որը ժառանգեցին թագավորները և դրուժինայի անդամները:

Մյուս կողմից՝ Հռոմը նվաճած գերմանական ցեղերի շրջանակներում տեղի էր ունենում տոհմատիրական կարգերի քայքայում և դասակարգային հասարակության առաջացում, որ նախապատրաստում էր գյուղացիության ճորտացումը:

Միջնադարյան հասարակության զարգացումն ուղեկցվում էր տնտեսության մեջ, սոցիալական և քաղաքական կարգում նշանակալի տեղաշարժերով: Առանձնացվում է երեք շրջան.

- վաղ միջնադար (արտադրության ֆեոդալական եղանակի ձևավորման ժամանակաշրջան՝ V-X դդ.),

- դասական միջնադար (զարգացած ֆեոդալիզմի ժամանակաշրջան՝ XI-XV դդ.),

- ուշ միջնադար (ֆեոդալիզմի քայքայման և արտադրության կապիտալիստական եղանակի առաջացման ժամանակաշրջան՝ XV դ. վերջ – XVII դարի կես):

Հայաստանում վաղ ֆեոդալիզմը ձևավորվել է ավելի շուտ (III-IV դարերում), քան եվրոպական երկրներում:

Ֆեոդալական հասարակության քաղաքական կազմակերպությունը պետությունն էր, որն արտացոլում էր նրա տնտեսական կառուցվածքը և համարվում էր տնտեսական գործընթացների շարժը որոշող կարևորագույն գործոն: Ֆեոդալական պետության տիպիկ ձևը միապետությունն էր: Նշված շրջանում կար նաև կառավարման հանրապետական ձևը, որը հաստատվել էր Իտալիայի, Գերմանիայի քաղաք-պետություններում, ինչպես նաև Ռուսաստանում (Մեծ Նովգորոդ, Պսկով): Սակայն հետագայում դրանք կլանվեցին խոշոր միապետությունների կողմից:

Հետագոտողներն առանձնացնում են Արևմտյան Եվրոպայում ֆեոդալական պետության զարգացման հետևյալ փուլերը՝ վաղ ֆեոդալական պետություն (V-IX դարեր), ֆեոդալապես մասնատված պետություն՝ (X-XIII դարեր), կենտրոնացված ֆեոդալական պետություն (XIII-XV դարեր), ֆեոդալական բացարձակ միապետություն (XVI-XVIII դարեր): 1450 թ. Եվրոպայի բնակչությունը կազմում էր շուրջ 55 մլն, իսկ 1680 թ.՝ 100 մլն մարդ:

Վաղ ֆեոդալիզմին բնորոշ էր արտադրողական ուժերի զարգացման ցածր մակարդակը: Տնտեսությունը բնամթերային էր, բացակայում էին քաղաքները, արհեստները, դրամաշրջանառությունը: Այդ շրջանում տեղի է ունենում ֆեոդալական հարաբերությունների կազմավորում, ստեղծվում է խոշոր հողային սեփականություն, ազատ գյուղացի-համայնականները կախվածության մեջ են ընկնում ֆեոդալներից: Ձևավորվում են ֆեոդալական հասարակության հիմնական դասակարգերը՝ հողատերերը և կախյալ գյուղացիները:

Տնտեսության մեջ նշված շրջանում զուգակցվում էին տարբեր տնտեսակարգեր՝ նահապետական, ստրկատիրական և նոր ձևավորվող ֆեոդալական: Այդ ժամանակահատվածում ֆեոդալական հարաբերությունների հաստատումը կապված էր ֆեոդալական հողային սեփականության տարբեր ձևերի առաջացման և զարգացման հետ:

VI դարի վերջին – VII դարի սկզբին համայնքի ներսում տեղի է ունենում գույքային տարանջատման և համայնական հողի մասնավորեցման գործընթաց:

Ձարգացած ֆեոդալիզմի ժամանակաշրջանը բնութագրվում է ֆեոդալական հարաբերությունների ձևավորման գործընթացի ավարտմամբ և ֆեոդալիզմի ծաղկմամբ: Գյուղացիները հողային և անձնական կախվածության մեջ ընկան ֆեոդալից, իսկ տիրող դասակարգի ներկայացուցիչների համար սահմանվեց հիերարխիկ ենթակայություն: Այս շրջանում դիտարկվում է արտադրողական ուժերի աճ: Աշխատանքի գործիքների կատարելագործման և արտադրողականության բարձրացման շնորհիվ տեղի է ունենում արտադրության տարբեր ճյուղերի աշխատողների մասնագիտացում, արհեստները անջատվում են հողագործությունից: Առաջանում են քաղաքներ, զարգանում է արհեստագործությունը, աճում փոխանակությունը:

**ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ
ՄԻՋՆԱԴԱՐՈՒՄ**

Միջնադարում տնտեսության հիմնական ճյուղը գյուղատնտեսությունն էր: Հողագործության մեջ տիրապետող էր սկզբում՝ երկդաշտային, այնուհետև՝ եռադաշտային համակարգը: Գերակշռում էին հացահատիկային տնտեսությունը և անասնապահությունը:

Բավականին թույլ էր գյուղատնտեսական արտադրության տեխնիկական բազան, պարզունակ էին աշխատանքի գործիքները, թերի էր բանող անասուններով ապահովվածությունը: Գյուղացիական տնտեսություններում քիչ էին երկաթե գործիքները: Բացակայում էին արհեստական պարարտանյութերը, օգտագործվում էին զոմադըրը և թռչնադըրը, ցածր էին գյուղատնտեսական մշակաբույսերի բերքատվությունը և անասնապահության մթերատվությունը:

Այնուամենայնիվ, Արևմտյան Եվրոպայում XI-XIII դարերում գյուղատնտեսության առաջընթացը վաղ ֆեոդալիզմի համեմատությամբ զգալի էր:

Ընդլայնվում էին մշակվող հողատարածությունները անտառների հատման, ճահիճների չորացման հաշվին: Կառուցվում էին ոռոգման համակարգեր: Երկրագործությունը դարձավ ավելի բազմազան. հացահատիկային մշակաբույսերի արտադրության հետ մեկտեղ մեծ զարգացում ստացան խաղողագործությունը, այգեգործությունը, բանջարաբուծությունը:

Գյուղատնտեսության առաջընթացն առաջին հերթին արտահայտվում էր հողագործության նոր եղանակների տարածմամբ, որի շնորհիվ բարձրացավ բերքատվությունը, ավելացավ հողագործական արտադրանքի ծավալը: Զգալիորեն ընդլայնվեց անասնապահությունը, հատկապես՝ ձիաբուծությունը: Եյուղը դարձավ ավելի ինտենսիվ:

Ֆեոդալիզմի պայմաններում ինքնուրույն տնտեսական միավոր էր ֆեոդալական կալվածքը, որն ուներ ոչ միայն տնտեսական, այլև պետական կառավարման գործառույթներ: Յուրաքանչյուր ֆեոդալ իր հողերում տեր ու տնօրեն էր, իրեն ենթակա բնակչության համար՝ դատավոր:

Ֆեոդալական կալվածքը արտադրության կազմակերպման առաջադիմական ձև էր և զգալի առավելություններ ուներ ստրկատիրական լատիֆունդիաների նկատմամբ: Այսպես, օգտագործում էր

սեփական տնտեսություն և որոշ արտադրամիջոցներ ունեցող գյուղացու աշխատանքը և դրանով մեծ հնարավորություններ էր ստեղծում տեխնիկայի զարգացման համար: Բացի այդ, ֆեոդալական կալվածքի առկայության պայմաններում աշխատուժի վերարտադրությունը տեղափոխվում էր գյուղացիական տնտեսության ոլորտը, որով բավականին պարզեցվում էին վերարտադրության հիմնախնդիրները: Մինչդեռ ստրկատիրական հասարակարգում դա իրականացվում էր պատերազմների, թալանի և այլ միջոցներով:

Իրավական տեսակետից կալվածքները տարբեր էին՝ լրիվ անկախ ժառանգական տիրույթներ կամ պայմանական տիրույթներ, սակայն բոլորն էլ բաժանվում էին երկու մասի՝ տերունական (դոմենյան) և գյուղացիական: Դոմենյանը կազմում էր վարելահողերի գրեթե կեսը և մշակվում էր ոչ միայն կախյալ գյուղացիների, այլև տնային աշխատողների (ծառաների) ուժերով:

Գյուղացիության շահագործման հիմնական ձևը աշխատավճարն էր՝ կոռը, որի գոյության պայմաններում աշխատանքի արտադրողականությունը չափազանց ցածր էր:

XIII դարում ապրանքադրամային հարաբերությունների և ներքին շուկայի զարգացման հետևանքով գյուղում նույնպես տեղի են ունենում էական փոփոխություններ: Նոր պայմաններում կոռը իր տեղը աստիճանաբար զիջում է բնավճարին (բահրային): Անցումը բնավճարային ռենտային հանգեցնում է տերունական հողերի կրճատմանը և գյուղացիական բաժնեհողերի ավելացմանը, որը նպաստում է աշխատանքի արտադրողականության բարձրացմանը երկրագործության մեջ:

Ֆեոդալների մենաշնորհը հողի նկատմամբ բացառում էր գյուղացիական հողատիրության առկայությունը: Կախյալ գյուղացին միայն կարող էր օգտվել իր բաժնեհողից: Ֆեոդալիզմը ոչնչացրեց հողի նկատմամբ համայնական սեփականությունը, սակայն պահպանեց գյուղական համայնքը, որը գյուղացիների միջև բաշխում էր բաժնեհողերը, պարտույթներն ու հարկերը, և ֆեոդալների կողմից գյուղացիության շահագործման միջոց էր: Մյուս կողմից՝ համայնքի պահպանումը համապատասխանում էր գյուղացիության շահերին, որովհետև նրանք ընդհանուր հիմունքներով օգտվում էին համայնական հողահանդակներից՝ անտառներից, մարգագետիններից, արոտավայրերից:

Կալվածքի տնտեսությունն ուներ բնեղեն բնույթ: Գրեթե այն ամենը, ինչն անհրաժեշտ էր ֆեոդալի գոյության համար, գյուղացին ստանում էր տեղում:

Արհեստագործական արտադրությունը լրացնում էր գյուղատնտեսությանը: Յուրաքանչյուր կալվածք ուներ իր դարբինները, կոշկակարները, հյուսնները, զինագործները, հացթուխները, ինչը

հնարավորություն էր տալիս բավարարել կալվածքի պահանջները արհեստի արդյունքների նկատմամբ: Առևտուրը չափազանց սահմանափակ բնույթ ուներ, հիմնականում զնվում էին աղը և պերճանքի առարկաները: Ճորտատիրական տնտեսությունը ֆեոդալին ապահովում էր և՛ գյուղատնտեսական, և՛ արհեստագործական արտադրանքով: Արհեստները դեռևս լրիվ չէին անջատվել գյուղատնտեսությունից:

Աստիճանաբար զարգացան քաղաքները, առևտուրը և դրամաշրջանառությունը, որով Արևմտյան Եվրոպայում պայմաններ էին ստեղծվում տարբեր երկրներում ֆեոդալական մասնատվածության վերացման և կենտրոնացված պետությունների առաջացման համար:

Առանձին ֆեոդալների ենթարկումը կենտրոնացված թագավորական իշխանությանը և այդ իշխանությունների տարածքային միավորումը հասարակության հետագա զարգացման անհրաժեշտ նախադրյալ էին և պայմանավորված էին ինչպես տնտեսական, այնպես էլ քաղաքական հանգամանքներով: Քաղաքի և գյուղի արտադրողական ուժերի զարգացումը, նրանց միջև տնտեսական կապերի ընդլայնումը անհրաժեշտություն էին դարձնում կալվածքների մեկուսացման և երկպառակտչական կռիվների վերացումը:

Ֆեոդալական մասնատվածության և առանձին ֆեոդալների կամայականությունների դեմ հանդես էին գալիս նաև քաղաքները, որոնց տնտեսական և քաղաքական ներուժը մեծ դեր խաղաց խոշոր ֆեոդալների դեմ պայքարի գործում:

Կենտրոնացումը համապատասխանում էր նաև մանր ու միջին ֆեոդալների շահերին: XIV դարի գյուղացիական ապստամբությունները բացահայտեցին ամուր թագավորական իշխանության անհրաժեշտությունը, առանց որի հնարավոր չէր պահպանել գյուղացիների նկատմամբ ֆեոդալների տիրապետությունը:

Արդեն XI դարում Եվրոպայում վերածնվեցին քաղաքները՝ Վենետիկը, ճենովան, Նեապոլը, Փարիզը, Մարսելը, Բորդոն, Քյոլնը, Լոնդոնը, առաջացան նոր քաղաքներ՝ Յանթուրգը, Բեռլինը, Լյուբեկը, Լայպցիգը և այլն:

Սկզբնական շրջանում քաղաքային արհեստավորները և առևտրականները բնակվում էին ֆեոդալներին պատկանող կալվածքներում և, բնականաբար, կախման մեջ էին նրանցից: Սակայն XI դարի վերջերից քաղաքները պայքարի են ելնում իրենց անկախության համար, առաջանում են բազմաթիվ քաղաք-պետություններ, որոնք ունեին տնտեսական ազատություն և քաղաքական իրավունքներ:

Քաղաքների առաջացումը գյուղատնտեսությունից արհեստների անջատման և արհեստավորների կենտրոնացման գործընթաց էր, որն իր հերթին պայմանավորված էր միջնադարյան Եվրոպայում

արտադրողական ուժերի ընդհանուր զարգացմամբ: Գյուղատնտեսական հունքի և պարենի առատությունը, հավելյալ արդյունքի զանգվածային արտադրությունը ֆեոդալական կալվածքներում և գյուղացիների մանր տնտեսություններում անհրաժեշտ պայմաններ էին ստեղծում արհեստավորների մասնագիտացման և քաղաքների ինքնուրույն գոյության համար:

Քաղաքային բնակչությունը բազմատարր էր՝ արհեստավորներ, առևտրականներ, մասամբ էլ՝ գյուղացիներ, լյուսպեն պրոլետարներ:

Միջնադարյան քաղաքի նյութական հարստության հիմքը արհեստն էր, որի արդյունքը փոխանակվում էր գյուղում արտադրված մթերքների, հունքի հետ: Արհեստը միջնադարյան Եվրոպայում դրսևորվում էր համքարային կազմակերպության շրջանակում: Համքարությունները միավորում էին տվյալ քաղաքի արհեստի այս կամ այն ճյուղի արհեստավորներին՝ նրանց շահերը պաշտպանելու նպատակով, պայքարում էին ֆեոդալի ճնշման դեմ, պաշտպանում գյուղական արհեստավորների մրցակցությունից. թաքցնում վարպետության գաղտնիքները: Համքարությունները կանոնակարգում էին արտադրությունը, արտադրանքի քանակը, որակը, աշխատաժամանակը, գինը և այլն: Փաստորեն՝ անուրանալի էր դրանց դրական ազդեցությունը արտադրության խթանման վրա:

Սակայն համքարությունների առաջատար դերը կարճատև էր: XIV դարի վերջերին դրանք սկսում են արգելակել արտադրողական ուժերի զարգացումը: Դանդաղորեն ընդլայնվող շուկայի պայմաններում համքարային ռեզլամենտավորումն ուղղված էր մանր արտադրության պահպանմանը և արգելակում էր տեխնիկական առաջընթացը:

Արևմտյան Եվրոպայի քաղաքների զարգացումը XI դարից սկսած պայմանավորված էր ոչ միայն արհեստների, այլև առևտրի վերելքով, որի միջոցով քաղաքներն ստանում էին հումք, սննդամթերք և իրացնում արհեստավորների արտադրանքը: Քաղաքների շուրջը կազմավորվում էին ոչ մեծ տեղական շուկաներ, զարգանում էր նաև միջքաղաքային և միջպետական առևտուրը:

Բավականին ծանր էին միջնադարյան առևտրի պայմանները. բացակայում էին բարեկարգ ճանապարհները, թալանվում էին առևտրական քարավանները, բազմաթիվ էին մաքսերը: Չէր կարգավորվել դրամաշրջանառությունը, որը դժվարացնում էր առևտրական գործարքները: Նման պայմաններում առևտրի կազմակերպման հիմնական ձևը տոնավաճառներն էին, որոնք ժամանակավորապես կենտրոնացնում և կարգավորում էին պահանջարկը և առաջարկը, որոշում ապրանքների գները և առևտրականներին տալիս էին անվտանգության երաշխիքներ: Առավել խոշոր էին Շամալանի տոնավաճառ-

ները, որոնց մասնակցում էին Իտալիայի, Ֆրանսիայի, Անգլիայի, Գերմանիայի և այլ երկրների առևտրականները:

Առևտրի ղեկավարման նպատակով քաղաքներում ստեղծվում էին ինքնապարփակ առևտրական ընկերություններ՝ գիլդիաներ: Դրանք միավորում էին տվյալ քաղաքի առևտրականներին և մենաշնորհացնում էին այս կամ այն ապրանքի առևտուրը, որոշում ապրանքային կազմը, առևտրի կանոնները և այլ պայմաններ:

Միջնադարյան առևտրի ծավալը, այնուամենայնիվ, շատ փոքր էր: Բնակչության փոքրաթիվ լինելու պատճառով սահմանափակ էր քաղաքային շուկաների տարողությունը, իսկ գյուղական բնակչությունը բավարարվում էր սեփական տնային արտադրանքով: Հետևաբար, չպետք է գերազնահատել առևտրի դերը ֆեոդալիզմի պայմաններում:

Միջնադարում մեծ նշանակություն ուներ Միջերկրական և Բալթիկ ծովերով կատարվող առևտուրը: Հատկապես կարևոր էր միջերկրական (լեվանտական) առևտրի դերը, որը Արևմտյան Եվրոպայի երկրները կապում էր Արևելքի հետ: Տևական ժամանակ այդ առևտրում միջնորդի դեր էր կատարում Բյուզանդիան, իսկ առևտրի կենտրոնը Կոստանդնուպոլիսն էր: XI դարից սկսած լեվանտական առևտրում զգալի դեր էին խաղում իտալական քաղաքները: Այդ առևտրի միջոցով Եվրոպան Մերձավոր Արևելքից ստանում էր գերազանցապես համեմունքներ և պերճանքի առարկաներ, որոնց պահանջը եվրոպական շուկայում գնալով մեծանում էր: Արտահանվում էին բուրդ, քաթան, մահուղ, մետաղյա առարկաներ, ընդ որում ներմուծումը ավելի մեծ չափերի էր, քան արտահանումը: Փաստորեն՝ Արևելքի երկրների հետ Եվրոպայի առևտրական հաշվեկշիռը պասիվ էր: Արևելք էր արտահանվում նաև մեծ քանակությամբ ոսկի և արծաթ, որով ծանր պայմաններ էին ստեղծվում մի շարք եվրոպական երկրների տնտեսության համար:

XIV-XV դարերում, Յուսիսային Եվրոպայի երկրների գյուղատնտեսության, արհեստների, ինչպես նաև քաղաքների զարգացման շնորհիվ, կարևոր նշանակություն է ձեռք բերում Բալթիկ և Յուսիսային ծովերով կատարվող առևտուրը: Դրանցով առևտուր էին անում Սկանդինավյան երկրները, Անգլիան, Ֆլանդրիան, Լեհաստանը, Ռուսաստանը: Տնտեսական զարգացած կենտրոններ էին Ֆլանդրիայի քաղաքները, որոնցում վերելք էր ապրում համաքարային արդյունաբերությունը: Նշված առևտրում մեծ դեր էին խաղում Յուսիսային Գերմանիայի քաղաքները (Համբուրգը, Լյուբեկը, Բրեմենը և այլն). վերջիններս կատարում էին նաև միջնորդային գործառույթներ:

XIV դարի կեսերին Յուսիսային Եվրոպայի և հիմնականում գերմանական 70-100 քաղաքների միավորմամբ ստեղծվեց Հանզան,

որն իրենից ներկայացնում էր առևտրական քաղաքների ռազմա-քաղաքական միություն: Այդ միությունը կազմակերպում և պաշտպանում էր առևտրական արշավախմբերի գործունեությունը, ստեղծում նոր առևտրական ֆակտորիաներ, ստանում արտոնություններ, սահմանում առևտրի կանոնները և այլն:

Հանգայի, ինչպես նաև ամբողջ Հյուսիսային Եվրոպայի առևտրում կարևոր դեր էր խաղում Նովգորոդը, որը դեռևս XII դարում բազմաթիվ պայմանագրերի միջոցով առևտրական կապեր էր հաստատել Հյուսիսային Գերմանիայի քաղաքների հետ: Նովգորոդի հարուստ վաճառականները առևտրական գործունեություն էին ծավալել նաև Ռիգայում, Ռեվելում, Լիվոնյան այլ քաղաքներում:

Առևտրի ծավալների աճը հանգեցնում էր խոշոր դրամական կապիտալների կուտակմանը, վաշխառության զարգացմանը: Վաշխառուները վարկավորում էին ինչպես ֆեոդալներին ու թագավորներին, այնպես էլ մանր արտադրողներին՝ արհեստավորներին և գյուղացիներին: Միևնույն ժամանակ ապրանքային արտադրության ու դրամաշրջանառության աճը նպաստում էր առևտրական կապիտալի զարգացմանը:

Առևտրական և վաշխառական կապիտալները դրամական կապիտալի առաջին ձևերն էին և օժանդակում էին մանր ապրանքային արտադրության պահպանմանը: Մյուս կողմից, դրանք քայքայում էին մանր արտադրողներին, տնտեսության բնեղեն բնույթը, հետևաբար՝ նպաստում ֆեոդալիզմի քայքայմանը և կապիտալիզմի առաջացմանը:

**ԱՐԵՎՄՏՅԱՆ ԵՎՐՈՊԱՅԻ ԱՌԱՋԱՏԱՐ ԵՐԿՐՆԵՐԻ,
ՈՌԻՍԱՏԱՆԻ ԵՎ ՃԱՊՈՆԻԱՅԻ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ
ՄԻՋՆԱԴԱՐՈՒՄ**

**5.1. ՖԵՈՂԱԼԱԿԱՆ-ՄԻԱՊԵՏԱԿԱՆ ՀԱՍՍԿԱՐԳԻ
ՀԱՍՏԱՏՈՒՄԸ ՖՐԱՆՍԻԱՅՈՒՄ**

Վաղ ֆեոդալական հասարակության դասական օրինակ էր գերմանական ցեղերի կողմից նվաճված Արևմտահռոմեական կայսրության տարածքում ֆրանկների պետության ստեղծումը: Այդ պետությունը բավականին հզորացավ Խլոդվիգի (Մերովինգների դինաստիայից) թագավորության տարիներին, որը 496 թ. ընդունեց քրիստոնեություն: Դա իր ձևով վաղֆեոդալական միապետություն էր, որն առաջացավ համայնականից ֆեոդալական հասարակությանն անցման շրջանում՝ շրջանցելով ստրկատիրությունը:

Հետագայում՝ VII-IX դարերում, այնտեղ տեղի ունեցավ ֆեոդալական հարաբերությունների բուռն զարգացում, որը ագրարային հեղաշրջման արդյունք էր: Ամենուր հաստատվեց խոշոր ֆեոդալական հողային սեփականություն: Նշված շրջանում ֆրանկների թագավորները իրավունք ունեին փոխելու բարձր եկեղեցական պաշտոնյաներին, ստեղծելու հողային հատուկ ֆոնդ, դրանից թագավորական ծառայության մեջ գտնվող պաշտոնյային հատկացնելու ցմահ պայմանական տիրույթներ՝ բենեֆիցիաներ: Բենեֆիցիատը հողը ստանում էր կախյալ մարդկանց հետ, որոնք կատարում էին կոռային աշխատանք կամ վճարում բահրա: Եթե բենեֆիցիատը հրաժարվում էր թագավորական ծառայությունից կամ դավաճանում միապետին, կորցնում էր իր հողերը:

Հողի բենեֆիցիարային ձևի օգտագործումը հանգեցրեց վասալիտետային հարաբերությունների արմատավորմանը: Վասալը կախում ուներ սենյորից, որը նրան հատկացրել էր բենեֆիցիա, վերջինիս տալիս էր հավատարմության և ծառայելու երդում: Այդ համակարգի կիրառման պատճառներից մեկը հեծելազոր ունենալու անհրաժեշտությունն էր: Բնականաբար, ձի և զենք ունեցողները պետք է լինեին ունևոր մարդիկ: Աստիճանաբար՝ երեք հարյուրամյակի ընթացքում ձևավորվեց ասպետների զինվորական դասը, որոնք Ֆրանսիայում կոչվում էին շեվալյե:

Յոգի նկատմամբ ֆեոդալական սեփականության ամրապնդմանը զուգընթաց IX դարում բենեֆիցիաները վերածվեցին ֆեոդների կամ լենների: Դրանք սենյորի կողմից վասալներին տրված ժառանգական հողերն էին, սակայն զինվորական ծառայությունը մնում էր որպես լենի տիրապետման պայման: Կարոլինգների դինաստիայի իշխանության գալուց և VIII դարում ավելի ամրապնդվելուց հետո ապահովվեց ֆրանկների պետության միասնությունը:

Ֆրանկների թագավորությունն իր հզորության գագաթնակետին հասավ Կառլոս Մեծի գահակալության տարիներին (771-814 թթ.): Նկատի ունենալով կայսրության հսկայական մասշտաբները, հաճախ էր շեշտվում, որ այստեղ արևը մայր չի մտնում: Սակայն Կարոլինգների պետության սոցիալ-տնտեսական և էթնիկ ոչ միատարրությունը և ֆեոդալականացման գործընթացները հանգեցրին արտաքուստ միասնական կայսրության կործանմանը: Կառլոս Մեծի մահից հետո, 814 թ. կայսրությունը բաժանվեց նրա ժառանգների միջև, իսկ 843 թ. տարանջատվեց երեք ինքնուրույն թագավորությունների՝ Արևմտաֆրանկյան, Արևելաֆրանկյան և «Միջին» (որը հիմնականում ընդգրկում էր Իտալիան): Դա կարևոր փուլ դարձավ Ֆրանսիայի, Գերմանիայի և Իտալիայի պատմության մեջ: Կարոլինգներին փոխարինեցին Կապետինգները:

Արևմտաֆրանկյան պետության սահմաններում ձևավորվեց ապագա Ֆրանսիան, և Կարոլինգների կործանումով, փաստորեն, սկսվեց Ֆրանսիայի առաջացման գործընթացը:

IX-XI դարերում Ֆրանսիայում հետագա զարգացում ստացան ֆեոդալական հարաբերությունները: Յոգի նկատմամբ ֆեոդալի մենաշնորհի հաստատմանը զուգընթաց վերանում է ազատ գյուղացիական հողատիրությունը: Արդեն XII դարում Ֆրանսիայի միասնությունը ձևական էր, և առկա էր տարածքային մասնատվածության վտանգը: Մինչև նշված դարի կեսերը ֆեոդալների հիմնական զանգվածը չէր ենթարկվում ոչ թագավորին, ոչ էլ ուրիշ խոշոր ֆեոդալների, քանի որ գործում էր «իմ վասալի վասալը իմ վասալը չէ» սկզբունքը: Յետագայում, քաղաքների տնտեսական վերելքին զուգահեռ, քաղաքներ, որոնք դարձան թագավորական իշխանության բնական դաշնակիցները, ֆեոդալների դասակարգի մեջ հարաբերությունները որոշակի փոփոխություններ կրեցին: Թագավորները սկսեցին վասալական կախում և հավատարմության երդում պահանջել երկրի բոլոր ֆեոդալներից:

XIII-XIV դարերում Ֆրանսիայի տնտեսական կառուցվածքում կատարվեցին էական տեղաշարժեր: Կոռը աստիճանաբար դուրս մղվեց բնամթերային, ապա դրամական բահրայի կողմից: Բարձրացավ գյուղատնտեսական արտադրության ապրանքայնության աստիճանը:

Հարյուրամյա պատերազմի հետ կապված տնտեսական դժվարությունները ամենից առաջ անդրադարձան Ֆրանսիական գյուղացիության դրության վրա, և 1358 թ. բռնկվեց ապստամբություն, որն ստացավ «ժակերիա» անունը: Վերջինիս պարտությամբ հանդերձ, գյուղացիները հասան բնամթերային ռենտայի փոխարինմանը դրամականով: Դա նպաստեց ապրանքադրամական հարաբերությունների զարգացմանը և գյուղացիների ազատմանը անձնական կախվածությունից: Ֆեոդալական ռենտայի արտադրության կենտրոնը փոխադրվեց գյուղացիական տնտեսություն:

Քաղաքների արագ աճը հանգեցրեց, ֆեոդալական հասարակության նոր դասի՝ քաղաքային բնակչության, ավելացմանը, որն ուներ հատուկ իրավական կարգավիճակ: XII դարից սկսած քաղաքները լայն շարժում են ծավալում ինքնակառավարման համար: Դրանում վիթխարի դեր խաղացին XII-XIII դարերի կոմունալ հեղափոխությունները: Այդ պայքարի շնորհիվ Ֆրանսիայում, Նիդեռլանդներում և Իսպանիայում առաջացան ազատ քաղաքներ՝ կոմունաներ, որոնք զերծ էին ճորտատիրությունից և օգտվում էին պետական անկախությունից: Ճանաչվեց շուկայական իրավունքը, որը երաշխավորում էր վաճառականների սեփականությունը: Քաղաքային կոմունաները վերածվեցին արհեստի և առևտրի խոշոր կենտրոնների:

Արդեն XIII դարում սկսվեց ֆեոդալական մասնատվածության հաղթահարման գործընթացը, որը քաղաքների և գյուղատնտեսության զարգացման օրինաչափ հետևանքն էր: Ուժեղացավ թագավորական իշխանությունը, տեղի ունեցան դատական, վարչական և դրամական ռեֆորմներ, որոնք ոչ միայն նպաստեցին քաղաքական կենտրոնացմանը, այլև՝ գանձարանի եկամուտների ավելացմանը:

Ուշ միջնադարում, երբ սկսվեց արտադրության ֆեոդալական եղանակի քայքայումը, Ֆրանսիան մյուս արևմտաեվրոպական երկրներին զերազանցում էր բնակչության թվաքանակով: Այստեղ բնակվում էր 15 մլն մարդ:

Տնտեսության հիմնական ճյուղը գյուղատնտեսությունն էր, իսկ ամենաբազմամարդ դասակարգը՝ գյուղացիությունը: Հիմնական հարկերն էին բնամթերային բահրան (շամպարը), դրամական բահրան, տասանորդը՝ եկեղեցուն:

Միաժամանակ Ֆրանսիայի տնտեսությունում կատարվում էին փոփոխություններ: XVI դարում Ֆրանսիայի տնտեսական զարգացման վրա որոշակի ազդեցություն ունեցավ «գների հեղափոխությունը»: Աշխարհագրական մեծ հայտնագործությունների հետևանքը դարձավ այնպիսի նավահանգստային քաղաքների դերի բարձրացումը, ինչպիսիք էին Հավրը, Բորդոն, Դիեպը, Նանտը: Իսկ Լիոնը խոշոր տոնավաճառային առևտրի կենտրոնն էր:

Ֆրանսիան սկսեց գաղութային զավթումներ Յնդկաստանում, Կանադայում, Միսիսիպի գետի շրջանում: 1664 թ. ստեղծվեց Օստ-Յնդկական ընկերությունը: Այդ շրջանում Ֆրանսիայում սկսվեց կապիտալի նախասկզբնական կուտակման գործընթացը, որն ուներ իր առանձնահատկությունները: Ի տարբերություն Անգլիայի, Ֆրանսիայում տեղի չէր ունենում գյուղացիների զանգվածային հողագրկում և ազնվականության բուրժուականացում: Կապիտալի նախասկզբնական կուտակման աղբյուրներն էին հարկային համակարգը, պետական փոխառությունները, դատական և ֆինանսական պաշտոնների վաճառքը:

Ծանր էր աղի վրա դրվող հարկը՝ գաբելը: 1439 թ. թագավորական հարկը (տալյա) զանձվում էր հողից, գույքից կամ շնչերից: Լյուդովիկոս XIV-ի տիրակալության տարիներին բացարձակ միապետությունը հասավ իր գագաթնակետին, և արքունիքի հսկայական ծախսերն ընկած էին գյուղացիների ու արհեստավորների ուսերին:

XVI դարում առաջացան առաջին մանուֆակտուրաները՝ մահուդի, կտավի և մետաքսի արտադրության: Ֆրանսիայի արդյունաբերական զարգացման առանձնահատկությունը տիրող դասակարգի համար ապրանքների՝ պերճանքի առարկաներ, կոսմետիկա, պարֆյունների, արտադրության ծավալումն էր: Սակայն ի տարբերություն Անգլիայի, որտեղ մանուֆակտուրաները կառուցում էին կապիտալիստ-ծեռներեցները, Ֆրանսիայում դրանց զարգացումը պետության հովանու ներքո էր: Այստեղ իրագործվում էր մերկանտիլիզմի քաղաքականություն, որն առավել զարգացավ Ժ.Կոլբերի ֆինանսների նախարար եղած ժամանակ: Կոլբերը պետության հզորությունը որոշում էր նրա ունեցած փողի քանակությամբ, որի լրացման աղբյուրը դիտվում էր առևտուրը: Նա Օստ-Յնդկական և Վեստ-Յնդկական ընկերությունների հիմնադիրն էր, մտցրեց պրոտեկցիոնիստական (հովանավորչական) տարիֆ, խթանում էր թագավորական մանուֆակտուրային արտադրության զարգացումը:

Պետության միջամտությունը տնտեսությանը Կոլբերի ժամանակ ընդունեց խիստ մեծ չափեր, իսկ նրա տնտեսական քաղաքականությունը պատմության մեջ մտավ որպես կոլբերիզմ: Ակտիվ առևտրային հաշվեկշռի ապահովման համակարգը ներառում էր արդյունաբերական ապրանքների ներմուծումն արգելող հարկեր, ներմուծման նվազագույն չափ, հայրենական արդյունաբերության զարգացման խթանում, պետության հաշվին արտահանող մանուֆակտուրաների ստեղծում, օտարերկրյա վարպետներին աշխատանքի մեջ ներգրավում, արտադրողներին արտոնությունների տրամադրում: Կոլբերի ժամանակ Ֆրանսիայում զարգացան ոչ միայն մահուդի և մետաքսի, այլև մետաղագործական մանուֆակ-

տուրաները, ստեղծվեցին վարկային հաստատություններ, խթանվեց ներքին առևտուրը:

Բացարձակ միապետությունը որոշակի ժամանակ խաղաց դրական դեր, սակայն հետագայում դարձավ պետության զարգացման արգելակ:

5.2. ՖԵՈՂԱԼԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ԶԱՐԳԱՅՈՒՄԸ ԳԵՐՄԱՆԻԱՅՈՒՄ

Ֆեոդալական հարաբերությունների ձևավորումը և զարգացումը Գերմանիայում տեղի են ունեցել անհամաչափ և ավելի դանդաղ, քան եվրոպական ուրիշ երկրներում: Դա պայմանավորված էր կլիմայով, տեղանքի ռելիեֆով, արտադրողական ուժերի զարգացման ցածր մակարդակով, մեծ չափերի ազատ հողերի առկայությամբ, համայնքի կայունության բարձր աստիճանով և այլ գործոններով:

Իր ազդեցությունը թողեց նաև այն հանգամանքը, որ այստեղ բացակայում էր ստրկատիրությունը: Հետևաբար՝ Գերմանիայի համար բնութագրական էր ոչ թե ֆեոդալիզմի զարգացման սինթեզային ուղին, որը զուգակցում էր անտիկ և բարբարոսական տարրերը, այլ անցումը ֆեոդալիզմին անմիջապես համայնական կարգերի քայքայումից հետո: Ազատ համայնականների ճորտացումն ավելի դժվար էր, քան նախկին ստրուկների վերածումը ճորտերի:

Գերմանիայում, ինչպես և Բրիտանիայում ու Սկանդինավիայում ֆեոդալական կարգը հաստատվեց միայն XI-XIII դարերում: Գերմանիայի տարածքում ապագա ֆեոդալական տնտեսածևի նախադրյալները ձևավորվեցին համայնքի՝ մարկայի քայքայման հաշվին: Աստիճանաբար տոհմական համայնքը տարբերակվեց գյուղականի, տարածքայինի: Ստեղծվեցին ալլոդներ, որոնցում ժառանգական դարձավ նախկինում համայնքի սեփականությունը կազմող վարելահողը, որը կարող էին ազատ օտարել առք ու վաճառքի միջոցով: Այդ մասին են վկայում բավարական և սաքսոնական «Պրավդա»-ները, որոնցով սահմանվում էին ալլոդի՝ որպես ապրանքի, իրացման հետ կապված իրավունքները:

Բավարական «Պրավդան» գոյություն ուներ VI-VIII դարերում, իսկ սաքսոնականը՝ IX դարի սկզբներին: Դրանցում նշվում էր գյուղացիության տարբերակման, շահագործման համակարգի, ֆեոդալական հարաբերությունների ձևավորման ու զարգացման մասին: Ընդսմին, ֆեոդալական հարաբերությունները Բավարիայում ավելի զարգացած էին, չէին տարբերվում ֆրանկների պետության արև-

մտյան մարզերի նույնական հարաբերություններից, մինչդեռ Սաքսոնիայում նոր էին ձևավորվում:

843 թ. Վերդենյան պայմանագրի հիման վրա բաժանվեցին 800 թ. Կառլոս Մեծի ստեղծած Սուրբ Դոմենական կայսրության հողերը: Դոմենոս գետով և նրա աջ վտակներով տարանջատված հողերը, նաև Բավարիան ստացավ Լյուդովիգ Գերմանացին: Այդ Արևելաֆրանկյան պետությունը կոչվեց «Տևտոնների երկիր»: 962 թ. սաքսոնների դինաստիայի ներկայացուցիչ Օտտոն I-ը վերականգնեց Դոմենական կայսրությունը: Այդ ժամանակվանից գերմանական արքան միաժամանակ իտալական արքա էր:

Գերմանական պետության առաջացումը արագացրեց ֆեոդալականացման գործընթացը, իսկ հետագա քաղաքական մասնատվածությունը բնորոշեց գյուղացիության դրության տարբերությունները Արևմտյան և Արևելյան Գերմանիայում: Երկու մասերում էլ շահագործման հիմնական ձևը բահրան էր: Գյուղացիները ֆեոդալին տալիս էին մանր ու խոշոր եղջերավոր անասուններ, թռչուն, անասնապահական մթերքներ (յուղ, բուրդ, կաշի), բանջարեղեն, մեղր, մոմ, փայտ, արհեստագործական առարկաներ և այլն:

Շահագործման մյուս ձևը կոռն էր, որը բազմատեսակ էր՝ ձրի աշխատանք կալվածատիրոջ հողում, անտառահատում, փայտածխի պատրաստում, փոխադրական, շինարարական աշխատանքներ, ֆեոդալի տան սպասարկում և այլն:

Ծանր հարկատեսակ էր տասանորդը, որը հավաքում էին ոչ միայն հոգևոր, այլև հաճախ աշխարհիկ ֆեոդալները: Գոյություն ուներ նաև մահվան հարկ՝ մահացած գյուղացու ունեցվածքի (սովորաբար՝ անասունի) մի մասի հանձնում կալվածատիրոջը:

Գերմանիայի հարավային և հարավ-արևմտյան շրջաններում կոռը հազվադեպ փոխարինվում էր դրամական ռենտայով:

Գերմանիայում ֆեոդալիզմի ձևավորման ժամանակաշրջանում տիրապետող էր բնատնտեսությունը: Կարոլինգների ժամանակ ի հայտ եկան ջրաղացները (որոնցում աղում էին ցորենը), որոշ ժամանակ անց՝ քամու աղացները: XII-XIII դարերում այստեղ տիրապետող է դառնում եռադաշտային համակարգը: Չնայած հողագործության տեխնիկան պարզունակ էր, սակայն ֆեոդալիզմն ապահովում էր աշխատանքի ավելի բարձր արտադրողականություն, քան ստրկատիրությունը: Արհեստներն անջատվեցին հողագործությունից, աստիճանաբար փոխադրվեցին քաղաքներ, որոնցում կենտրոնացվեց նաև առևտուրը:

XI-XV դարերը ֆեոդալիզմի ծաղկման շրջանն էին: Արդեն XI դարի վերջին – XII դարի սկզբին գերմանական գյուղը դարձավ լրիվ ֆեոդալական: Այստեղ բնակչությունը բաժանվեց ազատ և ճորտ գյուղացիների: Իր հերթին ազատ գյուղացիությունը տարբերակվեց

երկու դասային խմբի՝ «ազնիվ» ծագման տերերի և ազատ, բայց «ոչ ազնիվ» ծագման մարդկանց: Առաջին դասային խմբին էին վերաբերում հոգևոր և աշխարհիկ իշխանները, կոմսերը, ասպետները, այսինքն՝ խոշոր հողատեր ֆեոդալները: Երկրորդ խումբը կազմում էին ազատ հողատերերը՝ շեֆենները, չինշևիկները, լանդզասները, որոնք ազատ էին ամեն տեսակի գյուղացիական պարիակներից, վճարում էին այսպես կոչված չինշ (սենյորի օգտին դրամական ամրագրված ռենտա) և դատական հարկ, ինչպես նաև պարտավորվում էին հանդես գալ երդվյալների դերում:

Ֆեոդալական հիերարխիայի գլուխը կայսրն էր: Նա սյուզերենն էր, հողային սեփականության և յուրաքանչյուր քաղաքացու կյանքի դատավորը, օգտվում էր անսահմանափակ իրավունքներից: Թագավորի ուղղակի վասալներն էին իշխանները, որոնք ևս ունեին իրենց վասալները: Երկրորդ աստիճանը զբաղեցնում էին հոգևոր իշխանները՝ եպիսկոպոսները, աբբատները, երրորդը՝ աշխարհիկ իշխանները, չորրորդը՝ կոմսերը, հինգերորդը՝ ասպետները, վեցերորդը՝ ասպետներին ենթակա վասալները: Յոթերորդ աստիճանը պատկանում էր «ամուսնության արդյունքում ծնված ազատ մարդկանց»:

Լենը կամ ֆեոդը (կալվածքը) տարբեր էր իր նշանակությամբ և կարևորությամբ: Կային կայսերական, եկեղեցական, դատական, քաղաքային լեներ: Ֆեոդալներին պատկանող լեների կողքին կային նաև գյուղական ավագանու կամ նույնիսկ «գյուղացիական» լեներ:

Լենային համակարգը Գերմանիայում հողային հարաբերությունների պետական համակարգ դարձավ արդեն XII դարում: Հաջորդ դարի կեսերին որոշ չափով թուլացավ ճորտատիրական տնտեսածևը: Գյուղացիության զգալի զանգվածներ ստացան անձնական ազատություն կամ խաչակրաց արշավանքների, կամ տիրոջից հետոզնման կապակցությամբ:

Որոշ ֆեոդալներ, զնալով արշավանքի, իրենց գյուղացիներին ազատություն էին տալիս: Սակայն ճորտատիրության թուլացման հիմնական պատճառը խոպան հողերի յուրացումն էր: Գերմանիայի արևելյան մասում, սլավոններից զավթած հողերում գերմանացի գյուղական վերաբնակիչներն ազատվում էին կոռից և վճարումներից (մի շարք տարիների ընթացքում), օգտվում արտոնություններից և զեղչերից: Այլպես անհնար էր արևելյան հողերն ապահովել աշխատող ձեռքերով: Նման պարագայում ֆեոդալներն ստիպված էին անձնական ազատություն տալ կախյալ գյուղացիներին անբողջ Յյուսիսային Գերմանիայում:

Գերմանական քաղաքների մեծամասնությունն առաջացավ XI-XIII դարերում: Միայն քիչ քաղաքներ ունեին հռոմեական ծագում: XII դարում Գերմանիայում հաշվվում էին հարյուրավոր քաղաքներ, իսկ XIII-XIV դարերում առաջացան շուրջ 700 նոր քաղաքներ:

Սկզբնական շրջանում քաղաքների բնակիչները կազմում էին իրենց տերերից փախած ճորտերը: Բայց քաղաքը գտնվում էր հողևոր կամ աշխարհիկ սենյորի հողում, որն իրականացնում էր դատավարություն, զանձում հարկեր և քաղաքացիներից պահանջում ներկայանալ արշավանքի: Քաղաքացիները պայքարում էին ֆեոդալական տուրքերի կրճատման, առևտրական արտոնությունների ձեռքբերման, քաղաքային ինքնակառավարման համար: Այդ պայքարը կրում էր կոմունալ հեղափոխության բնույթ: XIV դարի սկզբին քաղաքների մեծամասնությունը հասավ անկախության, սակայն իշխանությունը անցավ քաղաքային արիստոկրատիայի (խոշոր առևտրականներ, տնատերեր, վաշխառուներ, հողատերեր) ձեռքը:

Քաղաքային կյանքի հիմքը ապրանքային արտադրությունն էր (արհեստները): Ինչպես ֆեոդալական Եվրոպայի մյուս երկրներում, Գերմանիայում ևս արհեստագործական արտադրության կազմակերպման ձևը ցեխն էր, որն ուներ իր կանոնադրությունը: Արհեստանոցներն ունեին 2-4 աշխատողներ, որոնց թվում էր վարպետը: Համեմատաբար բազմամարդ էին շինարարական կազմակերպությունները:

XIV-XV դարերում գերմանական քաղաքներում ի հայտ եկան ապակենտրոնացված մանուֆակտուրաները: Կային հարուստ և աղքատ ցեխեր: Ենթավարպետները և աշակերտները կազմում էին քաղաքային բնակչության 55-60%-ը: XIII-XV դարերում գերմանական մի շարք քաղաքներում տեղի ունեցան ցեխային հեղափոխություններ: Նշված շրջանում իրենց կյանքը և կայքը պաշտպանելու նպատակով ստեղծվեցին քաղաքների միություններ: 1254 թ. կազմավորվեց քաղաքների Հռենոսյան միությունը (Մայնց, Վորմս, Օպենհեյմ և այլն): Երկու տարի անց վերջինս միավորում էր 100 քաղաքներ և 30 իշխանների, սակայն ներքին հակասությունները շուտով հանգեցրին միության քայքայմանը: Միությունը նորից կազմակերպվեց շուրջ 125 տարի հետո, երբ 1381 թ. միավորվեց 5 տարի առաջ ստեղծված քաղաքների Շվաբյան միության հետ: Շվաբ-Հռենոսյան միությունը միավորում էր ավելի քան 80 գերմանական և շվեյցարական քաղաքներ:

Քաղաքների միավորման դեմ հանդես եկան ասպետական միությունները և դրանց աջակցող իշխանները՝ կայսեր գլխավորությամբ: 1388 թ. Շվաբ-Հռենոսյան միությունը կրեց ռազմական պարտություն Վորմսի մոտ և կազմալուծվեց:

Քաղաքային միությունների հետ մեկտեղ Հարավային Գերմանիայում ձևավորվեցին Հյուսիսային Գերմանիայի հետ առևտրի պաշտպանության միություններ: Հյուսիսային քաղաքների միության կազմի մեջ մտան 90-ից ավելի քաղաքային համայնքներ: Դա գեր-

մանական հայտնի Մեծ Հանգան էր՝ «Համագերմանական վաճառականությունը»: Հանգայի միջուկը Համբուրգ, Լյուբեկ, Բրեմեն քաղաքներն էին, Հանգան գրասենյակներ ուներ Լոնդոնում, Նովգորոդում, Պսկովում, Պոլոցկում և այլուր:

Հանգայի առևտուրը միջնորդային էր: Սլավոնական և սկանդինավյան երկրներից ներմուծվում էին գյուղատնտեսական հումք, անտառանյութ, մորթեղեն, աղ, ձուկ: Հակառակ ուղղությամբ արտահանվում էին Արևմուտքի արհեստագործական արտադրանքը, քաղցրավենիք, գինի, դեղեր: Հանգան ոչ միայն առևտրական միություն էր, այլև ուներ պետության հատկանիշներ, պատերազմներ էր մղում իր առևտրային իրավունքների և արտոնությունների պահպանման համար: Այսպես, 1369 թ. Հանգան, դաշնակցելով Շվեդիայի հետ, հաղթանակ տարավ դանիացիների նկատմամբ, ստացավ ծովափնյա մի շարք ամրոցներ և դանիական թագավորների ընտրության վետոյի իրավունք:

Հանգայի մայրաքաղաքը Լյուբեկն էր, որտեղ անց էին կացվում համագումարներ՝ հանգտագներ: Սակայն Անգլիայի, Շվեդիայի, Դանիայի, ռուսական պետության տնտեսական և քաղաքական հզորության աճը հանգեցրին Հանգայի դերի իջեցմանը, իսկ աշխարհագրական մեծ հայտնագործությունների տնտեսական հետևանքները, կտրուկ նվազեցնելով միջերկրածովյան առևտրի և, համապատասխանաբար, հարավգերմանական քաղաքների առևտրի նշանակությունը, վերջնականապես կործանեցին Հանգան: Վերջին հանգտազը տեղի ունեցավ 1669 թ.:

XIV դարի կեսերին առևտրի զարգացումը և քաղաքների տնտեսական վերելքը աշխարհիկ և հոգևոր ֆեոդալներին ստիպեցին փնտրել դրամական նոր միջոցներ, ինչը պայմանավորեց համայնքի վրա ճնշման գործադրումը և դարձավ ագրարային հարաբերություններում հեղաշրջման սկիզբ: Ֆեոդալը պայքարում էր համայնական անտառներից, արոտավայրերից, մարգագետիններից առավելագույնս օգտվելու, այնուհետև հետագայում դրանք լրիվ զավթելու համար:

Բանն այն է, որ քաղաքներին անհրաժեշտ էին շինանյութ և վառելիք, արհեստագործական արտադրությանը՝ բուրդ: Աստիճանաբար ապրանքային բնույթ էին կրում ոչխարաբուծությունը, բանջարաբուծությունը և այգեգործությունը (ծաղիկների աճեցումը):

XV դարի վերջին – XVI դարի սկզբին Գերմանիայում նկատելի էր տնտեսական առաջընթացը, որը պայմանավորված էր շուկայի զարգացմամբ: Շոշափելի էին հաջողությունները լեռնային գործում, ապակու, տեքստիլ արտադրության մեջ, շինարարությունում, գրահրատարակչությունում: Գյուղում շարունակվում էր ագրարային հեղաշրջումը: Շատ շրջաններում վերականգնվում էր գյուղացու անձ-

նական ճորտական կախվածությունը ֆեոդալից: Մարգագետինները, անտառները, ջրամբարները դուրս են գալիս համայնական օգտագործման շրջանակներից:

Ֆեոդալիզմի քայքայման և վաղ կապիտալիզմի տարրերի առաջացման պայմաններում աշխարհիկ և հոգևոր ֆեոդալները քաղաքներին պարտադրում էին նորանոր հարկեր: Քաղաքները լցվեցին սնանկացած գյուղացիներով, որոնց չէին կարող ընդունել ոչ հզոր արհեստագործական մանուֆակտուրաները:

1524-1526թթ. Գերմանիայում բռնկվեց գյուղացիական ապստամբություն, որը դաժանորեն ճնշվեց: Մի քանի շաբաթվա ընթացքում (1525 թ. մայիսին) սպանվեց ավելի քան 100 հազար գյուղացի: Ապստամբության պարտությունը ամրապնդեց ճորտատիրության հիմքերը: Գյուղացիական զանգվածների դրությունն էլ ավելի վատթարացավ երեսնամյա պատերազմի (1618-1648 թթ.) հետևանքով: Սնանկացած գյուղացիները փնտրում էին կալվածատերերի հովանավորությունը: Ինչպես դիպուկ նշել է Ֆ.Էնգելսը, երեսնամյա պատերազմից հետո «ազատ գյուղացին դարձավ այնպես հազվագյուտ, ինչպես սպիտակ ագռավը»:

XVII դարում ճորտատիրական իրավունքը Գերմանիայում ընդունեց ծանր ձևեր: Ճորտ գյուղացիներն ամրացվում էին հողին և ոչ թե հողատիրոջը ու հողի հետ միասին անցնում նոր տիրոջը՝ գնման, կտակի, նվիրատվության ժամանակ: Նշված շրջանում ընդլայնվեցին նաև աշխատավճարի (կոռի) շրջանակները. այն շաբաթվա մեջ նախկին 3 օրվա փոխարեն կազմում էր 5-6 օր: Կոռը հատկապես ծանր էր Պրուսիայում:

5.3. ԱՆԳԼԻԱՅԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ XI-XVII ԴԱՐԵՐՈՒՄ

Ֆեոդալական հարաբերությունների հաստատման գործընթացն Անգլիայում տեղի էր ունենում ավելի դանդաղ, քան Ֆրանսիայում: Դրա պատճառներն էին՝ կոլոնատի բացակայությունը, գյուղացիական համայնքի կայունությունը և այլն: Այստեղ աստիճանաբար ձևավորվեց ֆեոդալական կալվածքը՝ մանորը:

XI դարից սկսած նորմանդական նվաճումների հետևանքով Անգլիայի ֆեոդալականացման գործընթացն արագացավ: 1066 թ. նորմանդական դուքս Վիլիելմը նվաճեց Անգլիան՝ ոչնչացնելով անգլոսաքսոնական վերնախավի մեծամասնությունը: Տեղական ֆեոդալներից զավթելով նրանց հողերը՝ ֆրանսիական վասալիտե-

տի սկզբունքով բաժանեց իր վասալներին: Փաստորեն՝ ձևավորվեց ֆեոդալական նոր վերնախավ:

Ամենախոշոր հողատերը դարձավ Վիլհելմը, և ուժեղ թագավորական իշխանության հաստատունով արագացավ գյուղացիության ճորտացման գործընթացը: Թագավորի կարգադրությամբ կատարվեց բոլոր հողերի ու բնակչության հաշվառում, և ազատ շատ գյուղացիներ մտցվեցին ճորտերի ցուցակի մեջ: Ձևավորվեցին ճորտ գյուղացիների երկու խմբեր՝ վիլլաներ և կոտերներ: Վերջիններս հողագուրկ կամ սակավահող գյուղացիության ներկայացուցիչներն էին:

XI-XII դարերում ֆեոդալական շահագործման գլխավոր ձևը Անգլիայում կոռն էր՝ կալվածատիրոջ կալվածքում շաբաթվա 3-4 օր ձրի ստիպողական աշխատանքը: Վիլլաները վճարում էին և՛ բնամթերային, և՛ երբեմն էլ դրամական բահրա: Գյուղացիները վճարում էին նաև եկեղեցական տասանորդ:

XI-XV դարերում Անգլիայում տնտեսության հիմնական ճյուղը գյուղատնտեսությունն էր՝ իր երկդաշտյան և եռադաշտյան համակարգերով: Հողագործության տեխնիկան պարզունակ էր, գործի էր դրվում բանող անասունի օգնությամբ: Գերակշռում էր բնատնտեսությունը:

Դիտարկվող ժամանակաշրջանում Անգլիայում զարգացան քաղաքները և առևտուրը: Քաղաքային բնակչության աճը մեծացրեց գյուղատնտեսական արտադրանքի նկատմամբ եղած պահանջը և նպաստեց ներքին շուկայի կազմակերպմանը: XIV դարում Անգլիայի համար իսկական պատուհաս դարձավ ժանտախտը, որը խլեց բնակչության մեկ երրորդի կյանքը: Հարյուրամյա պատերազմի (1337-1453 թթ.) ժամանակ ռազմական ծախսերը հոգալու համար Անգլիայում բարձրացվեցին հարկերը, որն առաջացրեց բնակչության դժգոհությունը և հանգեցրեց 1381 թ. գյուղացիական ապրտամբությանը Ուոտ Թայլերի գլխավորությամբ: Թեև ապստամբությունը ճնշվեց, բայց վախեցած ազնվականությունը այլևս գյուղացուն չէր ենթարկում կոռային շահագործման: Իր հերթին առևտրի զարգացումը արագացրեց բնամթերային հարկերի փոխարինումը դրամականով:

Հողը մնաց ֆեոդալական սեփականություն, գյուղացին ստացավ անձնական ազատություն և ֆեոդալին վճարում էր դրամական բահրա: Դրա կիրառումով արագացավ գյուղացիության տարբերակումը և կապիտալիզմի զարգացումը գյուղում: Հողօգտագործման բնագավառում կիրառվում էր վարձու բատրակների աշխատանքը:

Աշխարհագրական մեծ հայտնագործությունները նպաստեցին նաև Անգլիայի տնտեսական վերելքի ապահովմանը, մի երկրի, որը միջնադարյան Եվրոպայում խիստ համեստ դիրք էր գրավում:

Սակայն այստեղ կապիտալի կուտակման գործընթացն ավելի խորն էր ու ինտենսիվ, քան ուրիշ երկրներում:

Միջնադարյան Անգլիան ոչ մեծ ագրարային երկիր էր՝ շուրջ 3 մլն բնակչությամբ: Արդյունաբերության ճյուղերը (մետաղագործությունը, լեռնահանքային արդյունաբերությունը) նոր էին զարգանում:

Ինչպես արդեն նշել ենք, տնտեսության զլխավոր ճյուղը գյուղատնտեսությունն էր, որի ենթաճյուղերից հատկապես զարգացավ ոչխարաբուծությունը: Ոչխարի բուրդը դարձավ երկրի հիմնական հարստությունը և մեծ քանակությամբ արտահանվում էր Ֆլորենցիա ու Ֆլանդրիա՝ մահուդի ֆաբրիկաներում վերամշակելու համար: Բրդի մի զգալի մասն էլ մշակվում էր տեղում:

XVI դարում Անգլիայում բրդի և մահուդի արտադրության բնագավառում զբաղված էր երկրի բնակչության գրեթե կեսը: Մահուդի արտադրության զարգացմանը նպաստում էր Նիդեռլանդներից, Ֆրանսիայից և Գերմանիայից բարձր որակավորում ունեցող մահուդագործների զանգվածային ներգաղթը Անգլիա, որոնք այստեղ հիմնում էին նոր տիպի խոշոր մանուֆակտուրաներ:

Աշխարհագրական մեծ հայտնագործությունների հետևանքով ընդլայնվեց համաշխարհային շուկան: Մեծացավ նաև անգլիական բրդյա գործվածքեղենի և հատկապես մահուդի պահանջը: Իսկ մանր արհեստագործական արտադրությունը չէր կարող բավարարել դա: Գնալով բրդյա գործվածքեղենի արտադրությունը կենտրոնանում էր կապիտալիստական մանուֆակտուրաներում, որոնք արագորեն դուրս էին մղում արհեստագործական արտադրությունը:

Համքարային սահմանափակումներից ազատ գյուղական վայրերում ևս զարգանում էր մահուդագործական մանուֆակտուրան: Հարուստ հունքային բազայի առկայությունը պայմաններ էր ստեղծում այդ ճյուղի առաջընթացի համար: Անգլիայի հարավ-արևմտյան շրջաններում հիմնականում արտադրվում էին մահուդի նուրբ, հյուսիսային շրջաններում՝ կոշտ տեսակներ:

XVI դարում Անգլիայում զարգանում է մետաղամշակման արդյունաբերությունը ոչ միայն սև, այլև գունավոր մետաղների օգտագործման հիման վրա: Դրա հետևանքով ավելանում է կապարի, անագի, պղնձի, երկաթի հանքաքարի հանույթը: Նշված շրջանում արագ տեմպերով զարգացավ նաև նավաշինությունը: Հզոր առևտրական և ռազմական նավատորմի ստեղծումը Անգլիային դարձրեց Եվրոպայի ուժեղագույն պետություններից մեկը:

XVI դարում Անգլիայում ավելի շուտ, քան մյուս երկրներում, տեղի է ունենում ագրարային հեղաշրջում, գյուղացիության բռնի ունեզրկում: Համաշխարհային շուկայում անգլիական մահուդի պահանջարկի մեծացումը ստիպում էր ավելացնել բրդի արտադրությունը երկրում:

Մյուս կողմից՝ «գների հեղափոխության» հետևանքով սահմանված դրամական ռենտայի պայմաններում բավականին կրճատվում են անգլիական կալվածատերերի՝ լենդլորդերի եկամուտները: Հողի ժառանգական օգտագործումը գյուղացիների կողմից դեռևս միջնադարում սահմանված ռենտայի պայմաններում դառնում է տնտեսապես ոչ շահավետ: Այդ պատճառով էլ լենդլորդերը սկսում են վերացնել հողի համայնական օգտագործումը և խրախուսում էին դրա հանձնումը ֆերմերներին: Նման պարագայում արդեն հողի վարձավճարը որոշվում էր շուկայական կոնյունկտուրայով:

Դեռևս XIII-XIV դարերում, լենդլորդերը, օգտվելով հողի նկատմամբ իրենց մենաշնորհային իրավունքից, գրավում ու «ցանկապատում» էին համայնական արոտավայրերը՝ դրանք միացնելով տերունական հողերին: Այդպիսով՝ վերացվում էր համայնական հողատիրությունը՝ «բաց դաշտերի համակարգը»:

Ագրարային հեղաշրջման հաջորդ փուլում՝ XV-XVI դարերում, անգլիական լենդլորդերը սկսեցին գրավել նաև գյուղացիների վարելահողերը, նրանց դուրս քշել այդ հողերից և վերջիններս վերածել արոտավայրերի, որովհետև եղած արոտավայրերը և մարգագետինները արդեն չէին բավարարում ոչխարաբուծության զարգացմանը: Գրականության մեջ այդ գործընթացը կոչվել է «ցանկապատում»: Բնութագրելով Անգլիայում տեղի ունեցող ագրարային հեղաշրջումը, վաղ շրջանի ուտոպիստ-սոցիալիստ Թոմաս Մորը նշել է՝ «ոչխարները կերան մարդկանց»:

Տակավին XIV-XV դարերում անգլիական գյուղացիությունը ստացել էր անձնական ազատություն: Սակայն նրա հիմնական զանգվածը (կոպիզոլդերները) հողագուրկ էր և մշակում էր կալվածատերերի հողը: Գյուղացիության փոքր մասը (ֆրիզոլդերները) իր բաժնեհողի սեփականատերն էր:

Ագրարային հեղաշրջման երրորդ փուլը XVI դարի կեսերին ռեֆորմացիաների կապակցությամբ մոտ երեք հազար անգլիական կաթուղիկ եկեղեցիների վերացումն էր ու պետության կողմից դրանց հողերի և ունեցվածքի բռնագրավումը: Այդ հողերը կազմում էին երկրի ամբողջ հողային ֆոնդի գրեթե մեկ երրորդը: Բռնագրավված հողերի մեծ մասը վաճառվեց կամ բաժանվեց ազնվականությանը, որոնք դրանք օգտագործում էին ոչխարաբուծության զարգացման համար:

Հողերի մի մասն էլ ազնվականները վարձակալությամբ հանձնում էին ֆերմերներին կամ ունևոր գյուղացիներին՝ ֆրիզոլդերներին, որոնք մշակում էին համագյուղացիների էժան աշխատանքը շահագործելու միջոցով: Այդ ֆերմերները արդեն նոր՝ կապիտալիստական տիպի վարձակալ ֆերմերներ էին: Փաստորեն՝ բռնագրավումը «ցանկապատումների» և ոչխարաբուծության ընդլայնման

հիման վրա պայմաններ էր ստեղծում կապիտալիստական տնտեսության զարգացման համար նաև եկեղեցական հողերում:

Իրենց հողերից արտաքսված գյուղացիները և վանականները, զրկվելով արտադրության միջոցներից, երկրում ստեղծեցին վարձու բանվորների բանակ: Այդպիսով՝ ագրարային հեղաշրջումը Անգլիայում կազմեց հիմքը կապիտալի նախասկզբնական կուտակման գործընթացի, քանի որ վերջինս արտադրության միջոցներից անմիջական արտադրողի անջատման պատմական գործընթաց է: Գյուղացիները ստիպված էին գնալ քաղաքներ և աշխատանք որոնել կապիտալիստական մանուֆակտուրաներում: Սակայն վերջիններս չէին կարող ընդգրկել բոլոր գյուղացիներին: Նրանց որոշակի հատվածը վերածվեց աղքատների և թափառաշրջիկների: Անգլիական կառավարությունը ընդունեց դաժան օրենք թափառաշրջիկության մասին: Նա, ով մեղադրվում էր թափառաշրջիկության մեջ, բռնում էին ու վաճառում ստրկության կամ էլ՝ կախում: Կ.Մարքսը դա անվանել է «Արյունոտ օրենսդրություն», որով փաստորեն դրվեց աշխատանքի կապիտալիստական կարգապահության հիմքը: Օրենքներ էին հրապարակվում նաև բանվորների միությունների ստեղծման դեմ, աշխատավարձի առավելագույն սահմանելու մասին:

«Ցանկապատումները» առաջ էին բերում գյուղացիության համառ դիմադրությունը: XVI դարում Անգլիայում տեղի են ունենում գյուղացիական հզոր ապստամբություններ: Հատկապես մեծ չափեր ընդունեց 1549 թ. Անգլիայի արևելյան մասում Ռոբերտ Զեյի գլխավորությամբ բռնկված ապստամբությունը, որը ճնշվեց միայն կառավարական զորքերի միջոցով: Դրանից հետո համայնական հողերի բռնագրավումը լենդլորդերի կողմից պաշտոնապես հաստատեց թագավորական իշխանությունը:

XVI դարի ագրարային հեղափոխության շնորհիվ մահուդի արդյունաբերությունը ստացավ անհրաժեշտ հունք և աշխատուժ՝ ապահովելով ճյուղի արագատեմպ զարգացումը: Վերելք էին ապրում նաև այլ ոլորտներ՝ մետաղագործությունը, նավաշինությունը, վառողի, թղթի, գարեջրի արտադրությունները: Հատկապես արագ ավելանում էր ածխի հանույթը, որի ծավալով Անգլիան Եվրոպայում զբաղեցրեց առաջին տեղը:

Կապիտալիստական մանուֆակտուրաների, ներքին ու արտաքին առևտրի զարգացումը XVI դարում և XVII դարի առաջին կեսին նպաստեց անգլիական առևտրաարդյունաբերական բուրժուազիայի ձևավորմանը, նրա դիրքերի ամրապնդմանը երկրի տնտեսության մեջ: Ընդլայնվում էր նաև նոր ազնվականության ձեռնարկչատիրական գործունեությունը, իսկ «գների հեղափոխության» հետ կապված գյուղատնտեսական մթերքների գների բարձրացումը ուժեղացնում էր նրանց տնտեսական դիրքերը և, ընդհակառակը, թու-

լացնում հին ազնվականությանը՝ գների ընդհանուր աճի պայմաններում ռենտայի համեմատաբար կայունության պատճառով:

Երկրում տիրող ֆեոդալական արտադրահարաբերությունները հակասում էին բուրժուազիայի և ազնվականության բուրժուականացված շերտերի շահերին: Վերջիններիս շահերն անտեսում էր նաև Ստյուարտների դինաստիան, որի տնտեսական քաղաքականությունը կողմնորոշված էր դեպի հին ֆեոդալական ազնվականությունը:

Մի շարք կարևոր ապրանքատեսակների արտադրության կամ վաճառքի մենաշնորհների սահմանումը, հարկային ծանր քաղաքականությունը, մաքսային ցածր տարիֆները Անգլիայի մրցակից հանդիսացող Ֆրանսիայի արդյունաբերական ապրանքների վրա առաջացնում էին անգլիական բուրժուազիայի դժգոհությունը: Ապավինելով «ցանկապատումների» ենթարկված և իրենց բաժնեհոդերի համար պայքարող գյուղացիությանը (յոմեններին), բուրժուազիան և նոր ազնվականությունը հանդես էին գալիս հին ֆեոդալական ազնվականության և թագավորական իշխանության դեմ:

XVII դարի կեսերին սկսվեց անգլիական բուրժուական հեղափոխությունը, որը ժամանակագրական կարգով երկրորդն էր աշխարհում: 1649 թ. Անգլիայում հռչակվեց հանրապետություն՝ Օլիվեր Կրոմվելի գլխավորությամբ: Բուրժուազիան վերացրեց ֆեոդալական ազնվականության տնտեսական և քաղաքական արտոնությունները: Հեղափոխության ընթացքում բռնազրավվեցին թագավորի կողմնակից ազնվականների հողերը, ինչի հետևանքով Անգլիայի հողատարածությունների կեսից ավելին կենտրոնացվեց պետության ձեռքին: Այդ հողերը վաճառվեցին բուրժուազիային և նոր ազնվականությանը: Այդպիսով՝ պահպանվեց հողի ֆեոդալական սեփականությունը, գյուղացիությունը հող չստացավ և ավելի մեծ չափեր ընդունեցին «ցանկապատումները»:

Բուրժուազիան, վախենալով շարժման թափից, համաձայնության մեջ մտավ ազնվականության հետ, ճնշեց գյուղացիական շարժումները և հեղափոխության հաղթանակը օգտագործեց գյուղացիության դեմ: Յոմենները, որոնք հեղափոխության շարժիչ ուժն էին, ոչինչ չստացան, իսկ 11 տարի անց վերականգնվեց նաև թագավորի իշխանությունը, բայց՝ խիստ սահմանափակ իրավունքներով:

Հեղափոխության տնտեսական քաղաքականությունը մերկանտիլիստական էր. խրախուսում էր երկրում մանուֆակտուրային արդյունաբերության զարգացումը: Հեղափոխության հաղթանակը հաստատեց ազատ մրցակցություն ներքին առևտրի բնագավառում:

Առևտրական բուրժուազիային հովանավորելու, նավատորմը ավելացնելու և Անգլիայի նավագնացությունը զարգացնելու նպատակով 1651թ. ընդունվեց նավագնացության մասին օրենքը՝ «Նավիզացիոն ակտը»: Ըստ այդ օրենքի՝ Ասիայից, Աֆրիկայից և

Ամերիկայից բոլոր մթերքները և ապրանքները պետք է Անգլիա կամ նրա տիրույթներ ներկրվեին միայն անգլիական նավերով, իսկ եվրոպական երկրներից՝ միայն այն պետությունների նավերով, որտեղ արտադրվել էին:

Չափազանց մեծ էր անգլիական բուրժուական հեղափոխության նշանակությունը: Այդ հեղափոխությունն ազդեց եվրոպական կապիտալիզմի բախտի վրա և նշանավորեց նոր հասարակարգի հաղթանակը, կապիտալիզմի հաղթանակը: Բուրժուական հեղափոխությունից հետո Անգլիայում զարգացան կապիտալիստական հարաբերությունները տնտեսության բոլոր ճյուղերում: XVII դարի երկրորդ կեսին հին ազնվականության հողերը կենտրոնանում էին բուրժուազիայի և նոր ազնվականների ձեռքին, որոնք բարձր շահույթ ստանալու համար կազմակերպում էին կապիտալիստական ֆերմերային տնտեսություններ կամ այդ հողերը վարձակալությամբ տալիս էին ֆերմերներին:

Հին հողատեր ազնվականների մի մասը ևս գերադասում էր հողերը հանձնել դրանք վարձակալող ֆերմերներին կամ անցնել իրենց կալվածքների շահագործման կապիտալիստական մեթոդներին: Այդպիսով՝ գյուղատնտեսության մեջ ստեղծվում էին կապիտալիստական հողագործական ֆերմերային տնտեսություններ և անասնապահական ֆերմաներ, կիրառվում էին երկրագործության առաջավոր եղանակներ, օրգանական պարարտանյութեր, տեխնիկա: Այդ բոլորը ֆերմերային տնտեսություններում օգտագործվող վարձու աշխատանքի հետ ապահովում էին բարձր ապրանքայնություն, գյուղատնտեսական արտադրության աճ, շահութաբերություն, նշանավորում կապիտալիստական հարաբերությունների զարգացումը անգլիական գյուղում:

Մյուս կողմից՝ կապիտալիստական ֆերմերային տնտեսությունների ստեղծումը ընդլայնում էր «ցանկապատման» մասշտաբները, արագացնում մանր արտադրողների ունեզրկման գործընթացը: Գոյանում էր ազատ աշխատուժ, մեծանում էր Անգլիայի շուկան՝ պայմաններ ստեղծելով արդյունաբերության զարգացման համար:

Ներքին շուկայի կազմավորման համար կարևոր նշանակություն ուներ աշխատանքի հասարակական բաժանման խորացումը, որը տեղի էր ունենում ինչպես գյուղատնտեսության, այնպես էլ արդյունաբերության մեջ: Դրա հետևանքով տեղական շուկաները միավորվում էին ազգային շուկայի մեջ, որը կազմավորվել էր դեռևս XVI դարում:

Ներքին շուկայի ընդարձակումը պայմանավորված էր նաև քաղաքների զարգացմամբ: XVII դարի վերջին Անգլիայի քաղաքային բնակչությունը կազմում էր երկրի ամբողջ բնակչության մեկ քառորդը: Առևտրի և արդյունաբերության զարգացմանը նպաստեց նաև

տարբեր ապրանքների մենաշնորհային արտադրության կամ վաճառքի արտոնությունների վերացումը: Անգլիայում ստեղծվում էին անհրաժեշտ պայմաններ ազատ մրցակցության հաստատման համար:

Առևտրի զարգացմանը մեծապես խթանեց հաղորդակցության ջրային ուղիների ցանցի ընդլայնումը: Խոշոր առևտրային և արդյունաբերական կենտրոնները գտնվում էին գետերի կամ ծովի ափին, որը հնարավորություն էր տալիս օգտագործել էժան ծովային հաղորդակցությունը բեռների փոխադրման և երկրի տարբեր մասերի միջև առևտրական կապերի հաստատման համար: XVIII դարի կեսերից կառուցվում են նոր խճուղային ճանապարհներ, ջրանցքներ, զարգանում է կապը:

Վարձու աշխատուժի առաջացումը և ներքին շուկայի կազմավորումը Անգլիայում տեղի էին ունենում արտաքին շուկայի ընդլայնմանը զուգընթաց: Դրանով պայմաններ էին ստեղծվում տնտեսության վերընթաց ուղիով զարգացման համար:

Անգլիայում մանուֆակտուրային արտադրության հիմնական ճյուղը բրդի արդյունաբերությունն էր, որին 1700-1770 թվականներին բաժին էր ընկնում անգլիական արտահանման 25-33%-ը:

XVII դարում այստեղ զարգանում է բամբակագործական արդյունաբերությունը, որի կենտրոններն էին Լանկշիրը և Յորքշիրը: Հատկապես աչքի էր ընկնում Մանչեստրը: Երկրում զարգանում էին նաև մետաքսի, վուլշի և տեքստիլ արդյունաբերության այլ ճյուղերը: XVII-XVIII դարերում Անգլիան մյուս երկրներից զգալիորեն առաջ էր մանուֆակտուրային արտադրության ծավալներով ու զարգացման տեմպերով: Այստեղ արագորեն զարգանում էր նաև նավագնացությունը: 1588-1760 թվականներին Անգլիայի առևտրական նավատորմի նավերի տոննաժը մեծացավ ավելի քան 13 անգամ և կազմեց 487 հազար տոննա: Աճեց արտաքին առևտրի ծավալը. 1720-1750 թվականներին 13 մլն ֆունտ-ստեռլինգից հասավ 21 մլն ֆունտ-ստեռլինգի, որը կազմում էր ամբողջ Եվրոպայի արտաքին առևտրաշրջանառության 20%-ը: Այդ շրջանում Անգլիան աշխարհում առաջին տեղում էր արտաքին առևտրի ծավալով:

XVII դարի կեսերից Անգլիան սկսում է իր գաղութային էքսպանսիան: Առաջինը զավթում է Իռլանդիան: 1578 թվականին գրավում է Բահամյան կղզիները, նույն տարում ջարդում իսպանական «Անհաղթ արմադան»: XVI դարի վերջին սկսում է Հյուսիսային Ամերիկայի գաղութացումը: XVII դարի սկզբին ամերիկյան մայրցամաքում ստեղծվեց առաջին անգլիական գաղութը՝ Վիրջինիան, այնուհետև՝ Նոր Անգլիան, Նոր Շոտլանդիան, Կարոլինան, Մերիլենդը, Գվիանան:

Թե արդյունաբերության, թե նավագնացության զարգացումը երկրում հնարավորություն են ընձեռում Հոլանդիայի դեմ վճռական պայքար ծավալելու: Նշված շրջանում Անգլիայի և Հոլանդիայի միջև տեղի ունեցավ երեք պատերազմ առևտրային և գաղութային գերիշխանության նպատակով, որոնք անհաջող ավարտվեցին Հոլանդիայի համար: Վերջինս ընդունեց Անգլիայի պարտադրած «Նավիգացիոն ակտը»: XVIII դարում Անգլիան Հոլանդիային գերազանցեց առևտրական նավատորմով: Թեև Հոլանդիան դեռևս պահպանում էր զգալի գաղութային տիրույթներ, սակայն այլևս չէր կարող մասնակցել Անգլիայի հետ նոր գաղութներ նվաճելուն:

Անգլիան մեծացնում է իր ազդեցությունը նաև Պորտուգալիայի վրա: 1654 թ. Կրոմվելը պայմանագիր կնքեց Պորտուգալիայի հետ, որով պորտուգալական գաղութներում կատարվող առևտրում անգլիական առևտրականներին տրվում էին հավասար իրավունքներ, Պորտուգալիան պարտավորվում էր օգտվել բացառապես անգլիական նավերից: 1703 թ. պայմանագրով հանվում էր Պորտուգալիա անգլիական բրոյա ապրանքների ներմուծման արգելքը:

Այսպիսով՝ ուշ ֆեոդալիզմի ժամանակաշրջանում Անգլիայում դրական տեղաշարժեր կատարվեցին թե ներքին, թե արտաքին քաղաքականության բնագավառում: Հզորացավ երկրի տնտեսությունը, հաջողություններն առկա էին մյուս պետությունների հետ հարաբերություններում:

5.4. ՀՈԼԱՆԴԻԱՅԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ XVI-XVII ԴԱՐԵՐՈՒՄ

Արևմտյան Եվրոպայում շուկայական տնտեսության առաջացումը և հաստատումը կատարվել են անհամաչափ: Այդ բնագավառում առաջինը Հոլանդիան հասավ հաջողությունների:

Դեռևս XIII-XV դարերում Նիդեռլանդները Հյուսիս-արևմտյան Եվրոպայի առավել զարգացած շրջանն էր: Նրա տարածքը ընդգրկում էր այժմյան Բելգիան, Հոլանդիան և Հյուսիսային Ֆրանսիայի մի մասը:

Հոլանդիայի տնտեսական ծաղկման նախադրյալներից էին, ամենից առաջ, աշխարհագրական և բնական նպաստավոր պայմանները: Աշխարհագրական մեծ հայտնագործությունների հետևանքով Նիդեռլանդները XVI դարում հայտնվեցին Եվրոպայում ընդլայնվող առևտրական ճանապարհների կենտրոնում: Դրանք Նիդեռլանդները կապում էին Անգլիայի, Շամպայնի (Ֆրանսիա) տոնավաճառների, Հանզայի քաղաքների և այլ երկրների հետ:

Պատմականորեն Նիդեռլանդների տարբեր նահանգները անհավասարաչափ էին զարգանում: XIV-XV դարերում երկրի հարավը (Ֆլանդրիան և Բրաբանտը) մահուդի արդյունաբերության կենտրոն էր, իսկ հյուսիսը (Յուլանդիան և Ջելանդիան) հետ էր մնում իր տնտեսությամբ: Այստեղ բնակչությունը հիմնականում զբաղվում էր ձկնորսությամբ և նավագնացությամբ:

XV դարի երկրորդ կեսին երկրի տնտեսական կենտրոնը տեղափոխվեց հյուսիս: Միջազգային առևտրի գլխավոր հանգույցը Անտվերպենն էր: Յուլանդիայում, Ֆրիսլանդիայում և Ջելանդիայում ճորտատիրությունը լուրջ զարգացում չապրեց: Այստեղ կային մեծ թվով ազատ գյուղացիներ, որոնք գյուղատնտեսության հետ միասին զբաղվում էին նաև ծովային գործով:

Յյուսիսային նահանգների աղքատ հողատարածքները կարիք ունեին բարելավման, որ պահանջում էր խոշոր ծախսեր: Ամենամյա կրկնվող հեղեղումները ստիպում էին ստեղծել թանկ արժեցող կառույցներ (պատնեշներ) դաշտերի պաշտպանության համար: Այս բոլորը գյուղատնտեսական գործունեությունը դարձնում էին վնասաբեր և բնակչությանը մղում արհեստների և առևտրի ոլորտ: Այստեղ էին խաչվում համաշխարհային առևտրի կարևոր ուղիները եվրոպայի և անդրծովյան տարածքների միջև:

Նիդեռլանդական առևտրականները միջնորդային առևտուր էին կատարում տարբեր երկրների ապրանքներով և մեծ օգուտներ էին ստանում գնման ու վաճառքի գների տարբերությունից: Անտվերպեն և Ամստերդամ քաղաքները սերտ կապեր ունեին գաղութների և եվրոպական մի շարք երկրների հետ:

Նիդեռլանդներում առաջացան բազմաթիվ նոր քաղաքներ՝ Բրյուզեն, Իպրը, Քենտը և այլն, որոնք մահուդագործության կենտրոններ էին: Նիդեռլանդները Անգլիայից ստանում էր ոչխարի բուրդ, որը մշակվում էր Ֆլանդրիայում: Ֆլանդրիական մահուդը XIII-XV դարերում համաեվրոպական համբավ էր վայելում և վաճառվում էր մեծ քանակությամբ:

Արդյունաբերական արտադրանքի նկատմամբ ներկայացվող մեծ պահանջը խթանում էր անցումը համքարային արհեստից մանուֆակտուրային արտադրությանը: Ստեղծվեցին կապիտալիստական մանուֆակտուրաներ՝ բրոյա, մետաքսյա, բամբակյա գործվածքեղենի, գորգերի, ժանյակի, մետաղի, կաշվի և այլ ապրանքների արտադրությամբ: Մանուֆակտուրաների հիմնական ձևը ցրված մանուֆակտուրաներն էին, քանի որ համքարությունների դիմադրությունը գյուղում ավելի թույլ էր զգացվում:

Կապիտալիստական մանուֆակտուրաները զարգանում էին նաև Նիդեռլանդների հյուսիսային նահանգներում՝ Յուլանդիայում և Ջե-

լանդիայում, որտեղ բարգավաճում էին նավաշինությունը, տեքստիլ, գորգերի արտադրությունը և արդյունաբերության այլ ճյուղերը:

XVI դարում այս նահանգներում կապիտալիստական հարաբերություններն արմատավորվում էին ոչ միայն արդյունաբերության, այլև գյուղատնտեսության մեջ: Գյուղացիության զգալի մասը անձնապես ազատ էր, իսկ ֆեոդալական հողատիրության տեսակարար կշիռը կազմում էր ընդամենը 20-25%: Քաղաքային բուրժուազիային պատկանող հողերի շոշափելի մասը վարձակալում էր գյուղական չքավորությունը, որն իր գոյությունը պահպանելու համար զբաղվում էր նաև տնայնագործությամբ: Սակայն Յուլանդիայի հյուսիսային տարածքներում գյուղացիությունը աստիճանաբար քայքայվում էր, որը պայմաններ էր ստեղծում կապիտալիստական արդյունաբերության և ներքին շուկայի ընդլայնման համար: Միևնույն ժամանակ հարավային և հարավ-արևելյան մի շարք նահանգներում տնտեսության հիմնական ճյուղը գյուղատնտեսությունն էր, որտեղ տիրապետող էին ֆեոդալական հարաբերությունները:

Այսպիսով՝ XVI դարի կեսերին արդեն Նիդեռլանդներում զարգանում էին կապիտալիստական հարաբերությունները: Սակայն ֆեդերացիայի գոյությունը զգալիորեն արգելակում էր կապիտալիզմի տարածմանը երկրում:

XVI դարի սկզբին (1517 թ.) Նիդեռլանդներն ընկավ Իսպանիայի տիրապետության տակ: Սկզբնական շրջանում Նիդեռլանդները, լինելով Իսպանիայի կազմի մեջ, առևտուր էր անում նրա գաղութների հետ և մեծ շահույթներ ստանում: Բայց և այնպես հետամնաց ֆեոդալական Իսպանիայի տիրապետությունը Նիդեռլանդների նկատմամբ ունեցավ բացասական հետևանքներ: Իսպանական ազնվականության դաժան ճնշումը, ինչպես նաև գանձվող մեծ հարկերը դժգոհություն էին առաջացնում Նիդեռլանդների բնակչության բոլոր խավերի շրջանում և կասեցնում երկրի արտադրողական ուժերի զարգացումը:

Նիդեռլանդներից Իսպանիան տարեկան գանձում էր 2 մլն գուլդեն, որը կազմում էր նրա գանձարանի բոլոր եկամուտների 40%-ը: Դա 4 անգամ ավելին էր, քան Իսպանիայի անդրծովյան գաղութներից ստացած ամբողջ հարկերի գումարը: Իսպանական միապետությունը բոլորովին հաշվի չէր առնում Նիդեռլանդների առևտրաարդյունաբերական շահերը և գնալով ծանրացնում էր վերջինիս դրությունը: Ուստի, սկսվեց զինված պայքար իսպանացիների դեմ:

Ապստամբությունը դաժանորեն ճնշվեց, և իսպանական տեղապահ դուքս Ալբան կիրառեց մի շարք պատժամիջոցներ: 1567 թ. նա մտցրեց ալկաբալա՝ հարկային նոր համակարգ՝ 1%՝ շարժական և անշարժ գույքից, 5%՝ անշարժ գույքի առք ու վաճառքից և 10%՝ յուրաքանչյուր ապրանքի վաճառքից: Նման հարկային համակարգի

կիրառումը բարձրացրեց Հոլանդիայի հայրենական ապրանքների գները, և դրանք դարձան ոչ մրցունակ համաշխարհային շուկայում:

1572 թ. ապրիլին Նիդեռլանդներում բռնկվեց հյուսիսային նահանգների համընդհանուր ապստամբությունը, որը վերածվեց ազգային-ազատագրական պատերազմի ընդդեմ Իսպանիայի տիրապետության: 1579 թ. հունվարին 7 հյուսիսային նահանգներ Հոլանդիայի գլխավորությամբ ստորագրեցին Ուտրեխտյան ունիան և ստեղծեցին նոր անկախ պետություն՝ «Նիդեռլանդների յոթ միավորված նահանգների հանրապետությունը», որտեղ առաջատար դիրք գրավեց Հոլանդիան: Իսպանիան դա ճանաչեց միայն 1609 թ.: Հարավային նահանգները մնացին Իսպանիայի լծի տակ: Դա բացատրվում էր նրանով, որ նիդեռլանդական ազնվականությունը և ռեալցիոն բուրժուազիայի վերնախավը համաձայնության եկան իսպանական միապետության հետ: Բացի դրանից, հարավում տեղի ունեցող ռազմական գործողությունների հետևանքով կատարվում էր զանգվածային արտագաղթ դեպի հյուսիս, որը թուլացնում էր հարավի հեղափոխական ուժերը: Դրան հակառակ, ներգաղթողները մեծ ազդեցություն ունեցան հյուսիսի տնտեսական զարգացման վրա, քանի որ իրենց հետ բերեցին արդյունաբերական և առևտրական փորձը, գիտելիքները, կապիտալները: Հետագայում հարավային նահանգները կազմեցին Բելգիա պետության հիմքը: Առևտրի կենտրոնը Անտվերպենից փոխադրվեց հյուսիս՝ Ամստերդամ:

Վերը նշված յոթամյա ազգային-ազատագրական պայքարն իրենից ներկայացնում էր աշխարհում առաջին բուրժուական հեղափոխությունը, որի արդյունքում ստեղծվեց հողագնդի առաջին բուրժուական երկիրը՝ Հոլանդիան, ունենալով հարուստ և ազդեցիկ բուրժուազիա, ուժեղ նավատորմ:

Որո՞նք էին Հոլանդիայի տնտեսության զարգացման հիմնական ուղղությունները: Բանն այն է, որ Իսպանիայի և Պորտուգալիայի տնտեսական անկումը XVII դարում համընկավ Հոլանդիայի հզորացման հետ: Նշված շրջանում Նիդեռլանդները համաշխարհային առևտրում կատարում էր այն դերը, որը XVI դարում բաժին էր ընկնում Իսպանիային և Պորտուգալիային: Տեղի ունեցավ առևտրական ուղիների փոխադրում Պիրենեյան թերակղզուց դեպի հյուսիս՝ նպաստելով Հոլանդիայի տնտեսական վերելքին: Բարենպաստ աշխարհագրական դիրքը, բուրժուական հեղափոխությունը, աշխարհագրական մեծ հայտնագործությունները դարձան այն հիմնական գործոնները, որոնք ապահովեցին Նիդեռլանդների զարգացումը:

Բուրժուական այս պետության տնտեսական քաղաքականությունը ևս ուղղված էր արդյունաբերության և առևտրի աճին: Դեռևս 1573 թ. բռնագրավվեցին կաթոլիկ եկեղեցուն պատկանող հողերը, իսկ ազնվականների մի մասը, անցնելով Իսպանիայի կողմը, կորց-

րեց իր տիրույթները: Ինչպես արդեն նշվեց, Հյուսիսային Նիդեռլանդներում ճորտատիրությունը գրեթե տարածում չգտավ, իսկ գյուղացիության զգալի մասն ուներ անձնական ազատություն: Այդ բոլորը պայմաններ ստեղծեցին կապիտալիստական ուղիով գյուղատնտեսության վերակառուցման համար:

Մեծ նշանակություն ունեցավ նաև այն հանգամանքը, որ Հոլանդիան ժառանգեց Նիդեռլանդների բարձր նյութական մշակույթը: Մանուֆակտուրաների տեղափոխումը հարավային ճահանգներից հյուսիսային ճահանգներ, որտեղ բացակայում էին համաքարային սահմանափակումները, նպաստում էր տնտեսական կենտրոնների փոխադրմանը հյուսիս:

XVII դարի կեսերին Հոլանդիայում կային բազմաթիվ քաղաքային կենտրոնացված մանուֆակտուրաներ, որոնք իրենց հավասարը չունեին ամբողջ Եվրոպայում:

Հոլանդական արդյունաբերության զարգացմանը նպաստում էր էժան գաղութային հումքի ստացումը: Բարձր զարգացման հասան մահուդագործությունը, մետաքսի արտադրությունը, կաշեգործությունը, պանրագործությունը: Տեքստիլ արդյունաբերության արտադրանքով Հոլանդիան ձեռք բերեց միջազգային նշանակություն:

Հոլանդիայում զարգացած էր նաև նավաշինությունը, որն սպասարկում էր Եվրոպայի շատ երկրների: XVII դարում Հոլանդիան դարձավ նավաշինության համաշխարհային կենտրոն: Ջարգանում էր թղթի, գինու, գարեջրի արտադրությունը: Մեծ նշանակություն ձեռք բերեց ձկնորսությունը. այստեղ նշված բնագավառում յուրաքանչյուր տարի զբաղված էր 100-120 հազար մարդ:

Հոլանդական կապիտալները գերազանցում էին Եվրոպական մնացած երկրների ամբողջական կապիտալը: Միայն 1602 թ. ստեղծված Օստ-Հնդկական ընկերության կանոնադիր կապիտալը 6,4 մլն ֆլորին էր, որը հնարավորություն էր տալիս մենաշնորհային առևտուր անելու Հնդկական և Խաղաղ օվկիանոսների առափնյա երկրների հետ: Հոլանդիան XVII դարում պորտուգալացիներին դուրս քշեց Ասիայից՝ իր ենթակայության տակ դնելով Ինդոնեզիան, Սիամը, Ցեյլոնը, իսկ 1651 թ., գրավելով Բարեհուսո հրվանդանը, մուտք գործեց Հարավային Աֆրիկա՝ հիմնելով Քեյփթաունը (Կապշտատդ): Այնուհետև Հյուսիսային Ամերիկայում հիմնեց Նոր Ամստերդամը, որը հետագայում անգլիացիները վերանվանեցին Նյու-Յորք:

1610 թ. հոլանդացիները առաջինը Հիմաստանից Եվրոպա բերեցին թեյ: 1621 թ. ստեղծվեց Վեստ-Հնդկական ընկերությունը, որը ոչ միայն առևտրով էր զբաղվում, այլև՝ Ատլանտիկայում իսպանական նավերի թալանով (ծովահենությամբ): 1674 թ. այդ ընկերությունը սնանկացավ:

XVII դարում Յուլանդիան դարձավ եվրոպական և համաշխարհային առևտրի կենտրոն՝ փոխարինելով Պորտուգալիային: Նա աշխույժ առևտրական կապեր ուներ Սկանդինավյան երկրների, Յուսիսային Գերմանիայի, Լեհաստանի, Մերձբալթիկայի, Ռուսաստանի հետ: Նրա առևտրական նավատորմը XVII դարի կեսերին ուներ 22 հազար նավ (որն ավելին էր, քան եվրոպական մնացած երկրների նավատորմը միասին վերցրած), և նա դարձել էր բեռների համաշխարհային փոխադրողը: Հզոր էր նավաշինական արդյունաբերությունը: Միայն Ամստերդամի և Ջանդամի նավահանգիստներում կային 130 նավաշինարաններ: Այստեղ պատրաստված նավերը վաճառվում էին աշխարհի շատ երկրներում:

XVII դարում Յուլանդիայում կապիտալիզմը զարգանում էր նաև գյուղատնտեսության մեջ և ուղեկցվում էր մանր գյուղացիական տնտեսությունների քայքայմամբ: Նրանց հողակտորներն անցնում էին գյուղական բուրժուազիայի ձեռքը: Ջարգանում էր ինտենսիվ անասնապահությունը, բանջարաբուծությունը, այգեգործությունը (հատկապես՝ կակաչների մշակությունը): Ձևավորվում էր բարձր ապրանքայնությամբ ֆերմերային տնտեսություն, իսկ գյուղացիության հիմնական զանգվածը վերածվում էր բատրակների և քաղաքային արդյունաբերության վարձու բանվորների:

Կարևոր էր Յուլանդիայի ֆինանսական համակարգի էվոլյուցիան: 1609 թ. առաջինը եվրոպայում հիմնվեց Ամստերդամի բանկը, որն արագորեն հարստացավ և դարձավ խոշոր կապիտալների տեր, իսկ Ամստերդամը համարվեց աշխարհի ֆինանսական կենտրոնը: Մեծ ճանաչում ստացան նրա ապրանքային և ֆոնդային բորսաները:

XVII դարի կեսերին Յուլանդիան հասավ իր հզորության գագաթնակետին, սակայն դարավերջին իր տեղը զիջեց Անգլիային, իսկ XVIII դարում դարձավ երկրորդական կարգի պետություն: Յուլանդիայի տնտեսության հետ մնալը պայմանավորված էր մի շարք հանգամանքներով: Ամենից առաջ հարկ է նշել, որ Նիդեռլանդների հյուսիսային մասերը շատ ուժ և միջոցներ էին ծախսում պայքարելու համար Յուսիսային ծովի ջրերի դեմ, որոնք հեղեղում էին երկրի ափերը, մեծ վնաս հասցնում նրա տնտեսությանը: Մյուս կողմից՝ թույլ էր Յուլանդիայի արդյունաբերության տեխնիկական բազան, զգացվում էր հումքի, տարածքի, աշխատուժի պակաս:

Յուլանդիան, մյուս երկրների նման, չէր սահմանում մաքսային տարիֆներ, որքանով որ պրոտեկցիոնիզմը շահավետ չէր հոլանդական առևտրականների միջնորդային առևտրի համար: Պետության կողմից հայրենական արտադրողների պաշտպանության բացակայությունը նույնպես չէր օժանդակում Յուլանդիայի արդյունաբերության զարգացմանը:

երկրում գերակշռում էր առևտրային կապիտալը, որը չուներ բավարար հզոր արդյունաբերական բազա: Հոլանդիայի համար բացասական էր Անգլիայի կողմից (Կրոմվել) 1651 թ. «Նավիգացիոն ակտի» ընդունումը, որն արգելում էր այլ երկրներից Անգլիա ապրանքների տեղափոխումը հոլանդական և ուրիշ պետությունների նավերով:

Թեև XVII դարի վերջին և հետագայում էլ Հոլանդիան կորցրեց իր առաջատար տնտեսական ու առևտրական դիրքերը, այնուամենայնիվ, վերջինս մնում էր զարգացած շուկայական տնտեսություն ունեցող պետություն, մինչդեռ Իսպանիան, Իտալիան, Պորտուգալիան լրացրին հետամնաց երկրների շարքը:

5.5. ՌՈՒՍԱՍՏԱՆ (IX – XVII դարեր)

5.5.1. Կիևյան Ռուսիայի տնտեսական զարգացումը IX-XII դարերում

Հնագույն ռուսական` Կիևյան պետությունը առաջացել է IX դարում: Դրան նախորդել են արևելյան սլավոնների միջավայրում տոհմացեղային կարգի քայքայումը, մասնավոր սեփականության առաջացումը, նահապետական ստրկության առկայությունը և դասակարգերի գոյացումը:

Դա վաղ միջնադարի պետություն էր, որտեղ թեև դանդաղորեն, բայց զարգանում էին ֆեոդալական հարաբերությունները` հողերը կենտրոնանում էին տոհմական ավագանու ձեռքին, գյուղական բնակչությունը կախման մեջ էր ընկնում նրանից:

Խոշոր հողատերեր էին իշխանները և բոյարները, իսկ քրիստոնեության ընդունումից հետո` նաև եկեղեցին: Ֆեոդալական հողատիրության աճի հիմնական աղբյուր X-XI դարերում դառնում է համայնական հողերի գրավումը և վերածումը ժառանգական սեփականության` վոտչինայի: Ազատ համայնականները տնտեսական և արտատնտեսական հարկադրման միջոցով ենթարկվում էին հողատերերին և կոռային աշխատանքներ կատարում:

Ֆեոդալական հարաբերությունները Ռուսիայում զարգանում էին ավելի դանդաղ` Արևմտյան Եվրոպայի երկրների համեմատությամբ: Գյուղացիների ճորտացմանը խոչընդոտում էին չբնակեցված հսկայական հողերի առկայությունը և դրանց գաղութացման հնարավորությունը, ինչպես նաև` գյուղական համայնքի պահպանումը: Բացի դրանից, ֆեոդալական հարաբերություններն այստեղ զարգանում

էին ոչ թե ստրկատիրության, այլ նախնադարյան կարգի հիման վրա՝ հողի մասնավոր սեփականության առաջացման և բնակչության թույլ շերտավորման պայմաններում: Դրա հետևանքով Կիւլյան պետության բնակչության զգալի մասը մնում էր ազատ, ամրացված չէր հողին: Չկար ճորտատիրական իրավունքը, որն այդ ժամանակ արդեն անուր հաստատվել էր Արևմտյան Եվրոպայում:

Կիւլյան Ռուսիայի բնակչության հիմնական զբաղմունքը հողագործությունը, անասնապահությունը, ձկնորսությունը, մեղվաբուծությունն էր: Ջարգանում էր արհեստագործությունը, որն առանձնանում էր հողագործությունից: Սի քանի տասնյակ արհեստներից առավել տարածվածներն էին երկաթագործությունը, բրուտագործությունը, կաշեգործությունը, մանածագործությունը, ոսկերչությունը: Արհեստների կենտրոններ էին Կիւլը, Նովգորոդը, Վլադիմիրը, Սմոլենսկը, Պսկովը, Ռոստովը և ուրիշ քաղաքներ: Աչքի էին ընկնում հատկապես Կիւլը և Նովգորոդը, որոնք իրենց հարմար աշխարհագրական դիրքի շնորհիվ հանդիսանում էին նաև խոշոր առևտրային կենտրոններ:

Ռուսիայի արտաքին առևտրական կապերը ձգվում էին մինչև Բյուզանդիա, Արևմտյան Եվրոպա և Արևելքի երկրներ. արտահանվում էին մորթիներ, մեղր, վուշ, արհեստագործական արտադրանք:

Կիւլյան Ռուսիայում մինչև X դարի երկրորդ կեսը օգտագործում էին բյուզանդական և արաբական դրամները, այնուհետև սկսվում է սեփական ոսկյա և արծաթյա դրամների հատումը:

Կիւլյան Ռուսիան X-XI դարերում հասավ զարգացման առավել բարձր աստիճանի, որից հետո անբարենպաստ արտաքին և ներքին պայմանները պատճառ հանդիսացան նրա անկման համար: Ֆեոդալական հողատիրության զարգացման հետևանքով հզորանում էին իշխանները և բոյարները, որոնք ձգտում էին անկախության՝ Կիւլյան իշխաններից: Սկսվեցին երկպառակտչական կռիվները և ֆեոդալական մասնատվածության ժամանակաշրջանը, թուլացավ կենտրոնացված իշխանությունը: Նա այլևս չէր կարող դիմադրել բազմաթիվ քոչվոր ցեղերի հարձակումներին և XIII դարում նվաճվեց թաթար-մոնղոլների կողմից:

5.5.2. Ռուսաստանի տնտեսական դրությունը XIII-XIV դարերում

Ռուսաստանում XII դարի վերջերից սկսվեց մասնատվածության ժամանակաշրջանը: Կիւլյան պետությունը տրոհվեց միմյանցից անկախ տասնյակից ավելի իշխանությունների: Հաստատվեց հողա-

տիրության աստիճանական կառուցվածքը: Ամենախոշոր հողատեր դառնում էին իշխանները, որոնց փոքր ինչ գիջում էին բոյարները: Նրանցից ծառայության համար հողեր էին ստանում մանր և միջին ֆեոդալները՝ սկիզբ դնելով պայմանական կամ կալվածատիրական հողատիրությանը: Մասնատվածության ժամանակաշրջանում վտո-
չինան դառնում է ոչ միայն տնտեսական, այլև ինքնուրույն քաղա-
քական կենտրոն:

Ֆեոդալական հողատիրության հաստատումն ուղեկցվում էր գյուղացիության ճորտացմամբ: Դրան նպաստում էին մոնղոլական լուծը, բնակչության թալանը և աղքատացումը: Ֆեոդալական ռեն-
տայի հիմնական ձևը դարձավ բնամթերային հարկը, որը խթանում էր արտադրողական ուժերի զարգացումը: Առավել արագ տնտեսու-
թյունը զարգանում էր հյուսիս-արևելքում, որտեղ, թաթարների կող-
մից Կիևի գրավումից հետո, տեղափոխվեցին երկրի քաղաքական և
տնտեսական կենտրոնները: Փրկվելով օտարերկրյա գավթիչներից՝
այստեղ էր տեղափոխվում նաև բնակչությունը՝ գաղութացնելով
Արևելա-Եվրոպական հարթավայրի հյուսիսային և հյուսիս-արևելյան
շրջանները և տարածելով հողագործությունը: Ջարգանում են հողի
մշակման եռադաշտային համակարգը, գյուղատնտեսական տեխ-
նիկան:

Թաթար-մոնղոլները ծանր հարված հասցրին ռուսական քաղաք-
ներին, առևտրին և արհեստներին: Բնակչության բնաջնջումը, ար-
հեստավորների գերեվարումը, քաղաքների ավերումը, ծանր հար-
կերի սահմանումը խոչընդոտում էին երկրի արտադրողական ուժերի
զարգացումը:

Բազմաթիվ ինքնուրույն իշխանություններից Ռուսիայում իրենց
տնտեսական և քաղաքական նշանակությամբ առանձնանում էին
մոսկովյան և նովգորոդյան իշխանությունները:

Մոսկովյան իշխանության տնտեսական զարգացմանը նպաս-
տում էր նաև նրա հարմար աշխարհագրական դիրքը: Գտնվում էր
Վոլգա և Օկա գետերի միջև, թշնամիներից և մյուս ռուսական իշխա-
նություններից պաշտպանված էր անտառներով, այստեղ էին հատ-
վում արտաքին առևտրի առումով կարևոր գետային և ցամաքային
ուղիները, բնական պայմաններն էլ բարենպաստ էին հողագործու-
թյան և անասնապահության համար: Ջարգանում էին նաև արհեստ-
ները և առևտուրը:

Նովգորոդյան իշխանության տիրույթները տարածվում էին Սմո-
լենսկից մինչև Ուրալ և Յյուսիսային սառուցյալ օվկիանոս: Այդ
շրջանը չտուժեց թաթար-մոնղոլական արշավանքներից, և դա
նպաստեց նրա տնտեսական զարգացմանը:

Նովգորոդը արհեստների և առևտրի կենտրոն էր: Նրա միջոցով էր
կատարվում առևտուրը Արևմտյան Եվրոպայի երկրների հետ:

Նովգորոդը XIII-XIV դարերում մասնակցում էր Հանգայի առևտրին և ուներ հարուստ առևտրականների և վաշխառուների մի խավ:

Բոյարներին, եկեղեցուն և առևտրականներին էին պատկանում հսկայական հողատարածություններ: Բնակչության հիմնական զբաղմունքը հողագործությունն էր, որի համար բնակլիմայական պայմաններն անբարենպաստ էին, և հացահատիկը ներմուծվում էր այլ իշխանություններից:

Նովգորոդի ֆեոդալական վոտչինան մյուսներից ավելի շուտ կորցրեց իր բնամթերային բնույթը և ներգրավվեց ապրանքադրամային հարաբերությունների մեջ: Բոյարները և առևտրականները սկսեցին զարգացնել ապրանքային տնտեսությունը և ստեղծել տարբեր վոտչինային ձեռնարկություններ: Այսպիսով՝ Նովգորոդի տնտեսական զարգացման մակարդակը զգալիորեն ավելի բարձր էր ռուսական մյուս իշխանությունների համեմատությամբ: Նովգորոդը ավելի քիչ էր կախված թաթար-մոնղոլներից և միայն հարկ էր վճարում նրանց:

5.5.3. Ռուսական կենտրոնացված պետության տնտեսական զարգացումը XV-XVII դարերում

Ռուսաստանի պատմության մեջ XV դարից սկսվում է նոր դարաշրջան՝ մասնատվածության վերացման և Մոսկովյան կենտրոնացված պետության առաջացման դարաշրջանը: Թեև այդ պատմական գործընթացը համընկավ կենտրոնացման հետ Արևմտյան Եվրոպայի երկրներում, սակայն դրա սոցիալ-տնտեսական պատճառները տարբեր էին: Արևմուտքում դա տեղի էր ունենում ապրանքադրամային հարաբերությունների զարգացման և տարբեր շրջանների միջև կայուն տնտեսական կապերի հաստատման պայմաններում, երբ մասնատվածությունը խոչընդոտում էր առևտրի և արտադրության զարգացումը:

Ռուսական հողերի միավորման հիմնական պատճառը քաղաքական էր՝ թաթար-մոնղոլական լուծը թոթափելու անհրաժեշտություն:

Ռուսական հողերի միավորումը Մոսկովյան իշխանության շուրջը սկսվել էր դեռևս XIV դարի երկրորդ կեսից և ավարտվեց XVI դարում: Մոսկովյան կենտրոնացված պետությունը ընդգրկեց գրեթե ամբողջ Արևելյան Եվրոպան և Հյուսիսային Ասիան: 1480 թ. թոթափվեց թաթար-մոնղոլական լուծը: Ավելին՝ Իվան III-ը պայքար սկսեց Բալթիկ ծով դուրս գալու համար: Սակայն Լիվոնյան պատերազմը, որը տևեց 24 տարի (1558-1582 թթ.), ավարտվեց անհաջողությամբ,

Եվրոպական երկրների հետ տնտեսական և այլ կապերն ակտիվացնելու ռուսական ծրագրերը չիրականացան:

Կենտրոնացված պետության առաջացումը էապես փոխեց ֆեոդալական հողատիրությունը: Վոտչինան, լինելով ժառանգական սեփականություն, ապահովում էր հողատերերի անկախությունը կենտրոնացված իշխանությունից: Ուստի, մոսկովյան թագավորները պայքար սկսեցին անհնազանդ իշխանների և բոյարների դեմ: Վերջիններին հողերը բռնագրավվում և բաժանվում էին մանր և միջին հողատերերին՝ ծառայության համար: Այդ հողերը տրվում էին ոչ թե որպես ժառանգական սեփականություն, այլ՝ պայմանական տիրույթ, կալվածք, առանց վաճառելու, նվիրելու, գրավադրելու իրավունքի: Այդպես XV-XVI դարերում տարածվում է կալվածատիրական հողատիրությունը:

Կալվածատիրական հողատիրության զարգացման հետևանքով ուժեղացավ գյուղացիների շահագործումը և սկսվեց նրանց ճորտացումը: Կալվածքները աշխատուժով ապահովելու նպատակով արդեն XV դարի վերջին սահմանափակվում են գյուղացիների «հեռանալու» իրավունքները, իսկ 1497 թվականի «Դատաստանագիրքը» դրա համար սահմանում էր միայն մեկ օր տարվա ընթացքում: 1592-1593 թթ. անցկացվեց մարդահամար, և որոշվեց նաև գյուղացիների պատկանելիությունը այս կամ այն կալվածատերին: 1649 թ. գյուղացին կալվածատիրոջն օրենքով ամրացվում էր անժամկետ: Այդպիսով՝ ավարտվեց գյուղացիության ճորտացումը և ընդունվեց «ճորտատիրական իրավունքը», որը հաստատեց հողատիրոջ իրավունքը գյուղացու աշխատանքի և անձի նկատմամբ: Ազատները 1678 թ. մարդահամարի տվյալներով կազմում էին գյուղացիության ընդամենը 10,4%-ը:

Ռուսաստանում XV-XVI դարերում նկատվում է արհեստների և մանր ապրանքային արտադրության աճ: Արհեստների թիվը հասնում է 200-ի: Խոշոր ֆեոդալական տնտեսությունների բնամթերային բնույթը դանդաղորեն փոխվում է, դրանք ներգրավվում են շուկայական հարաբերություններում, հայտնվում են ճորտի աշխատանքի վրա հիմնված մանուֆակտուրաներ:

Աշխատանքի տարածքային բաժանման հիման վրա ուժեղանում են տնտեսական կապերը երկրի տարբեր շրջանների միջև, և մանր տեղական շուկաները «միաձուլվում են» միասնական համառուսական շուկայի մեջ: Դա նշանավորում էր նաև բուրժուական հարաբերությունների ձևավորումը Ռուսաստանում, սակայն՝ միայն առևտրի բնագավառում:

Ռուսաստանը հետ էր մնում Արևմտյան Եվրոպայի երկրներից, որոնք արդեն կանգնել էին զարգացման կապիտալիստական ուղու վրա:

XVI-XVII դարերում աշխուժանում են Ռուսաստանի արտաքին առևտրային կապերը, որոնք հիմնականում անգլիացիների և հոլանդացիների ձեռքին էին: 1584 թ. հիմնադրվում է Արխանգելսկը, որով XVII դարի կեսերին կատարվում էր երկրի արտաքին առևտրային շրջանառության մոտ 75%-ը:

Տարածված էր արտաքին առևտրի պետական մենաշնորհը՝ առավել կարևոր ապրանքների առևտուրը պետության ձեռքին էր: Այդ իրավունքը կապալների միջոցով հաճախ տրվում էր առևտրականներին, ինչը և նպաստում էր կապիտալների կուտակմանը նրանց ձեռքում:

Ռուսական առևտրականների գործունեությունը երկրում ընդարձակելու համար 1667 թվականի Առևտրային նոր կանոնադրությունը սահմանափակում էր օտարերկրացիների իրավունքները: Նրանք զրկվում էին առանց մաքսերի վճարման առևտուր անելու իրավունքից, մաքսերը սահմանվում էին արտարժույթով և ավելի բարձր էին, արգելվում էր օտարերկրացիների մանրածախ առևտուրը: Սահմանամերձ քաղաքներում նրանք ապրանքները պետք է վաճառեին ռուս առևտրականներին:

Պետության եկամուտներն ավելացնելու և աճող ծախսերը ծածկելու համար, բացի հարկերի ավելացումից, մեծ ուշադրություն էր դարձվում նաև դրամաշրջանառության կարգավորմանը: Ռուսաստանում XVI-XVII դարերում դրամական միավոր էր արծաթյա ռուբլին, որի արծաթի պարունակությունը գնալով կրճատվում էր՝ արժեզրկելով դրամը: Ավելին, 1654 թ. շրջանառվեց պղնձյա դրամը, որի փոխարժեքը հարկադրաբար հավասարեցվեց արծաթյա դրամին: Դա առաջ բերեց դրամի արժեզրկում, ապրանքների գների աճ, ժողովրդի դժգոհության մեծացում: 1662 թ. տեղի ունեցավ «պղնձյա խռովությունը», որը թեև տապալվեց, բայց պղնձյա դրամը դուրս մղվեց շրջանառությունից:

5.6. ԵՄՊՈՒՆԻԱՅԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ ՖԵՌՂԱԼԻԶՄԻ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ

Ճապոնիայում XII դարի վերջերին հաստատվել էր երկիշխանություն: Երկիրը կառավարում էր սյոգունը (ռազմական դիկտատորը), թեև գոյություն ունեւր նաև կայսր, որը կատարում էր միայն ազգային ծիսակատարություններ:

Մինչև XVI դարի 50-ական թվականները ճապոնիան քաղաքականապես մասնատված երկիր էր, որտեղ մոտ 20 խոշոր և զգալի թվով միջին ու մանր ֆեոդալներ (դայմյոներ) իրենց տիրույթներում ինքնիշխան էին:

ճապոնիայի տնտեսական զարգացման մակարդակը ցածր էր: Թեև նկատելի էր զարգացումը լեռնահանքային արդյունաբերության մեջ (ոսկու, արծաթի, պղնձի հանույթ), ավելանում էր զենքի արտադրությունը, խթանվում ջուլհակությունը, նավաշինությունը, սակայն երկրի ֆեոդալական մասնատվածությունը արգելակում էր արտադրողական ուժերի և, ամենից առաջ, արհեստների, ինչպես նաև առևտրի զարգացումը:

XVI դարի 60-ական թվականներից ճապոնիայի պատմության մեջ սկսվում է երկրի միավորման և ֆեոդալական կարգերի ամրապնդման ժամանակաշրջան: 1603 թ. Տոկուգավան իրեն հռչակում է սյոգուն, տնտեսական և ռազմական հզորությամբ հնազանդեցնում մյուս բոլոր իշխաններին՝ վերջ դնելով երկպառակտչական ընդհարումներին, որոնք այլևս չկրկնվեցին ավելի քան երկու հարյուրամյակ՝ մինչև XIX դարի 50-60-ական թվականները:

Սակայն ճապոնիայում պահպանվում էր մասնատվածությունը: Ֆեոդալական իշխանությունները (կլանները) մնում էին որպես ինքնուրույն քաղաքական միավորումներ, որոնք ենթարկվում էին կենտրոնացված իշխանությանը, բայց ունեին անսահմանափակ իրավունքներ իրենց տիրույթներում:

Քաղաքական միավորումից հետո ճապոնիայում ամրապնդվում է ֆեոդալական կարգը՝ գյուղացիները ամրացվում են հողին, արգելվում է նրանց փախուստը և վերաբնակեցումը, վերացվում է կոռը և անցում է կատարվում բնամթերային ռենտային:

ճապոնիայում 1591 թ. անցկացվեց նաև մարդահամար, բնակչությունը բաժանվեց չորս դասի՝ սամուրայների, գյուղացիների, առևտրականների և արհեստավորների: Արգելվում էին անցումը մի դասից մյուսը, ամուսնությունները նրանց միջև և զբաղմունքների ընտրության ազատությունը:

Տնտեսական զարգացումը ճապոնիայում զգալիորեն արագացավ XVII դարում: Մշակվող հողատարածությունները կրկնապատկվեցին, աճեց բրնձի արտադրությունը, կատարելագործվեց հողի մշակման տեխնիկան, ավելացավ պարարտանյութերի օգտագործումը, ընդլայնվեց ռոռզման աշխատանքների ոլորտը: Զգալիորեն ընդարձակվեցին գյուղատնտեսական նոր մշակաբույսերի՝ բամբակի, կարտոֆիլի, ծխախոտի ցանքերը, զարգացավ շերամապահությունը: 1673 թ. օրենքով արգելվեց մեկ հեկտարից պակաս հողերի ժառանգումը. հող ստանում էր միայն ավագ որդին: Դա պաշտպանում էր բաժնեհողերը փոշիացումից և ապահովում հողահարկի

ստացումը: Դրանով հանդերձ արագանում էր գյուղացիների հողագրկումը, նրանք գնալով կախման մեջ էին ընկնում ոչ միայն ունևորներից, այլև առևտրավաշխառուական կապիտալի ներկայացուցիչներից: Այս ամենը այնպիսի ծավալներ ընդունեց, որ 1721 թ. սյոզունի հրամանագրով արգելվում էր առևտրականներին և վաշխառուներին՝ պարտքերի դիմաց բռնագրավել գյուղացիական բաժնեհողերը:

Արագ զարգանում էին քաղաքները: Ճապոնիայի երեք խոշոր քաղաքներից (Էդո, Կիոտո և Օսակա) յուրաքանչյուրն ուներ 300 հազարից ավելի բնակիչ, մյուսներում՝ Նագասակիում, Յիոսիմայում, Օկահամայում բնակվում էր մինչև 60 հազար մարդ: Քաղաքները արհեստների և առևտրի հիմնական կենտրոններ էին, որտեղ գոյություն ունեին միջնադարյան համաքարություններ և առևտրային գիլդիաներ, որոնք կոչվում էին «նակամա» (ընկերություն): Դրանք զրեթե չէին տարբերվում արևմտաեվրոպական միջնադարյան համաքարություններից:

Ճապոնիայում XVII դարում ստեղծվում են պետական և կլանային մանուֆակտուրաներ: Վերջիններս պատկանում էին խոշոր ֆեոդալներին, օգտագործում էին գյուղացիների և ազատ վարձկանների աշխատուժը: Երկրում գործում էին ոսկու, արծաթի, պղնձի հանքեր: Զարգանում էր նավաշինությունը. եվրոպացիները ճապոնացիներին սովորեցնում էին նավեր կառուցել: Գոյություն ունեին սակեի, տեքստիլ և զենքի արտադրության ձեռնարկություններ:

Ֆեոդալիզմը ճապոնիայում զարգացման գագաթնակետին հասավ XVII դարի վերջին տասնամյակին: Զարգացան մշակույթը, զրականությունը, արվեստը: Սյոզունի, դայմյոների շքեղ պալատները, անվերջ տոնախմբությունները պահանջում էին հսկայական միջոցներ: Նրանք ֆինանսական կախման մեջ էին ընկնում օրեցօր հարստացող առևտրականներից և վաշխառուներից և քայքայվում: Գնալով վերանում են նաև այն անջրպետները, որոնք գոյություն ունեին դասերի միջև՝ առանձին հարուստ վաճառականներ որդեգրում էին սամուրայների կամ նրանց ընտանիքների աղջիկները ամուսնանում էին սամուրայների հետ, վերջիններս սկսում են զբաղվել առևտրով և արհեստներով, շրջանցելով եղած արգելքները:

Ապրանքադրամային հարաբերությունների զարգացման հետևանքով բնատնտեսությունն անկում է ապրում՝ վկայելով ֆեոդալական տնտեսության քայքայումը:

Ճապոնիայի մեկուսացումը արտաքին աշխարհից.

Իշխանության կենտրոնացմանը և քաղաքական միավորմանը զուգընթաց ճապոնիան իրեն մեկուսացնում էր արտաքին աշխարհից:

Դեռևս XVI դարի 40-ական թվականներին ճապոնիայում հայտնվեցին պորտուգալացիները, որոնք այստեղ զբաղվում էին առևտրով և քրիստոնեության տարածմամբ:

XVI դարի 80-ական թվականներին ճապոնիայում հայտնվեցին նաև իսպանացիները, իսկ XVII դարի սկզբին՝ հոլանդացիները և անգլիացիները:

Սյոգունի համաձայնությամբ՝ եվրոպական նավերը մտնում էին երկրի տարբեր նավահանգիստներ, և առանց մաքսի առևտուր էր կատարվում: Ներմուծվում էին եվրոպական, չինական, հնդկական և այլ երկրների ապրանքներ՝ հում մետաքս, մանուֆակտուրային արտադրանք, հրազեն, շքեղ գործվածքեղեն, գինիներ, դեղորայք, և արտահանվում՝ ոսկի, արծաթ, պղինձ, ստրուկներ, որոնց վաճառում էին այլ երկրներում:

Ճապոնիայի կառավարողները սկզբնական շրջանում խրախուսում էին եվրոպացիների գործողությունները, որովհետև մեծ եկամուտներ էին ստանում առևտրից: Հետագայում նրանք սկսում են սահմանափակել օտարերկրյա առևտրականների գործունեությունը ճապոնիայում: 1616 թ. փակվեցին բոլոր նավահանգիստները (բացի Նագասակիի և Հիրադոի) օտարերկրյա առևտրականների համար, 1624 թ. երկրից արտաքսվեցին իսպանացիները, 1638 թ.՝ պորտուգալացիները: Ավելի շուտ՝ 1587 թ. արգելվեց քրիստոնեության տարածումը:

1636 թ. օրենքով արտասահման մեկնող կամ այնտեղից վերադարձող ճապոնացիները, ինչպես նաև միսիոներները և քրիստոնյաները մահապատժի էին ենթարկվում: Արգելվեց եվրոպական և չինական այն գրականության ներմուծումը, որտեղ որևէ հիշատակում կար Արևմուտքի մասին:

Այդպիսով՝ ճապոնիան XVII դարի 20-30-ական թվականներից իրեն մեկուսացնում էր արտաքին աշխարհից՝ ցանկանալով կանխել երկրում ապրանքադրամային հարաբերությունների զարգացումը և փրկել ֆեոդալական կարգը: Սյուս կողմից՝ ճապոնացի կառավարիչներին անհանգստացնում էր Հեռավոր Արևելքում եվրոպական երկրների զավթողական քաղաքականությունը, որը վտանգում էր երկրի անկախությունը:

Ճապոնիայի մեկուսացման քաղաքականության նպատակն էր նաև կենտրոնացված կառավարության վերահսկողությանը ենթարկել եվրոպացիների հետ առևտուրը և դրանից ստացվող եկամուտները:

5.7. ԿԱՊԻՏԱԼԻ ՆԱԽԱՍԿՁԲՆԱԿԱՆ ԿՈՒՏԱԿՈՒՄԸ ԱՐԵՎՍՏՅԱՆ ԵՎՐՈՊԱՅԻ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ

Շուկայական հարաբերությունների առաջին հատկանիշներն ի հայտ եկան Արևմտյան Եվրոպայում տակավին XIV-XV դարերում: Սկզբնական շրջանում տնտեսապես առավել զարգացած էին Յյուսիսային Իտալիայի քաղաք-հանրապետությունները: Սակայն XVI դարում դրանք իրենց տեղը զիջեցին ուրիշներին: Հետ էին մնում Գերմանիան և Իսպանիան: Առաջին պլան մղվեցին Նիդեռլանդները, Անգլիան, Ֆրանսիան: Այդ երկրներում փոփոխությունները պայմանավորված էին տեխնիկական առաջընթացի հաջողություններով:

Հենց այդ ժամանակաշրջանում լայնորեն օգտագործվեց քանու և ջրի էներգիան, կատարելագործվեց քանու շարժիչը: Մետաղագործության մեջ օգտագործվեց ջրանիվը: XV դարում Եվրոպայի մի շարք երկրներում կառուցվեցին դոմնային վառարաններ: Նոր տեխնիկա ներդրվեց հայթհայթող արդյունաբերության մեջ:

Նշված շրջանի կարևոր ձեռքբերումներից մեկը քիմիական արդյունաբերության ծնունդն ու զարգացումն էր: Մշակվեցին թթուների, օճառի, ամիակի, սկիպիդարի, օլիֆի, յուղաներկերի արտադրության բաղադրատոմսեր: Զարգացավ ցեմենտի արդյունաբերական արտադրությունը: Ստեղծվեցին ակնոցների լինզաներ, մեխանիկական զսպանակով փոքր ժամացույցներ: Հաջողություններն առկա էին գրահրատարակության, թղթի արտադրության բնագավառներում, նավաշինության մեջ, ռազմական գործում՝ կապված վառողի լայն օգտագործման հետ:

Հատկապես կարևոր էր մահուղագործության զարգացումը: XIV-XV դարերում ուղղահայաց գործող հաստոցների փոխարեն օգտագործվում էին ավելի արտադրողական հորիզոնական գործող հաստոցներ: Այս բոլորը ոչ միայն հանգեցրին տեխնոլոգիական գործընթացների կատարելագործմանը, այլև՝ արմատական փոփոխությունների սոցիալ-տնտեսական հարաբերություններում և աշխատանքի կազմակերպման մեթոդներում:

Ֆեոդալիզմի քայքայման, տնտեսավարման նոր ձևերի զարգացման վկայությունը մանուֆակտուրաների ի հայտ գալն էր, որոնք մինչև XVIII դարի վերջը հիմնական արտադրական միավորն էին շատ երկրներում:

Մանր արհեստագործական արտադրությունը կորցրել էր հետագա կատարելագործման ունակությունը, քանի որ առանձին արհեստավորներ չունեին աշխատանքի թանկարժեք գործիքներ և հունք ձեռք բերելու հնարավորություն:

Այդ նպատակով նրանք պարտք էին վերցնում առևտրականներից ու վաշխառուներից և հաճախ պարտքի դիմաց նրանց զիջում իրենց արհեստանոցների սեփականության իրավունքը՝ դառնալով վարձու աշխատողներ: Ձևավորվում էին այսպես կոչված «ցրված մանուֆակտուրաներ»:

XVI դարում զարգացան կենտրոնացված մանուֆակտուրաները, որոնք հիմնված էին ցեխային վարպետներին պատկանող նախկին խոշոր արհեստանոցների վրա: Դա հնարավորություն տվեց կատարելագործելու տեխնոլոգիան, գործիքները, հաստոցները, անցում կատարելու մեքենայական տեխնիկային, արդյունքում՝ արդյունաբերական հեղաշրջմանը:

Առաջին մանուֆակտուրաները՝ մահուդի արտադրությամբ, առաջացան Ֆլորենցիայում XIV-XV դարերում: Ցեխերը բաժանվեցին՝ ուժեղ, հարուստ («ավագ», «մեծ») և աղքատ («փոքր»): Մի քանի «ավագ» ցեխերի հիման վրա ձևավորվեցին տեքստիլ մանուֆակտուրաները: Հայտնի էին «Լանան» (նուրբ մահուդի արտադրության), «Կալիմալան» (կոշտ մահուդի արտադրության) և «Սենտան» (մետաքսյա գործվածքի արտադրության):

Ֆլորենտական և ֆլանդրիական մահուդը արտահանվում էր շատ երկրներ, ուներ մեծ պահանջարկ:

Բրդի խոշոր մեծածախ գնորդները բուրդը ձեռք էին բերում Անգլիայում, Իսպանիայում և այլուր: Նրանք միաժամանակ սեփականատերեր էին արհեստանոցների, որոնցում վարձու բանվորները մաքրում, լվանում, չորացնում, զգում էին բուրդը, բաժանում տներին, որտեղ թել էին ստանում: Թելը վաճառում էին գործվածքային արտադրությամբ զբաղվողներին, այնուհետև առաքվում էր վերջնական վերամշակման (ներկման):

Արդեն 1330-ական թվականներին Ֆլորենցիայում կային 200-300 խոշոր մահուդի արհեստանոցներ, որոնցում տարեկան պատրաստվում էր 1,6 մլն մետր թանկարժեք նուրբ մահուդ: Բրդի վերամշակման ձեռնարկություններում աշխատում էին շուրջ 30 հազար բանվորներ:

Մահուդի և բրդի արդյունաբերությունը զարգացավ Նիդեռլանդներում՝ հատկապես Ֆլանդրիայում և Բրաբանտում: Մանուֆակտուրային արտադրությունը վերելք ապրեց նաև Գերմանիայում, Չեխիայում, Շվեդիայում (գերազանցապես՝ լեռնահանքային ճյուղում):

Ավելի ուշ՝ XVII-XVIII դարերում, եվրոպական երկրներում լայն տարածում գտան տեքստիլ, մետաղագործական, նավաշինական,

պղիզորաֆ մանուֆակտուրաները: Արտադրական ամբողջ ցիկլը տեղի էր ունենում կենտրոնացված արհեստանոցում:

Ֆեոդալիզմի քայքայումը Արևմտյան Եվրոպայում սկսվեց ուշ միջնադարում (XVI-XVII դարեր), որն ավարտվեց նրա կործանմամբ: Այդ գործընթացն ամենից առաջ սկսվեց Յուսիսային Իտալիայում, Նիդեռլանդներում, Անգլիայում: Դանդաղ էր ընթանում Գերմանիայում և Իսպանիայում:

Ֆեոդալիզմի քայքայման ելակետը սեփականության երկու ձևերի (ֆեոդալական և գյուղացիական) միջև սաստկացած հակամարտությունն էր: Ինչպես նշվել է նախորդ շարադրանքում՝ միջնադարում ֆեոդալական քաղաքներում կենտրոնացվեցին արհեստները, առևտուրը, մանրապրանքային արտադրությունը: Քաղաքները անջատվեցին ֆեոդալական կալվածքի շրջանակներից և դարձան մանրապրանքային արտադրության կրողներ: Կարելի է ասել, որ կապիտալիզմն իր ծննդով քաղաքային երևույթ էր:

Միջնադարում առանձին անձինք կուտակեցին կապիտալներ ոչ համարժեքային փոխանակության և վաշխառության զարգացման հաշվին: Սկսվեց կապիտալի նախասկզբնական կուտակման գործընթացը: Վաճառականների և վաշխառուների կուտակած կապիտալների մի մասը գտնում էր կապիտալիստական կիրառություն՝ ներդրվում էր արտադրության մեջ:

Ֆեոդալական հարաբերությունների վերացումը և արտադրության կապիտալիստական եղանակի առաջացումը բավականին արագացան կապիտալի նախասկզբնական կուտակման գործընթացի հետևանքով: Նախասկզբնական կուտակումը արտադրության միջոցներից անմիջական արտադրողի հարկադրական անջատման պատմական գործընթաց է: Դրա հիմքը կազմեցին գյուղացիության հողազրկումը (հատկապես՝ Անգլիայում), ինչպես նաև քաղաքի և գյուղի մանր արհեստավորների սնանկացումը:

Ջուզահեռաբար ընթանում էր կապիտալիստական ձեռներեցի (առևտրականներ, վաշխառուներ, ցեխային վարպետներ, ազնվականություն, պետական ծառայողներ) ձևավորման գործընթաց: Առանց արտադրության և գոյատևման միջոցների մնացած բնակչության զգալի մասը դարձավ վարձու բանվոր: Այսպիսով՝ կապիտալի նախասկզբնական կուտակման արդյունքը մի կողմից՝ վարձու բանվորների բանակի ստեղծումն էր, մյուս կողմից՝ կապիտալիստական ձեռներեցի ձևավորումը, որի ձեռքին կուտակվեցին կապիտալիստական արտադրության կազմակերպմանն անհրաժեշտ նյութական ռեսուրսներ: Ֆեոդալականի փոխարեն ստեղծվեց բուրժուական սեփականություն:

Կապիտալի նախասկզբնական կուտակման աղբյուրներն էին.

1) գաղութների թալանը և գաղութային առևտուրը (այդ թվում՝

ստրկավաճառությունը), 2) առևտրային պատերազմները, թագադրված անձանց տրվող փոխառությունները և պետական պարտքերը, 3) «զների հեղափոխությունը»: Ընդամին, առանձին երկրներում կապիտալի նախակգբնական կուտակման աղբյուրները և մեթոդները տարբեր էին, ունեին յուրահատուկ գծեր և իրագործվում էին ոչ միաժամանակ:

Դիտարկվող ժամանակաշրջանում գյուղատնտեսության մեջ ևս իրագործվեցին տեղաշարժեր (թեկուզ՝ դանդաղ), ընդլայնվեցին ցանքատարածությունները, եռադաշտից անցում կատարվեց բազմադաշտին, լայնորեն օգտագործվում էին օրգանական պարարտանյութերը: Ավելացան տեխնիկական մշակաբույսերի ցանքերը, զարգացան բանջարաբուծությունը, այգեգործությունը, խաղողագործությունը: Խթանվեց կաթնամսային անասնապահությունը, շատացավ անասնազլխաքանակը (հատկապես՝ ոչխարներինը): Շահագործման աշխատավճարային եղանակից անցում կատարվեց բահրային, որի դրամական ձևը ենթադրում էր ապրանքադրամային հարաբերությունների զարգացում:

Ֆեոդալիզմի քայքայման, կապիտալի նախակգբնական կուտակման տենպերի արագացման գործում կարևոր դեր խաղացին քաղաքական գործոնները: XIV-XVI դարերում մի շարք եվրոպական երկրներում (Իսպանիա, Անգլիա, Ֆրանսիա և այլն) հաստատվեց բացարձակ միապետություն: Դրանով վերջ դրվեց ֆեոդալական մասնատվածությանը, որ նպաստեց այդ երկրների հետագա տնտեսական զարգացմանը: Անվտանգ դարձան ճանապարհները, խթանվեց ներքին և արտաքին առևտուրը, ուժեղացավ գյուղացիության տարբերակման գործընթացը (բաժանումը հարուստների և աղքատների):

Մյուս կողմից՝ բացարձակ միապետության հաստատումը հանգեցրեց հարկային բեռի ծանրացմանը, ազատ աշխատուժի ձևավորմանը: Միաժամանակ, որոշ երկրներում ստեղծվեցին միասնական դրամական համակարգեր, վերացվեցին ներքին մաքսատուրքերը, վերացավ վասալական հիերարխիան:

Շուկայական հարաբերությունների ձևավորումը պահանջում էր խոշոր միջոցներ, որոնք լրացվում էին ամենատարբեր մեթոդներով: Մեծացավ պետության դերը, որի տնտեսական քաղաքականությունը հիմնվում էր մերկանտիլիզմի գաղափարների վրա: Վերջինիս էությունը դրամական հաշվեկշռի տեսությունն էր, երբ պետությունը խրախուսում էր էժան գնելու, թանկ ծախելու սկզբունքը: Դրա հիմքում ընկած էր պրոտեկցիոնիզմը: Պետությունները բարձր մաքսային տարիֆներ էին սահմանում հայրենական արտադրությունը խթանելու համար:

XVII-XVIII դարերում շատ երկրներ անցան թղթադրամի թողարկմանը, ինչն ավելի էժան էր նստում, քան մետաղադրամի հատումը:

Ֆեոդալիզմի քայքայման գործում վճռական դեր խաղացին XIV-XVI դարերի գյուղացիական ապստամբությունները, իսկ XVI-XVIII դարերի բուրժուական հեղափոխությունները դրեցին ֆեոդալիզմի գոյության վերջակետը և ապահովեցին կապիտալիզմի հաղթանակը Արևմտյան Եվրոպայում:

5.8. ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՄԵԾ ՀԱՅՏՆԱԳՈՐԾՈՒ- ԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ ԵՎ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ

Ֆեոդալիզմի քայքայման, շուկայական հարաբերությունների ծնավորման գործում, վերը նշված ներքին գործոններից բացի, կարևոր նշանակություն ունեցան նաև արտաքին գործոնները: Դրանցից հիմնականը աշխարհագրական մեծ հայտնագործություններն էին (XV դ. վերջ - XVII դար), որոնց շնորհիվ ստեղծվեցին առևտրական նոր ճանապարհներ, համաշխարհային տնտեսական շրջանառության մեջ ներգրավվեցին այլ երկրների վիթխարի ռեսուրսներ:

Որո՞նք էին այդ հայտնագործությունների տնտեսական նախադրյալները: Ամենից առաջ՝ Արևելքի հետ եվրոպական երկրների առևտրի դժվարություններն էին: XIII-XV դարերում փակվեցին բոլոր առևտրական կարճ ուղիները. թուրքերը զավթեցին Բալկանները և Մերձավոր Արևելքը, արաբները՝ Յուսիսային Աֆրիկան, Ռուսաստանը հայտնվեց թաթար-մոնղոլական լծի տակ: Թուրքական տարածքում թալանվում էին առևտրային քարավանները, իսկ արաբ վաճառականները, միջնորդ լինելու համար, արևելյան ապրանքների գները բարձրացնում էին 8-10 անգամ:

Վենետիկի և ճենովայի առևտրականները փորձում էին ինքնուրույն առևտուր անել Արևելքի հետ, բայց և այնպես ապրանքների գները անընդհատ բարձրանում էին: Քանի որ եվրոպական երկրների սպառողները սովոր էին արևելյան ապրանքների օգտագործմանը, չէին հաշտվում դրանց ծավալների կրճատման հետ, ուստի սկսեցին որոնել ծովային ճանապարհներ Հնդկաստան հասնելու համար:

Աշխարհագրական մեծ հայտնագործությունների մյուս պատճառը Արևմտյան Եվրոպայում դրամական միջոցների (ոսկու և արծաթի) սուր պակասն էր: Առևտուրը արևելքի հետ, ուր հոսում էր

ոսկին, պահանջում էր դրամական պաշարների անընդհատ լրացում: Մինչդեռ Իսպանիայի և Գերմանիայի հանքերն աղքատացել էին, իսկ «ոսկու ծարավ» տերմինը նշանակում էր թանկարժեք մետաղների պակաս:

«Ոսկու ծարավը» եվրոպացիներին մղում էր վտանգավոր արշավախմբերի կազմակերպմանը դեպի հեռավոր երկրներ: Եվրոպայի առևտրական հաշվեկշիռը Արևելքի հետ, ինչպես նշվեց, պասիվ էր, և դրա սալդոն ծածկվում էր ոսկու արտահանման հաշվին: Մյուս կողմից՝ Արևմտյան Եվրոպայի երկրներում արդյունաբերության և առևտրի զարգացման հետ, մեծանում էր ոսկու, որպես շրջանառության միջոցի, պահանջը: Ապրանքաշրջանառության աճող ծավալները պահանջում էին ընդարձակել նաև դրամաշրջանառության մասշտաբները:

Աշխարհագրական մեծ հայտնագործությունների պատճառներից էր ֆեոդալական կարգի ճգնաժամը XV դարում, մասնավորապես՝ ֆեոդալական հողատիրության քայքայումը և ազնվականների հիմնական մասի աղքատացումը հատկապես Իսպանիայում և Պորտուգալիայում: Այդ ազնվականները մասնակցում էին բոլոր արշավախմբերին՝ նոր հողեր ձեռք բերելու և իրենց տնտեսական վիճակը բարելավելու նպատակով:

Վճռական նշանակություն ունեցավ Եվրոպայում ուժեղ բացարձակ միապետությունների ծնունդը, որոնց հարկավոր էին վիթխարի միջոցներ գեխ արքունիքի, վարձու բանակի կարիքները բավարարելու, ինչպես նաև խոշոր ծովային արշավախմբեր կազմակերպելու համար:

Ֆեոդալական կալվածքի մասնատումը եվրոպական երկրներում հանգեցրեց բազմաթիվ ավանտյուրիստների (ազնվական-հիդալգոների) միավորմանը, որոնք միայն ռազմական գործը գիտեին և պատրաստ էին այլ երկրներ թալանի գնալու, արշավախմբերում ընդգրկվելու:

Չափազանց կարևոր էին նավաշինության հաջողությունները: Ստեղծվեցին 900-1000 տոննա բեռնատարողությամբ ճենովական նավեր: Լավագույնը եռակայմ կարավելան էր, որը պիտանի էր օվկիանոսում նավարկության: Արագընթաց, քամուց չկախված, մեծ նավամբար ունեցող նավ էր: Օգտագործվում էին նավարկության նոր սարքեր (կողմնացույց), ղեկ, խարիսխ, ճշգրիտ քարտեզներ (պորտուլաներ):

Ֆլորենտացի աստղագետ Պաոլո Տոսկանելլին առաջ էր քաշել հիպոթեզ, որ կարելի է Յնդկաստան հասնել արևմտյան ուղղությամբ: Այդ գաղափարը աշխարհում առաջինը իրագործեց ճենովացի Քր.Կոլումբոսը. 1492 թ. իսպանական թագուհու հանձնարա-

րությանը նա, կտրելով Ատլանտյան օվկիանոսը, բացահայտեց Ամերիկան:

Կոլումբոսի հետ միաժամանակ աշխարհին հայտնի դարձան այնպիսի վառ անհատականություններ, ինչպիսիք են պորտուգալացիներ Բարտոլոմեո Դիասը, որը 1486 թ. հայտնաբերեց Բարեհուստ հրվանդանը Աֆրիկայի հարավային մասում և Վասկո դա Գաման, որը կտրելով Յնդկական օվկիանոսը՝ 1498 թ. հասավ Յնդկաստան: Նրանց շարքում են Հարավային Ամերիկայի ափերը հետազոտող ֆլորենտացի գիտնական Ամերիգո Վեսպուչին, որի անունով կոչվեց նոր մայրցամաքը, իսպանացի Մագելանը, որի արշավախումբը անցնելով Ամերիկան, 1519-1521 թթ. իրականացրեց առաջին շուրջերկրյա ճանապարհորդությունը:

Անդրծովյան տիրույթներ զավթող առաջին պետությունները Իսպանիան և Պորտուգալիան էին, որոնք աշխարհագրական հայտնագործությունների ընթացքում պայմանավորվեցին աշխարհի բաժանման մասին: Ատլանտյան օվկիանոսով անցնող միջօրեականից արևմուտք ընկած բոլոր տարածքները հայտարարվում էին իսպանական, արևելք ընկածները՝ պորտուգալական: Ընդամենը, պորտուգալական էքսպանսիան տարածվում էր Ատլանտյան օվկիանոսի կղզիների, Հարավ-Արևելյան Աֆրիկայի, Յնդկական օվկիանոսի կղզիների (ամենից առաջ՝ Ցեյլոնի), բուն Յնդկաստանի, Չինաստանի վրա:

Պորտուգալացիները այս կամ այն երկրի ափերին հիմնում էին ռազմաառևտրական կետեր՝ ֆակտորիաներ, որտեղ տեղաբնակների հետ առևտուր էին անում, այնտեղից ապրանքներ արտակրում Եվրոպա: Նրանք չէին խորանում այդ երկրների տարածքի մեջ, քանի որ Պորտուգալիան փոքր երկիր էր և չուներ անհրաժեշտ միջոցներ ու մարդկային ռեսուրսներ՝ լիակատար գաղութացման համար: Սակայն արդեն 1580 թ. Պորտուգալիան նվաճվեց իսպանական թագավոր Ֆիլիպ Երկրորդի կողմից, և պորտուգալական բոլոր գաղութներն անցան Իսպանիայի տիրապետության տակ:

60 տարի անց (1640 թ.) Պորտուգալիան ազատագրվեց իսպանական տիրապետության լծից, բայց չկարողացավ վերադարձնել իր ասիական տիրույթները: 1661 թ. Պորտուգալիայի ենթակայության տակ էին միայն Յնդկաստանի և Չինաստանի ծովափնյա մի քանի փոքր գաղութներ (Գոա, Մակաո և այլն):

Իսպանիայի ամրացումը Կենտրոնական Ամերիկայում և Հարավային Ամերիկայում հիմնականում ավարտվեց XVI դարի կեսերին, երբ կոնկիստադորները զավթեցին հսկայական տարածքներ Մեքսիկայում, Պերուում և հին քաղաքակրթության (ացտեկներ, ինկեր, մայա) օջախներ հանդիսացող այլ երկրներում: Ջավթիչներն անողք էին հնդկացիների նկատմամբ, անխնա ոչնչացնում էին տե-

ղական առաջնորդներին, հրով ու սրով ամրապնդում իրենց տիրապետությունը, յուրացնում տաճարների ու պալատների անբավ հարստությունը, բնակչության ունեցվածքը, դրանք տեղափոխում եվրոպա, վաճառում տարբեր երկրներում և ստանում հսկայական եկամուտներ:

Իսպանացիների կողմից ամերիկյան հողերի գաղութացումն իրագործվում էր հարկադիր աշխատանքի օգտագործմամբ տեղական բնակչության, որին քշում էին հանքահորերը, շաքարեղեգի և ծխախոտի պլանտացիաները, և եթե հնդկացիները չէին համաձայնվում աշխատել, ապա գաղութարարները ոչնչացնում էին ամբողջական բնակավայրեր: Այսպես, օրինակ, Ջամայկա կղզում XVI դարի առաջին կեսին զոհվեցին 50 հազար տեղական բնակիչներ: Պերուում և Չիլիում XVI դարի երկրորդ կեսին հնդկացիների թվաքանակը կրճատվեց 5 անգամ՝ 1,5 մլն-ից իջնելով 300 հազարի: Նման քաղաքականության արդյունքն այն էր, որ մի քանի տասնամյակ անց Ամերիկայում զգացվեց աշխատուժի սուր պակաս, որը լրացվեց ստրկավաճառության հաշվին:

Գաղութարարները սկսեցին ստրուկներ բերել Աֆրիկայից: Ընդ որում՝ սևամորթ աֆրիկացիներն ավելի տոկուն էին և դարձան իսպանական գաղութների հիմնական աշխատուժը: Ստրկավաճառությունը շահութաբեր գործ էր: Աֆրիկայում ստրուկներին գնում էին շատ էժան՝ հարբեցնելով ցեղերի առաջնորդներին, նրանց նվիրելով մանր զարդարանքներ, իսկ Ամերիկայում նեգրերին վաճառում էին 20-30 անգամ թանկ: Երբեմն էլ ստրուկներին Աֆրիկայում ոչ թե գնում, այլ ուժով բռնում էին, ստիպողաբար լցնում նավերը և հասցնում Ամերիկա: Ամեն տարի իսպանական գաղութներ էին հասցվում 6-8 հազար սևամորթ ստրուկներ: Թափ առավ ծովահենությունը: Ծովահենները հատկապես հարձակվում էին գաղութներից ոսկի և արծաթ տեղափոխող իսպանական և պորտուգալական նավերի վրա: Այդպիսով՝ արևմտյան կիսագնդի հարստությունը բաժին էր ընկնում եվրոպական երկրների զգալի մասին:

Փաստորեն՝ աշխարհագրական մեծ հայտնագործությունները ավելի շատ եվրոպացիների տնտեսական պահանջմունքների արդյունք էին և պայմանավորված էին նոր հողերի ձեռքբերման ու դրանցում գաղութների ստեղծման ծավալապաշտպանական խնդիրներով:

Իսպանիայի և Պորտուգալիայի տնտեսական ծաղկումը գաղութների հաշվին երկար չտևեց: Թագավորական իշխանությունը և ֆեոդալական վերնախավը չկարողացան օգտվել ստացած հարստությունից, որը հիմնականում ծախսվում էր պերճանքի առարկաների, վիթխարի ամրոցների կառուցման, արքունիքի զեխ կյանքի, անվերջանալի պատերազմների վրա: Իսկ նույն ժամանակ Յուլանդիան,

Անգլիան, Ֆրանսիան ստացած միջոցներն ուղղում էին արդյունաբերության զարգացմանը, նավատորմի ստեղծմանը և հզորացմանը, նոր երկրների հայտնաբերմանը:

Աշխարհագրական մեծ հայտնագործությունների կարևոր հետեւանք էր «գների հեղափոխությունը», այլ խոսքով՝ դրանց անսովոր աճը Եվրոպայում XVI դարում արդյունաբերական և գյուղատնտեսական ապրանքների համար: Իսպանիայում գներն աճեցին 4,5, Անգլիայում՝ 4, Ֆրանսիայում՝ 2,5, Գերմանիայում՝ 2 անգամ: Դա պայմանավորված էր գաղութներից Եվրոպա էժան ոսկու և արծաթի մեծ ներհոսքով: Այսպես՝ XVI դարում ոսկու ծավալը Եվրոպայում աճեց 2 անգամ, արծաթինը՝ ավելի քան 3 անգամ:

«Գների հեղափոխությունը» ոչ միայն դրամական միջոցների հոսքի ավելացման արդյունք էր, այլև այն բանի, որ այդ միջոցները Եվրոպացիներին հասցվում էին համարյա ձրի՝ գաղութներում ստրուկների շահագործման, ինչպես նաև սովորական թալանի հաշվին: Մնացած բոլոր ապրանքների արտադրության պայմանները մնում էին նույնը, ուստի որոշակի քանակության համար XVI դարում տրվում էր ավելի շատ փող, քան նախորդ շրջանում:

«Գների հեղափոխությունը» ունեցավ սոցիալ-տնտեսական էական հետևանքներ: Լայն սպառման ապրանքների գների բարձրացման հետևանքով ընկավ իրական աշխատավարձը և վատացավ աշխատավոր զանգվածների դրությունը: Այսպես՝ XVI դարում Իսպանիայում իրական աշխատավարձը կրճատվեց մոտ 30%-ով: Անգլիայում բարձրացավ 30%-ով, այն ժամանակ, երբ ապրանքների գները միջին հաշվով աճեցին 150%-ով:

Մինևույն ժամանակ «գների հեղափոխությունից» օգտվեց առևտրա-արդյունաբերական բուրժուազիան, որը շահագործում էր էժան աշխատուժ և իր ապրանքները վաճառում բարձր գներով: «Գների հեղափոխությունից» շահեց նաև ունևոր գյուղացիությունը՝ ինչպես գյուղատնտեսության աշխատողների իրական աշխատավարձի իջեցման, այնպես էլ հողագործական վճարվող դրամական բահրայի կան վարձավճարի արժեզրկման հետևանքով (գյուղատնտեսական մթերքների գների բարձրացման պայմաններում): Գների բարձրացումը ծանր հարված հասցրեց հողատեր-ֆեոդալներին, որոնք ստանում էին մեկընդմիջտ սահմանված գումարի դրամական ռենտա: Փաստորեն՝ «գների հեղափոխությունը» արագացրեց ֆեոդալիզմի քայքայումը և կապիտալիստական արտադրահարաբերությունների զարգացումը:

Աշխարհագրական մեծ հայտնագործությունների կարևորագույն հետևանքներից էին համաշխարհային շուկայի ստեղծումը, միջազգային տնտեսական հարաբերությունների դուրս գալը Եվրոպայի սահմաններից:

Ընդարձակվեց առևտրի տարածքային բազան, դարձավ համաշխարհային, օվկիանոսային: Տեղի ունեցավ առևտրական ուղիների փոխադրում Միջերկրական ծովից Ատլանտյան և Յնդկական օվկիանոսներ:

Գաղութների գավթումը ավելացրեց նոր ապրանքների մուտքը Եվրոպա (ծխախոտ, կակաո, սուրճ, կարտոֆիլ, համեմունքներ, թեյ, բրինձ, շաքար), խթանեց ծովագնացությունը:

XV-XVI դարերում աշխարհագրական հայտնագործությունների հետևանքով Եվրոպացիներին հայտնի տարածքն ավելացավ 6 անգամ, հետախուզվեց համաշխարհային ցամաքի շուրջ 60%-ը: Ստեղծվեցին աշխատանքի միջազգային բաժանման ձևավորման պայմաններ, առևտրային խոշոր ընկերություններ (օրինակ, Օստինդկական): Վերջիններս պետությունից ստանում էին արտոնություններ, մենաշնորհային իրավունքներ, փոխատվություններ:

XVI դարում Եվրոպայում ի հայտ եկան ապրանքային բորսաներ՝ միջազգային առևտրի կազմակերպման նոր ձևեր: Անտվերպենում ստեղծվեց ֆոնդային բորսա, որտեղ շրջանառում էին մուրհակներ, պարտատոմսեր, արտարժույթ, արժեթղթեր: Ընդարձակվեցին միջազգային տոնավաճառների մասշտաբները:

Համաշխարհային շուկայի զարգացումը հանգեցրեց նրան, որ աճեցին օվկիանոսային առևտրի շրջանակները: Միջերկրական ծովը կորցրեց իր նախկին դերն ու նշանակությունը, անկում ապրեց լեվանտական առևտուրը, որն իր բացասական ազդեցությունն ունեցավ հյուսիսիտալական և հարավգերմանական քաղաքների զարգացման վրա: Վենետիկը և ճենովան իրենց տեղը զիջեցին Լիսաբոնին, Անգլիայի, Յոլանդիայի, Ֆրանսիայի նավահանգիստներին: Իտալական քաղաքները միաժամանակ կորցրին Արևելքի հետ առևտրի մենաշնորհը և դարձան համաշխարհային վարկային կենտրոններ: Գերմանիան դուրս մնաց միջազգային առևտրի ուղիներից:

Աշխարհագրական մեծ հայտնագործությունների հետևանք էր նաև մերկանտիլիզմի հաղթանակը Եվրոպական միապետության տնտեսական քաղաքականության մեջ: Մերկանտիլիստները համարում էին, որ դրանք երկրի հարստությունն է, իսկ շահույթը ստեղծվում է շրջանառության ոլորտում՝ էժան գնելու և թանկ վաճառելու միջոցով: Ելնելով այդ թեզից, նրանք կարծում էին, որ երկրի հարստությունը գոյանում է արտաքին առևտրի ոլորտում և հանդես էին գալիս ակտիվ արտաքին առևտրական հաշվեկշռի օգտին:

Բ Ա Ժ Ի Ն Ե Ր Ր Ո Ր Դ

ՆՈՐ ԺԱՄԱՆԱԿ

Գ Լ ՈՒ Խ VI

ԱՐԵՎՄՏՅԱՆ ԵՎՐՈՊԱՅԻ, ԱՄՆ-Ի, ՃԱՊՈՆԻԱՅԻ ԵՎ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՅՈՒՄԸ XVIII – XIX ԴԱՐԵՐՈՒՄ

6.1. ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

XVIII դարում Արևմտյան Եվրոպայում դեռևս տիրապետող էին ֆեոդալական հարաբերությունները, իսկ առանձին երկրներում զգալի էին դրանց մնացուկները: Միաժամանակ, աստիճանական անցում էր կատարվում կապիտալիստական տնտեսածնին: Այդ դարաշրջանի հիմնական իրադարձությունները սոցիալ-տնտեսական բնագավառում հետևյալներն էին. բուրժուական տնտեսական հարաբերությունների ծնունդ և հաստատում, մրցակցության տիրապետություն արդյունաբերության բուռն աճի պայմաններում, արդյունաբերական հեղաշրջում Անգլիայում, բուրժուազիայի տնտեսական և քաղաքական նշանակության աճ, հակաֆեոդալական շարժման ուժեղացում, գյուղի ենթարկում քաղաքին, հասարակական հավասարության և անձնական ազատության ու լուսավորչական գաղափարների տարածում և այլն:

XVIII դարում արդեն կասկածի ենթարկվեցին միջնադարյան կրոնական պատկերացումները և ստեղծված ավանդույթները: Դեպի գիտություն ձգտումը արդեն հենվում էր բանականության, այլ ոչ թե հավատի վրա: Ազատ միտքը դարձավ այդ շրջանի սոցիալ-տնտեսական և հասարակական-քաղաքական առաջընթացի գլխավոր միջոցը:

Տնտեսական առումով Արևմտյան Եվրոպան XVIII դարում դարձավ արդյունաբերական արտադրության համեմատաբար արագ զարգացման օրինակ: Արդեն դարասկզբին Եվրոպական մանուֆակտուրան մտավ իր զարգացման ավարտական փուլը, և մի շարք երկրներում (Անգլիա, Յուլանդիա) գերակշռող էր արհեստագործության նկատմամբ: Իսկ ուրիշ երկրներում (Ֆրանսիա, Գերմանիա և այլն) մանուֆակտուրայի զարգացումը արգելակվում էր ֆեոդա-

լիզմի մնացուկների առկայությամբ, ցեխային արտոնությունների, ներքին շուկայի նեղությամբ:

Դրություներն առավել բարենպաստ էր Անգլիայում, և XVIII դարի կեսերին այստեղ ստեղծվեցին անհրաժեշտ սոցիալ-տնտեսական և քաղաքական պայմաններ՝ արդյունաբերական հեղաշրջման իրագործման համար: Մանուֆակտուրայից ֆաբրիկային, ձեռքի աշխատանքի վրա հենված մանր արտադրությունից խոշոր մեքենայական ինդուստրիային անցնելը կազմում էր արդյունաբերական հեղաշրջման հիմնական բովանդակությունը:

Տեղաշարժերն առկա էին տեխնիկայի, տեխնոլոգիայի, արտադրության կազմակերպման բնագավառներում: Ընդհանուր շարժիչով մեքենաների համակարգը ապահովում էր աշխատանքային գործընթացի անընդհատությունը: Բնականաբար, էժան ու որակյալ գործարանային արտադրանքը դուրս էր արհեստագործական և մանուֆակտուրային արտադրանքի հետ մրցակցությունից: Տեղի ունեցավ արդյունաբերության վերջնական անջատում գյուղատնտեսությունից: Առաջացան խոշոր քաղաքներ և արդյունաբերական կենտրոններ: Վերջնականապես ձևավորվեցին բուրժուազիայի և արդյունաբերական պրոլետարիատի դասակարգերը:

Գերակշռող էր մնում մերկանտիլիզմի, ակտիվ առևտրական հաշվեկշռի գաղափարը: Ընդամին, կապիտալը հիմնականում կենտրոնացված էր ոչ թե արդյունաբերության մեջ, այլև՝ առևտրում, նավաշինությունում, բանկային համակարգում, ոչ արտադրական ոլորտում: Մերկանտիլիզմի քաղաքականությունը սերտ կապի մեջ էր պրոտեկցիոնիզմի հետ, որը նախատեսում էր հայրենական արտադրության խթանում և առևտրային կապիտալի էքսպանսիային աջակցություն:

Այդ բոլորով հանդերձ՝ XVIII դարի Եվրոպան հիմնականում ագրարային էր: Հասարակության գոյության անհրաժեշտ պայմանը գյուղատնտեսական արտադրությունն էր: Նշված ոլորտում զբաղված էր բնակչության գերակշռող մասը (75-85%-ը): Աստիճանաբար փոխվում էին հողատիրության և վարձակալության ձևերը, տեղի էր ունենում գյուղացիության տարբերակում: Անցում էր կատարվում ինտենսիվ հողագործությանը, եռադաշտային ցանքաշրջանառությունից բազմադաշտայինին, գյուղատնտեսական մեքենաների օգտագործմանը:

XIX դարը համարվում է ինդուստրիալ քաղաքակրթության ձևավորման ժամանակաշրջան: Եվրոպայի տնտեսական պատմությունը լի էր կարևոր իրադարձություններով, որոնք արմատապես փոխեցին համաշխարհային տնտեսության զարգացման ընթացքը: Դա բուրժուական հեղափոխությունների ավարտման ժամանակաշրջան էր Ռուսաստանում, Գերմանիայում, Ճապոնիայում: Ձևավորվեց հզոր

պետությունների միջուկ, որը ներկայումս էլ առաջատար դեր ունի աշխարհում:

XIX դարում տեղի ունեցավ խոշոր մեքենայական արտադրության ձևավորման գործընթաց արդյունաբերության մեջ և այլ ճյուղերում: Ամբողջ տնտեսության արտադրանքի մեջ գերակշռող դարձավ արդյունաբերական արտադրանքի տեսակարար կշիռը: Առաջատար երկրների արտաքին առևտրի արտահանման կառուցվածքում խիստ մեծացավ արդյունաբերական արտադրանքի բաժինը, իսկ ներմուծման կառուցվածքում՝ գյուղատնտեսական արտադրանքը և հումքը: Բարձրացավ աշխատանքի արտադրողականությունը, մեծացան արտադրության աճի ծավալները:

Տնտեսության մեջ ավելի լայնորեն էին ներդրվում գիտության և տեխնիկայի նվաճումները: Շոգեշարժիչի հետ ստեղծվեցին նոր տիպի շարժիչներ՝ ջրային և ներքին այրման, շոգետուրբիններ: Աննախադեպ չափեր ընդունեց երկաթուղային շինարարությունը: Ծնունդ առավ ավտոմեքենաշինությունը, զարգացան էլեկտրաէներգետիկան, ռազմական տեխնիկան: Հաղորդակցության միջոցների շարքը համալրեցին ռադիոն, հեռախոսը, հեռագիրը:

Փոփոխություններն առկա էին նաև կառավարման բնագավառում: Ի հայտ եկան հանրապետությունները և սահմանադրական միապետությունները, սրվեցին միջազգային հարաբերությունները: Ավարտվեց աշխարհի գաղութային բաժանումը, և դաժան պայքար էր մղվում գաղութների վերաբաժանման համար:

XIX դարի վերջերին արտադրության զարգացման գծով կուտակված հսկայական փորձը վերածվեց երկրորդ գիտատեխնիկական հեղափոխության (առաջին գիտատեխնիկական հեղափոխությունը արդյունաբերական հեղաշրջումն էր): Վերջինս էլ հսկայական ազդեցություն ունեցավ արտադրողական ուժերի զարգացման, արդյունաբերության ճյուղային կառուցվածքի կատարելագործման, նոր ճյուղերի ստեղծման վրա: Առաջընթացը նկատելի էր հասարակական-տնտեսական կյանքի բոլոր ոլորտներում:

6.2. ԱՄՆ-Ի ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՅՈՒՄԸ ՄԻՆՉՍՈՆՊՈՒԼԻՍՏԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԻՉՄԻ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ

6.2.1. Հյուսիսային Ամերիկայի տնտեսական դրությունը գաղութատիրության ժամանակաշրջանում

Աշխարհագրական մեծ հայտնագործությունները սկիզբ դրեցին Ամերիկայի գաղութացմանը եվրոպացիների կողմից դեռևս XVI դարում: Գաղութարարների առաջին մշտական բնակավայրերը հիմնել էին իսպանացիները: Ավելի ուշ՝ XVII դարում, Յյուսիսային Ամերիկայի տարածքում բնակություն են հաստատում նաև ֆրանսիացիները, հոլանդացիները և անգլիացիները: Վերջիններիս տիրույթները այստեղ մեծ չէին, թեև հենց Անգլիան գլխավոր դեր խաղաց Յյուսիս-ամերիկյան մայրցամաքի գաղութացման գործում:

Անգլիական առաջին մշտական բնակավայրը այստեղ հիմնվել է 1607 թ.: XVII-XVIII դդ. անգլիացիները հիմնել են մի շարք նոր գաղութներ՝ հիմնականում Ատլանտյան օվկիանոսի ափին: Յետագայում Յուլանդիայի, Ֆրանսիայի, Իսպանիայի դեմ մղված գաղութային պատերազմների, ինչպես նաև տեղի հնդկացի ցեղերին բնաջնջելու և նրանց հողերը գրավելու միջոցով Անգլիան ընդարձակեց իր տիրույթները և գերիշխող դիրքեր գրավեց Յյուսիսային Ամերիկայում: XVIII դարի 60-ական թվականներին անգլիական տիրույթները տարածվում էին Ատլանտյան օվկիանոսից մինչև Ապալաչյան լեռները և բաղկացած էին 13 գաղութներից, որոնք բնակեցվում էին եվրոպական երկրներից արտագաղթողներով և, առաջին հերթին, Անգլիայում «ցամկապատումների» հետևանքով հողագրկված գյուղացիներով:

Անգլիական գաղութների տնտեսական զարգացումն ուղեկցվում էր որոշակի մասնագիտացմամբ, և այդ տեսակետից առանձնանում էին հյուսիսային, կենտրոնական և հարավային գաղութները:

Յյուսիսային չորս գաղութները, որոնք հայտնի են «Նոր Անգլիա» անվամբ, տնտեսական տեսակետից առավել զարգացած էին: Հողագործության համար անբարենպաստ կլիմայի պայմաններում այստեղ զարգանում էին անասնապահությունը, ինչպես նաև՝ ձկնորսությունը, արհեստները, առևտուրը և մանուֆակտուրային արտադրությունը: Ստեղծվում էին արդյունաբերության մի շարք ճյուղեր՝ փայտամշակման, երկաթագործական, նավաշինական, որոնց արտադրանքի մի մասն արտահանվում էր Անգլիա: XVIII դարի վերջին անգլիական նավատորմի տոննաժի 1/3-ը կազմում էին Ամերիկայում կառուցված նավերը: Թեթև արդյունաբերության առաջատար ճյուղ էր մահուդի արտադրությունը, իսկ խոշորագույն քաղաքը և նավահանգիստը Բոստոնն էր:

Մյուս երեք գաղութները գտնվում էին ծովափի կենտրոնական մասի բերրի հողերում: Դրանք երկրի հացահատիկային գլխավոր շրջաններն էին: Այստեղ անգլիացիները արհեստականորեն տարածում էին խոշոր ֆեոդալական հողատիրությունը, հողերն էլ հիմնականում վարձակալման էին հանձնվում ֆերմերներին: Նշված գաղութներում նույնպես զարգանում էր արդյունաբերությունը, թեև՝

ավելի թույլ, քան Նոր Անգլիայում: Ամենամեծ քաղաքը Ֆիլադելֆիան էր:

Հարավային վեց գաղութներում զարգանում էին պլանտացիոն տնտեսությունները, որոնք մասնագիտանում էին ստրուկների աշխատանքի վրա հիմնված ծխախոտի, բրնձի և այլ աշխատատար մշակաբույսերի արտադրությամբ: Սկզբնական շրջանում ստրուկները սպիտակամորթներ էին, պարտային, իսկ հետագայում՝ Աֆրիկայից բերվեցին սևամորթներ:

Այսպիսով՝ XVIII դարում անգլիական գաղութները Հյուսիսային Ամերիկայում ձեռք էին բերել տնտեսական զարգացման զգալի մակարդակ, թեև տնտեսության հիմքը գյուղատնտեսությունն էր, որտեղ զբաղված էր բնակչության 90%-ը:

Արդյունաբերության զարգացումը սահմանափակվում էր Անգլիայի կողմից, որը ձգտում էր պահպանել հյուսիս-ամերիկյան գաղութները որպես տնտեսության ագրարային-հումքային կցորդ և վաճառահանման շուկա իր ապրանքների համար: Անգլիայի ջանքերին համառ դիմադրում էր արագ ձևավորվող և հզորացող ամերիկյան բուրժուազիան:

Նրանց միջև սրվում էին հակասությունները, որոնցից հիմնականը ագրարային հարցն էր: 1763 թ. հրամանագրով Ապալաչյան լեռների և Միսիսիպի գետի միջև ընդարձակ հողատարածությունները հայտարարվել էին բրիտանական գահի սեփականություն և արգելվել մասնավոր մարդկանց կողմից դրանց բնակեցումը: Այդպիսով՝ Անգլիան խոչընդոտում էր կապիտալիստական ֆերմերային տնտեսությունների զարգացումը և պահպանում անգլիական ազնվականության ֆեոդալական հողատիրությունը:

Ամերիկյան բուրժուազիայի դժգոհությունն էր առաջացնում նաև Անգլիայի հակազդեցությունը գաղութներում խոշոր արդյունաբերական արտադրության զարգացմանը: Չարգելելով արդյունաբերական հումքի և կիսաֆաբրիկատների արտադրությունը, կառավարությունը ձգտում էր կասեցնել այն ճյուղերի զարգացումը, որոնք մրցակցություն էին ստեղծում անգլիական ապրանքների համար՝ բրդի, մետաղամշակման և այլն: Այդ քաղաքականությունն իրականացվում էր գաղութներում տարբեր արտադրություններ ուղղակի սահմանափակելու, ինչպես նաև անգլիական ապրանքները առանց մաքսի ներմուծելու միջոցով:

Մեծ դժգոհություն էր առաջացնում նաև գաղութարարների առևտրային քաղաքականությունը: 1650 թ. օրենքով արգելվում էր ամերիկացիների առևտուրը եվրոպացիների հետ: 1699 թ. օրենքով արգելվում էր բրդյա գործվածքեղենի արտահանումը Ամերիկայից, իսկ Անգլիայից առանց մաքսատուրքերի ներմուծվող նույնատիպ

արտադրանքը մեծ վնաս էր հասցնում տեղական արդյունաբերությանը:

Իրադրությունը Ամերիկայում սրվեց, այսպես կոչված, «բոստոնյան թեյախնությունից» հետո, որը տեղի ունեցավ 1773 թ.: Թեյի մաքսանենգ առևտրին հարված հասցնելու համար կառավարությունը իջեցրեց անգլիական Օստ-Յնդկական ընկերության կողմից Ամերիկա ներմուծվող թեյի մաքսատուրքերը: Ամերիկացիները հրաժարվեցին գնել թեյը, հետո էլ հարձակվեցին թեյով բեռնված անգլիական նավերի վրա և ամբողջ ապրանքը ջուրը թափեցին:

Գաղութարարների և Ամերիկայի բնիկների միջև 1775 թ. սկսվեց Անկախության պատերազմը, որն իր բնույթով բուրժուական հեղափոխություն էր: 1776 թ. ընդունվեց «Անկախության հռչակագիրը»՝ ազդարարելով «Ամերիկայի Միացյալ Նահանգներ» պետության ստեղծումը: Պատերազմն ավարտվեց 1783 թ. Անգլիայի պարտությանը:

Անկախության պատերազմը պայմաններ ստեղծեց ԱՄՆ-ում բուրժուական հարաբերությունների արագ զարգացման համար: Հյուսիս-ամերիկյան 13 գաղութների միավորումը երկրում ստեղծեց միասնական ներքին շուկա և այդ շուկան մաքսատուրքերով ներմուծվող ապրանքներից պաշտպանելու հնարավորություն: Բռնագրավվեցին խոշոր կիսաֆեոդալական կալվածքները, որոնք միայն Նյու-Յորքի նահանգում գնահատվում էին 3,6 մլն դոլար: Հեղափոխությունից հետո մի քանի տարվա ընթացքում ոչնչացվեցին հողի ժառանգման ֆեոդալական նորմերը, արդյունաբերության և առևտրի զարգացման խոչընդոտները և պայմաններ ստեղծվեցին կապիտալիստական հարաբերությունների կատարելագործման համար: Հեղափոխության բոլոր նվաճումները ամրագրվեցին ԱՄՆ-ի նոր սահմանադրության մեջ, որը հռչակում էր հանրապետական կարգերի հաստատումը:

ԱՄՆ-ում մինչև XIX դարի վերջը զարգացման պայմանները էապես տարբերվում էին եվրոպականից: Ֆեոդալական հարաբերություններ այստեղ երբեք չեն եղել, իսկ Անգլիայի կողմից որոշ գաղութներում (Նյու-Յորք, Վիրջինիա և այլն) արհեստականորեն արմատավորված ֆեոդալական բնույթի տիրույթները վերացվեցին անկախության պատերազմով: Միայն ԱՄՆ-ի հարավային մասում պահպանվեցին ստրկատիրական խոշոր կալվածքները: Երկրի մեծ մասում կապիտալիզմը գյուղատնտեսության մեջ կարող էր զարգանալ անխոչընդոտ, ֆերմերային ուղիով:

Բուրժուական հեղափոխությունից հետո արագացավ արևմտյան հողերի բնակեցումը: Դրանք հանձնվեցին ֆեդերալ կառավարությանը, որն այստեղ արմատավորում էր հողի մասնավոր սեփականությունը և պայմաններ ստեղծում կապիտալի ներդրման և գյու-

ղատնտեսության արագ զարգացման համար: Հետագայում այդ տարածքները ընդարձակվում էին պատերազմների և հողերը եվրոպացիներից գնելու միջոցով¹:

1823 թ. հռչակվեց «Մոնրոյի դոկտրինան», որով հայտարարվեց, թե Ամերիկայում եվրոպական ամեն մի միջամտություն կդիտվի որպես սպառնալիք ԱՄՆ-ին: Դրանում պարունակվում էր ամբողջ ամերիկյան մայրցամաքում ԱՄՆ-ի գերիշխանության հաստատման գաղափարը:

Արևմտյան հողերի միացման հետևանքով XIX դարի առաջին կեսին ԱՄՆ-ը մեծացրեց իր տարածքը 8,5 անգամ` գրեթե հասցնելով այժմյան սահմաններին:

Երկրի տարածքի ընդարձակումն ուղեկցվում էր բնակչության արագ աճով, որը 1790 թ. կազմում էր 3,9 մլն, 1810 թ.` 7,2 մլն, 1860 թ.` 31,4 մլն մարդ: Այս աճը պայմանավորված էր նաև ներգաղթով և ստրուկների ներմուծմամբ: Շուրջ 40 տարվա ընթացքում` 1821-1860 թթ., ԱՄՆ տեղափոխվեցին 5 մլն ներգաղթողներ` հիմնականում Իռլանդիայից, Գերմանիայից և Անգլիայից: Նրանց շնորհիվ արդյունաբերությունը ստանում էր լրացուցիչ աշխատուժ, և ընդլայնվում էր ներքին շուկան` արագացնելով արդյունաբերության զարգացումը:

6.2.2. Արդյունաբերական հեղաշրջումը ԱՄՆ-ում

1. Անցումը ֆաբրիկա-գործարանային արտադրությանը ԱՄՆ-ում սկսվեց երկրի հյուսիս-արևելքում XIX դարի սկզբին: Սակայն շոգեշարժիչները բամբակագործական արտադրության մեջ տարածվեցին համեմատաբար ուշ` XIX դարի 40-ական թվականներին, և դա ԱՄՆ-ում արդյունաբերական հեղաշրջման առանձնահատկություններից մեկն էր: Երկրում ջրի էներգիայի աղբյուրների առատության և ձեռնարկությունների ոչ մեծ չափերի պայմաններում սկզբնական շրջանում օգտագործվում էին ավելի էժան էներգիա արտադրող ջրաշարժիչները:

Շոգեշարժիչներ և այլ սարքավորումներ արտադրող առաջին մեծ մեքենաշինական ընկերությունը` «Պորտ-Ռիչմոնդ-քոնփանի»-ն ստեղծվեց 1828 թ.: Տասը տարի անց սկսեցին գործել Մորգանի մեքենաշինական գործարանները:

2. ԱՄՆ-ում, ինչպես և Անգլիայում, արդյունաբերական հեղաշրջումը սկսվեց բամբակագործական արդյունաբերության մեջ, որտեղ հիմնականում օգտագործվում էին անգլիական մեքենաները,

¹ ԱՄՆ-ը 1803 թ. Ֆրանսիայից գնեց Լուիզիանան, Իսպանիայից` Ֆլորիդան, իսկ Մեքսիկայից գավթեց 2,5 մլն քառ. կմ տարածք:

և դա արագացնում էր տեխնիկական հեղաշրջումը: Արդյունաբերության այդ ճյուղի զարգացման համար չափազանց կարևոր նշանակություն ուներ Է. Ուիտնիի կողմից 1793 թ. բամբակագտիչ մեքենայի հայտնագործումը, ինչը վերափոխեց բամբակի վերամշակումը և մեծացրեց բամբակագործական արտադրության հումքային բազան:

3. Արդյունաբերական հեղաշրջման մյուս կարևոր առանձնահատկությունը ԱՄՆ-ում ճարտարագիտական մտքի արագ զարգացումն էր՝ կարի, տպագրական, գյուղատնտեսական մեքենաների, տուրբինի, ռևոլվերային հաստոցի, մորզեի այբուբենի, ֆոսֆորային լուցկու և այլնի հայտնագործումը: Սրանց հիման վրա ստեղծվեցին նոր արտադրություններ, որոնց արտադրանքը մեծ պահանջարկ ուներ ամբողջ աշխարհում:

4. Արդյունաբերական հեղաշրջման նախադրյալ էր նաև երկրում դրամական միջոցների կուտակումը, որի կարևոր աղբյուրն էր հողի առք ու վաճառքը: ԱՄՆ-ը ռազմական գործողությունների միջոցով զրավում կամ էլ գնում էր եվրոպացիներին պատկանող Ատլանտյան օվկիանոսից մինչև Խաղաղ օվկիանոսն ընկած հողերը, հայտարարում պետական սեփականություն և վաճառում ամերիկացիներին սկզբնական շրջանում 640 ակր (260 հա)՝ մեկ ակրի համար 2 դոլար, 1820 թվականից՝ 32 հա, իսկ 1832 թ.՝ 16 հա չափով: Ֆերմերները հնարավորություն ունեին ձեռքբերելու այդ հողերը:

Այդ նույն ժամանակ պետությունը գրեթե անվճար հողեր էր հատկացնում ընկերություններին արևմտյան շրջաններում երկաթուղիներ կառուցելու համար: Ընկերությունները հողերի «ավելցուկները» մանր կտորներով և շատ ավելի բարձր գներով վաճառում էին մասնավոր մարդկանց և հարստանում:

5. Դրամական միջոցների կուտակման կարևոր աղբյուր էր նաև ստրկավաճառությունը, որով զբաղվում էին հյուսիսային շրջանները: Դրանք ունեին նավատորմ և առևտրի հմտություններ: Ստրկավաճառության դերի մասին վկայում է այն, որ հարավում ստրուկների թիվը XVI դարի վերջում 900 հազար էր, իսկ XIX դարի առաջին կեսին՝ 4 մլն:

6. Արդյունաբերական հեղաշրջման արագացման գործում մեծ դեր ունեցավ օտարերկրյա կապիտալի ներհոսքը եվրոպական երկրներից, հիմնականում՝ Անգլիայից: Պետական փոխառությունների, վարկերի և ներդրումների ձևով 1860 թ. ԱՄՆ-ում օտարերկրյա կապիտալը գնահատվում էր 1,5 մլրդ դոլար: Այդ միջոցները ներդրվում էին արդյունաբերության, երկաթուղային շինարարության, վարկային համակարգի զարգացման մեջ, որոնք ապահովում էին բարձր շահույթների ստացում և պայմաններ ստեղծում ներքին ներդրումների մեծացման համար:

7. Արդյունաբերական հեղաշրջման համար կարևոր նախապայման էր վարձու աշխատուժի բանակի ձևավորումը: Եթե մյուս բոլոր երկրներում դրա հիմնական աղբյուրը ունեզրկված գյուղական բնակչությունն էր, ապա ԱՄՆ-ում մանր ֆերմերները հնարավորություն ունեին տեղափոխվելու Արևմուտքի ազատ հողերը, ինչը և ձգձգում էր աշխատուժի ներհոսքը արդյունաբերություն: Այդպիսի պայմաններում վարձու աշխատուժի շուկան լրացվում էր ներգաղթողների հաշվին, որոնց թիվը 1830-ական թ. կազմում էր 600 հազար., իսկ 1860 թ.՝ 5 մլն մարդ: Նրանք զարգացած եվրոպական երկրներից էին, որակյալ բանվորներ, և ԱՄՆ-ում տարածում էին իրենց երկրների փորձը, տեխնիկական նվաճումները՝ արագացնելով տեխնիկական առաջընթացը:

8. ԱՄՆ-ում արդյունաբերական հեղաշրջման առանձնահատկություններից էր տարածքային և ճյուղային անհամաչափությունը: Արդյունաբերական հեղաշրջումն ընդգրկեց առաջին հերթին հյուսիս-արևելյան նահանգները: Հարավում անգամ XIX դարի 60-ական թվականներին չկային ֆաբրիկաներ և գործարաններ, իսկ արևմուտքը մասնագիտանում էր սննդամթերքի, անտառանյութի վերամշակմամբ և գյուղատնտեսական տեխնիկայի արտադրությամբ:

Արդյունաբերական հեղաշրջումը սկսվելով բամբակագործության մեջ հետզհետե տարածվում էր արդյունաբերության այլ ճյուղերում: Երկրի հյուսիս-արևելքը դարձավ տեքստիլ արդյունաբերության կենտրոն, որտեղ կենտրոնացված էր ֆաբրիկաների մոտ 80%-ը: Տեխնիկական հեղաշրջումն ընդգրկեց նաև սննդի, կոշիկի, կարի, կաշվի և թեթև արդյունաբերության այլ ճյուղեր:

Արդյունաբերության զարգացման համար կարևոր նշանակություն ուներ տրանսպորտի զարգացումը: ԱՄՆ-ում 1780-1820 թթ. սկսվում է կառուցումը խճուղիների, որոնց երկարությունը միայն Փենսիլվանիայում 1832 թ. կազմեց 3500 կմ:

Նավագնացության զարգացման սկիզբը դրվեց 1807 թ. Ռ.Ֆուլտոնի կողմից աշխարհում առաջին շոգեմալի հայտնագործմամբ, իսկ 1860 թ. շոգեմալերի քանակը կազմում էր հազարից ավելի: Ամերիկյան նավերի որակը չէր զիջում անգլիականին, իսկ XIX դարի կեսերին ԱՄՆ-ի և Անգլիայի նավերի տոննաժը գրեթե հավասարվեց: Նավագնացության զարգացման շնորհիվ բեռների և մարդկանց տեղափոխման արժեքը իջավ մի քանի անգամ:

Տնտեսական մեծ նշանակություն ուներ ջրանցքների կառուցումը, որը սկսվեց XVIII դարի վերջին: Ամենախոշոր էրի ջրանցքը միացրեց Սեծ լճերի շրջանը Ատլանտյան օվկիանոսի հետ: Կառուցվեցին այլ ջրանցքներ երկրի արևելյան և կենտրոնական մասերում, հիմնականում՝ պետական միջոցներով:

Երկրի տնտեսական զարգացման համար առանձնապես կարևոր էր երկաթուղիների կառուցումը: Առաջին երկաթգիծը կառուցվեց 1828 թ.՝ միացնելով Բալթիմորը Վաշինգտոնի հետ: Երկաթուղային ցանցը աճում էր մեծ արագությամբ՝ 1830 թ. այն կազմում էր ընդամենը 40 կմ., իսկ 1860 թ.՝ 50 հազ. կմ, որն ավելին էր, քան որևէ այլ երկրում:

Երկաթուղիների և ջրանցքների կառուցման միջոցով երկրի տարբեր տնտեսական շրջանները կապվում էին միմյանց հետ՝ խորացնելով աշխատանքի բաժանումը և առևտրի զարգացումը: Ավելին, արագացվում էր ծանր արդյունաբերության զարգացումը:

ԱՄՆ-ում XIX դարի կեսերին սկսեց զարգանալ մեքենաշինությունը՝ կառուցվեցին շոգեշարժիչների արտադրության գործարաններ Նյու-Յորքում և Փենսիլվանիայում: Երկիրը դարձավ շոգեքարշերի, նավերի, ինչպես նաև գյուղատնտեսական մեքենաների խոշոր արտադրող:

Տեխնիկական առաջընթացն ընդգրկեց մետալուրգիական արդյունաբերությունը, թուջի արտադրության մեջ սկսվեց քարածխի օգտագործումը, որի հանույթը 1830-1850 թթ. ավելացավ 2 անգամ:

XIX դարի 50-ական թվականներին սկզբնավորվեց գյուղատնտեսական մեքենաշինությունը՝ ցանող, կալսող մեքենաների արտադրությամբ, որոնց որակը գերազանցում էր եվրոպականին:

Արդյունաբերական հեղաշրջման շնորհիվ XIX դարի 60-ական թվականներին արդյունաբերական արտադրության ծավալով ԱՄՆ-ը աշխարհում գրավում էր չորրորդ տեղը, թեև նրա կառուցվածքում դեռևս գերակշռում էին թեթև արդյունաբերության ճյուղերը:

6.2.3. Քաղաքացիական պատերազմի տնտեսական պատճառները և հետևանքները

ԱՄՆ-ի հյուսիսում տնտեսական զարգացման հաջողությունները սրում էին երկրի սոցիալ-տնտեսական համակարգում գոյություն ունեցող հակասությունները: Արդյունաբերական հյուսիսի և ստրկատիրական հարավի զարգացման ուղիների տարբերությունը գնալով խորանում էր՝ նրանց միջև առաջացնելով սուր կոնֆլիկտ, որն ի վերջո հանգեցրեց քաղաքացիական պատերազմի:

Այդ պատերազմի հիմնական պատճառը գաղութացվող Արևմուտքի հողերի հարցն էր: Բամբակի, բամբակյա մանվածքի և գործվածքեղենի արտադրության մեքենայացումը նոր շունչ հաղորդեց ստրկատիրական տնտեսությունների գործունեությանը: Հարավի պլանտատորները գնում էին ավելի շատ ստրուկներ և մեծացնում

նրանց շահագործման աստիճանը: Բամբակը արագ դուրս էր մղում բոլոր այլ մշակաբույսերը (ծխախոտ, շաքար, ինդիգո): Նրա պահանջը համաշխարհային շուկայում գնալով մեծանում էր՝ եվրոպական երկրներում և ԱՄՆ-ում արդյունաբերական հեղաշրջման հետևանքով: Մինչդեռ հողերը ստրկատիրական տնտեսություններում արագ ուժասպառվում էին գիշատչական օգտագործումից: Ստրուկների աշխատանքը անարտադրողական էր: Հարավի պլանտատորները կորցնում էին համաշխարհային շուկայում բամբակի վաճառքի մեծաշնորհը՝ բամբակն աճող ծավալներով արտադրվում էր Հնդկաստանում: Անհրաժեշտ էր ձեռք բերել նոր, բերրի հողեր արևմուտքում, առանց որի չէին կարող գոյություն ունենալ ստրկատիրական պլանտացիոն տնտեսությունները:

Նոր հողերը անհրաժեշտ էին նաև ֆերմերային տնտեսություններին, որոնք XIX դարի 20-30-ական թվականներին արդեն հանդիսանում էին երկրում գյուղատնտեսական մթերքների հիմնական արտադրողները:

Այսպիսով՝ Արևմուտքի ազատ հողերի և դրանց սոցիալ-տնտեսական զարգացման ուղիների մասին հարցը չէր կարող լուծվել խաղաղ ճանապարհով. այն պետք է լուծվեր միայն պատերազմի միջոցով:

Արդյունաբերական հյուսիսի և ստրկատիրական հարավի միջև պատերազմը անխուսափելի էր նաև այն պատճառով, որ ստրկատիրությունը արդեն սպառել էր իրեն՝ ստրուկների աշխատանքը խոչընդոտում էր տեխնիկական առաջընթացը և գյուղատնտեսության զարգացումը: Հարավի նեղ մասնագիտացումը բամբակի արտադրությամբ վկայում էր այն մասին, որ ԱՄՆ-ի տնտեսությունը ձեռք է բերել գաղութային բնույթ և հարմարեցված էր արդյունաբերական Անգլիայի պահանջներին ու շահերին: Բամբակը կազմում էր ամերիկյան արտահանման արժեքի կեսից ավելին, և երկրի տնտեսական վիճակը զգալի չափով կախված էր համաշխարհային շուկայում բամբակի գնի փոփոխությունից:

Տնտեսության մեջ բամբակի մեծ նշանակությունը ապահովում էր պլանտատորների գերիշխանությունը նաև ԱՄՆ-ի քաղաքական կյանքում: Անկախության պատերազմից հետո ամերիկյան 16 նախագահներից 11-ը ստրկատերերի ներկայացուցիչներն էին, որոնց միջոցով պլանտատորները իրենց կամքն էին թելադրում ֆեդերալ կառավարությանը:

Ստրկատիրության պահպանումը հարավում խոչընդոտում էր ԱՄՆ-ում կապիտալիզմի զարգացումը, երկրի ինդուստրացումը, նեղացնում արդյունաբերական ապրանքների և աշխատուժի ներքին շուկան:

Հակասությունները ԱՄՆ-ի հյուսիսի և հարավի միջև դրսևորվում էին նաև արտաքին առևտրային քաղաքականության հարցում: Հարավի ագրարային նահանգները խրախուսում էին ազատ առևտուրը. 1823 թվականից պլանտատորների ճնշմամբ մաքսատուրքերը իջեցվում են՝ պայմաններ ստեղծելով անհրաժեշտ եվրոպական էժան ապրանքների ներհոսքի համար: Դրանից դժգոհում են հյուսիսի արդյունաբերողները, որոնք պահանջում էին բարձր մաքսատուրքերի միջոցով սահմանափակել օտարերկրյա ապրանքների ներհոսքը և պաշտպանել զարգացող ամերիկյան արդյունաբերությունը:

Քաղաքացիական պատերազմը սկսեցին հարավի պլանտատորները 1861 թ., թեև նրանց պարտությունը կանխորոշված էր. հյուսիսի նյութական և մարդկային ռեսուրսների գերազանցությունը ակնհայտ էր: 1860 թ. հարավային նահանգներում կենտրոնացված էր միայն 15%-ը ԱՄՆ-ի արդյունաբերական ձեռնարկությունների, որոնք տալիս էին ամբողջ արդյունաբերական արտադրանքի ընդամենը 8%-ը: Գրեթե ամբողջ մետալուրգիական արդյունաբերությունը և գենքի արտադրությունը կենտրոնացված էր հյուսիսային նահանգներում: Երկաթուղային ցանցը հյուսիսում կրկնակի երկար էր: Հյուսիսի բնակչությունը 20 մլն էր, հարավինը՝ 12 մլն, 4 մլն-ը ստրուկներն էին, որոնց զգալի մասը պատերազմի ընթացքում փախավ հյուսիս:

Պատերազմի և տնտեսական շրջափակման հետևանքով հարավային նահանգներում տնտեսությունը անկում էր ապրում՝ զգացվում էր արդյունաբերական ապրանքների և սարքավորման պակաս, երկաթուղային ցանցը քայքայվում էր, կրճատվում էր բամբակի և ավելանում հացահատիկային մշակաբույսերի արտադրությունը, թեև սննդամթերքը չէր բավարարում:

Մինչդեռ հյուսիսի տնտեսությունը ավելի էր հզորանում ռազմական պատվերների, զենքի աճի, ներմուծվող ապրանքների մաքսատուրքերի բարձրացման և ներմուծման կրճատման շնորհիվ: Ձեռնարկությունների քանակը XIX դարի 60-ական թվականներին ավելացավ մոտ 80, բանվորների և ծառայողների թիվը՝ 57%-ով: Հյուսիսը պատերազմից դուրս եկավ հզորացած տնտեսական ներուժով:

Քաղաքացիական պատերազմն ավարտվեց հյուսիսի լիակատար հաղթանակով:

ԱՄՆ-ի պատմության մեջ 1861-1865 թթ. քաղաքացիական պատերազմը բեկունային էր, իրականացված մի շարք սոցիալ-տնտեսական վերափոխումները ճանապարհ հարթեցին երկրում բուրժուական հարաբերությունների արագ զարգացման համար:

Դեռևս պատերազմի ժամանակ՝ 1862 թ., վերացվեց ստրկությունը երկրի ողջ տարածքում: Ազատություն ստացած սևամորթ ստրուկներին հող չտրվեց, և նրանք դարձան հող վարձակալողներ

կամ լրացրին վարձու աշխատուժի բանակը երկրում: Բռնագրավվեցին ոչ բոլոր լատիֆունդիաները, և ստրկատերերի մեծ մասի խոշոր կալվածքները պահպանվեցին:

Քաղաքացիական պատերազմի մյուս կարևոր դեմոկրատական նվաճումը՝ ագրարային հարցի լուծումն էր 1862 թ. «Յոնստեդ ակտով»: Ամերիկյան յուրաքանչյուր 21 տարեկան քաղաքացի գրեթե անվճար (10 դոլար վճարելով հողերի սահմանազատման համար) կարող էր ստանալ 160 ակր հող (մոտ 65 հա) և 5 տարի օգտագործելուց հետո դառնալ սեփականատեր: Այդ նույն օրենքը թույլ էր տալիս հողեր գնել՝ վճարելով 1,25 դոլար մեկ ակրի համար:

Այսպիսով՝ արևմուտքի ազատ հողերի հարցը լուծվեց հօգուտ ֆերմերների, որոնց բանակը լրացնում էին միլիոնավոր ներգաղթողները եվրոպական երկրներից: 1860-1880 թթ. ամերիկյան ֆերմերների ձեռքն անցան մոտ 65 մլն.ակր ազատ հողեր:

ԱՄՆ-ի գյուղատնտեսության մեջ հաղթեց կապիտալիզմի զարգացման ֆերմերային ուղին, որը հիմնված էր ազատ գյուղացիների հողի սեփականության վրա, ուստի բացառում էր ֆեոդալական հարաբերությունների պահպանումը:

Պատերազմից հետո ԱՄՆ-ում իրականացված միջոցառումները լուծեցին բուրժուա-դեմոկրատական հեղափոխության խնդիրները: Քաղաքացիական պատերազմը ԱՄՆ-ի պատմության մեջ մտավ որպես երկրորդ բուրժուա-դեմոկրատական հեղափոխություն:

Ամերիկյան արդյունաբերությունը XIX դարի 60-ական թվականներից կտրուկ վերելք ապրեց: Քարածխի արդյունահանումը 1850-1870 թթ. ավելացավ 5, չուգունի ձուլումը՝ 3 անգամ: Երկաթուղիները երկարեցին 6 անգամ: Փենսիլվանիայում 1854 թ. հայտնաբերվեցին նավթի հարուստ պաշարներ: Նավթի արդյունահանումը և վերամշակումը դարձավ ԱՄՆ-ի արդյունաբերության առաջատար ճյուղերից մեկը: Ամերիկյան մեքենաշինական արտադրանքը XIX դարի 60-ական թվականներին ոչ միայն մրցակցում էր անգլիականի հետ, այլև առաջ անցավ նրանից:

ԱՄՆ-ը դարձավ տնտեսության զարգացման բարձր աստիճան ունեցող ինդուստրիալ երկիր, որը 1870 թ. արդեն գրավում էր երկրորդ տեղն աշխարհում արդյունաբերական արտադրության ծավալով:

6.3. ԱՆԳԼԻԱՅԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԵՐԵԼՔԸ ԴԻՏԱՐԿՎՈՂ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ

Անգլիայում XVII դարի բուրժուական հեղափոխությունից հետո բավականին արագացան տնտեսական զարգացման տեմպերը: Արագացավ նաև կապիտալի նախասկզբնական կուտակման գործընթացը: Տեղաշարժերն առկա էին տնտեսական կյանքի բոլոր ապարեզներում: Կապիտալիստական մանուֆակտուրային արտադրության աճի մասշտաբներով արդեն XVII դարի վերջին Անգլիան առաջ անցավ Յուլանդիայից, իսկ XVIII դարի կեսերին դարձավ աշխարհի առաջատար բուրժուական պետությունը: Նախադրյալներ ստեղծվեցին հասարակական-տնտեսական զարգացման նոր՝ խոշոր մեքենայական արտադրության փուլ նուտք գործելու համար:

Դրանով հանդերձ՝ XVIII դարում Անգլիան հիմնականում մնում էր որպես գյուղատնտեսական երկիր: Բուրժուական հեղափոխության հետևանքով խոշոր հողատերերի կողմից մանր ու միջին գյուղացիական տնտեսությունների դուրս մղման գործընթացը հանգեցրեց նրան, որ XVIII դարի կեսերին գյուղացիությունը որպես դասակարգ այլևս դադարեց գոյություն ունենալ: Համայնական և մանր գյուղացիական հողագործության վերացումը նպաստեց հողային սեփականության վերաբաշխմանը, խոշոր հողատիրության ընդարձակմանը և կապիտալիստական ֆերմերության զարգացմանը:

Կալվածքների խոշորացումը լենդլորդերին հնարավորություն տվեց լայնորեն կիրառելու գյուղատնտեսական տեխնիկա, կատարելագործելու ագրոմշակույթը: Ճյուղի արտադրության ընդլայնման մշտական խթան էին գյուղատնտեսական արտադրանքի նկատմամբ պահանջարկի աճը, ներքին և արտաքին շուկայի մեծացումը: Լայնորեն կիրառվեցին օրգանական պարարտանյութերը, մոլախոտերի դեմ պայքարը, ցանքաշրջանառության կառուցվածքի բարելավման միջոցառումները: Հաջողություններ կային անասնապահության բնագավառում (տոհմային կազմի բարելավում, ինտենսիվ անասնապահության զարգացում, մթերատվության բարձրացում):

Բնականաբար, տնտեսական ձեռքբերումներն անհնար կլինեին առանց խոշոր չափերի կապիտալ ներդրումների: XVIII դարում «ցանկապատումները» չէին սահմանափակվում վարելահողերը արոտավայրերի վերածելով, այլ իրենցից ներկայացնում էին խոշոր ֆերմաների համատեղ մշակվող բաց դաշտեր: Հողամասերի խոշորացմանը և մանր վարձակալների դուրս մղմանն էր ուղղված վարձավճարների աճը:

1800 թ. անգլիական պառլամենտը ընդունեց օրենք գյուղացիների համայնական սեփականությունը լենդլորդերի մասնավոր սեփականության վերածելու մասին, որով էլ «ցանկապատման» գործընթացն ավարտվեց:

Ոչ միայն ընդլայնվեցին գյուղատնտեսական արտադրության մասշտաբները, այլև բարձրացավ ճյուղի ապրանքայնության աս-

տիճանը: Լիովին բավարարվում էր ոչ գյուղական բնակչության աճող պահանջարկը մթերքներով, արդյունաբերությունը՝ հումքով: Մյուս կողմից՝ «ցանկապատումները» ձևավորեցին ազատ աշխատուժի լրացուցիչ ռեզերվներ՝ արդյունաբերության մեջ դրանք օգտագործելու համար:

Փաստորեն՝ բուրժուական հեղափոխությունից հետո բարենպաստ պայմաններ ստեղծվեցին երկրի՝ կապիտալիստական ուղիով զարգացման համար. հաստատվեց հողի նկատմամբ բուրժուական սեփականությունը, արագացավ ազգային շուկայի կազմավորման գործընթացը, խթանվեց արդյունաբերական արտադրության զարգացումը:

XVIII դարում մանուֆակտուրան արդեն սպառում էր իր հնարավորությունները: Նրա տեխնիկական հիմքը հակասում էր հենց իր ստեղծած արտադրությանը և շուկայի պահանջներին: Նոր պահանջներ էին դրվում նաև կադրերի առջև: Ջարգանում էր ստեղծագործական միտքը, միջոցներ էին հատկացվում գիտական հետազոտությունների և տեխնիկական նորամուծությունների արդյունքները արտադրության մեջ ներդնելու համար:

Երկրում դրսից ներմուծվող ապրանքների վրա բարձր մաքսեր դնելու, պրոտեկցիոնիստական քաղաքականությունը նպատակաուղղված էր մրցունակ արտադրանքի թողարկմանը: Իսկ դա կարելի էր իրագործել միայն ֆաբրիկագործարանային արտադրության խթանման միջոցով՝ թողարկելով էժան և որակյալ արտադրանք:

Փաստորեն՝ Անգլիան դարձավ արդյունաբերական հեղաշրջման հայրենիքը:

Ինչպես նշվեց, արդյունաբերական հեղաշրջումն իրենից ներկայացնում է անցում մանուֆակտուրայից ֆաբրիկագործարանային արտադրությանը, ձեռքի աշխատանքից մեքենայական աշխատանքին, որ ուղեկցվում էր արդյունաբերական բուրժուազիայի և արդյունաբերական պրոլետարիատի ձևավորմամբ: Ընդհանրապես, արդյունաբերական հեղաշրջումը հատուկ էր բոլոր զարգացած կապիտալիստական երկրներին: Իսկ հեղաշրջումն առաջինը Անգլիայում տեղի ունենալու պատճառը ավելի մեծ նախապատրաստվածությունը և կապիտալիզմի մեքենայական փուլին անցման անհրաժեշտ պայմանների առկայությունն էին:

Հեղաշրջումը Անգլիայում ընդգրկեց XVIII դարի վերջին երրորդը և XIX դարի առաջին քառորդը: Դրա իրագործումը պահանջում էր երկու պարտադիր պայման՝ կապիտալ և ազատ կամ վարձու աշխատուժ: Վարձու աշխատուժը երկրում ձևավորվեց «ցանկապատումների» հետևանքով, երբ գյուղացիները աշխատանք էին փրկությունում քաղաքների մանուֆակտուրաներում: Իսկ կապիտալի կուտակման աղբյուրներն էին՝ դարձյալ «ցանկապատումները», գա-

դուքների թալանը, աճած հարկերը, առևտրային հասույթները, ստրկավաճառությունը, պետական փոխատվությունները և այլն:

XVIII դարի առևտրային պատերազմները Անգլիայի համար ուղեկցվում էին նոր գաղութների զավթումով: Նշված շրջանում Անգլիան մասնակցեց 120 գաղութային վեճերի, իսկ յոթնամյա պատերազմը (1756-1763թթ.) նպաստեց Բրիտանական գաղութային կայսրության ստեղծմանը: Պատերազմում հաղթանակ տանելով՝ Անգլիան Ֆրանսիային դուրս մղեց Յնդկաստանից, զավթեց Կանադան: Անգլիական կառավարության հովանավորության տակ էր գտնվում Օստ-Յնդկական խոշորագույն ընկերությունը: Անգլիան մեծ եկամուտներ էր ստանում նաև ստրկավաճառությունից՝ ամեն տարի Ամերիկա տեղափոխելով շուրջ 20 հազար նեգր:

Արդյունաբերական հեղաշրջումը Անգլիայում նախապատրաստվեց նախորդ՝ մանուֆակտուրային արտադրության զարգացմամբ: Մանուֆակտուրան կուտակեց կապիտալներ, ձևավորեց որակյալ աշխատուժ, վերացրեց պարզունակ արտադրական գործողությունները, ստեղծեց արտադրության կառավարման հմտություն, որոշակի տեխնիկական նախադրյալներ, նպաստեց ներքին շուկայի տարողունակության մեծացմանը:

Յնդաշրջումը սկսվեց տեքստիլ և, ամենից առաջ, բամբակագործվածքային արդյունաբերությունից: Դրա պատճառն այն էր, որ եվրոպական շուկայում մեծացել էր պահանջը անգլիական չթի նկատմամբ: Մահուդի արտադրությունն ավելի թանկ էր նստում, մինչդեռ բամբակյա գործվածքեղենը, որը պատրաստվում էր նոր մեքենաների օգնությամբ, ավելի էժան էր ու որակյալ: Յնց վերջինս էլ կարողացավ ապահովել սեփական պահանջարկը և մրցակիցներին դուրս մղել համաշխարհային շուկայից:

Ամենից առաջ մեքենայացվեցին մանելու և գործելու գործողությունները: Դեռևս XVIII դարի 30-ական թվականներին մեխանիկ Ջ.Բեյլը ստեղծեց «թռչող մաքոք», որը կրկնակի բարձրացրեց աշխատանքի արտադրողականությունը: Իսկ նույն դարի 80-ական թվականների վերջին – 90-ական թվականների սկզբին Է.Կարտայտը ստեղծեց մեխանիկական գործող հաստոցի մի քանի մոդելներ, որոնք 40 անգամ ավելի արտադրողական էին, քան ձեռքի հաստոցը:

Ձուգահեռաբար կատարելագործվում էր մանելու գործընթացը: 1765 թ. Ջ.Յարգրիվսը ստեղծեց թել մանելու մեխանիկական ճախարակ, որն անվանեց իր աղջկա անունով՝ «Ջեննի»: Այդ ճախարակով արտադրվում էր նուրբ, սակայն՝ ոչ ամուր թել: Իսկ 1767 թ. Թ.հայսը սարքեց մեքենա, որը շարժման մեջ էր դրվում ցրի օգնությամբ: Դրանով արտադրվում էր ամուր, բայց հաստ թել: Երեք տարի անց Կրոմպտոնի հնարեց հաստոց, զուգակցելով առաջին մեքենաների

առավելությունները, շարժման մեջ էր դնում 400 իլիկներ, և արտադրվում էր նուրբ ու ամուր թել:

Քիմիկոս Կ.Բերտոլլեն 1785 թ. քլորն օգտագործեց կտորի սպիտակեցման, իսկ Թ.Բելլը առաջարկեց կտորի ներկման (նախշերով) եղանակ:

Մեքենաների արտադրության աճը բացահայտեց արդյունաբերական հեղաշրջման հերթական ուղղությունը՝ մետաղագործության գործընթացի կատարելագործումը: Ճարտարագետ Ա.Դերբին 1735թ. բարձրորակ թուջի ստացման համար երկաթի հանքաքարի հալման ընթացքում փայտածխի փոխարեն օգտագործեց քարածուխ և չհանգած կիր: Իսկ 1784 թ. Գ.Կորտը ստացավ թուջի պուղիկնագացման արտոնագիր: Հատկանշական է, որ քարածխի պահանջարկը արագացրեց ածխի արդյունաբերության զարգացումը, թուջի արտադրությունը և ածխի հանույթը աճեցին քառակի: Դա էլ իր հերթին խթանեց տրանսպորտային ցանցի ստեղծմանը (այդ թվում՝ ջրում): Տրանսպորտի լայն ցանցի ստեղծումը նպաստեց ներքին շուկայի աճին, որն էլ ավելացրեց կապիտալի կուտակման չափերը:

Արդյունաբերական հեղաշրջման երրորդ ուղղությունը շոգեմեքենաների ստեղծումն էր: Շոգեմեքենան առաջինը հնարել է ռուս Իվան Պոլզուևովը 1765 թ., սակայն Ռուսաստանի հետամնացության պատճառով նրա գյուտը ճանաչում չգտավ: Շոտլանդիայի համալսարանի լաբորանտ Ջեյմս Ուատտը շուրջ 10 տարի (1774-1784 թթ.) կատարելագործեց շոգեշարժիչը, և նրա ստեղծած շոգեմեքենան լայն կիրառություն գտավ ինչպես արտադրության մեջ, այնպես էլ տրանսպորտում: Մասնավորապես, դրա օգտագործումը բամբակագործվածքային արդյունաբերությունում երեք անգամ ավելացրեց գործվածքի թողարկումը: Արդեն 1800 թ. Անգլիայում հաշվվում էր 320 շոգեմեքենա, իսկ 25 տարի անց՝ 15 հազար:

Արդյունաբերական հեղաշրջման ավարտական փուլն Անգլիայում արդյունաբերության մեքենաշինական ճյուղի ստեղծումն էր: Մետաղի մշակման նոր եղանակները հնարավորություն տվեցին թողարկելու մեքենաների ու մեխանիզմների ստանդարտ դետալներ: Սկիզբ առավ մեքենաների արտադրությունը մեքենաների օգնությամբ, որով էլ ավարտվեց արդյունաբերական հեղաշրջումը: 1794 թ. Գ.Մոդսլին նախագծեց առաջին մետաղամշակման հաստոցները: Այնուհետև ի հայտ եկան մամլիչները, մուրճերը և այլն:

Անգլիայում արդյունաբերական հեղաշրջումն ավարտվեց XIX դարի 30-ական թվականների սկզբին: Խոշոր մեքենայական արդյունաբերությունը հաղթանակ տարավ արհեստի և մանուֆակտուրայի նկատմամբ, որոնք ունեին ցածր արտադրողականություն և կիրառում էին ձեռքի աշխատանքը: XIX դարի կեսերին Անգլիայի քաղաքներում և բանավաններում էր բնակվում նրա բնակչության 86%-ը:

Արդյունաբերության և շինարարության մեջ զբաղվածների տեսակարար կշիռը հասավ 50%-ի, մինչդեռ գյուղատնտեսությունում զբաղվածներինը իջավ 15%-ի: Ազատ մրցակցության հաղթանակը հանգեցրեց երկրի տնտեսական նշանակալի վերելքին: Արտադրության տեխնիկական բազայի ուժեղացումը նպաստեց Անգլիայի վերածնանը հզոր ինդուստրիալ պետության: Անգլիան դարձավ «աշխարհի արհեստանոցը, ֆաբրիկան»: Արդյունաբերական արտադրանքի նրա բաժինը աշխարհում կազմեց 40%:

Ինդուստրիալ զարգացման առաջատարը բամբակագործվածքային արդյունաբերությունն էր: Աճեց ֆաբրիկաների քանակը, 1800-1870 թթ. բամբակյա գործվածքեղենի թողարկումն ավելացավ 19 անգամ, բամբակի սպառումը՝ ավելի քան 1000: XIX դարի կեսերին տեքստիլ և կարի արդյունաբերության մեջ զբաղված էր երկրի բոլոր աշխատողների մեկ երրորդից ավելին:

Հաջողություններն առկա էին ծանր արդյունաբերությունում: Մետաղագործությունում տաք փչման կիրառումով բավականին աճեց թուջի և պողպատի արտադրությունը: Երկրում գործում էր ավելի քան 600 դոմենյան վառարան՝ շնորհիվ Գ.Բեսսեների 1856 թ. առաջարկած պողպատի ձուլման նոր մեթոդի: 1800-1870 թթ. այստեղ աճիսի հանույթը աճեց 11 անգամ, մետաղամշակման արտադրանքը՝ 28: Անգլիային բաժին էր ընկնում աշխարհի թուջի արտադրության և քարածխի հանույթի կեսից ավելին: Երկրի ծանր արդյունաբերության արտադրանքի թողարկման ծավալը 4-5 անգամ գերազանցում էր ԱՄՆ-ի, Գերմանիայի և Ֆրանսիայի նույն ցուցանիշը:

Շոգեշարժիչների հզորությունը XIX դարի առաջին կեսին աճեց ավելի քան 120, իսկ 1870 թ. դրությամբ՝ 800 անգամ: Դրանք հաջողությամբ օգտագործվում էին տնտեսության տարբեր ոլորտներում: Տնտեսական կապերի ընդլայնմանը, ապրանքաշրջանառության հետագա արագացմանը, ներքին ու արտաքին առևտրի ծավալմանը նպաստեց նավաշինության զարգացումը: 1811 թ. Անգլիայում զարգացավ շոգեմակային տրանսպորտը, իսկ 1840-1850 թվականներից այստեղ կառուցվում էին օվկիանոսային խոշոր նավեր:

1814 թ. մեխանիկ Ջ. Ստեֆենսոնը ստեղծեց շոգեքարշ, իսկ 1825թ. Անգլիայում կառուցվեց առաջին երկաթուղին, որից հետո խթանվեց երկաթուղային շինարարությունը: Եթե 1840 թ. այստեղ երկաթուղիների երկարությունը կազմում էր ընդամենը 1,4 հազար կմ, ապա 1870 թ.՝ 25 հազար, կամ շուրջ 18 անգամ ավելի:

Արդյունաբերական հեղաշրջման հետևանքներից էր այն, որ Անգլիան ագրարային երկրից, ինչպես նշվեց, դարձավ հզոր ինդուստրիալ տերություն: Խոշոր տեղաշարժեր կատարվեցին նրա արտադրողական ուժերի զարգացման բնագավառում, արտադրու-

թյունը հազեցավ նոր, բարձրարտադրողական տեխնիկայով, առաջադիմական տեխնոլոգիայով, ինչի շնորհիվ 1770-1840 թթ. աշխատանքի արտադրողականությունն աճեց 27 անգամ:

Ընդլայնվեցին աշխատանքի հասարակական բաժանման շրջանակները, ստեղծվեցին արդյունաբերության նոր ճյուղեր և նոր արտադրություններ: Աշխատանքի հասարակական բաժանման խորացմամբ ընդարձակվեցին շուկայական հարաբերությունները: Սահմանվեց ոչ միայն արդյունաբերական, այլև առևտրային մենաշնորհ: Անգլիան ուներ վիթխարի առևտրական նավատորմ: 1800-1870 թթ. վերջինիս տոննաժը ավելացավ 12,5 անգամ և կազմեց համաշխարհային առևտրային տոննաժի 60%-ը:

Արդյունաբերական հեղաշրջման մյուս կարևոր հետևանքն էլ այն էր, որ փոփոխություններ կատարվեցին ոչ միայն արտադրության տեխնիկայում և տեխնոլոգիայում, այլև հասարակական հարաբերություններում: Ձևավորվեց վարձու աշխատողի նոր կերպար՝ պրոլետար: Փաստորեն՝ արդյունաբերական հեղաշրջման հետևանքով տեղաշարժերն առկա էին հասարակական կյանքի բոլոր բնագավառներում:

6.4. ՖՐԱՆՍԻԱՅԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ XVIII-XIX ԴԱՐԵՐՈՒՄ

Ընդհուպ մինչև XVIII դարի կեսերը Ֆրանսիան Եվրոպայում հավակնում էր առաջատարի դերին: Բնակչությունը կրկնակի ավելին էր Անգլիայից, տարածքը՝ մեծ: Հաջողությամբ զարգանում էին ֆրանսիական արդյունաբերությունը և առևտուրը (հատկապես՝ արտաքին): Մանուֆակտուրաները հիմնականում կենտրոնացված էին և ոչ խոշոր՝ 10-15 աշխատողներով:

Սակայն XVIII դարի երկրորդ կեսից Ֆրանսիան սկսեց հետ մնալ: Դրա գլխավոր պատճառը ֆեոդալական հարաբերությունների ծանր բեռն էր և միապետության պահպանողական քաղաքականությունը: Ֆեոդալական կարգերը արգելակում էին մանուֆակտուրաների և առևտրի զարգացումը: Արդյունաբերության մեջ գերակշռում էին միջնադարյան ցեխերը: Արգելվեց հացի արտահանումը: Առևտրի զարգացմանը խանգարում էին ներքին մաքսերը և չափի ու կշեռքի միասնական համակարգի բացակայությունը: Այդ արգելքները հանգեցրին ցեխային համակարգի լճացմանը, ներքին շուկայի փոքրացմանը:

Հակասությունները հատկապես ակնհայտ էին տնտեսության ագրարային հատվածում: Ազնվականությունը և եկեղեցին տիրում էին հողերի հիմնական մասին, պահպանում էին իրենց արտոնությունները: Գյուղացիությունը ստիպված էր զանձարանին վճարելու իր եկամուտների երկու երրորդը: XVIII դարի 80-ական թվականներին հարկային մուտքերի կեսից ավելին բաժին էր ընկնում ակցիզներին՝ զանգվածային սպառման առարկաների վրա դրվող հարկերին: Գյուղացիները հարկ էին վճարում սենյորներին (ազնվականությանը, թագավորին, եկեղեցուն): Եռակի ճնշումը, բնականաբար, առաջացնում էր գյուղացիության խիստ դժգոհությունը: 26 մլն բնակչից 22 մլն-ը գյուղացիներն էին, որոնք այդ շրջանում ևս վճարում էին դրամական բահրա և բնամթերային ռենտա (շամպար)՝ հացով: Վերջինս երբեմն հացահատիկի բերքի 20-25%-ն էր կազմում: Հարկերից էին նաև շնչահարկը, աղի վրա դրվող հարկը (գաբել) և եկեղեցական տասանորդը: Բազմաթիվ էին վճարային տուրքերը:

XVIII դարի 70-ական թվականների կեսերին ֆինանսների վերահսկիչ Ա.Թյուրգոյի ռեֆորմներով վերացվեցին հացի վաճառքի սահմանափակումները, փոքրացվեցին քաղաք ներմուծվող մթերային ապրանքների մաքսերը: Առևտրաարդյունաբերական գործունեության համարյա բոլոր տեսակները ազատվում էին ցանկացած սահմանափակումներից: Բայց և այնպես ավելի հիմնավոր էին դժվարությունները տնտեսության մեջ: Զգացվում էր ֆեոդալական-միապետական համակարգի անընդունակությունը երկրի տնտեսական կյանքի կարգավորման հարցում, և պահանջվում էին արմատական լուծումներ:

Այդ նույն ժամանակ ֆրանսիական գյուղում նույնպես ձևավորվում էր կապիտալիստական կացութաձևը՝ հատկապես հյուսիսային հացահատիկային շրջաններում: Սակայն հողի նկատմամբ ազնվականության մենաշնորհի պահպանումը նպաստում էր գյուղական բուրժուազիայի կապիտալների արտահոսքին առևտրի և վաշխառության ոլորտներ: Աստիճանաբար հասունանում էր անխուսափելի սոցիալական հեղաշրջումը:

Բուրժուական հեղափոխության նախադրյալները առկա էին նաև առևտրաարդյունաբերական միջավայրում: Ֆեոդալիզմը արգելակում էր մանուֆակտուրային արդյունաբերության զարգացումը, բուրժուազիայի հարստացումը: Հեղափոխության նախօրեին Ֆրանսիայի քաղաքային չքավորությունը կազմում էր 1,5-2 մլն մարդ:

Ֆեոդալական ռեժիմի փլուզումը Ֆրանսիայում XVIII դարի (1789-1794 թթ.) ֆրանսիական բուրժուական մեծ հեղափոխության արդյունք էր, հեղափոխության, որը ցնցեց ֆեոդալիզմի հիմքերն ամբողջ Եվրոպայում: Այդ հեղափոխության գլխավոր տնտեսական

նախադրյալը տնտեսության ֆեոդալական և կապիտալիստական ձևերի բախումն էր:

Բովանդակությամբ՝ բուրժուական, ուղղվածությամբ՝ հակաֆեոդալական, շարժիչ ուժերով՝ ժողովրդական, ֆրանսիական բուրժուական հեղափոխությունը նշանավորեց մի ամբողջ դարաշրջան: Սկսվեց Փարիզում 1789 թ. հուլիսի 14-ին, երբ ժողովրդական զանգվածները գրավեցին քաղաքական բանտ համարվող Բաստիլ ամրոցը: Իշխանությունն անցավ բուրժուական Սահմանադիր ժողովին:

Յեղափոխության առաջին փուլում (1789 թ. հուլիս – 1792 թ. օգոստոս) պահպանվեց սահմանադրական-միապետական բուրժուազիայի իշխանությունը, և իրականացվեցին մի շարք կարևոր վերափոխումներ: Այսպես՝ Սահմանադիր ժողովը 1789 թ. օգոստոսի 5-ին ընդունեց «Ֆեոդալական ռեժիմի լրիվ ոչնչացման մասին» դեկլարացիան: Սակայն հետագայում, ագրարային օրենսդրության մշակմամբ, շոշափվեց ազնվականների իրավունքների սահմանափակման միայն առանձին կողմերը: Վերացվեցին ազնվականների ու հոգևորականների հարկային արտոնությունները, երաշխավորվեց քաղաքացիների՝ ցանկացած պաշտոն զբաղեցնելու իրավունքը:

Ակտիվ էր հեղափոխության տնտեսական քաղաքականությունը, որն ուղղված էր արդյունաբերության և առևտրի ազատության ապահովմանը: 1791 թ. փետրվարին Սահմանադիր ժողովը վերացրեց արդյունաբերական արտադրության սահմանափակումները, ինչպես նաև ցեխային համակարգը: Արդյունաբերությունը և առևտուրը հովանավորելու նպատակով վերացվեցին ներքին մաքսատուրքերը, հացի առևտրի արգելքը, բոլոր արտոնությունները և մենաշնորհները: Մտցվեց մաքսային նոր տարիֆ (1791 թ. մարտ), որն իր բնույթով պրոտեկցիոնիստական էր:

Սակայն աշխատավորների կենսապայմանների մեջ կատարված փոփոխություններն աննշան էին: Աշխատավարձերի կրճատումը, գների անսանձ աճը և չարաշահությունը առաջացրին համաժողովրդական դժգոհություն: Սահմանադիր ժողովը, վախենալով ժողովրդական զանգվածների ելույթից, 1791 թ. ամռանը ընդունեց Լե Շապելյեի օրենքը, որով դրամական տուգանքների և բանտարկության սպառնալիքով արգելվում էին բանվորական միությունները և գործադուլները: Մինչև վերջ չլուծվեց ագրարային հարցը, լրիվ չվերացվեցին ֆեոդալիզմի մնացուկները:

1792 թ. օգոստոսին ժողովրդական ապստամբությամբ տապալվեց միապետական ռեժիմը (դա հեղափոխության երկրորդ փուլն էր): Իշխանության գլուխ անցան ժիրոնդիստները՝ բուրժուական հանրապետականների ներկայացուցիչները: Նրանք կառավարեցին մեկ տարուց պակաս և սահմանեցին մթերքների գների առաջին

մաքսիմումը: Ընդունվեց օրենք էմիգրանտներից վերցված փոքր հողակտորները վաճառքի կամ տարեկան ռենտայով անժամկետ տիրապետման հանձնելու մասին: Դադարեցվում էին նախկին ֆեոդալական իրավունքների հետ կապված բոլոր գործերի դատական հետապնդումները:

Սակայն ագրարային և մյուս հիմնախնդիրների առավել հիմնավոր լուծումը բաժին ընկավ հեղափոխության երրորդ փուլին (1793 թ. հունիս - 1794 թ. հուլիս): Ֆեոդալական ռեժիմի դեմ պայքարի ամբողջ ծանրությունը ուներին էր ժողովրդական զանգվածների, որոնց ղեկավարում էին յակոբինյանները՝ հեղափոխական դեմոկրատները: Նրանք իշխանության գլուխ մնացին մեկ տարուց մի փոքր ավելի պատմության մեջ մնալով ականավոր քաղաքական գործիչների փայլուն համաստեղությամբ՝ Ռոբեսպիեր, Մարատ, Դանտոն, Սեն-ժյուստ և ուրիշներ:

Յակոբինյանները վերջնական հարված հասցրին ֆեոդալական կարգին՝ հրապարակավ այրելով ազնվականների ֆեոդալական իրավունքները հաստատող բոլոր փաստաթղթերը: 1793 թ. հունիսին Կոնվենտը ընդունեց դեկրետ, որով սահմանվեց էմիգրանտների բռնագրավված հողերի վաճառքի արտոնյալ կարգը: Ունեզուրկ գյուղացիները հողակտորներ ձեռք բերելու նպատակով սկզբնապես մուծում էին արժեքի միայն 5%-ը: Մնացած մասի մուծումը ձգվում էր 10 տարի: Այդ հողակտորները դառնում էին գյուղացիության մասնավոր սեփականությունը:

Յակոբինյանները քայքայեցին գյուղական համայնքը, պարտադիր համարելով համայնական հողերի բաժանումն այն դեպքում, երբ համաձայն էր համայնքի անդամների մեկ երրորդը: Ընդամին, բաժանումը կատարվում էր հավասար՝ անկախ սեռից և տարիքից:

Պարենային հիմնախնդիրը լուծելու նպատակով նրանք պարենի մեծաքանակ գնումը համարեցին քրեական հանցանք և պատժում էին օրենքի ամբողջ խստությամբ: Բոլոր շրջաններում ստեղծվեցին պարենի պահեստներ և առանձնացվեցին հատուկ կոմիսարներ՝ հացի պաշարները հաշվառելու համար: Հողատիրոջ և նրա ընտանիքի պահանջմունքների բավարարմանը հատկացվող պաշարներից գատ, հացի ամբողջ ավելցուկը բռնագրավվում էր: 1793 թ. աշնանից համընդհանուր մաքսիմումի մասին դեկրետը սահմանում էր ոչ միայն առաջին անհրաժեշտության ապրանքների (հագուստ, վառելիք), այլև հումքի, երկաթի, թուջի և այլնի գները:

Յակոբինյանների ֆինանսական քաղաքականությունն ուղղված էր բուրժուական սեփականության սահմանափակումներին: Ընդունվեց օրենք հնչուն դրամով առևտուրն արգելելու մասին: Միակ վճարամիջոցը թղթադրամներն էին: Նման պայմաններում երկրում բարդանում էր ընդհանուր քաղաքական և սոցիալ-տնտեսական

դրությունը: Պատերազմին և շրջափակմանը ավելացավ 1793 թ. ամառային երաշտը: Ոչ բոլորն էին գոհ հացի «սև շուկայի» դեմ յակոբինյանների պայքարից, աշխատավարձի ընդունելի մաքսիմումի սահմանումից, որը հետ էր մնում գների աճից:

Յակոբինյանների տնտեսական քաղաքականությունը հակասական էր և աչքի էր ընկնում մանրբուրժուական սահմանափակությամբ: Ֆեոդալական կարգերի դեմ մղվող պայքարում ձեռնարկված առաջադիմական միջոցառումներով հանդերձ յակոբինյանների քաղաքականությունն ուներ ուժեղ արտահայտված հակաքանվորական ուղղվածություն: Յակոբինյաններն իրենցից վանեցին ժողովրդական զանգվածներին, որից էլ օգտվեց խոշոր բուրժուազիան:

Երկրում դրությունն ավելի սրվեց 1 մլրդ լիվրի ստիպողական փոխառության մասին որոշման ընդունումով: Դրանով հարուստների, որոնց տարեկան եկամուտը գերազանցում էր 9 հազար լիվրը, զույթից և պերճանքի առարկաներից զանձվող հարկը փաստացի դառնում էր բռնագանձում: Այդ հարկը կոչվում էր «հեղափոխական հարկ»: Միաժամանակ ստեղծվեցին «բարեգործության հեղափոխական դրամարկղներ»՝ բնակչության չքավոր խավի համար:

1797 թ. հուլիսի 27-ին խոշոր բուրժուազիան, օգտվելով համընդհանուր դժգոհությունից, իրականացրեց հակահեղափոխական հեղաշրջում և վրձնեց յակոբինյաններին: Խոշոր բուրժուազիայի տնտեսական քաղաքականությունն ուղղված էր իր դասակարգի ներկայացուցիչների՝ արդյունաբերողների, առևտրականների, վաշխառուների շահերի պաշտպանությանը: 1794 թ. վերջին վերացվեց համընդհանուր մաքսիմումը, որը հանգեցրեց անսանձ չարաշահության և առանձին մարդկանց համար վիթխարի հարստությունների կուտակմանը: Դրան զուգահեռ ծաղկում էր «սև բորսան»: Խիստ մեծ չափով աճեցին գները: Այսպես՝ հացի գները մեկ տարում աճեցին 30, իսկ 1790 թ. համեմատությամբ՝ 150 անգամ: Արժեզրկվեցին փոխառությունները, ավելացավ կեղծ թղթադրամների զանգվածը, մեծացան վառելիքային ճգնաժամի մասշտաբները, հարկերի չափերը: Փաստորեն՝ նշված հեղաշրջումը, պաշտպանելով բուրժուական բոլոր խավերի շահերը, զգալի վնաս հասցրեց դեմոկրատական նվաճումներին:

Հինգ տարի անց, 1799 թ., Ֆրանսիայում իշխանության գլուխ անցավ գեներալ Նապոլեոն Բոնապարտը, որը 1804 թ. իրեն հռչակեց կայսր: Նապոլեոնի հրապարակած կողքեսները՝ քաղաքացիական, քրեական, առևտրական և այլն, ուղղված էին խոշոր բուրժուազիայի դիրքերի ամրապնդմանը և անձեռնմխելի հռչակեցին բուրժուական մասնավոր սեփականությունը:

1800 թ. կառավարության աջակցությամբ ստեղծվեց ֆրանսիական բանկը, որի փայատերերից էր նաև ինքը՝ Նապոլեոնը: 30 մլն

Ֆրանկ կանոնադիր կապիտալով այդ բանկը մեծ դեր խաղաց Ֆրանսիայում կապիտալիզմի զարգացման գործում:

Նապոլեոնը ըստ ամենայնի խրախուսում էր արդյունաբերության և հատկապես ռազմական արդյունաբերության զարգացումը: Նրա տիրակալության տարիներին, թեև գերակշռում էր տնային արդյունաբերությունը՝ ցրված մանուֆակտուրաների տեսքով, աստիճանաբար աճում էր կենտրոնացված մանուֆակտուրաների քանակը:

Բոնապարտի արտաքին քաղաքականությունը նույնպես արտացոլում էր բուրժուազիայի դասակարգային շահերը: Խոսքը գաղութային կայսրության վերածննդի մասին է, և դա հատկապես ցույց տվեց եգիպտական արշավանքը: Նվաճված երկրների հետ Նապոլեոնը կնքում էր այնպիսի պայմանագրեր, որոնք նպաստում էին ֆրանսիական բուրժուազիայի հարստացմանը:

Տեղի էր ունենում հսկայական միջոցների ներհոսք Նապոլեոնի նվաճած տարածքներից, ինչպես նաև եվրոպական այլ երկրներից՝ ֆրանսիական արտահանման ընդլայնման հաշվին: Նապոլեոնի լայն նվաճողական քաղաքականությունն ուղեկցվում էր ռազմական ծախսերի աճով, որը խիստ ծանրացնում էր բնակչության հարկային լուծը: Դրվեցին լրացուցիչ անուղղակի հարկեր աղի, ծխախոտի և այլ ապրանքների վրա:

Երկրի տնտեսական կյանքում երկակի դեր խաղաց 1806 թ. Բեռլինում Նապոլեոնի ստորագրած դեկրետը ցամաքային շրջափակման մասին: Այդ փաստաթուղթը նպատակ ուներ խաբիլել Անգլիայի տնտեսական հզորությունը և վերացնել նրա մրցակցությունը եվրոպական մայրցամաքում: Ֆրանսիայից կախում ունեցող բոլոր երկրներին արգելվում էր Անգլիայի հետ առևտուրը: Մի կողմից՝ Ֆրանսիայում իրոք աշխուժացավ տեղական հումքի վրա հենվող արտադրությունը (բուրդ, մետաղ), սակայն մյուս կողմից՝ անկում ապրեցին ներմուծվող հումքով աշխատող ճյուղերը (բամբակի, շաքարի և այլն): Բացասական հետևանք ունեցավ անգլիական գյուտերից և հայտնագործություններից Ֆրանսիայի ինքնամեկուսացումը, ինչը բավականին իջեցրեց նրա արդյունաբերության զարգացման տեմպերը:

Ռուսաստանից պարտություն կրելուց հետո հոդս ցնդեց Նապոլեոնի համաեվրոպական տիրապետության մասին երազանքը: Ռուս զինվորը ազատագրեց արևմտաեվրոպական երկրները, Ֆրանսիայում վերականգնվեց Բուրբոնների դինաստիան: Այստեղ կապիտալիզմի վերջնական հաստատմանը նպաստեցին 1830, 1848 թվականների հեղափոխական իրադարձությունները, ինչպես նաև արդյունաբերական հեղաշրջման նվաճումները:

Ֆրանսիայում արդյունաբերական հեղաշրջումը սկսվեց ուշ, քան Անգլիայում: Իրագործվեց դանդաղ տեմպերով, որը բացատրվում էր

երկրի պատմական զարգացման առանձնահատկություններով, մանր տնային արտադրության գերակշռությամբ, ոչ թե արդյունաբերական, այլ բանկային-վաշխառուական կապիտալի առավել արագ զարգացմամբ: Սակայն բոլոր դեպքերում XVIII դարի վերջի հեղափոխական իրադարձությունները արագացրին երկրի անցումը արդյունաբերական հեղաշրջման փուլին: Հասունացել էին ինչպես մանուֆակտուրաների, այնպես էլ ֆաբրիկաների զարգացման անհրաժեշտ պայմանները: Ոչնչացվեց ցեխային համակարգը, լայն տարածում գտան ֆրիտրիդերականության սկզբունքները: Ֆեոդալական ռեժիմի փլուզումը արագացրեց գյուղացիության տարբերակումը և հեշտացրեց տեղաշարժը. դրանով ստեղծվեց աշխատանքի շուկա ֆաբրիկային արդյունաբերության համար:

Յեղափոխական իրադարձությունների ժամանակաշրջանում ընդլայնվեց Ֆրանսիայի ներքին շուկան, աճեց հայրենական արդյունաբերական ապրանքների պահանջարկը: Իրենց հերթին նապոլեոնյան արշավանքները ապահովեցին արտաքին լայն շուկա ֆրանսիական ապրանքների համար: Անգլիական մրցակցությունը հաղթահարելու ձգտումը խթանում էր ստեղծագործական միտքը և ֆրանսիական արդյունաբերության մեքենայացման արագացումը:

Ֆրանսիայում արդյունաբերական հեղաշրջումը տեղի ունեցավ XIX դարի առաջին կեսին: Հայտնագործություններն ընդգրկեցին տեքստիլ արդյունաբերությունը և հատկապես բամբակագործությունն ու մետաքսագործությունը: Ժ.Ժակարդը 1805 թ. ստեղծեց մետաքսյա գործվածքների արտադրության հաստոց, իսկ չթի արտադրության մեջ կիրառվեց գործվածքի վրա տարաբնույթ նախշերի անցկացման եղանակ (պերրոտինա): 1810 թ. Ֆ.Ժիրարը նախագծեց վուշագործվածքային մեքենա:

Երկրի մետաղագործության արագատեմպ զարգացմանը արգելակում էր հումքի՝ երկաթի և ածխի պակասը: XIX դարի 30-40-ական թվականներին լայն տարածում գտավ պուլիսինգացումը, և մետաղի երկու երրորդը սկսեցին արտադրել ածխի օգնությամբ:

Բայց և այնպես արդյունաբերական հեղաշրջումը նոր թափ առավ 1848 թ. հեղափոխությունից հետո: Բամբակագործվածքային արդյունաբերության մեջ օգտագործվում էր շուրջ 120 հազար հաստոց՝ 3,5 մլն իլիկներով, իսկ մետաքսի արտադրությունում՝ 90 հազար հաստոց: 1850-1870 թթ. բամբակի սպառման չափերը կրկնապատկվեցին: Մետաքսի արտադրության խոշոր կենտրոն դարձավ Լիոնը, որտեղ վերամշակվում էր շուրջ 2 մլն կգ մետաքսի հումք (բոժոժ) և պատրաստվում երկրի ամբողջ մետաքսյա գործվածքեղենի երկու երրորդը: Եվրոպական շուկայում անգլիականի հետ հաջողությամբ մրցակցում էր նաև ֆրանսիական բրոյա գործվածքեղենի արտադրությունը:

1850-ական թվականներին արմատական տեղաշարժեր կատարվեցին երկրի ծանր արդյունաբերության զարգացման բնագավառում: Չուլման բեասեներյան մեթոդի կիրառման շնորհիվ պողպատի արտադրությունն աճեց 8 անգամ: Եռապատկվեցին թուջի և ածխի արտադրության ծավալները, 3,6 անգամ ավելացավ շոգեշարժիչների ընդհանուր քանակությունը:

Բոլոր դեպքերում՝ խոշոր արդյունաբերության հաջողությունների ֆոնին երկրում գերակշռում էին մանր ու միջին ձեռնարկությունները: Փարիզում մեկ ձեռնարկությանը բաժին էր ընկնում 4 բանվոր, իսկ ծայրամասերում՝ 2:

Ամբողջությամբ վերցրած՝ արդյունաբերական հեղաշրջումը Ֆրանսիայում ավարտվեց 1860-ական թվականների վերջերին: Արդյունաբերական արտադրանքի ընդհանուր ծավալը 1810-1860 թթ. աճեց 6 անգամ: Այդ արտադրանքի չափերով նշված շրջանում Ֆրանսիան զիջում էր միայն Անգլիային:

Արդյունաբերության զարգացման հաջողություններով հանդերձ՝ Ֆրանսիան շարունակում էր մնալ գյուղատնտեսական երկիր: Այսպես՝ 8,7 մլրդ ֆրանկ կազմող ազգային եկամտի կեսից ավելին՝ 5 մլրդը, բաժին էր ընկնում ագրարային հատվածին: Գյուղատնտեսության մեջ զբաղված էր երկրի բնակչության 40%-ը, իսկ գյուղական վայրերում ապրում էր 56%-ը:

XIX դարի առաջին կեսին, հեղափոխական վերափոխումներից, ֆեոդալական կարգերի վերացումից հետո, ֆրանսիական գյուղում պայմաններ ստեղծվեցին կապիտալիզմի զարգացման համար: Ֆեոդալական կախվածության մեջ գտնվող գյուղացիները դարձան հողի ազատ սեփականատերեր: Նկատվում էր գյուղատնտեսական արտադրության աճ, ավելացան ցանքատարածությունները, որոշ չափով բարելավվեց ագրոտեխնիկան: Ավելի քան 1,5 անգամ աճեց խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակը: Սակայն հետագայում գյուղատնտեսությունը սկսեց հետ մնալ հողամասերի մանրատվածության, տեխնիկական հետամնացության և այլ պատճառներով: Բերքատվության ցուցանիշով Ֆրանսիան Եվրոպայում զբաղեցնում էր 11-րդ տեղը:

XIX դարի կեսերին Ֆրանսիայի տնտեսական կյանքի հիմնական իրադարձությունները կապված էին առևտրաֆինանսական ոլորտի հետ: Այսպես՝ մաքսային քաղաքականությունը, որը նման էր ֆրիտրիդերականությանը, ուղեկցվում էր անգլիական մեքենաների, մետաղի և ածխի վրա դրվող մաքսերի վերացմամբ: Վերջինիս կիրառումը ծանր վնաս հասցրեց սեփական արտադրությանը: Ուստի, կապիտալը արտադրական ոլորտից արտահոսեց վարկային ոլորտ: Այդ շրջանում ստեղծվեցին մի շարք բանկեր՝ հողային, առևտրային, արդյունաբերական:

XIX դարում Ֆրանսիայի բնակչության մեծամասնության վիճակը ծանր էր, ինչը ազդեց նրա վերարտադրության, աճի տեմպերի վրա: Այս ցուցանիշով Ֆրանսիան Եվրոպայում զբաղեցնում էր վերջին տեղը: Աշխատավարձը Ֆրանսիայում ավելի ցածր էր, քան ԱՄՆ-ում, Անգլիայում, Գերմանիայում: Ուստի, համընդհանուր դժգոհությունը հանգեցրեց զինված ընդհարումների: Լիոնի բանվորների ապստամբությունը 1830-ական թվականներին և հեղափոխական իրադարձությունը Փարիզում 1848-ին ազդանշան հանդիսացան 1871 թ. մարտին Փարիզյան Կոմունայի հաղթանակի. գոյատևեց ընդամենը 72 օր:

6.5. ԳԵՐՄԱՆԻԱՆ XVIII-XIX ԴԱՐԵՐՈՒՄ

Ուշ միջնադարում Գերմանիայի տնտեսական զարգացմանը բնութագրական էին անձնական ճորտատիրության վերածնունդը, կոռային շահագործման համակարգի ընդլայնումը: XVIII դարում ևս Գերմանիան շարունակում էր մնալ հետամնաց ֆեոդալական երկիր: Ի տարբերություն Գոլանդիայի և Անգլիայի, որոնք ակտիվորեն ձեռնամուխ եղան շուկայական տնտեսության զարգացմանը, Գերմանիան, հատկապես իր արևելյան մասով, բնութագրվում էր ճորտատիրության ուժեղացմամբ: Մեծացան կոռային շահագործման մասշտաբները:

Երկրի տնտեսական թուլացման պատճառներից էր Գերմանիայի, որպես համաշխարհային առևտրի խոշոր կենտրոնի, դիրքերի կորուստը: Աշխարհագրական մեծ հայտնագործությունների հետևանքով այդ կենտրոնը փոխադրվեց Ատլանտիկա: Գերմանիան քաղաքական մասնատվածության պատճառով ի վիճակի չէր զավթելու գաղութներ, գտնելու կապիտալի նախասկզբնական կուտակման արտաքին աղբյուրներ: Գերմանիան, փաստորեն, չօգտվեց կապիտալի նախասկզբնական կուտակման արտաքին աղբյուրներից՝ աշխարհագրական մեծ հայտնագործություններից, գաղութների թալանից, համաշխարհային առևտրից: Այստեղ ամուր կերպով հաստատվել էր քաղաքների ինքնուրույնություն, իսկ բնակչությունը պակաս շարժունակ էր: Բայց և այնպես Գերմանիայի տնտեսական հետամնացության գլխավոր պատճառը քաղաքական մասնատվածությունն էր:

XVIII դարի սկզբին Գերմանիայում կային մի քանի հարյուր անկախ իշխանություն, դքսություն և արքեպիսկոպոսություն, 36 հոգևոր իշխան, 62 աշխարհիկ և շուրջ 100 կայսերական ասպետ, 50

կայսերական քաղաք: Այդ խառնակույտը կոչվում էր «Գերմանական ազգի սուրբ Յոննեական կայսրություն»: Յողերը կամ իշխանությունները ինքնուրույն էին, թեև համարվում էին կայսրի վասալությունները: Առավել հզորներն էին Բրանդենբուրգը, Սաքսոնիան, Մեյկենբուրգը, Յեսսենը, Յանովերը, Բրաունշվեյգը, Բավարիան և այլն:

Քաղաքական մասնատվածության պայմաններում բազմաթիվ էին ներքին մաքսատուրքերը: Նշված շրջանում Գերմանիայում չկար միասնական դրամական միավոր, և հատվում էր շուրջ 600 տեսակի փող, ինչն առաջացնում էր իսկական քաոս դրամաշրջանառության մեջ: Բացակայում էր չափ ու կշռի միասնական համակարգը: Երկիրն ամայացրին ներքին կրոնական և արտաքին պատերազմները: Յատկապես աղետալի էր երեսնամյա պատերազմը, որի մասին նշվել է նախորդ շարադրանքում: Դրա հետևանքով առանձին հողերում բնակչությունը կրճատվեց 3/4-ով, խիստ տուժեց գյուղատնտեսությունը: Ֆեոդալական ռեժիմի ամրապնդմանը նպաստեց նաև 1524-26 թթ. գյուղացիական ապստամբության պարտությունը: Ուշացավ հակաֆեոդալական (բուրժուական) հեղափոխությունը, որն սկսվեց միայն XIX դարի կեսերին:

Արդյունաբերությանը հատուկ էր ցեխային համակարգը, որը գոյատևեց մինչև XIX դարի կեսերը:

Բայց և այնպես, երկրի տնտեսության մեջ, թեկուզ դանդաղ, ի հայտ էին գալիս կապիտալիստական միտումները: Գյուղատնտեսության մեջ մասնակիորեն կիրառվում էր վարձու աշխատանքը: Աճում էր գյուղատնտեսական արտադրանքի նկատմամբ պահանջարկը ինչպես երկրի ներսում, այնպես էլ եվրոպական շուկաներում: Յացահատիկը, անասունը, բուրդը, կաշին հարկավոր էին և՛ բնակչությանը, և՛ զարգացող քաղաքների արտադրությանը: Դա գերմանական իշխաններին դրդում էր ընդլայնել տնտեսությունը, միաժամանակ մեծանում էին կոռային աշխատանքի շրջանակները, ուժեղանում էր գյուղացիության շահագործումը:

Լայն տարածում գտան ցրված մանուֆակտուրաները: Վաճառականական կապիտալը ներթափանցեց լեռնային արդյունաբերություն, մետաղամշակություն, մահուղագործություն, կտավի արտադրություն:

XVIII դարի վերջերին ստեղծվեցին կենտրոնացված վաճառականական մանուֆակտուրաներ, որոնք դեռևս թույլ էին և չէին կարող մրցակցել Յուլանդիայի, Անգլիայի, Ֆրանսիայի մանուֆակտուրաների հետ: Այսպիսով՝ XVIII դարում Գերմանիան, պահպանելով ֆեոդալական կարգը, միայն առաջին քայլերն էր անում կապիտալիստական արտադրության զարգացման ուղղությամբ:

XIX դարի սկզբին Գերմանիան չկարողացավ լուծել տնտեսական հետամնացությունից դուրս գալու հիմնախնդիրը: Դրա պատճառներից մեկը, ինչպես նախորդ դարում, երկրի քաղաքական մասնատվածությունն էր: Միայն 1815 թ., Վիեննայի կոնգրեսի որոշմամբ, երբ նապոլեոնյան արշավանքների շրջանն ավարտվել էր, ստորագրվեց Գերմանական Միության ստեղծման ակտը, որը ներառում էր 34 միապետություն և 4 ազատ քաղաք: Սակայն նախկինի նման բացակայում էին դրամական, չափ ու կշեռքի միասնական համակարգերը: Երկրի ներսում մաքսային պատնեշները արգելակում էին տնտեսական, առևտրական և տրանսպորտային կապերի զարգացումը: Այդ շրջանում Դեբզդենից Մագդեբուրգ ապրանք տեղափոխելիս 16 անգամ մաքս էին վճարում:

Բացառությամբ Յոննոսի ձախափնյա շրջանների, ամենուրեք պահպանվում էր ցեխային համակարգը: Ցեխային իրավունքները և արտոնությունները վերացվեցին միայն 1869 թ. ընդունված արհեստագործության վերաբերյալ օրենքով: Գերմանիայի արհեստագործական արտադրանքը չէր կարող մրցակցել ոչ միայն այլ երկրների գործարանային, այլ նույնիսկ մանուֆակտուրային ապրանքների հետ: Դեռևս թույլ էր գերմանական մանուֆակտուրան:

Վիճակը բարվոք չէր նաև գյուղատնտեսությունում, որտեղ զբաղված էր երկրի բնակչության 70%-ը: Այստեղ գերիշխում էին ֆեոդալական հարաբերությունների մնացուկները՝ կալվածատերերի խոշոր հողային սեփականությունը, ճորտատիրական պարիակները և այլն:

Գաղտնիք չէ, որ ֆեոդալական տնտեսաձևից կապիտալիստականին անցումը Գերմանիայում ավելի դանդաղ էր տեղի ունենում, քան Անգլիայում և Ֆրանսիայում: Ի տարբերություն վերջինների, Գերմանիայում ֆեոդալների տիրապետությունը չվերացավ բուրժուական հեղափոխության միջոցով, այլ սահմանափակվում էր պետական ռեֆորմների իրականացմամբ, աստիճանաբար:

Ճորտատիրական հարաբերությունների վերացումը երկրում տևական էր: 1807 թ. Պրուսիայում ընդունվեց օրենք անձնական ճորտության վերացման վերաբերյալ, սակայն գյուղացիների համար բավականին ծանր պայմաններով: Մասնավորապես՝ պահպանվեցին հողաբաժինների հետ կապված բոլոր պարիակները: Գյուղացին իրավունք ստացավ տնօրինելու իր գույքը և ազատորեն անուսնանալու: Գյուղացիների միջավայրից առանձնացվեցին գրոսբաուերները (մեծ գյուղացիները կամ կուլակները): Բայց և այնպես Պրուսիայում զարգացած էին յունկերական (կալվածատիրական) տնտեսությունները:

1811 թ. պրուսական գյուղացին իրավունք ստացավ հետզնելու իր պարիակները՝ վճարելով սկզբում սեփական ռենտայի քսան-

հինգապատիկի, հետագայում տասնութապատիկի չափով, կան կալվածատիրոջը զիջելով իր հողաբաժնի մի մասը: Գյուղացիական համայնքի վերացումը կալվածատերերին հնարավորություն տվեց անպատիժ զավթելու համայնական արտավայրերը և հողահանդակները:

1850 թ. մարտին Պրուսիայում ընդունվեց օրենք, որով վերացվում էին գյուղացիների մանր պարիակները, բայց պահպանվում էր խոշոր յունկերական հողատիրությունը: Աստիճանաբար ագրարային ռեֆորմն ընդգրկեց նաև գերմանական մյուս հողերը՝ Բավարիան, Վյուրտեմբերգը, Յեսսեն-Ռարմշտատդը, Բադենը և այլն: Սակայն դեռևս պահպանվում էին ֆեոդալիզմի մնացուկները (հատկապես՝ խոշոր կալվածատիրական հողատիրությունը): Այդ՝ այսպես կոչված գյուղատնտեսության կապիտալիստական էվոլյուցիայի «պրուսական ուղին» բնութագրական էր Պրուսիայի և Մեկլենբուրգի համար, որտեղ 100 հեկտարից ավելի տարածք ունեցող յունկերական տնտեսությունները զբաղեցնում էին օգտագործվող հողերի 1/3-ից մինչև 1/2-ը: Նշված ուղին ռեֆորմների ուղի էր և ենթադրում էր շահագործման կիսաֆեոդալական ձևերի ու կալվածատիրական տնտեսությունների ամլայություն: Մինչդեռ Գերմանիայի հյուսիսարևելյան հողերում և Բավարիայում ձևավորվեցին կուլակային տնտեսություններ, իսկ հարավ-արևելքում գերակշռում էին մանր գյուղացիական տնտեսությունները:

Արդեն 1830-40-ական թվականներին նկատելի էր գյուղատնտեսական արտադրության աշխուժացում: Կիրառվեցին ցանքաշրջանառության ավելի բարդ համակարգեր: Գերմանացի քիմիկոս Լիբիխի հայտնագործությունները դրեցին ագրոքիմիայի և հանքային պարարտանյութերի կիրառման հիմքերը: Ընդարձակվեց տեխնիկական մշակաբույսերի արտադրությունը. Սաքսոնիայում և Սիլեզիայում՝ շաքարի ձակնդեղի, իսկ Պրուսիայում՝ կարտոֆիլի, որից ստանում էին օղի:

Չողագործության զարգացումը ուղեկցվում էր ամասնապահության վերելքով: Լայն կիրառություն էր գտնում գյուղատնտեսական նոր տեխնիկան: Չաջողություններն ակնհայտ էին գյուղատնտեսության մասնագիտացման ասպարեզում: Գերմանիան կարճ ժամանակամիջոցում աշխարհում առաջին տեղը զբաղեցրեց կարտոֆիլի և ձակնդեղի բերքով:

Բոլոր դեպքերում՝ անլուծելի էին մնացել մի շարք հիմնախնդիրներ: XIX դարի առաջին կեսին Գերմանիան չկարողացավ իրեն վերադարձնել ծովային առևտրի բնագավառում նախկին հզորությունը և մեկուսացված էր համաշխարհային առևտրային ուղիներից:

1848-49 թթ. Գերմանիայում տեղի ունեցավ բուրժուական հեղափոխություն, որը, անավարտ մնալով հանդերձ, նպաստեց կապի-

տալիզմի զարգացման անհրաժեշտ պայմանների ստեղծմանը, արդյունաբերական հեղաշրջման իրագործմանը, հետագայում՝ երկրի քաղաքական միավորմանը: Այդ հեղափոխությունը չոչնչացրեց ֆեոդալական միապետությունը, յունկերների իշխանությունը: Ազնվական-կալվածատերերը իրենց ձեռքին պահեցին կարևոր պաշտոնները պետական ապարատում, զինված ուժերում, նավատորմում, դիվանագիտական աշխատանքում:

Նոր առաջացող խոշոր արդյունաբերությունը կարիք ուներ պրոտեկցիոնիստական և մաքսային պաշտպանության: Դեռևս 1818 թ. ընդունված մաքսային օրենքը Պրուսիայի տարածքում ոչնչացրեց մաքսային ուղեկալները, վերացրեց ներքին մաքսերը և ակցիզները: Սահմանվեցին միանման տարիֆներ ոչ պրուսական ապրանքների համար: 1833 թ. ստեղծվեց Մաքսային միությունը, որը միավորում էր 20 հյուսիսգերմանական պետությունների և իրավունք ուներ ինքնուրույն առևտրական պայմանագրեր կնքելու եվրոպական երկրների հետ: Այս միության ստեղծումը կարևոր քայլ էր Գերմանիայի տնտեսական և քաղաքական միավորման ճանապարհին և նպաստեց ներքին շուկայի ընդարձակմանը, խթանեց երկաթուղային շինարարությունը:

Գնալով ավելի շատ էր զգացվում տնտեսական աճի պահանջը, որը հնարավոր էր միայն արդյունաբերական հեղաշրջման իրագործման շրջանակներում:

Արդեն XVIII դարի վերջերին-XIX դարի սկզբներին գերմանացիները արդյունաբերության մեջ սկսեցին օգտագործել արտասահմանյան, հատկապես՝ անգլիական մեքենաներ ու սարքավորումներ, «Ջեննի» ճախարակը: Անգլիական մեքենաների կիրառման հիման վրա այստեղ զարգացավ տեքստիլ (բամբակագործվածքային) արդյունաբերությունը: Կառուցվեցին քարածխի օգտագործմամբ թուջի ձուլման վառարաններ: Դեռևս 1796 թ. Սիլեզիայում կառուցվեց առաջին դոմենյան վառարանը: Միաժամանակ բուն Գերմանիայում ևս սկսվեց սեփական մեքենաների ու մեխանիզմների արտադրությունը:

Արդյունաբերական հեղաշրջման առանձնահատկությունը Գերմանիայում այն էր, որ սկսվեց բավականին ուշ՝ XIX դարի 30-40-ական թվականներին՝ Ռուսաստանի հետ միաժամանակ: Պատճառը Գերմանիայի տնտեսական հետամնացությունն էր:

Գերմանիայում արդյունաբերական հեղաշրջումը առաջինն սկսվեց բամբակագործվածքային արդյունաբերության մեջ և տևեց երեք փուլ: Առաջինը՝ մինչև 1850 թվականը, և կոչվեց սկզբնական կամ նախապատրաստական, երբ հեղաշրջումն ընդգրկեց միայն թեթև արդյունաբերությունը: Երկրորդը՝ 1850-1870 թթ., երբ զարգացան ծանր արդյունաբերության՝ ածխի, մետաղագործական, մե-

քենաշինության ճյուղերը: Արդյունաբերական հեղաշրջման եզրափակիչ փուլը 1871 թ. հետո էր, երբ տեղի ունեցավ Գերմանիայի քաղաքական միավորումը Օտտո Ֆոն Բիսմարկի գլխավորությամբ (որը գերմանական կայսրությունը ստեղծեց «երկաթով և արյամբ»):

Այդ շրջանի առանձնահատկությունն այն էր, որ արդյունաբերության զարգացումն ուղեկցվում էր մոնոպոլիաների կազմավորմամբ:

Սաքսոնիայում զարգացավ բամբակագործվածքային, Սիլեզիայում՝ վուլշի արտադրությունը, իսկ Լայպցիգի տոնավաճառներում լայնորեն ներկայացված էին մետաքսյա գործվածքները: Տեքստիլ արդյունաբերությունը փոխադրվում էր մեքենայական հիմքի վրա: Այսպես՝ 1846 թ. Մաքսային միության շրջանակներում հաշվվում էին ավելի քան 310 գործող հաստոց և 750 հազար մեխանիկական իլիկ:

Հատկապես կարևոր էին ծանր արդյունաբերության կառուցվածքում տեղի ունեցած փոփոխությունները: Շոգեմեքենաների օգտագործումը մեծացրեց պահանջարկը ածխի, որի հանույթը աճեց կրկնակի, իսկ հանքահորերում զբաղված բանվորների թվաքանակը քառապատկեց: Ծանր արդյունաբերության այլ ճյուղերում զբաղված բանվորների թիվը XIX դարի առաջին կեսին ավելացավ 12 անգամ: Հատկապես զարգացավ Հռենոս-Վեստֆալյան արդյունաբերական շրջանը, որտեղ կենտրոնացվել էին շուրջ 200 դոմենյան վառարան և Գերմանիայի բոլոր բանվորների մեկ քառորդը:

Արդեն 1850-60-ական թվականներին Գերմանիայում տեղի ունեցավ տնտեսական վերելք, որին նպաստեցին իրականացված մի շարք միջոցառումներ: Այսպես՝ բուրժուական հեղափոխությունից հետո ընդունվեց առևտրային կոդեքսը, ստեղծվեց գերագույն առևտրային դատարան: Կիրառվեց արհեստագործական նոր կանոնադրությունը, որը վերացրեց ցեխային արտոնությունների մնացուկները և թեթևացրեց բաժնետիրական նոր ընկերությունների ձևավորման գործընթացը: Սահմանվեց չափի ու կշռի համակարգ, մտցվեցին երկաթուղային միասնական տարիֆներ: Գերմանիան դարձավ եվրոպական տարանցիկ երկիր:

Երկաթուղային շինարարության ծավալների մեծացումը խթանիչ ազդեցություն ունեցավ խոշոր, հատկապես ծանր արդյունաբերության զարգացման վրա: 1870-ական թվականների սկզբին պետության ձեռքին էր երկրի բոլոր երկաթուղիների 40%-ից ավելին: Ի դեպ, Գերմանիայում առաջին երկաթուղին կառուցվել է 1835 թ. Նյուրնբերգի և Ֆյուրտի միջև, ուներ ընդամենը 12 կմ երկարություն: 1848 թ. Գերմանիայում երկաթուղիների երկարությունը կազմեց 2,5 հազար կմ: Երկաթուղու կառուցումը խթանում էր ածխի, ռելսերի, շոգեքարշերի, վագոնների արտադրությունը: Նշված շրջանում դրվեցին ռազմական արդյունաբերության հիմքերը:

Արդյունաբերության նոր ճյուղերի և տեխնոլոգիաների ստեղծմանը նպաստեցին խոշոր հայտնագործությունները և գիտական մշակումները: Համաշխարհային հռչակ ձեռք բերեց Է.Սիմենսի ստեղծած դինամո-մեքենան (1867 թ.), կարևոր էր քարածխից սինթետիկ ներկերի ստացումը (1856 թ.): Ծավալվեց կալիումական պարարտանյութերի արտադրությունը:

1850-60-ական թվականներին դրվեցին երկրի վարկային համակարգի հիմքերը, ստեղծվեցին բաժնետիրական բանկեր և ընկերություններ: Միայն Պրուսիայում նշված ժամանակահատվածում կազմավորվեց 300 լեռնարդյունաբերական, մետաղագործական, սպահովագրական, երկաթուղային և այլ ընկերություն՝ 2,5 մլրդ մարկ ընդհանուր կապիտալով: Այդ ամենի շնորհիվ խիստ արագացան Գերմանիայի արդյունաբերական արտադրության աճի տեմպերը, որոնցով երկիրը գերազանցեց Անգլիային և Ֆրանսիային: 1850-ական թվականներին արդյունաբերական արտադրանքի ծավալը այստեղ կրկնապատկվեց, իսկ հաջորդ տասնամյակում աճեց ևս 1,5 անգամ: Գերմանիային բաժին էր ընկնում համաշխարհային արդյունաբերական արտադրության 13%-ը:

Հաջողություններն ակնառու էին ժամր արդյունաբերության բնագավառում: 1850-60 թթ. ածխի հանույթը աճեց 5, թուջի արտադրությունը՝ ավելի քան 7, երկաթուղիների երկարությունը՝ 3, շոգեշարժիչների հզորությունը՝ 9 անգամ: Միայն 1860-ական թվականներին արտադրության միջոցների արտադրությունն աճեց 23%-ով, մինչդեռ սպառման առարկաներինը՝ ընդամենը 9%:

Սակայն արդյունաբերական հեղաշրջումը լրիվ չէր ավարտվել, և արդյունաբերության մի շարք ճյուղերում դեռևս պահպանվում էր արհեստագործական արտադրությունը: Գյուղատնտեսության և արդյունաբերության հարաբերակցությունը դեռևս առաջինի օգտին էր: Արդյունաբերության ձեռքբերումներին զուգընթաց զնալով վատթարանում էր աշխատավոր զանգվածների դրությունը:

Երկրի ինդուստրացման հաջողություններն անդրադարձան նաև առևտրի բնագավառին: Բավականին ընդլայնվեցին ներքին ապրանքաշրջանառության ծավալները: 20 տարում (1850-70 թթ.) բերնափոխադրումները երկրի ներսում 190 մլն տոննա-կմ-ից հասան 4045 մլն տոննա-կմ-ի կամ աճեցին 21 անգամ: Դրամաշրջանառության ծավալն աճեց 27 անգամ: Մեծ չափեր ընդունեց տոնավաճառային առևտուրը՝ հատկապես Լայպցիգում: Ստեղծվեցին խոշոր հանրախանութներ:

Ինչ վերաբերում է արտաքին առևտրին, ապա միայն 1850-ական թվականներին գերմանական ապրանքների արտահանումն ավելացավ 3, ներմուծումն այլ երկրներից՝ 2 անգամ: Առևտրային հաշվեկշիռն ուներ դրական սալդո: Արտաքին առևտրի ընդհանուր ծավալը

20 տարում եռապատկվեց: Այդ շրջանում գերմանական արտահանման կառուցվածքում ավելացավ արդյունաբերական արտադրանքի բաժինը: Մասնավորապես՝ մեքենաները, մետաղյա իրերը, բրոյա, բամբակյա գործվածքեղենը, կաշվեղենը, ածուխը, շաքարը և այլն: Մինչդեռ ներմուծման կառուցվածքում մեծ տեսակարար կշիռ ունեին գյուղատնտեսական արտադրանքը և հումքը (ցորեն, գարի, բամբակ, բուրդ, անմշակ կաշի, երկաթի և պղնձի հանքաքար):

Ինդուստրացման ավարտը, որը կապված էր գյուղատնտեսական արտադրանքի արտահանումից ներմուծմանը, իսկ արդյունաբերական արտադրանքի ներմուծումից արտահանմանն անցման հետ, պահանջում էր պրոտեկցիոնիզմի քաղաքականության կիրառում:

XIX դարի երկրորդ կեսը Գերմանիայում բնութագրվում է բաժնետիրական ընկերությունների ցանցի խիստ ընդլայնմամբ: Եթե 1800-1870 թվականներին այստեղ ստեղծվեց շուրջ 500 բաժնետիրական ընկերություն, ապա միայն 1870-ական թվականներին՝ 968 ընկերություն 3 մլրդ մարկ կապիտալով: Ջարգացավ կապիտալիստական վարկային համակարգը, ստեղծվեց էմիսիոն բանկերի ցանց: Դրանց մեջ առաջատարը Պրուսական բանկն էր: Հայտնի են այնպիսի բաժնետիրական առևտրային բանկեր, ինչպիսիք էին Գերմանական բանկը Բեռլինում (1870 թ.), Դեբզոնյան բանկը (1872 թ.) և ուրիշներ:

Փաստորեն՝ ուրվագծվում էին Գերմանիայի արագ տնտեսական զարգացման հեռանկարները XIX դարի վերջին քառորդին -XX դարի սկզբներին:

6.6. «Մեջշիի» ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ ԵՎ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԵՏԵՎԱԼՔՆԵՐԸ ՃԱՊՈՆԻԱՅՈՒՄ

Ճապոնիայում XVIII դարի վերջին – XIX դարի սկզբին ֆեոդալիզմը ճգնաժամ էր ապրում՝ չէին ավելանում մշակվող հողատարածությունները և բրնձի արտադրությունը, հողը կենտրոնանում էր առևտրականների, վաշխառուների և ունևոր գյուղացիների ձեռքում, քայքայվում էին հողատերերը, և թուլանում էր սյոգունատի ռազմական հզորությունը:

Ֆեոդալիզմի ճգնաժամն արտահայտվում էր նրանում, որ քայքայվում էր բնատնտեսությունը: Սյոգունը և հողատերերը դրամի խիստ կարիք զգալով՝ բնեղեն հարկերի մի մասը փոխարինում էին

դրամականով: Դա արագացնում էր գյուղացիության քայքայումը և նրանց փախուստը գյուղերից: Կյանքի ծանր պայմանների պատճառով բնակչության թվաքանակը ճապոնիայում կրճատվում էր: Ծավալվում էր գյուղացիական շարժում՝ 1803-1867 թթ. տեղի ունեցավ մոտ 500 ապստամբություն:

Ֆեոդալական կարգի քայքայման հետ ճապոնիայում դանդաղորեն զարգանում էր կապիտալիստական արտադրությունը: 1794-1867 թթ. կազմակերպվել էին 292 մանուֆակտուրաներ՝ ընդհանուր քանակը հասցնելով 420-ի: Դրանք հիմնականում մասնավոր և պետական էին՝ լեռնահանքային, մանվածքային, գործվածքային, բրուտագործական, խեցեգործական, սննդի և այլ արտադրություններով: Մանուֆակտուրաների տարածման խոչընդոտներ էին գյուղացիների ամրացումը հողին և ազատ վարձկանների պակասը, սամուրայների արտադրական և առևտրային գործունեության արգելումը, արտադրության առավել շահավետ ճյուղերում (ոսկու, արծաթի, պղնձի, աղի հանույթի) սյոգունատի մենաշնորհի սահմանումը և այլն:

Մանուֆակտուրաների զարգացման լուրջ խոչընդոտ էին նաև ֆեոդալական մասնատվածությունը և մաքսային արգելքները, արտադրանքի նկատմամբ ցածր պահանջարկը, համքարությունները:

Այս պայմաններում մինչև XIX դարի 50-60-ական թվականները մանուֆակտուրային արտադրությունը թույլ էր զարգացած, և տնտեսական աճի մակարդակով ճապոնիան հետ էր մնում թե՛ եվրոպական երկրներից, թե՛ ԱՄՆ-ից:

ճապոնիայի մեկուսացումը արտաքին աշխարհից տևեց ավելի քան երկու հարյուրամյակ, և դրան նպաստեց այն հանգամանքը, որ եվրոպական երկրների ուշադրությունը գրավել էին այնպիսի հարուստ երկրներ, ինչպիսիք էին Յնդկաստանը և Չինաստանը:

XIX դարի կեսից սրվեց պայքարը գաղութային խոշոր տերությունների միջև՝ Խաղաղ օվկիանոսի ավազանի երկրներում հենակետեր, հումքի աղբյուրներ և վաճառահանման շուկաներ ձեռք բերելու նպատակով: Սակայն ճապոնիայի մեկուսացումը վերացնելու եվրոպական երկրների բոլոր ջանքերը անհաջողության էին մատնվում: Միայն 1842 թ. ճապոնական կառավարությունը, խուսափելով հզոր երկրների հետ հարաբերությունների սրումից, օտարերկրյա նավերին թույլատրեց մտնել երկրի որոշ նավահանգիստներ՝ ածխի ու սննդամթերքի պաշարները լրացնելու համար: Սակայն դա չբավարարեց նրանց, և 1853 թ. ամերիկյան չորս ռազմանավեր հայտնվեցին ճապոնիայի ափերի մոտ՝ պահանջելով «բացել» նավահանգիստները: 1854 թ. ստորագրվեց ճապոնա-ամերիկյան համաձայնագիրը, որով Սիմոդայում և Յոկոհատայում ամերիկացիները կարող էին ձեռք բերել սննդամթերք, ածուխ, ջուր և նավարկելու համար անհրաժեշտ այլ ապրանքներ:

Եվրոպական երկրների ճնշմամբ նույնպիսի պայմանագրեր ճապոնիան կնքեց Անգլիայի, Ֆրանսիայի, Յուլանդիայի, Ռուսաստանի և այլ երկրների հետ: Կնքվեցին նաև առևտրային պայմանագրեր՝ ամերիկյան և եվրոպական ապրանքները ցածր մաքսատուրքերով ճապոնիա ներմուծելու վերաբերյալ, որոնք արագացրին երկրի ներգրավումը համաշխարհային առևտրի մեջ և ֆեոդալական հարաբերությունների քայքայումը:

Ճապոնիայի երկու նավահանգիստներով կատարվող արտաքին առևտրի ծավալը 1857-1867 թթ. ավելացավ գրեթե 18 անգամ, բայց դրանից առաջին հերթին օգտվում էին օտարերկրացիները, որոնք տնօրինում էին արտաքին, մասամբ նաև՝ ներքին առևտուրը: Օտարերկրացիները օգտվում էին նրանից, որ ճապոնիայում ոսկին թանկ էր արծաթից ընդամենը 5-6 անգամ, իսկ Եվրոպայում և ԱՄՆ-ում՝ 15: Նրանք ներմուծում էին արծաթ և գնում ոսկի՝ ստանալով հսկայական շահույթ: Այդպիսի գործառնությունների հետևանքով տեղի էր ունենում ոսկու արտահոսք, որը քայքայում էր ճապոնիայի տնտեսությունը:

Կառավարությունը ստիպված եղավ այդ ուղղությամբ միջոցներ ձեռնարկել: 1860 թ. 85%-ով կրճատվեց ոսկու պարունակությունը ճապոնական դրամում, ինչի հետևանքով բարձրացան ապրանքների գները:

Ապրանքների, հատկապես բրնձի գների բարձրացումը աղետալի հետևանքներ ունեցավ բնակչության համար: Ժողովրդի դժգոհությունը մեծանում էր: Հատկապես ուղղվում էր սյոգունատի դեմ: Նրա դեմ էին դուրս գալիս նաև սամուրայները և բուրժուական որոշ շրջաններ, որոնք սյոգունին մեղադրում էին երկիրը օտարերկրացիների առջև «բացելու» մեջ ու վախենալով հակաֆեոդալական հեղափոխությունից՝ պահանջում էին երկրից դուրս քշել օտարերկրացիներին և իշխանությունը հանձնել կայսրին:

Ճապոնիայում 1863 թ. սյոգունի և կայսրի կողմնակիցների միջև սկսվեցին քաղաքացիական կռիվներ, որոնք ավարտվեցին 1868 թ. սյոգունատի տապալմամբ և կայսրի իշխանության վերականգնմամբ: Այսպիսով՝ վերացվեց սյոգունատի ինստիտուտը, որը գոյություն ունեցավ ավելի քան վեց ու կես դար:

Պատմաբանները XIX դարի 60-70-ական թվականների դեպքերը ճապոնիայում գնահատում են որպես բուրժուա-դեմոկրատական հեղափոխություն, որը, սակայն, մինչև վերջ չհասցվեց: Երիտասարդ բուրժուազիան ցանկանում էր վերացնել ֆեոդալական սահմանափակումները ռեֆորմների միջոցով, պահպանել իր հողային սեփականությունը և շահագործման կիսաֆեոդալական ձևերը: Նա համաձայնության եկավ խոշոր հողատերերի հետ՝ ստեղծելով միապետա-

կան բուրժուակալվածատիրական ռեակցիոն դաշինք, և անավարտ քողեց հեղափոխությունը:

Ճապոնական պատմաբանները 1868 թ. հեղաշրջումը անվանում են «Մեյձի ի ռեստավրացիա»¹: Երկրի էկոնոմիկայի, քաղաքականության, մշակույթի, սոցիալական հարաբերությունների բնագավառներում սկսեցին իրականացվել մի շարք բարեփոխումներ, որոնք նպաստեցին ֆեոդալական հարաբերությունների արագ վերափոխմանը բուրժուակամի:

Նոր կառավարությունը ամենից առաջ կարգավորեց իր հարաբերություններն օտարերկրյա տերությունների հետ: Կայսրը նրանց հետ կնքած առևտրական պայմանագրերը հաստատեց, որով պահպանվում էր ճապոնիայի կիսազաղութային վիճակը:

Մյուս կարևոր խնդիրը երկրի մասնատվածությունը վերացնելն էր: Դայմոնները 1869 թ. օրենքով զրկվեցին իրենց տիրույթներում ունեցած իրավունքներից, բայց մնացին որպես ժառանգական նահանգապետեր՝ ստանալով պետական կենսաթոշակ, որը հավասար էր նրանց նախկին եկամուտներին: Միայն 1871 թ. վերացվեցին գործող բոլոր իշխանությունները և ստեղծվեցին պրեֆեկտուրաներ:

Այդպիսով՝ երկրում վերացվեց խոշոր ֆեոդալական հողատիրությունը՝ հողերը հետ գնելու միջոցով: Փոխվեց բնակչության դասային բաժանման համակարգը: 1872 թ. սահմանվեց երկու դաս՝ բարձր դասի ազնվականներ և ազնվականներ: Վերջին դասի մեջ մտնում էին սամուրայները և մնացած բնակչությունը: Հռչակվեց զբաղմունքների ազատություն, վերացվեցին համքարությունները, ներքին մաքսերը, բնամթերային հարկը փոխարինվեց դրամակաճով, սահմանվեց միասնական դրամական համակարգ:

Նոր կառավարության առավել կարևոր միջոցառումներից էր 1871-1873 թթ. հողային ռեֆորմը, որով վերացվեց հողի ֆեոդալական (ժառանգական) սեփականությունը և սահմանվեց մասնավոր սեփականություն: Հողը ժառանգաբար օգտագործող գյուղացիները դարձան սեփականատերեր, գրավադրված հողերն անցան վաշխառուներին և ունևոր գյուղացիներին, վարձակալողները հող չստացան:

Հողային ռեֆորմով գյուղացիների հիմնական մասը հող չստացավ կամ դարձավ փոքր հողակտորների սեփականատեր և առաջվա նման վարձով աշխատում էր «նոր» կալվածատերերի համար, որոնք պահպանեցին գյուղացիների շահագործման հին ձևերը:

Գյուղացու համախառն եկամտի կեսը կազմում էր հողահարկը, որը վճարելու համար նրանք գրավադրում էին բաժնեհողերը և, ի

¹ Մեյձի – լուսավորյալ կառավարում: Այդպես են անվանում Միցուհիտո կայսեր կառավարումը, որն սկսվեց 1867 թ.:

վերջո, գրկվում հողից: Դրա մասին է վկայում այն փաստը, որ ռեֆորմից մի քանի տասնամյակ հետո հող վարձակալողները կազմում էին գյուղացիության մոտ 70%-ը:

Այդպիսով՝ 1871-1873 թթ. հողային ռեֆորմը շատ սահմանափակ էր և իր կնիքը դրեց ճապոնիայի սոցիալ-տնտեսական զարգացման վրա: Գյուղացիական մանր տնտեսություններն իրենց բնամթերային կամ կիսաբնամթերային բնույթով, հողի բարձր վարձավճարը և լայնորեն տարածված վաշխառությունը խոչընդոտում էին վարձու աշխատուժի առաջացումը և ներքին շուկայի ընդլայնումը, ուստի՝ նաև բուրժուական հարաբերությունների զարգացումը թե՛ գյուղատնտեսության, թե՛ արդյունաբերության մեջ:

6.6.1. Արդյունաբերական հեղաշրջումը և կապիտալիզմի զարգացումը ճապոնիայում

1868 թ. հեղափոխությունից հետո ճապոնիայում արագանում է բուրժուական հարաբերությունների զարգացումը:

ճապոնիայի տնտեսական զարգացման համար կարևոր էր արդյունաբերական հեղաշրջումը, որն ուներ որոշ առանձնահատկություններ եվրոպական երկրների և ԱՄՆ-ի համեմատությամբ:

1. Արդյունաբերական հեղաշրջումը սկսվեց բանբակագործվածքային արդյունաբերության մեջ XIX դարի 50-60-ական թվականներին՝ դեռևս ֆեոդալիզմի գոյության պայմաններում: Հեղափոխությունից հետո իրականացված բարեփոխումները զգալիորեն արագացրին այն: Սակայն արդյունաբերության զարգացմանը արգելակում էին ներքին շուկայի նեղությունը և օտարերկրյա ապրանքների մրցակցությունը:

2. ճապոնիայում չկար ֆաբրիկա-գործարանային արտադրության ստեղծման համար անհրաժեշտ կապիտալ: Թեև որոշ առևտրականներ և վաշխառուներ կուտակել էին հսկայական դրամական միջոցներ, բայց չէին ցանկանում ռիսկի դիմել՝ ներդնելու արդյունաբերության մեջ: Գերադասում էին շարունակել առևտրավաշխառուական գործունեությունը, ինչպես նաև զբաղվել բանկային գործով, որն ապահովում էր բարձր շահույթների ստացում:

3. Արդյունաբերության զարգացմանը ձեռնամուխ եղավ պետությունը, որն իր սահմանափակ եկամուտների հետ օգտագործեց առևտրավաշխառուական կապիտալի ներկայացուցիչներից վերցրած փոխառությունները: Միևնույն ժամանակ խրախուսվում էին մասնավոր ներդրումները՝ վարկեր, էժան փոխառություններ հարկային արտոնություններ տրամադրելու միջոցով: Պետական այդ-

պիսի հովանավորությունը, որը կարևոր նշանակություն ունեցավ արդյունաբերության զարգացման համար, ճապոնիայում արդյունաբերական հեղաշրջման մյուս կարևոր առանձնահատկությունն էր:

4. ճապոնիան Անգլիայից, Ֆրանսիայից, ԱՄՆ-ից ուշ ոտք դրեց զարգացման կապիտալիստական ուղու վրա և դրա շնորհիվ ընդօրինակեց նրանց փորձը՝ տեխնիկական նվաճումները, արտադրության կազմակերպման առաջավոր ձևերը, որ նույնպես արագացրեց արդյունաբերության զարգացումը:

5. ճապոնական կառավարության համար առաջնակարգ նշանակություն ուներ երկրի պաշտպանունակությունը, ուստի սկսեց ռազմական արտադրության զարգացումից՝ ժամանակակից բանակ և նավատորմ ստեղծելու համար:

Այսպիսով՝ ճապոնական արդյունաբերության զարգացման առաջին փուլում արդեն զգալի էր ռազմական գործոնը:

Մեծ ուշադրություն էր դարձվում տրանսպորտի և կապի զարգացմանը: 1872 թ. կառուցվեց առաջին երկաթուղին՝ 28,8 կմ երկարությամբ, որը Տոկիոն կապեց Յոկահամայի հետ: Սակայն պետության սահմանափակ միջոցները թույլ չէին տալիս ծավալելու երկաթուղային շինարարությունը: 1878 թ. ճապոնիայում երկաթուղիների ընդհանուր երկարությունն ընդամենը 100 կմ էր:

Պետությունը մեծ դեր խաղաց ծովային տրանսպորտի զարգացման գործում: 1874 թ. կառավարությունն անվճար Միցուի ընկերությանը հանձնեց արտասահմանում գնված 13 նավ:

Պետական միջոցներով և օտարերկրյա մասնագետների օգնությամբ 1868-1877 թթ. ճապոնիայում կառուցվեցին 478 արդյունաբերական ձեռնարկություններ, որոնց քանակը 1902 թ. հասավ 6329-ի:

Պետական ձեռնարկությունները ֆինանսական տեսակետից իրենց չէին արդարացնում և մեծավ մասամբ վնասաբեր էին: 1880 թ. կառավարությունը օրենք ընդունեց դրանք մասնավոր մարդկանց վաճառելու մասին, որից օգտվեցին Միցուի, Միցուբիշի, Սումիտոմո, Յասուդա, Կավասակի և այլ խոշոր ընկերություններ՝ ցածր գներով ձեռք բերելով այդ ձեռնարկությունները:

Արդյունաբերության զարգացումը ճապոնիայում արագացավ XIX դարի 80-ական թվականներից և բուռն վերելք ապրեց 1894-1895 թթ. ճապոնա-չինական պատերազմից հետո: Երկաթուղիների երկարությունը կազմեց 2190 կմ, զարգացան ծանր արդյունաբերության ճյուղերը, առավելապես՝ մետաղաձուլությունը և մեքենաշինությունը, ինչպես նաև քիմիական, նավաշինական, տեքստիլ և այլ արտադրությունները:

XIX դարի 90-ական թվականներից ճապոնիայում սկսվում է արտադրության համակենտրոնացումը և մոնոպոլիաների առաջացումը, այդ գործընթացը արագացավ 1897 և 1900 թթ. համաշխար-

հային տնտեսական ճգնաժամի հետևանքով, մանր ու թույլ ձեռնարկությունների քայքայման հաշվին:

Ճապոնիայում առաջին մոնոպոլիստական միավորումներն ստեղծվեցին թեթև արդյունաբերությունում՝ «Բոսեկի ռենգոկայ» կարտելը՝ մանվածքային, «Կյոդո յոսի գոսի կայսյա» սինդիկատը՝ թղթի արտադրության մեջ, և այլն: Ածխարդյունաբերությունում իշխող դիրքեր գրավեցին «Միցուիին» և «Միցուբիշին», նավաշինությունում՝ «Միցուբիշին», «Կավասակին» և «Օսական», պղնձահանքային և մեքենաշինական ճյուղերում՝ «Սումիտոմոն», բանկային գործում՝ Յասուդան և ուրիշներ:

Տնտեսության մեջ առավել մեծ դեր էին խաղում մի քանի խոշոր կոնցեռններ՝ դձայքացուները, որոնք մյուսներից տարբերվում էին կապիտալի հսկայական ծավալով, կառավարության հետ սերտ կապերով և դրանց շնորհիվ՝ արդյունաբերության, առևտրի և ֆինանսների բնագավառում իշխող դիրքով: Դրանք էին Միցուիին, Միցուբիշին, Սումիտոմոն և Յասուդան:

Ճապոնիան XIX դարի վերջին – XX դարի սկզբին արդեն մոնոպոլիստական կապիտալիզմի երկիր էր՝ տնտեսության ռազմաֆեոդալական բնույթով:

6.6.2. Արտաքին էքսպանսիան

Ճապոնիան XIX դարի 70-90-ական թվականներին պայքար ծավալեց արտաքին շուկաներ ձեռք բերելու նպատակով: Կորեական թերակղզու նկատմամբ վերահսկողություն սահմանելու համար 1894-1895 թվականների պատերազմում Ճապոնիան Չինաստանի դեմ հաղթանակ տարավ: Միմոնոսեկիի հաշտության պայմանագրով Ճապոնիան ստացավ զգալի ռազմատուգանք, Կորեայի նկատմամբ վերահսկողություն, ինչպես նաև Չինաստանում ձեռնարկություններ կառուցելու իրավունք: Պատերազմը և ռազմական պատվերների հսկայական աճը խթանեցին ծանր արդյունաբերության զարգացումը: Տնտեսության մեջ ներդրված կապիտալի ընդհանուր ծավալն ավելացավ 2,5 անգամ, ձեռնարկությունները՝ 38%-ով:

Ձավթողական նպատակներ իրականացնելու համար Ճապոնիան մեծ ուշադրություն էր դարձնում նավաշինության զարգացմանը: Երկրում 1903 թ. կար 200 նավաշինական ձեռնարկություն՝ 1897 թ. 81-ի դիմաց:

Պետության ակտիվ հովանավորությամբ 1901 թ. ժամկետից շուտ կատարվեց ռազմածովային ծրագիրը, որի շնորհիվ նավերի քանակը 1894 թ. 55-ից հասավ 76-ի՝ 258 հազ. տոննա ջրատարողությամբ: Ճապոնա-չինական պատերազմում տարած հաղթանակը

զգալիորեն մեծացրեց ճապոնիայի հեղինակությունն աշխարհում: ԱՄՆ-ը և Անգլիան նրան դիտում էին որպես դաշնակից Յեռավոր Արևելքում Ռուսաստանի դեմ պայքարում և հրահրում պատերազմի: Ճապոնիայի և Անգլիայի միջև 1902 թ. կնքվեց Ռուսաստանի դեմ դաշինք, որին աջակցում էր ԱՄՆ-ը: 1904 թ. փետրվարին սկսվեց ռուս-ճապոնական պատերազմը, որն ավարտվեց ճապոնիայի հաղթանակով: Պորտսմուտում 1905 թ. ստորագրվեց հաշտության պայմանագիր, ինչով Ռուսաստանը զգալի տարածքներ էր զիջում ճապոնիային:

Ճապոնիայի քաղաքական և տնտեսական դիրքերը ավելի ամրապնդվեցին Չինաստանում, Կորեայում և Մանջուրիայում, որտեղ փակվեցին դռները ամերիկյան և անգլիական ապրանքների և կապիտալների առջև: Արդեն 1905 թ. այդ երկրների արտաքին առևտրային շրջանառության մեծ մասը բաժին էր ընկնում ճապոնիային:

Երկրի կառավարող շրջանները մեծ հետաքրքրություն էին ցուցաբերում Չինաստանի և Կորեայի բնական ռեսուրսների՝ ածխի, ոսկու, երկաթի հանքաքարի նկատմամբ, որոնց յուրացման համար անհրաժեշտ էին ինվեստիցիաներ: Կապիտալի ներքին կուտակումների ոչ մեծ ծավալների պայմաններում կարևորվում էր ճապոնիա օտարերկրյա ինվեստիցիաների ներգրավումը, որոնց մի մասը պետք է արտահանվեր: Օտարերկրյա կապիտալի ներհոսքը ճապոնիա մեծացնելու համար դեռևս 1897 թ. սահմանվեց ոսկյա ստանդարտը, որ կայունացրեց իենը:

Ճապոնիան 1902-1911 թթ. արտահանեց ներգրավված օտարերկրյա կապիտալի 44%-ը: Նրա ներդրումները Չինաստանում 1902 թ. կազմում էին 1 մլն, 1914 թ.՝ 220 մլն իեն, որը, սակայն, բավարար չէր Չինաստանը և Կորեան տնտեսապես նվաճելու համար:

6.7. ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ XVIII-XIX ԴԱՐԵՐՈՒՄ

Ռուսաստանի սոցիալ-տնտեսական զարգացումը XVIII դարում բնութագրվում էր ճորտատիրության տիրապետությամբ: Միապետությունը հենվում էր ազնվականության վրա և արտահայտում նրա շահերը: Այսպես՝ 1714 թ. Պետրոս I-ի «Միաժառանգության» մասին հրամանագիրը վերացրեց կալվածքի և վրտչիմայի տարբերությունը, 1730 թ. հաստատվեց հողի նկատմամբ ազնվականության ժառանգական սեփականության իրավունքը և արգելվեց ճորտ գյու-

դացիների գնումը ոչ ազնվականների կողմից: ճորտատիրությունը լայն տարածում ստացավ: Միևնույն ժամանակ, XVIII դարի վերջերից սկսվում է դրա քայքայումը և բուրժուական հարաբերությունների ձևավորումը: Արդյունաբերության մեջ անցնում են վարձու աշխատուժի օգտագործմանը, զարգանում են մանուֆակտուրաները, ձևավորվում է համառուսական շուկան:

Ռուսաստանում այդ գործընթացներն սկսվեցին մոտ 1,5 – 2 դար ավելի ուշ՝ Արևմտյան Եվրոպայի որոշ երկրների համեմատությամբ, և եթե այնտեղ անցման ժամանակաշրջանը ավարտվեց բուրժուական հեղափոխություններով ու բուրժուական կարգերի հաստատմամբ, ապա Ռուսաստանում տևեց շատ երկար և անավարտ մնաց մինչև XX դարի սկիզբը:

Այդ տարբերություններով հանդերձ, Ռուսաստանում, ինչպես և Արևմտյան Եվրոպայի երկրներում, կապիտալիզմի զարգացման նախնական փուլում իրականացվում էր մերկանտիլիզմի քաղաքականություն: Ձևավորվող առևտրաարդյունաբերական բուրժուազիան չունեի բավական քաղաքական, տնտեսական ուժ, և արդյունաբերության ու առևտրի զարգացմանը ձեռնամուխ եղավ պետությունը, որը ձգտում էր շատ ապրանքներ արտահանել, քիչ ներմուծել և դրական առևտրային հաշվեկշիռ ստեղծելու միջոցով ապահովել ոսկու և արծաթի ներհոսքը երկիր:

Այդ քաղաքականությունը վառ դրսևորվեց Պետրոս I-ի օրոք, որը բարեփոխումների միջոցով ձգտում էր վերացնել Ռուսաստանի հետամնացությունը Արևմուտքից:

Մերձբալթիկայի նվաճումը, Պետերբուրգի հիմնադրումը, Սև և Ազովի ծովերի ափերին հաստատվելը նպաստում էին Ռուսաստանի արտաքին տնտեսական կապերի աշխուժացմանը:

Ռուսաստանի տարածքը 14,5 մլն քառ. կմ-ից XVIII դարում հասավ մինչև 16,8 մլն քառ. կմ-ի, բնակչությունը՝ 13 մլն-ից մինչև 29 մլն մարդու:

Պետրոս I-ի վերափոխումների կարևոր հետևանքներից մեկը մանուֆակտուրաների տարածումն էր: Ռուսաստանում XVIII դարի սկզբին կար 200, իսկ վերջին՝ 1200 մանուֆակտուրա սև և գունավոր մետալուրգիայի, վառողի, մահուղի, կաշվի, ապակու, մետաքսի արտադրություններով:

Մանուֆակտուրաները ստեղծվում էին ինչպես գանձարանի, այնպես էլ մասնավոր մարդկանց միջոցներով: Այդ մարդիկ պետությունից ստանում էին վարկեր, անվճար հող, ազատվում որոշ հարկերից:

Ձարգանում էին վոտչինային մանուֆակտուրաները, որոնք վերանշակում էին կալվածքներում ստեղծվող հումքը:

ճորտատիրության պայմաններում վարձու աշխատուժի պակասը լրացնելու համար 1721 թ. հրամանագրով ոչ ազնվականներին թույլ էր տրվում զնելու գյուղեր և մանուֆակտուրաներում օգտագործելու ճորտ գյուղացիների աշխատանքը:

Հայրենական արդյունաբերության զարգացմանն էր ուղղված նաև Պետրոս I-ի արտաքին առևտրային քաղաքականությունը, որը հովանավորչական էր: Ռուսաստանում 1724 թ. սահմանված մաքսատուրքերը կազմում էին ապրանքի զնի 10-75%-ը: Բարձր մաքսերը պետք է պաշտպանեին հայրենական արդյունաբերությունը օտարերկրյա ապրանքների մրցակցությունից:

Երկրի առևտրի հիմնական կենտրոնը Պետերբուրգն էր, որով իրականացվում էր արտաքին առևտրային շրջանառության 90%-ը: Այդ շրջանառությունը 1750 թ. 1725 թ. համեմատությամբ ավելացավ երկու անգամ, իսկ 1796 թ. կազմեց 80 մլն ռուբլի: Ռուսաստանի հիմնական առևտրային գործընկերներն էին Անգլիան և Յուստինիան, իսկ Արևելքի երկրներից՝ Պարսկաստանը, Չինաստանը, Թուրքիան:

Պետրոս I-ի բարեփոխումները, Հյուսիսային պատերազմը, նավատորմի կառուցումը պահանջում էին հսկայական ծախսեր, որոնք ծածկվում էին հիմնականում հարկերի հաշվին: Պետրոս I-ի օրոք հարկային լուծը էլ ավելի ծանրացավ, ծխահարկը փոխարինվեց գլխահարկով, որից ազատվում էին ազնվականները և հոգևորականները: Բյուջեի պակասուրդը ծածկվում էր նաև փոխառությունների միջոցով: Առաջին արտաքին փոխառությունը Ռուսաստանը ստացավ 1769 թ., իսկ 1796 թ. նրա արտաքին պարտքը կազմեց ավելի քան 41 մլն ռուբլի:

Կատարելագործվում էր դրամական համակարգը, որի հիմքում դրվեց տասնորդական սկզբունքը՝ ռուբլի, գրիվենիկ, կոպեկ: Հիմնական դրամական միավորներ դարձան պղնձյա կոպեկը՝ մանր առևտրի, արծաթյա ռուբլին՝ խոշոր առևտրային գործարքների համար: Դրամի հատումը դարձավ պետության մենաշնորհը: Ոսկու և արծաթի արտահանումն արգելվեց:

Ռուսաստանում XVIII դարում սկսեց գործել նաև վարկը՝ 1754 թ. հիմնվեցին Ազնվականական և Առևտրային բանկերը, 1786 թ.՝ Պետական փոխառության բանկը:

Այդպիսով՝ XVIII դարի վերջին Ռուսաստանում ֆեոդալա-ճորտատիրական հարաբերությունների պահպանման և ծաղկման պայմաններում ձևավորվում էին բուրժուական հարաբերությունները:

* *
*

Ռուսաստանում XIX դարի սկզբին ճորտատիրությունը ճգնաժամ էր ապրում: Բնատնտեսության տիրապետությունը, բնակչության գնողունակության ցածր մակարդակը և ներքին շուկայի նեղությունը, վարձու աշխատուժի պակասը, կապիտալի կուտակման, ինչպես նաև արդյունաբերության և գյուղատնտեսության զարգացման ցածր մակարդակը բնորոշում էին տնտեսությունը և պայմանավորում դրա հետ մնալը Արևմուտքի երկրներից ու ԱՄՆ-ից:

Միևնույն ժամանակ փլուզվում էին ճորտատիրության հիմքերը՝ ապրանքադրամային հարաբերությունների զարգացման հետևանքով քայքայվում էր բնատնտեսությունը, հողագրկվում էին գյուղացիները և ազնվականները, ճորտ գյուղացիները աշխատանք էին փնտրում քաղաքներում, կալվածքներում սկսում էին օգտագործել ավելի էժան վարձու աշխատուժը:

Նոր, բուրժուական հարաբերությունները տարածվում էին արդյունաբերության մեջ, որի զարգացմանը նպաստեց 1812 թ. պատերազմը և Ռուսաստանի միանալը «Ցամաքային բլոկադային»: Անգլիական ապրանքների ներմուծման արգելման հետևանքով մեծացան ներդրումները արդյունաբերությունում, արագացավ արտադրության աճը նաև ռազմական պատվերների մեծացման հաշվին:

Արդյունաբերության համար առավել կարևոր էր արդյունաբերական հեղաշրջումը, որը Ռուսաստանում սկսվեց XIX դարի 30-40-ական թվականներին և ավարտվեց 1880-ական թվականներին: Դա ուներ որոշ առանձնահատկություններ: Վերջինս սկսվեց դեռևս ճորտատիրության պայմաններում, երբ չկար վարձու աշխատուժի բանակ, նեղ էր ներքին շուկան, ուստի և՛ կայանում էր դանդաղ, եվրոպական երկրների համեմատությամբ՝ ուշացումով: Բնականաբար, Ռուսաստանը օգտագործեց Անգլիայի և մյուս երկրների փորձը և տեխնիկական նվաճումները:

Արդյունաբերական հեղաշրջումը Ռուսաստանում սկսվեց կապիտալի դանդաղ կուտակման պայմաններում, կապիտալ, որի հիմնական աղբյուրներն էին ազգային ծայրամասերի թալանը, ներքին և արտաքին առևտուրը, ռազմական պատվերներն ու կապալները, պետական հովանավորությունը, օտարերկրյա վարկերը:

Արդյունաբերական հեղաշրջումը Ռուսաստանում, ինչպես և մյուս երկրներում սկսվեց բամբակագործական արդյունաբերությունից, որտեղ ազատ վարձու աշխատուժը կազմում էր բանվորների 95%-ը: Վերամշակված բամբակի քանակը XIX դարի սկզբին ավելացավ գրեթե 50 անգամ և 1859 թ. կազմեց մոտ 3 մլն փուֆ: Տեխնիկական

վերակառուցումը արագ էր տեղի ունենում շաքարի արդյունաբերության մեջ: Մյուս ճյուղերում մեքենաների օգտագործումը սկսվեց ավելի ուշ: Ճորտատիրական կարգը արգելակում էր տեխնիկական հեղափոխությունը:

Ֆեոդալա-ճորտատիրական հարաբերությունները խոչընդոտում էին նաև ֆինանսների և դրամաշրջանառության կայունացումը, չէին ապահովում ռազմական կարիքների և պետական ապարատի պահպանման համար անհրաժեշտ եկամուտների ստացումը: Բյուջեի մշտական պակասուրդը ցարիզմը ծածկում էր փոխառություններով և թղթադրամի էմիսիայով, դրանը արժեզրկվում էր: Կայունացնելու համար 1839-1842 թթ. Ռուսաստանում կատարվեց դրամական ռեֆորմ, որով թղթադրամները փոխանակվում էին ոսկով և արծաթով ապահովված վարկային տոմսերով՝ 3 ռուբլի 50 կոպեկ՝ մեկ ռուբլու դիմաց փոխարժեքով: Սակայն շուտով վարկային տոմսերը արժեզրկվեցին, դադարեց դրանց փոխանակումը արծաթով: Դրանց փոխարժեքը 1861 թ. ընկավ մինչև 88,7 կոպեկ՝ ոսկով:

Ռուսաստանում XIX դարի կեսերին պայմաններ ստեղծվեցին ճորտատիրական իրավունքի վերացման համար: Ալեքսանդր II թագավորը 1861 թ. փետրվարին ստորագրեց մանիֆեստ: Դա բաղկացած էր երեք հիմնական մասերից՝ գյուղացիների անձնական կախման վերացում կալվածատերերից, նրանց բաժնեհողերի հատկացում ու պարտույթների որոշում և բաժնեհողերի հետ գնում:

1861 թ. օրենքով գյուղացիները ստացան անձնական ազատություն, սակայն հողերը ճանաչվեցին կալվածատերերի սեփականությունը: Գյուղացին կարող էր հետզհետե տնամերձը, իսկ բաժնեհողը՝ միայն կալվածատիրոջ համաձայնությամբ: Հողը տրվում էր համայնքներին, որոնք բաշխում էին տնտեսությունների միջև: Առանց համայնքների համաձայնության գյուղացին չէր կարող վաճառել հողը և հեռանալ գյուղից: Մինչև բաժնեհողերի հետգնումը գյուղացիները առաջվա պես կատարում էին կոռային աշխատանքներ և վճարում բահրա: Բաժնեհողերի չափը սահմանվում էր ըստ հողերի բերքատվության, ուստի ամենացածրը՝ սևահողային գոտում էր: Եթե գյուղացու բաժնեհողը մեծ էր սահմանված չափից, ապա «կտրում» էին, ինչպես նաև՝ այն դեպքում, երբ կալվածատիրոջը մնում էր ամբողջ հողի 1/3-ից պակաս:

Հետգնման գումարը որոշվում էր ոչ թե հողի շուկայական գնով, այլ բահրայի կապիտալացմամբ, ինչը պահպանում էր կալվածատերերի նախկին եկամուտները:

Բաժնեհողերի հետգնումը պարտադիր էր, որովհետև գյուղացին վճարում էր գումարի միայն 20%-ը: Մնացածը կալվածատերերը ստանում էին պետական արժեթղթերի ձևով, որոնք տարեկան 5% եկամուտ էին բերում: Գյուղացիները իրենց պարտքը պետությանը

պետք է վերադարձնեին 49 տարվա ընթացքում՝ տոկոսների հետ: Նույն ձևով ազատվում էին նաև պետական և ուղեվային գյուղացիները:

Ճորտատիրությունը Ռուսաստանում վերացվեց գյուղացիության համար շատ ծանր պայմաններով: Կալվածատերերը ոչ միայն պահպանեցին լավագույն հողերը, այլև գրավեցին գյուղացիական հողերի մոտ 40%-ը, ստիպելով գյուղացիներին վճարելու հողի շուկայական գնից երեք անգամ ավելի: Կալվածատիրական գյուղացիների կեսից ավելին ստացան երեք դեսյատինից (1,09 հա) փոքր հողակտորներ և հետագայում ստիպված էին հողը վարձակալելու ու առաջվա պես կոռային աշխատանքներ կատարելու:

Դրանով հանդերձ՝ ճորտատիրության վերացումը չափազանց կարևոր նշանակություն ունեցավ: Ճանապարհի հարթեց երկրում նոր՝ բուրժուական հարաբերությունների զարգացման համար:

**ԱՌԱՋԱՏԱՐ ԲՈՒՐԺՈՒԿԱՆ ԵՐԿՐՆԵՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ
ՋԱՐԳԱՑՈՒՄԸ ՄՈՆՈԴՈՒԼԻՄՏԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԻԶՄԻՆ
ԱՆՑՄԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ (XIX դարի վերջ- XX դարի սկիզբ)**

**7.1. ԵՐԿՐՈՐԴ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒ-
ԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԱՐՏԱԴՐՈՂԱ-
ԿԱՆ ՈՒԺԵՐԻ ՋԱՐԳԱՑՈՒՄԸ**

XIX դարի վերջին - XX դարի սկզբին արագացան համաշխարհային արտադրողական ուժերի զարգացման տեմպերը, ինչի շնորհիվ ավելացավ արդյունաբերական արտադրանքի ծավալը շատ երկրներում: Ընդամին, քանակական փոփոխություններն ուղեկցվում էին բուռն զարգացմամբ տեխնիկայի, որի նորույթներն ընդգրկում էին արտադրության, տրանսպորտի, կենցաղի տարբեր ոլորտները: Արմատական փոփոխություններ կատարվեցին արդյունաբերական արտադրության կազմակերպման, տեխնիկայի և տեխնոլոգիայի բնագավառներում: Առաջացան արդյունաբերության բազմաթիվ նոր ճյուղեր, տեղաշարժեր տեղի ունեցան արտադրողական ուժերի տեղաբաշխման գործում: Նման թռիչքը կապված էր նշված շրջանում իրագործվող գիտատեխնիկական հեղափոխության հետ:

XIX – XX դարերի սահմանագլխին ծաղկում ապրեց բնական գիտությունը. ստեղծվեց գիտության միասնական համակարգ: Դրան նպաստեցին էլեկտրոնի և ռադիոակտիվության հայտնագործումները: Նոր գիտական հեղափոխությունը առաջինը սկսվեց ֆիզիկայում: Մ.Պլանկը ստեղծեց քվանտային տեսությունը, իսկ Ա.Էյնշտեյնը՝ հարաբերականության տեսությունը: Նշված շրջանում սերտ կապ ձևավորվեց գիտության ու տեխնիկայի միջև, որը պայմանավորեց գիտության աստիճանական վերածումը անմիջական արտադրողական ուժի: «Փոքր» գիտությունը վերածեց «մեծ» գիտության, ստեղծվեցին խոշոր գիտական ինստիտուտներ և լաբորատորիաներ:

Գիտության բնագավառում հեղափոխական վերափոխումների գործընթացն այնուհետև ընդգրկեց տեխնիկական և տեխնոլոգիան:

Էլեկտրականության հիման վրա ստեղծվեց արդյունաբերության և տրանսպորտի նոր էներգետիկ բազա: 1867 թ. Գերմանիայում Վ.Սիմենսը հայտնագործեց էլեկտրամագնիսական զեներատորը, որի օգնությամբ մագնիսական դաշտում հնարավոր էր ստանալ էլեկտրական հոսանք: 1870-ական թվականներին ստեղծվեց դինամոմեքենան, որը կարելի էր օգտագործել ոչ միայն որպես էլեկտրաէներգիայի զեներատոր, այլև՝ էլեկտրաէներգիան մեխանիկականի վերածելու շարժիչ: 1883 թ. Թ.Էդիսոնը (ԱՄՆ) ստեղծեց առաջին ժամանակակից զեներատորը, իսկ 1891 թ.՝ տրանսֆորմատորը (լարերով հեռավորության վրա էլեկտրաէներգիա փոխանցելու համար):

1884 թ. անգլիացի ճարտարագետ Չ.Պարսոնսը ստեղծեց շոգե-տուրբին, որոշ ժամանակ անց ստեղծվեցին հիդրավլիկ տուրբիններ, որոնք առաջին անգամ 1896 թ. տեղադրվեցին Նիագարայի հիդրոէլեկտրակայանում:

Հատկապես կարևորվեց ներքին այրման շարժիչի գյուտը: 1880-ական թվականների կեսերին գերմանացի ճարտարագետներ Գ.Դայմլերը և Կ.Բենցը ստեղծեցին հեղուկ վառելիքով (բենզինով) աշխատող շարժիչների նոր մոդելներ, իսկ 1986-87 թթ. գերմանացի ճարտարագետ Ռ.Դիզելը հնարեց օգտակար գործողության մեծ գործակցով ներքին այրման շարժիչ: Այդ շարժիչը հարմարեցվեց ծանր հեղուկ վառելիքով աշխատելուն և լայն կիրառություն գտավ արդյունաբերության և տրանսպորտի ճյուղերում:

1906 թ. ԱՄՆ-ում ի հայտ եկան ներքին այրման շարժիչներով աշխատող տրակտորներ, որոնք գյուղատնտեսության մեջ կիրառվեցին հաջորդ տարվանից: Դրանց զանգվածային արտադրությունն սկսվեց առաջին համաշխարհային պատերազմի տարիներին:

Կարևոր ճյուղ դարձավ էլեկտրատեխնիկան: Լայն տարածում գտավ էլեկտրական լուսավորությունը: Լամպերի գյուտը պատկանում է ռուս գիտնականներ Ա.Լոդիգինին և Պ.Յաբլոչկովին, ամերիկացի Թ.Էդիսոնին:

Երկրորդ գիտատեխնիկական հեղափոխությունը էլեկտրատեխնիկայի այնպիսի ճյուղի լայն զարգացումն էր, ինչպիսին կապի միջոցների տեխնիկան է: 1876 թ. ամերիկացի Ա.Բեյլը հնարեց հեռախոսը: Այդ ապարատում պակասող լսափողի գյուտի հեղինակը Թ.Էդիսոնն է (նրանից անկախ՝ նաև անգլիացի Դ.Յուզը): Լսափողի շնորհիվ մեծացավ հեռախոսային ապարատի գործողության շառավիղը:

Առաջին հեռախոսային կայանը ստեղծվեց ԱՄՆ-ում՝ 1877 թ.: Երկու տարի անց շարք մտավ Փարիզի հեռախոսային կայանը, իսկ

1881 թ. նման կայաններ ստեղծվեցին Բեռլինում, Պետերբուրգում, Մոսկվայում, Օդեսայում, Ռիգայում, Վարշավայում:

Երկրորդ գիտատեխնիկական հեղափոխության ձեռքբերումներից էր ռադիոյի գյուտը: Ռադիոն անթել էլեկտրակապ էր, որը հիմնված էր էլեկտրամագնիսական ալիքների օգտագործման վրա: Դրանք ռադիոալիքներ էին, որոնք առաջինը հայտնաբերեց գերմանացի ֆիզիկոս Գ.Հերցը: Նման կապի գործնական կիրառումը իրագործեց ռուս ականավոր գիտնական Ա.Պոպովը 1885 թ. մայիսի 7-ին՝ ստեղծելով աշխարհում առաջին ռադիոընդունիչը: Այնուհետև տեղի ունեցավ ռադիոգրի փոխանցումը տարածության վրա, իսկ 1897 թ. իրագործվեց ռադիոհեռագրային կապ նավերի միջև՝ 5 կմ շառավղով: 1899 թ. կայուն տևական կապ հաստատվեց 43 կմ հեռավորության վրա:

XX դարի սկզբին առաջացավ էլեկտրատեխնիկայի ևս մեկ ճյուղ՝ էլեկտրոնիկան: 1904 թ. անգլիացի գիտնական Ջ.Ֆլեմինգը ստացավ երկէլեկտրոդային լամպ (դիոդ), իսկ 1907 թ. ամերիկացի կոնստրուկտոր Լի դե Ֆորեստը՝ եռէլեկտրոդային լամպ (տրիոդ):

Այսպիսով՝ էլեկտրաէներգիայի արդյունաբերական կիրառումը, էլեկտրակայանների կառուցումը, քաղաքների էլեկտրական լուսավորման ընդլայնումը, հեռախոսային կապի զարգացումը պայմանավորեցին էլեկտրատեխնիկական արդյունաբերության արագ վերելք:

Երկրորդ գիտատեխնիկական հեղափոխությունը ոչ միայն նպաստեց արդյունաբերության նոր ճյուղերի ստեղծմանը, այլև իր ազդեցությունը թողեց հին ճյուղերի, ամենից առաջ՝ մետաղագործության վրա: Մեքենաշինության, նավաշինության, ռազմական արդյունաբերության, երկաթուղային տրանսպորտի արագ զարգացումը մեծ պահանջ ներկայացրին սև մետաղների նկատմամբ:

Մետաղագործության մեջ իրագործվեցին տեխնիկական նորանվածություններ: Նշանակալիորեն փոփոխվեցին կոնստրուկցիաները և ավելացան դոմենյան վառարանների ծավալները: Գ.Բեսսեները (Անգլիա), Պ.Մարտենը (Ֆրանսիա) ներդրեցին պողպատի ստացման նոր եղանակներ (1856 և 1864 թթ.): Պողպատի ստացման եղանակը ավելի կատարելագործեց անգլիացի մետաղագործ Ա.Թոմասը 1878 թ.:

1880-ական թվականներին կիրառվեց էլեկտրալուծական եղանակը ալյումինի, իսկ 1878թ.՝ պղնձի ստացման գործընթացում:

Երկրորդ գիտատեխնիկական հեղափոխության կարևորագույն ուղղությունը դարձան վերափոխումները տրանսպորտային համակարգում, ի հայտ եկան տրանսպորտի նոր տեսակներ և կատարելագործվեցին հաղորդակցության գոյություն ունեցող միջոցները:

XIX դարի վերջին տասնամյակում ավարտվեց անցումը պողպատյա երկաթուղագծերին: Պողպատն օգտագործվում էր նաև կա-

մուրջների կառուցման ժամանակ: 1874 թ. Միսիսիպի գետի վրա Սենթ-Լուիս քաղաքի մոտ կառուցվեց պողպատյա կամուրջ (հեղինակ՝ Ջ.Իդս): Նյու-Յորքի մոտ կառուցված Բրուկլինյան կախովի կամրջի բանուկ մասը, որի կենտրոնական հատվածը 486 մետր է, պահում էին պողպատյա ճոպանները:

Ռուսաստանում խոշորագույն պողպատյա կամուրջներ կառուցվեցին Վոլգայի (1879 թ.) և Ենիսեյի (1891 թ.) վրա ճարտարագետ Ն.Բոգոլյուբսկու ղեկավարությամբ: Ալպերով անցնող երկաթգծերի համար փորվեցին խոշոր թունելներ՝ Սեն-Գոթարդի (1880 թ.), Սիմալունյան (1905 թ.): Ստորջրյա թունելներից ամենանշանավորը Անգլիայում 1885 թ. կառուցված յոթ կիլոմետրանոց Յյուսիսային թունելն էր: Ռուսաստանում ևս կառուցվեցին թունելներ՝ Սուրամինը՝ Կովկասում, Յաբլոնովյանը՝ Յեռավոր Արևելքում:

Կատարելագործվեց երկաթուղիների շարժակազմը. աճեցին շոգեքարշերի հզորությունը, քաշող ուժը, արագությունը, քաշը, չափերը, վագոնների բեռնատարողությունը: 1872 թ. երկաթուղային տրանսպորտում մտցվեցին ավտոմատ արգելակներ: 1890-ական թվականներին մի շարք երկրներում կառուցվեցին մերձքաղաքային և միջքաղաքային էլեկտրական երկաթուղագծեր:

Ձարգացավ նավատորմը, XX դարի սկզբին կառուցվեցին ջերմամակեր: 1914 թ. գործարկվեց Պանամայի ջրանցքը (միացնելով երկու օվկիանոսները), որն ուներ ոչ միայն տնտեսական, այլև քաղաքական ու ռազմական նշանակություն:

Երկրորդ գիտատեխնիկական հեղափոխության դարաշրջանում ստեղծվեց տրանսպորտի նոր տեսակը՝ ավտոմեքենան: Առաջին ավտոմեքենաները նախագծեցին գերմանացի ճարտարագետներ Կ.Բենցը և Գ.Դայմլերը: Ավտոմեքենաների արդյունաբերական արտադրությունը սկսվեց 1890-ական թվականներին: Ճյուղի զարգացմանը նպաստեց 1895 թ. իռլանդացի ճարտարագետ Ջ.Դենլոպի կողմից ռետինե անվաղողի գյուտը: Ավտոմեքենաշինության բուռն վերելքը հանգեցրեց խճուղային ճանապարհների կառուցման տեմպերի արագացմանը:

XIX-XX դարերի սահմանագլխին ստեղծվեց օդային տրանսպորտը (դիրիժաբլ և ինքնաթիռ): Ինքնաթիռաշինության բնագավառում հայտնի էին Ա.Սոժայսկին (Ռուսաստան), Կ.Ադերը (Ֆրանսիա), Խ.Մաքսիմը (ԱՄՆ): 1890-ական թվականներին նրանց նախագծած ինքնաթիռներն աշխատում էին շոգեշարժիչներով, 1903 թ. ԱՄՆ-ում Ռայտ եղբայրները ավիացիայում կիրառեցին ներքին այրման շարժիչներ:

Երկրորդ գիտատեխնիկական հեղափոխությանը բնութագրական էր արտադրության բոլոր ճյուղերում հումքի մշակման քիմիական մեթոդների կիրառումը: Մեքենաշինության, էլեկտրատեխնիկական

արտադրության, տեքստիլ արդյունաբերության մեջ լայնորեն կիրառվեցին սինթետիկ թելերը, պլաստմասսաները, մեկուսիչ նյութերը: Դեռևս 1869 թ. ամերիկյան գիտնական Ջ.Յայետը ստացավ ցելուլոիդ, այնուհետև արտադրվեցին բակելիտը, կարբոլիտը և այլ պլաստմասսաներ: 1884 թ. ֆրանսիացի ճարտարագետ Գ.Շարդոնեն նշակեց արհեստական թելի ստացման մեթոդ, որի հիման վրա արտադրվեց նիտրոմետաքս, իսկ 1903 թ.՝ արհեստական մետաքս:

1899-1900 թթ. ռուս գիտնական Ի.Կոնդակովը ածխաջրերից ստացավ արհեստական կաուչուկ: Առաջարկվեցին ամոնիակի պատրաստման մեթոդներ, որը ելակետ էր ազոտաթթվի, ինչպես նաև պարարտանյութերի և պայթուցիկ նյութերի ստացման:

Երկրորդ գիտատեխնիկական հեղափոխության նվաճումն էր կրեկինգ-պրոցեսը՝ բարձր ճնշման և ջերմաստիճանի օգնությամբ նավթի քայքայման մեթոդը: Հատկապես ակնառու են Դ.Մենդելեևի ծառայություններն այդ բնագավառում:

Կատարելագործվեց նաև թեթև, պոլիգրաֆիական արտադրությունների և արդյունաբերության այլ ճյուղերի տեխնիկական բազան:

Կարևոր նշանակություն ունեցան հոսքային համակարգի ստեղծումը և հարահոսի (կոնվեյերի) գյուտը: Ջարգացավ ռազմական տեխնիկան, ստեղծվեցին գնդացիրների (Մաքսիմ), ավտոմատ հրացանների մի քանի տիպեր, ավտոմատացվեց հրետանին, ավելացավ պայթուցիկ նյութերի արտադրությունը: 1915 թ. ռուս ճարտարագետ Ն.Ջելինսկին ստեղծեց հակազագ:

Առաջին համաշխարհային պատերազմը նպաստեց ռազմական տեխնիկայի բուռն զարգացմանը:

Երկրորդ գիտատեխնիկական հեղափոխությունն ընդգրկեց արդյունաբերական արտադրության բոլոր ոլորտները: Եթե նախորդ դարաշրջանում հայտնագործությունների և գյուտերի քանակը քիչ էր, ապա երկրորդ գիտատեխնիկական հեղափոխության ժամանակ հաշվվում էր հազարներով: Միայն ամերիկացի Թ.Էդիսոնի կողմից արտոնագրվել է ավելի քան 1000 գյուտ:

Իր բնույթով երկրորդ գիտատեխնիկական հեղափոխությունը տարբերվում էր XVIII-XIX դարերի արդյունաբերական հեղաշրջումից: Եթե արդյունաբերական հեղաշրջումը հանգեցրեց մեքենայական ինդուստրիայի ստեղծմանը և հասարակության սոցիալական կառուցվածքի փոփոխությանը (երկու նոր դասակարգերի՝ բուրժուազիայի և բանվոր դասակարգի կազմավորմանը), բուրժուազիայի տիրապետության հաստատմանը, ապա երկրորդ գիտատեխնիկական հեղափոխությունը՝ արտադրության տեխնիկայում որակական փոփոխությունների, մեքենայական ինդուստրիայի վերակառուցման, գիտության նվաճումների օգտագործման: Այդ պատճառով

էլ կոչվում էր ոչ թե արդյունաբերական, այլ՝ գիտատեխնիկական հեղափոխություն:

Գիտատեխնիկական հեղափոխությունը հանգեցրեց արդյունաբերության մի շարք նոր ճյուղերի (էլեկտրատեղակայման, էլեկտրատեխնիկա, քիմիական, նավթամշակման, նավթաքիմիական արտադրություն, ավտո և ինքնաթիռաշինություն, երկաթբետոնի և պորտլանդ ցեմենտի արտադրություն) ստեղծմանը:

Մեքենաշինության բուռն զարգացման շնորհիվ փոխվեց սև մետաղագործության կառուցվածքը, բարձրացավ պողպատի նկատմամբ եղած պահանջը: Մեծացավ արտադրության միջոցների արտադրության («Ա» խմբի) ճյուղերի տեսակարար կշիռը: Ստեղծվեցին բաժնետիրական ընկերություններ, մոնոպոլիստական միավորումներ:

Արտադրողական ուժերի բուռն զարգացման անմիջական հետևանքը մոնոպոլիաների կազմակերպման նյութական նախադրյալների ստեղծումն էր, կապիտալիզմի արդյունաբերական փուլից և ազատ մրցակցությունից մոնոպոլիստական փուլին անցումը: Մոնոպոլացման գործընթացին նպաստեցին նաև XIX դարի վերջերին և XX դարի սկզբներին (1873, 1883, 1893, 1901-1903թթ.) պարբերաբար տեղի ունեցող տնտեսական ճգնաժամերը: Դրանց ընթացքում սնանկանում էին մանր ու միջին տասնյակ հազարավոր ձեռնարկություններ, ուստի՝ խթանվում էր արտադրության և կապիտալի կենտրոնացումն ու համակենտրոնացումը:

Մոնոպոլիան, որպես արտադրության և կապիտալի կազմակերպման ձև, XIX դարի վերջին - XX դարի սկզբին առաջատար դիրքեր զրավեց աշխարհի զարգացած երկրների սոցիալ-տնտեսական կյանքում: Երկրորդ գիտատեխնիկական հեղափոխության անմիջական հետևանքը սեփականության անհատական ձևի փոխարեն բաժնետիրական ձևի հաստատումն էր, իսկ գյուղատնտեսության մեջ՝ ֆերմերային, կոոպերատիվ ձևի: Այդ փուլում աշխարհում առաջատար դիրքեր զրավեցին «երիտասարդ» կապիտալիստական երկրներ ԱՄՆ-ը և Գերմանիան, մինչդեռ Անգլիան և Ֆրանսիան զիջեցին իրենց դիրքերը: Զգալի աշխուժացում էր ապրում ճապոնիայի տնտեսությունը:

7.2. ԱՄՆ-Ի ՎԵՐԱԾՈՒՄԸ ԱՇԽԱՐՀԻ ԱՌԱՋԱՏԱՐ ՏԵՐՈՒԹՅԱՆ (1871-1913 ԹԹ.)

7.2.1. Տնտեսական աճի գործոնները

ԱՄՆ-ը XIX դարի վերջին - XX դարի սկզբին տնտեսական զարգացման բարձր տեմպերի շնորհիվ առաջ անցավ բոլոր երկրներից և գրավեց աշխարհում առաջին տեղը արդյունաբերական և գյուղատնտեսական արտադրության ծավալով: Արդյունաբերական արտադրությունը 1860-1900 թթ. ավելացավ 7 անգամ: Եթե 1860 թ. այս բնագավառում ԱՄՆ-ը զգալիորեն զիջում էր Անգլիային, ապա XX դարի սկզբին արդեն կրկնակի գերազանցում էր, առաջ անցնելով նաև Ֆրանսիայից և Գերմանիայից: ԱՄՆ-ին բաժին էր ընկնում համաշխարհային արդյունաբերական արտադրության 38%-ը:

ԱՄՆ-ի տնտեսական արագ զարգացման սոցիալ-տնտեսական գործոններն էին.

1. 1861-1865 թթ. քաղաքացիական պատերազմը և բուրժուադեմոկրատական վերափոխումները վերացրին հարավում ստրկատիրական համակարգը, որը խոչընդոտում էր արտադրողական ուժերի զարգացումը, և ապահովեցին ձեռներեցության ավելի մեծ հնարավորություններ, քան բոլոր հեղափոխությունները Եվրոպայում: Ազատագրվեցին մոտ 4 մլն սևամորթ ստրուկներ, որոնք համալրեցին երկրում վարձու աշխատուժի բանակը և ընդլայնեցին ներքին շուկան: Միևնույն ժամանակ, թույլ տալով հողերի գնումը, կառավարությունը պայմաններ ստեղծեց արևմուտքի ընդարձակ բերրի հողերի գաղութացման և ֆերմերային տնտեսությունների արագ զարգացման համար:

2. Մեծ նշանակություն ուներ այն, որ ԱՄՆ-ում ինդուստրացումը սկսվեց ավելի ուշ, և նա օգտագործեց Անգլիայի արտադրական փորձը: Ավելին, արդյունաբերական ձեռնարկությունները ստեղծվում էին գիտության ու տեխնիկայի նորագույն նվաճումների հիման վրա, զինվում նորագույն սարքավորումներով և արտադրության կազմակերպման առաջավոր ձևերով: Աշխարհում առաջին անգամ օգտագործվեցին ժամանակաչափումը, հոսքային համակարգը, մասնագիտացումը, որոնց շնորհիվ աշխատանքի արտադրողականությունը ամերիկյան ձեռնարկություններում 3-5 անգամ բարձր էր եվրոպականի համեմատությամբ:

3. Արտադրության զարգացման համար հեղափոխական նշանակություն ուներ էլեկտրական էներգիայի լայն կիրառումը, որի հաշվին 1914 թ. բավարարվում էր արդյունաբերության էներգետիկ պահանջների 33%-ը, իսկ ամերիկյան բանվորների էներգազինվածությունը 4,5 անգամ բարձր էր անգլիականից:

4. ԱՄՆ-ում արդյունաբերության զարգացումը հիմնվում էր տարողունակ և անընդհատ ընդլայնվող ներքին շուկայի վրա: Բարձր վարձատրվող աշխատավորները, ունևոր ֆերմերները և հարուստ ձեռներեցները մեծ պահանջ էին ներկայացնում ոչ միայն սպառման

առարկաների, այլև հուճքի և արտադրության միջոցների նկատմամբ՝ ապահովելով դրանց իրացումը և խթանելով արտադրության աճը:

5. Ներքին շուկայի ընդլայնմանը ԱՄՆ-ում նպաստում էր երկաթուղային շինարարությունը, որն ուժեղացնում էր տնտեսական կապերը երկրի տարբեր շրջանների միջև: Երկաթուղիները XX դարի սկզբին մինչև հետ կապեցին բոլոր նահանգները: Կառուցվեցին չորս անդրցամաքային մայրուղիներ, որոնք միացրին Ատլանտյան և Խաղաղ օվկիանոսների ափերը: Երկաթուղիները 1900 թ. 300 հազ. կմ էին, ինչը 6 անգամ ավելին էր 1870 թ. համեմատությամբ և կազմում էր աշխարհի երկաթուղիների 40%-ը: Երկաթուղային շինարարությունը մեծացնում էր մետաղի, վառելիքի, մեքենաների և այլ ապրանքների պահանջը՝ խթանելով մետաղագործության, մետաղամշակման, քարածխի, փայտամշակման, շինանյութերի արտադրության և արդյունաբերության այլ ճյուղերի զարգացումը:

6. Արդյունաբերության զարգացման համար բացառիկ նշանակություն ուներ ավտոմոբիլաշինությունը: XIX դարի 90-ական թվականների սկզբին Յ.Ֆորդը կառուցեց առաջին ավտոմոբիլաշինական գործարանը: ԱՄՆ-ը 1900 թ. արտադրում էր 4 հազար, 1913 թ.՝ արդեն 500 հազար ավտոմոբիլ: Դրանց զանգվածային արտադրությունն արագացրեց գլանվածքաթիթեղի, շարժիչների, ապակու, նավթի, ռետինի արդյունաբերության զարգացումը: Ավտոմոբիլաշինությունը ԱՄՆ-ի տնտեսական զարգացման համար XX դարի սկզբին ուներ այնպիսի կարևորություն, ինչպիսին նախորդ դարի կեսերին՝ երկաթուղային շինարարությունը:

7. ԱՄՆ-ի տնտեսական արագ զարգացման համար խոշոր նշանակություն ունեին բարենպաստ բնաաշխարհագրական պայմանները՝ հսկայական տարածքը, որը գրեթե հավասար էր ամբողջ Եվրոպային (9 մլն քառ.կմ), հարուստ և բազմազան օգտակար հանածոները, բերրի հողերը, անտառային ռեսուրսները, գետերի և լճերի առատությունը և բարեխառն կլիման: Այս բոլորը ստեղծում էին հզոր հումքային բազա՝ արդյունաբերության, և նպաստավոր պայմաններ՝ գյուղատնտեսության զարգացման համար:

8. Կարևոր դեր էր խաղում ժողովրդագրական գործոնը: ԱՄՆ-ում աշխատավարձի բարձր մակարդակը խթանում էր եվրոպական երկրներից ներգաղթը, որի հաշվին ավելանում էր բնակչությունը և լուծվում աշխատուժի խնդիրը: ԱՄՆ-ի բնակչությունը 1870-1913 թթ. 38,7 միլիոնից հասավ մինչև 96,5 մլն մարդու, որից 30 մլն-ը ներգաղթողներն էին:

9. Ամերիկյան արդյունաբերության զարգացման համար կարևոր էր նաև իրականացվող հովանավորչական առևտրային քաղաքականությունը: Դեռևս XIX դարի 60-ական թվականներին բարձրացվում

էին մաքսատուրքերը, որոնց միջին մակարդակը դարավերջին կազմում էր ներմուծվող ապրանքների արժեքի մինչև 75%-ը: Այդպիսով՝ ամերիկյան արդյունաբերությունը ոչ միայն պաշտպանվում էր օտարերկրյա և, առաջին հերթին, անգլիական ապրանքների մրցակցությունից, այլև հնարավոր էր դառնում պահպանել բարձր գները ներքին շուկայում և ստանալ առավելագույն շահույթներ:

Նշված գործոնների շնորհիվ ԱՄՆ-ը ձեռք բերեց հսկայական առավելություններ եվրոպական երկրների համեմատությամբ և տնտեսական զարգացման մակարդակով գրավեց առաջին տեղն աշխարհում:

ԱՄՆ-ի համախառն ներքին արդյունքի (ՅՆԱ) աճի միջին տարեկան տեմպերը 1870-1913 թթ. կազմում էին 4,3, Գերմանիայինը՝ 3, Անգլիայինը՝ 2,4, Ֆրանսիայինը՝ 1,1%:

Ազգային եկամուտը նշված ժամանակամիջոցում ավելացավ հնգակի և կազմեց 44,8 մլրդ դոլար, արդյունաբերական արտադրությունն աճեց 9 անգամ:

Ամերիկյան տնտեսության քանակական աճն ուղեկցվում էր կառուցվածքային փոփոխություններով՝ 1870-80-ական թվականներին գյուղատնտեսության բաժինը կազմում էր արտադրանքի ընդհանուր ծավալի գրեթե կեսը, 1913 թ.՝ միայն 1/3-ը, իսկ մնացած 2/3-ը արդյունաբերության և շինարարության բաժինն էր:

Կարևոր տեղաշարժեր տեղի ունեցան մակ արդյունաբերության ճյուղային կառուցվածքում՝ ծանր արդյունաբերության տեսակարար կշիռը 1870 թ. 40%-ից 1913 թ. հասավ մինչև 50%-ի:

Առանձնապես արագ զարգանում էին տեխնիկական առաջընթացով պայմանավորված ճյուղերը՝ նավթի, այլումինի, ռետինի, էլեկտրատեխնիկայի, ավտոմոբիլի արտադրության: Սկսվեցին արհեստական մետաքսի արտադրությունը, ստանդարտացված պատրաստի հագուստի, կոշիկի, սննդային կիսաֆաբրիկատների զանգվածային թողարկումը, որ զարգացած չէր աշխարհի և ոչ մի երկրում:

Արագ զարգանում էր գյուղատնտեսությունը, որի համար ընդարձակ ներքին շուկա էր ստեղծում վերելք ապրած արդյունաբերությունը: Տրանսպորտի զարգացման շնորհիվ ընդլայնվում էին արտաքին շուկաները: Գողային ռենտայից ազատ ամերիկյան ֆերմերի արտադրած հացահատիկը էժան էր և արտահանվում էր եվրոպական երկրներ: ԱՄՆ-ը դարձավ հացահատիկի հիմնական արտադրողը և արտահանողը աշխարհում:

Գյուղատնտեսության արագ զարգացումը պայմանավորված էր բարձր ապրանքայնության ֆերմերային տնտեսությունների տարածմամբ, տարեկան մոտ 8 մլն հա արևմուտքի խոպան հողերի յուրացմամբ, և գյուղատնտեսական մեքենաների լայնորեն օգտագործ-

մամբ: ԱՄՆ-ը աշխարհում գրավում էր առաջին տեղը նաև գյուղատնտեսության մեքենայացման մակարդակով:

Գյուղատնտեսական արտադրանքի ընդհանուր ծավալը 1860-1913 թթ. ավելացավ եռակի: Գերակշռում էին հացահատիկային մշակաբույսերը, որոնց արտադրությամբ ԱՄՆ-ը գրավում էր աշխարհում առաջին տեղը: Տեխնիկական մշակաբույսերից տարածված էր բամբակը. ԱՄՆ-ին բաժին էր ընկնում բամբակի համաշխարհային արտադրության 60%:

7.2.2. Արտադրության համակենտրոնացումը և մոնոպոլացումը

Արտադրության համակենտրոնացումը և կապիտալի կենտրոնացումը ԱՄՆ-ում սկսվեց XIX դարի վերջին: Արդյունաբերական ձեռնարկությունների քանակը 1890-1914 թթ. ավելացավ 27%-ով, բանվորների թիվը՝ գրեթե կրկնակի:

Արդյունաբերության մեջ հիմնական դերը խաղում էին խոշոր ձեռնարկությունները՝ 500 և ավելի բանվորներով, որոնք 1913 թ. թողարկում էին ամբողջ արտադրանքի մոտ 85%-ը:

Արագ տեղի էր ունենում նաև կապիտալի կենտրոնացում: Բաժնետիրական ընկերություններին պատկանող ձեռնարկություններում 1913 թ. աշխատում էր բանվորների ընդհանուր թվաքանակի մոտ 80%-ը: Թողարկվում էր արդյունաբերական արտադրանքի 83%-ը:

Արտադրության համակենտրոնացումը և կապիտալի կենտրոնացումը ուղեկցվում էին մոնոպոլիաների առաջացմամբ: Ջ.Ռոկֆելլերը 1872 թ. ստեղծեց «Ստանդարտ Օյլ» նավթային ընկերությունը, որը շուտով միացրեց նավթի հանույթի և վերամշակման 14 տարբեր ընկերություն և 1882 թ. վերակազմավորեց տրեստի: Տրեստը XIX դարի 80-ական թվականներին արդեն վերահսկում էր երկրում գտած նավթի արտադրության 90-95%-ը, արդյունաբերության այլ ճյուղերի ֆիրմաների, բանկային, երկաթուղային և նավազնացության ընկերությունների:

ԱՄՆ-ում մոնոպոլիաների տարածված ձևը տրեստներն էին, որոնց մեջ մտնող ձեռնարկությունները կորցնում էին իրենց արտադրական, առևտրային, իրավաբանական ինքնուրույնությունը և կառավարվում մի կենտրոնից:

Խոշոր տրեստներ առաջացան տեքստիլ, էլեկտրատեխնիկական, կաշվի, ռետինի, օդու, շաքարի, ծխախոտի արդյունաբերության ճյուղերում:

Մոնոպոլացված էին երկաթուղային շինարարությունը, մետաղագործական արդյունաբերությունը. 1870 թ. ստեղծվեց Է.Կարնեզի միավորումը, որը մոնոպոլացրեց խողովակների, մետաղալարերի և փշալարերի արտադրությունը:

Մոնոպոլացման հզոր ալիքը սահմանափակում էր ազատ մրցակցությունը, բարձրացնում ապրանքների գները՝ առաջացնելով բնակչության բոլոր շերտերի դժգոհությունը: Բնակչության ճնշմամբ 1890 թ. ԱՄՆ-ի կոնգրեսը ընդունեց Ջ.Շերմանի հակատրեստային օրենքը՝ որը անօրինական հայտարարելով ամեն մի միավորում, ինչպես նաև պայմանագիր, որը սահմանափակում էր առևտուրը նահանգների կամ օտարերկրյա պետությունների հետ: Օրենքը խախտողները պետք է վճարեին տուգանք կամ ազատազրկվեին մինչև մեկ տարի ժամկետով:

Հակատրեստային այս առաջին օրենքը չկանխեց մոնոպոլիաների առաջացումը ԱՄՆ-ում: 1901 թ. Ջ.Մորգանը ստեղծեց «Պողպատի տրեստը», որը տալիս էր երկրում չուգունի արտադրության 43, պողպատի՝ 66% և միավորում նաև երկաթահանքեր, ածխահորեր, նավթավերամշակման գործարաններ, երկաթուղիներ, բանկեր:

Էլեկտրատեխնիկական «Ջեներալ էլեկտրիկ» և «Վեստինգհաուզ» տրեստները վերահսկում էին էլեկտրաէներգիայի և էլեկտրատեխնիկական սարքավորման արտադրությունները: Գյուլատնտեսական մեքենաշինությունում իշխում էր «Ինթերնեյշնլ խորվեստեր» տրեստը, քիմիական արդյունաբերության մեջ՝ «Ռյուպոն դե Նեմուրը»: Ավտոմոբիլաշինությունը գրեթե լրիվ գտնվում էր երեք կորպորացիաների՝ «Ջեներալ մոթորսի», «Ֆորդի» և «Կրայսլերի» ձեռքին: Դրանցից ամենախոշորին՝ 1908 թ. ստեղծված «Ջեներալ մոթորսին», 1913 թ. բաժին էր ընկնում երկրում արտադրվող մեքենաների 50%-ը:

Տնտեսության մոնոպոլացմամբ ԱՄՆ-ը զգալիորեն գերազանցում էր եվրոպական երկրներին: Խոշոր մոնոպոլիստական միավորումները իրենց տիրապետությունը հաստատեցին ԱՄՆ-ի տնտեսության մեջ: Նրանք արտադրում էին երկրի ամբողջ արդյունաբերական արտադրանքի երեք քառորդը:

Մոնոպոլացումն ընդգրկեց բանկերը, որոնց թիվը կրճատվում էր, կապիտալները՝ խոշորացվում: Արդյունաբերական և բանկային կապիտալը միաձուլվում էր՝ առաջացնելով ֆինանսական կապիտալ, որի ներկայացուցիչներն էին Մորգանները, Ռոկֆելլերները, Կարնեզիները, Վանդերբիլդները, Հարրիմանները և ուրիշներ: Առավել հզորները Ռոկֆելլերներն ու Մորգաններն էին, որոնց բաժին էր ընկնում ԱՄՆ-ի ամբողջ բաժնետիրական կապիտալի 55%-ից ավելին:

Ամերիկյան մոնոպոլիաները իրենց գործունեությունը չսահմանափակեցին ներքին շուկայի գրավմամբ և ակտիվ մասնակցում էին աշխարհի տնտեսական բաժանմանը՝ արտահանելով ոչ միայն ապրանքներ, այլև՝ կապիտալ: ԱՄՆ-ի արտահանումը 1860-1914 թթ. ավելացավ 24, ներմուծումը՝ 14 անգամ: Ամերիկյան մոնոպոլիաների արտասահմանյան ներդրումները 1914 թ. կազմում էին 3-3,5 մլրդ, 1889 թ. 500 մլն դոլարի դիմաց: Կապիտալը արտահանվում էր ոչ միայն Եվրոպա, այլև՝ Չինաստան, Ճապոնիա, Լատինական Ամերիկայի երկրներ: Այդ միջոցով էժան գներով ձեռք էին բերվում մեքսիկական նավթը, չիլիական երկաթի հանքաքարը, կանադական անտառանյութը և այլ հումքային ռեսուրսներ: Ամերիկյան կապիտալը իր տիրապետությունն էր հաստատում հիմնականում Լատինական Ամերիկայի երկրներում:

7.3. ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԵՐԵԼՔԻ ՆԱԽԱՂՈՅԱԼՆԵՐԸ

XIX դարի կեսերին մասնատված Գերմանիան արդյունահանում էր 7 անգամ պակաս ածուխ, արտադրում 10 անգամ պակաս թուջ և օգտագործում 30 անգամ պակաս բամբակ, քան՝ Անգլիան:

Արդեն 1870-ական թվականների սկզբին Գերմանիան մուտք գործեց տնտեսական զարգացման նոր փուլ: Հիմնական տեխնիկատնտեսական ցուցանիշներով նա հետ թողեց բազմաթիվ կապիտալիստական երկրների: Արդյունաբերությունը զինվում էր նոր տեխնիկայով, աճում էին էներգետիկ հզորությունները: Մեծ չափերով ավելացան թողարկվող արտադրանքի ծավալները: Հաջողություններն առկա էին հատկապես ծանր արդյունաբերության մեջ: Լայնորեն կիրառվեցին մետաղի ձուլման թոմասովյան և մարտենյան մեթոդները: Արդյունաբերության ճյուղում աշխատանքի արտադրողականությունը բավականին գերազանցեց Անգլիայի և Ֆրանսիայի նույն ցուցանիշը: Ընդարձակվեցին արտաքին առևտրի մասշտաբները:

XIX դարի վերջին երրորդում Գերմանիայի բաժինը համաշխարհային արդյունաբերական արտադրանքում 13%-ից հասավ 16%-ի: Տնտեսական զարգացման տեմպերով Գերմանիան զիջում էր միայն ԱՄՆ-ին: XX դարի առաջին տասնամյակում այստեղ էլեկտրակայանների հզորությունը մեծացավ 100 անգամ, ծծմբաթթվի արտադրությունը՝ շուրջ 20: Պողպատի ձուլումը հավասարվեց թուջի արտադրությանը:

Արդյունաբերության և առևտրի արագ զարգացումը Գերմանիայում XIX դարի վերջին պայմանավորված էր երկու կարևոր իրադարձությամբ. 1/ Գերմանիայի քաղաքական միավորմամբ, 2/ Ֆրանսիայի նկատմամբ Պրուսիայի տարած հաղթանակով 1870-1871 թթ. ֆրանս-պրուսական պատերազմում:

1871 թ. մասնատված Գերմանիան միավորվեց, և 300 մանր պետությունների հիման վրա ստեղծվեց միասնական գերմանական կայսրություն՝ Օտտո Բիսմարկի գլխավորությամբ: Ստեղծվեց միասնական պետական կառավարման ապարատ, վերացվեցին ներքին մաքսային պատնեշները: Սահմանվեց միասնական առևտրական օրենսդրություն: 1870-ական թվականների սկզբին ներդրվեցին միասնական դրամական համակարգ, չափ ու կշռի համակարգեր, կիրարկվեց համագերմանական երկաթուղային և փոստային իրավունք: Քաղաքացիներին տրվեց մասնավոր սեփականության երաշխիք:

Մյուս կողմից՝ Ֆրանսիայի նկատմամբ տարած հաղթանակի շնորհիվ Գերմանիան նրանից գանձեց 5 մլրդ ֆրանկ ռազմատուգանք, ինչը դարձավ ինդուստրացման հզոր աղբյուր և օգտագործվեց արտադրության տեխնիկական հագեցվածության աստիճանը բարձրացնելու նպատակով: Բացի դրանից, Գերմանիան Ֆրանսիայից զավթեց երկու խոշոր մարզեր՝ Էլզասն ու Լոթարինգիան: Վերջինիս հարուստ երկաթահանքերը լրացրին Յեննոսի և Սաարի ավազանների ածխամետաղագործական բազան: Նման պայմաններում Գերմանիայի ծանր արդյունաբերությունը (հատկապես՝ մետաղաձուլությունը, մետաղամշակությունը, մեքենաշինությունը) առաջատար դիրքեր գրավեց Եվրոպայում: Իսկ Էլզասի զարգացած բամբակագործվածքային արդյունաբերությունը հզորացրեց Գերմանիայի թեթև արդյունաբերությունը: Միաժամանակ Ֆրանսիայից Գերմանիա տեղափոխվեցին մեծ քանակությամբ մեքենաներ, սարքավորումներ, մեխանիզմներ:

1879 թ. երկրում կիրառվեց պրոտեկցիոնիզմի քաղաքականություն, որը խթանում էր հայրենական արդյունաբերության զարգացումը՝ ներմուծվող ապրանքների վրա բարձր մաքսեր սահմանելու միջոցով:

Գերմանիայի տնտեսական զարգացման վերելքին նպաստեց նաև այն հանգամանքը, որ ուշ ընտրելով զարգացման կապիտալիստական ուղի, Գերմանիան իր ձեռնարկությունները կառուցելիս լայնորեն օգտվում էր Անգլիայի արտադրական փորձից, գիտության ու տեխնիկայի նորագույն նվաճումներից: 41 մլն բնակչություն ունեցող միասնական Գերմանիան հարուստ էր բնական ռեսուրսներով (անտառներով, ջրերով, հողերով, օգտակար հանածոներով): Գերմանիայի տնտեսական զարգացումը պայմանավորված էր բնակչու-

թյան արագ աճով: 1870 թվականից մինչև դարավերջ նրա բնակչությունն ավելացավ 15 մլն մարդով:

1870-ական թվականների վերջերին արդյունաբերական հեղաշրջման ավարտունով բավականին ընդլայնվեցին Գերմանիայի արտադրության աճի մասշտաբները: Գերմանիայի արդյունաբերությունը հենվում էր նորագույն տեխնիկական հայտնագործությունների վրա (ներքին այրման շարժիչ, շոգետուրբին, էլեկտրաէներգիայի փոխանցում հեռավորության վրա և այլն): Վարձու աշխատողների բանակը լրացվում էր ինչպես սնանկացած արհեստավորների և գյուղացիների, այնպես էլ ծննդաբերության բարձր մակարդակի շնորհիվ նոր աշխատողների ներգրավման հաշվին:

Հաջողություններն ակնառու էին երկաթուղային շինարարության բնագավառում: 1870 -1910 թթ. այստեղ երկաթուղիների երկարությունն աճեց 33 անգամ և կազմեց շուրջ 60 հազար կմ: Վիթարի կապիտալ ներդրումներ էր պահանջում նման խոշոր շինարարությունը, որին ուղղվում էին բաժնետիրական ընկերությունների դրամական միջոցները, արտասահմանյան (հատկապես՝ անգլիական) ներդրումները, Ֆրանսիայից ստացված ռազմատուգանքը:

Երկաթուղային շինարարության այդ մասշտաբները խթանեցին Գերմանիայի արդյունաբերության, հատկապես՝ ծանր ինդուստրիայի զարգացումը: Մետաղագործության և մեքենաշինության արտադրանքը դարձավ Գերմանիայից արտահանման հիմքը: Ընդամին, մեքենաների արտահանմամբ Գերմանիան աշխարհում գրավեց առաջին տեղը: Երկու դարերի սահմանագլխին այստեղ արագ զարգացան արդյունաբերության նոր ճյուղերը՝ էլեկտրաէներգետիկան, էլեկտրատեխնիկան, պլումբինի արտադրությունը, քիմիական ինդուստրիան: Հունքի պակասը որոշ չափով արգելակում էր թեթև ու սննդի արդյունաբերության զարգացումը:

Ուռաջանցիկ տեմպերով էին զարգանում մետաղագործությունը և մեքենաշինությունը: Այս երկու ճյուղերը տեխնիկապես հագեցված էին, մետաղը բարձրորակ էր, ցածր էին արտադրության ծախսերը: Միայն մեքենաշինության մեջ զբաղված աշխատողների թվաքանակը 1895 թ. 385 հազարից 1907 թ. հասավ 907 հազարի:

Ամբողջությամբ վերցրած՝ XIX դարի վերջին Գերմանիայում արդյունաբերական արտադրության ծավալն աճեց 5 անգամ, մինչդեռ Ֆրանսիայում՝ 3, Անգլիայում՝ 2: Դրա շնորհիվ Գերմանիան ագրարային-ինդուստրիալ երկրից վերաճեց հզոր ինդուստրիալ տերության:

Զգալի էին տեղաշարժերը Գերմանիայի գյուղատնտեսության մեջ: 1870-ական թվականներին այստեղ ավարտվեցին ագրարային բարեփոխումները: Սակայն ճյուղի արտադրանքի աճը որոշ չափով սահմանափակվում էր ֆեոդալական մնացուկների առկայությամբ,

պահպանված խոշոր ֆեոդալական հողատիրությամբ և բացարձակ ռենտայի մեծ չափերով:

XIX դարի վերջին խոշոր կալվածատիրական տնտեսությունները արևելյան Գերմանիայում զբաղեցնում էին մշակվող հողերի 1/3-ից 1/2-ը: Ամբողջ երկրում այդ տնտեսությունները կազմում էին բոլոր տնտեսությունների 13%-ը, սակայն տիրապետում էին հողերի 70%-ին: Արևելյան Պրուսիայի մի շարք խոշոր կալվածքներում գյուղացիները ստացան ազատություն, այդուհանդերձ հող չունենալով՝ լրացրին վարձու աշխատողների շարքերը:

Պետությունը միջոցներ էր ձեռնարկում գյուղատնտեսական արտադրության վերելքն ապահովելու նպատակով: Լայնորեն կիրառվեցին հանքային պարարտանյութերը և գյուղատնտեսական տեխնիկան: Ստեղծվեցին գյուղատնտեսական ընկերություններ: Ձեռնարկված միջոցառումների շնորհիվ բարձրացավ բերքատվությունը, ընդարձակվեցին տեխնիկական մշակաբույսերի ցանքատարածությունները, ավելացավ անասնազխաքանակը:

XIX դարի վերջին - XX դարի սկզբին Գերմանիան մուտք գործեց մոնոպոլիստական կապիտալիզմի փուլը: Տեղի ունեցավ արտադրության և կապիտալի կենտրոնացում ու համակենտրոնացում, առաջացան մոնոպոլիստական միավորումներ: Դրանցից Գերմանիայում գերակշռում էին կարտելները և սինդիկատները: Խոշոր մոնոպոլիաներ ստեղծվեցին լեռնային արդյունաբերությունում, մետաղագործական, մեքենաշինական, շինարարական արտադրություններում և այլ ճյուղերում: 1880-90-ական թվականներին հազարից ավելի բանվոր ունեցող ձեռնարկությունների քանակն աճեց 4 անգամ:

Ձեռնարկությունների խոշորացման մասին են վկայում նաև հետևյալ տվյալները: Քարածխի արդյունաբերության մեջ 1850 թ. մեկ հանքահորին բաժին էր ընկնում 62 մարդ, իսկ 1910 թ.՝ 2131: Մետաղագործական արդյունաբերությունում 1 դոմնայի հաշվով բանվորների միջին թվաքանակն աճեց 32 անգամ, իսկ տարեկան արտադրանքը՝ 263: Փաստորեն՝ արդյունաբերության հիմնական ճյուղերի արտադրությունը կենտրոնացված էր խոշոր գործարաններում և ֆաբրիկաներում: Ստեղծվեց Հռենոս-Վեստֆալյան քարածխային սինդիկատը, որին բաժին էր ընկնում Ռուրի ավազանի ածխի հանույթի 95, իսկ ամբողջ երկրի ածխի հանույթի 40%-ը:

Ռազմական և պողպատածուլական արդյունաբերության մեջ տեղ ու տնօրեն էր Կրուպայի ֆիրման, էլեկտրատեխնիկական արդյունաբերությունը պատկանում էր ԱԷԳ*-ին և Սիմենսին, քիմիական արդ-

* ԱԷԳ - էլեկտրականության համընդհանուր ընկերություն

յունաբերությունը՝ Ս.Գ.Ֆարբենինդուստրիին: Նավաշինության մեջ գերիշխում էին Յուսիս-Գերմանական Լլոյդը և Յամբուրգ-Ամերիկան: Կարտելների և սինդիկատների քանակն այստեղ 1870-1900 թթ. աճեց 50 անգամ՝ 6-ից հասնելով 300-ի: Գերմանական մոնոպոլիաների յուրահատկությունը մեծությունն էր (ընդգրկում էին տասնյակ և նույնիսկ հարյուրավոր ձեռնարկություններ): Առաջին համաշխարհային պատերազմի նախօրեին մոնոպոլիստական միավորումների ընդհանուր թիվը երկրում կազմում էր շուրջ 600:

Հաջողություններն ակնհայտ էին բանկային գործի համակենտրոնացման ասպարեզում: XX դարի սկզբին 9 խոշոր գերմանական բանկեր կենտրոնացրել էին երկրի բոլոր բանկային ավանդների կեսը կամ բանկային կապիտալի ավելի քան չորս հինգերորդը: Միայն Գերմանական բանկն ուներ 3 մլրդ մարկ դրամագուլիս, ինչը մեծ դեր խաղաց երկրի տնտեսության զարգացման գործում:

Ֆինանսական օլիգարխիայի տիրապետության հաստատումն է ապացուցում այն փաստը, որ 751 արդյունաբերական ընկերությունների ղեկավարները բանկերի ներկայացուցիչներ էին: Այսպես՝ միայն Գերմանական բանկը ներկայացված էր 200 արդյունաբերական ձեռնարկություններում: Գերմանիայի «չթագադրված թագավորները»՝ Կրուպպը, Տիսսենը, Կիրդորֆը, Բալլինը, և ուրիշներ իրենց ձեռքին էին կենտրոնացրել երկրի տնտեսական հզորությունը: Մոնոպոլիաների ընդհանուր շահույթը 1913 թ. կազմեց 15 մլրդ մարկ:

Գերմանիայի տնտեսության մեջ գերիշխում էր բուրժուազիան, մինչդեռ քաղաքական կյանքում մեծ դեր ունեին յունկերները (կալվածատերերը): Բուրժուազիան և յունկերները միասնական էին ինչպես երկրի ներքին, այնպես էլ արտաքին քաղաքականության հարցերում: Եթե Անգլիայում և Ֆրանսիայում բուրժուազիան տիրապետում էր լիովին, ապա Գերմանիայում յունկերներն էին երկրի առաջին դերակատարները:

XIX դարի վերջին – XX դարի սկզբին տնտեսական զարգացման տեմպերի արագացումը հանգեցրեց նրան, որ աշխարհի առաջատար երկրների շարքում Գերմանիան դուրս եկավ երկրորդ տեղը արդյունաբերական արտադրությամբ, (ԱՄՆ-ից հետո), երրորդը՝ մետաղագործությամբ և ածխարդյունաբերությամբ, առաջինը՝ ռազմական արդյունաբերությամբ:

XIX դարի վերջերին Գերմանիան ծավալեց զավթողական քաղաքականության քարոզչություն՝ պատճառաբանելով իր հումքի և իրացման շուկաների «կենսական տարածության» սուր պակասը: Գերմանիան կարիք ուներ զաղութների, որոնցից ցածր գներով կներմուծեր հումք և կիսաֆաբրիկատներ՝ դրանցում մենաշնորհային գներով իրացնելով պատրաստի արտադրանքը:

1891 թ. ստեղծվեց Համագերմանական միությունը, որը նպատակ ուներ զավթելու նոր տարածքներ: Գերմանիան գրավեց Տոգոն, Կամերունը, Յյուսիս-Արևմտյան Աֆրիկան, Կարոլինյան, Մարիանյան և Մարշալյան կղզիները, այլ տարածքներ: Այդ բոլորով հանդերձ՝ գերմանական գաղութային տիրույթները տարածքով անգլիականին զիջում էին 11, իսկ բնակչությամբ՝ 32 անգամ:

Բարենպաստ չէին նաև ռուս-գերմանական հարաբերությունները: XIX դարի վերջին Գերմանիան բարձրացրեց ռուսական գյուղատնտեսական ներմուծվող արտադրանքի մաքսային տարիֆները: Իսկ երբ Ռուսաստանն արեց պատասխան քայլը բարձրացնելով Գերմանիայից ներմուծվող մեքենաների և սարքավորման մաքսային տարիֆները, նրանց միջև սկսվեց մաքսային պատերազմ, որում հաղթողը տնտեսապես հզոր Գերմանիան էր:

Գերմանիայում ստեղծվեց հզոր ռազմաարդյունաբերական համալիր, բավականին ավելացան ռազմական ծախսերը, արդիականացվեց բանակի և նավատորմի սպառազինությունը: Երկիրը լրջորեն նախապատրաստվում էր պատերազմի՝ աշխարհը վերաբաժանելու, համաշխարհային տիրապետություն հաստատելու համար:

Դեռևս 1870-ական թվականների վերջերին ձևավորվեց Գերմանիայի և Ավստրո-Հունգարիայի ռազմական դաշինքը: 1880-ական թվականների սկզբներին դրա մեջ մտավ Իտալիան, և ստեղծվեց Եռյակ միությունը (1882 թ.), որն էլ սկսեց առաջին համաշխարհային պատերազմը:

7.4. ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՎԱԿԱՆ ԳԵՐԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԿՈՐՈՒՄՏԸ ԱՆԳԼԻԱՅՈՒՄ

1870 թվականը միջազգային ասպարեզում Անգլիայի տնտեսական հզորության գագաթնակետն էր: Նրան բաժին էր ընկնում համաշխարհային առևտրի 65%-ը: Քարածխի հանույթի, թուջի ձուլման և բամբակի մշակության կեսն աշխարհի մասշտաբով իրագործում էր Անգլիան: Նման հզորությունը ազատ առևտրի երաշխիք էր:

Սակայն XIX դարի վերջին քառորդում Անգլիան աստիճանաբար կորցրեց առաջատար դիրքերը: Այդ շրջանում առաջին պլան մղվեցին ԱՄՆ-ը և Գերմանիան. այս երկու երկրում էլ ավարտվեց արդյունաբերական հեղաշրջումը բարձր տեխնիկական հիմքի վրա: Անգլիայի բաժինը համաշխարհային արդյունաբերական արտադրանքի մեջ 1870 թ. 32%-ից XX դարի սկզբին իջավ՝ կազմելով ընդամենը 18%: Կրճատվեցին արդյունաբերական արտադրության աճի

տեմպերը: Հատկապես տուժեցին հին՝ տեքստիլ, մետաղագործական, ածխի արտադրությունները: Դրանց տեխնիկական բազան, որը ձևավորվել էր XIX դարի առաջին կեսին, հնացել էր: Ֆիզիկապես և բարոյապես նաշվել էին մեքենաներն ու սարքավորումները, չէր կարգավորվել նոր տեխնիկայի թողարկման գործընթացը: Աշխատանքի էներգազինվածությամբ անգլիացի բանվորը էապես զիջում էր ամերիկացի և գերմանացի բանվորներին:

Հսկայական գաղութային կայսրության առկայության պայմաններում Անգլիայից կապիտալի արտահանումը տնտեսապես ավելի շահավետ էր, քան օգտագործումը երկրի ներսում: Գաղութային առևտուրը նպաստում էր գաղութներից ցածր գներով հումքի և կիսաֆաբրիկատների ձեռքբերմանը, ինչպես նաև գաղութներում բարձր (մենաշնորհային) գներով պատրաստի արտադրանքի իրացմանը: Եվ անգլիական կապիտալիզմը ձեռք բերեց նակաբուծային գծեր:

Անգլիական թեթև արդյունաբերության արտադրանքը հիմնականում իրացվում էր գաղութային շուկաներում: Միաժամանակ XIX դարի վերջին Անգլիայում, ծանր արդյունաբերության մեջ տեղի ունեցած տեղաշարժերը նպաստեցին ինդուստրիայի նոր ճյուղերի առաջացմանը: Սկսվեց արտադրության կենտրոնացում և համակենտրոնացում, առաջացան մոնոպոլիստական միավորումներ: Առաջին անգլիական մոնոպոլիաները կազմավորվեցին 1880-90-ական թվականներին արդյունաբերության նոր ճյուղերում (էլեկտրատեխնիկական, խողովակների, քիմիական, ռազմական և այլն): Հայտնի էին «Արմսթրոնգ/Ուիթվորտ», «Դորման, Լոնգ և կոնպանիա», «Վիկկերս» ֆիրմաները, պայթուցիկ նյութերի անգլոգերմանական տրեստը (Դինամիտ-Նորբել), քիմիական տրեստը (Յունայտեղ Ալկալի): Կազմավորվեց նաև անգլոամերիկյան նավաշինական տրեստը Մորգանի ֆինանսական խմբի աջակցությամբ:

Անգլիական մոնոպոլիաների առանձնահատկություններն էին. համեմատաբար ուշ կազմավորումը (10-15 տարի ուշ, քան՝ ԱՄՆ-ում և Գերմանիայում) և հարաբերական թուլությունը՝ կապված գաղութային շուկայի առկայության հետ (արտադրանքը մրցունակ չէր):

Երկրի արդյունաբերությունը հիմնականում նպատակամղված էր արտահանման կարիքների բավարարմանը: Արդյունաբերական հին ճյուղերում ստեղծվում էին ոչ մեծ կարտելներ՝ որպես «առևտրական միություններ»:

Կապիտալիստական ինդուստրացումը, երկիրը վերածելով «համաշխարհային արհեստանոցի», էապես փոխեց Անգլիայի արտաքին առևտրական ուղղությունը: Եթե XIX դարի առաջին կեսին առևտրական հաշվեկշիռը այստեղ ակտիվ էր, և պրոտեկցիոնիզմից անցում էր կատարվել ֆրիտրիդերականությանը (ազատ առևտրի քաղաքա-

կանությամբ), ապա վիճակն այլ էր նույն դարի երկրորդ կեսին, հատկապես՝ վերջին, երբ առևտրական հաշվեկշիռը դարձավ պասիվ, իսկ ներմուծումը կրկնակի գերազանցում էր արտահանմանը: Սակայն կապիտալի արտահանման, միջնորդային առևտրական և բանկային գործառույթների օգնությամբ Անգլիան ստանում էր հսկայական եկամուտներ: Այսպես՝ XX դարի սկզբին անգլիական արտասահմանյան ներդրումներից ստացված եկամուտը հնգակի գերազանցեց արտաքին առևտրի նույն ցուցանիշը: Բոլոր դեպքերում՝ XIX դարի վերջերին Անգլիան համաշխարհային առևտրում առաջատար երկիր էր, որին բաժին էր ընկնում աշխարհի առևտրական տոննաժի կեսը, իսկ XX դարի սկզբին՝ 40%:

Անգլիան կապիտալի արտահանման բնագավառում ևս առաջատար էր: 1870-ական թվականների սկզբին նրա արտասահմանյան փոխառությունների և վարկերի չափը գերազանցում էր 1 մլրդ ֆունտ ստեռլինգը, իսկ XX դարի սկզբին կրկնապատկվեց: Ընդ որում՝ արտաքին կապիտալ ներդրումների կեսից ավելին բաժին էր ընկնում բրիտանական գաղութային կայսրության երկրներին:

Անգլիան համաշխարհային ֆաբրիկայից վերածվեց օտարերկրյա փոխատվություններ պահող պետության: Նրա հզորության հիմքն այլևս գործարաններն ու ֆաբրիկաները չէին, այլ՝ բանկերը և դրամական շուկաները: Լոնդոնը դարձավ աշխարհի ֆինանսական կենտրոնը: Այստեղ իրականացվում էին միջազգային խոշոր ֆինանսական գործարքներ: Անգլիական տարադրամը խաղում էր միջազգային փողի դեր և համարվում միավոր համաշխարհային առևտրական գործարքներում:

Անգլիայում ֆինանսական օլիգարխիայի ներկայացուցիչներն էին այնպիսի հզոր բանկիրներ, ինչպիսիք են Ռոտշիլդը, Գոշենը, Գրենֆելը, Բերինգը, Լյոյդը:

Երկրում ֆինանսական ռեսուրսների մոբիլիզացումը տեղի էր ունենում նաև բաժնետիրական ընկերությունների միջոցով: XX դարի սկզբին բաժնետիրական կապիտալը առաջնային տեղ գրավեց անգլիական արդյունաբերության բոլոր ճյուղերում: 1863 թ. երկրում կար 640 բաժնետիրական ընկերություն, դարավերջին դրանց ամենամյա հավելածը 4 հազար էր:

XIX դարի վերջին - XX դարի սկզբին Անգլիայի գյուղատնտեսությունը երկրորդական ճյուղ էր և խիստ հետ էր մնում արդյունաբերությունից: Քաղաքակենտրոնացման արագացված գործընթացն ուղեկցվում էր գյուղական բնակչության տեսակարար կշռի նվազմամբ, քաղաքների և ավանների ավելացմամբ: Եթե XIX դարի սկզբին գյուղական բնակչությունը 35% էր, ապա 1870-ական թվականներին՝ 14%:

Տեղի ունեցավ հողատիրության կենտրոնացում: Երկրի հողերի կեսը պատկանում էր 35 հազար հողատիրոջ: Գլխավոր գործող անձը դարձավ խոշոր ֆերմեր-վարձակալը: Նա լենդլորդից վարձակալում էր հողը և տնտեսությունը վարում կապիտալիստական հիմունքներով՝ լայնորեն կիրառելով ժամանակակից գյուղատնտեսական տեխնիկան և ագրոմշակույթը: Տնտեսության մեջ մեծ չափերով օգտագործվում էր վարձու աշխատողների (բատրակների) աշխատանքը: Հաջողություններ ձեռք բերվեցին կաթնային տնտեսությունում, այգեգործության և բանջարաբուծության մեջ: Սակայն գյուղատնտեսական արտադրանքի նկատմամբ աճող պահանջը հիմնականում բավարարվում էր ներմուծման հաշվին (հատկապես՝ գաղութներից): XIX դարի վերջերին անգլիական ֆերմերները խիստ տուժեցին եվրոպական շուկա ամերիկյան էժան հացահատիկի ներմուծումից: Անգլիան մեծապես տուժում էր պարբերաբար կրկնվող ճգնաժամներից:

XIX դարի կեսերին, հզոր արտադրատեխնիկական բազայի հետ, Անգլիան տիրապետում էր գաղութային վիթխարի տարածքների: Փաստորեն՝ երկրի հզորությունը շատ բանով ապահովվում էր ենթակա գաղութների շահագործման հաշվին: Ուղղակի թալանը, ոչ համարժեքային փոխանակությունը, բազմաթիվ հարկերը և տուրքերը նպաստում էին Անգլիայի հզորացմանը: Այդ շրջանում ավարտվեց Հնդկաստանի զավթումը, որտեղ ապրում էր բրիտանական կայսրության բնակչության 70%-ը: 1860 թ. 6,5 մլն քառակուսի կմ տարածք ունեցող կայսրությունում բնակվում էր 145 մլն մարդ, իսկ դարավերջին՝ արդեն 300 մլն:

1860 թ. հետո Անգլիան էլ ավելի ընդլայնեց գաղութային տիրույթները՝ զավթելով Կիպրոսը, այնուհետև՝ Եգիպտոսը, Քենիան, Ուգանդան, Նիգերիան, Սուդանը, Բիրման և այլն: Որոշ գաղութներ դարձան դոմինիոններ (ինքնակառավարվող կամ կիսաանկախ շրջաններ): Դրանցից էին Կանադան, Ավստրալիան, Նոր Զելանդիան, Հարավ-Աֆրիկյան Միությունը:

7.5. ՖՐԱՆՍԻԱՅԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԵՏԱՄՆԱՑՈՒԹՅԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ ՄՈՆՈԴՈՒԽՏԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԻԶՄԻ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ

XIX դարի ամբողջ ընթացքում Ֆրանսիան արդյունաբերական արտադրությամբ աշխարհում զբաղեցնում էր երկրորդ տեղը՝ Անգլիայից հետո: Մինչդեռ դարավերջին զգացվում էր նրա տնտե-

սական հետամնացությունը ԱՄՆ-ից և Գերմանիայից. բավականին իջել էին տնտեսական զարգացման տեմպերը: Այսպես՝ միայն արդյունաբերական արտադրության աճի տեմպերը դարի առաջին կեսի համեմատությամբ իջել էին կրկնակի: Ընդսմին, արդյունաբերության արտադրանքի տեսակարար կշիռը երկրի ամբողջ տնտեսության մեջ ավելի ցածր էր, քան գյուղատնտեսական արտադրանքինը: Արդյունաբերական արտադրության ծավալով XIX դարի վերջին - XX դարի սկզբին Ֆրանսիան աշխարհում հետ մղվեց չորրորդ տեղը ԱՄՆ-ից, Գերմանիայից և Անգլիայից հետո: 1850-ական թվականներից սկսած մինչև դարավերջ Ֆրանսիայում արդյունաբերական արտադրանքի ծավալն աճեց 4 անգամ, մինչդեռ Գերմանիայում՝ 7, ԱՄՆ-ում՝ 13 անգամ:

Համաշխարհային արդյունաբերական արտադրանքի մեջ Ֆրանսիայի բաժինը 10%-ից իջավ 7%-ի: Երկրում գերակշռում էր թեթև արդյունաբերությունը: Նախկինի նման համաշխարհային հռչակ ունեին ֆրանսիական պերճանքի առարկաները՝ ոսկյա իրերը, օժանելիքը, կոսմետիկան, ինչպես նաև մետաքսը, հախճապակին, կահույքը և այլն: Դրանց արտադրությունը պահանջում էր ձեռքի բարձրորակ աշխատանք:

Միաժամանակ Ֆրանսիան էական հաջողությունների հասավ երկաթուղային շինարարության բնագավառում: Երկաթուղիների ընդհանուր երկարությունը կազմում էր 43 հազար կմ, ինչը գերազանցում էր Անգլիայի և Գերմանիայի երկաթուղիների երկարությունը՝ միասին վերցրած: Ստեղծվեցին արդյունաբերության մոր ճյուղեր՝ շոգեքարշաշինություն, ալյումինի արտադրություն, էլեկտրաէներգետիկա, ավտոմոբիլաշինություն և այլն: Սակայն առաջվա նման Ֆրանսիայի տնտեսության մեջ գլխավոր դերը կատարում էին մանր ու միջին ձեռնարկությունները: Ձեռնարկությունների 94%-ը ուներ 1-ից 10 բանվոր: Քանակով և արտադրության ծավալով առաջին տեղում էին թեթև արդյունաբերության ձեռնարկությունները:

Որո՞նք էին Ֆրանսիայի տնտեսական հետամնացության պատճառները:

1. Երկրի արտադրական բազայի թուլացումը ֆրանս-պրուսական պատերազմում կրած պարտության հետևանքով: Պատերազմի ընդհանուր վնասը կազմեց 16 մլրդ ֆրանկ, ամբողջովին անայացան 43 դեպարտամենտներ, որոնք նախքան պատերազմը ունեին բարձր զարգացում: Ֆրանսիան Գերմանիային վճարեց 5 մլրդ ֆրանկ ռազմատուգանք, ինչպես նաև կորցրեց 2 խոշոր նարգեր՝ Էլզասը, որը տեքստիլ արդյունաբերության և զարգացած գյուղատնտեսության կենտրոն էր, և Լոթարինգիան, որը հայտնի էր երկաթի հանքաքարի խոշոր պաշարներով: Ֆրանսիայից Գերմանիա տեղափոխվեցին մեծ քանակությամբ մեքենաներ ու սարքավորումներ:

2. Կախվածությունը հուճքի կարևորագույն տեսակների՝ ածուխ, երկաթի հանքաքար, պղինձ, բամբակ և այլն, ներմուծումից:

3. Ֆրանսիական ապրանքների մրցունակության կորուստը, մասնավորապես՝ կապված հուճքի թանկացման հետ:

4. Բավարար կապիտալ ներդրումների բացակայությունը, որոնք անհրաժեշտ էին ֆիզիկապես և բարոյապես մաշված արտադրական բազայի տեխնիկական հագեցվածության ապահովման համար: Կուտակված վիթխարի ֆինանսական ռեսուրսները գերշահույթ ստանալու նպատակով ուղղվում էին ոչ թե հայրենական տնտեսություն, այլ՝ արտասահման: Ֆրանսիական կապիտալը ձեռք էր բերում վաշխառուական գծեր:

5. Գյուղատնտեսության հետամնացությունը հողագործության մանրատվածության, ֆրանսիական գյուղացու աղքատության, գյուղական բնակչության հավելաճի բացակայության, ներքին շուկայի փոքրության պատճառներով:

XIX դարի վերջին - XX դարի սկզբին Ֆրանսիայում ավելի դանդաղ, քան մյուս առաջատար երկրներում, տեղի էր ունենում արտադրության կենտրոնացման և համակենտրոնացման գործընթաց: Դա ընդգրկեց մետաղաձուլական, ածխի, մեքենաշինական արտադրությունները և արդյունաբերության ուրիշ ճյուղերը: Այսպես՝ երկաթի հանքաքարի հանույթի շուրջ կեսը բաժին էր ընկնում 4 մոնոպոլիաների. ածխին՝ 10, ծովային բեռնաշրջանառությանը՝ 3: Այստեղ մոնոպոլիաների առավել տարածված ձևերն էին կարտելները և սինդիկատները:

Այդ բոլորով հանդերձ՝ երկրում գլխավոր ուժը և իշխանությունը ներկայացնում էին բանկերը, որոնք տնօրինում էին բոլոր ներդրումների 70%-ը: XX դարի սկզբին Ֆրանսիայում տեղի ունեցավ արդյունաբերական և բանկային կապիտալի միաձուլում, առաջացավ ֆինանսական կապիտալ, որի կենտրոնը Ֆրանսիական բանկն էր: Բանկի 200 խոշոր փայտերեր փաստորեն ղեկավարում էին երկիրը և կազմում ֆինանսական օլիգարխիան:

Մեծ շահույթներ էին ստացվում կապիտալի արտահանումից, որի ծավալների աճը կրկնակի գերազանցում էր արդյունաբերական արտադրության աճը:

XIX դարի վերջին - XX դարի սկզբին Ֆրանսիան ծավալում է իր գաղութային էքսպանսիան գերազանցապես արտաքին առևտրի և կապիտալի արտահանման միջոցով: 1898-1912 թթ. Ֆրանսիայում արտաքին առևտրի շրջանառությունն աճեց կրկնակի և կազմեց 17 մլրդ ֆրանկ: Սակայն այդ աճը սահմանափակվում էր արդյունաբերական արտադրության հետ մնալով: Ուստի, վճռական նշանակություն ունեցավ կապիտալի արտահանումը, որի ծավալը նշված ժամանակաշրջանում աճեց եռակի:

Կապիտալի արտահանման ցուցանիշով Ֆրանսիան զիջում էր միայն Անգլիային: Սակայն եթե Անգլիան կապիտալն արտահանում էր արդյունաբերական ներդրումների ձևով, ապա Ֆրանսիան՝ փոխատվական կապիտալի: Յենց դա էլ բնորոշեց ֆրանսիական կապիտալիզմի վաշխառուական բնույթը: Դիտարկվող շրջանում Ֆրանսիայում աճեց ռանտյեների (կուլպոն խուզողների կամ վաշխառուների) թիվը: Եթե XX դարի սկզբին Ֆրանսիայի բնակչությունը 40 մլն էր, ապա միայն ռանտյեները՝ 2 մլն:

Ֆրանսիայի գաղութային տիրույթներն այնքան ընդարձակ էին, որ 20 անգամ գերազանցում էին բուն երկրի տարածքը: Այս ցուցանիշով ևս Ֆրանսիան զիջում էր միայն Բրիտանական կայսրությանը: Սակայն ֆրանսիական գաղութներն ունեին ավելի շատ ռազմավարական, քան տնտեսական նշանակություն:

Ֆրանսիան զավթեց Թունիսը, Վիետնամի այժմյան տարածքը, Արևմտյան Աֆրիկայի մի մասը, Հասարակածային Աֆրիկան, Մադագասկարը և այլ տարածքներ:

Զգտելով ռևանշի Գերմանիայից 1870-71 թթ. կրած պարտության համար, Ֆրանսիան մեծացրեց ռազմական ծախսերը, ակտիվորեն մասնակցեց Անտանտի ստեղծմանը (1904-1907 թթ.), որի մեջ մտան ինքը, Ռուսաստանը և Անգլիան:

7.6. ՌՈՒՄԱՍՏՍԱՆԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՄՈՆՈՊՈԼԻՍՏԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԻԶՄԻ ԺԱՄԱՆԱ- ԿԱՇՐՋԱՆՈՒՄ

Ճորտատիրության վերացումից հետո Ռուսաստանում արագացավ կապիտալիստական հարաբերությունների զարգացումը, ինչի դրսևորումներն էին՝

- Գյուղացիական տնտեսությունների կապիտալիստական էվոլյուցիան, գյուղացիության շերտավորման արագացումը: Ունևոր գյուղացիները XIX դարի 90-ական թվականների սկզբին կազմում էին ծխերի 20%-ը, բայց նրանց էր պատկանում գյուղացիական հողերի մոտ 50 և բանող անասունների 60%-ը: Գյուղացիության շերտավորումն արագացավ XIX դարավերջի համաշխարհային ագրարային ճգնաժամի տարիներին, երբ Եվրոպա էժան ամերիկյան հացահատիկի ներհոսքի հետևանքով ռուսական հացահատիկի գինն ընկավ 40-50%-ով:

- Կալվածատիրական տնտեսությունների կապիտալիստական էվոլյուցիան, ապրանքայնության մեծացումը և ինտենսիվացումը

վարձու աշխատուժի, գյուղատնտեսական մեքենաների և պարարտանյութերի օգտագործման ավելացման շնորհիվ:

- Գյուղատնտեսական արտադրության տարածքային մասնագիտացման խորացումը: Առանձնանում են առևտրային հողագործության (Եվրոպական Ռուսաստանի հարավային և արևելյան ծայրամասերը) և առևտրային անասնապահության (Մերձբալթիկա, Արևմտյան, Հյուսիսային, մասամբ՝ Կենտրոնական Ռուսաստան) շրջանները:

- Կալվածատիրական հողատիրության կրճատումը, ինչպես նաև հողերի կենտրոնացումը խոշոր ազնվականների և առևտրականների ձեռքին: Միայն 1861-1887 թթ. կալվածատիրական հողատիրությունը 79 մլն-ից կրճատվեց կազմելով 68 մլն դեսյատին:

Ավելանում էր գյուղատնտեսական արտադրությունը: Հացահատիկի արտադրությունը XIX դարի 60-90-ական թվականներին 2 մլրդ-ից հասավ մինչև 3,3 մլրդ փթի, կարտոֆիլինը՝ ավելի քան 2, շաքարի ճակնդեղինը՝ 1,3 անգամ:

Նշված դրական տեղաշարժերը չփոխեցին գյուղատնտեսության հետամնաց բնույթը, պահպանվեցին ֆեոդալիզմի մնացուկները՝ կալվածատիրական հողատիրությունը, գյուղացիության սակավահողությունը և հողագրկման հետևանքով նրանց շահագործման հին ձևերը, որոնք խոչընդոտում էին բուրժուական հարաբերությունների զարգացումը:

Ռեֆորմից հետո արագացավ կապիտալիստական արդյունաբերության զարգացումը, ինչին նպաստեց գյուղացիության շերտավորման խորացումը և վարձու աշխատուժի բանակի առաջացումը, ինչպես նաև ներքին շուկայի ընդլայնումը: Մանրապրանքային արտադրությունը և մանուֆակտուրան դուրս են մղվում ֆաբրիկայի կողմից: Արդյունաբերության կարևորագույն ճյուղերում արդյունաբերական հեղաշրջումը ավարտվեց XIX դարի 80-ական թվականներին: Շոգեշարժիչների քանակը 1875-1892 թթ. ավելացավ կրկնակի, հզորությունը՝ եռակի: Արագ զարգանում էին մեքենաշինությունը, նավթի հանույթը և վերամշակումը, մետալուրգիական արդյունաբերությունը:

Ռուսաստանում XIX դարի 90-ական թվականներին սկսվեց արդյունաբերական վերելք: Տասը տարվա ընթացքում արդյունաբերական ձեռնարկությունների թիվն ավելացավ 20%-ով, արտադրության ծավալը՝ կրկնակի:

Արդյունաբերական վերելքի հիմնական պատճառը երկաթուղային շինարարության ծավալումն էր, ինչը մեծացնում էր ուղեգծերի, շոգեշարժիչների, շինանյութի, վառելիքի և այլ արտադրանքի պահանջը: XIX դարի վերջին տասնամյակում կառուցվեց 22,6

հազ. կմ երկաթուղի, որը կազմում էր Ռուսաստանում դրա ընդհանուր երկարության մոտ 1/3-ը:

Արդյունաբերության զարգացման համար մեծ նշանակություն ունեցավ օտարերկրյա կապիտալի ներհոսքը, որի ծավալը 1890-1900 թթ. 214 մլն-ից հասավ մինչև 911 մլն ռուբլու: Օտարերկրացիների ձեռքին էր երկրի բաժնետիրական կապիտալի կեսը, որի 64%-ը ներդրված էր հարավի լեռնային, մետալուրգիական արդյունաբերության մեջ: Իրենց ծավալներով գերակշռում էին բելգիական և ֆրանսիական կապիտալները:

Ռուսաստանում արդյունաբերության զարգացմանը նպաստում էր պետության հովանավորչական քաղաքականությունը: Մասնավոր ձեռնարկություններին տրվում էին հարկային արտոնություններ, էժան վարկեր, սուբսիդիաներ, պետական պատվերներ: Հայրենական արդյունաբերական արտադրանքը օտարերկրյա ապրանքների մրցակցությունից պաշտպանելու համար 1891 թ. մաքսերը բարձրացվեցին մինչև 33-100%՝ իրենց գնի նկատմամբ: Բարձր մաքսատուրքերը ոչ միայն մեծացնում էին պետական բյուջեի եկամուտները, այլև պայմաններ էին ստեղծում ռուսական արդյունաբերության արագ զարգացման համար:

Երկրում բուրժուական հարաբերությունների ծավալման համար կարևորվում էին վարկային համակարգի զարգացումը և դրամի կայունացումը: Ռուսաստանում 1860 թ. հիմնադրված Պետական բանկը հատկացնում էր հիմնականում հիպոթեքային վարկեր: Առաջին մասնավոր առևտրային բանկը հիմնադրվեց 1864 թ.: Առևտրային բանկերի քանակը 1874 թ. 33-ն էր:

Դրամի կայունության համար պետք է ավելացվեին ոսկու պաշարները բյուջեի պակասուրդը վերացնելու, օտարերկրյա փոխառությունների ծավալը մեծացնելու և առևտրային ու վճարային հաշվեկշիռները ակտիվացնելու միջոցով: 1897 թ. հնարավոր եղավ կուտակել մեկ մլրդ ռուբլուց ավելի արժողությամբ ոսկի, ինչը գրեթե հավասար էր շրջանառության մեջ եղած վարկային տոմսերի քանակին, և սկսել դրամական ռեֆորմը, որով մեկ վարկային ռուբլին ազատ փոխանակվում էր 66 կոպեկով՝ ոսկով:

Ռուսական ռուբլու կայունությունը ապահովվեց հիմնականում օտարերկրյա փոխառությունների հաշվին: Դրանք 1881-1897 թթ. կազմեցին 1050 մլն ռուբլի՝ ոսկով, որը մարելու համար տարեկան ծախսվում էր պետական բյուջեի եկամուտների մոտ 40%-ը:

XIX դարի վերջին Ռուսաստանում սկսվեց արտադրության համակենտրոնացումը, որն արագացվեց 1900-1903 թթ. գերարտադրության տնտեսական ճգնաժամով: Արտադրության համակենտրոնացումն ուղեկցվում էր հազարավոր մանր ու միջին ձեռնարկությունների քայքայմամբ: Առաջացան մոնոպոլիաներ, որոնց տարած-

ված ձևը սինդիկատն էր: Դրանք ստեղծվում էին ձեռնարկությունների արտադրանքի իրացումը մոնոպոլացնելու և բարձր շահույթ ստանալու համար: Խոշոր սինդիկատներից էին «Պրոդամեդը», որը 1913 թ. վերահսկում էր Ռուսաստանի հարավի մետալուրգիական արտադրանքի գրեթե 90%-ը, «Պրոդուգոլը», որին բաժին էր ընկնում Դոնբասի ածխի հանույթի 60%-ը, «Պրոդվագոնը», «Գվոզդը» և այլն: Առաջանում են բանկային մոնոպոլիաներ: Դրանցից երեքը՝ «Ռուս-Ասիականը», «Պետերբուրգյան միջազգայինը» և «Ազով-Դոնյանը» կենտրոնացնում էին երկրի բանկային ակտիվների գրեթե կեսը: Դրանք ակտիվ միջամտում էին ձեռնարկությունների գործունեությանը և ֆինանսավորում նորերի կառուցումը: Ֆինանսական կապիտալի ներկայացուցիչներն էին Պուտիլովը, Նորբելը, Մանթաշյանցը, Ավդակովը և ուրիշներ:

Ռուսաստանի տնտեսության մեջ մեծ նշանակություն ուներ օտարերկրյա կապիտալը, որն առավելապես ուղղվում էր արդյունահանող ճյուղեր և երկաթուղային շինարարություն: Դրանց էր պատկանում երկրի բաժնետիրական կապիտալի կեսը:

Այս բոլորը վկայում էին այն մասին, որ XX դարի սկզբին Ռուսաստանում ձևավորվել էր ժամանակակից արդյունաբերությունը և ֆինանսաբանկային համակարգը:

XX դարի սկզբին Ռուսաստանի տնտեսության մեջ պահպանվում էր հետամնաց ագրարային հատվածը՝ սեփականության կիսաճորտատիրական ձևերով և տնտեսավարման հին մեթոդներով: Գյուղատնտեսությունը մնում էր տնտեսության հիմնական ճյուղը: Երկրի հողային ֆոնդի կեսը պատկանում էր գյուղացիությանը, որը կազմում էր բնակչության մոտ 80%-ը: Մեկ գյուղացիական տնտեսությանը բաժին էր ընկնում 7 դեսյատին հող, որը բավարար չէր շահութաբեր և ապրանքային տնտեսություն զարգացնելու համար: Գյուղացիությունը պահանջում էր բաժանել կալվածատիրական հողերը, կրճատել հարկերը և պարտությունները: Ագրարային հարցի լուծումը 1905-1907 թթ. հեղափոխության հիմնական նպատակներից էր:

Չեղափոխությունը ճնշելուց հետո ցարիզմը սկսեց իրականացնել նոր ագրարային քաղաքականություն (նախարարների խորհրդի նախագահ Ստոլիպինի անվամբ), որի խնդիրն էր պահպանել կալվածատիրական հողատիրությունը և գյուղացիության շերտավորման միջոցով արագացնել բուրժուական հարաբերությունների զարգացումը:

Ստոլիպինյան ագրարային ռեֆորմը բաղկացած էր երեք մասից՝ համայնական հողատիրության քայքայում և հողի մասնավոր սեփականության զարգացում, գյուղացիական հողային բանկի հիմնադրում և գյուղացիների վերաբնակեցում կենտրոնական շրջաններից ծայրամասային շրջաններում: Նոր օրենքով ամեն մի գյուղացի կա-

րող էր պահանջել հողակտոր և դուրս գալ համայնքից: Նա դառնում էր հողի սեփականատեր և ձեռք բերում հողը վաճառելու, գրավադրելու կամ սեփական տնտեսություն ստեղծելու իրավունք: Դա նպաստում էր հողի կենտրոնացմանը ունևոր գյուղացիների՝ կուլակների ձեռքին, որոնք գյուղացիական բանկի միջոցով գնում էին կալվածատիրական և գյուղացիական հողերը և օգտվում բանկային վարկից: Մինչև 1916 թ. վաճառվեց 4 մլն դեսյատին հող, ծխերի մոտ 25%-ը դուրս եկավ համայնքներից, և 2 մլն գյուղացի վերաբնակեցվեց Սիբիրում, Յեռավոր Արևելքում ու Միջին Ասիայում:

Ագրարային ռեֆորմը չլուծեց իր առջև դրված խնդիրները: Համայնքները հիմնականում պահպանվեցին, հողային բանկից փոխառություն ստացած գյուղացիների 20%-ը սնանկացավ, իսկ վերաբնակեցվածների մոտ 16%-ը վերադարձավ և լրացրեց վարձու աշխատուժի բանակը:

Գյուղատնտեսությունը Ռուսաստանում շարունակում էր զարգանալ դանդաղ և էքստենսիվ եղանակով: Հացահատիկային մշակաբույսերի բերքատվությունը 2-3 անգամ ցածր էր Արևմուտքի երկրների համեմատությամբ:

Հետամնաց էր նաև արդյունաբերությունը, որի զարգացման գազաթնակետը՝ 1913 թվականն էր: Արդյունաբերական արտադրությունը Ռուսաստանում 1861-1913 թթ. աճեց 12,5 անգամ, սակայն դրա հզորությունը 2,5 անգամ փոքր էր Ֆրանսիայի, 4,6 անգամ՝ Անգլիայի, 6 անգամ՝ Գերմանիայի և 14 անգամ՝ ԱՄՆ-ի արդյունաբերական արտադրության հզորությունից: Միայն 7%-ն էր կազմում մեքենաշինությունը, աշխատանքի արտադրողականությունը 10 անգամ ցածր էր, քան ԱՄՆ-ի արդյունաբերության մեջ: Երկիրն Արևմուտքից կախված էր մեքենաների, սարքավորումների ներմուծմամբ:

Ռուսաստանի տնտեսական և քաղաքական կյանքում պահպանվում էին ֆեոդալիզմի մնացուկները: Տնտեսությունը ռազմա-ֆեոդալական բնույթի էր:

**ԱՇԽԱՐՀԻ ԱՌԱՋԱՏԱՐ ԵՐԿՐՆԵՐԻ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ
ՄԻՋՊԱՏԵՐԱԶՄՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ
(1914-1939ԹԹ.)**

**8.1. ԱՌԱՋԻՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԱԶ-
ԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՌԱՋԱՏԱՐ ԵՐԿՐՆԵՐԻ ՏՆՏԵ-
ՍԱԿԱՆ ԴՐՈՒԹՅԱՆ ՎՐԱ**

Առաջին համաշխարհային պատերազմը (1914-1918թթ.) տեղ ունեցած նախորդ բոլոր պատերազմներից ամենակործանարարը և ծավալունն էր: Հարկ է նշել, որ պատերազմի հորձանուտում հայտնվեց 34 ինքնուրույն պետություն 1,5 մլրդ բնակչությամբ, որը կազմում էր հողագնդի վրա ապրող մարդկանց երկու երրորդը: Անմիջականորեն ռազմական գործողությունների մասնակցեց շուրջ 80 մլն զինվոր ու սպա:

Պատերազմը արմատապես վերափոխեց մասնակից երկրների տնտեսությունը, որը նպատակամղվեց բանակի համար անհրաժեշտ ռազմական արտադրանքի (զենքի, զինամթերքի, ռազմական հանդերձանքի) թողարկմանը: Առաջին անգամ օգտագործվեցին ռազմական տեխնիկայի նոր տեսակներ՝ ինքնաթիռ, հեռահար հրետանի, տանկ, սուզանավ: Առաջին անգամ կիրառվեց զանգվածային ոչնչացման զենք՝ թունավորող նյութեր:

Պատերազմի չորս տարում արտադրվեցին և օգտագործվեցին 30 մլն հրացան, 1 մլն գնդացի, 150 հազար թնդանոթ, 10 հազար տանկ: Պատերազմող երկրների ռազմական ծախսերը աճեցին ավելի քան 20 անգամ՝ 12 անգամ զերազանցելով եվրոպական երկրների ոսկու պաշարը: Պատերազմից խիստ տուժեցին ոչ միայն ռազմական տեխնիկան, այլև՝ արդյունաբերությունը և գյուղատնտեսությունը, ենթակառուցվածքը, բնակարանային ֆոնդը, տրանսպորտը, կենսագործունեության այլ բնագավառները:

Պատերազմը ուժեղացրեց պետության դերը տնտեսական կյանքում, արագացրեց կարգավորող կապիտալիզմի համակարգի ձևավորումը: Ամեն ինչ մոբիլիզացվեց պատերազմական կարիքները հոգալու համար: Տնտեսական հարաբերությունների պետական կարգավորման համակարգի զարգացման վրա պատերազմի տարի-

ներին հակամարտող երկրներում ազդեցին հետևյալ գործոնները. սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակը, ազգային և սոցիալ-քաղաքական հարաբերությունների առանձնահատկությունները, այս կամ այն երկրի ռազմական գործողություններին անմիջական մասնակցության աստիճանը:

Անտանտի կողմից ռազմաճակատի կարիքների համար աշխատում էր 40 հազար արդյունաբերական ձեռնարկություն, որոնցում զբաղված էր 13 մլն մարդ: Մինչդեռ գերմանական դաշինքն ուներ 10 հազար ձեռնարկություն 6 մլն աշխատողով: Ավերվեցին Ֆրանսիայի, Գերմանիայի, Ավստրիայի, Ռուսաստանի զգալի տարածքներ:

Պատերազմը ոչնչացրեց նրա մասնակից երկրների ազգային հարստության ավելի քան մեկ երրորդը: Չոհվեց 10 մլն մարդ, և 10 մլն-ը մահացան սովից ու համաճարակներից: 20 մլն մարդ էլ վիրավորվեց և դարձավ հաշմանդամ:

Միայն երկու երկիր պատերազմից դուրս եկավ ավելի ուժեղացած և հարստացած՝ Ճապոնիան (25%-ով), ԱՄՆ-ը (40%): Անգլիան հետ մղվեց ԱՄՆ-ի կողմից, վերջինս դարձավ կապիտալիստական աշխարհի առաջատարը:

Պատերազմի հետևանք էր աշխարհի բաժանումը երկու տարբեր սոցիալ-տնտեսական համակարգերի: Ռուսաստանում հաստատվեցին սոցիալիստական կարգեր և տնտեսավարման նոր համակարգ:

Հետպատերազմյան շրջանում աշխարհի երկրների մեծ մասում դիտվում էր տնտեսության անկայուն վիճակ, ինչը 1914-1918թթ. կրած ծանր կորուստների ուղղակի հետևանք էր: Անկայունության վրա ազդեցին մի շարք գործոններ՝ կորուստների մասշտաբները, պարտությունը կամ հաղթանակը, պատերազմի տարիներին տնտեսության ռազմականացման աստիճանը, սոցիալ-տնտեսական և քաղաքական զարգացման ընդհանուր մակարդակը, ազգային առանձնահատկությունները և այլն:

Հաջորդ փուլն ընդգրկում է 1924-1929 թվականները, երբ, ի տարբերություն պատերազմական շրջանի, կրճատվեց տնտեսական հարաբերություններին պետության մասնակցության աստիճանը զարգացած երկրներում: Բայց և այնպես այդ ժամանակահատվածում ևս տեղի էր ունենում տնտեսության մոնոպոլացում, մոնոպոլիաների և պետության սերտաճում:

Իսկ մեծ ճգնաժամի (1929-1933թթ.) ժամանակաշրջանում արագացան տնտեսական կյանքին պետության մասնակցության աճի տեմպերը:

Հետպատերազմյան շրջանը (1934-1939թթ.) բնութագրվում էր առաջատար երկրների տնտեսության ռազմականացմամբ, էկոնոմիկայի պետական կարգավորման համակարգի հետագա զարգացմամբ:

8.2. ԱՄՆ-Ի ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ 1914-1939ԹԹ.

Առաջին համաշխարհային պատերազմի նախօրեին ԱՄՆ-ը աշխարհի ամենահզոր երկիրն էր: Պատերազմի տարիներին նա առավել հզորացավ շնորհիվ այն բանի, որ մինչև 1917թ. ապրիլը չէզոք էր և չէր մասնակցում ռազմական գործողություններին: Պատերազմող կողմերին մատակարարում էր զենք, զինամթերք, հանդերձանք, սննդամթերք և այլ ապրանքներ: Ռազմական մատակարարումները Անգլիային, Ֆրանսիային, Ռուսաստանին և մյուս երկրներին 1914թ. զնահատվում էին 1 մլրդ, 1916թ.՝ արդեն 3 մլրդ դոլար. մի մասը վճարվում էր ոսկով, մյուսը՝ ԱՄՆ-ից ստացված փոխառություններով: Դաշնակիցների պարտքերը ամերիկյան ապրանքների դիմաց կազմեցին 9,5 մլրդ դոլար:

Ամերիկյան մոնոպոլիաները ավելացրին ապրանքների արտահանումը նաև պատերազմող երկրների վաճառահանման շուկաներ: Արտաքին առևտրի ծավալը գրեթե կրկնապատկվեց: ԱՄՆ-ը դարձավ ամենախոշոր արտահանողն աշխարհում:

Բարենպաստ ռազմական իրավիճակը նպաստեց ԱՄՆ-ի արդյունաբերական և գյուղատնտեսական արտադրության զարգացմանը՝ արտադրական հզորությունների և զբաղվածության ավելացման հաշվին: Արդյունաբերական արտադրության ծավալը 1914-1919թթ. ավելացավ կրկնակի, հացահատիկի արտադրությանը՝ 1,5 անգամ:

Պատերազմը եվրոպական երկրներից պահանջում էր հսկայական ծախսեր: Անհրաժեշտ դրամական միջոցները հնարավոր էր ստանալ միայն ԱՄՆ-ից: Դա պայմաններ էր ստեղծում կապիտալի արտահանման ծավալների մեծացման համար: Ամերիկյան փոխառությունները և ներդրումները հոսեցին եվրոպական երկրներ՝ կազմելով 7 մլրդ դոլար: Այդպիսով՝ ԱՄՆ-ը, պատերազմի մեջ մտնելով 7,2 մլրդ դոլար պարտքով, ծածկեց դրա կեսը և դարձավ վարկատու երկիր:

Պատերազմը ավելի հարստացրեց ԱՄՆ-ին՝ կորպորացիաների զուտ շահույթները 2,7 մլրդ-ից հասան մինչև 6,2 մլրդ դոլարի, ազգային հարստությունն ավելացավ ավելի քան 2,5 անգամ: ԱՄՆ-ում 1918թ. կենտրոնացել էր ոսկու համաշխարհային պաշարների կեսը:

ԱՄՆ-ի առաջատար դերը համաշխարհային տնտեսության մեջ ամրապնդվեց և ավելի ուժեղացավ:

Պատերազմի տարիներին ի հայտ եկան տնտեսության պետական կարգավորման միտումներ: Երկրի արտադրական ներուժը ռազմական կարիքներին ենթարկելու նպատակով 1917-1918թթ.

ստեղծվեցին կոմիտեներ, որոնք բաշխում էին կառավարական պատվերները, աշխատուժը, վառելիքը, հումքը, տրանսպորտային միջոցները: Նրանց գործունեությունը կարգավորում էր ռազմաարդյունաբերական խորհուրդը: 1917թ. սահմանվեց երկաթուղային տրանսպորտի պետական վերահսկողություն: Մեծանում էր պետական շինարարության ծավալը առաջին հերթին ռազմական նշանակության ճյուղերում, վարկեր և սուբսիդիաներ էին տրվում մոնոպոլիաներին: Պետությունը կայուն զներով մոնոպոլիաներից գնում էր արտադրանք, որի զգալի մասը տրամադրվում էր դաշնակիցներին: Այդպիսով պետության միջոցով իրացվում էր արդյունաբերական և գյուղատնտեսական արտադրանքի մեծ մասը:

Մինչև 1920թ. ԱՄՆ-ի տնտեսությունը շարունակում էր վերելք ապրել պատերազմից տուժած տնտեսությունները վերականգնող եվրոպական երկրներ արդյունաբերական և գյուղատնտեսական ապրանքների մատակարարման շնորհիվ:

ԱՄՆ-ի բնակչությունը 1920թ. կազմում էր աշխարհի բնակչության ընդամենը 6%, բայց ԱՄՆ-ում արտադրվում էր համաշխարհային արդյունաբերական արտադրանքի գրեթե կեսը, այդ թվում ավտոմոբիլների՝ 85%, նավթամթերքների՝ 66%, թուջի և պողպատի՝ 50%-ից ավելին:

ԱՄՆ-ում 1920թ. սկսվեց գերարտադրության տնտեսական ճգնաժամ, որը թեև կարճատև էր, բայց շատ ծանր. 1921թ. արդյունաբերական արտադրությունը 1920թ. համեմատությամբ կրճատվեց 1/3-ով, գործազուրկները կազմեցին մոտ 6 մլն մարդ, կրճատվեց նաև գյուղատնտեսական արտադրությունը:

Ճգնաժամին հաջորդեց արդյունաբերական վերելք՝ փրոսպերիթի (ծաղկման) ժամանակաշրջանը, որը տևեց մինչև 1929թ. ու պայմանավորված էր հիմնականում տեխնիկական առաջընթացով և արդյունաբերության նոր ճյուղերի (ավտոմոբիլային, ավիացիոն, ռետինի, պլյումինի, քիմիական, էլեկտրատեխնիկական) զարգացմամբ: Մինևույն ժամանակ նորացվում էր հիմնական կապիտալը, շարունակվում էին արտադրության մեքենայացումը և աշխատանքի արտադրողականության բարձրացմանն ուղղված միջոցառումները:

Արդյունաբերական վերելքը տևեց մինչև 1929թ., երբ սկսվեց կապիտալիզմի պատմության մեջ գերարտադրության ամենածանր համաշխարհային տնտեսական ճգնաժամը: Դա տևեց մինչև 1933թ. և առավել ծանր հարվածեց ամերիկյան տնտեսությանը. հայտնի է «մեծ դեպրեսիա» անվամբ:

Ճգնաժամը սկսվեց Նյու-Յորքի ֆոնդային բորսայի փլուզմամբ, ընդգրկեց բանկային համակարգը, արդյունաբերությունը և գյուղատնտեսությունը: 1932թ. արդյունաբերական արտադրությունը, 1929թ. համեմատությամբ, կրճատվեց 46%-ով: Առավել մեծ չափով

կրճատվեց ավտոմոբիլաշինությունը՝ 80%-ով, թուջի արտադրությունը՝ 79%-ով, պողպատի արտադրությունը՝ 76%-ով, նավթի հանույթը՝ 78%-ով և այլն: Սնանկացավ 135 հազ. արդյունաբերական, առևտրային և ֆինանսական ֆիրմա, բանկերի 40%-ը: Գործազուրկների թիվը կազմեց 17 մլն: Երկրի արդյունաբերությունը հետ շարտվեց ավելի քան 20 տարով:

Ճգնաժամ էր ապրում նաև գյուղատնտեսությունը՝ կրճատվեց հացահատիկի և եգիպտացորենի արտադրությունը, գյուղատնտեսական մթերքների գները իջան 58%-ով: Քայքայվեցին միլիոնավոր ֆերմերներ, որոնք ստիպված էին վաճառել իրենց հողերը՝ պարտքերը մարելու համար:

Կառավարությունը լուրջ քայլեր ձեռնարկեց ճգնաժամը հաղթահարելու նպատակով՝ բարձրացրեց ներմուծվող ապրանքների մաքսատուրքերը, վարկեր էր տրամադրում ֆիրմաներին, գնում ֆերմերներից արտադրանք, սակայն ճգնաժամը գնալով խորանում էր: Տնտեսագետները սկսեցին խոսել կապիտալիզմի վերջի մասին և առաջարկել տնտեսությունը փրկելու նոր «դեղամիջոցներ»: Դրանցից մեկը անգլիացի տնտեսագետ Ջ.Քեյնսին էր, որն առաջարկում էր սահմանափակել ազատ շուկայական մրցակցության տարերթը տնտեսության պետական կարգավորման միջոցով:

1932թ. ԱՄՆ-ի նախագահ ընտրվեց Ֆ.Ռուզվելտը, որը հռչակեց Ջ.Քեյնսի տեսության վրա հիմնված տնտեսության առողջացման միջոցառումների համակարգ. պատմության մեջ հայտնի է «Նոր կուրս» անվանմամբ:

«Նոր կուրսը» ներառում էր՝

1. Ֆինանսական օրենքներ, որոնք ուղղված էին բանկային, ֆինանսական համակարգի առողջացմանը: Դրանցից հարկ է առանձնացնել «Բանկային գործունեության մասին արտակարգ օրենքը», որը պետական հսկողություն էր սահմանում երկրի բոլոր բանկերի վրա և հաստատում մասնավոր ավանդների ապահովության դաշնային կառավարության երաշխիքները: Բանկերին արգելվում էր ունենալ արժեթղթեր և զբաղվել ձեռներեցությամբ: Նրանք ստիպված էին վերադառնալու իրենց սկզբնական գործունեությանը՝ վարկավորելու ձեռներեցներին և քաղաքացիներին, որ կրճատեց ֆինանսական և այլ չարաշահությունների ալիքը և կայունացրեց բանկերը:

Ոսկով թղթադրամի փոխանակումը դադարեցնելու համար 1933թ. մարտին փակվեցին բոլոր բանկերը, նրանցից ամենախոշորները՝ մոտ 80%-ը, ստացան լիցենզիա և բացվեցին 1933թ. վերջին, կառավարությունը նրանց տրամադրեց 1 մլրդ դոլար՝ վարկավորումը վերսկսելու համար: Այդպիսով՝ ԱՄՆ-ը իրեն ապահովագրեց ֆինանսական և, առաջին հերթին, բանկային համակարգի ճգնաժամերից:

ԱՄՆ-ի կառավարությունը ոսկու գնի բարձրացումը կանխելու նպատակով, արգելեց նրա արտահանումը, արտաքին շուկաներում գնեց 187,6 մլն դոլար արժողությամբ ոսկի և 1934թ. հունվարին իրագործեց դոլարի դեվալվացիա 41%-ով: Դա փոքրացրեց մոնոպոլիաների պարտքի չափը պետությանը և բարելավեց ազգային արտադրողների վիճակը նաև արտահանման հնարավորությունները մեծացնելու միջոցով: Այն, իր հերթին, աշխուժացրեց ներդրումային գործունեությունը, որը և «Նոր կուրսի» քաղաքականության գլխավոր նպատակն էր: Պետության ֆինանսական ռեսուրսները մեծացնելու և կարգավորող գործառույթները ակտիվացնելու համար ԱՄՆ-ը հրաժարվեց ոսկու ստանդարտից և ոսկին դուրս բերեց շրջանառության ոլորտից: 1934թ. ընդունվեց ոսկու պահուստի մասին օրենքը, որը սահմանեց ոսկու նոր գինը՝ 35 դոլար՝ մեկ ունցիայի (31,1 գր.) համար:

2. Արդյունաբերության մասին օրենքներ, որոնց նպատակն էր արդյունաբերության վերականգնումը: Կառավարությանը կից 1933թ. ստեղծվեց Արդյունաբերության վերականգնման ազգային վարչակազմը՝ «ուղեղի տրեստի» գլխավորությամբ, որի կազմում էին խոշոր գիտնականներ և գործարարներ:

Արդյունաբերությունը բաժանվեց 17 ճյուղի, ընդունվեց «ազնիվ մրցակցության կոդեքս», որը ամեն մի ձեռնարկության համար սահմանում էր արտադրության ծավալը, գները, աշխատավարձը, բաշխում էր շուկաները: Արտադրության թույլատրված չափեր (քվոտաներ) սահմանելու միջոցով նախատեսվում էր թողարկել այնքան արտադրանք, որքան կարող էր կլանել շուկան: Արտադրության ընդլայնման առաջնությունը տրվում էր ամերիկյան արդյունաբերությանը: Հայտնվեց «Գնեք ամերիկյանը» կոչը: Արգելքներ էին գործում պետպատվերով օտարերկրյա ապրանքների գնումներ իրականացնելիս, սահմանվեցին ապրանքների ներմուծման քվոտաներ և բարձր մաքսատուրքեր:

3. Սոցիալական քաղաքականությունը, որը նախատեսում էր արտակարգ օգնություն ճգնաժամից առավել տուժածներին: Օգնությունը բնակչությունը ստանում էր ոչ թե դրամով, այլ աշխատատեղերի ստեղծմամբ, որ կրճատում էր գործազրկությունը: Կառուցվում էին ճանապարհներ, օդանավակայաններ, դպրոցներ, հիվանդանոցներ և սոցիալական նշանակության այլ օբյեկտներ, որոնց համար 1933-1935թթ. կառավարությունը ծախսեց 7,9 մլրդ դոլար: Երիտասարդությանը աշխատանքով ապահովելու, հանցագործության դեմ պայքարելու, արդյունաբերական և տրանսպորտային ենթակառուցվածքները և երկրի բնական հարստությունները պահպանելու համար ընդունվեց աշխատանքային ճամբարների ստեղծման մասին օրենք: 1933-1940թթ. այդ ճամբարներում ներգրավվեց մոտ

2,5 մլն մարդ, որոնք կառուցում էին ամբարտակներ, պահպանում անտառները, արգելոցները, ստեղծում ազգային պարկեր:

4. Հակաժգնաժամային ագրարային քաղաքականությունը, որն իրականացվում էր 1933թ. ԱՄՆ-ի Կոնգրեսի կողմից ընդունված «Գյուղատնտեսության կարգավորման մասին» օրենքով: Այդ օրենքի հիմնական նպատակն էր երկրում կրճատել գյուղատնտեսական արտադրության ծավալը՝ ցանքատարածությունները և անասունների գլխաքանակը կրճատելու միջոցով, որպեսզի պահպանվեն գները և ֆերմերների եկամուտները: Օրենքի գործողության մեկ տարում ոչնչացվեցին մոտ 30 մլն գլուխ խոշոր և մանր եղջերավոր անասուն և խոզ, ցանքերի 25%-ը, ավելի քան 2 մլրդ դոլարի էժան վարկեր տրվեցին ֆերմերներին՝ բանկերում գրավադրված հողերը փրկելու համար:

«Նոր կուրսի» քաղաքականության իրականացմամբ ԱՄՆ-ը դարձավ սոցիալական ուղղվածության երկիր: Ֆ.Ռուզվելտը 1935թ. ստորագրեց «Աշխատանքային հարաբերությունների ազգային ակտը» (Վազների օրենքը), որով ճանաչվեց արհմիությունների և գործադուլների օրինականությունը:

Կարևոր նշանակություն ուներ նաև 1936թ. ընդունված սոցիալական ապահովության մասին օրենքը, որը սահմանում էր ծերության կենսաթոշակների, գործազրկության, հիվանդության և հաշմանդամության նպաստների համակարգը: Ընդունվեցին նաև ուրիշ օրենքներ, որոնք էապես բարելավում էին վարձու աշխատողների վիճակը և զսպում աճող սոցիալական դիմակայությունը:

«Նոր կուրսի» քաղաքականության և պետության ակտիվ տնտեսական դերի շնորհիվ ԱՄՆ-ը հաղթահարեց 1929-1933թթ. ճգնաժամը:

8.3. ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ՏՆՏԵՍԱԿԱԼ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ 1914-1939ԹԹ.

Առաջին համաշխարհային պատերազմի նախապատրաստման գործում կայսերական Գերմանիան խաղաց ամենաակտիվ դերը: Եթե Անտանտը պատերազմում էր զաղուբների պահպանման, ապա Գերմանիան՝ դրանց վերաբաժանման համար: Միաժամանակ Գերմանիան ցանկանում էր զավթել Լեհաստանը, Մերձբալթիկան, Ուկրաինան, Կովկասը:

Պատերազմի տարիներին Գերմանիայում պետական-մոնոպոլիստական կապիտալիզմն ավելի բարձր հիմքերի վրա էր, քան

ԱՄՆ-ում: Նշված ժամանակաշրջանում Գերմանիայի տնտեսությունը եվրոպական երկրների մեջ ամենամոնոպոլացվածն էր, այստեղ ուժեղ էր պետության միջամտության աստիճանը: Դա բացատրվում էր ոչ միայն գերմանական կապիտալիզմի քաղաքական ձևի յուրահատկությամբ, որը զարգանում էր գերմանական պատմական դպրոցի «դաստիարակիչ պրոտեկցիոնիզմի» կոնցեպցիայի հիման վրա, այլև բոլոր ռեսուրսների լարվածությամբ (Գերմանիայի կողմից սանձազերծած տևական պատերազմի պատճառով):

Գերմանիայում հարկադրական սինդիկատավորման ենթարկվեցին արդյունաբերական ձեռնարկությունները: Պատերազմի ժամանակ Գերմանիայում ստեղծվել էին պետության ու մոնոպոլիաների դաշինքի ավելի հասուն ձևեր, քան ուրիշ երկրներում: Այդ շրջանում վերականգնվեց Յենոս-Վեստֆալյան քարածխային սինդիկատը, մոնոպոլացումն ընդգրկեց ցեմենտի, ալյումինի, ծխախոտի և կոշիկի ձեռնարկությունները:

Իր մարդկային և նյութական ռեսուրսներով գերմանական դաշինքը էապես զիջում էր Անտանտին: Ուստի՝ պատերազմական հետագա գործողությունների համար պահանջվում էր բոլոր ուժերի մոբիլիզացում, նպատակ, որի իրականացումն իր վրա վերցրեց բուրժուայունկերական պետությունը: Արտակարգ միջոցներ ձեռնարկվեցին նաև գյուղատնտեսության մեջ: Ծովային շրջափակման հետևանքով Գերմանիայից պարենի արտահանումը կրճատվեց երկու երրորդով: Պետությունը մտցրեց հացի մենաշնորհ, բնակչությունից գնում էր հացի ամբողջ պաշարը և վճարում դրա դիմաց: Կիրառվեց նաև նորմավորված մատակարարման համակարգ: Տեղի ունեցավ պետության ուղղակի միջամտություն արդյունաբերության ֆինանսավորմանը: Այսպես՝ պատերազմի ժամանակ արդյունաբերության մեջ ներդրված 5,5 մլրդ մարկից 3 մլրդ-ը բաժին էր ընկնում պետական զանձարանին:

Պատերազմը ձգձգվեց և շուտով պարզ դարձավ, որ Գերմանիան գերազնահատել է իր տնտեսական հնարավորությունները և ռազմական պոտենցիալը: Պատերազմի ժամանակ Գերմանիայի ազգային հարստությունը կրճատվեց կիսով չափ, Գերմանիան կորցրեց իր բնակչության 13%-ը:

Ի դեպ, պատերազմին մասնակցած երկրներից ամենածանրը Գերմանիայի վիճակն էր: 1918թ. այստեղ արդյունաբերական արտադրության ծավալը կազմում էր նախապատերազմյան մակարդակի 57%-ը: Պատերազմի տարիներին չնորացվեցին երկրի հիմնական ֆոնդերը, կրկնակի կրճատվեց գյուղատնտեսական արտադրանքի ծավալը, որը հանգեցրեց սովի 1916թ.: Աշխատավարձը կրճատվեց մեկ երրորդով, աշխատօրը հասավ 12-14 ժամի: Այդ բոլորի հետևանքով ազգային եկամուտը 1918-1919թթ. կազմեց

նախապատերազմյան մակարդակի 50%: Քայքայվեց ֆինանսական համակարգը, աճեցին հարկերը, սակայն պետության ծախսերն այնքան շատ էին, որ թողարկվեցին ներքին փոխառություններ, մեծացան վարկի ծավալները: Արդյունքը՝ երկրի պետական պարտքը նախապատերազմյան մակարդակի համեմատությամբ աճեց 32 անգամ:

1919թ. հունիսի 28-ին կնքվեց Վերսալյան հաշտության դաշնագիրը, որով Գերմանիայի բոլոր գաղութները հանձնվում էին Անգլիային, Ֆրանսիային, Ճապոնիային, Բելգիային: Էլզասն ու Լոթարինգիան վերադարձվեցին Ֆրանսիային, առանձին մարզեր՝ Բելգիային, Լեհաստանին, Դանիային, Լիտվային: Որոշվեց՝ հաղթող երկրները պետք է Գերմանիայից գանձեն 132 մլրդ մարկ տուգանք (ռեպարացիա), որից 20 մլրդ-ը՝ առաջիկա երկու տարում: Նրանից բռնագրավվեցին 5 հազար շոգեքարշ, 150 հազար վագոն, գյուղատնտեսական մեքենաներ, 140 հազար կաթնատու կով: Իրագործվեց Գերմանիայի զինաթափումը: Նրա ռազմածովային նավատորմի մեծ մասը ջրասույգ արվեց, արգելվեց ռազմական ավիացիան, բանակի անձնակազմը կրճատվեց՝ մինչև 100 հազար մարդ:

Գերմանիայից վերցվեցին 3 մլն քառակուսի կմ տարածքով, 13 մլն բնակչությամբ գաղութներ: Նա կորցրեց իր բուն տարածքի 12%: 1923թ. ֆրանս-բելգիական զորքերը օկուպացրին Ռուրի մարզը: Փաստորեն Վերսալյան դաշնագիրն էլ ավելի վատթարացրեց Գերմանիայի դրությունը: Ռեպարացիոն վճարները, տարածքային կորուստները, որոշ շրջանների օկուպացումը, բանակի և ռազմական արդյունաբերության կրճատումը իրենց բացասական կնիքը դրեցին Գերմանիայի տնտեսության վրա:

Առաջին համաշխարհային պատերազմում կրած պարտության հետևանքով Գերմանիայում կործանվեց գործող քաղաքական համակարգը, և մարդկային ու նյութական հսկայական կորուստները, Վերսալյան դաշնագրի ծանր պայմանները դարձան հետպատերազմյան գերմանական տևական ճգնաժամի հիմնական գործոնները:

Հետպատերազմյան Գերմանիային, արդյունաբերական ու գյուղատնտեսական արտադրանքի ծավալի խիստ կրճատման հետևանքով, բնորոշ էր տնտեսական քայքայվածությունը: Դա հատկապես նկատելի էր 1923թ., երբ ուժեղացավ դասակարգային հակամարտությունը, ստեղծվեց հեղափոխական կացություն: Տակավին 1919թ. գարնանը Բավարիայում կազմավորվել էր խորհրդային հանրապետություն, իսկ 1923թ. բանվորական կառավարություններ ստեղծվեցին Սաքսոնիայում և Թյուրինգիայում: Նման իրավիճակը խիստ անհանգստացրեց Անտանտի կառավարիչներին, որոնք որոշեցին զիջումների գնալ՝ փրկելու գերմանական կապիտալիզմը:

Գերմանիայում միայն 1920-ական թվականների կեսերից նկատելի դարձան տնտեսության առողջացման միտումները, արդյունաբերության մոնոպոլացված նոր ճյուղերի զարգացման դրական տեղաշարժերը, արտաքին առևտրական շրջանառության համեմատաբար արագ աճը: Այս ամենին բավականին նպաստեցին ԱՄՆ-ի և եվրոպական առաջատար երկրների ձգտումը՝ վերականգնելու պատերազմում Գերմանիայի պարտության պատճառով խախտված ուժերի հավասարակշռությունը, հեղափոխական շարժումների վախճ, Արևմտյան եվրոպա սոցիալիզմի ներթափանցման հնարավորությունը: Այդ նպատակով ընդունվեց ռեպարացիոն նոր պլան (1924-1929թթ.), որը կոչվեց ամերիկացի բանկիր, Փորձագետների միջազգային խորհրդի նախագահ Չ.Դաուեսի անունով:

Դաուեսի պլանը ներառում էր հետևյալ միջոցառումները.

1. ԱՄՆ-ը (որոշ չափով՝ նաև Անգլիան) Գերմանիային հատկացնում էին վարկեր՝ արդյունաբերության վերականգնման համար:
2. Վերականգնված արդյունաբերությունից ստացված եկամուտները պետք է ուղղվեին Անգլիային և Ֆրանսիային՝ ռեպարացիաների (տուգանքների) վճարմանը:
3. Ստանալով ռեպարացիոն վճարները՝ Անգլիան և Ֆրանսիան դրանցով փակում էին իրենց ռազմական պարտքերը ԱՄՆ-ին:
4. Գերմանիայի կողմից ամենամյա ռեպարացիոն վճարների ծավալը կրճատվում էր և սահմանվում 1,0-1,75 մլրդ ոսկյա մարկի չափով:
5. Պլանով նախատեսվում էին ռեպարացիոն վճարների ուրիշ աղբյուրներ ևս՝ մուտքեր անուղղակի հարկերից, որոնք դրվում էին զանգվածային պահանջարկ ունեցող առարկաների վրա:

Դաուեսի պլանը, ինչպես նշվեց, նախատեսում էր Գերմանիայի կողմից ամենամյա ռեպարացիոն վճարումների չափերի կրճատում, ընդսմին՝ այդ վճարումների վրա արտասահմանյան խստագույն վերահսկողության սահմանման պայմաններում: Ռեպարացիոն վճարումների մի մասը պետք է ծածկվեր արդյունաբերության և երկաթուղիների եկամուտներով: Միաժամանակ, պլանը նախատեսում էր կապիտալ ներդրումների ավելացում Գերմանիայի տնտեսության մեջ, ամերիկյան վարկատուների կողմից խոշոր չափերի փոխառվությունների տրամադրում՝ երկրի բյուջեն ամրապնդելու համար: Ընդհանուր առմամբ՝ օտարերկրյա ներդրումները Գերմանիայում 1924-1929թթ. կազմեցին 21 մլրդ, մինչդեռ ռեպարացիոն վճարումները՝ ընդամենը 10,2 մլրդ ոսկյա մարկ: Ներդրումների 70% բաժին էր ընկնում ամերիկյան բանկիրներին:

1924-1929թթ. տեղի ունեցավ գերմանական կապիտալիզմի մասնակի կայունացում, որը պայմանավորված էր հեղափոխական շարժման ջախջախմամբ, ռեպարացիոն վճարումների թեթևացմամբ, արտադրության կայունացմամբ և սղաճի դադարեցմամբ: Արդյունաբերության մեջ կիրառվեցին արտադրության ու աշխատանքի կազմակերպման նոր մեթոդներ, օգտագործվեցին արդիականացված սարքավորումներ, և արդեն 1929թ. Գերմանիան Եվրոպայում առաջին տեղը զբաղեցրեց արդյունաբերական արտադրանքի ծավալով:

Արտադրության համակենտրոնացումն էլ ավելի ուժեղացրեց մոնոպոլացման գործընթացը: 1925թ. ստեղծված «Ի. Գ. Ֆարբենիմ-դաստրի» քիմիական կոնցեռնը ամենախոշորն էր Եվրոպայում, էլեկտրատեխնիկական արդյունաբերության մեջ առաջվա նման հայտնի էին ԱԷԳ-ը և Սիմենսը:

1929-1933թթ. համաշխարհային տնտեսական ճգնաժամը խոցեց նաև Գերմանիայի էկոնոմիկան: Արդյունաբերական արտադրությունը կրճատվեց 40, արտաքին առևտուրը՝ 60%, թուլքի ձուլմամբ Գերմանիան նահանջեց XIX դարի վերջը, 18 հազար կալվածատիրական տնտեսությունից 13 հազարը սնանկացավ, մեծ չափեր ընդունեց գործազրկությունը: 1932թ. Գերմանիայում հաշվվում էր մոտ 8 մլն գործազուրկ, որոնք կազմում էին ժողովրդական տնտեսության մեջ զբաղվածների կեսը: Ճգնաժամը կազմալուծեց արդյունաբերական ամբողջ հատվածը (սնանկացան 68 հազար ձեռնարկություն), բանկային բնագավառը: Նույնպես ճգնաժամի ճիրաններում գտնվող առաջատար երկրների օգնության դադարեցումը էլ ավելի վատթարացրեց Գերմանիայի դրությունը:

Հաշվի առնելով անբարենպաստ տնտեսական վիճակը Գերմանիայում, վարկատու երկրների ֆինանսական փորձագետները որոշում ընդունեցին փոխել գերմանական ռեպարացիոն վճարումների համակարգը: 1929թ. Դաունսի պլանը փոխարինվեց պլանով Օ.Յունգի, որը Փորձագետների միջազգային խորհրդի նոր նախագահն էր, Մորգանի էլեկտրատեխնիկական տրեստի պրեզիդենտը, հայտնի ֆինանսիստ: Օգնության նոր պլանը սահմանափակում էր ռեպարացիաների ընդհանուր ծավալը: Նախատեսում էր ռեպարացիոն վճարումների կրճատում մինչև 114 մլրդ մարկ, վճարման դադարեցում 59 տարի հետո, Հռենոսի մարզի օկուպացման վաղաժամկետ դադարեցում: Պլանով վերացվում էին արդյունաբերության շահույթներից ռեպարացիոն ֆոնդ հատկացումները: Դրանով զգալի լրացուցիչ ներքին ռեսուրսներ էին ազատվում արդյունաբերության հետագա զարգացման համար: Միաժամանակ, վերացվում էր ֆինանսական հսկողությունը Գերմանիայի տնտեսության նկատմամբ: Բայց և այնպես, ճգնաժամի տարիներին Յունգի պլանը, փաստորեն, վերացվեց:

1931թ. ԱՄՆ-ի նախագահ Յուվերը որոշում կայացրեց ռեպարացիոն վճարումները դադարեցնել մեկ տարով, իսկ 1932թ. Լոզանի կոնֆերանսը որոշեց բոլոր վճարումները կրճատել մինչև 3 մլրդ մարկ և սահմանեց 15 տարի ժամանակ վճարելու համար:

Վայմարյան հանրապետության անընդունակությունը արդյունավետ հակազդելու տնտեսական ճգնաժամին, սոցիալական հակասությունների սրմանը, մոնոպոլիաների ձգտումը վերականգնելու կորսված դիրքերը համաշխարհային շուկաներում, հասարակության լայն շրջանակների աճող կարոտախտը գերմանական կայսրության նախկին հզորության նկատմամբ կենսամակարդակի կտրուկ անկման պայմաններում այն հիմնական գործոններն էին, որոնք հանգեցրին ֆաշիստական ռեժիմի հաստատմանը երկրում 1933թ: Ռայխստագի ընտրություններում հաղթեց Ա.Յիտլերի գլխավորած նացիոնալ-սոցիալիստական կուսակցությունը: Դրան մեծապես աջակցեց խոշոր ֆինանսական կապիտալը:

Ֆաշիզմի տնտեսական քաղաքականության գլխավոր բովանդակությունը տնտեսության ռազմականացումն էր, երբ խնդիր էր դրվում առաջնահերթ զարգացնել ռազմական արդյունաբերությունը և դրան սպասարկող ճյուղերը: Անցնելով իշխանության գլուխ՝ Յիտլերը նպատակ ուներ վերադարձնելու կորսված տարածքները և շուկաները, ընդլայնելու պետության սահմանները, հասնելու համաշխարհային տիրապետության:

Յենց նշված ռազմավարությունն էլ որոշեց ճգնաժամից երկրի դուրս գալու ձևերն ու մեթոդները, որոնք հենվում էին տնտեսության համապարփակ ռազմականացման վրա: Կարևորվեցին ռազմական առումով առաջնահերթ ծանր և վառելիքային արդյունաբերության ճյուղերի վերականգնումը, ռազմական տեխնիկա թողարկող ձեռնարկությունների ստեղծումը, ինչը պահանջում էր վիթխարի ռեսուրսների կենտրոնացում պետության ձեռքին:

Կազմավորվեց տնտեսության պետական կարգավորման հզոր ապարատ, որը դարձավ ֆինանսական, հումքային, արտադրական, պարենային, մարդկային և այլ ռեսուրսների կենտրոնացման հիմնական լծակը: Յարկադրական կարտելավորման, կայսրության պաշտպանության վերաբերյալ ընդունած մի շարք օրենքներ հնարավորություն տվեցին սահմանելու պետության խստագույն հսկողությունը արդյունաբերական պոտենցիալի երկու երրորդին:

Տնտեսության ղեկավարումն իրագործում էր մեկ միասնական կենտրոնից՝ գլխավոր տնտեսական խորհուրդը, որը վերաբաշխում էր ֆինանսական միջոցները, մարդկային և հումքային ռեսուրսները՝ դրանք առաջին հերթին ուղղելով ռազմաարդյունաբերական համալիր:

Փաստորեն՝ ֆաշիստական դիկտատուրայի պայմաններում պետական կարգավորման մեթոդները վառ արտահայտված վարչական ձևերի դրոշմն ունեին: Արագորեն ընդլայնվում էին էկոնոմիկայի պետական հատվածի շրջանակները, ամենից առաջ՝ հրեաների և այլ բռնադատվածների ձեռնարկությունների բռնագրավման և գործող ռեժիմին ոչ հավատարիմ գործարարների սեփականության ազգայնացման միջոցով: Աճում էր պետության մասնակցության բաժինը բաժնետիրական ընկերություններում: Ստեղծվում էին բյուջեից ֆինանսավորվող պետական ձեռնարկություններ:

Տնտեսական կյանք պետության ներխուժման նման տարբերակը խիստ արդյունավետ էր և ֆաշիստական ռեժիմին հնարավորություն տվեց 1934թ. ընթացքում հաղթահարելու ճգնաժամը:

Հարկ է նշել, որ 1932-1938թթ. Գերմանիայում ռազմական արտադրանքի ծավալն աճեց 10 անգամ: Ընդ որում՝ ճյուղի արտադրանքի թողարկումը պահանջում էր ռազմավարական հումքի (գունավոր մետաղների, ալյումինի, կաուչուկի, նավթի) բավարար առկայություն, որի պաշարները Գերմանիայում բացակայում էին: Կառավարությունը հիմնախնդիրը լուծում էր երկու տարբերակով՝ 1) Արտահանման ընդլայնմամբ. որպեսզի ձեռք բերի արտարժույթ՝ ուղղելով հումքի գնմանը և կրճատելով արտադրանքի մնացած տեսակների ներմուծումը: Այդ նախաձեռնությունն իր արտացոլումը գտավ Ռայխսբանկի տնօրեն Յա. Շախտի պլանում: 2) Սինթետիկ նյութերի արտադրության կազմակերպմամբ, նյութեր, որոնք պետք է համապատասխանեին բնական համանմանություններին:

Պետության հսկողությանն անցավ նաև գյուղատնտեսությունը, որի արտադրանքը պետք է հանձնեին սահմանված զներով: Գյուղացին պարտավոր էր արտադրելու այն, ինչ թելադրում էր պետությունը: Յուրաքանչյուր գյուղացի համարվում էր «սննդի ճակատի զինվոր»: Հատկապես խթանվում էր խոշոր գյուղացիական տնտեսությունների զարգացումը:

Ազգային աշխատանքի կազմակերպման մասին օրենքը նորմատիվային բազա ստեղծեց հարկադիր աշխատանքի համակարգի ներդրման համար: Պետական հսկողություն էր սահմանվում աշխատանքային ռեսուրսներին, կիրառվում էին տարատեսակ աշխատանքային պարիակներ: Կատարվեց աշխատուժի հաշվառում, բանվորներին արգելվում էր փոխելու աշխատատեղը: Երկարացվեց աշխատօրը՝ հասցնելով 12-14 ժամվա: Լուծարվեցին արհմիությունները, արգելվեցին գործադուլները և հանրահավաքները:

1935թ. ընդունվեց Գերմանիայի պաշտպանության մասին օրենքը և կիրառվեց պարտադիր զինապարտության համակարգ:

Պետության խստագույն հսկողությունը տնտեսությանը, որ հանգեցրեց կառավարման բռնապետական համակարգի ձևավորմանը,

Հիտլերին հնարավորություն տվեց մշակելու և իրագործելու մի քանի քառամյա պլաններ: Դրանցով որոշվում էին կենտրոնացված կարգով թողարկվող արտադրանքի տեսականին, ծավալը, գները: Ռազմական արդյունաբերության և ծանր ինդուստրիայի զարգացումը, ձեռնարկած միջոցառումները նպաստեցին էկոնոմիկայի որոշ առաջընթացին:

1932-1936թթ. Գերմանիայում ռազմական շինարարության ծախսերն աճեցին 25 անգամ, մինչդեռ տրանսպորտում նույն ժամանակամիջոցում պետական ներդրումներն ավելացան 4, բնակարանային շինարարությունում՝ 1,7 անգամ: Նշանակում է՝ ֆաշիզմն ի վիճակի չէր վերացնելու ժողովրդատնտեսական անհամասնունությունները: Իսկ տնտեսության ռազմականացման քաղաքականության շարունակումը չնպաստեց օպտիմալ տնտեսական համասնությունների վերականգնման խնդրի լուծմանը, ֆինանսական համակարգի առողջացմանը, ներքին և արտաքին շուկաների ընդլայնմանը:

Միայն արտաքին ագրեսիայի սկսումը կարող էր ժամանակավորապես կանխել անխուսափելի տնտեսական քաոսը: Հենց ֆաշիստական Գերմանիան էլ սկսեց երկրորդ համաշխարհային պատերազմը՝ 1939թ. սեպտեմբերի 1-ին հարձակվելով Լեհաստանի վրա:

Հարկ է նշել, որ էկոնոմիկայի պետական կարգավորման համակարգի ֆաշիստական մոդելը գործադրվեց մի շարք երկրներում՝ ազգային յուրահատկություններով հանդերձ:

8.4. ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱՅԻ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ ՄԻՋՊԱՏԵՐԱԶՄՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ

Առաջին համաշխարհային պատերազմը խիստ բացասական ազդեցություն թողեց Մեծ Բրիտանիայի տնտեսության վրա: Ճիշտ է, կայսերական Գերմանիայի դեմ տարած հաղթանակի շնորհիվ ընդլայնվեցին նրա անդրծովյան տիրույթները, ինչպես նաև ուժեղացավ գաղութների շահագործումը, սակայն դրությունը դրանով չփրկվեց: Թուլացել էին անգլիական կապիտալի դիրքերը համաշխարհային շուկաներում, ռազմաճակատում զոհվել էր 743 հազար անգլիացի: Մեծ Բրիտանիան կորցրել էր իր ազգային հարստության մեկ երրորդը, ջրասույզ էր արվել նրա առևտրային նավատորմի 70%-ը:

Պատերազմի տարիներին բավականին ուժեղացավ պետության դերը երկրի տնտեսական ռեսուրսները մոբիլիզացնելու գործում, բայց 1919-1929թթ. զգալիորեն թուլացավ: Որպես հաղթող երկիր՝

Անգլիան որոշ չափով փոխհատուցեց պատերազմական վնասները: Միևնույն ժամանակ, արդյունաբերության մեջ տեղի ունեցող տեխնիկական լճացումը, պասսիվ արտաքին առևտրական հաշվեկշիռը, առևտրային նավատորմի կորուստները և ուրիշ շատ գործոններ կանխորոշեցին Անգլիայի տնտեսության դանդաղ զարգացումը ընդհուպ մինչև համաշխարհային ճգնաժամը:

Արտադրության «հին» ճյուղերում (ածխի, տեքստիլ, մետաղագործական, նավաշինական) նկատվում էր հետընթաց: Մեծացավ նաև Անգլիայի արտաքին պարտքը: Այսպես՝ 1920թ. նա ԱՄՆ-ին պարտք էր 4 մլրդ դոլար:

Համարյա ամբողջ միջպատերազմյան ժամանակաշրջանում Անգլիայի էկոնոմիկան շարունակական լճացման վիճակում էր: 1924-1929թթ. (կապիտալիզմի մասնակի կայունացման շրջանում) Անգլիայի տնտեսական զարգացման առանձնահատկությունն այն էր, որ չդիտարկվեց նշանակալի արդյունաբերական վերելք: Նույնիսկ 1929թ. արդյունաբերական արտադրանքի ինդեքսը կազմում էր նախապատերազմյան մակարդակի 100,5%-ը:

Բայց և այնպես, արագ զարգանում էին արդյունաբերության նոր ճյուղերը՝ էլեկտրաէներգետիկան, քիմիական ինդուստրիան, ավտոմեքենաշինությունը, էլեկտրատեխնիկան, ինքնաթիռաշինությունը: Ներդրումների պակասը անգլիական արդյունաբերությանը հնարավորություն չէր տալիս անցնելու արտադրության կազմակերպման նոր ձևերին (զանգվածային, հոսքային), որոնք կիջեցնեին ծախսերը և արտադրանքը կդարձնեին ավելի մրցունակ: Ուստի՝ շեշտը դրվում էր բարձրորակ, ոչ զանգվածային, սակայն թանկարժեք ապրանքների արտադրության վրա:

Առևտրի մեջ Անգլիայի գլխավոր մրցակիցներն էին ԱՄՆ-ը և Գապոնիան: Անգլիայից արտադրանքի արտահանման ծավալների ընդլայնումը դժվարանում էր նաև համաշխարհային առևտրում պրոտեկցիոնիզմի աճով, գաղութներում և դոմինիոններում սեփական արտադրության ավելացմամբ: Անգլիան մեծ կախվածության մեջ էր հումքի և պարենի ներմուծումից: Այսպես՝ ներմուծվում էին ամբողջ բամբակը, բրդի 90%-ը, երկաթի հանքաքարի երկու երրորդը, պարենամթերքի 60%-ը:

Հենց Անգլիայի դուրս մղումը զանգվածային պահանջարկ ունեցող ապրանքների արտահանման շուկաներից նպաստեց համաշխարհային առևտրում պրոտեկցիոնիստական միտումների ուժեղացմանը, մինչդեռ երկրի կառավարությունը դեռևս առաջնորդվում էր ֆրիտրիդերականության սկզբունքով: Մյուս կողմից՝ Անգլիայի կառավարող շրջանները ձգտում էին պահպանել իրենց առաջնությունը բանկային գործում և աստիճանաբար զիջում էին ապրանքային շուկաները: Այսպես՝ 1925թ. կառավարությունը իրագործեց

անգլիական արժույթի ռեվալվացիա՝ ֆունտ-ստեռլինգի ոսկյա ստանդարտի կիրառման հաշվին:

1920-ական թվականներին երկրում ուժեղացան մոնոպոլիաների դիրքերը, ստեղծվեցին 5 խոշոր կոնցեռներ՝ «Իմպերիալ քեմիկալ ինդաստրի», «Յունիլկ», «Դենլոպ», «Ինգլիշ սթիլ քորփորեյշն», «Արմսթրոնգ Վիկկերս»:

Անգլիայում ճգնաժամային երևույթները սկսվեցին մի փոքր ուշ, քան ուրիշ երկրներում (1930թ. սկզբին): Այստեղ արդյունաբերության արտադրանքը կրճատվեց ավելի քիչ (20%), քան ԱՄՆ-ում և Գերմանիայում: Գնաժամը շոշափելի էր արտադրության «հին» ճյուղերում, որոտեղ արտադրանքի ծավալը կրճատվեց կրկնակի: Միաժամանակ, ավելացավ գործազուրկների թիվը: 1932թ. Անգլիայում աշխատանք չունեի ավելի քան 3 մլն մարդ: Գնաժամը շոշափեց նաև արտաքին առևտուրը: Վերջինիս հաշվեկշիռն ուներ շարունակական ճեղքվածք:

1931թ. գարնանը ստեղծվեց ազգային տնտեսության հարցերով հատուկ հանձնաժողով Ջ.Մեյի գլխավորությամբ: Հանձնաժողովը նշակեց տնտեսությունը ճգնաժամից դուրս բերելու հանձնարարականներ, որոնց հիմքում անպակասուրդ բյուջեն էր:

Երկրի լեյբորիստական կառավարությունը հակված էր ավելացնել բյուջետային ծախսերը բնակչության լայն զանգվածների, գործազուրկների դրությունը բարելավելու նպատակով՝ հիմնականում ունևորների հարկային բեռը մեծացնելու հաշվին: Սակայն այդ քաղաքականությունը հանդիպեց լուրջ դիմադրության, և 1931թ. օգոստոսին Ջ. Մակդոնալդը ստիպված կազմավորեց պահպանողական մեծամասնության կաբինետ: Նոր կառավարությունը սկզբում փորձում էր ուժեղացնել անուղղակի միջամտությունը՝ ձգտելով պահպանել երկրի ֆինանսական համակարգի կայունությունը բյուջետային հավասարակշռության ապահովման հաշվին: Ուղղակի և անուղղակի հարկերի միաժամանակյա ավելացումն ուղեկցվում էր բյուջեի սոցիալական հողվածներով ծախսերի կրճատմամբ (պետական ծառայողների աշխատավարձ, հասարակական աշխատանքի համար ներդրումներ, գործազրկության նպաստներ):

Միաժամանակ, պահպանողականների կառավարությունն ստացավ խոշոր գումարի արտաքին փոխառություն՝ 80 մլն ֆունտ-ստեռլինգ, վճարային հաշվեկշռի վերականգնման նպատակով:

Ձեռնարկվեցին մի շարք հակաճգնաժամային միջոցներ: Դրանցից կարևոր էր 1931թ. սեպտեմբերին ազգային արժույթի ոսկյա պարիտետի վերացումը, որը հանգեցրեց ֆունտ-ստեռլինգի դեվալվացմանը: 1931թ. ստեղծվեց 25 երկրների ստեռլինգյան դաշինք, որի կազմի մեջ մտան բրիտանական կայսրության գաղութները և դոմինիոնները (բացառությամբ Կանադայի), Սկանդինավյան երկր-

ները, Յուլանդիան, Պորտուգալիան, Բրազիլիան, Արգենտինան և այլն: Նրա ներկայացուցիչները իրենց արտարժութային պահուստները պահում էին Լոնդոնում և մեծ կախվածության մեջ էին Անգլիայից:

Ոսկյա պարիտետի վերացման գործում Մեծ Բրիտանիային հետևեցին ստեռլինգյան դաշինքի երկրները, որոնք իրենց արժույթների կուրսը սահմանում էին անգլիական ֆունտի կուրսի հիման վրա: Դաշինքի անդամները, նախապատվելով ֆունտ-ստեռլինգը, ստիպված էին զնելու անգլիական ապրանքներ և միաժամանակ Անգլիային մատակարարելու հունք ու պարեն:

Քանի որ մրցակից երկրներում (ԱՄՆ, Ֆրանսիա, Գերմանիա, Իտալիա) ուժեղացան հովանավորչական միտումները, Անգլիան ևս հրաժարվեց ազատ առևտրի քաղաքականությունից և վերջնականապես անցում կատարեց պրոտեկցիոնիզմին: Այս և մյուս հակաճգնաժամային միջոցների գործադրմամբ արդեն 1933թ. վերջին վիճակը որոշ չափով կայունացավ: Ներքին կոշտ տնտեսական քաղաքականությունը Անգլիայում տարբերվում էր Ռուզվելտի «Նոր կուրսից»: Արդեն 1934թ. խնայողության բյուջետային կոշտ քաղաքականությունը սկսում է մեղմանալ, զգալիորեն աճում է աշխատավարձը, վերականգնվում են գործազրկության նպաստները, իջնում է եկամտահարկի չափը:

1934 թվականից խոշոր ներդրումներ են կատարվում զենքի արտադրության հետ կապված ճյուղերի (ավտոմեքենաշինություն, ավիացիոն արդյունաբերություն, ռադիոարդյունաբերություն և այլն) զարգացման նպատակով: Պրոտեկցիոնիզմի կոշտ քաղաքականության կիրառումով տեղի ունեցավ ներդրումների ներհոսք մի շարք «հին» ճյուղեր (նավաշինություն, մետաղամշակություն և այլն), իսկ ածխի հանույթի և տեքստիլ արդյունաբերության ճյուղերը շարունակում էին դրսևել տեղում:

Թեև նախապատերազմյան տարիներին Անգլիայի էկոնոմիկան լճացման վիճակում էր, սակայն ռազմական վտանգի պատճառով (Գերմանիան տենդորեն զինվում էր) ավելացան ռազմական արդյունաբերության հզորությունները: 1929-37թթ. ռազմական ծախսերն աճեցին 2,5 անգամ: Տեղի ունեցավ հիմնական կապիտալի նորացում հատկապես տեխնիկական առաջընթացը բնորոշող ճյուղերում:

8.5. ՖՐԱՆՍԻԱՅԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ 1914-1939ԹԹ.

Առաջին համաշխարհային պատերազմում Ֆրանսիան կրեց մարդկային և նյութական խոշոր կորուստներ: Արդյունաբերապես լավ զարգացած նրա տարածքի մեծ մասը օկուպացվեց գերմանացիների կողմից: Ուստի՝ Ֆրանսիան ստիպված էր արդյունաբերական արտադրությունը տեղափոխել հումքային և նյութական ռեսուրսներով վատ ապահովված նոր շրջաններ: Հումքի և աշխատուժի պակասը նպաստեց արտադրության ռացիոնալացմանը ռազմական և ծանր արդյունաբերության ճյուղերում, դրանց տեխնիկական մակարդակի բարձրացմանը:

Վատթարացավ գյուղատնտեսության դրությունը, բնականաբար, ավելացավ մթերքի ներմուծման ծավալը: Դժվարություններ էր կրում ֆինանսական համակարգը: Աճեց արտաքին պարտքը, Ֆրանսիան կորցրեց Ռուսաստանում ներդրած կապիտալը: Բարձրացան արտադրանքի գները, արժեզրկվեց ֆրանկը, սկսվեց կապիտալի արտահոսք: Վատացան աշխատավորների կենսապայմանները, Ֆրանսիան զիջեց համաշխարհային վարկատուի դիրքերը:

Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Ֆրանսիայում բավականին մեծ ուշադրություն էր դարձվում էկոնոմիկայի պետական կարգավորման համակարգին: Ֆրանսիայի կորուստների մի մասը փոխհատուցվեց պարտված երկրների՝ հատկապես Գերմանիայի կողմից:

1920-ական թվականներին այստեղ սկսվում է արդյունաբերական վերելք: Վերսալյան դաշնագրով ուժեղացան Ֆրանսիայի տնտեսական դիրքերը, քանի որ նրան վերադարձվեցին զարգացած արդյունաբերությամբ մարզերը՝ Էլզասն ու Լոթարինգիան: 15 տարով Ֆրանսիան ստացավ Սաարի ածխահանքերը (մարզը 1920 թվականից կառավարվում էր Ազգերի Լիգայի կողմից): Ֆրանսիան ստացավ գերմանական ռեպարացիաներ և ընդլայնեց իր գաղութային կայսրությունը գերմանական գաղութների հաշվին: Հարկ է նշել, որ Ֆրանսիայի գաղութները 20 անգամ գերազանցում էին բուն երկրի տարածքը: 1920-ական թվականներին Ֆրանսիայի տնտեսական զարգացման տեմպերն ամենաբարձրն էին Եվրոպայում: Այդ ցուցանիշով երկիրը զիջում էր միայն ԱՄՆ-ին: Երկաթի հանքաքարի հանույթով Ֆրանսիան Եվրոպայում զբաղեցրեց առաջին տեղը: 1920-1929թթ. արդյունաբերական արտադրության ծավալն աճեց 77%-ով: Հաջողություններն ակնհայտ էին առանձնապես պետական ռազմական պատվերներ իրականացնող արդյունաբերության ճյուղերում: Սակայն արդյունաբերությունը զարգանում էր անհամաչափ:

Ցածր էին սպառման առարկաներ արտադրող ճյուղերի զարգացման տեմպերը: Դա պայմանավորված էր գյուղատնտեսության ողբալի վիճակով: Բավական է նշել, որ 1913-1938թթ. ճյուղի արտադրանքն աճել է ընդամենը 10%-ով, որ մասնատված, սակավահող (պարցելային) տնտեսության հետևանք էր: Այդպիսի տնտեսությունն արգելակում էր տեխնիկայի օգտագործումը և ինտենսիվ մեթոդների կիրառումը:

Ֆրանսիայի մոնոպոլիաները ձգտում էին առաջատար դիրքեր գրավել արտաքին շուկաներում, ուստի՝ պահանջվում էր պետության աջակցությունը: Ֆրանսիայի արդյունաբերական արտադրության վերելքին նպաստեցին նաև հյուսիսի և հյուսիս-արևելքի նախնինում օկուպացված շրջաններում ծավալված վերականգնման աշխատանքները:

Համաշխարհային տնտեսական ճգնաժամը Ֆրանսիայում, Անգլիայի պես, սկսվեց մի փոքր ուշ՝ 1930թ. առաջին ամիսներին: Պատճառները երկու երկրում նման էին. գերմանական ռեպարացիաների օգտագործումը, գաղութների առկայությունը, արդյունաբերության նոր ճյուղերի զարգացումը, ռազմական արտադրության աշխուժացումը: Ճգնաժամը այստեղ տևեց երկար և ավելի խորն էր:

Բնակչության սոցիալական կառուցվածքով Ֆրանսիան տարբերվում էր ուրիշ երկրներից: Ֆրանսիայում ուժեղ էր դեմոկրատական և ձախ ռադիկալ հոսքերի ազդեցությունը, թեև Իտալիայի և Գերմանիայի օրինակով նկատելի էր երկրի ֆաշիստականացման միտումը:

Ճգնաժամը Ֆրանսիայի էկոնոմիկան հետ չպրտեց հավասարեցնելով մինչպատերազմյան մակարդակին: Ընդգրկեց տնտեսության բոլոր ճյուղերը, բացասական ազդեցություն թողեց արտադրության տեխնիկական մակարդակի, գյուղատնտեսության, արտաքին առևտրի վրա: Տևեց մինչև 1934թ., իսկ 1935թ.-ին վերածվեց լճացման:

Երկու համաշխարհային պատերազմների միջև ընկած ժամանակամիջոցում Ֆրանսիայի էկոնոմիկայում տեղի ունեցան կառուցվածքային տեղաշարժեր. աճեց ծանր արդյունաբերության տեսակարար կշիռը, ֆրանսիական կապիտալիզմը ձեռք բերեց գաղութային գծեր: Իսկ էկոնոմիկայի զարգացումը կրում էր պարբերաշրջանային բնույթ:

1934-1935թթ. ընդունվեցին Դումերտի և Լավալի օրենք-դեկրետները, որոնցով խիստ կրճատվեցին պետական ծառայողների աշխատավարձը, հաշմանդամների նպաստները, նախատեսվեցին լրացուցիչ հարկեր: Այդ շրջանում տնտեսական ճգնաժամն ուղեկցվում էր քաղաքական ճգնաժամով:

1930-ական թվականներին հակաճգնաժամային ծրագրերով հանդես եկան երկրի քաղաքական կուսակցությունները: Բարձրա-

ցավ սոցիալիստական և կոմունիստական կուսակցությունների դերը, որոնք միավորվելով՝ ստեղծեցին ժողովրդական ճակատը: Այն 1936թ. սկզբին, նշված կուսակցություններից բացի, ընդգրկում էր ռադիկալ-սոցիալիստների կազմակերպությունը, «Ամստերդամ-Պլեյել» մտավորական շարժումը, հակաֆաշիստական այլ ուժեր:

Ժողովրդական ճակատի ծրագիրը նպատակաուղղված էր հիմնականում բնակչության լայն խավերի կարիքների բավարարմանը: Ներառում էր գործազրկության ազգային ֆոնդի ստեղծումը, աշխատանքային շաբաթվա կրճատումը (առանց վճարը իջեցնելու), աշխատատեղերի ավելացումը, հասարակական աշխատանքների կազմակերպումը, գյուղատնտեսական ապրանքների գնման գների կարգավորումը՝ հաշվի առնելով արտադրողների շահերը, գյուղացիական կոոպերատիվներին աջակցությունը, մանր ռանտյեների շահերի պաշտպանությունը, հարկային համակարգի բարեփոխումը՝ հոգուտ սակավապահով քաղաքացիների, և այլն:

Ժողովրդական ճակատի ծրագրով նախատեսվում էր ռազմական արդյունաբերության և ֆրանսիական բանկի ազգայնացում, սոցիալական լայն վերափոխումների իրականացում: Նշված միջոցառումների կենսագործումը պահանջում էր խոշոր ծախսեր, հիմնախնդիր էր բյուջեի ճեղքվածքի կրճատումը:

1936թ. հունիսի 4-ին ստեղծվեց ժողովրդական ճակատի առաջին կառավարությունը՝ վարչապետ Լ. Բյուլմի գլխավորությամբ, իսկ 3 օր անց կնքվեց համաձայնագիր Աշխատանքի համընդհանուր կոնֆեդերացիայի և գործարարների միջև՝ աշխատավարձի ավելացման, արհմիությունների և ցեխային ավագանու ինստիտուտի ճանաչման վերաբերյալ: Համաձայնագիրը նախատեսում էր 40 ժամյա աշխատանքային շաբաթվա, վճարովի արձակուրդների, կոլեկտիվ պայմանագրերի համակարգի կիրառում:

Հակաճգնաժամային կուրսի նման կտրուկ փոփոխությունը, որն արտացոլվեց ամենից առաջ սոցիալական հողվածներով ծախսերի ավելացման մեջ, որոշ ժամանակ հետո հանգեցրեց պետական բյուջեի պակասուրդի մեծացմանը: Ուստի՝ կառավարությունը ստիպված դեֆլավացրեց ֆրանկը, որը բացասաբար ազդեց բնակչության լայն խավերի կենսամակարդակին: Միաժամանակ, տեղի էին ունենում կապիտալի «փախուստ» երկրից, արտադրության կրճատման գործընթացի խորացում, խոշոր կապիտալի կողմից պետական միջոցառումների ձախողում:

Այդ պայմաններում Բյուլմի կառավարությունը չհամարձակվեց վերահսկելու ֆրանսիական բանկի գործունեությունը և իրականացնելու հարկային ռեֆորմ: Եվ քաղաքական ճգնաժամի հետևանքով տեղի ունեցավ կառավարության փոփոխություն: Հաջորդ՝ Կ.Շոթանի (ռադիկալ-սոցիալիստ) կառավարությունը փորձում էր գտնել շահե-

րի համապատասխանության եզրեր բնակչության լայն խավերի և խոշոր կապիտալի ներկայացուցիչների միջև՝ ժողովրդական ճակատի ծրագրային պահանջների որոշ սահմանափակման հաշվին:

Բայց և այնպես, երկրի ֆինանսական համակարգի վիճակն էլ ավելի վատթարացավ, ուստի՝ կառավարությունը երկրորդ անգամ իրագործեց ազգային արժույթի դեվալվացում, ինչի հետևանքով ուժեղացան սոցիալական հակասությունները երկրի ներսում: 1938թ. գարնանը կառավարական ճգնաժամը հանգեցրեց Լ.Բյունի երկրորդ կաբինետի ձևավորմանը, որն այլևս չէր առաջնորդվում ժողովրդական ճակատի ծրագրով: Բյունը նպատակադրվել էր սոցիալական միջոցառումներին ուղղվող ծախսերի կրճատմամբ ուժեղացնել երկրի ռազմական հզորությունը: Պաշտպանական ծրագրի կատարման համար միջոցների աղբյուր էր 150 հազար ֆրանկը գերազանցող կապիտալի վրա դրվող հարկի ավելացումը:

Հարկերը բարձրացվում էին նաև «արտոնյալ» (կոնցեսիա, լիցենզիա) ունեցող ձեռնարկությունների, ռազմական ձեռնարկությունների գերշահույթների հաշվով: Սահմանվում էր պետական խիստ վերահսկողություն արժույթային գործարքներին, ապրանքների ներմուծմանը և ուրիշ միջոցառումներին: Սակայն բյուջեի եկամուտների և ծախսերի հոդվածների վերանայման փորձը առաջացրեց ֆինանսական և արդյունաբերական խոշոր խմբերի և քաղաքացիների դժգոհությունը, ուստի՝ 1938թ. ապրիլին ձևավորվեց նոր կառավարություն՝ Է. Դալադյեի գլխավորությամբ, որը վերջնականապես հրաժարվեց ժողովրդական ճակատի ծրագրից: Դալադյեն ստորագրեց եվրոպական 4 երկրների (Մեծ Բրիտանիա, Գերմանիա, Իտալիա, Ֆրանսիա) կողմից ընդունված Մյունխենյան համաձայնագիրը՝ Չեխոսլովակիայի բաժանման վերաբերյալ:

Փաստորեն՝ Ֆրանսիայի տնտեսական անկայուն վիճակը 1930-ական թվականներին պայմանավորված էր հակաճգնաժամային միջոցառումների անհետևողականությամբ, ճգնաժամից դուրս գալու համաձայնեցված ծրագրի բացակայությամբ: Դրա հետևանքով Ֆրանսիան զիջեց իր դիրքերը միջազգային շուկաներում: Որոշ չափով աշխուժացավ ռազմական շինարարությունը՝ նկատի առնելով պատերազմական վտանգը:

8.6. ԾԱՊՈՆԻԱՅԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՅՈՒՄԸ ՄԻՋՊԱՏԵՐԱԶՄՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ

Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին ճապոնիան զգալիորեն ընդլայնեց իր էքսպանսիան Դեռավոր Արևելքում: Հանդես գալով Գերմանիայի դեմ և օգտվելով այն բանից, որ եվրոպական երկրները զբաղված էին պատերազմով, նա ցանկանում էր գրավել Չինաստանը և դառնալ շատ ապրանքների գրեթե մենաշնորհային մատակարարը Արևելյան Ասիայի երկրներում:

Ճապոնիայի մասնակցությունը պատերազմին սահմանափակվեց զերմանական խաղաղօվկիանոսյան կղզիների և Շանդուն թերակղզու գրավմամբ: Մինևույն ժամանակ, ճապոնիան քառակի ավելացրեց ապրանքների արտահանումը ինչպես ասիական, այնպես էլ այլ երկրների շուկաներ: Ակտիվ առևտրային հաշվեկշռի շնորհիվ երկրի ոսկու պաշարները ավելացան գրեթե 6 անգամ՝ նպաստելով ներդրումների մեծացմանը և արդյունաբերության բուռն զարգացմանը:

Ավելացան ճապոնիայի օտարերկրյա ներդրումները, որոնց մեծ մասն ուղղվում էր Չինաստանի փոխառությունների ձևով:

Արդյունաբերության զարգացմանը նպաստեց եվրոպական մրցակիցների թուլացումը պատերազմի հետևանքով, ինչպես նաև Անտանտի երկրների ռազմական պատվերների կատարումը:

Պատերազմի տարիներին արդյունաբերության համախառն արտադրանքն ավելացավ ավելի քան հնգակի և զերազանցեց գյուղատնտեսության նույն ցուցանիշը: Արագ ավելանում էր նավաշինական, մետաղագործական, մեքենաշինական և քիմիական արդյունաբերության արտադրանքը:

Պատերազմից հետո 1920թ. ճգնաժամը ընդգրկեց նաև ճապոնիայի տնտեսությունը: Ռազմական պատվերների կրճատման, ինչպես նաև ԱՄՆ-ի, Անգլիայի և մյուս մրցակիցների դիրքերը Չինաստանի և այլ երկրների շուկաներում վերականգնելու հետևանքով խիստ նվազեցին արտահանման և արդյունաբերական արտադրության ծավալները:

Կապիտալիստական աշխարհում 1924թ. հետո սկսված կայունացման ժամանակաշրջանում ճապոնական արդյունաբերությունը զերազանցեց նախապատերազմյան մակարդակը՝ առաջին հերթին բանակի և նավատորմի վերազինման ծրագրերի կատարման շնորհիվ:

Արդյունաբերության զարգացումն ընդհատվեց 1929թ. սկսված համաշխարհային ճգնաժամով: 1931թ. արդյունաբերական արտադրությունը կրճատվեց 1/3-ով, արտահանումը՝ գրեթե կրկնակի,

միլիոնավոր մարդիկ մնացին գործազուրկ: Ճգնաժամն ընդգրկեց նաև գյուղատնտեսությունը, նվազեցին բրնձի, մետաքսի գները, սնանկացան հարյուր հազարավոր գյուղացիական տնտեսություններ:

Ճապոնիան, ինչպես և մյուս երկրները, ձգտում էր ընդլայնել արտաքին շուկաները: Տեղի էր ունենում իսկական առևտրային և մաքսային պատերազմ: Օգտվելով եվրոպական երկրներում և ԱՄՆ-ում տնտեսական ճգնաժամի հետևանքով ստեղծված ծանր վիճակից, ճապոնիան 1931թ. գրավեց Մանջուրիան, 1937թ. հարձակվեց Չինաստանի վրա: Երկրի տնտեսությունը ռազմականացվեց, ավելացավ պետական պարտքը, 2/3-ով կրճատվեցին ոսկու պաշարները, 1/3-ով ներմուծման ծավալները:

Ճապոնական մոնոպոլիաները դեմպինգային գներով վաճառում էին ապրանքները արտաքին շուկաներում: Բամբակյա գործվածքեղենի արտահանմամբ ճապոնիան առաջ անցավ Անգլիայից. միաժամանակ, մեծանում էին կապիտալի արտահանման չափերը:

Կառավարությունը ստիպված էր դիմել արտակարգ միջոցների արդյունաբերությունը մոբիլիզացնելու, ռազմական պատվերներ կատարող ձեռնարկությունները վերահսկելու, հույժը և վառելիքը բաշխելու համար: Պետական վերահսկողություն սահմանվեց նաև տրանսպորտին, ներքին և արտաքին առևտրին, գներին, շահույթին և աշխատավարձին, արգելվեցին գործադուլները:

Ճապոնական կառավարությունը մեծ ջանքեր էր գործադրում Չինաստանի դեմ պատերազմի հարուցած դժվարությունները հաղթահարելու և այդ պատերազմն արագ հաղթական ավարտին հասցնելու համար:

8.7. ԽՄԴՍ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՅՈՒՄԸ ՍՈՑԻԱԼԻԶՄԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

Ռուսաստանը պատերազմի մեջ մտավ 1914թ. օգոստոսին՝ ռազմատնտեսական ցածր ներուժով և անպատրաստ. բանակը տեխնիկական զինվածությամբ զգալիորեն զիջում էր թշնամուն: Ռուսաստանին բաժին էր ընկնում համաշխարհային արդյունաբերական արտադրության միայն 2,5%-ը, բնակչության մեկ շնչի հաշվով Ռուսաստանը հետ էր ԱՄՆ-ից՝ 11, Անգլիայից՝ 8, Ֆրանսիայից՝ 4 անգամ: Ձեռքի և զինամթերքի արտադրությունը չէր բավարարում բանակի պահանջները: Արդյունաբերության փոխադրումը ռազմական ուղեգիծ, տնտեսության պետական կարգավորումը և վերա-

հսկողությունը հանգեցրին շատ թույլ արդյունքների: Կառավարությունը ստիպված էր ռազմական պատվերների մի մասը տեղաբաշխել արտասահմանում, որի հետևանքով երկրի արտաքին պետական պարտքը ավելացավ 7 մլրդ ռուբլով և 1917թ. կազմեց 11,3 մլրդ ռուբլի: Կազմալուծվեց ֆինանսական համակարգը, արժեզրկվեց ռուբլին:

Անկում էր ապրում գյուղատնտեսությունը, կրճատվում էին ցանքատարածությունները, նվազում էր բերքատվությունը, բնակչությունը սովի էր մատնվում:

1917թ. հոկտեմբերին Պետրոգրադում տեղի ունեցավ զինված ապստամբություն, և երկրում հաստատվեց խորհրդային իշխանություն, որի սոցիալ-տնտեսական առաջին վերափոխումը հռչակեց հողի մասին դեկրետը: Դրանով վերացվում էր հողի մասնավոր սեփականությունը, կալվածատիրական, վանքապատկան և եկեղեցական հողերը բռնագրավվում և տրվում էին գյուղացիներին:

Ազգայնացվեցին նաև բանկերը, երկաթուղային տրանսպորտը և կապի միջոցները, արտաքին առևտուրը, չեղյալ հայտարարվեցին ցարիզմի բոլոր պետական փոխառությունները: Այդպիսով՝ 1918թ. գարնանը տնտեսության հրամանատարական բարձունքներին տիրապետում էր պետությունը:

Խորհրդային իշխանության դեմ 1918թ. ամռանը պայքար սկսեցին հակահեղափոխական ուժերը, որոնց միացան նաև օտարերկրյա պետությունները: Ռուսաստանում սկսվեց քաղաքացիական պատերազմ: Անհրաժեշտ էր երկրի սահմանափակ ռեսուրսները կենտրոնացնել պետության ձեռքին և ուղղել ռազմական կարիքների բավարարմանը: Դա կատարվում էր «ռազմական կոմունիզմի» քաղաքականության միջոցով, որն իրականացվեց 1919թ. գարնանից և որով ազգայնացվում էր մանր և միջին արդյունաբերությունը: Դրանք վերահսկելու համար մտցվում էր պարենմասնատրում, ըստ որի՝ գյուղացին պետք է պետությանը հանձներ արտադրանքի «ավելցուկները» բանակի և բնակչության կարիքները հոգալու համար: Դրանի արագ արժեզրկման պայմաններում բաշխումը և փոխանակությունը, ինչպես նաև աշխատանքի վարձատրությունը բնամթերացվում էին, արգելվում էր արտաքին առևտուրը, սահմանվում էր համընդհանուր աշխատանքային պարհակ «ով չի աշխատում, նա չի ուտում» սկզբունքով:

Արմատավորվում էր կենտրոնացված ճյուղային կառավարում, ձեռնարկությունները գրկվում էին ինքնուրույնությունից: «Ռազմական կոմունիզմը» քաղաքացիական կռիվներով պարտադրված քաղաքականություն էր, որը ոչնչացրեց ապրանքադրամային հարաբերությունները երկրում, կրճատեց արտադրության ծավալը, բայց և

թույլ տվեց բոլշևիկներին ճնշելու հակահեղափոխությունը և պահելու իշխանությունը:

Ռուսաստանում 1920թ. վերջին ավարտվեցին քաղաքացիական կռիվները, որոնք պատճառեցին ոսկով՝ 50 մլրդ ռուբլու վնաս: Արդյունաբերական արտադրությունը 1913թ. համեմատությամբ կրճատվել էր 7 անգամ, գյուղատնտեսականը՝ 1/3-ով: Անհրաժեշտ էր վերականգնել տնտեսությունը:

1920թ. դեկտեմբերին հաստատվեց ժողովրդական տնտեսության վերականգնման և էլեկտրիֆիկացման պլանը (ԳՆԷԼՈՒ), որով նախատեսվում էր 10-15 տարում կառուցել մոտ 30 խոշոր էլեկտրակայան և արտադրության էլեկտրիֆիկացմամբ ու մեքենայացմամբ զարգացնել արդյունաբերությունը, գյուղատնտեսությունը, տրանսպորտը:

Խորհրդային իշխանությունը 1921թ. մարտից սկսեց իրականացնել նոր տնտեսական քաղաքականություն (ՆԷՊ)՝ առաջին հերթին գյուղատնտեսության մեջ, որտեղ պարենմասնատրումը փոխարինվում էր պարենհարկով: Պարենհարկը ընդհանուր առմամբ կրկնակի ցածր էր, կայուն, կախված էր բերքատվությունից, տնտեսությունների չափից: Մինչև 1923/24 տնտեսական տարին սահմանվում էր բնեղենով և դրամով, իսկ 1924/1925 տնտեսական տարում միայն դրամով: Պարենհարկը պայման էր ստեղծում գյուղատնտեսական արտադրանքի ավելցուկի համար, որը կարող էր իրացվել շուկայում: Հետևաբար՝ նյութական խթաններ էին ստեղծվում արտադրությունը մեծացնելու և մասնավոր առևտուրը զարգացնելու նպատակով:

Նոր տնտեսական քաղաքականությունը թույլ էր տալիս օգտագործելու մասնավոր կապիտալը՝ արտադրության և առևտրի մեջ մանր ձեռնարկություններն ապաստանելու, խառը ձեռնարկություններ ստեղծելու, վարձակալմամբ հանձնելու միջոցով: Սակայն պետությունը վերահսկում էր դրանց գործունեությունը հարկերով, աշխատանքի մասին օրենքներով, զների կարգավորմամբ: Վերացվում էր ձեռնարկությունների հումքի ապահովման և պատրաստի արտադրանքի բաշխման կենտրոնացված համակարգը, արմատավորվում տնտեսական հաշվարկը:

Արդյունաբերության զարգացման պլանային սկզբունքները ուժեղացնելու համար 1921թ. փետրվարին ստեղծվեց պետական պլանային հանձնաժողովը:

Վերականգնման ժամանակաշրջանի կարևոր խնդիրներից էր դրամաշրջանառության և ռուբլու կայունացումը: Պետական բանկը 1922թ. վերջին բաց թողեց ոսկով փոխանակվող տաս ռուբլիանոց թղթադրամներ՝ չերվոնեցներ, որոնք մինչև 1924թ. շրջանառվում էին

արժեզրկված «սովզնակների» հետ, այնուհետև՝ պարտադիր փոխանակվում նոր դրամով:

Տնտեսության տարբեր ճյուղերը վարկավորելու համար 1921-1923թթ. ստեղծվեցին պետքանկը և մասնագիտացված բանկերի համակարգը:

Վերականգնման ժամանակաշրջանի կարևոր իրադարձություններից էր 1922թ. դեկտեմբերին խորհրդային հանրապետությունների միավորումը ԽՍՀՄ-ի մեջ:

Վերականգնման ժամանակաշրջանի վերջին՝ 1925թ., արդյունաբերական արտադրանքը կազմեց նախապատերազմյան մակարդակի 75,5%-ը, էլեկտրաէներգիայի արտադրությունն ավելացավ 6 անգամ, հացահատիկի և այլ մշակաբույսերի ցանքատարածությունները զրեթե հասան 1913թ. մակարդակին:

* *
*

Տնտեսական զարգացման կարևոր խնդիրը 1925թ. հետո ագրարային երկրի վերածումն էր ինդուստրիալ երկրի, նրա տնտեսական անկախության և պաշտպանունակության ապահովումը: Անհրաժեշտ էր նորացնել տնտեսությունը՝ տեխնիկապես վերագինելու միջոցով:

Ինդուստրացման համար պահանջվող հսկայական կապիտալ ներդրումների աղբյուր հանդիսացան ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերում ստեղծվող եկամուտները, ներքին փոխառությունները և բնակչության խնայողությունները:

Ինդուստրացումը ապահովում էր արդյունաբերության զարգացման բարձր տեմպեր: Խոշոր արդյունաբերության համախառն արտադրանքը 1926թ., նախորդ տարվա համեմատությամբ, ավելացավ մոտ 43, 1927թ.՝ 14, 1928թ.՝ 25%-ով: Դրանով հանդերձ, տնտեսության հիմնական ճյուղը մնում էր գյուղատնտեսությունը: Ինդուստրացումն արագացնելու համար անհրաժեշտ էր վերացնել գյուղատնտեսության հետամնացությունը և ապահովել պարենի ու հումքի պահանջը: Դա հնարավոր էր գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման միջոցով՝ արտադրական կոոպերացման և կոլեկտիվացման հիման վրա:

Միևնույն ժամանակ, վերացվում էին շուկայական սկզբունքները և արգելվում մասնավոր կապիտալը, կառավարման ոլորտում ուժեղանում էին վարչական միտումները՝ վերջ դնելով նոր տնտեսական քաղաքականությանը:

Հզոր ծանր արդյունաբերության զարգացումը, գյուղատնտեսության կոլեկտիվացումը և տնտեսության բոլոր ճյուղերից մասնավոր կապիտալի դուրս մղումը նախապատերազմյան երեք հնգամյակների (1928-1941թթ.) հիմնական տնտեսական նպատակներն էին:

Հայրենական պատերազմի նախօրեին ԽՍՀՄ-ը հետամնաց ագրարային երկրից վերածվել էր առաջատար ինդուստրիալ տերության: Արդյունաբերական արտադրությունը 1913թ. համեմատությամբ ավելացել էր 8,5, այդ թվում արտադրության միջոցների արտադրությունը՝ 15,5, մեքենաշինական և մետաղամշակման արտադրանքը՝ ավելի քան 35, էլեկտրաէներգիայի արտադրությունը՝ 25 անգամ: Մեքենաշինական արտադրության ծավալով ԽՍՀՄ-ը գրավում էր երկրորդ տեղն աշխարհում և առաջինը՝ Եվրոպայում:

Առաջացան արդյունաբերության նոր ճյուղեր՝ ավտոմոբիլաշինություն, ինքնաթիռաշինություն, էլեկտրատեխնիկական արդյունաբերություն: Մեծացավ երկրի ռազմատնտեսական ներուժը: Հզոր մեքենաշինական ձեռնարկություններ էին կառուցվում նրա արևելյան շրջաններում:

Գյուղատնտեսության մեջ ավարտվեց կոլեկտիվ տնտեսությունների ստեղծումը, շարունակվում էր տեխնիկական վերակառուցումը: Գյուղացիական տնտեսությունների մոտ 97%-ը 1940թ. միավորված էր կոլտնտեսություններում: Երկրում կային 4 հազար սովխոզ և 7 հազար մեքենատրակտորային կայան:

Պետության ձեռքն անցավ ամբողջ առևտուրը: Մասնավոր կապիտալը դուրս մղվեց տնտեսության բոլոր ճյուղերից:

**ԱՇԽԱՐՀԻ ԱՌԱՋԱՏԱՐ ԵՐԿՐՆԵՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ
ՋԱՐԳԱՑՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՐԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՐԿՐՈՐԴ
ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻՑ ՀԵՏՈ**

9.1. ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆՈՒՄ

Երկրորդ համաշխարհային պատերազմը և ռազմական իրավիճակը պայմաններ ստեղծեցին ԱՄՆ-ի էլ ավելի հարստացման համար: Հակաֆաշիստական կոալիցիայի երկրներին զենքի, զինամթերքի և սննդի մատակարարումները նպաստեցին արդյունաբերական և գյուղատնտեսական արտադրության ծավալների մեծացմանը: Այդ մատակարարումների մեծ մասը կատարվում էր Լենդ-լիզով* և այլ համաձայնություններով: Աշխարհի 42 երկիր Լենդ-լիզով 1941-1944թթ. ստացավ ավելի քան 46 մլրդ դոլարի ապրանք: Կառավարության ռազմական պատվերների ընդհանուր գումարը 1940-1944թթ. կազմեց 175 մլրդ դոլար, որի հաշվին մոնոպոլիաները արտադրեցին և պետությանը վաճառեցին հազարավոր ինքնաթիռներ, տանկեր, հրանոթներ, նավեր: Ռազմական պատվերների կատարումը մեծացրեց ամերիկյան կորպորացիաների շահույթները՝ 1938թ. 3,3 մլրդ-ից 1944թ. հասցնելով 23,3 մլրդի: Արդեն 1943թ. արդյունաբերական արտադրության ընդհանուր ծավալը ԱՄՆ-ում հասավ բարձրագույն մակարդակի և ավելի քան կրկնակի գերազանցեց 1937թ. մակարդակը՝ կազմելով համաշխարհային կապիտալիստական արդյունաբերական արտադրության մոտ 60%-ը:

Արտադրության ընդլայնմանը խթանեց նաև արտահանման ծավալների աճը համաշխարհային շուկայում ԱՄՆ-ի մրցակիցների թուլացման պայմաններում: Արտահանման ծավալները 3 մլրդ-ից պատերազմի նախօրեին աճեցին մինչև 14 մլրդ դոլար: ԱՄՆ-ի բաժինը համաշխարհային արտահանման մեջ հասավ 40, իսկ ոսկու պաշարների մեջ՝ մոտ 70%-ի: Արտասահմանյան ինվեստիցիաները ավելացան՝ հասնելով մինչև 17 մլրդ դոլարի՝ 1939թ. 11.4 մլրդ

* Լենդ-լիզ - 1941 թ.-ից ամերիկյան կառավարության կողմից հակաֆաշիստական կոալիցիայի երկրներին փոխարինաբար կամ վարձակալությամբ զենքի, զինամթերքի, ռազմական հանդերձանքի, սննդամթերքի և այլ ապրանքների մատակարարման համակարգ:

դուլարի դիմաց: Ամերիկյան մոնոպոլիաները ուժեղացրին իրենց դիրքերը Բրիտանական կայսրության, Լատինական Ամերիկայի և Ասիայի երկրներում:

Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին ԱՄՆ-ը կրկնապատկեց տնտեսական հզորությունը և բացարձակ առաջնային դիրք գրավեց աշխարհում:

ԱՄՆ-ի տնտեսության զարգացման բարենպաստ պայմանները ժամանակավոր էին, և արդեն 1944թ. կեսերից ռազմական պատվերների կրճատման հետևանքով սկսվեց արդյունաբերական և գյուղատնտեսական արտադրության ծավալների կրճատումը, որը տևեց մինչև 1946թ.:

Արտադրության աճը, որը սկսվեց 1946թ., պայմանավորված էր տնտեսության խաղաղ վերակառուցմամբ՝ լայն սպառման ապրանքների արտադրության մեծացմամբ, հիմնական կապիտալի նորացմամբ, բնակարանային շինարարության ծավալմամբ: Մեծ նշանակություն ունեցավ արտահանման ավելացումը Եվրոպական երկրներ՝ հիմնականում «Մարշալի պլանով»: ԱՄՆ-ի կոնգրեսը 1948թ. ընդունեց օրենք արտասահմանյան պետություններին օգնելու նախն, որով 1948-1951թթ. 17 եվրոպական երկրի տրվում էր 13 մլրդ դոլարի օգնություն՝ անտոկոս և անհատույց նվիրատվությունների ձևով: Այդ միջոցներով կառավարությունը ամերիկյան մոնոպոլիաներից գնում էր սարքավորում, հումք, վառելիք, սննդամթերք և այլ ապրանքներ, տեղափոխում Եվրոպա, որտեղ դրանք վաճառվում էին, և ստացված գումարները ուղղվում էին արտադրության զարգացմանը:

«Մարշալի պլանը» չկանխեց 1948-1949թթ. գերարտադրության տնտեսական ճգնաժամը. ընդհատվեց տնտեսության ռազմականացմամբ և ռազմական պատվերների մեծացմամբ՝ 1950-1953թթ. Կորեայի դեմ սկսված պատերազմի պատճառով:

Չեռպատերազմյան ժամանակաշրջանում ԱՄՆ-ի տնտեսական զարգացումը պարբերաբար ընդհատվել է գերարտադրության տնտեսական ճգնաժամերով՝ 1948-1949, 1953-1954, 1957-1958, 1960-1961, 1969-1971, 1974-1975, 1980-1982թթ., որոնցից առանձնանում է 1974-1975 թվականների ճգնաժամը: Ի տարբերություն մյուսների, դա ընդգրկեց բոլոր զարգացած երկրների տնտեսությունները, ամենածանրն էր և ուղեկցվում էր կառուցվածքային ճգնաճամերով՝ էներգետիկ, հումքային, արժութա-ֆինանսական, բնապահպանական:

Միջազգային արժութա-ֆինանսական ճգնաժամը տեղի ունեցավ դոլարի արժեզրկման հետևանքով՝ ԱՄՆ-ի վճարային հաշվեկշռի մշտական պակասուրդի պայմաններում: Ամերիկյան կառավարությունը ստիպված էր դադարեցնել դոլարի փոխանակումը ոսկով և

կատարել դրա երկու դեվալվացիաները՝ 1971-1973 թվականներին: Դոլարի և մասամբ ֆունտ-ստեռլինգի հիման վրա Բրետոն-Վուդսյան կոնֆերանսում 1944թ. ստեղծված միջազգային արժուքային համակարգը փլուզվեց: Յամայկայում 1976թ. հիմնադրված նոր արժուքային համակարգով դոլարը դադարեց պաշտոնապես լինելու միջազգային վճարման միջոց:

ԱՄՆ-ի տնտեսության վրա ծանր ազդեցություն գործեց նաև էներգետիկ ճգնաժամը, որն ի հայտ եկավ 1970-ական թվականներին, երբ համաշխարհային շուկայում նավթի գները կտրուկ աճեցին: «Նավթի ճգնաժամի» հիմնական պատճառը գիտատեխնիկական հեղափոխությունն էր, որը մեծացրեց նավթի նշանակությունը տնտեսության մեջ. նավթը սկսեցին օգտագործել ոչ միայն որպես վառելիք, այլև՝ հումք: Նավթի ցածր համաշխարհային գների պայմաններում զարգացած երկրների վառելիքա-էներգետիկ հաշվեկշիռներում կրճատվում էր ածխի և մեծանում նավթի ու գազի տեսակարար կշիռը: ԱՄՆ-ը, Անգլիան, ճապոնիան և մյուս երկրները գնալով ավելի շատ էին կախման մեջ ընկնում նավթի ներմուծումից:

Մյուս կողմից՝ հետպատերազմյան ժամանակաշրջանում նավթ արդյունահանող երկրները ձեռք բերեցին ազգային անկախություն և ազգայնացրին օտարերկրյա մոնոպոլիաների սեփականությունը: Սահմանվեց ազգային կառավարությունների վերահսկողություն նավթի արդյունահանման և արտահանման ծավալների նկատմամբ: Ավելին, 1961թ. ստեղծվեց ՕՊԷԿ-ը՝ նավթ արտահանող երկրների միջազգային կազմակերպությունը, որի մեջ մտնող տասնյակից ավելի երկրներին (Իրան, Իրաք, Սիրիա, Քուվեյթ, Ալժիր, Վենեսուելա և ուրիշներ) բաժին է ընկնում նավթի համաշխարհային արդյունահանման և արտահանման կեսից ավելին: Նավթի արտահանման քվոտաներ սահմանելու միջոցով ՕՊԷԿ-ի մասնակից երկրներին հաջողվեց հասնելու նավթի գների աճին համաշխարհային շուկայում: Մեկ բարել (159լ.) նավթի գինը 13-ից աճեց մինչև 20 դոլար 1979թ. և 34 դոլար՝ 1983թ.: Տասը տարվա ընթացքում (1970-1980թթ.) նավթի համաշխարհային գները աճեցին 7, իսկ պատրաստի արտադրանքինը՝ ընդամենը 3 անգամ: Աճեցին նաև այլ հումքատեսակների գները:

Համաշխարհային շուկայում ստեղծված այս նոր պայմանները վկայում էին, որ էքստենսիվ զարգացման ռեսուրսը սպառված էր. անցան այն ժամանակները, երբ էժան էներգիայի և հումքի անսպառ թվացող պաշարները ԱՄՆ-ի տնտեսական զարգացման կարևոր գործոններից էին:

Պարզ դարձավ, որ բարենպաստ արտաքին գործոնների ազդեցությամբ ձևավորված ամերիկյան տնտեսության ճյուղային կառուցվածքը հնացել է, ապրանքների մրցունակությունը՝ նվազել: ԱՄՆ-ի

վտանգավոր մրցակիցներն էին դարձել ոչ միայն ԳՖՀ-ն ու ճապոնիան, այլև՝ Հարավային Կորեան, Հոնկոնգը, Թայվանը և ուրիշներ, որոնց էժան ապրանքները շուկաներից դուրս էին մղում ամերիկյան ապրանքները: ԱՄՆ-ի տեսակարար կշիռը համաշխարհային առևտրում կրճատվում էր, մեծանում էր նրա առևտրային և վճարային հաշվեկշիռների պակասուրդը, դանդաղում՝ տնտեսական աճը: Անհրաժեշտ էր սկսել տնտեսության, առաջին հերթին՝ արդյունաբերության՝ ճյուղային կառուցվածքի փոփոխություն, երկրի արդյունաբերական պոտենցիալի վերակառուցում:

ԱՄՆ-ի արդյունաբերության ճյուղային կառուցվածքի փոփոխման խնդիրն էր կրճատել էներգա-նյութա-աշխատատար ճյուղերի տեսակարար կշիռը, ներդնել ռեսուրսներ խնայող տեխնոլոգիաներ, բարձրացնել աշխատանքի ինտենսիվությունը և արտադրողականությունը, զարգացնել մասնագիտացման և համաշխարհային տնտեսությանն ինտեգրվելու նոր ձևեր: Այս նպատակի իրագործմանը և տնտեսության հարմարեցմանը համաշխարհային շուկայի պահանջներին ԱՄՆ-ում ձեռնամուխ եղան 1970-ական թվականների վերջերից՝ նախատեսելով շուրջ 30 տարվա գործընթաց: 1980-1982թթ. ճգնաժամից հետո սկսվեցին նորագույն տեխնիկայի զանգվածային ներդրումը և գիտատար ճյուղերի զարգացումը: Այդ ճյուղերն էին՝ ավիատիեզերական արդյունաբերությունը, համակարգիչների արտադրությունն ու դրանց ծրագրային ապահովումը, միկրոպրոցեսորների և ռոբոտատեխնիկայի, լազերային տեխնիկայի, բիոինժեներիայի, բարոսարքավորման և այլնի արտադրությունը:

Ռեսուրսներ խնայող տեխնոլոգիաների տարածման շնորհիվ արդեն 1980-ական թվականների վերջին հնարավոր եղավ ԱՄՆ-ի ՀՆԱ-ի տեսակարար էներգատարությունը կրճատել 30, իսկ նյութատարությունը՝ 20%-ով:

Ամերիկյան արդյունաբերության կառուցվածքային վերափոխումները ենթադրում էին հին ճյուղերի՝ մետաղագործության, մետաղյա կոնստրուկցիաների և շինանյութերի արտադրության, նավաշինության, ռետինատեխնիկական, կարի, կաշվի, փայտամշակման արդյունաբերության տեսակարար կշռի կրճատում և մի մասի տեղափոխում աշխարհի այլ տարածաշրջաններ նաև բնապահպանական նկատառումներով:

Գիտատեխնիկական առաջընթացի արագացումը և նոր տեխնոլոգիաների ներդրումն ապահովվում էին գիտահետազոտական աշխատանքների ֆինանսավորման չափերի և ինվեստիցիաների (այդ թվում՝ օտարերկրյա) ներգրավման ծավալների մեծացմամբ: Գիտական հետազոտությունների համար ԱՄՆ-ը 1979թ. ծախսել է մոտ 57 մլրդ, իսկ 1991թ.՝ 154 մլրդ. դոլար, որը 2-8 անգամ ավելի էր մյուս զարգացած երկրների համեմատությամբ:

Արդյունաբերական արտադրության տեխնիկական և տեխնոլոգիական նորացումը 1990-ական թվականներին ապահովեց աշխատանքի արտադրողականության տարեկան 2% աճ նախորդ տասնամյակի 0,8%-ի դիմաց: Մինչև 2001թ. տեղի էր ունենում ամերիկյան էկոնոմիկայի զարգացման տեմպերի անընդմեջ աճ: ՀՆԱ-ի հավելածի միջին տարեկան տեմպը կազմում էր ավելի քան 4%:

Ամերիկյան տնտեսության երկարաժամկետ աճը բնակչության զբաղվածության ցուցանիշի մեծացման պայմաններում թույլ է տալիս նրա արդի էկոնոմիկան անվանելու «նոր էկոնոմիկա», որը բնութագրվում է բիզնեսի գլոբալացմամբ և տեղեկատվական հեղափոխության ծավալմամբ: Երկրի տնտեսությունը գնալով ավելի է ինտեգրվում համաշխարհային տնտեսությանը, զարգացման արտաքին գործոնը ձեռք է բերում վճռորոշ նշանակություն: Այժմ արդեն ամերիկյան խոշորագույն ընկերությունների եկամուտների կեսից ավելին ստեղծվում է արտասահմանում՝ արտաքին առևտրից և ինվեստիցիաներից: Իր հերթին, ԱՄՆ-ը ստանում է արտասահմանյան նորագույն ապրանքներ և տեխնոլոգիաներ, երկրում գործում են եվրոպական և ճապոնական ընկերությունների բազմաթիվ մասնաճյուղեր:

ԱՄՆ-ի տնտեսության աճի մյուս հզոր գործոնը տեղեկատվական հեղափոխությունն է: Կատարելագործվում են թվային տեխնոլոգիաները, ստեղծվում են նոր ընկերություններ և արդյունաբերության ճյուղեր: Եթե նախկինում ԱՄՆ-ի տնտեսության լոկոմոտիվը ավտոմոբիլաշինությունն էր և բնակարանային շինարարությունը, ապա այժմ՝ տեղեկատվական տեխնոլոգիաների արտադրությունը: Ինֆորմատիկայի և հեռուստահաղորդակցական տեխնոլոգիաների բնագավառում ԱՄՆ-ը իրեն հավասարը չունի: Այդ ամենը ապահովում է ԱՄՆ-ի տնտեսական զարգացման բարձր տեմպերը, աշխատատեղերի ստեղծումը նոր ճյուղերում և ծառայությունների ոլորտում, շահույթների և բնակչության եկամուտների մեծացումը:

ԱՄՆ-ը առանձնանում է մյուս երկրներից արտադրության և մեներջմենթի բարձր արդյունավետությամբ, օտարերկրացիների մտավոր և որակյալ աշխատանքի օգտագործմամբ և մասնավոր բիզնեսի ազատությամբ: Տնտեսությունը զարգանում է ամուր գիտատեխնիկական հիմքով: Իսկ նախապատվությունը տրվում է ծառայությունների ոլորտին, որի տեսակարար կշիռը կազմում է ՀՆԱ-ի ավելի քան 60%:

ԱՄՆ-ը իր գերազանցությունը համաշխարհային տնտեսության մեջ կպահպանի նաև առաջիկա տասնամյակներին, որովհետև նրա հզոր էկոնոմիկայի, ֆինանսական և մտավոր ռեսուրսների հետ չի կարող մրցակցել և ոչ մի երկիր:

9.1.1. Տնտեսության պետական կարգավորումը

Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին տնտեսության արագ ռազմական վերակառուցման անհրաժեշտությունը ազդակ հանդիսացավ պետության տնտեսական դերի ուժեղացման համար: Պետությունն իր միջոցներով կառուցում էր ռազմական նշանակության ձեռնարկություններ, ստեղծում արդյունաբերության նոր ճյուղեր, բաշխում հումքը, վառելիքը, կարգավորում գները և այլն:

Պատերազմից հետո տնտեսության պետական կարգավորման նպատակը նրա կայուն աճի ապահովումը և ճգնաժամերի կանխումն էր, բնակչության բավարար զբաղվածության երաշխավորումը, տնտեսության ճյուղային և տարածաշրջանային կառուցվածքների բարելավումը, գիտատեխնիկական առաջընթացի արագացումը, սոցիալական հարցերի լուծումը և արտաքին տնտեսական հարաբերությունների կարգավորումը:

Ամերիկյան կառավարությունը մինչև 1980-ական թվականների սկիզբը իրականացնում էր «պահանջարկի կարգավորման» քաղաքականություն, որի հիմքում Ջ. Քեյնսի տեսությունն էր տնտեսության պետական կարգավորման մասին: Պահանջարկը և նրա հաշվին իրացման հնարավորությունները ընդլայնելու համար մասնավոր կապիտալին տրվում էին հարկային արտոնություններ ու սուբսիդիաներ, ավելացվում էին սոցիալական ապահովության, առողջապահության և այլ պետական ծախսերը, որ մեծացնում էր դաշնային բյուջեի պակասուրդը, սաստկացնում արժեզրկումը և գների աճը: ԱՄՆ-ում 1980-ական թվականներին արժեզրկման մակարդակը կազմում էր տարեկան 18%, բյուջեի պակասուրդը՝ 60 մլրդ դոլար, ազգային դրամը արժեզրկվում էր, աշխատանքի արտադրողականության աճը դանդաղում:

Դա վկայում էր, որ ԱՄՆ-ում տնտեսության պետական կարգավորման համակարգը ճգնաժամ էր ապրում, քեյնսյան «դեղամիջոցներն» այլևս չէին համապատասխանում զարգացման նոր պայմաններին: Ակնհայտ էր, որ պետությունը չի կարող սահմանափակվել միայն պահանջարկի կարգավորմամբ: Անհրաժեշտ էր կարգավորել նաև առաջարկը՝ ընդլայնել ապրանքների և ծառայությունների արտադրությունը ներդրումների ավելացմամբ և արդյունավետության բարձրացմամբ:

Առաջարկի կարգավորման քաղաքականությունն սկսեց իրականացնել նախագահ Ռ. Ռեյգանը: Դա նախատեսում էր բիզնեսը ազատել պետական կարգավորման կապանքներից և ակտիվացնել շուկայական մեխանիզմը՝ տնտեսության զարգացմանը նոր շունչ հաղորդելու համար:

ԱՄՆ-ին հաջողվում է արդյունավետ հավասարակշռություն ստեղծել շուկայական ազատությունների և տնտեսական կարգավորման միջև և օգտագործել պետության հնարավորությունները երկրի զարգացումն արագացնելու համար:

Պետության տնտեսական դերի կարևորության և պետական կարգավորման մակարդակի մասին վկայում է բյուջեի միջոցով ազգային եկամտի պետականացումը, որն այժմ ԱՄՆ-ում կազմում է 30-35% կամ՝ ավելի քան 2 տրլն դոլար: Այդ միջոցների հաշվին իրականացվում են պետական ինվեստիցիաներ էլեկտրա-գազա-ջրամատակարարման համակարգում, կապի և տրանսպորտի, սոցիալական, գիտահետազոտական աշխատանքների ոլորտներում և այլն:

ԱՄՆ-ում տնտեսության պետական կարգավորման առավել զարգացած ձևերից են ապրանքների և ծառայությունների պետական գնումները, որոնց միջոցով իրացվում է հասարակական արդյունքի զգալի մասը, ինչպես նաև՝ հարկային և դրամավարկային քաղաքականությունը, որով պետությունն ազդում է ներդրումներին, հետևաբար՝ և արտադրության ծավալներին:

Կարևոր մշանակություն ունի սոցիալական խնդիրների լուծումը՝ կրթության, առողջապահության, սոցիալական ապահովության համակարգի զարգացումը, ինչի համար ԱՄՆ-ը ծախսում է ՀՆԱ-ի ավելի քան 20%-ը:

9.1.2. Գյուղատնտեսությունը

ԱՄՆ-ի տնտեսության կարևոր ճյուղ է գյուղատնտեսությունը, որի արտադրության ծավալները կրկնապատկվեց երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին՝ հունքի և սննդամթերքի արտահանման մեծացման շնորհիվ: Եվրոպական երկրների տնտեսության վերականգնումը և արտահանման ծավալների կրճատումը 1948 թվականին սկիզբ դրեցին ագրարային ճգնաժամի, որը դարձավ մշտական: ԱՄՆ-ում 1956 թվականին ստեղծված Հողային բանկը փոխհատուցում էր գյուղատնտեսական արտադրության ծավալների կրճատումը: Կառավարությունը 1968 թվականից քվոտաների միջոցով սահմանափակում էր հացահատիկային մշակաբույսերի ցանքատարածությունները և ավելացնում տեխնիկական մշակաբույսերինը:

ԱՄՆ-ի գյուղատնտեսության մեջ 1950-ական թվականների կեսերին ավարտվեց անցումն արտադրության մեքենայական փուլին, խորացավ մասնագիտացումը, ներդրվեցին ՊՏՀ-ի մվաճումները, տարածվեց քիմիացումը: Առաջացան գյուղատնտեսական կորպորացիաներ, կարտելներ, կոոպերատիվներ: Դրանք 1960-ական թվա-

կանների սկզբին ընդգրկում էին տնտեսությունների 80%-ը և վաճառում ամբողջ արտադրանքի 25%-ը:

Աշխարհում պարենային խնդրի սրումը 1970-ական թվականների սկզբին նպաստեց հացահատիկային մշակաբույսերի չիրացված պաշարների կրճատմանը:

ԱՄՆ-ում 1973 թվականին վերացվեցին գյուղատնտեսական արտադրության սահմանափակումները և սկսվեց խթանումը: Չերկվեցին 23-24 մլն հա կոնսերվացված հողեր, ավելացան հացահատիկի և եգիպտացորենի ցանքատարածությունները: Միևնույն ժամանակ, ավելի քան քառակի աճեցին հացահատիկի արտահանման գները: ԱՄՆ-ի գյուղատնտեսական ապրանքների արտահանման արժեքային ծավալը 1963-1973թթ. եռապատկվեց, 1979 թվականին կազմեց 32 մլրդ դոլար:

Պատերազմից հետո արագացան արտադրության համակենտրոնացումը և կապիտալի կենտրոնացումը գյուղատնտեսության մեջ. տնտեսությունների ընդամենը 10-15%-ին բաժին էր ընկնում գյուղատնտեսական արտադրանքի 50-60%-ը: Միջին և մանր ֆերմաների քայքայման հետևանքով դրանց թիվը 1940 թվականի 6,3 միլիոնից կրճատվել է մինչև 1,9 միլիոն, իսկ մեկ ֆերմայի հողի միջին չափը 67-ից ավելացել է մինչև 175 հա-ի: Աշխատանքի արտադրողականությունը ԱՄՆ-ի գյուղատնտեսության մեջ ամենաբարձրն է աշխարհում:

Գյուղատնտեսության տեսակարար կշիռը ԱՄՆ-ի ՀՆԱ-ում կազմում է 0,8%, իսկ գյուղատնտեսական արտադրության մեջ զբաղվածների թիվը՝ բնակչության թվաքանակի 1,6%:

9.1.3. Արտաքին տնտեսական կապերը

Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին, արտահանման ծավալների ընդլայնման շնորհիվ, ԱՄՆ-ի տեսակարար կշիռը համաշխարհային առևտրում 1938թ. 14,5 %-ից 1947թ. աճեց մինչև 32%: Առևտրային հաշվեկշռի դրական սալըոն 1946-1950թթ. տարեկան կազմում էր մոտ 7 մլրդ դոլար:

ԱՄՆ-ի արտաքին տնտեսական դիրքերը սկսեցին թուլանալ 1950-ական թվականների երկրորդ կեսից՝ հիմնականում Գերմանիայի և ճապոնիայի մրցակցության հետևանքով: Նորացնելով հիմնական կապիտալը և ներդնելով առաջադիմական տեխնոլոգիաներ, կիրառելով բանվորների վարձատրման ցածր չափեր՝ այդ երկրներն արտադրում էին ավելի էժան ապրանքներ, որոնք շուկաներից դուրս էին մղում ամերիկյան ապրանքները: 1971 թվականից ԱՄՆ-ի առևտրային հաշվեկշիռը պասսիվ է, իսկ դրա բացասական

սալդոն 2 մլրդ դոլարից 2000թ. աճել է մինչև 450 մլրդ դոլար: Պատճառը նաև ԵՄ ստեղծումն է, որի անդամները բարձր մաքսատուրքերով սահմանափակում են «երրորդ», այդ թվում՝ նաև ամերիկյան ապրանքների ներհոսքը Եվրոպական շուկաներ:

ԱՄՆ-ի տեսակարար կշիռը համաշխարհային արտահանման մեջ 1950թ. 42,4%-ից 2000թ. կրճատվել է մինչև 12%:

Երկար ժամանակ ԱՄՆ-ը համարվում էր տնտեսապես բավակա-
նին «փակ երկիր», որ պայմանավորված էր նրա հարուստ հում-
քային ռեսուրսներով, ընդարձակ և տարողունակ ներքին շուկայով,
ամերիկյան ընկերությունների արտասահմանյան մասնաճյուղերի
խիտ ցանցով և այլն: Այսպես՝ ապրանքային արտահանման տեսա-
կարար կշիռը ԶՆԱ-ում կազմում էր 10-15%, երբ Արևմտյան Եվրո-
պայի երկրներում 20-30% է:

Ամերիկյան տնտեսությունը XX դարի վերջից զարգանում է
շուկաների գլոբալացման պայմաններում: Բանկերը, ընկերություն-
ները ապրանքները, տեխնոլոգիաները ավելի ու ավելի են կողմն-
որոշում դեպի համաշխարհային տնտեսություն, իսկ նրա ընդարձակ
ներքին շուկայի համար պայքարում են աշխարհի խոշորագույն
ընկերությունները: ԱՄՆ-ի արտաքին տնտեսական կապերն ընդար-
ձակվում են, և ձևավորվում է ավելի «բաց» տնտեսություն՝ արագ
աճում է արտաքին առևտուրը, ուժեղանում է կապիտալի միջազ-
գային տեղաշարժը, ընդլայնվում է մասնակցությունը միջազգային
արտադրական կոոպերացիային և գիտատեխնիկական համագոր-
ծակցությանը: Այսպես՝ 2000 թվականին ԱՄՆ-ի տեսակարար կշիռը
համաշխարհային ԶՆԱ-ում կազմում էր գրեթե 21, իսկ արտահանման
մեջ՝ 12%: Նյութական արտադրության ընդհանուր ծավալում արտա-
հանման բաժինը մոտ 1/3 է, գիտատար արտադրություններում
հասնում է 2/3-ի:

Մեծ է ներմուծման ծավալը՝ 2000թ.՝ 1,2 տրլն դոլար կամ՝ ԶՆԱ-ի
ավելի քան 10%-ը: Արագ զարգանում է ծառայությունների առևտու-
րը, որի դրական սալդոն կազմում է գրեթե 90 մլրդ դոլար:

ԱՄՆ-ը կապիտալ ներմուծող և արտահանող խոշոր երկիր է,
նրան բաժին է ընկնում համաշխարհային ուղղակի արտասահմա-
նյան ներդրումների մոտ 1/3-ը: Երկրի սահմաններից դուրս գործում
է նրա «երկրորդ տնտեսությունը»՝ միջազգային արտադրությունը,
առևտուրը, ֆինանսական ոլորտը, որը վերահսկվում է ամերիկյան
կապիտալի կողմից: ԱՄՆ-ի տնտեսության մեջ մեծ են նաև օտար-
երկրյա ներդրումները, որոնք 1990-ական թվականներից գրեթե 0,5
տրլն դոլարով գերազանցում են ամերիկյան արտասահմանյան
ակտիվները: ԱՄՆ-ը դարձել է համաշխարհային խոշոր պարտատեր:

9.2. ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ՖԵՂԵՐԱՏԻՎ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

9.2.1. Երկրորդ համաշխարհային պատերազմի տնտեսական հետևանքները

Երկրորդ համաշխարհային պատերազմը, որը սանձազերծեց ֆաշիստական Գերմանիան, մարդկության մեծագույն ողբերգությունն էր: Սակայն նաև դաժան դաս գերմանական ազգի համար: Մարդկային կորուստները կազմեցին 7 մլն, իսկ 2 մլն մարդ դարձավ պատերազմի հաշմանդամ:

Ռազմական ծախսերը Գերմանիայում տարեկան կազմում էին 120-150 մլրդ մարկ: Պետական պարտքը պատերազմի նախօրեին 30 մլրդ մարկ էր. իսկ 1945թ.՝ 390 մլրդ մարկ, կամ 5 անգամ գերազանցում էր 1938թ. ազգային եկամտի մեծությունը: Սաստկացավ արժեզրկումը, մեծացավ մոնոպոլիաների դերը: Խիստ վատթարացավ բնակչության դրությունը, աշխատօրը կազմում էր 16 և ավելի ժամ:

Մարդկանց և տեխնիկայի կորուստները, ռազմական գործողությունների ձգձգումը, ռազմաճակատներում կրած պարտությունները ամբողջովին կազմալուծեցին Գերմանիայի տնտեսությունը: 1945թ. ապրիլին ֆաշիստական Գերմանիայի ռազմատնտեսական մեքենան փշրվեց հակահիտլերյան միավորման միացյալ ուժերի հարվածներից, իսկ մայիսի 8-ին կնքվեց անվերապահ կապիտուլյացիայի ակտը:

9.2.2. Գերմանիայի տնտեսական և քաղաքական կյանքի վերակառուցումը պատերազմից հետո

Պոտսդամի կոնֆերանսի (1945թ. օգոստոս) որոշմամբ Գերմանիան բաժանվեց օկուպացիոն 4 զոտիների (ամերիկյան, անգլիական, ֆրանսիական և խորհրդային): Տնտեսության բնագավառում որոշվեցին այն միջոցառումները, որոնք ուղղված էին երկրի ռազմաարդյունաբերական պոտենցիալի վերացմանը: Գերմանիայի հետպատերազմյան տնտեսության հիմքը պետք է կազմեին արդյունաբերության և գյուղատնտեսության խաղաղ ճյուղերը: Գերմանիան զրկվում էր զավթած բոլոր տարածքներից և, որպես վնասի մասնակի փոխհատուցում, պարտավորվում էր հակահիտլերյան միավորման երկրներին վճարելու 20 մլրդ դոլար: Ընդսմին՝ ռեպարացիաների զանձումը նախատեսվում էր կատարել բնեղենով, այն սարքա-

վորման բռնագրավման ճանապարհով, որը չէր կարող ծառայել խաղաղ շինարարության նպատակներին:

Արևմտյան օկուպացիոն իշխանությունները սկզբնական շրջանում չէին խրախուսում Գերմանիայի արտադրողական ուժերի զարգացումը (ի տարբերություն արևելյան օկուպացիոն իշխանության): Այսպես՝ 1946թ. ամերիկյան գոտու արտադրական հզորությունները օգտագործվում էին 26%, իսկ ֆրանսիական գոտունը՝ 15-20%-ով: Վիճակը նույնն էր ռեսուրսներով հարուստ անգլիական գոտում, որին բաժին էր ընկել Ռուրի ավազանը:

1946թ. Գերմանիայի արդյունաբերական արտադրության ծավալը կազմում էր նախապատերազմական մակարդակի մեկ երրորդը, գյուղատնտեսությունում հետընթաց էր կատարվել 30 տարով: Գործում էր նորմավորված մատակարարման համակարգ, ծաղկում էր սպեկուլյացիան: Ամբողջովին կազմալուծվել էր ֆինանսական համակարգը: Պատերազմի տարիներին շրջանառության մեջ եղած դրամական զանգվածը աճեց հնգակի, արժեզրկումը նախապատերազմյան մակարդակի համեմատությամբ հասավ 600%-ի:

1947թ. հունվարի 1-ից միավորվեցին ամերիկյան և անգլիական օկուպացիոն գոտիները, իսկ հաջորդ տարվա փետրվարին դրան միացավ նաև ֆրանսիական գոտին: Այդպիսով դրվեց Գերմանիայի քաղաքական անջատման սկիզբը (ստեղծվեցին ԳՖՅ-ն և ԳԴՅ-ն) ԱՄՆ-ի սկսած «սառը պատերազմի» պայմաններում: Այդ պատերազմի հիմնական գործիքներն էին «Տրումենի դոկտրինան» և «Մարշալի պլանը», որոնք հաստատվեցին ԱՄՆ-ի կոնգրեսում 1947 և 1948 թվականներին: Գերմանական խոշոր կապիտալը ստացավ գործողության ազատություն:

9.2.3. Էրիարդի վերափոխումները

Չեոպատերազմյան Գերմանիայի տնտեսության քայքայումը կանխելու նպատակով ընդունվեց երկրի տնտեսության վերականգնման և զարգացման ծրագիր, որը միտված էր ձևավորմանը այսպես կոչված «սոցիալական շուկայական տնտեսության», որտեղ զուգակցվում էր սպառման, գործարարության, պայմանագրերի կնքման ազատությունը:

Գերմանիայի տնտեսական վերափոխման գլխավոր գաղափարախոսը և «ճարտարապետը» կանցլեր Լյուդվիգ Էրիարդն էր: Նա նպատակ դրեց բարձրացնելու բնակչության բոլոր խմբերի բարեկեցությունը, իսկ դրան հասնելու ուղին ազատ շուկայական մրցակցությունն էր և մասնավոր նախաձեռնությունը, պետության ակտիվ դերը մրցակցության նախադրյալների և պայմանների ստեղծման

գործում: Երհարդը սկսեց դրամական տնտեսության կարգավորումից, 1948թ. իրականացրեց դրամական վերափոխում. արժեզրկված փողերից հրաժարումը և կայուն արժույթի ստեղծումը ռեֆորմի նպատակն էր: Յուրաքանչյուր քաղաքացի ստանում էր 40 նոր գերմանական մարկ: Նախկին ռեյխսմարկերը փոխարինվեցին դոյչմարկերով: Կենսաթոշակները, աշխատավարձը վճարվում էին նոր փողերով՝ 1:1 հարաբերությամբ: Խնայողությունների կեսը փոխանակվում էր 1:10 հարաբերությամբ, իսկ մնացածը՝ հետագայում 1:20 հարաբերությամբ:

Երհարդը լայնորեն օգտագործեց պետական լծակները լիբերալիզմի սկզբունքին անցնելու համար: Վերացվեց ռեսուրսների վարչական բաժանումը և դրանց հսկողությունը: Տնտեսական բարեփոխումների մեջ, դրամականից բացի, Երհարդը կարևորեց նաև գների ռեֆորմը, կենտրոնացված կառավարման վերակառուցումը:

Փոփոխություններ կատարվեցին բանկային գործում, հիմնվեց Գերմանական հողերի էմիսիոն բանկը, հաստատվեց դրա կանոնադրությունը: Գներն ազատականացան, բայց և այնպես, պահպանվեց պետական հսկողությունը:

Պետությունն աջակցում էր տնտեսական դժվարությունների մեջ գտնվող բազային ճյուղերին (հատկապես՝ ածխի հանույթի, մետաղագործական, էլեկտրաէներգետիկայի): Ներդրողներին հատկացվում էին հարկային արտոնություններ: Արտադրական գործունեության հիմքը դարձավ մանր ու միջին գործարարությունը, որը խթանվում էր պետության կողմից: Արդեն 1953թ. մինչև 500 աշխատող ունեցող ձեռնարկություններում ընդգրկված էր երկրի բոլոր զբաղվածների կեսից ավելին:

Բարեփոխումները դրական արդյունք տվեցին կարճ ժամանակամիջոցում: Երկու տարվա ընթացքում վերացավ «սև շուկան», լայն սպառման ապրանքների արտադրությունն աճեց կրկնակի: Բարձրացան աշխատանքի արտադրողականությունը, աշխատավարձի չափը: Եթե 1948թ. հուլիսին արտադրության ծավալները կազմում էին 1936թ. մակարդակի 57%-ը, ապա հաջորդ տարվա կեսերին՝ 85, 1950-ին՝ 107, 1951թ. հուլիսին՝ 127%-ը: Արդյունաբերական արտադրության նախապատերազմյան մակարդակը վերականգնվեց 1949թ. ավարտին, իսկ 1950-ին աճեց 14,4%-ով: Արդյունաբերական արտադրության ամենամյա հավելածը 1948-1951թթ. կազմում էր 10-15%:

Արևմտյան Գերմանիան «Մարշալի պլանով» 1948-1949թթ. ԱՄՆ-ից որպես օգնություն ստացավ 1,4 մլրդ դոլար, այն դեպքում, երբ մնացած 15 երկրները ստացան 2,6 մլրդ դոլարի օգնություն: Արևմտագերմանական արդյունաբերությունը ստանալով նման միջոցներ՝ արագորեն սկսեց վերականգնման գործընթացը:

1947-1948թթ. Գերմանիայում օկուպացիոն իշխանությունների կողմից իրականացված ագրարային ռեֆորմն ըստ էության չխաթարեց գոյություն ունեցող խոշոր հողատիրության հիմքերը: Վերաբաշխվեց գյուղատնտեսական հողահանդակների ընդամենը 1%-ը:

Արևմտյան Գերմանիայի տնտեսության վերականգնմանը զուգընթաց տեղի ունեցավ նաև քաղաքական կազմակերպությունների վերականգնում:

9.2.4. Արևմտագերմանական «Տնտեսական հրաշքը»

1950-ական թվականների սրկզբներից Արևմտյան Գերմանիան դուրս եկավ տևական վերելքի ուղի (1957-1958թթ. ճգնաժամի որոշ ազդեցությամբ հանդերձ): Դա պայմանավորված էր կապիտալի ներհոսքով, արտադրության տեխնիկական նորացմամբ, ծանր արդյունաբերության աշխուժացմամբ: Գերմանիան արդյունաբերական արտադրանքի ծավալով երրորդ տեղն էր ԱՄՆ-ից և Անգլիայից հետո, իսկ 1960-ական թվականների սկզբներին՝ երկրորդ: Նշված շրջանում արագ տնտեսական զարգացումը անվանում էին «տնտեսական հրաշք»: Իրականում ոչ մի հրաշք էլ չկար. և ԳՖՀ-ի վերելքը խթանեցին մի շարք գործոններ՝ 1) ֆաշիստական Գերմանիայից ժառանգած հզոր արդյունաբերական պոտենցիալը, 2) աշխատանքի ինտենսիվության (լաբուրության) բարձր աստիճանը, 3) ԱՄՆ-ի և Անգլիայի ցուցաբերած ֆինանսական օգնությունը, 4) նշանակալի ռազմական ծախսերի բացակայությունը, 5) արդյունաբերության և գյուղատնտեսության արտադրանքի բոլոր տեսակների զանգվածային պահանջարկը, 6) արդյունաբերության վերականգնումը տեխնիկական նոր հիմքի վրա և այլն: Ռազմական ծախսերը 50%-ով կրճատվեցին, ավելացան կորպորացիաների շահույթից գանձվող հարկերը՝ նույնպես նպաստելով տնտեսական աճի արագացմանը:

Ձգալի հաջողությունների հասավ գյուղատնտեսությունը, որտեղ հետպատերազմյան ժամանակաշրջանում կատարվեցին արմատական փոփոխություններ: Ագրարային ռեֆորմի հետևանքով հողահանդակների հիմնական մասն անցավ միջին և մանր տնտեսություններին (ի տարբերություն օկուպացիոն իշխանությունների իրականացրած ռեֆորմի): Կրճատվեց գյուղատնտեսության մեջ զբաղվածների տեսակարար կշիռը, մինչդեռ ճյուղի արտադրանքի ծավալն աճեց: Արևմտյան Գերմանիայում գյուղացիական տնտեսությունները մեքենայացված և էլեկտրիֆիկացված էին, որ նպաստեց աշխատանքի արտադրողականության բարձրացմանը, բերքատվության և մթերատվության աճին:

Արդեն 1950-ական թվականների կեսերին ԳՖՅ-ի արդյունաբերական արտադրանքը 1936թ. համեմատությամբ ավելացավ կրկնակի: Աճեցին նաև ոսկու պաշարները, որոնցով Արևմտյան Գերմանիան աշխարհում երկրորդ տեղն էր զբաղեցնում ԱՄՆ-ից հետո:

1957 թվականից եվրոպական տնտեսական ինտեգրումը նպաստեց ԳՖՅ-ի դիրքերի ամրապնդմանը: Երեք տարի անց նա «Ընդհանուր շուկայում» զբաղեցնում էր առաջատար տեղ: 1960-ական թվականների սկզբներին ուժեղանում է տնտեսության ռազմականացման գործընթացը:

9.2.5. ԳՖՅ-ի տնտեսությունը 1960-1990-ական թվականներին

1960-ական թվականների ընթացքում ԳՖՅ-ի արդյունաբերությունը զարգանում էր հաջողությամբ, ինչի հիմնական գործոններն էին գիտատեխնիկական առաջընթացի բարձր տեմպերը, կողմնորոշումը դեպի արտաքին շուկան, պետության կարգավորիչ դերի ուժեղացումը: Եթե սկզբում շեշտը դրվում էր օտարերկրյա ներդրումների և պատենտների վրա, ապա 1960-ական թվականներին կարևորվում էին սեփական հետազոտությունների մշակումը, այս ուղղությամբ կատարվող ծախսերի մեծացումը, արտասահմանյան լիցենզիաների կրճատումը: Նվազում էին հայթայթող արդյունաբերության, տեքստիլ և կոշիկի արտադրության ծավալները, մինչդեռ արագ զարգանում էին քիմիական, մալթամշակման, ավտոմեքենաշինական, էլեկտրոնային, ավիացիոն, ատոմային ճյուղերը:

Տեխնիկական բազայի արդիականացումը նպաստեց աշխատանքի արտադրողականության կտրուկ բարձրացմանը, բարելավվեց արտադրանքի որակը, և ԳՖՅ-ն պատրաստի արտադրանքի արտահանման ծավալով զբաղեցրեց առաջին տեղը՝ հետ մղելով ԱՄՆ-ին:

1970-ական թվականներին ազգային ֆիրմաների միավորման շնորհիվ ԳՖՅ-ում նույնպես ստեղծվեցին վերազգային կորպորացիաներ, որոնք ակտիվորեն զարգացնում էին կոոպերացիայի տարբեր ձևերը մանր ու միջին ձեռնարկությունների հետ:

Առաջին հետպատերազմյան պարբերաշրջանային ճգնաժամը ԳՖՅ-ում տեղի ունեցավ 1966-1967թթ.: Առավել խորն էր 1974-1975թթ. գերարտադրության ճգնաժամը, որի հետևանքով համախառն ազգային արդյունքը կրճատվեց 5, արդյունաբերական արտադրությունը՝ 12,3%-ով: Աճեց ինֆլյացիան, սնանկացան շատ ձեռնարկություններ, տնտեսական ճգնաժամը ուղեկցվում էր էներգետիկ ճգնաժամով:

1970-ական թվականների կեսերից Գերմանիան անցում կատարեց տեղեկատվական, ռեսուրսախնայիչ տեխնոլոգիաներին, կենսատեխնոլոգիաներին: Տնտեսության մեջ անշեղորեն աճում էր մանր ու միջին գործարարության դերը, որի բաժինը ՀՆԱ-ում հասավ 50%-ի 1980-ական թվականներին: Մանր և միջին գործարարությունում զբաղվածների թիվը կազմում էր ակտիվ բնակչության շուրջ երկու երրորդը:

1980-1982թթ. ԳՖՅ-ի տնտեսությունը երկրորդ անգամ հայտնվեց ճգնաժամի ճիրաներում: 1982թ. այստեղ իշխանության գլուխ անցավ քրիստոնյա-դեմոկրատ Յելմուտ Զոլը, որը հրաժարվեց տնտեսության կարգավորման քեյնսյան մեթոդներից: Նա կիրառեց պահպանողական քաղաքականության «մեղմացված» տարբերակը, ինչի ռազմավարական ուղղությունը խոշոր կապիտալի շահույթի ապահովումն էր: 1983թ. սկսած Արևմտյան Գերմանիայում տեղի ունեցավ տնտեսական վերելք, որի հիմքում ընկած էին կառուցվածքային վերափոխումները, արտահանման ընդլայնումը, կուտակման ինտենսիվ գործընթացները: Արդյունաբերական արտադրության մի մասը փոխադրվեց արտասահման: Իսկ 1980-ական թվականների կեսերից երկրում իրագործվում էր «ապակարգավորման» և շուկայական մեխանիզմների դերի ուժեղացման քաղաքականություն, որը նախատեսում էր պետական ձեռնարկությունների մի մասի մասնավորեցում, մասնավոր կապիտալ ներդրումների խթանում: Դրա շնորհիվ ՀՆԱ-ի հավելածի տեմպերը տարեկան կազմում էին 4,5, ինֆլյացիայի կրճատմանը՝ մինչև 1, գործազրկության նվազեցմանը՝ մինչև 7%:

Արևմտյան Եվրոպայում ԳՖՅ-ի առաջատար դերի պահպանման ու նրա տնտեսության զարգացման գործում կարևոր նշանակություն ունեին արդյունաբերական ապրանքների ազատ առևտրի սահմանումը և եվրոպական արժույթային համակարգի կազմավորումը: ԳՖՅ-ի գյուղատնտեսության մեջ մեծ փոփոխություններ կատարվեցին 1980-1990-ական թվականներին: Եվրոպական ինտեգրման ազդեցությամբ կառավարությունը խթանում էր տնտեսական շրջանառության մեջ գտնվող հողատեսքերի կրճատումը: Այսպես՝ 1988/89 գյուղատնտեսական տարում դրանք կրճատվեցին 165 հազար հեկտարով, 1989/90-ին՝ ևս 60 հազարով: Միաժամանակ, կրճատվեց գյուղատնտեսության մեջ զբաղվածների թվաքանակը. այն կազմում էր երկրի ակտիվ բնակչության 4,5%-ը: 1990-ական թվականներին սննդամթերքի պահանջումների 75%-ը Արևմտյան Գերմանիայում բավարարվում էր հայրենական արտադրության հաշվին:

1990թ. տնտեսական շատ ցուցանիշներով Գերմանիան հասավ բարձր արդյունքների, իսկ ՀՆԱ-ի տեմպերը (4,5%) ամենաբարձրն էին վերջին 14 տարում: Արդեն 1980-ական թվականներին արդյու-

նաբերական արտադրանքի միջին տարեկան աճի տեմպերը իջան, բոլորից շատ տուժեցին երկրի արդյունաբերական պոտենցիալը որոշող ճյուղերը: Վիճակը վատացավ աշխատանքի շուկայում. 1993թ. ամռանն այստեղ հաշվվում էր 2,2 մլն գործազուրկ, իսկ 1996թ. սկզբին՝ 3.1 մլն:

1990թ. հոկտեմբերի 3-ին երկու գերմանական պետությունները (ԳՖՅ-ն և ԳՂՅ-ն) միավորվեցին, Բեռլինի պատը փլուզվեց: Երկրի տարածքը ավելացավ մեկ երրորդով, բնակչությունը՝ 64 մլն-ից հասավ 80 մլն-ի: Յիճ գ նոր հողերում սկսվեցին շուկայական վերափոխումներ, որոնք պահանջում էին խոշոր կապիտալ ներդրումներ: Վերջինս էլ հանգեցրեց բյուջետային պակասուրդի, պետական պարտքի ավելացման և գործազրկության աճի:

1990-ական թվականների սկզբներին ամբողջ աշխարհում (այդ թվում Եվրոպայում) դիտարկվեց արտադրության անկում: Բանն այն է, որ շատ երկրներում տնտեսական աճի խթանման պետական միջոցառումները չազդեցին գործերի շտկման վրա ինչպես արտադրական, այնպես էլ բանկային ոլորտներում: Ամենուրեք տեղի էր ունենում ինվենստիցիոն հոսքերի բացարձակ կրճատում, որը հատկապես ազդեց նոր շինարարությանը: Նվազեցին նաև համաշխարհային ապրանքաշրջանառության ծավալները:

Ինչ վերաբերում էր Գերմանիային, ապա տնտեսական իրավիճակն այստեղ բարդանում էր մի շարք ներքին պատճառներով: Դրանցից էին Արևելյան Եվրոպայում և նախկին ԽՍՀՄ-ում տարբեր ապրանքների և ծառայությունների իրացման շուկաների կորուստը, գերմանական արտադրանքի որակական և գնային մրցունակության նվազումը և այլն: Բայց և այնպես, երկրի տնտեսական վիճակի վատացմանը մեծապես ազդեց երկու Գերմանիաների միավորումը: Արևելյան Գերմանիայի տնտեսությունը շուկայականի փոխադրելու ծախսերի ամբողջ ծանրությունն ընկավ Արևմտյան Գերմանիայի ուներին, որ առաջացրեց բազում սոցիալ-տնտեսական հիմնախնդիրներ երկրի կյանքում:

Վիճակը հատկապես ծանր էր արևելյան հողերում, որտեղ 1991թ. սկզբին արդյունաբերության 69 ճյուղերից 1989թ. մակարդակին կարողացան մնալ միայն երեքը: Ջանգվածային ձևով փակվեցին արդյունաբերական ձեռնարկությունները, և 1993թ. կեսերին արտադրության ծավալը կրճատվեց 40%-ով:

Նախկին Արևելյան Գերմանիայում շուկայական բարեփոխումների իրականացումը 1991թ. պահանջեց 140 մլրդ, 1992-ին՝ 152 մլրդ, իսկ 1993թ.՝ 182 մլրդ մարկ: Այդ պատճառով միավորված Գերմանիայի պետական բյուջեի պակասուրդը 1993թ. կազմեց 69 մլրդ մարկ, իսկ պետական պարտքը հասավ 1850 մլրդ մարկի (1990թ. 1039 մլրդ մարկ էր): Նույնիսկ 1990-ական թվականների

ավարտին երկրի արևելյան մասի տնտեսությունը բավականին հեռու էր արևմտյան մասի տնտեսության մակարդակից:

Միավորման հետ կապված բացասական երևույթներով հանդերձ, Գերմանիան մնում է Եվրոմիության առաջատար երկրներից մեկը: Նրա դինամիկ տնտեսական զարգացման հիմնական պատճառներն են՝ 1) սպառողական պահանջարկի բարձր աստիճանը, 2) զբաղվածության և աշխատավարձի աճը, 3) ներքին շուկայի ընդարձակումը 5 մոր դաշնային հողերի հաշվին, 4) գիտատեխնիկական առաջընթացի արագ ծավալումը, 5) արտահանման ուղղվածության ճյուղերի առաջնահերթ զարգացումը:

9.3. Մեծ Բրիտանիա

9.3.1. Երկրորդ համաշխարհային պատերազմի տնտեսական հետևանքները Մեծ Բրիտանիայում

Պատերազմի տարիներին Մեծ Բրիտանիայում զարգացավ պետական-մոնոպոլիստական կապիտալիզմը: Պետական պատվերների կատարման հաշվին մոնոպոլիաները ստացան առասպելական շահույթներ: Ռազմական գործարանների կառուցման շնորհիվ ընդարձակվեց տնտեսության պետական հատվածը:

Պատերազմը վատթարացրեց դրությունը Անգլիայի բնակչության, որի նշանակալի մասը մոբիլիզացվեց՝ բանակում ծառայելու և արդյունաբերական ձեռնարկություններում աշխատելու: Աշխատավարձը ցածր էր, արժեզրկման տեմպերը՝ բարձր: Աշխատանքի ինտենսիվության բարձրացմամբ, աշխատողների շահագործման ուժեղացմամբ հաջողվեց ռազմական արդյունաբերության արտադրանքի ծավալը 1939թ. համեմատությամբ 1943թ. ավելացնել հնգակի:

Երկրորդ համաշխարհային պատերազմը զգալի վնաս հասցրեց Անգլիային: Քաղաքները ռմբակոծվեցին օդից, իսկ գաղութները (Բիրման, Եգիպտոսը, Մալաիան և այլն) օկուպացվեցին թշնամու զորքերի կողմից: Երկիրը կորցրեց 250 հազար զինվոր ու սպա:

Պատերազմի տարիներին Անգլիան զրկվեց ազգային հարստության մեկ քառորդից: Պատերազմական ծախսերը կազմեցին 25 մլրդ ֆունտ-ստեռլինգ, արտաքին պարտքը՝ 3,4 մլրդ ֆունտ-ստեռլինգ, խիստ կրճատվեց անգլիական արտադրանքի արտահանման ծավալը:

Երկրորդ համաշխարհային պատերազմի անմիջական հետևանքն Անգլիայի համար կախվածության ուժեղացումն էր ԱՄՆ-ից: Անգլիան

հրաժարվեց ԽՍՀՄ-ի հետ արդյունավետ համագործակցությունից, դարձավ մի շարք ռազմական դաշինքների (ՆԱՏՕ, ՍԵԱՏՕ, ՍԵՆՏՕ) անդամ: 1948թ. սկսած օգնություն էր ստանում «Մարշալի պլանով»։ ԱՄՆ-ը Անգլիային մատակարարեց 2,7 մլրդ դոլարի՝ հիմնականում ԱՄՆ-ում չիրացվող զենք կամ ապրանք: «Մարշալի պլանը» լուրջ խոչընդոտներ էր ստեղծում անգլիական արդյունաբերության այն ճյուղերի համար, որոնք կարող էին մրցակցել ամերիկյանի հետ:

Պատերազմից հետո բրիտանական կայսրության գաղութների կազմից դուրս եկան Հնդկաստանը, Ցեյլոնը, Բիրման և այլն: Գաղութային համակարգի փլուզումը առանձնակի վնասեց հումքի մոնոպոլիաներին:

9.3.2. Տնտեսության հետպատերազմյան վերականգնումը

Երկրորդ համաշխարհային պատերազմից Մեծ Բրիտանիան դուրս եկավ թուլացած տնտեսությամբ, քայքայված ֆինանսական համակարգով: Տնտեսության վերականգնման նպատակով պետության քաղաքականության հիմքը դարձան ավելցուկային պահանջարկի կրճատումը, կապիտալի ներդրման խթանումը: Եվ արդյունքը ուշացնել չտվեց: Հետպատերազմյան առաջին տարիներին արդյունաբերական արտադրության աճի տեմպերը համեմատաբար բարձր էին: Պատճառներն էին՝ հիմնական կապիտալի զանգվածային նորացումը, արտահանման ծավալների ավելացումը, տնտեսության ռազմականացումը: Արդեն 1948թ. գերազանցվեց արդյունաբերության բազմաթիվ ճյուղերի արտադրանքի նախապատերազմյան մակարդակը (բացառությամբ ածխի, տեքստիլի, ավտոմեքենաների): Հատկապես արագ զարգացան քիմիական, նավաշինական, նավթավերամշակման արտադրությունները:

Արդյունաբերության վերականգնմանը զուգընթաց լուծվում էր արտահանման ծավալների առավելագույն ավելացման և ներմուծման կրճատման խնդիրը: Դրան նպաստեց ֆունտ-ստեռլինգի դեվալվացիոնը 1949թ., որը մեծացրեց երկրի արտահանման հնարավորությունները:

Հետպատերազմյան շրջանում Անգլիայում շարունակվեց տնտեսության մոնոպոլացման և պետական-մոնոպոլիստական կարգավորման ուժեղացման գործընթացը: Արդյունաբերության մոնոպոլացման կարևորագույն ձևը ֆիրմաների միաձուլումն էր (ֆուզիաների ստեղծումը): Կառավարությունը ամեն կերպ աջակցում էր մոնոպոլացմանը: Մեծ Բրիտանիան իրականացրեց երկրի տնտեսության կայունացմանն ուղղված մի շարք միջոցառումներ: Արդեն 1947 թվականից կիրառվեց խնայողության ռեժիմ, որը ներառում էր աշ-

խատավարձի, եկամուտների սառեցում, սպառման սահմանափակում: Երկրի համար լուրջ հիմնախնդիր էր 1945թ. դեկտեմբերի 6-ին ընդունված համաձայնությունը անգլո-ամերիկյան փոխառության մասին (ԱՄՆ-ը Անգլիային տրամադրում էր երկարաժամկետ վարկեր):

Կարևոր էր կառավարության կողմից արտահանող կազմակերպությունների օգտագործած հումքի, վառելիքի, էլեկտրաէներգիայի, տրանսպորտի տարիֆների իջեցումը: Դա հնարավոր դարձավ արդյունաբերության մի շարք ճյուղերի և ձեռնարկությունների ազգայնացումով: Պատերազմից անմիջապես հետո լեյբորիստների կառավարությունը ազգայնացրեց էլեկտրակայանները, ածխի և գազի արդյունաբերությունը, երկաթուղային տրանսպորտը, որոշ ավիաընկերություններ, Անգլիական բանկը: Իսկ 1950-1951թթ. պետական սեփականություն դարձան առանձին պողպատաձուլական գործարաններ: Սակայն 1953թ. սկսած պահպանողականները կիրառեցին այդ ձեռնարկությունների ապագայնացման քաղաքականություն: Ազգայնացման կապիտալիստական բնույթն արտահայտվեց հետևյալ կերպ. ազգայնացված ձեռնարկությունների տերերին տրվեցին 2,5 մլրդ ֆունտ-ստեռլինգի փոխառություններ, որոնցով երաշխավորվեց տարեկան 80 մլն ֆունտ-ստեռլինգի եկամուտ:

Նշված գործընթացների շնորհիվ Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո Անգլիայում բավականին զարգացավ տնտեսության պետական հատվածը:

1950-ական թվականներին այստեղ արդյունաբերական արտադրության աճի տեմպերը դանդաղեցին, ավելի ցածր էին, քան եվրոպական ուրիշ երկրներում: Այդ շրջանում Անգլիան կրկնակի տնտեսական ճգնաժամ ապրեց: 1951-1952թթ. արդյունաբերական արտադրությունը կրճատվեց 3, իսկ 1957-1958թթ.՝ 2%-ով: Աճի տեմպերի նվազման պատճառներն էին՝ տնտեսության հետպատերազմյան վերականգնման ավարտումը, խիստ մեծ ռազմական ծախսերը, հիմնական կապիտալի դանդաղ նորացումը, գիտատեխնիկական առաջընթացի նվաճումների անբավարար օգտագործումը, նախկին գաղութներում տնտեսական դիրքերի թուլացումը և այլն:

Յետպատերազմյան շրջանում իրագործվեցին Անգլիայի տնտեսության պետական-մոնոպոլիստական կարգավորման մի շարք միջոցառումներ, որոնցից կարևոր էր պետական բյուջեի, ինչպես նաև վճարային հաշվեկշռի ճեղքվածքի վերացման համար պայքարը: Բարձրացվեցին հարկերը, կրճատվեցին սոցիալական կարիքներին ուղղված ծախսերը, սահմանափակվեց ներմուծումը: Սակայն պետական-մոնոպոլիստական կարգավորումը արդյունավետ չէր, ի վիճակի չէր վերացնելու գործազրկությունը, արժեզրկումը և տնտեսական ճգնաժամերը:

Վճարային հաշվեկշռի ճեղքվածքի հիմնախնդրի սրման պատճառով Մեծ Բրիտանիայի կառավարությունը սկսեց ավելի մեծ ուշադրություն դարձնել գյուղատնտեսության զարգացմանը: Մթերքների ներմուծման ծավալը նվազեցնելու նպատակով 1947թ. ընդունվեց գյուղատնտեսական արտադրության ավելացման քառամյա ծրագիր: Դրա համաձայն՝ ֆերմերներին երաշխավորվում էին իրենց տնտեսությունների արտադրանքի նվազագույն զմեր, ինչպես նաև տրվում էին փոխատվություններ՝ բերքատվության և մթերատվության բարձրացման միջոցառումների իրականացման համար:

Նշված քաղաքականությունը նպաստեց գյուղատնտեսության վերելքի ապահովմանը, և 1951-1952թթ. գյուղատնտեսական արտադրանքի ծավալը նախապատերազմյան մակարդակը գերազանցեց 1,5 անգամ: 1950-ական թվականներին անգլիական գյուղատնտեսությունը դարձավ աշխարհում ամենամեքենայացվածներից մեկը: Բայց և այնպես, մթերքների կեսից ավելին ներմուծվում էր արտասահմանից: Գյուղատնտեսության զարգացման գործընթացն ուղեկցվում էր շատ մանր ու միջին ֆերմերային տնտեսությունների քայքայմամբ:

1950-ական թվականներին Անգլիայի տնտեսական զարգացման անբաժան ուղեկիցը արժեզրկումն էր: Գների ընդհանուր ինդեքսը 1950թ. 46%-ից 1960թ. հասավ 68,3%-ի (1970-ին՝ 100%-ի): Դրամաշրջանառության անկայունությունը խորացվում էր արժուբաֆինանսական ճգնաժամերով, որոնք խիստ սրեցին կապիտալիստական վերարտադրության հակասությունները: 1949թ. ճգնաժամի ժամանակ ԱՄՆ-ը կրճատեց ստեռլինգային գոտու երկրներից ներմուծվող ապրանքների ծավալը, որ հանգեցրեց Անգլիայի արժուբային և ոսկու պահուստների նվազմանը:

Երկրի տնտեսական զարգացումը որոշ չափով արագացավ 1950-ական թվականների երկրորդ կեսին: Դրան նպաստեցին գիտատեխնիկական հեղափոխության ազդեցությունը, կառավարման մեթոդների կատարելագործումը, արտադրության մեջ պետության խոշոր ներդրումները, արդյունաբերության կառուցվածքային փոփոխությունները: 1960թ. Անգլիայի գլխավորությամբ ստեղծվեց «Ազատ առևտրի եվրոպական ասոցիացիան», որը միավորում էր Եվրոպական տնտեսական համագործակցության մեջ չընդգրկված երկրները (Ավստրիան, Դանիան, Նորվեգիան, Պորտուգալիան, Շվեդիան, Շվեյցարիան), սակայն դա էլ չստեղծեց բարենպաստ պայմաններ անգլիական ապրանքների իրացման համար: Ուստի՝ 1961թ. Անգլիան բանակցություններ էր վարում «Ընդհանուր շուկա» մուտք գործելու նպատակով, ինչը նրան հաջողվեց միայն 1973թ.:

1950-1960-ական թվականներին Անգլիայում շարունակվում էր ակտիվ պետական միջամտությունը տնտեսությանը՝ ինչպես տնտե-

սական, այնպես էլ վարչական մեթոդներով: Բացի ձեռնարկությունների ազգայնացումից, մեծ տարածում գտավ պետական-մասնավոր ընկերությունների ստեղծման պրակտիկան (հատկապես՝ ավտոմոբիլաշինության և պողպատածուլական արտադրության մեջ):

9.3.3. Անգլիայի տնտեսական զարգացման առանձնահատկությունները 1960-1990-ական թվականներին

1960-ական թվականների սկզբին որոշ չափով իջան երկրի արդյունաբերության զարգացման տեմպերը: Տնտեսության բնագավառում մի փոքր աշխուժացում նկատվեց միայն 1960-ական թվականներին ավարտին: Ամբողջությամբ վերցրած նշված ժամանակամիջոցում արդյունաբերական արտադրանքի ինդեքսը աճեց աննշան չափով, իսկ հայթայթող արդյունաբերության ծավալը կրճատվեց մեկ քառորդով: Դա էլ հանգեցրեց Անգլիայի բաժնի կրճատմանը համաշխարհային արդյունաբերական արտադրության մեջ: 1950-ական թվականների երկրորդ տեղից կապիտալիստական աշխարհում Անգլիան հետ մղվեց չորրորդ տեղը՝ ԱՄՆ-ից, ԳՖՅ-ից և Գապոնիայից հետո:

1960-ական թվականներին շարունակվում էր անգլիական արդյունաբերության մոնոպոլացման գործընթացը, որի բնութագրիչ գիծը այնպիսի մոնոպոլիստական միավորումների ստեղծումն էր, ինչպիսիք էին կոնգլոմերատները, որոնք չունեին խիստ արտահայտված ճյուղային մասնագիտացում: Կոնցեռնները լայն մասշտաբներով զբաղվում էին ագրոբիզնեսով:

Որոշ մոնոպոլիաներ միաձուլվեցին (ավտոմոբիլային, էլեկտրատեխնիկական և այլն): Արտադրությունը գիտատեխնիկական հեղափոխության պահանջով համակենտրոնացվեց ավիացիոն արդյունաբերությունում, համակարգիչների թողարկման բնագավառում: Կառավարությունը կիրառեց ձեռնարկությունների հարկադրական միաձուլման քաղաքականություն: Արդյունաբերական արտադրության համակենտրոնացման մակարդակով 1960-ական թվականներին Անգլիան առաջին տեղն էր զբաղեցնում Եվրոպայում: Այդ ժամանակահատվածում ուժեղացավ նաև բանկային կապիտալի համակենտրոնացման գործընթացը: 1968թ. միաձուլվեցին խոշորագույն «Վեստմիդիստեր» և «Նեյշնլ արոպիինշլ», «Բարկլեյզ» և «Սարտինգ բենկ» բանկերը: Շարունակվում էր տնտեսության պետական հատվածի զարգացումը: 1967թ. Յարոլդ Վիլսոնի ղեկավարած լեյբորիստական կառավարությունն ազգայնացրեց սև մետալուրգիան: Այդ տարում պետությանը պատկանող «Բրիտանական

պողպատի կորպորացիան» արտադրում էր երկրի ամբողջ պողպատի 93,5%-ը: Տեղի է ունենում նաև կապիտալի կուտակման, ներդրումային գործունեության պետական-մոնոպոլիստական կարգավորում: Կառավարությունը մոնոպոլիաներին տալիս էր հարկային արտոնություններ, փորձում էր իրականացնել պետական-մոնոպոլիստական ծրագրավորում: 1961-1966թթ. համար Անգլիայի պատմության մեջ առաջին անգամ մշակվեց տնտեսության զարգացման ծրագիր, իսկ 1965-1970թթ. ընդունվեց զարգացման «ազգային պլան», որը պետք է իրագործեր էկոնոմիկայի նախարարությունը: 1969թ. դա վերացվեց, և կանխատեսման ու պլանավորման գործառույթներով զբաղվեց ֆինանսների նախարարությունը: Ինչպես 1961-1966թթ. ծրագիրը, այնպես էլ 1965-1970թթ. պլանը չկատարվեցին, և կառավարությունը հրաժարվեց պետական պլանավորումից:

Պետությունը կիրառում էր աշխատավարձի ստիպողաբար կարգավորման քաղաքականություն: Այսպես՝ 1961թ. հայտարարվեց աշխատավարձի բարձրացման «դադար», 1962 թվականից դրա տարեկան աճը չպետք է գերազանցեր 2,5, 1964 թվականից՝ 3,5%-ը, իսկ 1966թ. հուլիսից արգելվում էր բարձրացումը: Ուժեղացավ արժեզրկումը, աճեց արտաքին պարտքի ծավալը:

1970-ական թվականների սկզբին Անգլիայի տնտեսությունում դիտարկվեց նշանակալի վերելք, սակայն 1973թ. երկրում սկսվեց էներգետիկ ճգնաժամ, որը նավթի ու մյուս հումքային ռեսուրսների գների աճի հետևանք էր, և ուղեկցվեց առևտրային հաշվեկշռի վատացմամբ: Երկրի մուտքը Եվրոմիություն նշանավորվեց մյուս անդամների մրցակցության ուժեղացմամբ: Սակայն ճգնաժամը որոշ չափով հաղթահարվեց Յուլիսային ծովում նավթի և գազի հանքավայրերի շահագործմամբ:

1974թ. ճգնաժամը հաղթահարելու համար Անգլիան փորձեց գործնականում կիրառել պակասուրդային ֆինանսավորման քայնսյան հանձնարարականները: Բյուջեի ճեղքվածքը ծածկվում էր կառավարության փոխառությունների և մուրհակների թողարկմամբ, որ հանգեցրեց շինարարությունում դրամական զանգվածի ավելացմանը: 1975թ. սկսած տնտեսական կուրսը փոխվեց, խթանվում էր առաջատար ճյուղերի զարգացումը, վերացավ կապիտալի արտահանման նկատմամբ հսկողությունը, նախատեսվեց երկարաժամկետ հակաարժեզրկման քաղաքականություն:

Նշված շրջանում Անգլիայի արդյունաբերական զարգացման բնութագրիչ գիծը «ապահովուստրացումն էր», որը դրսևորվեց մշակող արդյունաբերության տեսակարար կշռի իջեցմամբ և ոչ արտադրական ոլորտի ու էներգետիկայի տեսակարար կշռի բարձրացմամբ: Անգլիան Եվրոպական տնտեսական համագործակցու-

թյան մյուս երկրներից հետ էր մնում աշխատանքի արտադրողականության աճի տեմպերով:

Ընդհանուր առմամբ 1950-1980թթ. այստեղ արդյունաբերական արտադրության ծավալն աճեց եռակի: Դրան նպաստեցին հետևյալ գործոնները՝

1. Կառավարության ակտիվ գործողությունները տնտեսական աճի կարգավորման և խթանման համար:
2. Արդյունաբերական սարքավորման արմատական նորացումը, կապիտալի ներհոսքը առաջադիմական ճյուղերը:
3. Երկրից կապիտալի արտահանման ծավալների կրճատումը՝ պայմանավորված գաղութային համակարգի փլուզմամբ:
4. Նավթի խոշոր հանքավայրերի շահագործումը Յուսիսային ծովում և այլն:

1979-1981թթ. Մեծ Բրիտանիայում սկսվեց նոր տնտեսական ճգնաժամ, որի մասշտաբները կարող էին համեմատվել միայն 1929-1933թթ. «մեծ լճացման» հետ: Հատկապես տուժեցին մեքենաշինությունը, մետաղաձուլությունը, մետաղամշակումը, նավաշինությունը: Գործազուրկների թիվը հասավ 2,5 մլն-ի, իսկ 1982-ին՝ 2,9 մլն-ի:

Կառավարությունը, Մ. Թետչերի գլխավորությամբ, սկսեց իրականացնել տնտեսական լիբերալիզմի սկզբունքից բխող ռեֆորմներ: «Թետչերիզմը», ինչպես որ «ռեյգանոմիկան», ելնում էր մրցակցության խթանման քաղաքականության կրճատումից: Ռեյգանը գործողության մեջ դրեց հարկերի կրճատման լայնամասշտաբ ծրագիր և դրամաշրջանառության բնագավառում կիրառեց մոնետարիստական քաղաքականություն: Նրա օրինակին հետևեցին Անգլիան և ԳՖՀ-ն: Թետչերը նպատակ դրեց խստիվ սահմանափակելու շրջանառության մեջ եղած դրամի զանգվածը, որը մոնետարիստական կոնցեպցիայի պահանջն էր: Հարկաբյուջետային քաղաքականությունը խարսխվում էր պետական ծախսերի (ՀՆԱ-ի նկատմամբ) հարաբերական կրճատմանը: Նախատեսվում էր եկամտահարկի դրույքաչափի իջեցում, անուղղակի հարկերի (հատկապես ավելացված արժեքի հարկի) բարձրացում: Կառավարությունը հրաժարվեց ձեռնարկությունների ուղղակի ֆինանսավորումից, սակայն նոր տեխնիկայի և տեխնոլոգիայի ներդրման միջոցառումների ֆինանսավորումն ավելացավ:

Կրճատվեց ներմուծումը, և ավելացավ նավթ արտահանող երկրներում արդյունաբերական արտադրանքի վաճառքը: Թետչերը իրականացրեց տնտեսության կառուցվածքային փոփոխություններ, արտադրական ապարատի արդիականացում: Տնտեսական լիբերալիզմի սկզբունքի իրացման կարևոր քայլ էր Թետչերի պահպանողական կառավարության կողմից պետական հատվածի սահմանափակումը, ապագայնացումը: Ապապետականացվում էին եկամտա-

բեր ձեռնարկությունները և ճյուղերը (բնական մենաշնորհի հանդիսացող հեռախոսակապը, գազահանույթը, նյութատեխնիկական մատակարարումը, փոստը): 1988թ. սկզբին վաճառքի հանվեց պետական հատվածի 30%-ը:

Ապագայնացումն ուղեկցվում էր ապակարգավորմամբ: Թետչերի ժամանակ վերացավ գների, աշխատավարձի, արտարժույթի շարժի հսկողությունը: Փոխվեց սոցիալական քաղաքականությունը: Կրճատվեցին սոցիալական վճարները, աշխատավարձը կախվածությամբ մեջ դրվեց ստացվող շահույթի մեծությունից:

Ռեֆորմից անմասն չմնաց արտաքին տնտեսական ոլորտը: Փոխվեցին 40 տարի գոյություն ունեցող կապիտալի արտահանման սահմանափակումները: Ակտիվորեն կայանում էր նոր տեխնիկայի և առաջադիմական տեխնոլոգիաների արմատավորման գործընթացը: Ավելացան գիտական հետազոտությունների ծախսերը: Մեծ ուշադրություն էր դարձվում գյուղատնտեսության զարգացմանը (մշակաբույսերի նոր սորտերի արմատավորում, անասունների բարձր արտադրողական տեսակների բուծում): Թետչերի ժամանակ ԱՆԳԼիայի ՅՆԱ-ի աճի տեմպերն ամենաբարձրն էին Եվրոպայում:

1990-ական թվականների սկզբին շարունակվում էր նախորդ տասնամյակի տնտեսական քաղաքականությունը: Զարգանում էր մասնավոր ձեռնբեցությունը, ֆինանսավորվում էին գիտատար արտադրությունները, խթանվում էր մանր ու միջին գործարարությունը:

Թեև կրճատվեցին սոցիալական կարիքներին հատկացվող բյուջետային ծախսերը, բավականին իջավ գործազրկության մակարդակը: Բնակչության մեծ մասն իրեն համարում էր «միջին խավ»: 1980-ական թվականների ավարտին ընտանիքների 64%-ն ուներ սեփական տուն, 70%-ից ավելին՝ ավտոմեքենա, 50%-ից ավելին կարող էր երեխաներին կրթությունը երաշխավորել վճարովի ուսումնական հաստատություններում:

Սակայն 1990-ականների սկզբին դրությունը փոխվեց: Թետչերից դժգոհեցին հատկապես 1990թ. գարնանը, տեղական հարկադրման ռեֆորմի ընդունումից հետո, երբ որոշվեց 18 տարեկանից բարձր բոլոր բնակիչներից (անկախ եկամտի չափից) գանձել հավասար հարկ:

1990-ական թվականներին (Մեյջորի կառավարության օրոք) երկրի տնտեսությունը դիմամիկ զարգանում էր, արժեզրկման տեմպերը ցածր էին, բարվոք վիճակում էր առևտրային հաշվեկշռի կառուցվածքը, աճում էր ՅՆԱ-ն: Այնուամենայնիվ, բնակչության 20%-ը անապահով էր, և 1997թ. լեյբորիստները (Թ. Բլեր) առաջադրեցին սոցիալական հիմնախնդիրների լուծման հարցը:

Ներկայումս ԱՆԳԼիան մտնում է աշխարհի զարգացած արդյունաբերությամբ երկրների ութնյակի մեջ:

9.4. ՖՐԱՆՍԻԱ

9.4.1. Գերմանական օկուպացման տնտեսական հետևանքները

Ֆրանսիայի ղեկավար շրջանների կողմից իրականացվող ազգային դավաճանության քաղաքականությունը երկիրը հասցրեց ռազմական աղետի: 1940թ. հունիսին Ֆրանսիան կապիտուլացվեց, և նրա տնտեսությունը սկսեց ծառայել ֆաշիստական Գերմանիային: Երկրորդ համաշխարհային պատերազմը և քառամյա օկուպացումը հսկայական վնաս հասցրին Ֆրանսիայի տնտեսությանը: Երկրի ընդհանուր կորուստները, որոնց պատճառը պատերազմը և ուղղակի թալանն էին, ավելի քան երկու անգամ գերազանցեցին 1938թ. ազգային եկամտի ծավալը: Մարդկային կորուստները կազմեցին 1,1 մլն զինվոր ու սպա: Ոչնչացվեցին շատ էլեկտրակայաններ, ածխահանքեր, համարյա բոլոր նավաշինարանները, նավթավերամշակման արդյունաբերության հզորությունների 80%-ը: Ավերվեց արդյունաբերական և քաղաքացիական կառույցների մեծ մասը, լուրջ վնաս կրեց տրանսպորտը (հատկապես երկաթուղային):

Ազատագրումից հետո առաջին ամիսներին արդյունաբերական արտադրության ծավալը կազմում էր 1939թ. մակարդակի 38, գյուղատնտեսությանը՝ 60%-ը: Երկիրն ընկավ ծանր ֆինանսական դրության մեջ, շրջանառությունում եղած թղթադրամների քանակությունն աճեց 6 անգամ, խիստ իջավ բնակչության կենսամակարդակը: Զգացվում էր սարքավորման, հումքի, պարենի սուր պակաս: Կորսվեց արտասահմանյան կապիտալ ներդրումների զգալի բաժինը:

1944թ. ձևավորվեց ժամանակավոր կառավարություն՝ գեներալ Շառլ դը Գոլի գլխավորությամբ, որը գոյատևեց մինչև 1946թ.: Դը Գոլը կողմնակից էր ֆինանսների նախարար Ռ. Պլեվենի առաջարկած նախագծին, որի հիմքում խոշոր ներքին փոխառության թողարկումն էր: Կոմունիստները, որոնք կառավարության կազմում էին, մյուս «ձախ» ուժերի հետ կարևոր էին համարում ազգայնացումը և սոցիալ-տնտեսական հիմնախնդիրների լուծումը: Հարկ է նշել, որ օկուպացման տարիներին առաջատար բուրժուական կուսակցությունները համագործակցում էին ֆաշիստների հետ: Եվ ընդհակառակը, խիստ աճեց ֆրանսիական կոմկուսի հեղինակությունը, որը դիմադրության շարժման մեջ առաջատար դիրք էր գրավում:

Յետպատերազմյան առաջին տարիներին երկրի քաղաքական ու տնտեսական կյանքի առանցքը կտրուկ թեքվեց դեպի ձախ: 1944-1947թթ., լինելով կառավարության կազմում, կոմունիստները մոբիլիզացնում էին աշխատավոր զանգվածներին՝ տնտեսության արագ վերականգնման համար, հանդես էին գալիս մոնոպոլիաների իշխանությունը սահմանափակող ռեֆորմներով:

1945-1947թթ. ազգայնացվեց ֆրանսիական արդյունաբերության մեկ հինգերորդը: Ազգայնացվեցին այնպիսի կարևոր ճյուղեր, ինչպիսիք են էլեկտրաէներգետիկան, ածխի ու գազի, ավիացիոն արդյունաբերությունը, ծովային նավագնացությունը, օդային տրանսպորտը, «Ռենո» մեքենաշինական գործարանների խումբը, որոնք կազմում էին երկրի արտադրական հզորությունների 20%-ը: Թեև ազգայնացումը չընդգրկեց արդյունաբերության բոլոր հիմնական ճյուղերը, բայց և այնպես՝ նպաստեց մոնոպոլիաների տիրապետության սահմանափակմանը, կապիտալ ներդրումների ներհոսքի ավելացմանը ազգային արդյունաբերություն:

Պետական հատվածը ընդգրկում էր այնպիսի միավորումներ, ինչպիսիք են «Գազ դե Ֆրանսը», «Էլեկտրիսիտե դե Ֆրանսը», «Շարբոնաժ դե Ֆրանսը»: Պետության ձեռքն անցան 5 խոշոր բանկեր, մի շարք ապահովագրական ընկերություններ: Յետպատերազմյան ազգայնացումն այստեղ ավելի լայն մասշտաբներ ընդունեց, քան Անգլիայում, և առավել դեմոկրատական բնույթի էր: Ազգայնացված ձեռնարկությունների վարչական խորհուրդների մեջ ներառվեցին բանվորների ներկայացուցիչներ:

Ֆրանսիայի գաղութային համակարգը փլուզման շեմին էր: Արևելյան Եվրոպայի երկրներում ազգայնացման և իր ռազմական պարտքերի վճարման հետևանքով խարխվեցին Ֆրանսիայի դիրքերը որպես համաշխարհային վաշխառուի: 1913թ. համենատուրյամբ արտասահմանում ֆրանսիական կապիտալ ներդրումները կրճատվեցին 10 անգամ:

Բայց և այնպես, Ֆրանսիայի տնտեսության հետպատերազմյան վերականգնումն ընթանում էր բավականին արագ: Արդեն 1948թ. վերականգնվեց արտադրության նախապատերազմյան մակարդակը: Արդյունաբերության զարգացմանը նպաստեցին հիմնական կապիտալի արագ նորացումը, գաղութների ինվեստիցիաների ներհոսքը ազգային տնտեսություն, պետության ակտիվ մասնակցությունը արտադրության արդիականացմանը, ռազմավարական ճյուղերի առաջընթացին, գիտական հետազոտությունների իրականացմանը:

Լուրջ արդյունքներ ձեռք բերվեցին սոցիալական բնագավառում: Զգալիորեն բարձրացան անվանական աշխատավարձը և կենսաթոշակները, ստեղծվեց սոցիալական ապահովագրության միասնական

համակարգ, արտոնություններ սահմանվեցին գյուղատնտեսության աշխատողների համար:

Սակայն, իրականացված դեմոկրատական վերափոխումներով հանդերձ՝ տնտեսության հրամանատարական բարձունքները բուրժուազիայի ձեռքին էին: Ռեակցիոն ուժերի ճնշմամբ 1947թ. մայիսին կոունդիստները հեռացվեցին կառավարության կազմից:

1948թ. Փարիզում կնքվեց համաձայնություն ԱՄՆ-ի հետ տնտեսական համագործակցության մասին: «Մարշալի պլանով» Ֆրանսիան ԱՄՆ-ից ստացավ մթերքներ, ինչպես նաև՝ խոշոր փոխառություններ, որոնք օգտագործվեցին մետաղագործական, քիմիական, ավտոմեքենաշինական ձեռնարկություններն արտասահմանյան նորագույն սարքավորումներով հագեցնելու համար: Երկիրը ֆինանսական կախվածության մեջ ընկավ ԱՄՆ-ից: Օգնության ընդհանուր գումարը կազմեց 12 մլրդ դոլար:

Յետպատերազմյան ժամանակաշրջանում Ֆրանսիայում արտադրության միջոցների արտադրությունն աճում էր ավելի բարձր տեմպերով, քան սպառման ապրանքների արտադրությունը: Ընդամին՝ արդյունաբերության կառուցվածքի փոփոխությունները սկսվեցին ավտոմեքենաշինության արագ զարգացմամբ: 1950-ական թվականների ավարտին երկրում ձևավորվեց արդյունաբերական երեք հիմնական հատված. ավանդական ճյուղեր (մետաղագործություն, մեքենաշինություն, պերճանքի առարկաների արտադրություն), նոր ճյուղեր (ավիացիոն, նավթամշակում) և նորագույն ճյուղեր (ատոմային էներգետիկա, էլեկտրոնիկա, պլաստմասսաների արտադրություն):

9.4.2. 1950-1960-ական թվականներ. արդիականացման կուրսը

1950-1960-ական թվականներին Ֆրանսիայում դրվեց արդյունաբերությունը նոր տեխնիկայով հագեցնելու, կապիտալ ներդրումները արդյունաբերության մեջ ավելացնելու, տնտեսությունն՝ ըստ ՆԱՏՕ-ի (1949թ.) ՍԵՆՏՕ-ի (1954թ.) դաշնակիցների պարտավորությունների, ինչպես նաև Վիետնամում (1946-1954թթ.), Ալժիրում (1954-1962թթ.) ռազմական գործողությունների ծավալման պատճառով ռազմականացնելու խնդիր:

Սպառազինությունների մրցավազքը աշխուժացրեց Ֆրանսիայի տնտեսությունը: 1951թ. նվաճվեց 1929-1930թթ. արտադրության ռեկորդային մակարդակը: 1952-1953թթ. այստեղ նկատվեց արտադրության տեմպերի որոշ իջեցում, սակայն 1953թ. վերջերից սկսվեց

վերելք, որի հիմքը հիմնական կապիտալի թռիչքածև նորացումն էր և ընդարձակումը: Պատերազմի ավարտին Ֆրանսիայում հաստոցների ու սարքավորումների միջին տարիքը 30 էր, մինչդեռ Անգլիայում՝ 7, ԱՄՆ-ում և Գերմանիայում՝ 5:

Մյուս կողմից՝ տեսնելով, որ վաշխառությամբ այլևս առաջ գնալ չի լինի, ֆրանսիական բուրժուազիան հայտարարեց «արդիականացնել կամ մեռնել» նշանաբանը: 1950-ական թվականների կեսերին ամենամյա կապիտալ ներդրումների ընդհանուր ծավալը նախապատերազմյան մակարդակը գերազանցում էր 2,5 անգամ:

Արդյունաբերության ներդրումների 90%-ը բաժին էր ընկնում ծանր ինդուստրիային: 1950-ական թվականների կեսերից հատուկ ուշադրություն էր դարձվում քիմիական արդյունաբերության արդիականացմանը, մեքենաշինության, ռադիոէլեկտրոնիկայի, սարքաշինության զարգացմանը: Գիտատեխնիկական առաջընթացի շնորհիվ առաջացան նոր ճյուղեր: Բավականին կրճատվեց կապիտալի արտահանման ծավալը, որն արդեն արտադրական կապիտալի ձև ուներ և ոչ թե՛ փոխատվական:

1950-1960-ական թվականներին Ֆրանսիայի կառավարության տնտեսական քաղաքականության առանձնահատկությունը պետական պլանավորման կիրառումն էր: Լայն տարածում գտավ ինդիկատիվ (ոչ պարտադիր) պլանավորումը: Գլխավոր կոմիսարիատի կողմից մշակվում էին տարբեր պլաններ: Օրինակ՝ 1947-1953թթ. առաջին պլանը (Մոննեի պլանը) ուղղված էր գլխավորապես տնտեսության ազգայնացված հատվածի արդիականացմանը, երկրորդ պլանը (1954-1957թթ.) նախատեսում էր մասնավոր ֆիրմաների մրցունակության ամրապնդում, երրորդ պլանը (1958-1961թթ.) հռչակեց անցումը պրոտեկցիոնիզմից «բաց տնտեսությանը»: Այդ ամենով հանդերձ՝ 1950-ական թվականների ծրագրավորումը Ֆրանսիայի տնտեսությունը չդարձրեց պլանային:

Ֆրանսիայի կառավարության նման տնտեսական քաղաքականությունը կոչվում էր «դիրիժիզմ», որի բնորոշ գծերն էին՝ վարչական մեթոդների օգտագործումը (արժեթղթերի թողարկման, գների սահմանման, վարկային տնտեսության հսկողությունը), պետության ակտիվ նախաձեռնողական գործունեությունը, կապիտալ ներդրումների ուղղակի պետական ֆինանսավորումը, վերը նշված ինդիկատիվ պլանավորումը:

1950-1960-ական թվականներին դրական տեղաշարժերն առկա էին նաև տնտեսության ագրարային հատվածում: Այստեղ ավարտվեց տեխնիկական հեղաշրջումը, տրակտորների արտադրությունն ավելացավ 16 անգամ: Գյուղատնտեսության մեջ զբաղվածների բաժինը կրճատվեց մինչև 15%, բարձրացավ աշխատանքի արտադրողականությունը, լայնորեն օգտագործվում էին գյուղատնտե-

սական տեխնիկան և պարարտանյութերը: Համալիր մեքենայացման շնորհիվ ավելացավ գյուղատնտեսական արտադրանքի ծավալը: Ֆրանսիան աշխարհում երկրորդ տեղը զբաղեցրեց հացահատիկի, կաթնամթերքի, գինու արտահանմամբ:

1958թ. երկրում իշխանության գլուխ անցավ գեներալ Շառլ դը Գոլը: Գոլիզմի տնտեսական քաղաքականության գլխավոր բովանդակությունը Ֆրանսիայի արդյունաբերական էքսպանսիայի խթանումն էր: Նախատեսվում էր արդյունաբերության բոլոր ճյուղերի ֆրոնտալ զարգացում: Տեխնիկապես առաջադիմական ճյուղերը զարգանում էին ավելի արագ տեմպերով, քան ավանդական ճյուղերը:

1957թ. Ֆրանսիան մտավ «Ընդհանուր շուկայի» մեջ: Հոգ տանելով ֆրանսիական ֆիրմաների մրցունակության բարձրացման մասին, Շառլ դը Գոլի կառավարությունը խթանում էր արտադրության համակենտրոնացումը, խոշոր մոնոպոլիստական միավորումների ստեղծումը: Մոնոպոլիստական միավորումների հիմնական կազմակերպական ձևը դարձան ֆինանսական խմբերը, որոնք համախմբված էին խոշոր բանկերի շուրջ: Հայտնի էին «Պարիբա» բանկը, «Սյուեզ» ֆինանսական ընկերությունը, Լազարների ու Շնեյդերների միավորումը, Ռոտշիլդների խումբը: Խոշորագույն արդյունաբերական խմբերն էին «Պեշինե-Յուժին-Կյուլման» (գունավոր մետաղագործություն և քիմիա), «Սեն-Գրեյն-Պոնտ ա-Մուսսոն» (ապակու և շինանյութերի արդյունաբերություն), ինչպես նաև ավտոմոբիլային «Ռենոն» (պետական), «Սիմկան», «Սիտրոենը», «Պեժոն»: Սակայն արտադրության համակենտրոնացման մակարդակով Ֆրանսիան չարունակում էր հետ մնալ մյուս առաջատար կապիտալիստական երկրներից:

Դը Գոլի կառավարությունը դեմ էր Եվրոպական տնտեսական համագործակցության վերազգային գործառույթների դրսևորմանը, համարելով, որ դա միակողմանիորեն առավելություններ կտա արևմտագերմանական մոնոպոլիաներին: Խանգարում էր Անգլիայի մուտքին «Ընդհանուր շուկա» դրանում տեսնելով ԱՄՆ-ի տնտեսական ազդեցության ուժեղացում: Դը Գոլի կառավարությունը պահանջում էր վերացնել դոլարի որպես գլխավոր պահուստային արտարժույթի, արտոնությունների:

Ֆրանսիայի տնտեսության զարգացումը սահմանափակող գործոնը սղաճի բարձր տեմպերն ու գների աճն էին: Բավական է նշել, որ հետպատերազմյան 10 տարիներին այստեղ գները նախապատերազմյան մակարդակի համեմատությամբ աճեցին 25 անգամ:

Ֆրանսիայի կառավարության տնտեսական քաղաքականության կարևոր ուղղություններից մեկն էլ ֆինանսական համակարգի առողջացումն էր: Դա տեղի էր ունենում մի կողմից՝ բյուջետային ծախ-

սերի կրճատմամբ, մյուս կողմից՝ ոսկու պաշարների կուտակման ավելացմամբ:

1960-ական թվականներին բավականին աշխուժացավ երկրի արտաքին առևտուրը, ավելացավ արտահանման ծավալը: Ակտիվ դարձավ արտաքին առևտրի հաշվեկշիռը: Տասնամյակի ավարտին սրվեցին գների աճին և սղաճին առնչվող հիմնախնդիրները, իրագործվեց ֆրանկի դեվալվացում:

1966թ. Ֆրանսիան դուրս եկավ ՆԱՏՕ-ի կազմից: Այստեղ արտաքին առևտուրը զարգանում էր երկու հիմնական գործոնների ազդեցությամբ՝ անցում «բաց տնտեսությանը» («Ընդհանուր շուկայի» շրջանակներում) և ֆրանսիական գաղութային համակարգի վերջնական փլուզում: 1954-1955թթ. Ֆրանսիան ճանաչեց Հնդկաչինի, 1956թ.՝ Թունիսի ու Մարոկկոյի, 1958-ին՝ Գվինեայի անկախությունը: 1960թ. ընթացքում ազատագրվեց ևս 15 նախկին ֆրանսիական գաղութ Աֆրիկայում, 1962 թվականին ինքնուրույն պետություն դարձավ վերջին խոշոր գաղութը՝ Ալժիրը:

Նշված շրջանում ընդլայնվեցին Ֆրանսիայի կապերը զարգացած կապիտալիստական երկրների հետ: «Ընդհանուր շուկայի» իր գործընկերների հետ կատարվող առևտուրը, սակայն, չվերացրեց արտաքին առևտրային հաշվեկշռի ճեղքվածքը: Երկրում սկսվեց շարժում մոնոպոլիաների դեմ: 1968թ. մայիս-հունիսին տեղի ունեցավ համազգային գործադուլ, որին մասնակցեց 10 մլն մարդ: Իշխանությունները ստիպված էին գնալու զիջումների՝ 14%-ով բարձրացնելու աշխատավարձը, որոշ չափով՝ նպաստները, կրճատելու աշխատօրվա տևողությունը:

9.4.3. Ֆրանսիայի տնտեսության զարգացման առանձնահատկությունները 1970-1990-ական թվականներին

1969թ. Ֆրանսիայի նախագահ ընտրվեց Ժ. Պոմպիդուն, որը փոփոխություններ կատարեց երկրի տնտեսական (հատկապես՝ ֆինանսական) քաղաքականության մեջ: Դրանք արտացոլվեցին ֆրանկի հետագա դեվալվացման, արտաքին շուկաներում ֆրանսիական ապրանքների մրցունակության բարձրացմանն ուղղված միջոցառումներում:

1970-ական թվականներին երկրի արդյունաբերությունը կողմնորոշվում էր միջազգային տնտեսական ինտեգրման պայմանների ապահովմանը, մշակվում էին պետական ճյուղային ծրագրեր՝ միջուկային էներգետիկայի, ինֆորմատիկայի, ավիաշինության, գյուղա-

տնտեսական արտադրության ինտենսիվ մեթոդների ներդրման նպատակով: Այսպես՝ 1978-1980թթ. պլանով նախատեսվում էր արդյունաբերության վերակողմնորոշում ՊՏՀ-ի նվաճումների հիման վրա, տնտեսության կառուցվածքի հարմարեցում միջազգային տնտեսական ինտեգրմանը:

1970-ական թվականների ճգնաժամային երևույթներով հանդերձ, որոնց հետևանքով արդյունաբերական արտադրության աճի տեմպերն իջան կրկնակի չափով, Ֆրանսիայի տնտեսությունը աշխարհում մնում էր կայուն, իսկ երկիրը մտնում էր կապիտալիստական երկրների խոշորագույն հնգյակի մեջ: Ֆրանսիական տնտեսության հիմքը վերջնականապես դարձավ արդյունաբերությունը, որին բաժին էր ընկնում համախառն արդյունքի մեկ երրորդից ավելին:

Ժխկար դը Էստենի կառավարությունը նպատակ դրեց 1980-ական թվականների կեսերին արդյունաբերական արտադրության մակարդակով հասնել «Ընդհանուր շուկայի» իր գլխավոր մրցակցին՝ ԳՖՀ-ին: Սակայն 1974-1975թթ. պարբերաշրջանային ճգնաժամը մեծ հարված հասցրեց Ֆրանսիայի տնտեսությանը: Արդյունաբերության ավանդական ճյուղերում դիտարկվեց լճացում (սև մետաղագործություն, թեթև ու սննդի արդյունաբերություն, ընդհանուր մեքենաշինություն): Դրանից դուրս գալու ելքը Ֆրանսիայի կառավարող շրջանները տեսնում էին Եվրոպական համագործակցության շրջանակներում տնտեսական կապերի հետագա ինտերնացիոնալացման, վերազգային մոնոպոլիաներից, համաշխարհային շուկայից կախվածության ուժեղացման մեջ:

Պետությունը սկսեց ավելի մեծ աջակցություն ցույց տալ մրցունակ արտահանման ճյուղերի զարգացմանը (ավտոմոբիլային, էլեկտրատեխնիկական, քիմիական, ավիահրթիռային արդյունաբերություն, գյուղատնտեսություն):

Նշված շրջանում տեղի ունեցավ մոնոպոլիաների միաձուլում արդեն միջազգային մակարդակով: Այսպես՝ Ֆրանս-ամերիկյան «Համուել-Բյուլքիի» ընկերությունը դարձավ էլեկտրոնային-հաշվիչ մեքենաների ամենախոշոր արտադրողը Եվրոպայում: «Պեժո-Սիտրոեն» ավտոմոբիլային ֆիրման կլանելով «Կրայսլերի» եվրոպական մասնաճյուղերը, դարձավ խոշորագույն մոնոպոլիա ԱՄՆ-ից դուրս:

1977-1979թթ. արդյունաբերական վերելքը Ֆրանսիայում կարճատև բնույթի էր, քանի որ 1980-ական թվականների սկզբին նորից տեղի ունեցավ տնտեսական անկում: 1980-ին արդյունաբերական արտադրությունը մնաց նախորդ տարվա մակարդակին, իսկ հաջորդ երկու տարիներին կրճատվեց 1,5-ական %-ով: Աճեց գործազրկությունը, սրվեցին սոցիալական հիմնախնդիրները: 1980-ական թվականների սկզբին այստեղ ընտանիքների 10%-ը տիրում էր ազգային

հարստության երեք հինգերորդին, մինչդեռ ընտանիքների կեսին բաժին էր ընկնում դրա ընդամենը 5,5%-ը:

1980-ական թվականների սկզբին Ֆրանսիայի տնտեսությանը լուրջ վնաս հասցրեց ամերիկյան ֆինանսաարժույթային քաղաքականությունը, որն առնչվում էր դոլարի կուրսի արհեստական բարձրացմանը: Դա հանգեցրեց երկրի վճարային հաշվեկշռի կտրուկ վատացմանը, քանի որ ֆրանսիական ներմուծման մեկ երրորդի համար վճարվում էր ամերիկյան արտարժույթով: Ֆրանսիայից արտահանումը խթանելու նպատակով իրագործվեց ֆրանկի դեվալվացում, արտադրական և ֆինանսական կառուցվածքների վերակառուցում:

Դիտարկվող ժամանակաշրջանում Ֆրանսիայի ապրանքաշրջանառությունը պասսիվ էր, որի պատճառը հայրենական ապրանքների մրցունակության իջեցումն էր, ինչպես նաև էներգակիրների գների բարձրացումը համաշխարհային շուկայում: Իսկ Ֆրանսիան ներմուծում էր մեծ քանակությամբ էներգակիրներ (նավթ, գազ, կոշտ վառելիք):

1980-1990-ական թվականները Ֆրանսիայի համար դարձան ազգային տնտեսության նոր՝ ազատական համակարգին անցման շրջան: Դեռևս 1980-ական թվականների սկզբին, երբ եվրոպական խոշոր երկրների մեծամասնության տնտեսական քաղաքականության մեջ նկատվեց պահպանողականության ձգտում, Ֆրանսիայի տնտեսությունը շարունակում էր զարգանալ պետության մասնակցության ապահովման պայմաններում:

Պահպանողական վերափոխումները տնտեսական ռազմավարության մեջ ի հայտ եկան միայն 1980-ական թվականների երկրորդ կեսից: Միասնական Եվրոպայի ակտիվ կառուցման շրջանն իր ազդեցությունը թողեց նաև Ֆրանսիայի վրա: Դրա հետևանքով ձևավորվեց խառը տնտեսության նոր մոդել, որով պետության և շուկայի փոխհարաբերությունները կտրուկ փոխվեցին:

Կառավարությունը 1982թ. ընդունեց խոշորագույն արդյունաբերական խմբերի, առևտրային բանկերի ազգայնացման մասին օրենք: Ազգայնացումը իրագործվեց զուեմակոր մետաղագործությունում, քիմիական արտադրությունում, ավիա- և հրթիռաշինությունում: Պետական հատվածի բաժինը ամբողջ տնտեսության մեջ հասավ 25%-ի, իսկ ֆինանսավորման և վարկավորման ոլորտում կազմում էր 95%:

Արտադրության վերակառուցումը և նորագույն տեխնոլոգիաների զարգացումը ապահովվում էին ինչպես պետական, այնպես էր մասնավոր հատվածներում: Այդ միջոցառումները կայունացրին երկրի տնտեսությունը, նկատելիորեն բարձրացրին տնտեսական աճի տեմպերը: Ազգայնացման լայնամասշտաբ միջոցառումների

իրականացման հետևանքով պետության ձեռքն անցան 9 խոշոր արդյունաբերական խումբ, որոնց շրջանառությունը կազմում էր արդյունաբերական արտադրանքի վաճառքի 20%-ը, 2 առաջատար ֆինանսական ընկերություն, 36 բանկ:

1980-ական թվականների կեսերին Ֆրանսիան տնօրինում էր արևմտյան աշխարհի ազգայնացված ամենախոշոր հատվածը: Ամբողջությամբ վերցրած պետական ձեռնարկություններին բաժին էր ընկնում տնտեսական ակտիվ բնակչության շուրջ 11, արդյունաբերության մեջ զբաղվածների 22%-ը, ՀՆԱ-ի 17, հիմնական կապիտալում ներդրումների 35%-ը: Պետական ձեռնարկությունները գերիշխող դիրք ունեին ռազմավարական կարևոր ճյուղերում (տրանսպորտի և կոմունիկացիաների, էներգետիկ համալիրի, բարձր տեխնոլոգիաների ճյուղեր), ինչպես նաև սև մետաղագործության, ավտոմեքենաշինության, քիմիական, տեքստիլ, ածխի արդյունաբերության մեջ: Պետությունը, փաստորեն, ֆինանսական ոլորտի բացարձակ սեփականատերն էր, տիրում էր ֆինանսական հաստատությունների 96%-ին, որոնց բաժին էր ընկնում դեպոզիտների շուրջ 90 և բաշխվող վարկերի 85%-ը:

1986թ. իշխանության եկած նոր վարչակազմը ժակ Շիրակի գլխավորությամբ ուղղումներ մտցրեց տնտեսական քաղաքականության մեջ: Սկսվեց ապազգայնացման գործընթաց՝ մասնավոր հատվածին վաճառվեցին բանկեր, ապահովագրական ընկերություններ, մրցունակ ճյուղերի շահութաբեր ձեռնարկություններ: Մասնավորեցումն իրականացվում էր հետևյալ կերպ. 18-50%-ը կազմում էին ընկերությունների կայուն բաժնետերերը (ֆինանսական, ապահովագրական և արդյունաբերական խմբերը), բաժնետոմսերի 10%-ը տարածվում էր բանվորների և ծառայողների շրջանում, 20%-ը կարող էր պատկանել օտարերկրյա կապիտալին: Մնացած բաժնետոմսերը վաճառվում էին աճուրդով:

Շուկայական մեխանիզմի դերի բարձրացման նպատակով վերացվեց հսկողությունը գների նկատմամբ, կրճատվեցին բյուջետային ծախսերը ճգնաժամի ճիրաններում հայտնված ճյուղերի գծով, դրանք ավելացան հեռանկարային ոլորտների համար: Խստացվեց սոցիալական քաղաքականությունը, սառեցվեց աշխատավարձը, վերացվեց աշխատանքային շաբաթվա տևողության վարչական վերահսկողությունը: Դրա հետ մեկտեղ միջոցներ ձեռնարկվեցին երիտասարդության շրջանում գործազրկությունը վերացնելու, գործազուրկներին օգնություն ցույց տալու նպատակով:

Կառավարությունը մշակեց տնտեսության աշխուժացման ծրագիր, որը նախատեսում էր հասարակական աշխատանքների ընդլայնում, բնակարանային շինարարության ծավալում: Փոփոխություններ կրեց դրամավարկային և արտարժութային քաղաքակա-

նությունը: Ֆրանկի կայունության ապահովումը, շրջանառության մեջ դրամական զանգվածի աճի սահմանափակումը դարձան օրվա հրամայականը: Ձեռնարկված միջոցառումները հնարավորություն տվեցին արդեն 1990-ական թվականների կեսերին ավելացնելու ՀՆԱ-ի, կապիտալ ներդրումների, անձնական սպառման աճի տեմպերը, զգալիորեն իջեցնելու արժեզրկման մակարդակը:

Մասնավորեցման գործընթացը Ֆրանսիայում ձգձգվեց ավելի քան մեկուկես տասնամյակ: Ընդամին՝ առաջին (1986-1987թթ.) և երկրորդ (1993-1995թթ.) ալիքների մասնավորեցումն իրագործվեց աջ կողմնորոշման կառավարությունների, 1990-ական թվականների վերջերի մասնավորեցումը՝ սոցիալիստների կառավարության կողմից:

1986թ. ամռանը ընդունված մասնավորեցման մասին առաջին օրենքը նախատեսում էր աստիճանաբար (մինչև 1991թ.) մասնավոր հատվածին վաճառել 65 պետական և կիսապետական ձեռնարկությունների (այդ թվում բանկերի, ապահովագրական ընկերությունների), բաժնետոմսերը, որոնց մեծ մասը ազգայնացվել էր 1982թ. սոցիալիստների կողմից: Վաճառքի ենթակա ակտիվների ընդհանուր արժեքը 200 մլրդ ֆրանկ էր: Սակայն Ժ. Շիրակի կառավարության նախատեսած ազգայնացված հատվածի ապամոնտաժը սկզբից ընդհատվեց 1987թ. աշնանը տեղի ունեցած բորսայական ճգնաժամով, իսկ այնուհետև դադարեցվեց 1988թ. նախագահական ընտրություններով և ձախ կառավարության հաղթանակով: Բայց և այնպես, մեկ տարվա ընթացքում պետությունը մասնավոր հատվածին հանձնեց 13 արդյունաբերական ընկերություն և բանկ: Մասնավորեցումից պետության եկամուտները կազմեցին 65 մլրդ ֆրանկ:

Ի տարբերություն անգլիական մասնավորեցման, որն անց էր կացվում նույն ժամանակամիջոցում, Ֆրանսիայում պետական սեփականություն մնացին էլեկտրաէներգետիկայի, հեռուստահաղորդման, գազամատակարարման ձեռնարկությունները:

Ժակ Շիրակի կառավարության ձեռնարկած հաջորդ քայլը հարկարդման մասշտաբների կրճատումն էր: Եկամուտների մեծ մասն արդեն մնում էր տնտեսավարող սուբյեկտների տնօրինությանը: Եվ թեև բյուջեի մուտքերը 1988-1991թթ. նվազեցին 45 մլրդ ֆրանկով, պետական զանձարանը լրացվում էր մասնավոր հատվածի արդյունավետ զարգացման հաշվին:

Կրճատվեցին տնտեսական գործունեության տարբեր ոլորտներում պետական միջամտության մասշտաբները: Այսպես՝ 1987թ. սկսած պետությունն այլևս չէր սահմանում արդյունաբերության արտադրանքի և զանազան ծառայությունների գները: Սկսեցին ակտիվ գործել շուկայական օրենքները: Սահմանափակվեց պետական

միջամտությունը նաև վարկային բնագավառում: Կարճ ժամանակամիջոցում Շիրակի կառավարությունը մշակեց շուրջ 30 օրինագծեր, որոնք հնարավորություն տվեցին արագացնելու Ֆրանսիայի տնտեսության զարգացման տեմպերը: 1980-ական թվականների երկրորդ կեսին ՅՆԱ-ի և արդյունաբերական արտադրության միջին տարեկան տեմպերը կազմեցին 3-4%: 50%-ով ավելացավ ներդրումների ծավալը արդյունաբերության բազային ճյուղերում:

Ֆրանսիայում տնտեսական աճի որոշ անկում նկատվեց 1990-ական թվականների սկզբներին, սակայն 1993թ. ավարտին երկրի վիճակը նկատելիորեն բարելավվեց:

Մասնավորեցման երկրորդ փուլն սկսվեց միայն 1993թ.: Ապագայնացվեցին 12 խոշոր արդյունաբերական-ֆինանսական խմբեր, որը նախատեսված էր դեռևս 1986թ. օրենքով, ինչպես նաև՝ նոր ծրագրում տեղ գտած 9 խոշոր ընկերություններ (որոնցում զբաղված էր 620 հազար աշխատող, իսկ կապիտալը կազմում էր 46 մլրդ ֆրանկ):

Երկրի տնտեսական զարգացման տեմպերը 1994-1995թթ. արագացան մրցունակ պետական ձեռնարկությունների մասնավորեցման հաշվին: Վաճառվեցին «Բենկ նեյշնլ դե Պարի», «Ռոն-Պուլենկ» քիմիական կոնցեռնի, «Էլֆ ակիտեն» նավթային խոշոր ընկերության բաժնետոմսերը: Ցածր էին գների աճի տեմպերը. բավականին իջավ գործազրկության մակարդակը, արժեզրկումը տարեկան կազմում էր 1,8%:

1996-1997թթ. Ֆրանսիայում խոշոր մասշտաբի մասնավորեցում տեղի չունեցավ. ազգայնացվեցին առանձին պետական ընկերությունների մասնաճյուղեր:

1995թ. մայիսին վերստին Ֆրանսիայի նախագահ դարձավ Ժակ Շիրակը, որն աջ պահպանողականների պարագլուխն էր: Պահպանողականները, իրենց անվանելով գուլականներ, գործնականում որդեգրեցին պետական «դիրիժիզմի» սկզբունքներից լրիվ հրաժարվելու կուրս, որը 1960-ական թվականներին կյանքի էր կոչել Շ. դը Գոլը: Նրանց ավելի սրտամոտ էին տնտեսական լիբերալիզմի ամերիկյան և անգլիական սկզբունքները, որ կիրառվում էին Ռ. Ռեյգանի և Մ. Թետչերի կողմից:

Սակայն 1997թ. մայիսին խորհրդարանի արտահերթ ընտրություններում գերակշիռ ձայներ ստացան ձախ կուսակցությունների և շարժումների ներկայացուցիչները, կառավարությունը ղեկավարեց սոցիալիստ Լ. ժոսպենը: Դրանից հետո Ֆրանսիան որդեգրեց տնտեսության սոցիալական ուղղվածության ուժեղացման կուրս:

1990-ական թվականներին Ֆրանսիայի տնտեսական զարգացմանը մշանակալիորեն ազդեց Եվրոպական տնտեսական ինտեգրացումը: Բացի այն, որ երկրի խանութները լցվեցին արտասահմանյան

լայն սպառման ապրանքներով, կարևոր նշանակություն ստացավ Եվրոմիության շրջանակներում ֆինանսական-արդյունաբերական խմբերի միջև կապերի սերտացումը: Առաջացավ Փարիզ-Լիլ-Ստրասբուրգ «արդյունաբերական եռանկյունին», որը միավորում էր խառը ֆրանս-բելգիական, ֆրանս-հոլանդական և այլ ձեռնարկություններ: Համատեղ ծրագրերի մեջ էին մտնում Եվրոպական էներգահամակարգի, Մարսել-Ստրասբուրգ-Գերմանիա նավթատարի, Լա-Մանշի նեղուցի տակով թունելի կառուցումը:

Եվրոմիության շրջանակներում Ֆրանսիան մասնագիտանում է փոքրալիտրաժ ավտոմեքենաների, կանացի հագուստի, կոշիկի, սպիտակեղենի, օժանելիքի արտահանմամբ:

Վերջին շրջանում կարևոր նշանակություն ունեցավ միասնական դրամական համակարգին՝ Եվրոյին, Ֆրանսիայի անցումը:

1990-ական թվականների երկրորդ կեսից Ֆրանսիայում մասնավորեցման գործընթացը նշանավորեց որակապես նոր փուլ: Միասնական Եվրոպական ակտը և Մասստրիխտյան պայմանագիրը, որոնք որոշում էին Եվրոմիության բոլոր անդամների համար պարտադիր՝ բաց Եվրոպական շուկա մտնելու կանոնները և կոնկրետ ժամկետները, Ֆրանսիային ստիպեցին արագացնելու ազգային տնտեսության նախապատրաստումը իրական ինտեգրմանը:

1993-1999թթ. մասնավորեցումից ստացված եկամուտները կազմեցին 253 մլրդ ֆրանկ, որի գերակշռող մասը որպես դոտացիա հատկացվեց պետական հատվածի ձեռնարկություններին ու բանկերին: Արդյունաբերության և ֆինանսաբանկային ոլորտի մրցունակ ճյուղերում պետական սեփականության չափերը հասցվեցին նվազագույնի: Այսպես, 1999թ. սկզբին պետական հատվածի տեսակարար կշիռը կազմեց ոչ գյուղատնտեսական ոլորտի բոլոր զբաղվածների 10,3, համախառն ավելացված արժեքի 11,5, հիմնական կապիտալում ներդրումների 13,5%-ը:

Այդ բոլորով հանդերձ՝ նոր դարաշրջանի սկզբին Ֆրանսիան շարունակում էր մնալ Արևմտյան Եվրոպայի այն սակավաթիվ երկրներից մեկը, որի տնտեսության մեջ պետական հատվածը զբաղեցնում է նշանակալի տեղ: «Ընդհանուր շուկայի» երկրներում պետական հատվածի տեսակարար կշիռը ՀՆԱ-ի մեջ 1970-ական թվականների 10%-ից 2000թ. իջավ 5%:

Լայնամասշտաբ մասնավորեցումը շրջանցեց հասարակական ծառայությունների ոլորտի պետական ընկերությունները: Եվրոմիության դիրեկտիվների ազդեցությամբ (հասարակական ծառայությունների Եվրոպական շուկա բացելու նպատակով) Ֆրանսիայում ձեռնարկվեցին ապակարգավորման աշխատանքներ: Պետության ձեռքին պահելով «Էլեկտրիսիտե դե Ֆրանս» և «Գազ դե Ֆրանս»

միավորումները, կառավարությունը ձեռնամուխ եղավ էլեկտրաէներգիայի և գազի այլ արտադրողների համար շուկայի բացմանը:

Եվրոպական ինտեգրումը, որը կտրուկ արագացավ 1990-ական թվականներին, հանգեցրեց մի շարք գործառույթների (որոնք ավանդաբար ազգային մակրոտարածության մեջ էին) փոխանցմանը վերազգային մակարդակ: Հենց միայն Կենտրոնական Եվրոբանկի ստեղծումից հետո, որը որոշում էր ոչ միայն արտարժույթի կուրսը և բյուջետային պակաստուրդի լիմիտը, այլև եվրոյի ընդունմամբ կարգավորում էր դրամաշրջանառությունը, ըստ էության ազգային կառավարության հարաբերական ինքնուրույնությունը պահպանվում է երկու մակրոլորտներում՝ ֆինանսավարկային և հարկաբյուջետային:

Նոր հազարամյակի սկզբին Ֆրանսիայի տնտեսական պատկերը զգալիորեն փոխվել է եվրոպական և համաշխարհային շուկաներում լայնորեն ներառվելու շնորհիվ: Ֆրանսիայի տնտեսական քաղաքականությունը ներդաշնակվել է Միասնական Եվրոպայի մակրոտնտեսական շրջանակներին: Արժութային, դրամական, որոշակի չափով նաև բյուջետային քաղաքականությունը որոշվում է միասնական եվրոպական տարածության տրամաբանությամբ:

9.5. ԾԱՊՈՆԻՍ

Երկրորդ աշխարհամարտում ճապոնիան Գերմանիայի և Իտալիայի դաշնակիցն էր: Բեռլինում 1940թ. «Եռյակի դաշինքը» կնքելուց հետո սկսեց նախապատրաստվել պատերազմին: Ճապոնական կառավարությունը հայտարարեց «Նոր քաղաքական կառուցվածք», որով սահմանվում էր տնտեսության պետական վերահսկողություն՝ ստեղծվում էին ճյուղային կարտելներ: Դրանք պլանավորում էին արտադրությունը և բաշխումը, ֆինանսները, մոբիլիզացնում աշխատուժը: Ճապոնիան արագ իրականացնում էր տնտեսության ռազմականացումը:

Եվրոպայում Գերմանիայի ռազմական հաջողությունները պայմաններ ստեղծեցին Հարավարևելյան Ասիայի երկրներում ճապոնական էքսպանսիայի ծավալման համար: Ճապոնիան ձգտում էր ձեռք բերել այդ երկրների ռազմավարական հումքը և, օգտվելով Ֆրանսիայի ու Հոլանդիայի պարտությունից, գրավել նրանց գաղութները: Այդ ծրագրերի իրականացումն անխուսափելի էր դարձնում բախումը ԱՄՆ-ի հետ:

1941թ. դեկտեմբերին ճապոնիան ռազմական գործողություններ սկսեց ԱՄՆ-ի դեմ՝ հարձակվեց ամերիկյան խաղաղօվկանոսյան նավատորմի գլխավոր հենակետ Փիրլ-Յարբորի վրա:

Պատերազմի առաջին տարիներին ճապոնիան գրավեց Ֆիլիպինները, Յնդկաչինը, Թայլանդը, Բիրման և այլ երկրներ, որոնց տարածքը հնգակի գերազանցում էր իր սեփականը և կազմում 3,8 մլն քառ. կմ՝ 150 մլն բնակչությամբ: Սակայն նա չէր կարող երկար դիմադրել ԱՄՆ-ի ռազմական հզորությանը: Պատերազմում 1942թ. կեսերից արդեն բեկում առաջացավ ԱՄՆ-ի օգտին, և մինչև պատերազմի վերջը ճապոնիան պարտություններ էր կրում: 1945թ. սեպտեմբերի 2-ին ճապոնիան հայտարարեց իր կապիտուլյացիան և օկուպացվեց ամերիկյան զորքերի կողմից:

9.5.1. Ճապոնիայի պարտության տնտեսական հետևանքները

Ճապոնիայի պարտությունը ծանր հետևանքներ թողեց: Նա զրկվեց գրաված երկրներից, գաղութներից, Յարավարևելյան Ասիայի երկրներում ներդրած կապիտալներից ու վաճառահանման շուկաներից և պետք է վճարեր ռեպարացիաներ: Տնտեսությունը ծայրաստիճան քայքայված էր, զոհերի թիվը կազմում էր 2 մլն մարդ: Արդյունաբերական արտադրության ծավալը 1945 թ. կազմում էր նախապատերազմական մակարդակի մոտ 30%-ը: Տնտեսության վերականգնումը տեղի էր ունենում դանդաղ, և եթե 1948թ. մյուս պատերազմած երկրներում գրեթե 100%-ով վերականգնվել էր արտադրության նախապատերազմյան ծավալը, ապա ճապոնիայում՝ ընդամենը 52%-ով:

Ամերիկյան օկուպացիոն իշխանությունները միջոցներ չէին ձեռնարկում ճապոնիայի տնտեսությունը վերականգնելու համար: Ցանկանում էին առավելագույնս թուլացնել իրենց մրցակցին: Միևնույն ժամանակ, ճապոնիայում իրականացվեցին մի շարք բարեփոխումներ հասարակական կարգը և պետական կառուցվածքը փոխելու նպատակով, որոնք պետք է արմատախիլ անեին ճապոնական միլիտարիզմը և պայմաններ ստեղծեին երկիրը դեմոկրատական ուղիով զարգացնելու համար:

Յետպատերազմյան վերափոխումներից հիմնականը ձայբացումների ցրումն էր 1947-1948թթ.՝ արդյունաբերական և առևտրային այդ ընկերությունները ապախոշորացնելու նպատակով: Դրանց բաժնետոմսերը ազատ վաճառքի հանվեցին: 1947թ. հակամենաշնորհային օրենքով արգելվում էր հողդինգների ստեղծումը, վերահսկվում

ֆիրմաների միաձուլումները՝ պայմաններ ստեղծելով մրցակցության զարգացման համար:

Մյուս կարևոր միջոցառումը ագրարային ռեֆորմն էր, որն իրականացվում է 1947-1950թթ.: Պետությունը զնում էր կալվածատիրական հողերը և վաճառում վարձակալող գյուղացիներին 1 հա չափով: 1950թ. արդեն գյուղացիներին անցավ վարձակալվող հողերի 80%-ը, գյուղում առաջացավ մանր ֆերմերների խավ: Կալվածատիրությունը դադարեց գոյատևել:

Ճապոնիայի նկատմամբ ԱՄՆ-ի քաղաքականությունը արմատապես փոխվեց 1949թ. վերջին՝ Չինաստանում ժողովրդա-դեմոկրատական կարգեր հռչակվելուց հետո: ԱՄՆ-ի կառավարող շրջանները սկսեցին համարել ճապոնիան որպես իրենց դաշնակից և ռազմական հենակետ Յեռավոր Արևելքում:

Ամերիկյան իշխանությունները 1948թ. հրապարակեցին «ճապոնական տնտեսության կայունացման ծրագիրը», որը հայտնի է Ջ.Ջոզֆի և Կ. Շուուպի «հակադարձ կուրս» անվամբ: Այդ ծրագրով նախատեսվում էր օգնել ճապոնիային՝ վերականգնելու տնտեսությունը և կայունացնելու ֆինանսական համակարգը: ԱՄՆ-ը տրամադրեց 2 մլրդ դոլարի սննդամթերք, նավթ, բամբակ, պարարտանյութ և այլ ապրանքներ, որոնք վաճառվում էին ճապոնիայում, և ստացված գումարներով օկուպացիոն իշխանությունների հսկողությամբ ֆինանսավորվում էր արդյունաբերության զարգացումը:

1950թ. իրականացվեց բյուջետային ռեֆորմ, որի նպատակն էր վերացնել բյուջեի պակասուրդը՝ պետական ծախսերը կրճատելու և հողվածները հավասարակշռելու միջոցով: Այդ ռեֆորմի շնորհիվ նվազեցին արժեզրկման տեսակերը, կայունացվեց ազգային դրամը և վերացվեց գների պետական վերահսկողությունը: Ճապոնիայի տրնտեսության մեջ հաստատվեցին շուկայական հարաբերություններ:

Ճապոնիայի տնտեսության վերականգնումն ավարտվեց 1950-ական թվականների սկզբին, բայց տնտեսական զարգացման մակարդակով ճապոնիան հետ էր մնում ԱՄՆ-ից, Անգլիայից և այլ երկրներից:

Արդյունաբերության զարգացումը ճապոնիայում արագացավ 1950-ական թվականների երկրորդ կեսից: Արդյունաբերական արտադրության միջին տարեկան աճի տեսակերը 1951-1968թթ. կազմում էին 14,6%, ԱՄՆ-ում՝ 4,5%, իսկ կապիտալիստական աշխարհում՝ ընդհանուր առմամբ 5,5%, որի շնորհիվ ճապոնիան արագ վերականգնեց իր դիրքերը նաև համաաշխարհային տնտեսության մեջ: Այդ փաստը գիտնականները անվանեցին «ճապոնական տնտեսական հրաշք», որի պատճառներն էին՝

- Յետպատերազմյան ագրարային ռեֆորմը, որը վերացրեց ֆեոդալական հողատիրությունը և արագացրեց բուրժուական հա-

րաբերությունների զարգացումը՝ մեծացնելով վարձու աշխատուժի բանակը, ընդլայնելով ներքին շուկան:

- Հիմնական կապիտալի նորացումը շնորհիվ գիտատեխնիկական առաջընթացի նվաճումների, ճապոնիան ընդօրինակեց Արևմուտքի երկրներից՝ գնելով մոտ 34 հազար պատենտներ և լիցենզիաներ: 1960թ. օտարերկրյա լիցենզիաներով արտադրվում էր քիմիական արդյունաբերության արտադրանքի 20, էլեկտրոնիկայի՝ 33,2, կապի միջոցների՝ 56, կիսահաղորդիչների՝ 77%-ը:

- Հիմնական կապիտալի նորացման և նոր տեխնոլոգիաների օգտագործման շնորհիվ բարձրացավ արտադրության արդյունավետությունը՝ հունքի, վառելիքի, նյութերի, աշխատանքի ծախսումների կրճատման հաշվին: Դա մեծացնում էր ճապոնական ապրանքների մրցունակությունը համաշխարհային շուկայում:

- Երկրում որակյալ և էժան աշխատուժի հսկայական բանակի առկայությունը: 1950-1960թթ. վերանշակող արդյունաբերության մեջ ճապոնացի բանվորների աշխատավարձը 4-4,5 անգամ ցածր էր ամերիկացի բանվորների աշխատավարձի համեմատությամբ:

- ճապոնիայում բնական ռեսուրսների սակավության պայմաններում արդյունաբերության զարգացման համար մեծ նշանակություն ունեցան հունքի և վառելիքի ցածր գները համաշխարհային շուկայում: Դա թույլ էր տալիս զարգացնելու նավաշինությունը, մետաղաձուլությունը, քիմիան և արդյունաբերության այլ ռեսուրսատար ճյուղերը:

- Երկրում կապիտալի կուտակման մեծ չափերը, որոնք (1960-ական թվականներին ՀՆԱ-ի մոտ 40%, ԱՄՆ-ում և Անգլիայում՝ 18-19%) պայմաններ էին ստեղծում ներքին ներդրումների մեծացման և արդյունաբերության զարգացման համար:

- Կապիտալի կուտակմանը նպաստող ռազմական ծախսերի ցածր նակարդակը՝ 1960-ական թվականներին՝ ՀՆԱ-ի միայն 1%, ԱՄՆ-ի 8-10%-ի դիմաց:

- Տնտեսության ճյուղային կառուցվածքի փոփոխությունները: Զրկվելով արտաքին շուկաներից՝ ճապոնիան ստիպված էր փոխելու, առաջին հերթին, արդյունաբերության ճյուղային կառուցվածքը և զարգացնելու արտահանման ճյուղերը համաշխարհային շուկայում՝ մրցակցային պայքարին հաջողությամբ մասնակցելու համար:

Եթե 1950-ական թվականներին դրանք բազային, աշխատատար և էներգատար ճյուղերն էին, ապա 1960-ական թվականներից՝ կապիտալատար ճյուղերը՝ ավտոմոբիլաշինությունը, նավթավերամշակումը, նավթաքիմիան, էլեկտրոնիկան:

Արդյունաբերության զարգացմանը մեծապես նպաստեց հատկապես ավտոմոբիլաշինությունը: 1960-ական թվականներին սկսվեց

ավտոմեքենաների զանգվածային արտադրությունը, և այդ ցուցանիշով ճապոնիան աշխարհում գրավեց երկրորդ տեղը՝ ԱՄՆ-ից հետո:

Վերլուծելով «իրաջքի» պատճառները՝ գիտնականները կարևորում են նաև ճապոնական աշխատուժի ազգային առանձնահատկությունները՝ աշխատասիրությունը, կարգապահությունը, բարեխղճությունը, ջանասիրությունը, այլ սուբյեկտիվ գործոններ, որոնք ապահովեցին քաղաքական և տնտեսական բարեփոխումների բարձր արդյունավետությունը:

ճապոնիայի տնտեսության մեջ իրականացվող բարեփոխումներին ակտիվ մասնակցում էր պետությունը: Այսպես՝ տնտեսության վերակառուցումը, մասնավորապես՝ արդյունաբերության ճյուղային կառուցվածքի ձևավորումը, տեղի էր ունենում կառավարության ակտիվ մասնակցությամբ և ուղղակի վերահսկողությամբ. խրախուսվում էին մասնավոր ներդրումները հարկային, վարկային, արտահանման արտոնությունների սահմանման միջոցով, ինչպես նաև ավելացվում էին պետական ներդրումները:

Պետական ներդրումներն առաջին հերթին ուղղվում էին ենթակառուցվածքների՝ տրանսպորտի և կապի զարգացմանը, ճանապարհների շինարարությանը և այլն:

ճապոնիայում զարգացավ նաև տնտեսության պետական ծրագրավորման համակարգը, մինչև 1970-ական թվականները պահպանվում էր արտաքին կապերի պետական վերահսկողությունը:

Շնորհիվ նշված գործոնների՝ ճապոնիայի տնտեսությունը 1950-ական թվականներին զարգանում էր 5-6 անգամ արագ՝ ԱՄՆ-ի և 2-4 անգամ արագ՝ Արևմտյան Եվրոպայի երկրների համեմատությամբ:

Տնտեսության զարգացման բարձր տեմպերը պահպանվեցին 1960-ական թվականներին. 1966-1968թթ. արդյունաբերական արտադրության միջին տարեկան աճի տեմպերը ճապոնիայում կազմեցին 16,7, ԱՄՆ-ում՝ 4,95, Ֆրանսիայում՝ 7,1, ԳՖՅ-ում՝ 4%: ճապոնիան գրավեց երկրորդ տեղը կապիտալիստական աշխարհում (ԱՄՆ-ից հետո) արդյունաբերական արտադրանքի և ազգային եկամտի ծավալով:

ճապոնիայի տեսակարար կշիռը համաաշխարհային կապիտալիստական արտադրությունում 1970թ. կազմեց 13,3, արտահանման մեջ՝ 7,1%: Ապրանքային արտահանման ծավալով ճապոնիան գրավեց երրորդ տեղը՝ ԱՄՆ-ից և Գերմանիայից հետո:

Այսպիսով՝ հետպատերազմյան 30 տարիների ընթացքում ճապոնիան դարձավ տնտեսապես հզոր տերություն:

9.5.2. 1974-1975թթ. համաշխարհային տնտեսական ճգնաժամը

Ճապոնիայի տնտեսության զարգացումն ընդհատվեց 1974-1975թթ. համաշխարհային տնտեսական ճգնաժամով, որն ամենաճանրն էր հետպատերազմյան ժամանակաշրջանում:

Արդյունաբերական արտադրության ծավալը 1973թ. համեմատությամբ կրճատվեց 2,4%-ով, չիրացված ապրանքների պաշարներն ավելացան ավելի քան 1/3-ով:

Էներգետիկ ճգնաժամի պայմաններում նավթի և հումքի գների կտրուկ աճը համաշխարհային շուկայում ծանր հետևանքներով էր հղի ճապոնիայի համար, որի տնտեսությունը առավել մեծ չափով էր կախված դրանց ներմուծումից: Նավթի ներմուծման համար միայն 1974-1976թթ. ճապոնիան լրացուցիչ վճարեց 43,3 մլրդ. իսկ ամբողջ հումքի համար՝ 6,5 մլրդ. դոլար: Արդյունաբերության մի շարք էներգա- և նյութատար ճյուղեր կորցրին իրենց մրցունակությունը:

ճգնաժամը արագացրեց արդյունաբերության ճյուղային կառուցվածքի փոփոխությունները: Դրանք անհրաժեշտ էին նաև այն պատճառով, որ ճապոնիայի ներքին շուկան արդեն հագեցած էր ծանր արդյունաբերության ճյուղերի արտադրանքով: Ավելին՝ մի շարք զարգացող երկրներ (Հարավային Կորեա, Թայվան, Հոնկոնգ, Սինգապուր), հաջողությամբ իրականացնելով ինդուստրացումը, ավելի էժան էին արտադրում ավանդաբար ճապոնական համարվող ապրանքներ (հագուստ, տեքստիլ, կենցաղային էլեկտրոնիկա և այլն)՝ լուրջ մրցակցություն ստեղծելով ոչ միայն արտաքին, այլև՝ ներքին շուկայում:

Տնտեսության վերակառուցման հիմնական ուղղություններն էին արտադրության հետագա ավտոմատացումը և ռեսուրսների խնայողությունը, գիտատար ճյուղերի և արտադրությունների զարգացումը, արդյունաբերության մեջ նորագույն տեխնիկայի և տեխնոլոգիաների ներդրումը:

Առավել արագ 1980-ական թվականներին զարգանում էին էլեկտրոնային արդյունաբերությունը, ընդհանուր և ճշգրիտ մեքենաշինությունը, ավտոմոբիլաշինությունը, ռորտսների արտադրությունը, ինչպես նաև՝ ծառայությունների ոլորտը: Առաջադրված խնդիրների լուծման ուղիներն էին ԳՏՀ-ի նվաճումների և արտասահմանի փորձի լայն օգտագործումը՝ սեփական գիտահետազոտական աշխատանքների ծավալմանը զուգընթաց: Զգալիորեն ավելացավ գիտահետազոտական աշխատանքների ֆինանսավորումը: Այդ նպատակով ներկայումս ծախսվում է երկրի ՀՆԱ-ի մոտ 3%-ը, և նշված ցու-

ցանիշով ճապոնիան չի գիջում ԱՄՆ-ին: ճապոնիային այժմ բաժին է ընկնում աշխարհում գրանցված պատենտների ավելի քան 40%-ը:

Այսպիսով՝ գիտատեխնիկական առաջընթացը դարձավ տնտեսության զարգացման հիմնական գործոն: Տնտեսական աճի ապահովման նպատակով կարևոր նշանակություն է ստանում նաև ներքին պահանջարկի խթանումը, քանի որ արտահանման հետագա ավելացման հնարավորությունները սահմանափակ են՝ զարգացած երկրների միջև վաճառահանման շուկաների համար պայքարի սրման հետևանքով:

Տնտեսության կառուցվածքային վերափոխումների շնորհիվ 1980-ական թվականներին ճապոնիայի տնտեսական զարգացման տեմպերը գերազանցում էին ԱՄՆ-ի և Արևմտյան Եվրոպայի երկրների տնտեսական զարգացման տեմպերը:

1990-ական թվականների սկզբից ճապոնիայում տնտեսական զարգացման տեմպերը դանդաղեցին՝ կազմելով տարեկան 2%՝ 1980-ական թվականների 3,8%-ի դիմաց: Այդ տարիներին, որոնք ճապոնացիներն անվանում են «կորցրած 10 տարի», տեղի են ունենում սպառման լճացում, գործազրկության աճ, ներդրումների կրճատում, բնակչության ծերացում և դրա հետևանքով նաև ՀՆԱ-ում սոցիալական ծախսերի մեծացում: Փլվեց այն հսկայական ինվեստիցիոն բուրգը, որն առաջացել էր արժեթղթերում հսկայական գումարների ներդրմամբ: Ծանր վիճակում հայտնվեցին շատ բանկեր, որոնք չկարողացան վերադարձնել տրամադրված վարկերը: Կառավարությունը ստիպված էր միջոցներ ձեռնարկելու՝ ավելացնելու ներդրումները, վարկավորելու ֆինանսական ինվեստիցիաները և այլն, ինչի հետևանքով մեծացավ պետական պարտքը՝ կազմելով երկրի ՀՆԱ-ի գրեթե 40%-ը:

Այդ բոլորին հավելվեց 1997թ. ասիական երկրներում սկսված ֆինանսական ճգնաժամը: Դեռևս 1990-ական թվականներին այդ երկրներում զգալիորեն բազմացել էին ճապոնական ընկերությունները: Նրանք արդյունաբերությունը տեղափոխում էին Ասիական-խաղաղօվկիանոսյան տարածաշրջան՝ էժան աշխատուժի և հարուստ բնական ռեսուրսների օգտագործմամբ ճապոնական ապրանքների մրցունակությունը բարձրացնելու համար:

Ավելին՝ այդ երկրներին էին տրամադրվել հսկայական վարկեր, որոնց ծավալը 1997թ. գերազանցում էր ճապոնական բանկային համակարգի կապիտալների 40%-ը: Ֆինանսական ճգնաժամի հետևանքով ճապոնական ներդրողները կրեցին մի քանի միլիարդ դոլարի հասնող վնաս, սնանկացան խոշոր բանկեր:

ճապոնական կառավարությունը ստիպված էր հերթական անգամ վերանայել երկրի տնտեսական զարգացման մոդելը և ձեռնարկել հակաճգնաժամային միջոցառումներ, որոնցից առանձնացվում են

չորսը՝ ֆինանսավարկային համակարգի վերափոխում, բազմակողմանի տնտեսական միջոցառումների ծրագիր, անհետաձգելի տնտեսական միջոցառումների փաթեթ և արդյունաբերության «վերակենդանացման» պլան:

Ֆինանսավարկային համակարգի վերափոխման խնդիրն էր ազատականացնել երկրի ֆինանսական համակարգը՝ համաշխարհային ստանդարտներին համապատասխանեցնելու նպատակով:

Բազմակողմանի տնտեսական միջոցառումների ծրագիրը պետք է առողջացներ ազգային տնտեսությունը՝ XXI դարում տնտեսական զարգացումն ապահովելու համար: Նախատեսվում էր նախագծերի իրականացում էներգիայի նոր տեսակների արտադրության, հեռուստահաղորդակցության և ինֆորմատիկայի, սոցիալական ապահովության, առողջապահության, կրթության և մի շարք այլ բնագավառներում:

Անհետաձգելի տնտեսական միջոցառումների փաթեթը ներառում էր մանր և միջին բիզնեսի պաշտպանությունը, բնակարանային շինարարության ֆինանսավորման ընդլայնումը, զբաղվածության մեծացումը և այլն:

Արդյունաբերության «վերակենդանացման» պլանով նախատեսվում էր հարկային արտոնությունների ընդլայնմամբ, ֆինանսական խթանմամբ, գիտահետազոտական աշխատանքների ֆինանսավորման ավելացմամբ արագացնել ճապոնական ընկերությունների վերակառուցումը և նորացումը:

Այսպիսով՝ փոփոխության կարիք ուներ մինչև 1990-ական թվականների վերջը արդյունավետ համարվող ճապոնական տնտեսական համակարգը, որի բնորոշ գծերն են՝ օտարերկրացիների համար «փակ» տնտեսությունը, պետական կարգավորման մեծ չափերը և դրանց համապատասխանող տնտեսական քաղաքականությունը, ներֆիրմային կառավարման հնացած ձևերը, աշխատանքային հարաբերությունները, կոլեկտիվ վարքագիծը և այլն:

Ճապոնիան ունի տնտեսական դժվարությունները հաղթահարելու և տնտեսությունն առողջացնելու համար անհրաժեշտ բոլոր ռեսուրսները, որոնցից ամենակարևորը մարդկային կապիտալն է:

* *
*

Ճապոնիան այսօր աշխարհի տնտեսապես հզոր երկրորդ տնտեսությունն է ԱՄՆ-ից հետո: ՀՆԱ-ի ծավալը բնակչության մեկ շնչի հաշվով գերազանցում է 30 հազ. դոլարը:

Ճապոնիային բաժին է ընկնում համաշխարհային ՀՆԱ-ի ավելի քան 10%-ը: Արտասահմանյան ակտիվների ընդհանուր գումարը ավելի քան մեկ տրիլիոն դոլար է: Արտաքին առևտրի ծավալը կազմում է համաշխարհային ապրանքաշրջանառության մոտ 10%-ը: Առևտրային հաշվեկշիռն ակտիվ է՝ արտահանումը գերազանցում է ներմուծումը ավելի քան 100 մլրդ դոլարով: Երկրի ոսկու և արտարժույթի ռեզերվներն ամենամեծն են աշխարհում (222 մլրդ դոլար):

Ճապոնիան աշխարհում ամենախոշոր ներդրողն է՝ նրան բաժին է ընկնում համաշխարհային փոխառվական կապիտալի մոտ 40%-ը: Դա հիմնականում ներդրում է ԱՄՆ-ի և ԵՄ երկրների փոխառություններում և այլ արժեթղթերում:

Վերջին տարիներին կտրուկ ավելացել են արտասահմանյան ուղղակի ներդրումները, որոնք տարեկան կազմում են 15,5 մլրդ դոլար, և որոնց միջոցով ճապոնական ընկերությունները հաստատվում են այլ երկրների շուկաներում: Ճապոնական խոշորագույն ֆինանսարդյունաբերական խմբերը՝ Միցուիմ, Միցուբիշիմ, Սունիտոմոն, Ֆուդզիմ, Սանվան, արտասահմանում ունեն հսկայական ֆինանսական հզորություն և արտադրական բազա:

Ճապոնիան 1980-ական թվականներից դարձել է աշխարհի խոշորագույն ֆինանսական կենտրոն և ամենախոշոր վարկավորողը:

9.6. ԽՍՀՄ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԵՎ ՀԵՏՊԱՏԵՐԱԶՄՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ

1941թ. հունիսի 22-ին Գերմանիան հարձակվեց ԽՍՀՄ-ի վրա: Հենվելով գրեթե ամբողջ Արևմտյան Եվրոպայի տնտեսական ներուժին և ունենալով գորքի ու ռազմական տեխնիկայի հսկայական առավելություն՝ թշնամին գրավեց մեծ տարածքներ, որտեղ ապրում էր բնակչության 40, արտադրվում արդյունաբերության համախառն արտադրանքի 33%-ը: Արդեն 1941թ. երկրորդ կեսին երկրի արդյունաբերության արտադրանքը կրճատվեց 2,1 անգամ:

Այդ պայմաններում անհրաժեշտ էր արագ իրականացնել ժողովրդական տնտեսության ռազմական վերակառուցում և երկրի արևմտյան շրջաններից ձեռնարկությունների տեղափոխում արևելյան շրջաններ: Ընդամենը 4-5 ամսվա ընթացքում Ուրալ, Սիբիր և Միջին Ասիա տեղափոխվեցին 1523 արդյունաբերական ձեռնար-

կություն, որոնք 1942թ. արդեն տալիս էին ավելի շատ արտադրանք՝ 1941թ. համեմատությամբ:

Արդյունաբերության ռազմական վերակառուցումն ավարտվեց 1942թ. կեսերին: Ռազմական արտադրության հետագա աճը կարող էր տեղի ունենալ նոր շինարարության, արտադրության կազմակերպման բարելավման և աշխատանքի արտադրողականության բարձրացման հաշվին: Պատերազմի տարիներին կառուցվեց 2250 խոշոր արդյունաբերական ձեռնարկություն, աշխատանքի արտադրողականությունն աճեց 40%-ով: Մեծացավ արևելյան շրջանների նշանակությունը: Այսպես՝ Ուրալը տալիս էր ամբողջ արդյունաբերական արտադրանքի 40%-ը:

Արդյունաբերության էներգետիկ բազայի զարգացման համար ծավալվեց ջերմա- և հիդրոէլեկտրակայանների կառուցում երկրի արևելյան շրջաններում:

Կարևոր էր աշխատուժի պակասը լրացնելու խնդիրը, որն առաջացել էր տղամարդկանց զորակոչման և գրավյալ տարածքներում բնակչության մոտ կեսի մնալու հետևանքով: Արդյունաբերության և շինարարության մեջ աշխատելու համար 1942թ. հրամանագրով, հավաքագրվում էր քաղաքային բնակչությունը՝ հիմնականում կանայք և երիտասարդները: Կանանց տեսակարար կշիռը 1945թ. կազմում էր տնտեսության մեջ զբաղվածների 56%-ը:

Պատերազմի տարիներին փոխվեցին նաև աշխատանքի կազմակերպման ձևերը՝ սահմանվեցին արտաժամյա աշխատանքներ, արձակուրդները փոխհատուցվեցին դրամով, խստացվեց կարգապահությունը, ծավալվեց մրցությունը:

ԽՍՀՄ-ի տնտեսական հնարավորությունները տարեցտարի աճում էին, և արդեն 1943թ. վերջին ռազմական արտադրությունն ապահովեց բանակի նյութատեխնիկական գերազանցությունը թշնամու նկատմամբ:

Պատերազմի տարիներին ԽՍՀՄ-ը մեծ օգնություն էր ստանում հակաֆաշիստական միավորման երկրներից: Օգնության հիմնական մասը՝ մոտ 10 մլրդ դոլարի զեմք, սարքավորում, սննդամթերք և այլ ապրանքներ, ստացվեց լենդ-լիզով 1941թ. մարտից մինչև 1945թ. օգոստոսը: ԱՄՆ-ից և Անգլիայից առաքվեցին մոտ 10 հազար հրանոթ, 11 հազար տանկ, 19 հազար ինքնաթիռ, հարյուր հազարավոր ավտոմեքենա և այլն:

ԽՍՀՄ-ի հաղթանակը ձեռք բերվեց, առաջին հերթին, խորհրդային ժողովրդի հերոսական աշխատանքով:

Պատերազմը հսկայական վնաս հասցրեց տնտեսությանը: Երկիրը կորցրեց ազգային հարստության 1/3-ը, քարուքանդ եղան տասնյակ հազարավոր քաղաքներ, գյուղեր, արդյունաբերական և տրանսպորտային ձեռնարկություններ, կոլտնտեսություններ և այլն:

ԽՍՀՄ-ի տնտեսությանը պատճառած վնասը գնահատվում էր մոտ 2,5 տրլն ռուբլի (485 մլրդ դոլար): Ձոհվեց ավելի քան 20 մլն. մարդ:

Տնտեսության վերականգնումը սկսվեց գրավված շրջանները ազատագրելուց անմիջապես հետո: Արդյունաբերական արտադրությունը կազմում էր նախապատերազմյան մակարդակի 91, տրանսպորտային բեռնափոխադրումները՝ 76, մանրածախ ապրանքաշրջանառությունը՝ 43%:

1945թ. սեպտեմբերին լուծարվեց Պաշտպանության պետական կոմիտեն: Նրա գործառույթներն անցան Ժողովրդական կոմիսարների խորհրդին, որը 1946թ. մարտին վերափոխվեց ԽՍՀՄ Նախարարների խորհրդի:

ԽՍՀՄ տնտեսության վերականգնումը և զարգացումը տեղի էր ունենում ըստ 1946-1950թթ. հնգամյա պլանի, որով հատկացվում էր 340 մլրդ ռուբլի: Առաջնահերթ նշանակություն էր տրվում ծանր արդյունաբերության և երկաթուղային տրանսպորտի զարգացմանը, տեխնիկական առաջընթացի ապահովմանը և լայն սպառման ապրանքների արտադրության ծավալմանը: Արդեն 1948թ. արդյունաբերական արտադրանքը 18%-ով գերազանցեց 1940թ. մակարդակը, 1950թ. ավելացավ 73%-ով: Ազգային եկամուտը 1945թ. համեմատությամբ 1950թ. ավելացավ կրկնակի:

Գյուղատնտեսության բնագավառում հնգամյա առաջադրանքները չկատարվեցին, նրա արտադրության նախապատերազմյան մակարդակը ձեռք չբերվեց հիմնականում այն պատճառով, որ երկրի ռեսուրսներն առավելապես ուղղվում էին արդյունաբերության զարգացմանը:

Կարևոր նշանակություն ունեին պատերազմի տարիներին սահմանված՝ սննդամթերքի և արդյունաբերական ապրանքների նորմավորված բաշխման վերացումը 1947թ. վերջին և դրամական ռեֆորմի իրականացումը ռուբլու արժեզրկումը դադարեցնելու համար: Դրամական ռեֆորմով հին թղթադրամները փոխանակվում էին նորերով՝ 10:1 հարաբերությամբ: 1950թ. փետրվարին սահմանվեց ռուբլում ոսկու պարունակության չափը (0,222168 գրամ):

Հետպատերազմյան տարիներին ընդլայնվեցին ԽՍՀՄ արտաքին տնտեսական կապերը, առաջին հերթին դեմոկրատական երկրների հետ: Դրան նպաստեց 1949թ. ստեղծված Տնտեսական Փոխօգնության Խորհուրդը:

* *
*

ԽՍՀՄ զարգացումը 1950-ական թվականներին տեղի էր ունենում ներքին և արտաքին քաղաքականության ազատականացմամբ, տնտեսական և այլ բարեփոխումներով, որոնց նպատակն էր մեղմացնել վարչահրամայական համակարգի ներգործությունը: Այսպես՝ ընդլայնվեցին հանրապետությունների իրավունքները պլանավորման և ձեռնարկությունների կառավարման բնագավառում: Վերափոխվեց արդյունաբերության կառավարումը՝ ճյուղային նախարարությունների փոխարեն 1957թ. ստեղծվեցին ժողտնտխորհներ, որոնց ենթարկվեցին տվյալ վարչական տարածքի բոլոր ձեռնարկությունները:

Արդյունաբերությունը տնտեսության զարգացման հիմնական ճյուղն էր, որի տեսակարար կշիռը հասարակական ամբողջական արդյունքում 1960թ. կազմում էր 62%, այդ թվում՝ արտադրության միջոցների արտադրությունը՝ 75%: Արդյունաբերության աճի միջին տարեկան տեմպերը կազմեցին մոտ 12%: Գլխավոր պատճառները հիմնական կապիտալի նորացումը, տեխնիկական առաջընթացի շնորհիվ արտադրական գործընթացների մեքենայացումը և ավտոմատացումն էին:

Փոխվում էր արդյունաբերության ճյուղային կառուցվածքը գիտատեխնիկական առաջընթացի նվաճումներին համապատասխան. արագ զարգանում էին էլեկտրաէներգետիկան, ռադիոէլեկտրոնիկան, քիմիան, սարքաշինությունը, մեծանում էին նավթի և գազի օգտագործման ծավալները: Սկսվեց ատոմային էլեկտրակայանների կառուցումը, արծակվեցին աշխարհում առաջին արբանյակը և տիեզերանավը: Վերելք էին ապրում թեթև ու սննդի արդյունաբերության ճյուղերը:

Կարևոր փոփոխություններ տեղի ունեցան գյուղատնտեսության մեջ, որը հետ էր մնում արդյունաբերությունից և չէր բավարարում սննդամթերքի և հումքի պահանջը: 1953 թվականից իրականացվեց ագրարային նոր քաղաքականություն, որով բարձրացվում էին պետությանը հանձնվող արտադրանքի գները և սահմանվում միայն մթերվող արտադրանքի ծավալը: Դա մեծացնում էր կոլտնտեսականների և կոլտնտեսությունների նյութական շահագրգռվածությունը, խթանում գյուղատնտեսական արտադրության աճը: Ավելանում էին գյուղատնտեսության ֆինանսավորման ծավալները: Սկսվեց խամ ու խոպան հողերի յուրացումը Ղազախստանում, Արևմտյան Սիբիրում, Պոլովոիեում և այլ տարածաշրջաններում, որտեղ արդեն 1958թ. մշակվում էր երկրի հացահատիկային ցանքատարածությունների 68%-ը:

Մեծ ուշադրություն էր դարձվում գյուղատնտեսության նյութատեխնիկական բազայի զարգացմանը: 1959 թվականից մեքենա-

տրակտորային կայանները վերածվում էին վերանորոգման կայանների, իսկ նրանց տեխնիկան վաճառվում էր կոլտնտեսություններին:

Ձեռնարկված միջոցառումների շնորհիվ 1953-1958թթ. գյուղատնտեսական արտադրանքի հավելածը նախորդ հինգ տարիների համեմատությամբ կազմեց 34%, թեև գյուղատնտեսությունն առաջվա պես հետ էր մնում և չէր բավարարում երկրի պահանջները:

Արդյունաբերության և գյուղատնտեսության զարգացմամբ բարելավվում էր ժողովրդի բարեկեցությունը՝ բարձրացվեց ցածր վարձատրվող բանվորների և ծառայողների աշխատավարձը, 1958թ. սահմանվեց 8 ժամյա և 2 ժամով պակաս աշխատանքային օր, շաբաթ և նախատոնական օրերին, իջեցվեցին հարկերը, վերացվեց ուսման վարձը, բարձրացվեցին կենսաթոշակները, ընդլայնվեց բնակարանային շինարարությունը:

ԽՍՀՄ-ում 1950-1960թթ. իրականացված բարեփոխումները եական տեղաշարժեր չառաջացրին: Հնարավոր չէր ավ ապահովելու տնտեսության կայուն աճ: Տնտեսական բարեփոխումները շարունակելու անհրաժեշտությունն ակնհայտ էր: Արդյունաբերության մեջ 1965թ. սկսվեց իրականացվել ռեֆորմ, որի հիմքում շուկայական տնտեսության որոշ սկզբունքներ էին շահույթ, տնտեսավարկ: Այսպես՝ արտադրության արդյունավետության ցուցանիշ էր համարվում շահույթը, որից հատկացումների հաշվին ստեղծվում էին զարգացման և աշխատողների նյութական խրախուսման ֆոնդեր: Ընդլայնվում էին ձեռնարկությունների իրավունքները և ինքնուրույնությունը, նախատեսվում էր տնտեսավարկի արմատավորում, կրճատվում էր պետության կողմից սահմանվող պլանային ցուցանիշների քանակը: Ձեռնարկությունների աշխատանքը բնութագրող կարևոր ցուցանիշներից մեկը դառնում էր իրացված արտադրանքի ծավալը:

Փոխվում էր նաև արդյունաբերության կառավարման սկզբունքը՝ վերացվում էին ժողտնտխորհները և ստեղծվում՝ միութենական ու հանրապետական նշանակության նախարարություններ:

Նշված բարեփոխումները պետք է ապահովեին արտադրության զարգացման տեմպեր արագացում, գիտատեխնիկական առաջընթացի հիման վրա նրա արդյունավետության բարձրացում և ժողովրդի բարեկեցության աճ:

Այսպես՝ 1961-1970թթ. համախառն հասարակական արդյունքի աճի միջին տարեկան տեմպերը կազմեցին մոտ 7%, աշխատանքի արտադրողականությունը 6,2% էր, և ստացվեց ազգային եկամտի հավելածի ավելի քան 83%-ը: Առավել արագ զարգանում էին տեխնիկական առաջընթացն ապահովող մեքենաշինական, քիմիական և նավթաքիմիական ճյուղերը: Միայն 1966-1970թթ. կառուցվեց 1900 արդյունաբերական ձեռնարկություն: Առանձնահատուկ ուշադրություն էր դարձվում ռազմական արտադրության զարգացմանը: Նրա

արտադրանքը մեքենաշինական ձեռնարկություններում կազմում էր թողարկվող արտադրանքի 60%-ը: Փոխվում էր երկրի վառելիքային հաշվեկշիռը. նավթի և գազի տեսակարար կշիռը բարձրացավ մինչև 60%: Երկրում ստեղծվեց նավթի և գազի մատակարարման միասնական համակարգ:

ԽՍՀՄ-ում 1970-ական թվականների վերջերին ստեղծվել էր հզոր արդյունաբերություն, որի ճյուղային կառուցվածքում սակայն առկա էին թերություններ՝ բարձր տեսակարար կշիռ ունեին ռազմական ու դրա հետ կապված ճյուղերը և վառելիքաէներգետիկ համալիրը:

Թերություններ կային նաև գյուղատնտեսության մեջ, որտեղ իրականացված բարեփոխումները էական տեղաշարժեր չառաջացրին: Գյուղատնտեսությունը շարունակում էր զարգանալ դանդաղ, չէին կատարվում պետական առաջադրանքները, դժվարանում էր թեթև և սննդի արդյունաբերության զարգացումը:

Երկրի ագրարային հատվածի զարգացման համար 1965 թվականից բարձրացվում էին գյուղատնտեսական արտադրանքի պետական մթերումների զները, իսկ պլանից ավելի, ինչպես նաև վատագույն բնական պայմաններում արտադրված մթերքների համար սահմանվում էր հավելավճար: Կարևոր նշանակություն ունեին գյուղատնտեսական արտադրանքի մթերման հնգամյա կայուն պլանների սահմանումը և անձնական օժանդակ տնտեսությունների զարգացման սահմանափակումների վերացումը, ինչպես նաև՝ կոլտնտեսականների աշխատանքի երաշխավորված վարձատրությունը և կենսաթոշակների վճարումը:

Գյուղատնտեսական արտադրության ինտենսիվացման համար 1970-ական թվականներին ստեղծվում են ագրոարդյունաբերական միավորումներ, կոմբինատներ, ագրոֆերմաներ, որոնց կազմի մեջ մտնում էին կոլտնտեսություններ և սովխոզներ, հումքը վերամշակող ձեռնարկություններ, տրանսպորտի և առևտրի կազմակերպություններ: 1982թ. մշակվեց «ԽՍՀՄ պարենային ծրագիրը», որով նախատեսվում էր գյուղատնտեսության և սպասարկող արդյունաբերության ճյուղերի, արտադրանքի մթերման, պահպանման և վերամշակման ձեռնարկությունների համալիր զարգացում: Ագրոարդյունաբերական համալիրն առանձնացվում էր որպես պլանավորման և կառավարման ինքնուրույն օբյեկտ:

Գյուղատնտեսության զարգացմանը 1970-1980թթ. հատկացվեց ավելի քան 300 մլրդ ռուբլի՝ Ժողովրդական տնտեսության մեջ ընդհանուր ներդրումների շուրջ 30%-ը, սակայն պլանային առաջադրանքները չկատարվեցին: Արտադրության միջին տարեկան աճը 1976-1980թթ. կազմել է 9%՝ պլանով նախատեսված 14-17%-ի դիմաց:

Չկատարվեցին նաև արդյունաբերական արտադրանքի թողարկման, աշխատանքի արտադրողականության և արդյունավետության բարձրացման պլանային առաջադրանքները: Կառավարման և պլանավորման մեխանիզմը, տնտեսավարման մեթոդները, կարգապահության մակարդակը հետ էին մնում ներկայացվող պահանջներից:

ԽՍՀՄ տնտեսության համար անբարենպաստ պայմանները սրվեցին 1980-ական թվականներին: Պարզ դարձավ, որ էքստենսիվ զարգացման գործոնները հիմնականում սպառվել են: Այսպես՝ բնակչության ծնելիության մակարդակի անկմամբ կրճատվում էր աշխատուժի ներհոսքը տնտեսություն, բարձրանում էր վառելիքաէներգետիկ հումքի ինքնարժեքը արդյունահանող արդյունաբերության կենտրոնները երկրի արևելյան և հյուսիսային շրջաններ տեղափոխվելու հետևանքով մեծանում էին ռազմական ծախսերը և ուռճանում էր ռազմարդյունաբերական համալիրը: Տնտեսության կառուցվածքը միակողմանի էր՝ առավելապես զարգանում էր արտադրության միջոցների արտադրությունը, ինչը թույլ չէր տալիս բավարարելու բնակչության պահանջումները: Սակայն տնտեսությունը իներցիայով շարունակում էր առաջընթացը՝ զարգանալով հիմնականում էքստենսիվ հիմքով և ներգրավելով արտադրության մեջ աշխատանքային, նյութական և ֆինանսական լրացուցիչ ռեսուրսներ: Դա դժվարացնում էր տնտեսության զարգացումը, որի տեմպերը նվազում էին: Եթե 1960-ական թվականներին համախառն հանրային արդյունքի հավելանքի միջին տարեկան տեմպերը կազմում էին մոտ 7%, ապա 1981-1985թթ.՝ 3,5%, արդյունաբերական արտադրանքինը՝ համապատասխանաբար՝ 8,5 և 3,7, գյուղատնտեսական արտադրությանը՝ 3,1 և 1,0, աշխատանքի արտադրողականությանը՝ 6,5 և 3,1% և այլն:

Այս պայմաններում, ԽՍՀՄ տնտեսական զարգացման 1981-1985թթ. հիմնական ուղղություններում ավելի էր կարևորվում տնտեսությունը ինտենսիվ զարգացման ուղի փոխադրելու և գիտատեխնիկական առաջընթացի հիման վրա արտադրության արդյունավետությունը բարձրացնելու խնդիրը, որի լուծմամբ հնարավորություն կընձեռվեր ռացիոնալ օգտագործելու երկրի արտադրական ներուժը, տնտեսելու ռեսուրսներ և բարձրացնելու աշխատանքի որակը:

ԽՍՀՄ տնտեսությունը բավականին զարգացավ 1981-1985թթ.: Ազգային եկամուտն ավելացավ 17, արդյունաբերական արտադրությունը՝ 20%-ով, կառուցվեց ավելի քան 1000 ձեռնարկություն, աճեցին գյուղատնտեսական արտադրությունը, տրանսպորտի բեռնաշրջանառությունը, մեծածախ առևտուրը: Սակայն 1981-1985թթ. տնտեսական զարգացման պլանային առաջադրանքների և ոչ մի ցուցանիշ չկատարվեց:

երկրի տնտեսության հսկայական ծավալները, կառավարման վարչատնտեսական և պլանային համակարգը, ոչ շահութաբեր ձեռնարկություններից ազատվելու անկարողությունը, արտադրողի մեռաշնորհը, բյուրոկրատիան, կոռուպցիան, աշխատանքի ցածր վարձատրությունը դժվարացնում էին առաջադրված խնդիրների լուծումը:

Ծանր էր ազդեցությունը նաև տնտեսության ռազմականացման մշտական միջազգային լարվածության և սպառազինությունների մրցավազքի պայմաններում, որ կլանում էր պետության հսկայական նյութական և աշխատանքային ռեսուրսները:

Զկար երկիրը ճգնաժամից դուրս բերելու հստակ և արդյունավետ ծրագիր:

1980-ական թվականների կեսերին իշխանության եկած ուժերը առաջ քաշեցին վերակառուցման գաղափարը, որը ենթադրում էր երկրի հասարակական-քաղաքական և տնտեսական ոլորտներում անհետաձգելի ու արմատական վերափոխումների իրականացում: Նախատեսվում էր սահմանափակել պետության մասնակցությունը տնտեսության կառավարմանը, ապազգայնացնել հանրային սեփականությունը և տնտեսության մեջ արմատավորել շուկայական հարաբերություններ:

Վերափոխումների հիմնական լծակը պետք է լիներ երկրի սոցիալ-տնտեսական զարգացման արագացումը գիտության և տեխնիկայի նորագույն նվաճումների օգտագործմամբ, ձեռնարկությունների իրավունքների ընդլայնմամբ, տնտեսաշրջանի արմատավորմամբ, արտադրության մեջ կարգապահության ուժեղացմամբ: Վերափոխված տնտեսության հիման վրա նախատեսվում էր լուծել նաև սոցիալական խնդիրներ, առաջին հերթին՝ պարենայինը, և բնակարանայինը:

ԽՍՀՄ-ում 1980-1990թթ. սահմանագծին թույլատրվեց անհատական աշխատանքային գործունեությունը և կոոպերատիվների ստեղծումը, պլանից ավելի արտադրվածը ձեռնարկությունները կարող էին ինքնուրույն իրացնել, վերակառուցվեց բանկային համակարգը, ստեղծվեցին առևտրային և կոոպերատիվ բանկեր, ներգրավվեցին օտարերկրյա ներդրումներ և այլն: Գյուղատնտեսության մեջ առաջանում էին ֆերմերային և մասնավոր գյուղացիական տնտեսություններ:

Տնտեսական բարեփոխումները չբարելավեցին երկրի վիճակը: 1989-1991թթ. կտրուկ կրճատվեցին արդյունաբերության աճի տեմպերը, աճեց գործազուրկների թիվը, նվազեցին բնակչության զգալի մասի եկամուտները: Մեծացավ պետական բյուջեի պակասորդը նաև Աֆղանստանում տեղի ունեցող անհեռանկարային պատերազմի և նավթի համաշխարհային գների իջեցման ու դրա արտահա-

նուձից ստացվող արժուքային եկամուտների կրճատման հետևանքով:

Արմատապես փոխվեցին ԽՍՀՄ հարաբերությունները Արևելյան Եվրոպայի երկրների հետ. կրճատվեց համագործակցությունը: 1991թ. փլուզվեց ՏՆտեսական Փոխօգնության Խորհուրդը, 1980թ. Արևելյան Եվրոպայի երկրների տեսակարար կշիռը կազմում էր ԽՍՀՄ արտաքին առևտրային շրջանառության ավելի քան 50, 1990-ական թվականների սկզբին՝ միայն 16%-ը:

Դեմոկրատական վերափոխումների հիմնական արդյունքը ԽՍՀՄ քայքայումն էր, նախկին խորհրդային հանրապետությունների անկախացումը, Ռուսաստանի Դաշնության առաջացումը:

ՌԴ նոր կառավարությունը շարունակեց արմատական բարեփոխումների իրականացումը, որոնց խոչընդոտում էին՝

- ֆինանսական ճգնաժամը. փլուզման պահին ԽՍՀՄ արտաքին պարտքը կազմում էր գրեթե 70 մլրդ. դոլար, և կառավարությունն ի վիճակի չէր սպասարկելու: Նախկին իշխանությունները լրիվ ծախսել էին երկրի արժուքային և ոսկու պաշարները: Ֆինանսական ճգնաժամի հետևանքով բարձր էր ինֆլյացիայի մակարդակը, դրամը արժեզրկում էր: Կառավարությունը ստիպված էր հետաձգել նախկին պարտքերի վճարումը և փնտրել նոր վարկեր ու միջազգային օգնության այլ ձևեր:

- ՏՆտեսական համակարգի ճգնաժամը: ՌԴ-ն պետք է հրաժարվեր տնտեսության կառավարման և պլանավորման անարդյունավետ մեթոդներից և անցներ տնտեսավարման շուկայական համակարգին:

- ՏՆտեսության կառուցվածքի ճգնաժամը: Ռուսաստանը հզոր ռազմական գերտերություն էր, որի ամենաարժեքավոր ռեսուրսներն ուղղվում էին ռազմարդյունաբերական համալիրի կարիքների բավարարմանը՝ շրջանցելով սպառողական և արտահանման ապրանքների արտադրության կարիքները:

Այս երեք հիմնախնդիրները ՌԴ-ն պետք է լուծեր միաժամանակ, որ շատ դժվար էր ցանկացած երկրի համար, ուստի ուղեկցվում էր զգալի տնտեսական կորուստներով: Այսպես՝ 1990-1997թթ. ՀՆԱ-ն 990 մլրդ-ից կրճատվեց մինչև 580 մլրդ դոլար, կամ շուրջ 60%-ով, արդյունաբերական արտադրանքի ծավալը՝ 315 մլրդ-ից մինչև 155 մլրդ դոլար, կամ գրեթե 50%-ով, իսկ ՌԴ-ի տեսակարար կշիռը համաշխարհային արդյունաբերական արտադրության մեջ՝ 4,6-ից մինչև 1,8%:

Անցումը շուկայական հարաբերություններին ենթադրում էր գների ազատականացում, դրանց պետական վերահսկողության վերացում և շուկայական գների ու սակագների ձևավորում: Գների ազատականացումն սկսվեց 1992թ. հունվարից և ուղեկցվում էր

դրանց անգուսպ աճով: Մեկ տարվա ընթացքում սպառողական զները աճեցին 26 անգամ, իջավ բնակչության կենսամակարդակը: 1994թ. դա կազմում էր 1990-ականների սկզբի մակարդակի ընդամենը 50%-ը:

Կարևոր նշանակություն ուներ նաև սեփականության ապապետականացումը 1993-1994թթ., որն ընդգրկում էր առաջին հերթին մանրածախ առևտրի, հասարակական սննդի և կենցաղային ծառայության, ինչպես նաև արդյունաբերական ձեռնարկությունների 1/3-ը: Խոշոր և միջին ձեռնարկությունների մեծ մասը վերածվեց մասնավոր առևտրային և բաժնետիրական ընկերությունների, առաջացան առևտրային բանկեր, բորսաներ: Սակայն պետության ձեռքին հայտնվեցին տնտեսության մեջ առաջատար դեր ունեցող գործարանների և ֆաբրիկաների բաժնետոմսերի զգալի փաթեթներ, որոնք հնարավորություն էին տալիս որոշակիորեն ներգործելու ոչ պետական հատվածի ձեռնարկություններին:

Բարեփոխումներ էին իրականացվում երկրի ագրարային հատվածում, որտեղ վերափոխվում էին կոլտնտեսությունները և սովխոզները: Հողը հավասարապես էր բաժանվում կոլեկտիվի անդամներին, իսկ հիմնական միջոցները՝ ըստ արժեքի և աշխատանքային ստաժի: Նրանք կարող էին կազմակերպել ֆերմերային տնտեսություն և գյուղատնտեսական կոոպերատիվ, պահպանել կոլտնտեսությունը և սովխոզը կամ ստեղծել բաժնետիրական ընկերություն: Բաժնետիրական ընկերությունների և արտադրական կոոպերատիվների տեսակարար կշիռը գյուղատնտեսական ձեռնարկությունների կառուցվածքում 1999թ. արդեն կազմեց 65,8%:

Տնտեսական ճգնաժամը ծանր ազդեց գյուղատնտեսությանը, որի արտադրության ծավալը 1990-ական թվականների կեսերին կրճատվեց 70%-ով՝ 1991-1992թթ. համեմատությամբ, 20 միլիոնով պակասեց խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակը: Գյուղատնտեսական տեխնիկայի, պարարտանյութերի արտադրության կրճատման, տնտեսավարման ձևերի վերակառուցման և ֆինանսական միջոցների պակասի հետևանքով տարեցտարի նվազում էր բերքատվությունը: 1990-ական թվականների վերջին պետական հատվածում տնտեսությունները կազմում էին մոտ 49, մասնավորում 50%-ից ավելին:

Ռուսաստանի տնտեսության և բնակչության լայն զանգվածների համար աղետալի էին 1998թ. օգոստոսի ֆինանսական ճգնաժամի հետևանքները: Հիմնական պատճառն այն էր, որ բյուջեի եկամուտների նվազման պայմաններում 1990-ական թվականներին կառավարությունը սկսեց թողարկել պետական կարճաժամկետ պարտավորություններ, որոնք բարձր եկամտաբերության էին: Պետական պարտքը գնալով մեծանում էր, և 1998թ. կազմեց 500 մլրդ դոլար,

որից 370-ը ներքին պարտքն էր: Դա սպասարկելու համար տարեկան ծախսվում էր դաշնային բյուջեի եկամուտների 27%-ը: Այդ պայմաններում երկրի կենտրոնական բանկը որոշում կայացրեց ռուբլու վերաարժեվորման, բանկերի արժուքային պարտքերի և պետական կարծաժամկետ պարտավորությունների վճարման դարեցման մասին:

Ֆինանսական ճգնաժամի հետևանքները ծանր էին: Բանկային համակարգի վնասները կազմեցին 100-150 մլրդ ռուբլի, ապրանքների գներն աճեցին 3-4 անգամ: Տնտեսությունում մի քանի տարով հետընթաց տեղի ունեցավ և միայն 1999թ. երկրորդ կեսից սկսվեց դանդաղ զարգացումը:

ՌԴ-ում 1990-ական թվականների բարեփոխումները արմատական տեղաշարժեր չառաջացրին: Այսօր էլ արդյունաբերության կառուցվածքում գերակշռում են վառելիքաէներգետիկ համալիրը և մետալուրգիան, կրճատվում է մեքենաշինության և ներքին շուկայի համար աշխատող ճյուղերի տեսակարար կշիռը: Արդյունաբերության ժամանակակից ճյուղերը՝ միկրոէլեկտրոնիկան, ինֆորմացիոն համակարգերը, բիոտեխնոլոգիան բավարար չափով զարգացած չեն: Տնտեսության նյութատեխնիկական բազան շատ հնացած է, լուծված չեն սոցիալական խնդիրները:

Զգալիորեն մեծացել է արտաքին առևտրի նշանակությունը: Նախկին խորհրդային հանրապետությունների հետ տնտեսական կապերը պահպանելու համար 1991թ. դեկտեմբերին ստեղծվեց ԱՊՀ-ն: Սակայն ՌԴ տնտեսությունում գերակշռում են վառելիքահունքային ճյուղերը, ինչի հետևանքով նրա հիմնական առևտրային գործընկերներն են զարգացած եվրոպական երկրները:

ՌԴ-ի զարգացման որոշակի սահմանագիծ էին 1999-2000 թվականները, երբ փոխվեց երկրի ղեկավարությունը: Նոր իշխանություններն իրենց ջանքերն ուղղեցին հասարակական-քաղաքական կյանքի կայունացմանը, տնտեսության զարգացմանը և միջազգային ասպարեզում Ռուսաստանի դերի ուժեղացմանը:

9.7. ԿԱՆԱԴԱՅԻ ԵՎ ԻՏԱԼԻԱՅԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ԵՐԿՐՈՐԴ ՀԱՄԱՇՆԱՐԴԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻՑ ՀԵՏՈ

9.7.1. Կանադա

Կանադան իր տարածքով աշխարհի խոշոր պետություններից է (շուրջ 10 մլն ք/կմ): Զբաղեցնում է երկրագնդի ցամաքի 7.5%-ը, ունի սակավաթիվ բնակչություն: Իրենց տարածքով նրան համարյա հավասար ԱՄՆ-ը և Չինաստանը ունեն անհամեմատ շատ բնակչություն, քան Կանադան: Այս ցուցանիշով Կանադային նմանվում է Իսպանիան, իսկ Ֆրանսիան գերազանցում է 2 անգամ, այն դեպքում, երբ վերջիններիս տարածքը 20 անգամ փոքր է: Փաստորեն Կանադան արդյունաբերապես զարգացած խմբի երկրների մեջ ամենաքիչ բնակեցվածն է:

Պատմականորեն կանադական հողերի յուրացումը տեղի է ունեցել անգլո-ֆրանսիական հակամարտության պայմաններում: Յոթնամյա պատերազմի (1756-1763թթ.) հետևանքով Յյուսիսային Ամերիկայում գտնվող ֆրանսիական տիրույթներն անցան Անգլիային: Տևական ժամանակ գաղութային ռեժիմն արգելակում էր Կանադայի զարգացումը: 1867թ. նրան Անգլիան դարձրեց իր դոմինիոնը: Որպես պետություն Կանադան ուներ ագրարային տնտեսություն և մեծապես կախված էր մետրոպոլիայից: 1872թ. ընդունվեց «Ռոմստեռների մասին» կանադական օրենքը, որը հանգեցրեց գյուղատնտեսության, ամենից առաջ՝ հացահատիկային տնտեսության արագ զարգացմանը:

XIX դարի վերջին-XX դարի սկզբին Կանադան մուտք գործեց մոնոպոլիստական կապիտալիզմի դարաշրջանը: Տեղի ունեցան արտադրության համակենտրոնացում և կենտրոնացում, առաջացան մոնոպոլիաներ: Մոնոպոլիստական միավորումների հիմնական ձևը, ինչպես ԱՄՆ-ում, տրեստներն էին: XX դարի սկզբին ակտիվացավ ամերիկյան կապիտալի ներթափանցումը կանադական տնտեսություն, որ ուժեղացրեց անգլո-ամերիկյան մրցակցությունը Կանադայում: Ընդհուպ մինչև Երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտը Կանադան մնում էր ագրարային-ինդուստրիալ երկիր, Անգլիայի հացահատիկի մատակարարը: Երկիրը կողմնորոշվում էր դեպի արտաքին շուկաներ, իսկ ԱՄՆ-ը և Անգլիան կլանում էին նրա արտահանման համապատասխանաբար 40 և 33%-ը: Կանադան դարձավ հումքի և կիսաֆաբրիկատների գլխավոր մատակարարներից մեկը համաշխարհային շուկայում:

Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին Կանադան հակահիտլերյան խմբավորման անդամներից էր: Թեև զինված ուժերի թվաքանակը կազմում էր 700 հազար մարդ, զինվորական ստորաբաժանումների մեծ մասը չմասնակցեց ակտիվ ռազմական գործողություններին: Ուստի՝ քիչ էին Կանադայի կորուստները պատերազմի ժամանակ՝ 42 հազար զինվոր ու սպա:

Պատերազմի տարիներին փոխվեց երկրի հումքային արտահանմամբ մասնագիտացումը: Թողարկվում էին մեծ քանակությամբ

զենք, զինամթերք, զարգանում էին այլումինի, երկաթի և ուրանի արդյունաբերության ճյուղերը: Պատերազմական ժամանակաշրջանում մեքենաշինության արտադրանքն աճեց եռակի, ստեղծվեց ավիացիոն և էլեկտրատեխնիկական արդյունաբերություն: 1940-1944թթ. գյուղատնտեսական արտադրանքի համախառն ծավալը 1935-1939թթ. համեմատությամբ աճեց 31,5%-ով: Հատկապես արագ զարգանում էր անասնապահությունը:

1943թ. սկսած արդյունաբերության շատ ճյուղերի արտադրանքի աճը դադարեց, դրանցում նկատվեցին լճացման երևույթներ: 1946-ին արդյունաբերական արտադրությունը կրճատվեց 16%-ով: Ձգձգվեց հետպատերազմյան վերափոխադրման ժամանակահատվածը: Միայն 1950թ. Կանադայի վերամշակող արդյունաբերությունն իր ֆիզիկական ծավալով հասավ ռազմական ժամանակաշրջանի առավելագույն մակարդակին:

Պատերազմի ժամանակ ուժեղացան երկրի տնտեսության զարգացման պետական-մոնոպոլիստական միտումները: 1940թ. ստեղծվեց զենքի և մատակարարման նախարարություն, որը ղեկավարում էր խոշոր ընկերությունների գործունեությունը և վերահսկում ռազմական կարիքների գծով բյուջետային փոխադրումների բաշխումը: Ընդսմին պետական-մոնոպոլիստական կապիտալիզմի զարգացումը տեղի էր ունենում ԱՄՆ-ի հետ ռազմատնտեսական ինտեգրման պայմաններում: Պետությունը սահմանեց գների հսկողություն, իրականացրեց աշխատավարձի սառեցման քաղաքականություն:

Կանադայի տնտեսության հետպատերազմյան զարգացման յուրահատկությունը արդյունաբերության հումքային ճյուղերի արտադրանքի արագ աճն էր՝ ԱՄՆ-ի հետ տնտեսական միության ազդեցությամբ: Թեև համաշխարհային կապիտալիստական տնտեսության մեջ Կանադան հանդես էր գալիս որպես զարգացած երկրների ներկայացուցիչ, այնուամենայնիվ նրա տնտեսության կառուցվածքը տարբերվում էր հայթայթող արդյունաբերության տեսակարար կշռով, ինչը նրան մոտեցնում էր զարգացող երկրներին:

Երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտից հետո սկսվեց յուրացումը Կանադայի նոր շրջանների, որոնք զբաղեցնում էին տարածքի շուրջ 80%-ը: 1950-1960-ական թվականներին կանադական հյուսիսում և հեռավոր արևմուտքում ստեղծվեցին բազմաթիվ արդյունաբերական կենտրոններ: Սակայն վերամշակող արդյունաբերության ճյուղերի զգալի մասը թողարկում էր ոչ թե վերջնական արտադրանք, այլ արտահանվող կիսաֆաբրիկատ: Համաշխարհային շուկայում մեծ պահանջարկ էին վայելում Կանադայում արդյունահանվող գունավոր և ազնիվ մետաղները: Աճեցին այլումինի, փայտամշակման, գազի և նավթի արդյունաբերության, էներգետիկայի արտադրական հզորությունները:

Մեքենաշինության բաժինը կազմում էր երկրի վերամշակող արդյունաբերության 20%-ը, մինչդեռ ԱՄՆ-ում մեկ երրորդը: Ամերիկյան մոնոպոլիաները վարկավորում էին Կանադայի մեքենաշինության այն ճյուղերը, որոնք ներկայացնում էին երկրի մասնագիտացումը՝ որպես գյուղատնտեսական արտադրանքի խոշոր արտադրողներ: ԱՄՆ-ի դուստր ձեռնարկությունները Կանադայում չէին գնում այդ երկրի սարքավորումը, այլ նոր ձեռնարկությունները հագեցնում էին ամերիկյան մեքենաներով: Փաստորեն կանադական մեքենաշինությունը չէր ապահովում երկրի ներքին պահանջմունքը, և սարքավորման մեծ մասը ներկրվում էր ԱՄՆ-ից:

1950-1960-ական թվականներին հիդրոէներգետիկան դարձավ Կանադայի արդյունաբերության ամենարագ զարգացող ճյուղերից մեկը: Էներգատար ցելյուլոզի-թղթի արտադրությունը, լեռնահանքային արդյունաբերությունը և զուսավոր մետաղագործությունը օգտագործում էին երկրում սպառվող ամբողջ էլեկտրաէներգիայի 43%-ը:

Կանադայի տնտեսության մեջ բավականին նվազեց ագրարային հատվածի նշանակությունը: Վերջինիս բաժինը երկրի զուտ արդյունքում 1947թ. 20,1%-ից 1970-ին կրճատվեց մինչև 10,4%: Այդուհանդերձ գյուղատնտեսական արտադրությունն ապահովում էր զարգացման բարձր տեմպեր, լիովին բավարարում էր երկրի ներքին պահանջմունքները, իսկ ապրանքային արտադրանքի շուրջ մեկ երկրորդը արտահանվում էր: Հիմնական գյուղատնտեսական մշակաբույսը ցորենն էր, որի երեք քառորդը սպառվում էր արտասահմանում: Գյուղատնտեսության մեջ տեղի ունեցան կառուցվածքային լուրջ տեղաշարժեր, կրճատվեց բուսաբուծության բաժինը և ավելացավ անասնապահության արտադրանքի տեսակարար կշիռը: Երկրի գյուղատնտեսությանը զգալի վնաս հասցրեց «Մարշալի պլանը», որը նախատեսում էր հացահատիկ արտահանել ուրիշ երկրներ՝ «օգնության» նպատակով: Դրանով ԱՄՆ-ը դարձավ ցորենի արտահանման առաջատարը համաշխարհային շուկայում՝ Կանադային մղելով երկրորդ պլան:

ԱՄՆ-ում տեղի ունեցող ճգնաժամային երևույթների անմիջական բացասական ազդեցությունը Կանադայի տնտեսությանը ակնհայտ էր: «Սառը պատերազմի» ժամանակաշրջանում ԱՄՆ-ի տնտեսության ռազմականացման հետևանքով կուտակվեցին ռազմավարական հունքի խոշոր պաշարներ, որոնք արտադրվում էին Կանադայում: Սակայն 1956թ. սկսած համաշխարհային շուկայում զգացվում էր դրանց ավելցուկ: ԱՄՆ-ը արագ տեմպերով զարգացրեց լեռնահանքային արդյունաբերության շատ ճյուղեր, որով ուղղակի վնաս հասցվեց Կանադայի տնտեսությանը:

1950-1960-ական թվականներին արտադրության համակենտրոնացմամբ կանադական արդյունաբերությունը մոտեցավ ԱՄՆ-ի մակարդակին: Օտարերկրյա կապիտալի մրցակցությունը կանադացիներին ստիպում էր մեծացնել արտադրության չափերը: Համակենտրոնացման աճին նպաստեց կապիտալատար ճյուղերի զարգացումը: Մոնոպոլացման մակարդակը բարձր էր լեռնահանքային, ավտոմեքենաշինական, ցելյուլոզի-թղթի արդյունաբերության ճյուղերում: ԱՄՆ-ի կապիտալ ներդրումները Կանադայում 1955թ. 13.5 մլրդ դոլարից 1970թ. հասան 43,7 մլրդ-ի կամ աճեցին 3,3 անգամ և կազմում էին երկրի արտասահմանյան բոլոր ինվեստիցիաների 80%-ը:

Համակենտրոնացման մակարդակով Կանադան աշխարհում զբաղեցնում էր առաջին տեղերից մեկը: 1960-ական թվականների սկզբին վերամշակող արդյունաբերության մեջ խոշորագույն մոնոպոլիաները, որոնք կազմում էին բոլոր ընկերությունների 1%-ը, թողարկում էին ճյուղի համախառն արտադրանքի 39%-ը: Ընդամին՝ 28 ընկերությունների պատկանում էր նշված ճյուղի բոլոր ձեռնարկությունների իրական ակտիվների 20%-ը: Համակենտրոնացումն ավելի մեծ մասշտաբների էր լեռնահանքային արդյունաբերության մեջ: Հինգ կորպորացիաներին բաժին էր ընկնում երկրում արդյունահանվող մետաղների հանքաքարի արժեքի 63%-ը:

Քննարկվող ժամանակաշրջանում Կանադայում զարգացավ պետական-մոնոպոլիստական կապիտալիզմը: Մեծացավ պետական սեփականության բաժինը: Հողի գերակշիռ մասը մնում էր պետության տնօրինությանը: 1950-ական թվականների ավարտին արտահանման կողմնորոշումով գյուղատնտեսական արտադրությունը կլանում էր պետական բոլոր սուբսիդիաների 60%-ը: Դեռ 1935 թվականից գոյություն ուներ հացի պետական մենաշնորհ, երբ պետությունը ֆերմերներից զնում էր հացահատիկը և վաճառում երկրի ներսում ու արտասահմանում:

Պետությունը ներդրումներ էր կատարում նավագնացության ոլորտում, ոսկու և ածխի արտադրության մեջ, օժանդակում գիտատեխնիկական աշխատանքների ծավալմանը: Պետական կապիտալ ներդրումներն ուղղվում էին ճանապարհների, վարչական շենքերի շինարարությանը: Ամբողջ ներդրումների մեջ պետության բաժինը 1957թ. կազմում էր 30, իսկ հինգ տարի անց՝ 35%:

Նշված ժամանակաշրջանում պետությունը մշակեց «ճանապարհ դեպի ռեսուրսները» ծրագիրը, որը նախատեսում էր ավելի քան 100 ավտոճանապարհների կառուցում: Արդեն 1960-ական թվականների ավարտին 7684 կմ երկարությամբ նոր ուղու յուրացման այդ ծրագիրը հաջողությամբ կատարվեց:

Կանադայի բանկային համակարգի մոնոպոլացումն ավելի մեծ մասշտաբներ ընդունեց, քան զարգացած կապիտալիստական այլ երկրներում: Երկրում գործում էր ընդամենը 10 առևտրային բանկեր: 1960-ական թվականների սկզբին միայն երեք խոշորագույն բանկերում կենտրոնացվել էր բոլոր ակտիվների 70%-ը, իսկ ամենախոշոր՝ «Ռոյալ բենկ օֆ Կենադա» և «Կենադիեն իմպերիալ բենկ օֆ քոմերս» բանկերն իրենց կանոնադրական կապիտալի մեծությամբ աշխարհում զբաղեցնում էին համապատասխանաբար 9-րդ և 11-րդ տեղերը: Ի տարբերություն արդյունաբերության մեջ ազգային կապիտալի, Կանադայի բանկային համակարգում ազգային կապիտալը հաստատուն էր: Դիտարկվող ժամանակաշրջանում կանադական խոշոր բանկերը ընդլայնեցին արտահանման վարկավորման մասշտաբները, թեև իրենց միջոցները հիմնականում ներդնում էին պետական արժեթղթերում:

Երկրի ֆինանսական կապիտալը գերազանցապես զոյանում էր արտասահմանյան (առաջին հերթին՝ ամերիկյան) կապիտալի հետ ազգային բանկային կապիտալի սերտաճմամբ: Բնակչության 1 շնչին ընկնող արտաքին կապիտալ ներդրումների մեծությամբ Կանադան գերազանցում էր ԱՄՆ-ին: Ընդլայնվում էին երկրից կապիտալի արտահանման չափերը: Եթե 1945-1965թթ. արտասահմանյան կապիտալ ներդրումները Կանադայի տնտեսության մեջ աճեցին 3,2 անգամ, ապա երկրի արտաքին ինվեստիցիաները՝ 3,5 անգամ: Վերջիններիս առյուծի բաժինը պատկանում էր մասնավոր կապիտալին, թեև զգալի էր պետության մասնակցությունը կապիտալի արտակրմանը: Կանադական կապիտալը լայնորեն կիրառվում էր ԱՄՆ-ի արդյունաբերության մեջ, Լատինական Ամերիկայում:

Չարկ է նշել, որ հյուսիսամերիկյան ինտեգրումը Կանադային դարձրեց ԱՄՆ-ի տնտեսության հունքային կցորդը: Այդ երկրների միջև կային նաև ուրիշ բնույթի հակասություններ: Կանադայի ֆինանսական օլիգարխիան ԱՄՆ-ի մոնոպոլիաների դեմ պայքարում էր շահույթների համար, քանի որ նրան չէր գոհացնում «կրտսեր գործընկերոջ» դերը: Կանադական բուրժուազիայի որոշակի մասը պահանջում էր տնտեսության առավել շահութաբեր ճյուղերից ամերիկյան կապիտալի տարհանում: Ամերիկյան ծագման կանադական ֆիրմաները կատարում էին ԱՄՆ-ի պահանջներն այլ երկրներ մի շարք ապրանքների մատակարարումն արգելելու վերաբերյալ, որ խփում էր զուտ կանադական ֆիրմաների շահերին, ավելացնում արտաքին առևտրական հաշվեկշռի ճեղքվածքը, ազդում զբաղվածությանը:

1950-ական թվականների երկրորդ կեսից ծավալվեց Կանադանում ամերիկյան կապիտալի դուրսմղման գործընթացը: Դրա առիթը ԱՄՆ-ի հետ Կանադայի առևտրային հաշվեկշռի մշտական պակա-

սուրդն էր: 1964-1965թթ. առաջին անգամ երկիրն ունեցավ դրական սալդո ԱՄՆ-ի հետ առևտրային հաշվեկշռում: Պատճառը ԱՄՆ-ից ներմուծվող ապրանքների մաքսատուրքերի 15%-ով բարձրացումն էր, ինչպես նաև կանադական նավթի, գազի և երկաթի հանքաքարի պահանջարկի մեծացումը: Վերջապես, Կանադայից արտահանվող ապրանքների խթանմանն ազդեց կանադական դոլարի դեվալվացումը 1962թ.:

Հարկ է նկատել, որ համաշխարհային տնտեսական ճգնաժամերը Կանադային խոցեցին ավելի ուժեղ, քան ԱՄՆ-ին: Ընդ որում Կանադայում գործազրկության մակարդակն առավել բարձր էր, քան ցանկացած այլ կապիտալիստական երկրում:

1970-ական թվականներին ևս կանադական տնտեսությունը կախվածության մեջ էր մնում ԱՄՆ-ից: Կանադայի մոնոպոլիստական կապիտալը գերիշխող դիրքեր ուներ միայն սև մետալուրգիայում և սննդի արդյունաբերության մեջ: Կանադական ֆիրմաները հիմնականում ընդգրկում էին մանր ու միջին, չմոնոպոլացված ձեռնարկությունները: Հետպատերազմյան շրջանում Կանադայի մոնոպոլիստական կապիտալը գերազանցապես գործում էր տրանսպորտում, առևտրում, կոմունալ տնտեսությունում, ֆինանսավարկային համակարգում:

1970-1980-ական թվականներին երկրում զարգացան ցելլուլոզի-թղթի, մետաղագործական, ավտոմեքենաշինական, սննդի արդյունաբերության ճյուղերը: Այդ շրջանի հումքային և էներգետիկ ճգնաժամի պայմաններում Կանադան ինդուստրիալ երկրներից միակն էր, որի տնտեսությունն ապահովված էր արդյունաբերական ռեսուրսների բոլոր տեսակներով: 1973-1979թթ. համաշխարհային շուկայում նավթի գները աճեցին 15, իսկ հանքային հումքինը՝ 8 անգամ: Մեծացավ Կանադայի դերը համաշխարհային կապիտալիստական տնտեսության մեջ, Կանադան սկսեց կիրառել ինքնուրույն տնտեսական քաղաքականություն: Տեղի ունեցավ պետական-մոնոպոլիստական կապիտալիզմի դիրքերի ամրապնդում: Տնտեսական կարիքների համար պետական ծախսերը կազմում էին ՀՆԱ-ի 40%-ը:

Դիտարկվող ժամանակաշրջանում կանադական պետությունը ուշադրությունը բևեռեց ամերիկյան մոնոպոլիաներին երկրի տնտեսությունից դուրս մղելուն: Էներգետիկ ճգնաժամի պայմաններում պայքար էր զնում կանադական նավթի համար: 1973-ին Կանադայի նավթի 60, գազի 30%-ը վաճառվում էր ԱՄՆ-ում, ընդ որում՝ ավելի ցածր գներով, քան ԱՄՆ-ի սեփական էներգակիրների գներն էին: 1980-ական թվականներին Կանադան իրագործում էր ԱՄՆ նավթի և գազի արտահանման սահմանափակման քաղաքականություն՝ միաժամանակ բարձրացնելով դրանց գները: Երկրի նավթագազային արդյունաբերության նկատմամբ ամերիկյան հսկողության վերա-

ցումը նշանակում էր Կանադայի տնտեսության մեջ ԱՄՆ-ի բոլոր ինվեստիցիաների մեկ հինգերորդի սառեցում: Ամերիկյան կապիտալի ներհոսքը նվազեցնելու նպատակով պետությունը կանադական ֆիրմաներին հատկացնում էր ամեն տեսակի արտոնություններ՝ և գեղչեր:

1970-ական թվականներին սրվեցին կանադական տնտեսության տարածաշրջանային հարաբերություններին վերաբերող հակասությունները: Կանադայի արդյունաբերական կենտրոնները մնում էին Օնտարիոն և Քվեբեկի հարավ-արևելյան մասը: 1976թ. դրանց բաժին էր ընկնում երկրի վերամշակող արդյունաբերության արտադրանքի 68%-ը: Միաժամանակ, արագ զարգանում էին Ալբերտի, Բրիտանական Կոլումբիայի, Սասկաչևանի նահանգները: Դրանք Օնտարիոյին սկսեցին գերազանցել բնակչության մեկ շնչին ընկնող կապիտալ ներդրումների և արտադրության ծավալներով: ԱՄՆ-ի հետ ինտեգրումը նշված շրջանները վեր էր ածում հարավային հարևանին սպասարկող գոտիների: Ուստի, դրանցում պահանջներ էին առաջադրվում սեփական նավթը և դրա վաճառքից ստացված եկամուտներն ազատորեն տնօրինելու վերաբերյալ:

Քննարկվող ժամանակաշրջանում Կանադայի տնտեսությունը զարգանում էր անհամաչափ: Կարճատև վերելքը փոխարինվեց 1974-1975թթ. ճգնաժամով, երբ արդյունաբերական արտադրության ծավալը կրճատվեց 5%-ով: Դրան հաջորդեց տևական լճացման շրջանը, իսկ 1979-1982թթ.՝ նոր ճգնաժամը: Ամենից շատ տուժեց հայթայթող արդյունաբերությունը: Ներքին ազգային արդյունքը նվազեց 7,9%-ով, գործազուրկների թիվը հասավ 1,5 մլն մարդու, որը կազմում էր աշխատունակ բնակչության 12,8%-ը:

Երկրի տնտեսության շուկայական կառուցվածքների զարգացմանը ազդեց ԱՄՆ-ի հետ երկար սահմանը, որը, մի կողմից՝ ստիպում է միջոցներ ձեռնարկելու ազգային արդյունաբերությունը հզոր հարևանից պաշտպանելու համար, մյուս կողմից՝ որոշում է ապրանքների, կապիտալի և աշխատանքի հոսքերի գլխավոր ուղղությունը: Միաժամանակ, Կանադայի տարածքում ամերիկյան ընկերությունների գործունեությունը նպաստում է զբաղվածության աճին վերամշակող արդյունաբերության մեջ, որտեղ ձեռնարկությունների երկու երրորդը այդ ընկերությունների ստորաբաժանումներն են:

Հանածոների և բնական այլ ռեսուրսների խոշոր պաշարների առկայությունը նշանակալի տարածքների և բնակչության փոքր թվաքանակի պայմաններում Կանադային խիստ կախման մեջ է դնում համաշխարհային շուկայի կոնյունկտուրայից և պայմանավորում վերամշակող արդյունաբերության հարաբերական թուլությունը ազգային տնտեսության մեջ: Երկրի հայթայթող ձեռնարկությունների մեծ մասը ԱՄՆ-ի և Արևմտյան Եվրոպայի ուղղահայաց ինտեգրված

Ֆիրմանների սեփականությունն է: Մինչդեռ նշված ընկերությունների վերանշակող ձեռնարկությունները տեղաբաշխված են ԱՄՆ-ում և Արևմտյան Եվրոպայում:

Հենց արտասահմանյան սեփականության գերակշռությամբ է պայմանավորված սեփականության համակենտրոնացման բարձր աստիճանը Կանադայում: Այսպես՝ եթե ֆիրմանների 0,4%-ի բաժնետիրական կապիտալում խոշոր սեփականատերերի բաժինը կազմում է 1-5, 8,5%-ի մոտ՝ 10-20, ապա 31%-ի բաժնետիրական կապիտալում շուրջ կեսը, իսկ 37%-ի բաժնետիրական կապիտալում կեսից մինչև 100%: Մյուս կողմից՝ թեև խոշորագույն ֆիրմաների միջին չափը այստեղ ավելի փոքր է, քան ԱՄՆ-ում, տնտեսության հսկողությունն իրականացվում է ոչ թե ընկերությունների, այլ՝ այսպես կոչված «ստվերային խմբերի» միջոցով:

Ամբողջությամբ վերցրած XX դարի ավարտին 100 խոշորագույն կանադական կորպորացիաներ արտադրում էին արդյունաբերական արտադրանքի կեսը (ավելացված արժեքով), իսկ 4 առաջատար ֆիրմաների բաժին էր ընկնում լրիվ վաճառքի 60%-ից ավելին: Կանադայի տնտեսության մեջ համակենտրոնացման բարձր մակարդակը բնորոշող գլխավոր գործոնը ձեռնարկության նվազագույն արդյունավետ չափի համեմատությամբ շուկայի ոչ մեծ ծավալներն են: Այդ գործոնին ավելանում են արտահանման սահմանափակ հնարավորությունները և կառավարության կողմից կիրառվող՝ արտասահմանյան արտադրողներից ազգային ճյուղերի տարիֆային պաշտպանությունը:

Կանադայում, այլ երկրների համեմատությամբ արժեզրկման տենպերն պայմանավորված է մրցակցության աջակցության արդյունավետ քաղաքականությամբ: Ազգային օրենսդրությունը մրցակցության պաշտպանության բնագավառում կիրառվում է երկրի տարածքում բիզնես ունեցող գործարար ձեռնարկությունների բոլոր տեսակների նկատմամբ, անկախ դրանց ազգային պատկանելիությունից:

Մինչև 1980-1990-ական թվականները Կանադայում բավականին մեծ չափեր ուներ պետական հատվածը, որը բացատրվում էր տնտեսական զարգացման գործում պետության ավանդական նշանակալի դերով: 1983թ. պետությունը վերահսկում էր 26% հիմնական ֆոնդով և 35% ամբողջական զբաղվածության ձեռնարկությունների գործունեությունը: Դաշնային մակարդակի պետական ձեռնարկությունների ընդհանուր քանակը նույն տարում կազմում էին 73 մայր ընկերություն և 81 մասնաճյուղ, իսկ նահանգների մակարդակինը՝ համապատասխանաբար՝ 228 և 187:

Կանադայում գործում է սեփականության երկակի ստանդարտ: Ճյուղը, օրինակ, բաղկացած է երկու խոշոր ֆիրմաներից, որոնցից

մեկը մասնավոր է, մյուսը՝ պետական, և մեկը մյուսի հետ որոշակի մրցակցության մեջ է:

Բնական մենաշնորհային ճյուղերի գործունեությունը կարգավորվում է պետական կառավարման դաշնային և տարածաշրջանային (ռեգիոնալ) մարմինների միջև իրավասությունների բաժանմամբ: Իրենց հերթին ռեգիոնալ (նահանգների կտրվածքով) մարմինները իրավասությունները բաժանում են կարգավորման անկախ գործակալությունների, մունիցիպալիտետների և պետական կորպորացիաների միջև: Օրինակ՝ երկաթուղիները, ավիափոխադրումները և ջրամատակարարումը Կանադայի տրանսպորտային հանձնաժողովի իրավասության շրջանակում են, մինչդեռ բեռնատար ավտոփոխադրումներն ինքնուրույն կարգավորվում են յուրաքանչյուր նահանգի տրանսպորտային գործակալությունների կողմից: Հեռախոսային կապի 70%-ը ենթարկվում է ռադիոյի, հեռուստատեսության և հեռահաղորդակցության հանձնաժողովին, իսկ մնացած 30-ը նահանգների կարգավորող գործակալություններին: Խողովակաշարերը գտնվում են Ազգային էներգետիկ ընկերության իրավասության տակ, որը պատասխանատու է նաև էլեկտրաէներգիայի արտահանումը կարգավորելու համար: Գազամատակարարումը և էլեկտրաէներգիայի տեղական մատակարարումները կարգավորվում են նահանգների հատուկ գործակալությունների և մունիցիպալ կառավարությունների միջոցով:

1980-ական թվականներին Կանադայում տեղի ունեցավ մասնավորեցման գործընթաց և ապակարգավորումը ավելի փոքր չափերի էր, քան ուրիշ երկրներում: Մասնավորեցումը Կանադայում ընդունեց պետական սեփականության մի մասը՝ մասնավորին օտարելու ձև (ձեռնարկության լրիվ կամ մասնակի վաճառքի միջոցով): Ապապետականացման հետևանքով ուժեղացան շուկայական միտումները:

1990-ական թվականներին, XXI դարի սկզբին Կանադան ապահովեց տնտեսական աճի համեմատաբար բարձր տեմպեր և ներկայումս իր արժանի տեղն է զբաղեցնում աշխարհի հզոր երկրների ռեյտինգում:

9.7.2. Իտալիա

Իտալիայի տնտեսությունը XIX դարում զարգանում էր դանդաղ, որ ֆեոդալական հարաբերությունների առկայության և տարածքային մասնատվածության հետևանք էր: Այստեղ արդյունաբերական հեղաշրջումն սկսվեց ուշ՝ XIX դարի 40-ական թվականներին և ավարտվեց միայն դարավերջին: Իտալիան մոնոպոլիստական կապիտալիզմի դարաշրջան մուտք գործեց առաջատար բուրժուական

երկրներից բավական ուշացած: Երկրում առաջին մոնոպոլիստական միավորումներն ի հայտ եկան 1898-1907թթ. (արդյունաբերական վերելքի շրջանում):

1922թ. Իտալիայում իշխանության գլուխ անցավ Մուսոլինին՝ երկրում հաստատելով ֆաշիստական դիկտատուրա: Նա կառավարեց մինչև 1943թ.: Այդ տարիներին ուժեղացավ մոնոպոլիաների դերը, զարգացավ պետական-մոնոպոլիստական կապիտալիզմը: 1935-1936թթ. Իտալիան օկուպացրեց Եթովպիան, իսկ 1939թ.՝ Ալբանիան: Մեկ տարի անց (1940թ.) ֆաշիստական Գերմանիայի կողմից ներգրավվեց երկրորդ համաշխարհային պատերազմի մեջ: Պատերազմական շրջանում մոնոպոլիաները գերիշխող դիրք գրավեցին երկրի ավտոմեքենաշինությունում, ցեմենտի, քիմիական, ռետինի արդյունաբերության մեջ, էլեկտրաէներգետիկայում, աճեց ֆինանսական կապիտալի հզորությունը: Իրենց կապիտալների մեծությամբ և գործունեության մասշտաբներով աչքի էին ընկնում այնպիսի խոշորագույն բանկեր, ինչպիսիք էին Իտալական վարկային, Իտալական առևտրային և Հռոմի բանկերը: Պետությունն ակտիվորեն միջամտում էր երկրի տնտեսական գործունեությանը:

Պատերազմը լուրջ վնաս հասցրեց Իտալիայի տնտեսությանը, խիստ վատթարացավ աշխատավորների դրությունը: Կրճատվեց արդյունաբերական արտադրության ծավալը: Եթե 1918թ. արդյունաբերական արտադրության ինդեքսն ընդունենք 100%, ապա 1943թ. այն կազմեց 79,8%: Ամբողջությամբ կազմալուծվեց երկաթուղային տրանսպորտի աշխատանքը: Պետական բյուջեի պակասուրդը կազմեց 86,2 մլրդ լիր, իսկ պետական պարտքը՝ 1 տրիլիոն լիր: Բարձրացան հարկերի չափերը, երկրում մտցվեց նորմավորված մատակարարման համակարգ սպառողական ապրանքների բոլոր տեսակներով:

Պատերազմը խլեց շուրջ 500 հազար իտալացու կյանք: Ավերվեց արդյունաբերական ձեռնարկությունների 20, երկաթուղագծերի՝ 40, խճուղային ճանապարհների 60%-ը: Պատերազմի ավարտին արդյունաբերական արտադրության ծավալը կազմեց նախապատերազմյան մակարդակի 50, գյուղատնտեսական արտադրությանը՝ 40%-ը: Մեծ չափերի նյութական արժեքներ բռնագրավեցին ամերիկացիները և անգլիացիները, ինչը ևս բացասական ազդեց Իտալիայի տնտեսությանը: Ուժեղացավ արժեզրկումը, գործազուրկ էր 2 միլիոնից ավելի մարդ:

Փարիզում 1947թ. փետրվարի 10-ին կնքված պայմանագրով Իտալիան կորցրեց իր գաղութները և պարտավորվեց վճարել մեծ տուգանքներ:

1940-ական թվականների երկրորդ կեսին սկսվեց Իտալիայի տնտեսության վերականգնման գործընթացը: Դա հնարավոր էր

միայն ամերիկյան օգնության շնորհիվ: ԱՄՆ-ը անշահախնդիր չէր, և այդ օգնության դիմաց ամերիկյան մոնոպոլիաները ուժեղացրին իրենց միջամտությունը Իտալիայի տնտեսությանը, ամրապնդեցին սեփական դիրքերը: 1948թ. փետրվարին Իտալիայի և ԱՄՆ-ի միջև կնքված պայմանագրով ամերիկացիները կարող էին Իտալիայի ամբողջ տարածքում զբաղվել արդյունաբերական և կոմերցիոն գործունեությամբ: 1949թ. Իտալիան դարձավ Յուլիս-Ատլանտյան Դաշինքի (ՆԱՏՕ) անդամ: 1948թ հունիսից օգնություն էր ստանում «Մարշալի պլանով»: Դրանով հանդերձ՝ իտալական արդյունաբերությունը նախապատերազմյան մակարդակին հասավ միայն 1950-1951թթ.:

Նշված շրջանում էլ ավելի ուժեղացավ պետության միջամտությունը տնտեսությանը, որ բացատրվում էր երկրի ինդուստրացման գործում մասնավոր կապիտալի անկարողությամբ, բազմաթիվ մոնոպոլիստական միավորումներ սնանկացումից փրկելու անհրաժեշտությամբ: Պետական-մոնոպոլիստական կապիտալիզմի զարգացումը Իտալիայում արտացոլվում էր նաև մետաղագործական, նավթաքիմիական և արդյունաբերության այլ ճյուղերի խթանման ծրագրերում: Ստեղծվեցին հատուկ վարկային ինստիտուտներ, պետական ԷՆԻ նավթագազային միավորումը, Յարավի դրամարկը (հարավային շրջանների տնտեսական զարգացումը ֆինանսավորելու համար):

Առաջընթաց կատարվեց գյուղատնտեսության մեջ: Հետպատերազմյան առաջին տարիներին ընդունվեց օրենք կոոպերատիվներին այն կալվածատիրական հողերի հանձնման մասին, որոնք չէին մշակվում: Հողի վարձակալման դիմաց տրվող վճարները փոխվեցին այն հաշվով, որ վարձակալները ստանային բերքի ավելի մեծ մասը: 1948թ. հունվարի 1-ից ուժի մեջ մտավ Իտալիայի նոր սահմանադրությունը, որը սահմանափակում էր խոշոր հողատիրությունը, նպատակ դնում օգնելու կոոպերատիվներին և մանր ֆերմերներին: Դրա շնորհիվ գյուղացիները 1945-1947թթ. հարավային շրջանների կալվածատերերից վերցրին շուրջ 200 հազար հեկտար չմշակված հողեր:

1950-1960թթ. Իտալիայի տնտեսությունը կտրուկ վերելք ապրեց, և Իտալիան տեղ զբաղեցրեց արդյունաբերական զարգացած երկրների շարքում: Ագրարային-ինդուստրիալ պետությունից վերածվեց ինդուստրիալ-ագրարային պետության: Նշված ժամանակաշրջանում արդյունաբերական արտադրանքի աճի տեմպերը (միջին տարեկան մոտ 10%) այնքան բարձր էին, որ Իտալիայում, ինչպես ԳՖՀ-ում, խոսում էին «տնտեսական հրաշքի» մասին: 1950-1960թթ. տնտեսական զարգացման տեմպերով Իտալիան Եվրոպայում զբաղեցրեց առաջին տեղը, աշխարհում երկրորդ՝ ճապոնիայից հետո:

Համախառն ներքին արդյունքը 1951-1970թթ. ավելացավ 5,4 անգամ, արդյունաբերական արտադրանքի ինդեքսը 21,7-ից հասավ 100%-ի:

Արդյունաբերության մեջ կատարվեցին լուրջ կառուցվածքային տեղաշարժեր, արտադրանքի հիմնական մասը թողարկում էին վերամշակող արդյունաբերության ձեռնարկությունները: Արագ էին զարգանում ավտոմեքենաշինությունը, քիմիական արդյունաբերությունը (մասնավորապես՝ արհեստական թելերի արտադրությունը):

Ինչո՞վ էր պայմանավորված արդյունաբերական վերելքը Իտալիայում 1950-1960-ական թվականներին: Բնականաբար, ոչ մի հրաշք էլ չկար, արդյունաբերության զարգացումն խթանեցին մի շարք գործոններ: Իրագործվեցին հիմնական կապիտալի զանգվածային նորացում, գիտատեխնիկական առաջընթացի նվաճումների արմատավորում, արտաքին առևտրի ազատականացում: Օգտագործվում էր էժան աշխատուժ, համեմատաբար ցածր էին ռազմական ծախսերը: Իտալիան զգալի օգնություն ստացավ «Մարշալի պլանով», կայունացավ ազգային դրամը՝ լիրը: Բայց և այնպես, նույնիսկ մինչև այդ չտեսնված տնտեսական աճի պայմաններում, երկրում առկա էր գործազրկությունը: Աշխատավարձի աճի տեմպերը հետ էին մնում աշխատանքի արտադրողականության բարձրացման տեմպերից:

Երկրում արդյունաբերական վերելքն ընդհատվեց 1964-1965թթ. տնտեսական անկմամբ: Եթե 1960թ-ին արդյունաբերության արտադրանքի միջին տարեկան հավելաճը 15% էր, ապա 1964-1965թթ.՝ ընդամենը 4%: Դրանից հետո դարձյալ տեղի ունեցավ տնտեսության աշխուժացում:

Վիճակն այլ էր Իտալիայի հարավում, որտեղ դեռևս պահպանվել էին ֆեոդալական մնացուկները. հետ էր մնում անասնապահությունը: Այդ բոլորով հանդերձ՝ նշված ժամանակաշրջանում Իտալիայի գյուղատնտեսությունը ինտենսիվորեն մեքենայացվում և քիմիացվում էր, գործընթացներ, որոնք ուղեկցվում էին մանր և միջին տնտեսությունների սնանկացմամբ:

Տնտեսական վերելքին զուգընթաց տեղի էր ունենում մասնավոր մոնոպոլիստական միավորումների դիրքերի ամրապնդում:

1960-ական թվականների երկրորդ կեսին մոնոպոլիստական կապիտալի կառուցվածքում կատարվեցին փոփոխություններ. մեծացավ պետական և արտասահմանյան կապիտալի բաժինը: 1962թ. ազգայնացվեց էլեկտրաէներգետիկական արդյունաբերությունը («Էդիսոն» տրեստը): 1965թ. ստեղծվեց «Մոնտեդիսոն» սուպերմոնոպոլիան, որը 3 տարի անց պետական հսկողության ծիրում էր, քանի որ ԷՆԻ պետական միավորումը գաղտնի ձեռք բերեց «Մոնտեդիսոնի» արժեթղթերի հսկիչ ծրարը: Մասնավոր մոնոպոլիստական

խմբերը Իտալիայում հետ մղվեցին նաև օտարերկրյա ֆիրմաների կողմից:

Յետպատերազմյան տարիներին պետական-մոնոպոլիստական կապիտալիզմի զարգացումն իր արտահայտությունն էր գտնում նաև տնտեսական ծրագրավորման փորձերի մեջ: Սակայն դրանք էականորեն չազդեցին տնտեսության զարգացմանը:

1970-1971թթ. Իտալիայում տեղի ունեցավ տնտեսական ճգնաժամ, 1972թ. նկատվեց տնտեսության աշխուժացում, 1973թ.՝ վերելք: Բայց և այնպես, 1974-1975թթ. երկիրը դարձյալ տնտեսական ճգնաժամի մեջ էր, որն ընդգրկեց բոլոր զարգացած կապիտալիստական պետությունները և ուղեկցվում էր կառուցվածքային (հումքային, էներգետիկ, ֆինանսական, բնապահպանական) ճգնաժամերով: Ճգնաժամը հատկապես պատուհասեց Իտալիայի ավտոմեքենաշինությունը, նավթամշակման և պողպատածուլական արդյունաբերությունը:

1976թ. երկրում սկսվեց արդյունաբերական արտադրության նոր վերելք, առանձնակի էին հաջողությունները պողպատածուլության ոլորտում: Իտալիան «Ընդհանուր շուկայի» երկրների մեջ դուրս եկավ երկրորդ տեղը՝ պողպատի ձուլման ցուցանիշով: 1980թ. կեսերից երկրի տնտեսությունը դարձյալ ծանր ճգնաժամի մեջ էր, որը շարունակվեց 1981-1982թթ.: Միայն 1982թ. արդյունաբերական արտադրանքի թողարկումը կրճատվեց 2,4%-ով, արտադրական հզորությունների բեռնվածությունն ընկավ մինչև 70,3%, սնանկացավ 7340 ձեռնարկություն, մեծ վնասներ կրեցին հաստոցաշինությունը, քիմիական ինդուստրիան, մետաղագործությունը: Գործազուրկների թիվը կազմեց 2 մլն մարդ:

Արտադրության համակենտրոնացման մակարդակով Իտալիան զիջում էր ԱՄՆ-ին, Մեծ Բրիտանիային, ԳՖՅ-ին և մի քանի ուրիշ երկրների, բայց և այնպես, մոնոպոլիստական կապիտալի դիրքերը Իտալիայում ամուր էին: Մեծ ազդեցություն ունեին (1980-ական թվականներին) ԻՐԻ, ԷՆԻ պետական միավորումները, ինչպես նաև «ԻՖԻ-Ֆիատ», «Մոնտեդիսոն», «Պիրելլի» մոնոպոլիաները: Բանկային կապիտալի համակենտրոնացման աստիճանով Իտալիան զբաղեցնում էր առաջին տեղերից մեկը կապիտալիստական աշխարհում: Խոշոր բանկերի թվում են «Բանկո մացիոնալո դել լավորո», «Բանկո դի Ռոմա», ԻՄԻ, «Մեդիոկրեդիտո», «Կրեդիտո իտալիանո» և այլ բանկեր:

Ընդլայնվեց պետական հատվածը, որի տեսակարար կշիռը երկրի տնտեսությունում 1970-ական թվականների վերջերին կազմում էր 17%: Ստեղծվեց «Ջեպի» խոշոր պետական միավորումը, որը արդյունաբերությունը ֆինանսավորող ընկերություն էր, մեծացան ԻՐԻ, ԷՖԻՄ, ԷՆԻ միավորումների գործունեության մասշտաբները:

Ֆինանսական հոլդինգների միջոցով պետությունը վերահսկում է շատ բաժնետիրական ընկերությունների: Պետական սեփականության ոլորտում են կապը, երկաթուղիները, էլեկտրաէներգետիկան, լեռնահանքային, ռազմական արդյունաբերության շատ ձեռնարկություններ: Պետական ձեռնարկություններին բաժին են ընկնում թուջի ձուլման 94, գունավոր մետաղների ու բնական գազի արդյունահանման համապատասխանաբար՝ 95 և 97%-ը:

1970-ական թվականներին Իտալիայում շարունակվեցին տնտեսական ծրագրավորման փորձերը: Մշակվեցին այնպիսի համազգային ծրագրեր, ինչպիսիք էին «Պրոտեկտ-80-ը»՝ 1970-ական թթ., «Պանդոլֆիի պլանը»՝ 1979-1981թթ., «Լա Մալֆիի պլանը»՝ 1981-1983թթ. համար: Սակայն այդ ծրագրերը չկատարվեցին: Դրանց հակառակ՝ հաջողություն ունեցան ճյուղային և տարածքային տնտեսական ծրագրերը: 1981թ. ավարտին Իտալիայում իրականացվում էին 23 խոշոր ծրագրեր, որոնց թվում էր Վենետիկի պաշտպանության ծրագիրը:

Տնտեսության պետական-մոնոպոլիստական կարգավորման մեթոդների համակարգում կարևոր տեղ ունեւր բյուջետային կարգավորումը: 1970-ական թվականներին պետական բյուջեի ծախսերն աճեցին 10 անգամ: Չափազանց մեծ էր բյուջեի պակասուրդը, որը 1982թ. կազմում էր 52 տրիլիոն լիր կամ՝ համախառն ներքին արդյունքի 12%-ը: Իտալիայի պետական պարտքը 1970-ական թվականներին ավելացավ 17 անգամ:

Տնտեսական աճի տեմպերի զգալի իջեցմամբ հանդերձ՝ ժամանակակից Իտալիայի արդյունաբերական պոտենցիալը մեծ է: Արդյունաբերական արտադրության ծավալով Իտալիան ներկայումս «Արևմտաեվրոպական մեծ քառյակի» մեջ է (ԳՖՅ, Ֆրանսիա, Մեծ Բրիտանիա, Իտալիա):

Ի տարբերություն երկրի արդյունաբերության՝ զգալիորեն հետ է մնում գյուղատնտեսությունը, ինչի պատճառներից մեկը հողերի փոշիացումն է մեծ թվով տնտեսությունների միջև:

Իտալիայի տնտեսության զարգացման գործում մեծ է արտաքին առևտրի նշանակությունը. քանի որ չի բավականացնում սեփական հումքը, իսկ շատ ճյուղեր կողմնորոշված են արտահանմանը: Առկա է առևտրային և վճարային հաշվեկշիռների շարունակական ճեղքվածքը: Իտալիան դիմում է երկարաժամկետ արտասահմանյան փոխառությունների օգնությանը:

Արտաքին առևտրի կառուցվածքում նկատելի է ներմուծվող գյուղատնտեսական արտադրանքի, ինչպես նաև հայթայթող արդյունաբերության արտադրանքի մասնաբաժինների իջեցման միտումը, իսկ արտահանման կառուցվածքում գերակշռում է վերամշակող արդյունաբերության տեսակարար կշիռը: Ընդլայնվում են արտաքին

առևտրական կապերը Եվրոպական տնտեսական համագործակցության երկրների շրջանակում, մինչդեռ ԱՄՆ-ի, Ավստրալիայի և Արգենտինայի հետ տնտեսական կապերը թուլացել են:

XX դարի 90-ական թվականներին և XXI դարի սկզբին Իտալիայում դարձյալ առաջնությունը տրվել է արդյունաբերության վերանշակող ճյուղերի արագատեմպ զարգացմանը:

Իտալիան Եվրոմիության հիմնական անդամներից է, իր հաստատուն տեղն ունի աշխարհի առաջատար երկրների առաջին տասնյակում:

ՉԻՆԱՍՏԱՆԻ ԵՎ ԿՈՐԵԱՅԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ XX ԴԱՐՈՒՄ

10.1. ՉԻՆԱՍՏԱՆ

XIX դարի վերջին – XX դարի սկզբին Չինաստանը գաղութացված էր. երկրի արդյունաբերությունը գաղութարարների ձեռքին էր: Արտաքին առևտուրը, երկաթուղիները, ածխի արտադրության կեսը, տեքստիլ արդյունաբերության 40%-ը տնօրինում էին արտասահմանցիները:

Այդ շրջանում չինական բուրժուազիան խորհրդանշուն էին. 1) կոմպրադորները, որոնք փաստացի ծառայում էին արտասահմանյան կապիտալին (ազենտ-միջնորդներ), 2) բյուրոկրատական կապիտալը ներկայացնող բուրժուազիան, որը կապված էր պետական իշխանության հետ, 3) ազգային բուրժուազիան, որը կապված չէր արտասահմանյան կապիտալի հետ:

Խիստ անհամաչափ էր տեղաբաշխված արդյունաբերությունը: Վերջինիս երեք քառորդը բաժին էր ընկնում երկրի հյուսիսարևելյան շրջաններին: Միայն Շանհայում տեղաբաշխված էր թեթև արդյունաբերության կեսը: Մինչդեռ երկրի շրջանների մեծ մասում արդյունաբերություն չկար, իսկ բնակչության պահանջմունքները բավարարվում էին արհեստագործական արտադրանքով:

1924-1949թթ.՝ 25 տարի շարունակվեց չինական հեղափոխությունը, որը ներառում է քաղաքացիական, ինչպես նաև ճապոնիայի դեմ մղվող ազգային-ազատագրական պատերազմները: 1949թ. ստեղծվեց Չինաստանի ժողովրդական Հանրապետությունը: Սակայն տևական ռազմական գործողություններն ամբողջությամբ ավերել էին երկրի տնտեսությունը, և 1949թ. արդյունաբերական արտադրությունը 1940-ական թվականների սկզբի համեմատությամբ կրճատվեց կրկնակի, գյուղատնտեսության արտադրանքի ծավալը՝ 30-40%-ով: Աճեց ինֆլյացիան: Այսպես՝ եթե 1937թ. 100 յուանով կարելի էր գնել 2 կով, 1943-ին՝ մեկ հավ, 1946-ին՝ 1 ձու, ապա 1948թ.՝ ոչինչ: Նույնիսկ մեկ տուփ լուցկի հնարավոր չէր գնել: Սակայն Չինաստանի առանձնահատկությունն այն էր, որ խոշոր ձեռնարկությունները, որոնք հատկապես տուժել էին պատերազմից,

քիչ էին, իսկ գերակշռող արհեստագործական արտադրությունը համարյա չէր ենթարկվել քայքայման: Ուստի՝ տնտեսության վերականգնումը տեղի ունեցավ կարճ ժամանակահատվածում (1949-1952թթ.):

1950-1952թթ. Չինաստանում իրականացվեց ագրարային ռեֆորմ, ըստ որի կալվածատերերից բռնագրավվում էին սահմանված նորմայից ավելի հողը, անասունը և գույքը՝ նրանց թողնելով գյուղացիականին հավասար հողաբաժին: Բռնագրավված հողերը բաժանվում էին գյուղացիներին և դառնում նրանց սեփականությունը: Ռեֆորմի շնորհիվ յուրաքանչյուր գյուղացի դարձավ 1-3 մուլի (1 մուլ = 1/16 հա) չափով հողի սեփականատեր:

Ոչ լրիվ ազգայնացվեց արդյունաբերությունը: Գործընթացը վերաբերում էր միայն արտասահմանյան ձեռնարկություններին և բյուրոկրատական կապիտալին: Իսկ ազգային բուրժուազիային պատկանող ձեռնարկությունները չազգայնացվեցին: Դրանք աստիճանաբար պետք է դառնային սոցիալիստական՝ պետական կապիտալիզմի միջոցով:

1955թ. սկսվեց կապիտալիստական ձեռնարկությունների վերականգնվողումը՝ խառը պետական-կապիտալիստական ձեռնարկությունների: Ընդամից՝ շահույթի 25%-ը պետք է ստանար կապիտալիստը, 25%-ը՝ պետությունը, մեկ քառորդը ներդրվում էր արտադրության մեջ, մնացած մեկ քառորդն առանձնացվում էր բանվորների դրության բարելավման նպատակով: Հետագայում այդ կարգը փոխվեց. կապիտալիստներն ստանում էին իրենց ներդրած կապիտալի 5-7%-ը՝ միաժամանակ դառնալով աշխատավարձ ստացող պետական ծառայողներ: Ժամանակի ընթացքում կապիտալի դիմաց տոկոսների վճարումը պետք է դադարեցվեր:

Արդեն 1956թ., երբ սոցիալիստական (պետական) հատվածը երկրի ժողովրդական տնտեսության մեջ զբաղեցրեց առաջատար դիրք, պաշտոնապես հայտարարվեց սոցիալիզմի կառուցման մասին:

Հետագայում տնտեսության վերափոխմանը ազդեցին արտադրության ասիական եղանակի մնացուկները, ինչպես նաև ընդհանուր տնտեսական հետամնացությունը: Նույնիսկ 1960-ական թվականներին տնայնագործները առաջատար դիրքում էին երկրի արդյունաբերական արտադրության մեջ, քաղաքներում ապրում էր բնակչության միայն 14%-ը, իսկ բանվոր-ծառայողները կազմում էին ամբողջ բնակչության 7%-ը:

Գյուղացիության կոոպերացումն եռաստիճան բնույթի էր, և սկզբում գյուղացիները միավորվում էին աշխատանքային փոխօգնության խմբերում, որտեղ պահպանվում էր հողի և գույքի մասնավոր սեփականությունը. ընդհանուր էր միայն աշխատանքը: Այնու-

հետև անցում կատարվեց կիսասոցիալիստական տիպի կոոպերատիվներին. միավորվում էին արտադրության միջոցները, և միայն եկամուտների մի մասն էր բաշխվում ըստ աշխատանքի: Վերջապես՝ սոցիալիստական տիպի կոոպերատիվներում արդեն ամբողջ եկամուտն էր բաժանվում ըստ աշխատանքի: Նշված ձևով կոոպերատումն ավարտվեց 1957թ.:

Առաջին հնգամյակի տարիներին (1953-1957թթ.) սկսվեց երկրի ինդուստրացումը: Արդյունաբերական արտադրությունն աճեց 2,4 անգամ: Կառուցվեցին Անշանի մետալուրգիական կոմբինատը, ծանր արդյունաբերության, ավտոմոբիլային, տրակտորային գործարաններ: Միայն ԽՍՀՄ-ի ուժերով Չինաստանում կառուցվեց 170 ձեռնարկություն: Սակայն ցածր էին գուղատնտեսական արտադրության աճի տեմպերը, որոնք հնգամյակում կազմեցին 25%: Թույլ էր զարգանում թեթև արդյունաբերությունը: 1958թ. որդեգրվեց տնտեսության զարգացման «երեք կարմիր դրոշների» գլխավոր ուղղության, մեծ թռիչքի և ժողովրդական կոմունաների» նոր կուրս: Երկրորդ հնգամյակում (1958-1962թթ.) նախատեսվում էր արդյունաբերական արտադրությունը ավելացնել 6,5, գյուղատնտեսական արտադրությունը՝ 2,5 անգամ:

Չինաստանում համարում էին, որ «տնտեսության զարգացման վճռական գործոնը մարդն է, և ոչ թե՛ նյութական միջոցները», օգտագործելով բազմամիլիոն չին ժողովրդի մարդկային ուժերը, կարելի է շրջանցել տնտեսական զարգացման օրենքները: Քանի որ չին գյուղացին նաև արհեստավոր էր, կարող էր սեզոնային աշխատանքների արանքում զբաղվել արդյունաբերական արտադրանքի թողարկմամբ՝ դրանով ապահովելով ինդուստրիայի թռիչքածև աճ: Ուստի՝ սկսվեց «ժողովրդական կոմունաների» կազմակերպման գործընթացը: Դրանք և տնտեսական միավորումներ էին, և միաժամանակ վարչական շրջաններ: Մեկ կոմունայում ընդգրկված էր շուրջ 30 կոոպերատիվ: Նրա մեջ մտնում էին և արդյունաբերական ձեռնարկություններ, և շրջանային վարչակազմեր, և զինվորական մասեր: Կոմունաներում միավորված էր գյուղացիների ամբողջ գույքը, իսկ եկամուտները բաժանվում էին հավասարապես:

Կոմունաներում նյութական շահագրգռվածությանը փոխարինեց ռազմական կարգապահությունը: Իրականացվում էին զանգվածային միջոցառումներ, որոնց արդյունքները ողբալի էին: Այսպես, ամբողջ բնակչությունը զբաղվեց ագռավների ոչնչացմամբ՝ դրանցից ցանքսերը պաշտպանելու նպատակով, մինչդեռ արդյունքում բազմացան գյուղատնտեսությանը մեծ վնաս հասցնող միջատները: Հետևանքները աղետալի էին նաև մելիորացման բնագավառում. ամենուրեք կառուցված ոռոգման փոքր համակարգերը, պատճառ դարձան հողերի աղակալմանը և լվացմանը:

Ցածր էր գյուղատնտեսության մեքենայացման աստիճանը. մեքենաների օգնությամբ մշակվում էր վարելահողերի ընդամենը 6-7-%ը: Կրճատվեցին ցանքատարածությունները, արտադրանքի ծավալը: Այլևս չէին հրապարակվում տվյալներ գյուղատնտեսական արտադրության վերաբերյալ:

Արդյունաբերության գծով ևս նախատեսվում էին բարձր պլանային առաջադրանքներ, իսկ ձեռնարկություններն ի վիճակի չէին դրանք կատարել, ուստի՝ երկրում զարկ տրվեց տնայնագործական արտադրությանը: Յուրաքանչյուր կոմունայում կառուցվեցին դոմենյան պարզունակ վառարան, որտեղ հալում էին մետաղը: Փաստորեն՝ ամբողջ մետաղը դարձավ օգտագործման համար ոչ պիտանի: Երկրորդ հնգամյակում արդյունաբերական արտադրության ծավալը կրճատվեց կրկնակի:

1960թ. սկսած երկրում հրաժարվեցին «մեծ թռիչքի» քաղաքականությունից: Ընդունվեցին որոշ «ծախ սխալներ», փորձեր արվեցին դրանք ուղղելու (հատկապես գյուղատնտեսության մեջ):

«Մեծ թռիչքի» կրախից հետո սկսվեց «համահարթեցման» շրջանը: Հետագա անկումը կանխելու նպատակով հիմնական ուժերը նպատակամղվեցին գյուղատնտեսության և թեթև արդյունաբերության զարգացմանը: Գյուղատնտեսության մեջ ժողովրդական կոմունաներից անցում կատարվեց «արտադրական բրիգադների» կազմավորմանը: Բրիգադը բաղկացած էր 20-30 ընտանիքից, որի գլուխ կանգնած էր նրանց կողմից ընտրված գյուղացին: Գյուղացիներին նորից թուլատրվեց ունենալու օժանդակ տնտեսություն: Այդ շրջանի տնտեսական կուրսի հիմքը ժողովրդի սպառմանն ուղղվող ծախսերի կրճատումն էր, անցումը՝ համարյա անվճար աշխատանքին: Ինքնաապահովման նշանաբանն էր՝ աշխատել փաստացի անվճար, իսկ աշխատանքից ազատ ժամանակամիջոցում զբաղվել ինքնաապահովմամբ (վարելով բնատնտեսություն՝ ստեղծել գոյամիջոցներ):

Փաստորեն՝ պլանավորվում էր տնտեսական զարգացման երկու մակարդակ.

- 1) պարզունակ (արխաիկ) բնատնտեսություն, որի հաշվին պետք է ապրեր չին աշխատավորը (ինքնաապահովում),
- 2) պետական տնտեսություն, որը պետք է զարգանար ոչ այնքան խոշոր ֆինանսական ներդրումների, որքան համարյա անվճար աշխատանքի (մարդկային կապիտալի) շնորհիվ:

1966թ. Զինաստանում սկսվեց «կուլտուրական հեղափոխություն», որը տևեց 10 տարի և արգելակեց տնտեսական աճը, թեև երկրի պաշտոնական վիճակագրությունը փաստում էր տնտեսության հաջողությունները: Հացահատիկի արտադրությունը 1966-1976թթ. ըստ այդ վիճակագրության աճեց 34%-ով, շահագործման

հանձնվեց 1570 նոր արդյունաբերական ձեռնարկություն, ստեղծվեց ջրածնային ռումբ, տիեզերք դուրս եկան առաջին տիեզերական արբանյակները:

1970-ական թվականների կեսերին նորից քաղաքացիություն ստացավ ըստ աշխատանքի վարձատրության սկզբունքը: Գյուղացիներին թույլատրվեց շուկայում վաճառելու իրենց օժանդակ տնտեսությունների արտադրանքը: Սթերքները բաժանվում էին քարտով (խիստ սահմանափակ նորմաներով): Յուրաքանչյուր բնակիչ ամսական քարտով ստանում էր 15 կգ հացահատիկ (ալյուր և ձավարեղեն): Բնակչության մեծ մասը զրկված էր մսից և կաթից:

Չինաստանում վաղուց չէր կատարվում բնակարանային շինարարություն: Բնակտարածության պաշտոնական նորման 1 մարդու հաշվով 4 քմ էր, սակայն, փաստորեն, կազմում էր 1,5 քմ:

1970-ական թվականների վերջերին որոշարկվում էին Չինաստանի տնտեսական համակարգի հիմնական գծերը, որն ընդգրկում էր ֆինանսները, բանկային գործը, սոցիալական բնագավառը, գների և մթերքների բաշխման հսկողությունը: Դրա բնութագրող առանձնահատկությունը գերկենտրոնացումն էր:

Պետությունը ձեռնարկություններին մատակարարում էր արտադրության միջոցներ և գնում դրանց ամբողջ արտադրանքն իր սահմանած գներով: Տնօրինում էր ձեռնարկությունների բոլոր եկամուտները և ծածկում ծախսերը: Ժխտվում էր շուկայի և ապրանքային տնտեսության դերը, սովորական էր դարձել ապրանքային պակասուրդը: Կենսագործվում էր հավասարարության սկզբունքը: Երկրում դարձյալ պահպանվում էր արդյունաբերական և գյուղատնտեսական ապրանքների քարտային համակարգը (նորմավորված մատակարարումը): Աճեցին գները՝ ինչպես պետական առևտրում, այնպես էլ՝ շուկաներում: Գործում էր «սև շուկան», որտեղ գները 5-7 անգամ բարձր էին պետական հատվածի գներից: Ջանգվածային բնույթ էր կրում չարաշահությունը:

Երկրի տնտեսությանը ազդելու գլխավոր միջոցները ռազմավարչական և հարկադրական միջոցներն էին, բանակի օգտագործումը: Ռազմական կարիքներին հատկացվում էր պետական բյուջեի մեկ երրորդից ավելին: 1970-ական թվականների երկրորդ կեսին այստեղ դիտարկվեցին տնտեսական դժվարություններ, կրճատվեց ինչպես արդյունաբերական, այնպես էլ գյուղատնտեսական արտադրանքի ծավալը, աճեցին մթերքների ներկրման մասշտաբները, իջավ բնակչության կենսամակարդակը:

1978թ. դեկտեմբերին Չինաստանում ընդունվեց բարեփոխումների ծրագիր: Հաջորդ տարվանից ենթադրվում էր իրագործել կառավարման (տնտեսության անհաշվեկշռվածության վերացման), վերակառուցման (երկրի արդիականացման), կարգավորման (ֆինա-

նսական ռեսուրսները հեռանկարային ուղղություններում կենտրոնացնելու) և բարձրացման (արտադրանքի բարձր որակի ապահովման) քաղաքականություն:

Տնտեսական ռեֆորմի առանձնահատկություններն էին.

1. Հինաստանում ռեֆորմը սկսվեց տնտեսական և ոչ թե քաղաքական վերափոխումներից (ինչպես դա տեղի ունեցավ ԽՍՀՄ-ում և Արևելյան Եվրոպայի երկրներում):
2. Հիրականացվեց մասնավորեցում: Բանն այն է, որ մասնավոր, եսասիրական շահերը չեն համապատասխանում չինական մենթալիտետին: Բայց և այնպես, պետության բաժինը համախառն ազգային արդյունքում 70%-ից կրճատվեց մինչև 40%, իսկ պետական հատվածում զբաղվածների տեսակարար կշիռը 95%-ից նվազեց մինչև 18%-ի: Պետական ծախսերը համախառն ազգային արդյունքի 36%-ն էին, մինչդեռ հետագայում իջան հասնելով 13%-ի:
3. Հինաստանում պահպանվում էր վարչական պլանավորումը, իսկ շուկան ծառայում էր որպես լրացում: Պետությունը պլանավորում էր արդյունաբերական արտադրանքի կարևորագույն տեսակների արտադրությունը և սահմանում դրանց գները: Գյուղատնտեսական արտադրանքի հիմնական տեսակները գնվում են պետության կողմից՝ իր սահմանած գներով:

Վերափոխումների առաջին փուլը շարունակվեց մինչև 1984թ., և շեշտը դրվում էր գյուղական շրջանների զարգացման վրա: Ռեֆորմը, փաստորեն, սկսվեց գյուղատնտեսությունից, և տնտեսավարման գլխավոր ձևը դարձավ ընտանեկան կապալը: Սակայն հողը նախկինի նման մնում էր համաժողովրդական (պետական) սեփականություն:

Գյուղացին կապալով 50 տարով ստանում է միջինը 0,5 հա հող: Պետության հետ կնքվում է որոշակի քանակությամբ արտադրանքի մատակարարման պայմանագիր (պետական գնման գներով): Արտադրանքի մնացած մասը գյուղացին օգտագործում է իր հայեցողությամբ: Գյուղատնտեսական արտադրական բրիգադներում կիրառվում էր աշխատանքի արդյունքների համար «պատասխանատվության համակարգ», որին 1984թ. անցավ բոլոր արտադրական բրիգադների 99%-ը:

Նկատի առնելով այն հանգամանքը, որ չին գյուղացին ի սկզբանե զբաղվել է նաև արհեստներով, թույլատրվում էր օժանդակ գյուղացիական արհեստավորությունը: Ստեղծվեցին «գյուղական ձեռնարկություններ», որոնք գործում էին շուկայական օրենքներով: Գյուղի համախառն եկամտի կեսից ավելին ներկայումս տալիս են այդ ձեռնարկությունները: Բավական է նշել, որ 1980-ական թվա-

կանների ավարտին դրանք թողարկում էին Չինաստանի արդյունաբերության արտադրանքի մեկ հինգերորդ մասը:

Ընտանեկան կապալին անցումը խիստ բարձրացրեց գյուղացիության աշխատանքային ակտիվությունը, հնարավորություն տվեց կերակրելու և հագցնելու բնակչությանը: Հացահատիկի բերքը 1979-1984թթ. 300 մլն-ից հասավ 400 մլն տոննայի (մեկ շնչի հաշվով՝ տարեկան 300-ից 400 կգ-ի): Կրկնակի աճեց բամբակի և յուղատու մշակաբույսերի բերքը: Գյուղացիների եկամուտներն այդ ժամանակամիջոցում աճեցին եռակի: «Գյուղական ձեռնարկությունները» թողարկում էին ժողովրդական սպառման ապրանքներ: Եթե ռեֆորմից առաջ թեթև արդյունաբերությունը թողարկում էր կրկնակի քիչ արտադրանք, քան ծանրը, ապա 1990-ական թվականների սկզբին երկու ճյուղերի ցուցանիշները հավասար էին:

Արդեն 1980-ական թվականների կեսերին Չինաստանը դարձավ հացահատիկի, բամբակի, շաքարատու մշակաբույսերի, թեյի, մսի ամենախոշոր արտադրողն աշխարհում, ամենամեծ անասնազխաքանակի տերը: Բարձրացավ ժողովրդի կենսամակարդակը: Գների աճի հաշվառմամբ՝ բնակչության մեկ շնչին ընկնող եկամուտներն ավելացան կրկնակի: Հենց այդ ժամանակ երկրի տնտեսությունն մուտք գործեց օտարերկրյա կապիտալը: 1982 թ. Չինաստանում գոյություն ունեին 6 «հատուկ տնտեսական գոտիներ», որոնցում արտասահմանյան կապիտալի համար ապահովվեցին բարենպաստ պայմաններ՝ որոշակի արտոնություններով: Ընդսնին՝ արտասահմանյան ներդրողներին հրապուրում էր աշխատուժի էժանությունը: Չինաստանում աշխատավարձը 20 անգամ ցածր էր, քան ԱՄՆ-ում: Կապիտալ ներդրումների ընդհանուր գումարը (արտասահմանյան և համատեղ ձեռնարկություններում) գերազանցում էր 1,5 մլրդ դոլարը: Չինաստանը ակտիվորեն համագործակցում էր ԱՄՆ-ի, ճապոնիայի և ԳՖՀ-ի հետ:

1984թ. հետո երկրում գյուղատնտեսական արտադրության աճը կտրուկ դանդաղեց: Բնակչության աճի տեմպերի ավելացումը ազդեց մեկ շնչի սպառման չափերին: Կրճատվեց հացահատիկի արտադրությունը, քաղաքներում խոզի միսը և ձուն տրվում էին քարտերով, բարձրացվեցին նորմավորված մթերքների գները:

Չինաստանում միջոցառումներ ձեռնարկվեցին բնակչության աճի տեմպերը նվազեցնելու նպատակով: Երկրորդ երեխայի ծննդի դեպքում ընտանիքից գանձում էին խոշոր տուգանք: Գյուղատնտեսական արտադրության աճի դանդաղումը պայմանավորված էր հետևյալ գործոններով՝

1. Երբ գյուղացու եկամուտը հասավ որոշակի մակարդակի, սկսվեց կուտակումների «մսխումը»: Գյուղացին գնում էր

վացքի մեքենա, հեռուստացույց, մոտոցիկլ, կառուցում բարեկարգ աղյուսե տուն:

2. Գյուղատնտեսական արտադրության աճի թռիչքն ապահովվեց ձեռքի աշխատանքով: Չինաստանի գյուղատնտեսության մեջ աշխատանքի արտադրողականությունը կազմում էր ԱՄՆ-ի նույն ցուցանիշի ընդամենը 4%-ը: Պահանջվում էր բարձրացնել գյուղատնտեսության տեխնիկական հագեցվածության աստիճանը երկրում:

Ինչ վերաբերում է արդյունաբերությանը, ապա որոշ չափով կրճատվեց պետական հատվածի բաժինը, սակայն ոչ թե մասնավորեցմամբ, այլ մասնավոր նախաձեռնության ծավալմամբ (հատկապես՝ մանրի): «Գյուղական մանր ձեռնարկությունների» արագ աճը, որոնցից յուրաքանչյուրում աշխատում էր 8-10 մարդ, ապահովեց արդյունաբերական արտադրության զարգացումը: Բնական է, որ նման ձեռնարկություններում ցածր է տեխնիկական հագեցվածության, հետևաբար նաև՝ աշխատանքի արտադրողականության մակարդակը:

1984թ. ընդունելով «Տնտեսական համակարգի ռեֆորմի մասին» որոշում՝ Չինաստանը սկսեց տնտեսական բարեփոխումների երկրորդ փուլը: Դա նախատեսում էր պլանային համակարգի ստեղծում, որի հիմքում արժեքի օրենքի գիտակցաբար օգտագործումն էր: Միաժամանակ, նպատակ դրվեց զարգացնելու սոցիալիստական ապրանքային տնտեսությունը, սահմանելու գների ռացիոնալ համակարգ՝ տնտեսական լծակների գործողության ազատության ապահովման ճանապարհով: Ձեռնարկություններին թույլատրվում էր շուկայում գնելու սարքավորում և հումք, վաճառելու պլանի մեջ չմտած լրացուցիչ արտադրված արտադրանքը: Ձեռնարկությանը մնացող շահույթի մի մասից կազմավորվում էին խրախուսման ֆոնդերը: Թույլատրվում էր ոչ մեծ մասնավոր և կոլեկտիվ ձեռնարկությունների, տնայնագործական արհեստանոցների գործունեությունը (հատկապես՝ առևտրի և սպասարկման ոլորտներում):

Այս բուլրի շնորհիվ 1980-ական թվականների երկրորդ կեսին Չինաստանն աշխարհում առաջին տեղը զբաղեցրեց բամբակյա գործվածքեղենի և ցեմենտի համախառն արտադրությամբ, երկրորդ տեղը՝ հեռուստացույցերի թողարկմամբ և ածխի հանույթով, երրորդ տեղը՝ ծծմբաթթվի և քիմիական պարարտանյութերի արտադրությամբ, չորրորդ տեղը՝ պողպատի ձուլմամբ:

Ստեղծվեցին արդյունաբերության նոր ճյուղեր՝ մետաղագործական և հորատման սարքավորման, ավիացիոն, ավտոմոբիլային, հաստոցաշինական, գունավոր մետաղագործության, միջուկային էներգետիկայի, էլեկտրոնային հաշվիչ մեքենաների և այլն: Համա-

խառն ազգային արդյունքում արդյունաբերության տեսակարար կշիռը 1949թ. 25,2%-ից 1985թ. հասավ 53,7%-ի:

Պետությունը պահպանում էր իր գլխավոր դերը տնտեսական կյանքի բոլոր բնագավառներում, վերահսկում էր ժողովրդական տնտեսության համար կարևոր նշանակության ապրանքների պաշարները, իրագործում քաղաքային և գյուղական շուկաների մատակարարումը, կոորդինացնում առևտրի տարբեր ոլորտների հարաբերությունները, իրականացնում ապրանքների բաշխումը բնակավայրերի միջև: Պետության գերակշիռ դերը նկատելի էր նաև խոշոր արդյունաբերության մեջ: Այսպես՝ 1996թ. պետական ձեռնարկություններում ստացվել է ամբողջ արդյունաբերական արտադրանքի 28,5%-ը և դրանցում զբաղված էր երկրի բանվոր-ծառայողների 66%-ը:

Ակտիվորեն ընդլայնվում էին կապերը արտասահմանյան երկրների հետ, իրագործվեց բաց դռների քաղաքականություն: 1979թ. սկսած տնտեսական աճի տեմպերը չափազանց բարձր էին (տարեկան միջինը՝ ավելի քան 10%): Վերափոխումների քաղաքականության իրագործման երկու տասնամյակի ընթացքում ՀՆԱ-ն 1978թ. համեմատությամբ աճեց շուրջ 6 անգամ, որ նշանակում էր երկրի տնտեսական պոտենցիալի 6 անգամ ավելացում: Երկրագործության մեջ աշխատանքի արտադրողականությունն աճեց 7 անգամ, իսկ հացահատիկի տարեկան արտադրությունը հասավ 500 մլն տոննայի: Չինաստանը, արդյունաբերության, գիտության և տեխնիկայի նվաճումների առկայության պայմաններում, լուրջ ուշադրություն է դարձնում գյուղին: Չինաստանում ներկայումս խթանվում են տնտեսության բոլոր ձևերը՝ անհատական, ընտանեկան, մասնավոր, խառը, կոլեկտիվ, իսկ պետությունը ստանձնել է դատավորի ու կարգավորողի դերը դասերի, դասակարգերի, շերտերի, տարբեր տարածաշրջանների միջև հարաբերություններում:

Չինաստանի գյուղատնտեսությունը և՛ աշխատատար-ինտենսիվ է, և՛ բարձր տեխնոլոգիատար, լավ է ապահովված սեփական ագրարային գիտության նվաճումներով: Վերջին 25 տարում նորացվել են բրնձի սորտերը, հեկտարից ստացվում է 12 տոննա բերք, և պարենային հարցը այստեղ օրակարգային չէ: Պատշաճ մակարդակով են իրականացվում բնապաշտպան միջոցառումները: Խնայվում են էներգառեսուրսները: Երկրում էներգասպառումը կազմում է 800 մլն տոննա (նավթային համարժեքներով), այն դեպքում, երբ ԱՄՆ-ում նշված ցուցանիշը 2,5 մլրդ տոննա է, մինչդեռ ԱՄՆ-ի ՀՆԱ-ն ընդամենը կրկնակի է գերազանցում Չինաստանի ՀՆԱ-ին: Դրան ավելացնենք, որ Չինաստանը ԱՄՆ-ից գնում է արդյունաբերական արտադրության խոշոր չափերի մնացուկներ և վերամշակում:

Ժամանակակից Չինաստանում ուժեղանում է կենտրոնի դերը, և քաղաքականությունը պահպանում է իր գերադասությունը տնտեսության նկատմամբ հիմնականում այն բանի շնորհիվ, որ Պեյկինը, վերակառուցելով կառավարությունը, վերահսկում է իրավիճակն առավել արդյունավետ լծակներով: Արմատավորվել է կառավարման հետևյալ ալգորիթմը՝ «թույլատրել-վերլուծել-սահմանափակել»՝ նախկին վարչահրամայական մեթոդների փոխարեն:

Երկրում տնտեսական քաղաքականության հաջողությունը պայմանավորված է «շուկան կառավարում է ձեռնարկությունները, պետությունը կառավարում է շուկան» բանաձևի օգտագործմամբ:

Չինաստանի տնտեսական զարգացման արդի փուլի հիմնական բնութագրերն են՝ տնտեսության գլոբալացումը, մասնավոր սեփականատիրոջ իրավունքների պաշտպանությունը և աստիճանական քաղաքական ազատականացումը, հարաբերությունների նոր մոդելի սահմանումը ԱՄՆ-ի և Եվրոպական համագործակցության հետ: Կարևորվում է սոցիալական և քաղաքական ներքին կայունությունը, որի նախադրյալները տնտեսական հաստատուն աճը և բնակչության բարեկեցության աստիճանական բարձրացումն են: Իսկ տնտեսական աճի պայմանը գլոբալացման ժամանակաշրջանում մի կողմից՝ երկրի ինտեգրումն է համաշխարհային տնտեսությանը, մյուս կողմից՝ մասնավոր գործունեության ապահովության երաշխիքը, որ դառնում է տնտեսական զարգացման գլխավոր շարժիչ ուժը:

Չինական տնտեսության գլոբալացման կուրսի և համաշխարհային շուկային ինտեգրման հիմքերը դրվեցին 1999-2000թթ. սահմանազլխին, որպես 1997-1998թթ. ասիական ֆինանսական ճգնաժամի պատասխան, երբ երկրի ղեկավարները տեսան, որ ներքին կարգավորման չենթարկվող արտաքին ազդեցությունը կարող է ջնջել նույնիսկ տնտեսական զարգացման ամենաճիշտ՝ ազգային ռազմավարության նվաճումները: Ակտիվացավ Չինաստանի մասնակցությունը գլոբալ և տարածաշրջանային տնտեսական կառույցներին, ինչը դրականորեն ազդեց տնտեսական ցուցանիշների վրա: Միայն 2003թ. այստեղ ՀՆԱ-ն աճեց 9,1%-ով՝ հասնելով 1,4 տրիլիոն դոլարի, կամ 1 շնչի հաշվով՝ 1090 դոլարի: Տնտեսական աճի գլխավոր գործոնները դարձան արտահանումը, որն ավելացավ 32%-ով ու ապահովեց ՀՆԱ-ի աճի շուրջ 40%-ը և ներքին կապիտալ ներդրումները, որոնք աճեցին 27%-ով՝ ապահովելով ՀՆԱ-ի կեսը: Օտարերկրյա ուղղակի ներդրումները Չինաստանի տնտեսության մեջ կազմեցին 50 մլրդ դոլար:

Երկիրը հաղթահարեց դարերի սահմանազլխի դեֆլյացիոն միտումները: Սպառողական գների ինդեքսն աճեց 1,2%-ով (2003թ.), 1 տարում մասնավոր փայատերերի բանկային խնայողություններն ավելացան 20%-ով: Բարձր տեմպերով զարգացան ավտոմեքենա-

շինությունը և շինարարությունը: Սարդատար ավտոմեքենաների վաճառքն աճեց 83%-ով (2,4 մլն մեքենա), իսկ նոր շինարարության մեջ ներդրումներն ավելացան 35%-ով, որ կազմում էր հիմնական ֆոնդերում բոլոր ներդրումների կեսը: Բավական է նշել, որ ՀՆԱ-ի հավելածի 71,6%-ն ապահովվել է արդյունաբերական արտադրանքի ավելացման հաշվին:

Չինաստանը շարունակում է կիրառել ակտիվ ֆիսկալ և մոնետար քաղաքականություն: Երկրի հյուսիս-արևմուտքի և հյուսիս-արևելքի տարածաշրջանների յուրացման ծրագրերի նպատակով պետական ծախսերի ավելացմամբ հանդերձ իջնում են ներմուծման տարիֆները, բայց և այնպես, պետական բյուջեի պակասուրդը մեծ չէ, կազմել է ՀՆԱ-ի 3%-ը:

Բանկային ոլորտի արդյունավետությունը բարձրացնելու համար Չինաստանը ձեռնամուխ եղավ 4 խոշորագույն բանկի անվերադարձելի վարկերի ակտիվ մարմանը: Դրանք զոյացել էին «սոցիալիստական ավանդույթների» համաձայն, երբ պետական բանկերը հենց պետական ձեռնարկություններին հատկացնում էին ֆինանսական ռեսուրսներ՝ չնտահոգվելով դրանց վերադարձնելու մասին: 2003թ. վերջին – 2004թ. սկզբին նշված բանկերից երկուսի վերակազմման նպատակով ազգային ռեզերվներից հատկացվեց 45 մլրդ դոլար:

2003 թվականի համաճարակն էական վնաս հասցրեց Չինաստանի տնտեսությանը. հատկապես տուժեց զբոսաշրջությունը, որը չհասավ նախորդ տարվա մակարդակին: Միաժամանակ, չինական տնտեսության գլոբալացման շնորհիվ, համաճարակի պատճառով ընդհանուր վնասը կազմեց ՀՆԱ-ի ընդամենը 0,2%-ը, մինչդեռ «Ասեան 4-ի» (Ֆիլիպիններ, Ինդոնեզիա, Մալայզիա, Թաիլանդ) ՀՆԱ-ի 0,3-0,7%-ը, Սինգապուրի, Թայվանի և Հոնկոնգի ՀՆԱ-ի՝ 0,9-1,8%-ը: 2004թ. Չինաստանի տնտեսությունը պահպանեց դինամիկ զարգացման տեմպերը:

Հարկ է նկատել, որ երկրի տնտեսության զարգացմանը մեծ թափ կհաղորդի 2008թ. օլիմպիադայի նախապատրաստությունը՝ հատկապես շինարարական ծրագրերի իրականացումը: Դրա հետ մեկտեղ Չինաստանի տնտեսության զարգացման վրա կազդեն մի շարք կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ սպառնալիքներ: Առաջինի մեջ մտնում են էլեկտրաէներգիայի պակասուրդի աճը, ապրանքային պաշարների ավելացումը (գերարտադրությունը): Միջնաժամկետ սպառնալիքներից են՝ ֆոնդային և արժութային շուկաների ազատականացումը, ինչը ոչ դրական հետևանքներ կունենա յուրանի կուրսի համար, պետական ձեռնարկությունների վերակազմումը, որ գործազրկության աճի վտանգ է պարունակում, բանկային ոլորտի ապապետականացումը, ինդուստրաց-

ման և քաղաքակենտրոնացման տեմպերի արագացումը: Իսկ երկարաժամկետ սպառնալիքներին են պատկանում քաղաքի և գյուղի (որտեղ բնակվում է բնակչության երկու երրորդը) միջև ճեղքվածքի խորացումը, սոցիալական շերտավորման ուժեղացումը «նոր» հարուստների և «հին» աղքատների միջև, բնապահպանական հարցերը, բնակչությանը ջրով ապահովելը, գերբնակչության հիմնախնդիրը:

Չինաստանում մասնավոր սեփականության ինստիտուտը վերջին մեկուկես տասնամյակում կրել է 4 փոփոխություն սահմանադրության մեջ: 1988թ. սահմանադրությամբ նախատեսվում էր տնտեսության ոչ պետական հատվածը համարվում է պետականի լրացումը: 1993-ին քաղաքացիություն ստացավ «Սոցիալիստական շուկայական տնտեսություն» հասկացությունը: 1999 թվականից տնտեսության ոչ պետական հատվածը դիտվում էր որպես սոցիալիստական շուկայական տնտեսության կարևոր և անբաժանելի մասը, իսկ 2004 թվականից խոսքը գնում է Չինաստանի քաղաքացիների «օրենքով կուտակած» մասնավոր սեփականության անձեռնմխելիության մասին:

Սեփականատիրոջ իրավունքների պաշտպանությունը խիստ հրատապ է: Երկրի տնտեսական զարգացման ներկայիս ռազմավարության անկյունաքարը վնասաբեր պետական ձեռնարկությունների մասնավորեցումն ու պետական ֆինանսաբանկային հատվածի վերակազմավորումն է ֆինանսական ինստիտուտների սեփականության ձևերի բազմազանության հիմունքով: Մասնավորեցման գործում ներգրավվում է նաև օտարերկրյա կապիտալը: Եթե 10 տարի առաջ շեշտվում էր, որ ոչ շուկայական, ավտորիտար Չինաստանը արգելք է Արևելյան Ասիայի տարածաշրջանային ինտեգրման համար, ապա ներկայումս պատկերը լիովին փոխվել է: Չինաստանը կենսականորեն շահագրգռված է տարածաշրջանային ինտեգրման գործում:

Չինաստանի միջազգային հիմնախնդիրն այն է, որ այսօր համաշխարհային և արևելասասիական տնտեսությունում խիստ նկատելի այդ երկիրը, շուկայական դեմոկրատիայի կողմից ընդունվում է պայմանականորեն ասած՝ որպես «յուրային» տնտեսապես և «օտար» քաղաքականության մեջ: Ուստի, երկիրը փնտրում է վիճակից դուրս գալու խելամիտ տարբերակ: Այն մի կողմից՝ տարվում է ԱՄՆ-ի հետ նոր հարաբերությունների հաստատման, մյուս կողմից՝ «Մեծ ութնյակի» հետ քաղաքական և ֆինանսական երկխոսության սկսման ուղիով: Ակտիվանում է տարածաշրջանային տնտեսական համագործակցությունը ճապոնիայի և Հարավային Կորեայի (եռակողմ համագործակցություն), ԱՄՆ-ի, ճապոնիայի և Հարավային Կորեայի (երկկողմ համագործակցություն) հետ:

Չհնաստանում և ներկայումս լայն կիրառություն են գտել հետևյալ սկզբունքները՝ «զարգացումը՝ նպատակ, բարեփոխումները՝ միջոց, կայունությունը՝ երաշխիք», «լքելով հողագործությունը՝ չլքել գյուղը»: Տարածված են «խառը» սոցիալ-տնտեսական ձևերը՝ գյուղացի-բանվոր, կիսաքաղաքացի, կարմիր կապիտալիստ, մենեջեր-կուսակցական և այլն: Երկիրը հանդես է գալիս շուկայական սոցիալիզմի դիրքերից:

10.2. ԿՈՐԵԱ

Կորեա անվանումը բխում է հին Չոսոնից, որը թարգմանաբար նշանակում է Վաղորդյան թարմության երկիր: Չոսոնը կազմավորվել է մթա I հազարամյակի կեսերին և զբաղեցնում էր ընդարձակ տարածք՝ Կորեական թերակղզու հյուսիս-արևմուտքը, Լյաոոունյան թերակղզին, Չինաստանի հյուսիս-արևելքի մի մասը: Ձարգացած ստրկատիրական պետություն էր:

Ֆեոդալական հարաբերությունների զարգացման շրջանում կորեական պետությունը բաժանվեց երեք թագավորությունների, որոնց միջև ընթանում էր անհաշտ պայքար: Միայն X դարում դրսևորվեց դրանց միավորման միտում Կորյո պետության շրջանակներում, որ թուլացավ XI դարի վերջերին: 1392թ. Կորեայում իշխանությունն անցավ Լի դինաստիայի ձեռքը, որը կառավարեց մինչև երկրի գաղութացումը ճապոնիայի կողմից: Մայրաքաղաքը դարձավ Խանսոնը (Սեուլը):

XIX դարում Կորեան մի շարք զարգացած պետությունների (ԱՄՆ, ճապոնիա, Անգլիա, Ռուսաստան, Ֆրանսիա) էքսպանսիայի օբյեկտ էր: 1904-1905թթ. ռուս-ճապոնական պատերազմում Ռուսաստանի պարտությունից հետո Կորեայում հաստատվեց ճապոնիայի պրոտեկտորատը, իսկ 1920թ. ճապոնիան գրավեց Կորեան, որը դարձավ ճապոնական կայսրության մի մասը:

1945թ. օգոստոսին ԽՍՀՄ զինված ուժերը Կորեան ազատագրեցին ճապոնական գաղութային լծից: Հակահիտլերյան կռաւիցիայի դաշնակիցների պայմանավորվածությամբ՝ այդ երկրի տարածքը բաժանվեց պատասխանատվության երկու գոտիների՝ խորհրդային և ամերիկյան:

1948թ. օգոստոսի 15-ին Սեուլում հռչակվեց Կորեայի Հանրապետությունը (ԿՀ), իսկ սեպտեմբերի 9-ին Փենյանում՝ Կորեայի Ժողովրդադեմոկրատական Հանրապետությունը (ԿԺԴՀ): 1948թ. ավարտին Խորհրդային Միությունը, իսկ հաջորդ տարի ԱՄՆ-ը իրենց գործերը հանեցին կորեական թերակղզուց:

Արդեն 1949թ. երկրորդ կեսին աճեց հակամարտությունը երկու պետությունների միջև: 1950-1953թթ. տեղի ունեցավ կորեական պատերազմը, ընդ որում՝ հյուսիսին օգնում էին Չինաստանը և ԽՍՀՄ-ը, հարավին՝ ԱՄՆ-ը: Այն ավարտվեց անարդյունք, և 1953թ. հունիսի 27-ին կնքվեց հաշտության պայմանագիր:

Ավանդաբար, հյուսիսում տեղաբաշխված էր համեմատաբար հետամնաց արդյունաբերական արտադրություն: Ջարգանում էին այն ճյուղերը, որոնք ծառայում էին ճապոնիայի տնտեսության պահանջունքների բավարարմանը: Մինչդեռ Կորեայի հարավային շրջանները մասնագիտացված էին գյուղատնտեսական արտադրությամբ: Ուստի՝ «մեկնարկային» պայմանները երկու նոր պետությունների տնտեսական վերափոխումների համար խիստ տարբեր էին:

ԿԺԴ-ն հենց սկզբից նպատակ դրեց տնտեսապես հետամնաց նախկին գաղութային երկրից վերածվելու ինդուստրիալ-ագրարային սոցիալիստական պետության: Իրականացվեցին կարճ ժամանակամիջոցում սոցիալիզմի նյութատեխնիկական բազայի կառուցումը, հայրենական ծանր և թեթև արդյունաբերության ստեղծումն ապահովող միջոցառումներ: Ագրարային ռեֆորմի և արտադրության միջոցների ազգայնացման, գյուղատնտեսության կոոպերացման ու մանրապրանքային կացութաձևի վերացման շնորհիվ արդեն 1950-ական թվականների վերջին սոցիալիստական հատվածը ԿԺԴ-ի տնտեսությունում զբաղեցրեց «իրամանատարական դիրքեր»:

Երկրի նյութատեխնիկական բազայի ստեղծումը կայացավ մի քանի փուլերով: Առաջին փուլը (1954-1956թթ.) նախապատրաստական էր. ընդունվեց տնտեսական զարգացման եռամյա պլան: Չինականում վերականգնվեցին պատերազմի ընթացքում տուժած արտադրական օբյեկտները, ստեղծվեցին անհրաժեշտ պայմաններ սոցիալիստական ինդուստրացման ու տնտեսության տեխնիկական վերակառուցման խնդիրների լուծման համար:

Երկրորդ փուլը (1957-1962թթ.) պայմանավորված էր առաջին եռամյայի կատարմամբ: Այդ շրջանում ստեղծվեց սոցիալիստական արդյունաբերության բազան, իրագործվեց ժողովրդական տնտեսության զլխավոր ճյուղերի մասնակի վերակառուցում: ԿԺԴ-ն աստիճանաբար անցավ ագրարային-ինդուստրիալ, իսկ ավելի ուշ՝ ինդուստրիալ-ագրարային երկրների շարքը:

Երրորդ փուլն ընդգրկում էր 1960-ական թվականները, երբ առաջադրվում էր երկիրն ինդուստրիալ պետության վերածելու, արտադրության կառուցվածքը կատարելագործելու խնդիրը: Սակայն ԿԺԴ-ում սոցիալիզմի հիմքերի կառուցումը բարդանում էր արտաքին գործոնների ազդեցությամբ՝ կորեական երկու պետությունների առձակատմամբ: Դա երկու կողմերից էլ պահանջում էր նշա-

նակալի ռեսուրսներ առանձնացնել իրենց պաշտպանունակությունն ամրապնդելու համար:

1970-ական թվականներից սկսվեց ԿԺԴ-ի տնտեսական զարգացման նոր փուլը. երկիրը մուտք գործեց սոցիալիզմի նյութատեխնիկական լայն բազայի կառուցման շրջանը: Ընդունվեցին վեցամյա (1971-1976թթ.), երկրորդ յոթնամյա (1978-1984թթ.) պլաններ (ի դեպ, առաջին յոթնամյա պլանն ընդգրկում էր 1961-1967թթ.):

Միայն երկրորդ յոթնամյակում շահագործման հանձնվեց 17,8 հազար արդյունաբերական օբյեկտ հայթայթող արդյունաբերության, սև և գունավոր մետալուրգիայի, քիմիայի, ծանր ինդուստրիայի այլ ճյուղերի զարգացման նպատակով: Լայնորեն օգտագործելով համեմատաբար հարուստ հումքային բազան (երկաթի, պղնձի, վոլֆրամի, ցինկի, կապարի և կիսամետաղների հանքերի, հանքային հումքի պաշարները), այդ ճյուղերը դառնում են առաջատար: Նշված շրջանում համախառն հասարակական արդյունքի ավելի քան երկու երրորդը ստացվել է արդյունաբերությունից:

1980-ական թվականների կեսերից Յուլիսային Կորեայի տնտեսությունը պատրաստվում էր դուրս գալու նոր բնագծեր, տնտեսական աճի ինտենսիվ գործոնների օգտագործմամբ հասնելու որակական տեղաշարժերի: Խնդիր էր դրվում մինչև 1990-ական թվականների կեսերը նվաճելու «տաս բարձունքներ»:

Երրորդ հնգամյա պլանով (1987-1993թթ.) նախատեսվում էր տարեկան արտադրել 100 մլրդ կվտժ էլեկտրաէներգիա, 120 մլն տոննա ածուխ, 10 մլն տոննա պողպատ, 1,7 մլն տոննա գունավոր մետաղ, 22 մլն տոննա ցեմենտ, 7 մլն տոննա պարարտանյութ, 1,5 մլրդ մետր գործվածք, 11 մլն տոննա ծովամթերք, 15 մլն տոննա հացահատիկ:

Վերջին շրջանում Յուլիսային Կորեայում լուրջ ուշադրություն էր դարձվում գյուղատնտեսության զարգացմանը: Ծավալվեցին ոռոգման, մեքենայացման, քիմիացման և էլեկտրիֆիկացման աշխատանքներ: Հարկ է նշել, որ երկրի վարելահողային ֆոնդը, հաշվի առնելով կրկնակի ցանքը, կազմում է շուրջ 18%-ը տարածքի, որը բավական սահմանափակ է:

Բնակչության հիմնական սննդատեսակը բրինձն է, որի, ինչպես նաև՝ եգիպտացորենի, սոյայի արտադրությանը մեծ ուշադրություն է դարձվում: Հիմնախնդիրներն առկա են նաև անասնապահության բնագավառում: 1995-1997 թվականներն անբերրի տարիներ էին, ուստի՝ գյուղատնտեսության մեջ երևան եկան ճգնաժամային երևույթներ:

ԽՍՀՄ-ի (նաև՝ սոցիալիստական ճամբարի) փլուզումը հանգեցրեց Յուլիսային Կորեային տեխնիկական և տնտեսական օգնության կրճատմանը: 1990-ական թվականների վերջին երկրի տնտե-

սական դրություները շարունակվում էր վատանալ: Այսպես՝ ՄԱԿ-ի գնահատմամբ, համախառն ազգային արդյունքի արտադրությունը 1992թ. 28 մլրդ դոլարից 1998-ին կրճատվեց մինչև 14 մլրդ դոլար: Մինչդեռ բնակչությունը 20,7 մլն-ից հասավ 22,4 մլն-ի:

1990-ական թվականներին Հյուսիսային Կորեայի տնտեսական բոլոր ցուցանիշները վատացան. կրճատվեցին արդյունաբերական և գյուղատնտեսական արտադրանքի ծավալը, հանքային հումքի հանույթը և էլեկտրաէներգիայի արտադրությունը:

Այդ ամենով հանդերձ Հյուսիսային Կորեան հսկայական գումարներ է ծախսում միջուկային հետազոտությունների բնագավառում, հասել է զգալի հաջողությունների, արդեն ունի ատոմային զենք, որը խիստ անհագստացնում է ինչպես ԱՄՆ-ին, այնպես էլ ճապոնիային և մյուս հարևաններին:

Ինչ վերաբերում է Կորեայի Հանրապետության տնտեսական զարգացմանը, ապա այն տեղի է ունենում շուկայական հարաբերությունների շրջանակներում:

1950-ական թվականների ընթացքում Հարավային Կորեան աղքատության մեջ էր, ապավինած՝ ամերիկյան օգնությամբ: Բնակչությունն աճում էր արագ տեմպերով, անկում էր ապրում գյուղատնտեսությունը: Երկիրը կախվածության մեջ էր արտասահմանյան հումքից, պարենից, լայն սպառման ապրանքներից: 1950-1960-ական թվականների սահմանագծին բնակչության մեկ շնչի հաշվով համախառն ազգային արդյունքի արտադրությունը չէր գերազանցում 80 դոլարը:

Արդեն 1960-ական թվականների սկզբներին երկրում անցում կատարվեց տնտեսական զարգացման նոր ռազմավարությանը, ինչի շնորհիվ նկատելի դարձան հաջողությունները կյանքի բոլոր ոլորտներում:

Առաջին փուլում դրսից օգնության փոխարեն ընդունվեց արտահանման խթանման ծրագիր: Այդ նպատակով օգտագործվում էին կարճաժամկետ վարկեր, կիրառվում էին հարկային արտոնություններ, ստեղծվում էին արտահանման աջակցման կառույցներ:

Եժան աշխատուժի օգտագործումը (աշխատավարձն այստեղ 9-10 անգամ պակաս էր՝ քան ԱՄՆ-ում, 4-5 անգամ պակաս՝ քան ճապոնիայում), ինչպես նաև արդյունաբերության մի շարք ճյուղերում զանգվածային արտադրության կազմակերպումը 1962-1971թթ. հանգեցրին Կորեայի Հանրապետությունից արտահանման ծավալների աճին միջին տարեկան 40%-ի չափով (ընթացիկ գներով):

1970-ական թվականների սկզբին նավթի համաշխարհային գների կտրուկ բարձրացումից հետո զարգացած երկրները կիրառեցին զարգացող պետություններից թեթև արդյունաբերության արտադրանքի ներմուծման պաշտպանական սահմանափակումներ:

Ստեղծված իրավիճակը փոփոխություններ առաջացրեց հարավ-կորեական արտահանման կառուցվածքում: Այդպես սկսվեց Հարավային Կորեայի Հանրապետության տնտեսական զարգացման երկրորդ փուլը: Այդ շրջանում առաջնահերթ ուշադրություն էր դարձվում մեքենաշինության, նավաշինության, էլեկտրոնային և քիմիական արդյունաբերության զարգացմանը:

Կապիտալ ներդրումները գերազանցապես կենտրոնացվեցին նշված ճյուղերում, ինչը հանգեցրեց ճյուղային անհավասարակշռության, մակրոտնտեսական ծանր հետևանքների, ինֆլյացիայի (20%): Երկրում տնտեսական իշխանությունը կենտրոնացվեց մի քանի առաջատար կոնգլոմերատների՝ ֆինանսարդյունաբերական խմբերի ձեռքին: Արտասահմանյան կապիտալի լայն ներգրավումը նպաստեց հանրապետություն դոսի տեխնոլոգիաների ներհոսքին, որոնք առաջադիմական չէին և էկոլոգիապես վնասակար էին: Աճեց արտաքին պարտքը՝ 1980-ական թվականների սկզբին կազմելով 40 մլրդ դոլար:

Կորեայի Հանրապետության տնտեսության զարգացման երրորդ փուլը հաջորդ տասնամյակն էր՝ 1980-ական թվականները, երբ իրացվեցին կայունացման ու ազատականացման ծրագրերը, տեղի ունեցավ դրամի (վոն) դեվալվացում: Հիմնական խնդիրը ինֆլյացիայի դեմ պայքարն էր: Ազատականացման ծրագիրն իրագործվում էր աստիճանաբար, ոչ միանգամից: Մաքսային տարիֆը 1983թ. կազմում էր 24%, մինչդեռ 1989թ. այն իջավ մինչև 13%: Կրճատվեց կարճաժամկետ արտահանման վարկերի բաժինը, թուլացավ ինվեստիցիոն գործունեության պետական կարգավորումը, ստեղծվեցին նոր բանկեր և ֆինանսական այլ ինստիտուտներ:

1993թ. ընդունված «Նոր տնտեսության» հնգամյա պլանում շեշտը դրվում էր մասնավոր հատվածի զարգացման վրա: Հարավային Կորեայի տնտեսական զարգացման կարևոր առանձնահատկությունը տասնամյակների ընթացքում համարվում էր տնտեսական գործընթացների ակտիվ պետական կարգավորումը: Արդեն այդ շրջանում նպատակահարմար համարվեցին փոփոխությունները տնտեսությանը պետական ազդեցության համակարգում, ռազմավարական ճյուղերի համար ընդունվեցին վարկային և հարկային փաթեթներ: Որոշվեցին առաջնահերթ զարգացում պահանջող (գերակա) ճյուղերը՝ ավտոմոբիլների, շինարարական ծանր տեխնիկայի արտադրություն և այլն: Միաժամանակ, նախատեսվում էր որոշ չափով կրճատել տեքստիլ, կոշիկի արտադրությունը:

Ամբողջությամբ վերցրած 1960-ական թվականների սկզբից մինչև 1997թ. Կորեայի Հանրապետությունը հասավ ակնառու հաջողությունների իր տնտեսական զարգացման բնագավառում: Հանրապետությունը մտավ «նոր ինդուստրիալ երկրների» խմբի մեջ, որն

ուներ ժամանակակից զարգացած արդյունաբերական բազա և արտահանման հզոր պոտենցիալ:

1990-ական թվականների կեսերին երկիրը նավաշինությամբ աշխարհում զբաղեցնում էր երկրորդ, կիսահաղորդիչների արտադրությամբ՝ երրորդ, էլեկտրոնիկայի, նավթաքիմիական և տեքստիլ արդյունաբերությամբ՝ հինգերորդ, ավտոմեքենաշինությամբ ու մետաղագործությամբ՝ վեցերորդ տեղը:

Տեղի ունեցավ համախառն ազգային արդյունքի արտադրության ծավալների բազմակի աճ, իսկ վերջինիս կառուցվածքում շուրջ երկու անգամ ավելացավ արդյունաբերության և ծառայությունների ոլորտի տեսակարար կշիռը, մինչդեռ գյուղատնտեսության բաժինը 40%-ից իջավ 7%-ի: Նույն շրջանում երկրից արտահանման ծավալը 41 մլն դոլարից հասավ 130 մլրդ դոլարի (աճ՝ 3170 անգամ): Ընդ որում արտահանման երկու երրորդից ավելին 1990-ական թվականների վերջին կազմում էր ծանր (այդ թվում՝ քիմիական) արդյունաբերության արտադրանքը:

1990-ական թվականների ավարտին երկրում նկատվեցին ճգնաժամային երևույթներ, նվազեցին տնտեսական զարգացման տեմպերը: ՀՆԱ-ի արտադրության ծավալով Հարավային Կորեան 11-րդ տեղից իջավ 17-րդ տեղը: Փորձագետների գնահատմամբ՝ ճգնաժամի հիմնական պատճառներից էր տնտեսական իշխանության կենտրոնացումը ֆինանսական-արդյունաբերական մի քանի խմբերի (չեբոլների) ձեռքին՝ կառավարման հիերարխիկ համակարգով (կառավարության կողմից ֆինանսական հատվածի օգտագործում գերակա ճյուղերի «կամավոր-հարկադիր» ֆինանսավորման նպատակով, արտադրական հարաբերությունների ոչ հասունություն և բյուրոկրատացման բարձր աստիճանը, ինչը կոռուպցիայի համար պարարտ հող էր ստեղծում, պետական չինովնիկների և «չեբոլների» ղեկավարության շահերի զուգակցումը):

Սկզբունքորեն տարբեր արժեքներ ընդունող կորեական երկու պետությունների տնտեսական զարգացման ընթացքի համեմատական վերլուծությունը ցույց է տալիս, թե ինչպիսիք են դրանց տնտեսական էվոլյուցիայի ուղիները:

**ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ
ՄԻՏՈՒՄՆԵՐՆ ՈՒ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
XX ԴԱՐԻ ՎԵՐՋԻՆ – XXI ԴԱՐԻ ՍԿԶԲԻՆ**

Համաշխարհային տնտեսական զարգացումը XX դարում ընթացել է անհամաչափ: Դարի առաջին կեսին համաշխարհային տնտեսության համեմատաբար խաղաղ ընթացքը տևել է շուրջ 25 տարի (1900-1913, 1922-1929, 1933-1937թթ.): Նույնքան ժամանակ էլ երկրագունդը կամ պատերազմական իրավիճակում է եղել, կամ ծանր տնտեսական ճգնաժամերի պայմաններում:

Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո բավականին արագացան տնտեսական աճի տեմպերը: Այսպես՝ եթե 1900-1950թթ. աշխարհում ՀՆԱ-ի բացարձակ ծավալն աճել է շուրջ 3 անգամ, նույնքան էլ՝ արտահանմանը, ապա 1950-2000թթ. դրանք համապատասխանաբար 6 և 11 անգամ: Ամբողջությամբ վերցրած ՀՆԱ-ի միջին տարեկան հավելածի տեմպերը դարի առաջին կեսին կազմեցին 2,2%, մինչդեռ երկրորդ կեսին՝ 3,7%: XX դարի երկրորդ կեսին համաշխարհային տնտեսական աճի տեմպերը շուրջ կրկնակի, համաշխարհային առևտրինը՝ եռակի բարձր էին 1900-1950թթ. համեմատությամբ:

Բնականաբար, տեղի ունեցավ համաշխարհային արտադրության տեխնոլոգիական բազայի ամբողջական վերակառուցում՝ պայմանավորված գիտատեխնիկական նոր հեղափոխությամբ, որը հանգեցրեց արտադրության ճյուղային կառուցվածքի խոր տեղաշարժերի: Ուժեղացավ ազգային տնտեսությունների կախվածությունը միջազգային առևտրից, կապիտալի և աշխատուժի շարժից, գիտելիքների, տեխնոլոգիաների, տեղեկատվության ներմուծումից ու արտահանումից:

Տնտեսական զարգացման կարևոր գործոններ դարձան արտադրության և կապիտալի ինտերնացիոնալացումը, վերազգային կորպորացիաների գործունեության ընդլայնումը. դրանց շնորհիվ բարձրացավ համաշխարհային տնտեսության արդյունավետությունը: Տեղի ունեցավ երկու համակարգերի (կապիտալիստական և սոցիալիստական) մրցակցություն, փլուզվեց գաղութային համակարգը, նոր խնդիրներ ծառայեցան զարգացող երկրների առջև:

XX դարի երկրորդ կեսին առաջատարի իր դիրքերն ամրապնդեց ԱՄՆ-ը, որը ներկայումս աշխարհի 80 երկրների շարքում առաջին տեղն է զբաղեցնում տեխնոլոգիական զարգացման, ֆիրմաների նրցունակության մակարդակով: Թեև 1950-2000թթ. նրա բաժինը համաաշխարհային ՅՆԱ-ում 28,8%-ից իջել է 21,2%-ի, բնակչության մեկ շնչի հաշվով 14,2%-ից բարձրացել է մինչև 28,7%-ի: Եվ ճապոնիայում, և՛ Գերմանիայում երկու ցուցանիշներն էլ աճել են (ճապոնիայում 2,94-ից հասել է 7,2%-ի, Գերմանիայում՝ 5,7-ից՝ 7,6%-ի՝ ՅՆԱ-ի հաշվով, իսկ մեկ շնչին ընկնող ՅՆԱ-ի բաժինը համապատասխանաբար՝ 2,7 և 6,4%-ից 26,4 և 26,4%-ի):

Գաղտնիք չէ, որ տնտեսական երկու համակարգի համաաշխարհային մրցակցության մեջ հաղթեց կապիտալիզմը, որն աշխարհում ընդունվում է որպես «քաղաքակիրթ սոցիալական ուղղվածության շուկայական տնտեսություն», ժամանակակից հասարակության մեջ արտադրության կազմակերպման և բաշխման բնական ձև: Սակայն կապիտալիզմն էլ գերծ չէ թերություններից: Շահույթի համար մրցավազքը, արդյունավետության գծով միակողմանի կողմնորոշումը՝ ի վնաս սոցիալական ասպեկտների, պահանջում են պետության ուղղակի միջամտությունը տնտեսությանը:

Աշխարհի առաջատար երկրներում ձգտում են պահպանել ընդունելի հաշվեկշիռ կապիտալի արդյունավետության և հասարակության սոցիալական շահի միջև: Այսօր կապիտալիզմի գլխավոր սոցիալական կոնֆլիկտը ոչ թե բանվորների և կապիտալիստների միջև է, այլ հարուստ և աղքատ երկրների: Հենց դրանումն է XXI դարի կապիտալիզմի էական տարբերությունը XX դարի կապիտալիզմից:

Գլուխ են բարձրացրել ահաբեկչությունը, կրոնական արմատականությունը, աղքատությունը: Գաղութային համակարգի փլուզումից հետո աղքատության դեմ որդեգրված պայքարի հարցը լրջորեն չի առաջադրվել: ՄԱԿ-ի բանաձևը ՅՆԱ-ի 0,7%-ը զարգացող երկրներին տնտեսական օգնություն հատկացնելու վերաբերյալ այդպես էլ չի կատարվել: Ընդ որում՝ այդ 0,7%-ը բացարձակ գումարով տարեկան կազմում է արևմտյան զարգացած երկրների ամբողջ ՅՆԱ-ում 125 մլրդ դոլար, սակայն տեղ չի հասնում:

XXI դարի կապիտալիզմը ոչ կապիտալիզմի բարձրագույն աստիճանն է, ոչ էլ պետական-մոնոպոլիստական կապիտալիզմ, երբ միահյուսվում են պետության և մասնավոր կորպորացիաների շահերը: Ներկայումս մասնավոր ընկերությունների և պետության միջև զոյություն ունեն սկզբունքորեն տարբեր գործառնություններ: Ընկերությունները փող են «սարքում», իսկ պետությունը հրապարակում է օրենքներ: Պետությունն է որոշում խաղի կանոնները և հանդես գալիս որպես դատավոր: Մյուսները խաղում են կամ ըստ օրենքի,

կան ապօրինաբար: Մինչև վերջերս պետությունն ավելի ուժեղ էր կորպորացիաներից: Սակայն անցյալ դարի վերջին քառորդում վերազգային կորպորացիաները (Ջեներալ էլեկտրիկ, Լոկիտիդ, Ջեներալ Դայնեմիքս, Սիմենս, Սիցուի, Սիցուբիչի և այլն) այնպիսի թափ առան, որ պետություններին թողեցին հետևում: Բայց և այնպես, պետության ձեռքին մնացին ուժային կառույցները (բանակը, ոստիկանությունը), բյուջեն, դատարանը և պառլամենտը:

Տեղի ունեցան գլոբալացման և ինտեգրման գործընթացներ համաշխարհային տնտեսության մասշտաբով: Ընդամին՝ համաշխարհային տնտեսության գլոբալացումը ոչ միայն գիտատեխնիկական առաջընթացի արդյունք էր: Գիտատեխնիկական առաջընթացը ստեղծեց դրա նախադրյալները: Համաշխարհային տնտեսության գլոբալացման և ինտեգրման համար պահանջվեց նաև վիթխարի սոցիալ-տնտեսական տեղաշարժեր. աշխարհը երկու համակարգի բաժանման հաղթահարում, ամբողջ տնտեսական գործունեության ազատականացում, տնտեսական գործունեության կարգավորումից ապակարգավորման անցում: Պահանջվում էին քաղաքական որոշումներ, որոնք ազգային կառավարությունների կողմից ընդունվեցին մասնավոր կապիտալիստական կորպորացիաների ճնշմամբ:

Առևտրի և ֆինանսական հոսքերի ազատականացում, արտաբժութային հսկողությունից, գների, եկամուտների և լրիվ զբաղվածության քաղաքականությունից հրաժարում, հարկային բեռի թեթևացում, ինդիկատիվ պլանավորման վերացում, ապակարգավորում՝ որպես տնտեսական ռազմավարության սկզբունք՝ ահա սրանք են վերջին քառորդ դարի նշանակալի քաղաքական որոշումները: Այդ բոլորը կատարվեցին կորպորացիաների ստիպմամբ՝ հանուն ազատ մրցակցության, կապիտալ ներդրումների արդյունավետության բարձրացման, հարստության կուտակման:

Արդի կապիտալիզմի գլխավոր առանձնահատկությունը ֆինանսական միջավայրի չտեսնված ձևախեղումն է: Խոշոր ֆինանսական կապիտալը ճգմել է ոչ թե արդյունաբերական, այլ բանկային կապիտալը: Կապիտալի արտահոսքը ազգային սահմաններից դուրս ընդունել է անհասելի չափեր: Գլոբալ ֆինանսական շուկայում օպերացիաների մեկօրյա ծավալը գերազանցում է 2 տրիլիոն դոլարը, երբ ԱՄՆ-ի նման հզոր երկրի տարեկան առևտրային շրջանառությունը մոտ 1 տրիլիոն դոլար է: Ընդ որում՝ հարցը ոչ թե կապիտալի մեծ ծավալն է, այլ՝ բնույթը, որ չի առնչվում և ոչ մի իրական տնտեսական գործընթացի. այդ փողերը գործադրվում են որպես չարաշահության և հարստանալու միջոց: Կապիտալիզմի համակարգում տեղի ունեցող կառուցվածքային տեղաշարժերը, որոնք պայմանավորված էին իրական տնտեսությունից ֆինանսական ոլորտի անջատմամբ և բոլոր տնտեսական գործընթացների

գլոբալացմամբ, հանգեցրին կապիտալիզմի ֆինանսաարժույթային համակարգի աճող անկայունությանը: Գաղտնիք չէ, որ վերջին քառորդ դարը առատ էր արժույթային ճգնաժամերով:

Ցանկացած տնտեսական համակարգ պատմության մեջ չի շրջանցել ռազմական կոնֆլիկտները: XX դարը դրա ցցուն վկայությունն էր, սակայն XXI դարում ազդեցության ոլորտների ռազմական վերածնունդն անհնար է. նոր շուկաների, հումքի աղբյուրների ձեռք բերումը, կապիտալի կիրառումն իրագործվում են անարյուն տնտեսական ուղիով: Ծիշտ է, լոկալ պատերազմները շարունակվում են, սակայն աշխարհի վերաբաժանման հարց չի դրվում:

Երկրորդ համաշխարհային պատերազմը և դրանից հետո Կորեայում ու Վիետնամում մղված պատերազմները երկու համակարգերի միջև ուժերի փորձարկում էին, որ չփոխեցին ստատուս-քվոն: Աշխարհի քաղաքական քարտեզին ամենաանշանակալի փոփոխություններն էին ԽՍՀՄ-ի, Հարավսլավիայի և Չեխոսլովակիայի փլուզումը, Չինաստանի և ասիական «վագրերի» դերի ընդգծումը, ճապոնիայի վերելքը, ԱՄՆ-ի գերիշխանության դերի իջեցումը: Այս բոլորը նշված երկրների ներքին ընթացքի և ոչ թե ազդեցության գոտիների վերածնունդն արդյունք էին:

XXI դարի կապիտալիզմը սոցիալ-տնտեսական և ռազմաքաղաքական հարաբերությունների գլոբալ համակարգ է, որն աշխարհը միավորում է որպես միասնական ամբողջի: Այդ համակարգի կենտրոնը և ուղեղը ԱՄՆ-ն է: Նա իր վերազգային կորպորացիաներին հնարավորություն է ընձեռում օգտագործելու բաց սահմանները, որպեսզի ապրանքն արտադրվի այնտեղ, որտեղ դրա ծախքերը ցածր են և վաճառվի շահույթի ավելի բարձր նորմա ապահովող վայրերում:

Գլոբալացման պայմաններում համաշխարհային տնտեսության մեջ առաջնային դեր են ստանձնում վերազգային կորպորացիաները, որոնք տարբեր երկրներում և համաշխարհային շուկայում ունեն ակտիվներ և իրականացնում են արտադրական, առևտրային, ֆինանսական ու այլ տեսակի գործունեություն:

Վերազգային կորպորացիաների ձևավորումը և աճը տնտեսության ինտերնացիոնալացման և համաշխարհային շուկայի զարգացման արդյունք են: Մրցակցությունը, համաշխարհային մաքսային և այլ պատնեշների հաղթահարման ձգտումը կորպորացիաներին դրդում են ուրիշ երկրներում ստեղծելու մասնաճյուղեր և դուստր ձեռնարկություններ, ձեռք բերելու արտասահմանյան ընկերությունների ակտիվները: Ուստի՝ կապիտալի վերազգայնացումը դառնում է ժամանակակից տնտեսության ինստիտուցիոնալ զարգացման բնութագրիչ հատկանիշը: Դա առաջին հերթին ընդգրկում է խոշոր

գործարարության բնագավառը՝ զանց չառնելով միջին և նույնիսկ փոքր ընկերությունների գործունեությունը:

Վերազգային մոնոպոլիաները տնօրինում են հսկայական գումարներ՝ մի քանի մլրդ-ից մինչև 100 մլրդ դոլար: 1990-ական թվականների ավարտին աշխարհում հաշվվում էր շուրջ 60 հազար բազմազգ ֆիրմա, որոնք տարբեր երկրներում ունեին ավելի քան 500 հազար մասնաճյուղեր: Վերազգային կորպորացիաները արդի համաշխարհային տնտեսության հիմնական գործող անձինք են, վորոնք վերահսկում են արդյունաբերական արտադրության 40-50%-ը, համաաշխարհային առևտրի շրջանառության կեսից ավելին և ուղղակի ու պորտֆելային ներդրումների գերակշիռ մասը: Իսկ 500 ամենախոշոր վերազգային կորպորացիաներին բաժին է ընկնում ապրանքների ու ծառայությունների համաշխարհային արտադրության մեկ քառորդից ավելին, արդյունաբերական արտադրանքի արտահանման մեկ երրորդը և տեխնոլոգիաների առևտրի երեք քառորդը: Դրանց կենտրոնները գտնվում են ԱՄՆ-ում, Ճապոնիայում, Գերմանիայում, Ֆրանսիայում, Մեծ Բրիտանիայում, Իտալիայում, Շվեյցարիայում, Յուգոսլավիայում, Շվեդիայում, ինչպես նաև Չինաստանում (Յոնկոնգ), Յուկրաստանում, Բրազիլիայում, Հարավային Կորեայում, Թայվանում:

Իրենց նպատակներին հասնելու համար վերազգային կորպորացիաները միջամտում են քաղաքական կյանքին, կաշառում քաղաքական գործիչներին: Դրա փայլուն օրինակը ամերիկյան ինքնաթիռների գնման նպատակով «Լոկիտիդ» ընկերության կողմից 1990-ական թվականների կեսերին ճապոնիայի վարչապետ Տանակայի կաշառումն էր (2 մլն ԱՄՆ դոլարով), որ սկանդալի բնույթ ստացավ, իսկ վարչապետը հեռացվեց զբաղեցրած պաշտոնից:

Վերազգային մոնոպոլիաները միաձուլվում են, և դրանց հաջողությունը կախված է երկու գործոնից՝ արդյունքի ինքնարժեքից և կառավարման ծախսերից: Խոշորացումը ապահովում է տնտեսում արտադրության մասշտաբների շրջանակներում, միաժամանակ, բարդացնում է կառավարումը և բարձրացնում դրա ծախսերը: Եթե այդ 2 բաղադրիչների հաշվեկշիռը ընդհանուր առմամբ բացասական է, ապա միաձուլումը ենթական է ձախողման: Այնպես որ՝ միշտ չէ խոշոր կորպորացիաների ստեղծումն արդյունավետ, և օրգանիզմի կենսունակությունը կախված չէ չափերից: Հարկ է նշել, որ XX դարի վերջին տասնամյակում բոլոր միաձուլումների երկու երրորդը մատնվել է անհաջողության:

Վերազգային կորպորացիաների գործունեությունը կարգավորող համակարգ դեռևս չի ստեղծվել: Սակայն մանր ու միջին գործարարության խթանումը, նրա արտադրանքը արտաքին շուկայում իրացնելու համար բարենպաստ պայմանների ստեղծումը կարող է

դառնալ որոշ հավասարակշռող գործոն: Այդ առումով հետաքրքիր է Իտալիայի օրինակը, որտեղ ըստ ամենայնի խթանվում են արտահանման մրցունակ արտադրությունները՝ կենցաղային ապրանքների, կահույքի, տեքստիլի, կոշիկի, մոդայիկ զգեստների, խեցեգործության, որոնք մանր ու միջին գործարարության ոլորտում են: Դրա շնորհիվ մինչև 300 աշխատող ունեցող ձեռնարկություններն այստեղ տալիս են ազգային արտահանման արժեքի 40%-ը: Սակայն ազգային հակամենաշնորհային միջոցները հիմնախնդիրը չեն լուծում:

XXI դարի կապիտալիզմի տարբերիչ առանձնահատկություններից մեկն էլ տնտեսական ցիկլի սինխրոնացումն է: Առաջներում ատում էին՝ երբ Ամերիկան փռշտում է, Եվրոպան ստանում է թոքերի բորբոքում: Սակայն աշխարհը նախկինում երբեք կախված չէր որևէ մի երկրի տնտեսական աճի տեմպերի արագացումից կամ դանդաղումից, ինչպես այժմ: Անցյալում տեղի ունեցող ֆինանսական ճգնաժամերը (օրինակ՝ 1997-1998թթ. Հարավ-Արևելյան Ասիայում) չէին ընդգրկում ամբողջ աշխարհը: Այժմ վիճակը փոխվել է, և կտրուկ աճած փոխկապվածությունը համաշխարհային տնտեսության գլոբալացման արդյունք է: Դրա հետ մեկտեղ XXI դարի կապիտալիզմը ավելի քիչ է ենթակա ցիկլային տատանումների, քան XX դարի կեսերինը: 2001-2002թթ. արտադրության անկումը հաստատեց, որ տնտեսական ցիկլը դարձել է ավելի սահուն: Դրան նպաստել են անընդհատ տեխնիկական առաջընթացը, որն ապահովել է հիմնական կապիտալի մշտական նորացումը, հիմնական արտադրական կապիտալի և հիմնական սպառման ֆոնդի (բնակելի տներ, տևական օգտագործման առարկաներ) գոյության տարբեր տևողությունները:

Բոլոր դեպքերում՝ պահպանվում է կապիտալիզմի զարգացման ցիկլայնությունը: Հենց՝ ճգնաժամերն են մաքրում նոր տեխնոլոգիաների ճանապարհը՝ սրբելով ամեն ավելորդը և հնացածը: Այդուհանդերձ՝ ճգնաժամերի սոցիալական հետևանքները (գործազրկությունը, կենսամակարդակի, աշխատավարձի իջեցումը) անցանկալի երևույթներ են:

Կայուն արժուրթային կուրսից լողացող կուրսին անցումը արգելք չէր ֆինանսական փոթորիկներին: Անցյալ հարյուրամյակի վերջի արժուրթային ճգնաժամերը ապացուցեցին, որ չկան իդեալական ֆինանսաարժուրթային համակարգեր: Իր մեջ թաքնված վտանգ է պարունակում նաև դոլարի, որպես համաշխարհային արտաարժուրթի, արտոնյալ վիճակը: Դոլարի մեջ է առարկայացված աշխարհի բոլոր երկրների արժուրթային ռեզերվների 65%-ը: Այդ արտոնության չարաշահումը ԱՄՆ-ի կառավարության կողմից արդեն հանգեցրել է համաշխարհային մասշտաբով նեգատիվ հետևանքի՝ ինֆլացիայի:

Այսօր վտանգն այն է, որ բավականին մեծ է ԱՄՆ-ի արտաքին պարտքը, 2003թ. սկզբի դրությամբ գնահատվում էր 3,5 տրիլիոն դոլար, այն դեպքում, երբ երկրի ՉՆԱ-ն 10-11 տրիլիոն դոլար է: Եթե ԱՄՆ-ի առևտրային հաշվեկշիռը մնա ներկայիս մակարդակին (տարեկան 350-400 մլրդ դոլար), ապա մոտ ապագայում 1,5 անգամ կավելանա նրա արտաքին պարտքը: Իսկ դա դանդաղ գործողության ռումբ է, որը պայթելու դեպքում աշխարհի ֆինանսական վիճակը կդառնա անկանխատեսելի: Այնպես որ՝ դոլարի կուրսի լուրջ անկումը կունենա ճակատագրական հետևանքներ: Դրան հակառակ՝ եվրոյի կայունացումը կարևոր գործոն է, սակայն եթե եվրոն տարածաշրջանային արժույթից չվերածվի համաշխարհային (ինչը մոտակա հեռանկարում անհնար է), դոլարը կմնա որպես համաշխարհային փող:

1990-ական թվականներին ԱՄՆ-ում քաղաքացիություն ստացավ «Նոր տնտեսություն» հասկացությունը, որն ընդգրկում էր այդ ժամանակաշրջանի հիմնական միտումները: Դրանցից գլխավորն աշխատանքի արտադրողականության աճի չափազանց բարձր տեմպերն էին (տարեկան 2,5-3%) XX դարի երկրորդ կեսի այդ ցուցանիշի համեմատությամբ (տարեկան 1,5%): Վերջին տարիներին ԱՄՆ-ի տնտեսական աճը տարեկան կտրվածքով կազմել է շուրջ 5%, գործազրկությունը կրճատվել է մինչև 4%, իսկ նոր տեխնիկա և տեխնոլոգիա արտադրող ու օգտագործող կորպորացիաների շահույթը տարեկան կազմել է 20, 50 և նույնիսկ՝ 100%:

Չարկ է նկատել, որ աշխատանքի արտադրողականության և տնտեսական աճի բարձր տեմպերը պայմանավորված էին հիմնական կապիտալում ներդրումների կտրուկ ավելացմամբ: Դրանք հատկապես շոշափելի էին նոր տեղեկատվական և հեռահաղորդակցության տեխնոլոգիաների ոլորտում:

Ժամանակակից կապիտալիզմի նոր երևույթներից են սեփականության բնագավառում կատարվող տեղաշարժերը: Հարստության ավանդական աղբյուրների (հողը, ընդերքը, անշարժ գույքը և այլն) կողքին ներկայումս առաջին պլան են մղվում գիտելիքներն ու դրանց մարմնավորումը տեխնոլոգիական գործընթացներում: Աշխարհի ամենահարուստ մարդը 1990-ական թվականների երկրորդ կեսից ոչ թե Բրունդեյի սուլթանն է, այլ՝ ամերիկացի Բիլ Գեյթսը, որը չունի ոչ՝ հողային սեփականություն, ոչ՝ գործարաններ, ոչ՝ էլ բանկեր: Նա վերահսկում է գիտական իմացությունը և դրա տեխնոլոգիական մարմնավորումը (համակարգիչները), ինչից օգտվում է ամբողջ աշխարհը:

Աշխարհը սրընթաց շարժվում է դեպի գիտելիքների, տեղեկատվության վրա հիմնված տնտեսություն: Բնականաբար, գնալով կարևորվում է կրթությունը, հատկապես՝ համակարգչային գրագի-

տություները, իսկ կրթությունը չպետք է դառնա ապրանք, այլ հասու լինի բոլորին:

Թեև կապիտալիզմը որպես հասարակական-տնտեսական համակարգ, արդյունավետ է՝ չունի այլընտրանք: Եթե համակարգը միակն է, և այլընտրանք չկա, ապա կարող է դառնալ զարգացման արգելակ: Իսկ կյանքի իմաստը միայն հարստության կուտակումը չէ:

XX դարի վերջին աշխարհի երկրների մեծամասնությունն ապրեց պարբերական ճգնաժամեր: Զարգացած երկրներն օգտագործեցին ճգնաժամից դուրս գալու տարբեր մոդելներ՝ հաշվի առնելով քաղաքական, տնտեսական, սոցիալական, պատմական և այլ գործոնների ազդեցությունը: Կարևորվեց պետության ակտիվ միջամտությունը տնտեսությանը: Հակաճգնաժամային ծրագրերի վերլուծությունը հանգեցնում է դրանց երկու հիմնական ուղղությունների բացահայտմանը: Առաջինը լիբերալ-ռեֆորմիստական ուղղությունն է, որը խարսխվում է շուկայական հարաբերությունների համակարգին և տնտեսության հակաճգնաժամային կարգավորման միջոցառումները զուգակցվում են սոցիալական վերափոխումների հետ: Զգալիորեն մեծացավ պետական բյուջեի նշանակությունը. ԱՄՆ-ում և Անգլիայում այն ճգնաժամից դուրս գալու հիմնական գործիքն էր: Նույնն էր վիճակը նաև Ֆրանսիայում:

Երկրորդ ուղղությունը տոտալիտար-բռնապետական պետության ստեղծման ուղղությունն էր: Դա դարձավ ճգնաժամից դուրս գալու մոդելի իրացման հետևանք Գերմանիայում և ճապոնիայում: Տնտեսության պետական կարգավորման ուժեղացումը հանգում էր կառավարման համակարգի խիստ կենտրոնացմանը, տնտեսության ռազմականացմանը, պետական բյուջեի և ֆինանսական մյուս լծակների օգտագործմանը տնտեսությունում լիակատար վերահսկողություն սահմանելու համար:

Աշխարհի առաջատար երկրների տնտեսությանը 1990-ական թվականների կեսերին բնութագրական էին հետևյալ հիմնական միտումները՝ տնտեսական աճի տեմպերի կայունություն (տարեկան միջինը 3% աճ), ֆինանսական շուկաների գլոբալացում և ազգային տնտեսությունների փոխազդեցության ուժեղացում, ժառայությունների ոլորտի «ապակենտրոնացում» ու տեսակարար կշռի աճ, տարածաշրջանային ինտեգրացիոն գործընթացների զարգացում:

Աշխարհի երկրների մեծամասնությունում շեշտադրվում է մասնավոր նախաձեռնությունը, պետական ձեռնարկությունների մասնավորեցումը, ներքին ու արտաքին կապերի ազատականացումը: Կարևորվում է սոցիալական ոլորտին պետության ուշադրության ուժեղացումը: Կայուն տնտեսական աճը շատ բանով համարվում է համաշխարհային տնտեսության արտաքին ոլորտի գլոբալ մրցակ-

ցության և ազատականացման արդյունք, որն արտացոլվում է համաշխարհային առևտրի ընդլայնման մեջ:

Որակապես նոր գծեր են ձեռք բերում համաշխարհային տնտեսության ինտերնացիոնալացումը և գլոբալացումը: Սոցիալիստական ճամբարի և ԽՍՀՄ-ի փլուզումից հետո ավելի շատ երկրներ են ներառվում համաշխարհային տնտեսական կապերի համակարգում: Կիրառվում են միասնական ստանդարտներ, որոնք առնչվում են շրջակա միջավայրի աղտոտումը կրճատելու, տեխնոլոգիաների, ֆինանսական ինստիտուտների գործունեությանը, ազգային վիճակագրությանը: Միջազգային կազմակերպությունները (առանձնապես Արժույթի միջազգային հիմնադրամը) մշակում են միասնական չափանիշներ մակրոտնտեսական և հարկային, զբաղվածության քաղաքականության գծով:

Տնտեսության «ապակենտրոնացումն» իր արտացոլումն է գտնում արտադրության ոլորտում զբաղվածների թվի կրճատման և ծառայությունների ոլորտում նրանց տեսակարար կշռի ավելացման մեջ: Այսպես, օրինակ՝ ԱՄՆ-ում ծառայությունների ոլորտում զբաղվածների տեսակարար կշիռը 1960թ. 56%-ից 1990-ական թվականների վերջերին ավելացավ մինչև 75%:

Ժամանակակից տնտեսական քաղաքականության մեջ նոր դեր է հատկացվում պետությանը: Պետությունը պետք է հանդես գա որպես օրինականության հիմքերի, մակրոտնտեսական իրավիճակի կայունության, սոցիալական ապահովության և կրթության, շրջակա միջավայրի պահպանության երաշխավոր: Զարգացման հիմնական ազդակ պետք է հանդիսանա սոցիալական գործոնի նշանակության ուժեղացումը երկրների մեծ մասում (ինչպես ԱՄՆ-ում է):

* *
*

XXI դարի սկզբին ձևափոխվեց միջազգային տնտեսական կապերի համակարգը: Կազմավորվեցին միասնական տնտեսական տարածություններ, որոնք ներառում էին տասնյակ պետություններ: Միջազգային կայունության և անվտանգության ապահովման, բնապահպանության և այլ հիմնախնդիրների լուծման գործում համագործակցությունը դարձել է մարդկության հետագա գոյության պայմանը: Ռադիո- և հեռուստահաղորդակցության, ինտերնետի համակարգերի զարգացումը հանգեցրել է միասնական, գլոբալ տեղեկատվական տարածության առաջացմանը:

Համաշխարհային տնտեսության միասնական համակարգի ձևավորման գործընթացն անցել է մի շարք փուլեր՝

- առաջացման (XIX դար),
- ազգային կապիտալների պայքարի՝ միջազգային տնտեսական հարաբերությունների նոր ձևավորվող գլոբալ համակարգում տիրապետություն ձեռք բերելու համար,
- աշխարհի բաժանման՝ երկու համակարգերի, որոնք գործում էին տարբեր սկզբունքներով և հակամարտ միասնության վիճակում էին («սառը» պատերազմի շրջան),
- անցում շուկայական տնտեսության գլոբալացմանը, միասնական տնտեսական տարածքների ստեղծմանը, համաշխարհային տնտեսությունում վերազգային միությունների տիրապետության փուլին (XX դարի վերջ – XXI դարի սկիզբ):

Եթե նախկինում աշխարհի երկրների մի մասը ինդուստրիալ քաղաքականությանն անցումը իրականացնում էր տարերայնորեն, աստիճանաբար, ապա որոշ մասն էլ՝ արագացված տեմպերով: Ներկայումս, երբ անցում է կատարվում «տեղեկատվական հասարակության» փուլին, տնտեսական զարգացման մակարդակով պետությունները բաժանվում են բարձր ինդուստրիալ (որոնք առաջատար են գիտելիքների արտադրության ոլորտում), ինդուստրիալ և հաջողությամբ ինդուստրացվող, այս երկու խմբերի հունքային և ագրարային կցորդ հանդիսացող, որոնք աշխատանքի միջազգային բաժանման համակարգում ծայրամասի նշանակություն ունեն և, վերջապես, նշված համակարգից դուրս մնացած մարզինալ երկրներ:

Բնականաբար, պետությունների յուրաքանչյուր խմբի շահերը, սոցիալական կառուցվածքի բնույթը, աշխարհի ընդհանուր վիճակի վրա ազդելու հնարավորությունը էապես տարբեր են: Գաղութային համակարգի փլուզումով աշխարհում առաջացավ ավելի քան 150 ինքնուրույն պետություն, որոնցից յուրաքանչյուրն ունի ունիկալ մշակույթ, ձգտումներ, մինչդեռ եվրոպական երկրները կորցրել են դրանց ուղղակի ազդելու հնարավորությունները:

Գլոբալացումը արդի աշխարհում է երկու բազային միտում ունի՝ ունիվերսալացում և բազմազանություն: Յենց դրանց փոխազդեցությունն է որոշում ժամանակակից համաշխարհային զարգացումը: Վերազգային ընկերությունների և բանկերի առաջատար դերից ելնելով՝ հարկ է նշել, որ ունիվերսալացման միտումները գերակշռում են հասարակական-քաղաքական կյանքի բոլոր ոլորտներում: ԽՍՀՄ-ի փլուզումից հետո միջազգային ասպարեզում մնաց միայն մեկ գերտերություն՝ ԱՄՆ-ը: Վերջինս «սառը պատերազմի» տարիներին ձևավորված ռազմաքաղաքական դաշինքների համակարգի կենտրոնում էր, վերազգային ընկերությունների և բանկերի մեծամասնության գործունեության բազան, երկիր, որի արժույթը դարձել է միջազգային առևտրային-ֆինանսական գործառնություն-

ների հիմնական հաշվարկային միավորը, և ունի համաշխարհային զարգացման վրա ազդելու մեծ հնարավորություններ:

Դեռևս 1990-ական թվականներին այդ ազդեցությունն ուղղված էր ամենուրեք ազատական-դեմոկրատական արժեքների, քաղաքական կյանքի կազմակերպման սկզբունքների արմատավորմանը և հարկ եղած դեպքում զենքի ուժով այսպես կոչված «հունամիտար ինտերվենցիայի» կազմակերպմանը:

Գլոբալացումը հասարակության և տնտեսության զարգացման հետինդուստրիալ շրջանի դրսևորում է աշխարհի երկրների հարաբերություններում: Այն հասարակական կյանքի, ժողովուրդների միջև տնտեսական, քաղաքական, սոցիալ-մշակութային, բնապահպանական, ժողովրդագրական կապերի ինտերնացիոնալացման նոր աստիճան է: Գլոբալացումը գնալով ավելի է ազդում տարբեր երկրների ներքին զարգացմանը և իրենից ներկայացնում է մարդկության տնտեսական պատմության նոր դարաշրջան: Ուղղված է տարբեր երկրների տնտեսական, գիտատեխնիկական և մշակութային փոխազդեցության մաքսիմալացմանը՝ անկախ նրանց քաղաքակրթական պատկանելության, զարգացման մակարդակի և տեղադիրքի: Տնտեսության գլոբալացումը դիտարկվում է որպես վերագային տնտեսական և մշակութային կապերի ամբողջ համակարգի դիվերսիֆիկացում, ընդլայնում, խորացում և ամրապնդում: Գլոբալացման հիմնական օղակների գործառույթում առանձնացվում են համաշխարհային առևտուրը, վերագային ֆինանսական հոսքերը, տեխնոլոգիաների և տեղակատվական ցանցերի կիրառումը, միջազգային արտադրական կոոպերացումը և այլն:

Աշխարհում բավականին շատ են գլոբալացման դրական և բացասական հետևանքների վերաբերյալ դատողությունները: Նույնիսկ սկսվել է հակագլոբալիստական շարժում: Դրական գնահատականներն ավելի հաճախ հնչում են զարգացած, բացասականը՝ զարգացող երկրներում: Բոլոր դեպքերում կարևոր է գլոբալացումը որպես տնտեսական, այլ ոչ թե քաղաքական կամ սոցիալ-մշակութային ֆենոմեն դիտարկելը:

Գլոբալացումը նշանակում է համաշխարհային տնտեսական կապերի ուժեղացում, դրանց մեջ ավելի շատ երկրների ներգրավում: Բայց և այնպես, հիմնական շարժիչ ուժը փոքրաթիվ երկրների խումբն է, որն ունի հետինդուստրիալ տիպի տնտեսություն: Ներկայումս Արժույթի միջազգային հիմնադրամի դասակարգմամբ համաշխարհային տնտեսական ավանգարդում հաշվվում է շուրջ 30 երկիր, որոնց շարքերը վերջերս լրացրին արևելասասիական նոր ինդուստրիալ երկրները: Այդուհանդերձ երկրների մեծամասնությունն իր մաշկի վրա զգում է գլոբալացման հակասական հետևանքները,

կան երկրներ էլ, որոնք դուրս են մնում համաշխարհային զարգացման հունից:

Տնտեսական կապերի ինտենսիվացումը, աշխատանքի միջազգային բաժանման խորացումն իրենց արտացոլումն են գտնում առևտրի ընդլայնման, համաշխարհային ՀՆԱ-ում դրա դերի մեծացման, մաքսային պատնեշների փոքրացման մեջ: Սակայն կարևորը ոչ թե քանակական աճն է, այլ՝ համաշխարհային շուկայում տեղի ունեցող հետինդուստրիալ բնույթի որակական փոփոխությունները: Համաշխարհային առևտրի վրա խորապես ազդում են զարգացած երկրների տնտեսությունում տեղի ունեցող կառուցվածքային տեղաշարժերը ծառայությունների ոլորտի (այդ թվում՝ տեղակատվական և բարձր տեխնոլոգիաների) օգտին: Դա ուղեկցվում է զարգացող և նոր ինդուստրիալ երկրներում ավանդական բազային ճյուղերի դուրս մղմամբ: Միաժամանակ, նրանցում արտացոլվում են ժամանակակից բարձր տեխնոլոգիատար արտադրանքի զանգվածային արտադրության տեղաբաշխման միտումները:

Չափազանց կարևոր է համաշխարհային առևտրի դերը տնտեսության գլոբալացման գործընթացում: Այսպես՝ արտահանման բաժինը ՀՆԱ-ում կազմում է նրա մեկ քառորդը: Միջազգային ապրանքաշրջանառության կառուցվածքում իջնում է վառելիքի և հումքի տեսակարար կշիռը, աճում նշակության բարձր աստիճանի արտադրանքի, ինչպես նաև զանազան ծառայությունների (տեղեկատվական, գիտատեխնիկական, տրանսպորտա-կոմունիկացիոն, զբոսաշրջային, ռեկրեացիոն, ֆինանսական, ապահովագրական և այլն) նշանակությունը:

Գլոբալացման գործընթացում կարևորվում է կապիտալի միջերկրային տեղաշարժերի ընդլայնումը: Բավական է նշել, որ օտարերկրյա ուղղակի ներդրումների (ՕՈՆ) ծավալը 1980թ. 1761 մլրդ դոլարից 1999թ. հասել է 4772 մլրդ դոլարի կամ աճել 2,5 անգամ: Փաստորեն կապիտալի արտահանումը (ուղղակի ներդրումների տեսքով) աճում է մի քանի անգամ արագ, քան ապրանքների արտահանումը: Սակայն, ի տարբերություն մոնոպոլիստական կապիտալիզմի ժամանակաշրջանի, ներկայումս ուղղակի ներդրումների մեծ մասն ուղղվում է ոչ թե զարգացող, այլ զարգացած երկրներ, ինչի արդյունքը ազգային տնտեսությունների փոխկապվածության և արդյունավետության աստիճանի բարձրացումն է: Ընդարձակվում են նաև բաժնետիրական կապիտալի մասշտաբները: 1997թ. բաժնետոմսերով համաշխարհային առևտրի շրջանառությունը գնահատվում էր 40 տրիլիոն դոլար, իսկ երկրների միջև արտարժույթի գնման և վաճառքի գումարը կազմում էր 400 տրիլիոն դոլար: Բնականաբար, արժեթղթերի և փողի այդ շարժի հետևում նաև իրական կապիտալի տեղաշարժն էր:

Տնտեսության հետինդուստրիալ վերակառուցումը հզոր ազդակ էր աշխատուժի միջերկրային տեղաշարժերի, աշխատանքի համաշխարհային շուկայի ձևավորման համար: Այդ շուկայի յուրահատկությունը պայմանավորված է մարդկանց սովորույթների տարբերությամբ, ազգային մենթալիտետով, պետությունների իմիգրացիոն քաղաքականությամբ: Նշված բնագավառում նկատվում է երկու միտում: Դրանցից մեկը թույլ զարգացած տարածաշրջաններից ոչ որակյալ և էժան աշխատուժի զանգվածային հոսքն է Արևմտյան Եվրոպայի երկրներ, ԱՄՆ, Կանադա: Նման պարագայում այդ երկրների հիմնական բնակիչները վերակրողմորոշվում են նոր մասնագիտություններով գերակա ճյուղերում աշխատելու համար: Իսկ ոչ որակյալ, ծանր աշխատանքը նյութական արտադրության և ծառայությունների ոլորտում դառնում է ներգաղթողների բաժինը:

Եվրոպա ներգաղթողները Աֆրիկայից, Մերձավոր Արևելքից, Թուրքիայից, հենց նույն Եվրոպայի հարավային գոտուց (Հունաստան, Իսպանիա, Պորտուգալիա) եկածներն են, ԱՄՆ՝ լատինաամերիկացիներն են, ինչպես նաև Ասիայից եկածները՝ չինացիներ, վիետնամցիներ, հնդիկներ, արաբներ, ֆիլիպինցիներ և այլն: Ընդամին ներգաղթողների հոսքը ընդունեց այնպիսի չափեր, որ մի շարք երկրների ստիպեց կիրառելու նրանց մուտքը սահմանափակող միջոցառումներ:

Աշխատանքի ժամանակակից համաշխարհային շուկային բնութագրական մյուս միտումը «ուղեղների և տաղանդների» արտահոսքն է, նրանց հայտնվելը զարգացած երկրներում և, ամենից առաջ, ԱՄՆ-ում: Դա հատկապես կարևորվում է հասարակության ինտելեկտուալացման, գիտելիքների վրա հիմնված տնտեսության առկայության պայմաններում: Ընդ որում՝ խոսքը վերաբերում է ոչ միայն արդեն կայացած և նշանավոր գիտնականներին, այլև երիտասարդ խոստումնակից հետազոտողներին ու մասնագետներին՝ հատկապես բնական և կիրառական գիտությունների ներկայացուցիչներին (մաթեմատիկա, ֆիզիկա, կենսաբանություն, ինֆորմատիկա, ծրագրավորում և այլն):

Ձարգացած երկրներում, հատկապես ԱՄՆ-ում, մշակվում են նշանակալի ֆինանսական ռեսուրսներով ամրապնդված ուղեղների ներգրավման հատուկ ծրագրեր: Այդ նպատակին են ծառայում նաև արտասահմանյան ուսանողներին իրենց բուհերում ուսուցանելու, երիտասարդ մասնագետների ստաժավորման, դրամաշնորհների տրամադրման համակարգերը: Բացահայտելով առավել ընդունակ մասնագետներին՝ նրանց տրվում է մշտական գրանցման և աշխատանքի հնարավորություն: Դրա շնորհիվ զարգացած երկրներում գիտության և տեխնիկայի առաջընթացն արագանում է, սակայն խորանում է ճեղքվածքը նրանց և ծայրամասային երկրների միջև

ինտելեկտուալ-տեխնոլոգիական պոտենցիալի առումով: Ապրանքների և ծառայությունների, կապիտալի և աշխատուժի համաշխարհային շուկայի զարգացման նոր աստիճանը գլոբալացման ազդեցությամբ արտացոլվում է նրա միջազգային տնտեսական ենթակառուցվածքի ձևավորման մեջ (որպես համաշխարհային և տարածաշրջանային): Դա, ամենից առաջ, տրանսպորտի (երկաթուղային, ավտոմոբիլային, օդային, ծովային, խողովակաշարային) համակարգն է: Նույնը վերաբերում է կապի միջոցներին (տիեզերական տեխնիկայի օգտագործմամբ): Վերանում են կապի ազգային միջոցների միջև գոյություն ունեցող սահմանները: Մեծ հրատապություն է ձեռք բերում միջազգային համագործակցության անհրաժեշտությունը շրջակա միջավայրի պահպանության բնագավառում:

Գլոբալացման վառ դրսևորումներից է միասնական համաշխարհային տեղեկատվական տարածության ձևավորումը համակարգիչների պարկի հիման վրա: Երկու տասնամյակի ընթացքում ստեղծվեց տեղեկատվության հավաքման և օգտագործման համակարգ (գիտատեխնիկական, ֆինանսատնտեսական, սոցիալ-քաղաքական, մշակութային), տասնյակ և հարյուր միլիոնավոր մարդկանց ունեցած արագ և բաց մուտքով: Ինտերնետը վեր է ածվում գործարար և ֆինանսական շփումների, մարդկանց հաղորդակցության կարևորագույն միջոցի:

Գլոբալացումն իր տնտեսական արտացոլմամբ հասարակական զարգացման օբյեկտիվորեն պայմանավորված գործընթաց է և ոչ թե ինչ-որ մեկի (կամ մարդկանց խմբի) կամքի արտահայտություն: Գաղտնիք չէ, որ դրա դեմ պայքարը, դա զսպելը հակագլոբալիստների կողմից անհեռանկար գործ է: Սակայն գլոբալացման իրական գործընթացները խիստ հակասական են և ծնում են մի շարք ցավազին հիմնախնդիրներ, որոնց լուծումը մարդկության առաջնահերթ նպատակներից է:

Գլոբալացումը որպես ժողովուրդների ու պետությունների կյանքի նոր որակ, տարբեր բնագավառներում տարբեր իմաստ ու սահման ունի: Այսպես՝ նոր տեխնոլոգիաների, գիտության, տեղեկատվության ոլորտում գործնականում անհրաժեշտություն չի առաջանում սահմանափակել շարժումը դեպի ընդհանուրը: Մինչդեռ նույնը չի կարելի ասել քաղաքական, տնտեսական և սոցիալական ինստիտուտների վերաբերյալ: Թեև համամարդկային արժեքների (դեմոկրատիա, մարդու իրավունքներ, տնտեսական գործունեության ազատություն) հիման վրա մերձեցումը անխուսափելի է և առաջադիմական, սակայն այստեղ մեծ չափով արտացոլվում են ազգային-պատմական ավանդույթները և ժողովուրդների փորձը, մենթալիտետը: Նման պարագայում բացառվում է դրսից վարքի նորմերի և ինստիտուտների մեխանիկական փոխառումը կամ

ստիպումը: Ինչ վերաբերում է մշակույթին, ապա կարելի է խոսել տարբեր մշակույթների փոխանակման և փոխադարձ հարստացման, այլ ոչ թե միաձուլման մասին:

Մինչդեռ գլոբալացումը, որի հզոր իմպուլսները բխում են ժամանակակից տեղեկատվական-տեխնոլոգիական հեղափոխությունից, սպառնում է ընդգրկել հասարակական ինստիտուտների ամբողջ համակարգը՝ լուրջ վտանգ ստեղծելով ժողովուրդների ինքնուրույնության համար: Աշխարհի վզին փաթաթվում է այն պատկերացումը, որ զարգացած երկրները և, ամենից առաջ՝ ԱՄՆ-ը, որոնք առավել հաջողությունների են հասնում հետինդուստրիալ կերպափոխված տնտեսության գծով, ներկայացնում են հասարակության սոցիալ-տնտեսական կազմակերպման և մշակույթի լավագույն, եթե ոչ՝ միակ նմուշը: Բազմաթիվ երկրներ ու ժողովուրդներ ստիպված են պաշտպանելու իրենց ազգային ավանդույթները, որոնք զլոբալացումը ազգային մենթալիտետի հետ զուգակցելու ուղիներ:

Բնականաբար, գլոբալացումը մեծ օգուտներ է բերում զարգացած երկրների խմբին, որին բաժին է ընկնում նոր բարձր տեխնոլիագատար տնտեսություն, համաշխարհային առևտրի և կապիտալի միջազգային շրջանառության գերակշիռ մասը: Այդ «ոսկյա միլիարդը» սպառում է հումքի և վառելիքի համաշխարհային ռեսուրսների առյուծի բաժինը: Բնակչության կենսամակարդակը նշված երկրներում բավականին բարձր է: Վերջիններիս ընդհուպ մոտենում են նոր ինդուստրիալ երկրները՝ Մալայզիան, Սինգապուրը, Թայվանը, Հարավային Կորեան, ինչպես նաև Արգենտինան, Բրազիլիան, Մեքսիկան: Դրանցում արագ տնտեսական աճը հիմնականում կապված է ժամանակակից արտադրանքի զանգվածային արտադրության զարգացման հետ՝ «ոսկյա միլիարդի» երկրներում մշակված տեխնոլոգիաների հիման վրա:

Գլոբալացումից հսկայական շահաբաժիններ են ստանում համաշխարհային շուկային հումքի և էներգամետաղների խոշոր մատակարարները և ամենից առաջ՝ Մերձավոր Արևելքի, Աֆրիկայի ու Լատինական Ամերիկայի նավթ արդյունահանող երկրները: Խոշոր առաջընթաց է ապրում ժամանակակից Չինաստանն իր 1,3 մլրդ բնակչությամբ. արագացել է Հնդկաստանի, Ինդոնեզիայի, Ֆիլիպինների տնտեսական զարգացումը, թեև դրանցում բնակչության նշանակալի մասը աղքատության մեջ է:

Նշված բոլոր երկրներն այս կամ այն չափով ներառվում են գլոբալացմամբ պայմանավորված տնտեսական զարգացման ժամանակակից գործընթացներում և հիմնականում ունեն դրական արդյունքներ: Այսպես՝ XX դարի վերջին 30-ամյակում զարգացող երկրների բաժինը համաշխարհային առևտրում աճեց 1,8 անգամ և հասավ 32,1%-ի: Դա հիմնականում տեղի ունեցավ վերամշակող

արդյունաբերության արտադրանքի հաշվին, որի բաժինը արդյունաբերական ապրանքների համաշխարհային արտահանման մեջ աճել է 5 անգամ (5,5-ից հասել է 26,8%-ի):

1981-1997թթ. համաշխարհային արդյունաբերական արտահանման մեջ զարգացող երկրների բաժնի 15,9 տոկոսային կետով (10,6%-ից 26,5%-ի) բարձրացման պայմաններում դրանց տեսակարար կշիռը համաշխարհային արդյունաբերական արտադրության մեջ ավելացել է միայն 7,2 տոկոսային կետով: Ջարգացող երկրների շրջանակից դուրս են մնացել Աֆրիկայի երկրների մեծամասնությունը (Սահարայից հարավ գտնվող), Ասիայի և Լատինական Ամերիկայի որոշ պետություններ, որոնք կազմում են այսպես կոչված «չորրորդ աշխարհի» ընդարձակ գոտին: Նրանց տնտեսությունը մնում է թույլ զարգացած, լճացման վիճակում, նահապետական-պարզունակ: Աշխարհում 1,2 մլրդ մարդ օրական ունի 1 դոլարից պակաս եկամուտ: Սով և հիվանդություններ, ջրի պակաս՝ հակասանիտարական վիճակ, բարձր մահացություն (հատկապես՝ մանկական), անգրագիտություն՝ այսպիսին է հարյուր միլիոնավոր մարդկանց ճակատագիրը:

Ժամանակակից կապիտալի շահույթի հիմնական աղբյուրը «նոր» տնտեսությունն է, բարձր տեխնոլոգիաները, տեղեկատվությունը, ֆինանսական գործարքները, որոնք տեղ ունեն աշխարհի զարգացած մասում: Աղքատության պատճառը ոչ թե գլոբալացումն է, այլ «չորրորդ աշխարհի» երկրների կտրվածությունը նոր գործընթացներից, տնտեսական գործունեությանը զարգացած պետությունների և կապիտալի մասնակցության ոչ շահագրգռվածությունը:

Նման վիճակում մեծ նշանակություն է ստանում աղքատության գոտիների հաղթահարումը համաշխարհային ջանքերով: Դրա հետ է կապված՝ նաև գլոբալ աշխարհի ժողովրդագրական և բնապահպանական սուր հիմնախնդիրների լուծումը:

Գլոբալացման գործընթացների հակասականությունը և դրանց շուրջ քաղաքական պայքարի սրությունը բացատրվում են XX դարի վերջերի կոնկրետ-պատմական իրավիճակով: Ամբողջ համաշխարհային զարգացման վրա վիթխարի ազդեցություն թողեց «սառը պատերազմի» ավարտը և երկբևեռ մոդելից նոր մոդելին՝ մեկ գերտերության (ԱՄՆ-ի) գերիշխանությանը անցումը: Մինչև այդ գլոբալացումը աշխարհի երկրների մեծ մասում ուներ ամերիկյան, փոքր մասում՝ խորհրդային կողմորոշում:

ԽՍՀՄ-ի և սոցիալիստական ճամբարի փլուզումից հետո իրադրությունը կտրուկ փոխվեց, և միակ գերտերությունը՝ ԱՄՆ-ը, գայթակղություն ունեցավ որոշելու ամբողջ մարդկության ճակատագիրը: Հենց դա էլ ուժեղացրեց հակագլոբալիստական շարժումը, և

միջազգային ահաբեկչությունն ամենից առաջ ուղղվեց ԱՄՆ-ի և նրա դաշնակիցների դեմ:

Ներկայումս ուրվագծվում է գլոբալացման հետագա էվոլյուցիայի երկու տարբերակ: Առաջինը հիմնված է զարգացած երկրների և առաջին հերթին՝ ԱՄՆ-ի շահերի վրա, որն անտեսում է թույլ զարգացած երկրների իրավունքները, խորացնում հակասությունները, աշխարհում սրում ժողովրդագրական և բնապահպանական իրավիճակը:

Մյուս տարբերակը կապվում է գլոբալացմանը դեմոկրատական և կարգավորվող բնույթ հաղորդակցելու հետ՝ ելնելով համաշխարհային ընկերակցության և բոլոր երկրների ու ժողովուրդների շահերից: Դա բացառում է աշխարհի ուժեղների կողմից թելադրանքը, սահմանափակում տարերային շուկայական ուժերի գործողությունն այնտեղ, որտեղ դրանք ունակ են հասցնելու նեգատիվ սոցիալ-տնտեսական և բնապահպանական հետևանքների: Այս պարագայում կարող են ձեռնարկվել համաձայնեցված ջանքեր թույլ զարգացած երկրների հետամնացությունը, աղքատությունը վերացնելու նպատակով:

Միջազգային ահաբեկչության գրոհը ԱՄՆ-ի դեմ 2001թ. սեպտեմբերի 11-ին և դրան հաջորդող իրադարձություններն ԱՖ-դանստանում ու Իրաքում ավելի սրեցին գլոբալացման տարբերակների ընտրությունը: Հարկ է նշել, որ Ռուսաստանը երկրորդ տարբերակի կողմնակից է:

* *
*

Գլոբալացման մասշտաբների ընդլայնմանը զուգընթաց ուժեղանում են ինտեգրացիոն գործընթացները: Ընդամին՝ տնտեսական ինտեգրման հիմնախնդիրն առաջին, արժարժվել է եվրոպական երկրներում: Դեռ երկրորդ համաշխարհային պատերազմի վերջերին՝ 1944թ., թևածում էր եվրոպական տնտեսական ինտեգրման գաղափարը: Առաջին փորձը Բելգիայի, Հոլանդիայի, Լյուքսեմբուրգի կառավարությունների (որոնք տարագրության մեջ էին Լոնդոնում) որոշումն էր 1948թ. հունվարի 1-ից մաքսային միության ստեղծման վերաբերյալ, որը հետագայում հայտնի դարձավ Բենիլյուքս անունով: 1949-1950թթ. վերացվեցին արդյունաբերական արտադրանքի ներմուծման սահմանափակումները, իսկ 1950-ական թվականների կեսերին Բենիլյուքսի շրջանակներում ազատ շրջանառում էին աշխատուժը և կապիտալները:

1948թ. մայիսին այդ պետությունների օրինակին հետևեցին Ֆրանսիան և Իտալիան, որոնք կազմավորեցին Ֆրանսիտալ մաքսային միությունը: Նույն ժամանակ ԱՄՆ-ը և Մեծ Բրիտանիան, որոնք որոշում էին ընդունել Գերմանիայի ծանր արդյունաբերության վրա միջազգային հսկողություն սահմանելու վերաբերյալ, ստեղծեցին միջազգային վարչակազմ, որի կազմի մեջ մտան ԱՄՆ-ը, Մեծ Բրիտանիան, Ֆրանսիան, ԳՖՅ-ն և Բենիլյուքսի երկրները: Փաստորեն՝ XX դարի երկրորդ կեսին Արևմտյան Եվրոպայում միջպետական կապերը աստիճանաբար վեր են ածվում միջազգային տնտեսական ինտեգրման: Սա երկրների տնտեսաքաղաքական միավորման գործընթաց է՝ ազգային տնտեսությունների կայուն փոխադարձ կապերի և աշխատանքի բաժանման, փոխգործոցության հիման վրա:

Պաշտոնապես մինչև 1993թ. նոյեմբերի 1-ը արևմտաեվրոպական երկրների առաջատար ինտեգրացիոն միավորումը կոչվում էր Եվրոպական համագործակցություն, որն ի հայտ եկավ 1967թ.՝ 3 նախկին ինքնուրույն տարածաշրջանային կազմակերպությունների միավորմամբ: Դրանք էին՝

1. Աժիսի և պողպատի Եվրոպական միավորումը: 1951թ. ապրիլի 18-ին Ֆրանսիան, ԳՖՅ-ն, Իտալիան և Բենիլյուքսի երկրները ստորագրեցին Փարիզյան համաձայնությունը 1952թ. հուլիսի 25-ից այդ կազմակերպության ստեղծման վերաբերյալ:
2. Եվրոպական տնտեսական համագործակցությունը: 1957թ. մարտի 25-ին Ֆրանսիան, Իտալիան, ԳՖՅ-ն և Բենիլյուքսի երկրները ստորագրեցին Յռոմի պայմանագիրը, որը նախատեսում էր 1958թ. հունվարի 1-ից ստեղծել Եվրոպական տնտեսական համագործակցություն և ատոմային էներգիայի գծով Եվրոպական համագործակցություն (Եվրատոմ): 1979թ. Եվրոպական տնտեսական համագործակցության մեջ մտան Մեծ Բրիտանիան, Իռլանդիան, Դանիան, 1981թ.՝ Յունաստանը, 1986թ.՝ Պորտուգալիան և Իսպանիան, 1995թ.՝ Շվեդիան, Ավստրիան, Ֆինլանդիան: Նշված 4 ընդարձակումների շնորհիվ ինտեգրացիոն միավորման մասնակիցների քանակը 6-ից հասավ 15-ի, տարածքը՝ 1277 հազարից 3236 հազար քառ. կմ-ի, բնակչությունը՝ 173,3 մլն-ից (1960թ.) 373,4 մլն-ի (1995թ.): Հինգերորդ ընդարձակումն ընդգրկել է 12 երկիր և Եվրամիության բնակչությունն աճելու է 100 մլն-ով կամ 28%-ով: Դրանցից 10-ը իրավաբանորեն ԵՄ անդամ դարձան 2004թ. մայիսին, իսկ մնացած երկուսը՝ Բուլղարիան և Ռումինիան, կդառնան 2007թ.:

Ընդսմին՝ այդ երկրներն իրենց տնտեսական և սոցիալական զարգացմամբ բավականին հետ են մնում ԵՄ-ի միջին մակարդակից: Նշված երկրներում 2002թ. տվյալներով ՀՆԱ-ի արտա-

դրությունը բնակչության 1 շնչի հաշվով կազմում էր ԵՄ-ի նույն ցուցանիշի 40%-ը:

3. Ազատ առևտրի եվրոպական ասոցիացիան: 1960թ. հունվարի 4-ին եվրոպական 7 երկրի կողմից ստորագրվեց Ստոկհոլմյան կոնվենցիան: Դրանք էին Մեծ Բրիտանիան, Նորվեգիան, Շվեդիան, Դանիան, Ավստրիան, Շվեյցարիան, Պորտուգալիան: 1991թ. հոկտեմբերին եվրոպական Համագործակցության և Ազատ առևտրի եվրոպական ասոցիացիան համաձայնության եկան եվրոպական տնտեսական տարածության ստեղծման մասին, որն ընդգրկում էր 19 երկիր: 1973թ. հունվարին Նորվեգիան լքեց Համագործակցությունը, քանի որ նախորդ տարվա նոյեմբերին իր բնակչության մեծամասնությունը հանրաքվեով հանդես եկավ դրա դեմ:

Հռոմի պայմանագիրը (1957թ.) առաջին փուլում նախատեսում էր 12 տարվա ընթացքում վերացնել մաքսատուրքերը և սահմանել ընդհանուր արտաքին տարիֆ: Մաքսային միությունը ձևավորվեց 1968թ. հուլիսի 1-ին: Դրա կազմավորումից հետո ստեղծվեցին եվրոպական հանձնաժողովը և Նախարարների խորհուրդը՝ Բրյուսելում, Դատարանը՝ Լյուքսեմբուրգում և Եվրոխորհրդարանը՝ Ստրասբուրգում:

Հռոմի պայմանագիրը երկրորդ փուլում նախատեսում էր լիակատար տնտեսական ինտեգրում: Սա նշանակում էր ինչպես մաքսային միության գոյություն, այնպես էլ ապրանքների, ծառայությունների, կապիտալների և աշխատուժի շարժման ազատության ապահովում, միասնական շուկայի կազմավորում առանց սահմանների: Միասնական շուկայից հետո հաջորդ փուլը միասնական դրամի կիրառումն էր: Այդ գործընթացի հիմքը Միասնական գյուղատնտեսական քաղաքականության ընդունումն էր (ՄԳՔ) 1967թ.:

Համագործակցությունը մեծ ջանքեր գործադրեց տրանսպորտային ծառայությունների շուկան կարգավորելու, ընդհանուր բյուջե ստեղծելու նպատակով: 1977թ. այդ բյուջեն կազմում էր Եվրոպական տնտեսական համագործակցության (ԵՏՀ) երկրների համախառն ազգային արդյունքի 0,7%-ը: Բյուջեն լրացվում էր նաև ներմուծվող տուրքերից և ԵՏՀ երկրների անդամավճարներից, անդամ երկրների անմիջական մուծումներից, իսկ 1979թ. հունվարի 1-ից ավելացված արժեքի հարկի մեկ %-ը փոխանցվում էր ԵՏՀ բյուջե:

1990-ական թվականներին էլ ավելի ընդլայնվեց ԵՏՀ-ն, ամենից առաջ՝ Ազատ առևտրի եվրոպական ասոցիացիայի երկրների հաշվին: 1994 թվականից գործում է Եվրոպական տնտեսական տարածությունը: Եվրոպական համագործակցության անդամ ներկայումս համարվում են նաև Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրները:

1993թ. նոյեմբերից ուժի մեջ մտավ Մասստրիխտյան համաձայնագիրը եվրոպական քաղաքական, տնտեսական և տարադրամային միության Եվրոմիության ստեղծման վերաբերյալ: Այն նախատեսում էր 1999թ. հունվարի 1-ից միասնական տարադրամի՝ եվրոյի կիրառում, ընդհանուր արտաքին քաղաքականության մշակում, Եվրոխորհրդի դերի բարձրացում, անվտանգության, ներգաղթի, քաղաքական ապաստան տալու բնագավառներում համագործակցություն: 1994թ. հունվարի 1-ից գործում են Եվրոմիության հավանությանն արժանացած «Տնտեսական քաղաքականության հիմնական ուղղությունները», որով ղեկավարվում են Համագործակցության անդամ բոլոր երկրները:

Փաստորեն Արևմտյան Եվրոպան զգալի քայլեր արեց տնտեսական և քաղաքական ինտեգրման ուղղությամբ: Եվրոմիությունը իր ստեղծումից ի վեր միավորում է աշխարհի բնակչության 6%-ը, թողարկում է ավելի շատ արտադրանք, քան ԱՄՆ-ը: Նրա արդյունաբերական արտադրության ծավալը կազմում է համաեվրոպական արտադրության ծավալի 90%-ից ավելին: 1999թ. սկզբից Եվրոմիության անդամ 11 երկրներ անցել են եվրոյի օգտագործմանը, բացառությամբ՝ Անգլիայի, Բելգիայի, Շվեդիայի և Հունաստանի: Եվրոմիության մեջ պաշտոնապես գործածվում է 11 լեզու, առավել գործածականը անգլերենն է, ֆրանսերենը, գերմաներենը:

Եվրոմիությունը կառուցված է ապրանքների, կապիտալի, աշխատուժի, տեղեկատվության շուկաների միաձուլման հիման վրա, ընդհանուր արժույթից բացի ստեղծել է նաև ընդհանուր բանկ:

Արդի համաշխարհային շուկայական (ինչպես և ազգային) տնտեսության ինստիտուցիոնալ կառուցվածքը անհնար է պատկերացնել առանց պետական կարգավորման լծակների ակտիվ օգտագործման: Այս պարագայում պետական կարգավորումը ձեռք է բերում միջպետական բնույթ: Միջպետական տնտեսական ինստիտուտների ներկայիս համակարգը ներառում է ուղղահայաց (ֆունկցիոնալ) և հորիզոնական (տարածքային) միջպետական կառույցներ: Առաջիններին են վերաբերում Միջազգային Արժուքային Հիմնադրամը, Զարգացման և Վերակառուցման Միջազգային Բանկը, ՄԱԿ-ի հանձնաժողովները և կոմիտեները սոցիալ-տնտեսական և բնապահպանական հարցերով և այլ կազմակերպություններ: Նշված կառույցներն ստեղծվել են տարբեր ժամանակներում՝ կոնկրետ խնդիրներ լուծելու նպատակով: Դրանց մի մասն ունի կարգադրիչ, մյուս մասը՝ հանձնարարականներ տվող, երրորդները՝ միայն խորհրդակցական գործառույթներ:

Տարածաշրջանային տնտեսական միավորումները, որոնցից հիմնականներն են Եվրոմիությունը, Ազատ Առևտրի Հյուսիսամերիկյան Ընկերությունը, Հարավարևելյան Ասիայի Պետությունների Միություն-

նը (ԱՍԵԱՆ), Ասիական-Խաղաղօվկիանոսյան Տնտեսական Համագործակցությունը, նույնպես ստեղծվել են տարբեր ժամանակներում երկրների միջև համաձայնությունների հիման վրա և արտացոլում են տարածաշրջանային տնտեսական համագործակցության տարբեր աստիճաններ: Առավել ներկայացուցչականը Եվրոմիությունն է, որն ստեղծվել է Արևմտյան Եվրոպայի երկրների փուլային ինտեգրացիոն մերձեցման հիման վրա:

Եվրոպական ինտեգրումից բացի կարևոր է նաև Ազատ Առևտրի Հյուսիսամերիկյան Ընկերությունը (ՆԱՖՏԱ): 1992թ. կնքվեց համաձայնագիր ԱՄՆ-ի, Կանադայի և Մեքսիկայի միջև Հյուսիսամերիկյան ընդհանուր շուկայի կազմավորման վերաբերյալ, որն ուժի մեջ մտավ 1994թ. հունվարի 1-ից: Այս համաձայնագիրը ոչ միայն վերացնում է մաքսային արգելքները, այլև ուղի է հարթում միասնական ցամաքային (կոնտինենտալ) շուկայի ստեղծման համար, որտեղ ազատորեն շրջանառում են ապրանքները, ծառայությունները, կապիտալը և աշխատուժը:

Ներկայումս բավականին ակտիվացել է Ասիական-Խաղաղօվկիանոսյան Տնտեսական Համագործակցության գործունեությունը:

Օգնագրության գրականություն

1. История мировой экономики. Учебник для вузов (Под ред. Г.Б.Поляка, А.Н.Марковой). М., 1999.
2. Друзик Я.С. Мировая экономика на финише века. Минск, 1997.
3. Бор М.З. История мировой экономики. М., 1998.
4. История мировой экономики (Под ред. М.В.Конотопова, С.И.Сметанина). М., 1997.
5. Экономическая история зарубежных стран (Под общей ред. В.И.Голубовича). Минск, 1997.
6. Конотопов М.В., Сметанин С.И. История экономики. Учебник для вузов. М., 1999.
7. Новейшая история зарубежных стран: Европа и Америка. 1917-1945. М., 1989.
8. Экономическая история капиталистических стран (Под ред. Ф.Я.Полянского, В.А.Жамина). М., 1986.
9. Экономическая история капиталистических стран (Под ред. В.Т.Чунтулова, В.Г.Сарычева) М., 1985.
10. Широков Г.В. Развивающиеся страны в мировом капиталистическом хозяйстве. М., 1987.
11. Экономическая история СССР (Чунтулов В.Т. и др.). М., 1987.
12. Государство и экономика развитых капиталистических стран в 80-х гг. М., 1989.
13. Война и послевоенное развитие мирового хозяйства. 1939-1991. Учебное пособие для вузов. М., 1992.
14. История мировой экономики. Хозяйственные реформы. 1920-1990. Учебное пособие для вузов (Под ред. А.Н.Марковой). М., 1995.
15. Тимошина Т.М. Экономическая история России. Учебное пособие. М., 1989.
16. История народного хозяйства. Словарь-справочник (Под ред. А.Н.Марковой). М., 1995.
17. Экономическая энциклопедия. Политическая экономика. В 4-х томах. М., 1972-1980.

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ	3
ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	
«ՏՆՏԵՍԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ» ԴԱՍԸՆԹԱՑԻ ԱՌԱՐԿԱՆ, ՄԵԹՈԴԸ, ՊԱՐԲԵՐԱՑՈՒՄԸ	4
Բ Ա Ժ Ի Ն Ա Ռ Ա Ջ Ի Ն	
ՆԱԽՆԱԴԱՐՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆԸ ԵՎ ՀԻՆ ԱՇԽԱՐՀԸ	8
Գ Լ ՈՒ Խ I	
ՆԱԽՆԱԴԱՐՅԱՆ-ՀԱՄԱՅՆԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՐԳԸ	8
Գ Լ ՈՒ Խ II	
ՍՏՐԿԱՏԻՐԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՐԳԸ	16
2.1. Ընդհանուր բնութագիրը	16
2.2. Հին Արևելքի պետությունների ստրկատիրական տնտեսության առանձնահատկությունները	19
2.3. Հին Հունաստանի տնտեսական զարգացումը	22
2.4. Հին Հռոմի տնտեսական զարգացումը	24
Բ Ա Ժ Ի Ն Ե Ր Կ Ր Ո Ր Դ	
ՄԻՋՆԱԴԱՐ	27
Գ Լ ՈՒ Խ III	
ՖԵՌՊԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԳԾԵՐԸ, ՏՆՏԵՍԱԿԱՐԳԻ ՊԱՐԲԵՐԱՑՈՒՄԸ	27
Գ Լ ՈՒ Խ IV	
ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ ՄԻՋՆԱԴԱՐՈՒՄ	31

Գ Լ ՈՒ Խ V

ԱՐԵՎՄՏՅԱՆ ԵՎՐՈՊԱՅԻ ԱՌԱՋԱՏԱՐ ԵՐԿՐՆԵՐԻ, ՈՌԻԱԱՍՏԱՆԻ ԵՎ ՃԱՊՈՆԻԱՅԻ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ ՄԻՋՆԱԴԱՐՈՒՄ ...	37
5.1. Ֆեոդալական-միապետական համակարգի հաստատումը Ֆրանսիայում.....	37
Ֆեոդալական հարաբերությունների ձևավորումը և զարգացումը Գերմանիայում.....	41
5.3. Անգլիայի տնտեսական դրությունը XI-XVII դարերում.....	46
5.4. Հոլանդիայի տնտեսական դրությունը XVI-XVII դարերում.....	54
5.5. Ռուսաստան (IX – XVII դարեր).....	60
5.5.1. Կիևյան Ռուսիայի տնտեսական զարգացումը IX-XII դարերում.....	60
5.5.2. Ռուսաստանի տնտեսական դրությունը XIII-XIV դարերում.....	61
5.5.3. Ռուսական կենտրոնացված պետության տնտեսական զարգացումը XV-XVII դարերում ...	63
5.6. Ճապոնիայի տնտեսական զարգացման ընդհանուր բնութագիրը ֆեոդալիզմի ժամանակաշրջանում.....	65
5.7. Կապիտալի նախասկզբնական կուտակումը Արևմտյան Եվրոպայի երկրներում.....	69
5.8. Աշխարհագրական մեծ հայտնագործությունների տնտեսական նախադրյալները և հետևանքները.....	73

Բ Ա Ժ Ի Ն Ե Ր Ր Ո Ր Դ

ՆՈՐ ԺԱՄԱՆԱԿ.....	79
------------------	----

Գ Լ ՈՒ Խ VI

ԱՐԵՎՄՏՅԱՆ ԵՎՐՈՊԱՅԻ, ԱՄՆ-Ի, ՃԱՊՈՆԻԱՅԻ ԵՎ ՈՌԻԱԱՍՏԱՆԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՋԱՐԳԱՅՈՒՄԸ XVІІІ – XIX ԴԱՐԵՐՈՒՄ.....	79
6.1. Ժամանակաշրջանի ընդհանուր բնութագիրը.....	79

6.2.	ԱՄՆ-ի տնտեսական զարգացումը մինչնոնոպոլիս-տական կապիտալիզմի ժամանակաշրջանում.....	81
6.2.1.	Հյուսիսային Ամերիկայի տնտեսական դրությունը գաղութատիրության ժամանակաշրջանում.....	81
6.2.2.	Արդյունաբերական հեղաշրջումը ԱՄՆ-ում.....	85
6.2.3.	Քաղաքացիական պատերազմի տնտեսական պատճառները և հետևանքները.....	88
6.3.	Անգլիայի տնտեսական վերելքը դիտարկվող ժամանակաշրջանում.....	91
6.4.	Ֆրանսիայի տնտեսական դրությունը XVIII-XIX դարերում.....	97
6.5.	Գերմանիան XVIII-XIX դարերում.....	105
6.6.	«Մեյժիի» հեղափոխության նախադրյալները և սոցիալ-տնտեսական հետևանքները ճապոնիայում.....	112
6.6.1.	Արդյունաբերական հեղաշրջումը և կապի-տալիզմի զարգացումը ճապոնիայում.....	116
6.6.2.	Արտաքին էքսպանսիան.....	118
6.7.	Ռուսաստանի տնտեսական դրությունը XVIII-XIX դարերում.....	119

Բ Ա Ժ Ի Ն Չ Ո Ր Ր Ո Ր Դ

ՆՈՐԱԳՈՒՅՆ ԺԱՄԱՆԱԿ.....	125
------------------------	-----

Գ Լ ՈՒ Խ VII

ԱՌԱՋԱՏԱՐ ԲՈՒՐԺՈՒԱԿԱՆ ԵՐԿՐՆԵՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՋԱՐԳԱՑՈՒՄԸ ՄՈՆՊՈԼԻՍՏԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԻԶՄԻՆ ԱՆՑՄԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ (XIX դարի վերջ - XX դարի սկիզբ).....	125
7.1. Երկրորդ գիտատեխնիկական հեղափոխությունը և համաշխարհային արտադրողական ուժերի զարգացումը.....	125

7.2. ԱՄՆ-ի վերածուճը աշխարհի առաջատար տերության (1871-1913 թթ.).....	130
7.2.1. Տնտեսական աճի գործոնները	130
7.2.2. Արտադրության համակենտրոնացումը և մոնոպոլացումը	134
7.3. Գերմանիայի տնտեսական վերելքի նախադրյալները	136
7.4. Արդյունաբերական գերիշխանության կորուստը Անգլիայում	141
7.5. Ֆրանսիայի տնտեսական հետամնացության պատճառները մոնոպոլիստական կապիտալիզմի ժամանակաշրջանում	144
7.6. Ռուսաստանի տնտեսական զարգացումը մոնոպոլիստական կապիտալիզմի ժամանակաշրջանում	147

Գ Լ ՈՒ Խ VIII

ԱՇԽԱՐՀԻ ԱՌԱՋԱՏԱՐ ԵՐԿՐՆԵՐԻ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ ՄԻՋՊԱՏԵՐԱԶՄՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ (1914-1939թթ.).....	152
8.1. Առաջին համաշխարհային պատերազմի ազդեցությունը առաջատար երկրների տնտեսական դրության վրա	152
8.2. ԱՄՆ-ի տնտեսական զարգացումը 1914-1939թթ.....	154
8.3. Գերմանիայի տնտեսական դրությունը 1914-1939թթ.....	158
8.4. Մեծ Բրիտանիայի տնտեսությունը միջպատերազմյան ժամանակաշրջանում	165
8.5. Ֆրանսիայի տնտեսական զարգացումը 1914-1939թթ.....	169
8.6. Ճապոնիայի տնտեսական զարգացումը միջպատերազմյան ժամանակաշրջանում	173
8.7. ԽՍՀՄ տնտեսական զարգացումը սոցիալիզմի հաստատման պայմաններում.....	174

Գ Լ ՈՒ Խ IX

ԱՇԽԱՐԴԻ ԱՌԱՋԱՏԱՐ ԵՐԿՐՆԵՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՌԱՆՁՆԱԴԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՐԿՐՈՐԴ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻՑ ՀԵՏՈՒ	179
9.1. Ամերիկայի Միացյալ Նահանգներ	179
9.1.1. Տնտեսության պետական կարգավորումը.....	184
9.1.2. Գյուղատնտեսությունը.....	185
9.1.3. Արտաքին տնտեսական կապերը.....	186
9.2. Գերմանիայի Ֆեդերատիվ Հանրապետություն	188
9.2.1. Երկրորդ համաշխարհային պատերազմի տնտեսական հետևանքները.....	188
9.2.2. Գերմանիայի տնտեսական և քաղաքական կյանքի վերակառուցումը պատերազմից հետո.....	188
9.2.3. Էրհարդի վերափոխումները.....	189
9.2.4. Արևմտագերմանական «Տնտեսական հրաշքը».....	191
9.2.5. ԳՖՀ-ի տնտեսությունը 1960-1990-ական թվականներին.....	192
9.3. Մեծ Բրիտանիա	195
9.3.1. Երկրորդ համաշխարհային պատերազմի տնտեսական հետևանքները Մեծ Բրիտանիայում	195
9.3.2. Տնտեսության հետպատերազմյան վերականգնումը.....	196
9.3.3. Անգլիայի տնտեսական զարգացման առանձնահատկությունները 1960-1990-ական թվականներին.....	199
9.4. Ֆրանսիա	203
9.4.1. Գերմանական օկուպացման տնտեսական հետևանքները.....	203
9.4.2. 1950-1960-ական թվականներ. արդիականացման կուրսը	205
9.4.3. Ֆրանսիայի տնտեսության զարգացման	

	առանձնահատկությունները 1970-1990-ական թվականներին.....	208
9.5.	Ճապոնիա.....	215
9.5.1.	Ճապոնիայի պարտության տնտեսական հետևանքները.....	216
9.5.2.	1974-1975թթ. համաշխարհային տնտեսական ճգնաժամը.....	220
9.6.	ԽՍՀՄ տնտեսությունը հայրենական պատերազմի և հետպատերազմյան ժամանակաշրջանում.....	223
9.7.	Կանադայի և Իտալիայի տնտեսական զարգա- ցումը երկրորդ համաշխարհային պատերազմից հետո.....	233
9.7.1.	Կանադա.....	233
9.7.2.	Իտալիա.....	242

Գ Լ ՈՒ Խ X

ՉԻՆԱՍՏԱՆԻ ԵՎ ԿՈՐԵԱՅԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ

XX ԴԱՐՈՒՄ.....	248
10.1. Չինաստան.....	248
10.2. Կորեա.....	260

Գ Լ ՈՒ Խ XI

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐՆ ՈՒ ԱՌԱՆՁՆԱԳԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ XX ԴԱՐԻ ՎԵՐՋԻՆ – XXI

ԴԱՐԻ ՍԿԶԲԻՆ.....	266
Օգտագործված գրականություն.....	287

**Լավրենտի Զաքարի Անանյան
Լիդա Պետրոսի Պետրոսյան**

**Տնտեսական պատմություն
Ուսումնական ձեռնարկ**

**Հրատ. խմբագիր՝ Վ.Զադայան
Սրբագրիչ՝ Զ.Հովհաննիսյան**

Պատվեր՝ 529: Չափս՝ 60×84^{1/16}:
17 հեղ. մամուլ, 17,1 հրատ. մամուլ,
18,25 տպ. մամուլ, 17,43 տպ. պայմ. մամուլ:
Տպաքանակ՝ 500:

«Տնտեսագետ» հրատարակչություն

Տպագրված է «Տնտեսագետ» հրատարակչության
տպագրական արտադրամասում
Երևան 25, Նալբանդյան, 128

